This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at `http://books.google.com/`

23

THE UNIVERSITY OF MICHIGAN · LIBRARIES ·

Digitized by Google

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՊԱՇԵՆԻ
Կանոնագրքի ..... 23 .....

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

ՏԵԱՌՆ ՄԻԽԱՅԷԼԻ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՍՈՐԻՈՅ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ [illegible]
Կարգաւորեալ 2B

Digitized by Google

Digitized by Google

Michael, Jacobite Patriarch of Antioch

Zhamanakagrutiwn Tearn...

ՏԵԱՌՆ ՄԻԽԱՅԷԼԻ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՍՈՐԻՈՅ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Մ. ԷՋՄԻԱԾՆԻ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Տ. ՄԿՐՏՉԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՊՈՍԻ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՑ

1870

Գրադարան Մատենադարանի
Գրանցումներ
23
Գրանցման թիվ

Digitized by Google

Grad
FREN
295
BUHR

Digitized by Google

Գեոd
EREN
295
01.11.99

ԳՐԱԴԻՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԱՆԻ
Կարդասի 23

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Զ ՄԻԽԱՅԵԼԻ պատրիարքի Սորուոց ըզ-պատմութեան գիրսն, զհամբաւեալն յազ-գիս, 'ի լոյս ընծայեցաք 'ի խնդրոյ ուսումնա-սէր ազգայնոց, բնագիր կալեալ մեզ զօրի-նակն բոլորագիր ընդօրինակեալ 'ի թուին Հայոց ՋԼԹ (1480), 'ի խնդրոյ Ամիր-Տուվաթ բժշկի և 'ի վայելումն որդւոց նորին Ամիր-Լոթի-ղին, 'ի Կոստանդինուպոլիս քաղաքի, ձեռամբ Ներսէս քահանայի Ամասիացւոյ։ Լինն առ մեզ և այլ ինն օրինակք զանազանք, ընդ ո-րոց համեմատեալ՝ զտարբերութիւնսն ե-դաք 'ի ներքոյ իւրաքանչիւր էջից։ Իսկ զոր կոչեցաքս Հին օրինակ, տարբերի յոյժ 'ի միւս ընթից օրինակաց եթէ թարգմանութեամբն և եթէ կարգաւ և ընթայիւք պատմութեա-նն, զոր թողաք այլով բարեպատեհ առ-թիւ 'ի լոյս ընծայել։

Զհետ պատմութեանս յարեցաք անմի-ջապէս և զՀատն քահանայութեան նորին Տեառն Մելիսէի ասացեալ և զխոստովա-

Digitized by Google

նութիւնն հաւատոյ։ և զբանսն որ վասն
աստիճանաց եկեղեցեաց. որում հետեւի
Գաւազանագիրքն ամենաւակալացն Անտիոքայ,
Հռոմայ, Աղեքսանդրիոյ, Երիսաղեմի որոյ ա-
թոռն փոխեցաւ յետոյ 'ի Կոստանդինուպո-
լիս, և Երուսաղեմի, սկիզբն առեալ յառա-
ջին հիմնադրաց նոցին Յովհաննէս։ Այսպա-
ռանձինն դնէ և զկարգ կաթողիկոսացն Հա-
յոց, զԳրիգորիս եղեալ հիմն եկեղեցւոյն և
զսուրբ Առաքելսն Թադէոս և Բարդողիմէ-
ոս, և իջանէ մինչեւ 'ի Ս. Ներսէս Շնոր-
հալի ժամանակակիցն իւր։ Իսկ Վարդան
վարդապետ, որպէս ասէ 'ի վերնագրին, որ
և համարի թարգմանիչ գրոցս, շարունակէ
զսնուանս յաջորդաց Շնորհալւոյն մինչեւ
'ի տէր Կոստանդին Բարձրբերդցի, և աւարտէ
զբան իւր խօսելով զթարգմանութենէ
գրոցս լեալ 'ի թուին Հայոց ՈՂԷ, գործակ-
ցութեամբ Յովհաննէս քահանայի ատրուոյ. խօսի
և զՀեթմոյ Բ. արքայէ Հայոց, և ապա հա-
մառօտ բանիւ ճառէ զյարձակմանէ Թա-
թարաց 'ի Հայս։

Digitized by Google

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՎԱԳԵԱՆՑԻ
Կարշատ՝ ....

Digitized by Google

Ս. ԱԲԳԱՐ Ը.

Digitized by Google

ՏԵԱՌՆ ՄԻԽԱՑԵԼԻ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՍՈՐԻՈՑ

ՀԱՄԱՌՕՏ ԺԱՄԱՆԱԿԱՑ ԶՐՈՑՑՔ ՔԱՂՈՒԱԾՈՒ ԱՐԱՐԵԱԼ ՑՈՒՈՎԻՑ ՊԱՏՄԱԳՐԱՑՆ

Ի ՎԱՐԺՍ ԲԱՆԱՍԻՐԱՑ ՍՂԱՄԱՆԱԿ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ (1)

յԱղամայ հետէ մինչեւ յետին աւուրս թեւացեալ։

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս յԱդամայ հետէ. մինչեւ յԱմազունք.

Եւ արդ ըստ արուք (2) ուսումնասէրքդ և Աստուածասէրքդ կարօտեալք գիւտից և ժամանակաց. և հաւաքեալ վէպս բազումս ժրաջան աշխատութեամբ, խնայեցի յիս և 'ի լսելիսդ ձեր յանձխութենէ զրուցայ. առնելով (3) միայն զտաւեալ պիտանացուն յեկեղեցական մատենից և յարտաքնոց՝ ընդ դաստուցանել զմիտս բանաւորաց 'ի մահաբեր ծուլութեանց (4), թողլով զոչ կարեւորքն

(1) Երկու օրինակք. առ. աստուածասէրքդ։ (3) Հնագոյն օրի. համառ. ղեկութեամբ։

(2) Ամ. օրինակք. պիտանի Աստուծոյ քաղելով։ (4) Հնա. օրի. ընդոստուս. եւ եղբարք ուսումնասէրքդ և.

Digitized by Google

սրն ի նոցանէ։ Քանզի նոքա ի ծագումն առաւօտուն, և ի հասարակեալ տուն-ջեանն գոլով, և տեսանելով զբանասիրու-թիւն սրանց ժամանակին՝ փարթամագոյնս գրեցին։

Իսկ մեր վստահախտութեամբ. դիպեալ յերեկոյացեալ ժամանակիս և հայելով բը-դեալ հեղգութեամբ յօժարութիւնս մեր և բազմաց՝ կարճաբանութեամբ և թեթե-ւակի անցցուք ընդ իւրաքանչիւրսն. փե-լով հոլմով հոգւոյն յանգիտութեանն խաւ-ար. (1) զի եկեսցեն ճառագայթք աստեւուն արդարութեան ի սիրտս մեր. զի և մեր ա-ռեալ տացուք զայս ճրագ Յիսուսի մօր մերոյ որբոյ՝ լինել վարժարան մանկանց նորա, ա-կրն ունելով ողորմութեանն վերին. զոր տացէ մեզ աղօթիւք ձերովք պտուղ ի սուտ տար վաստակոյս մերոյ։

Այլ արժան է մեզ ծանօթս առնել ձեզ յանուանէ զպատմագիրսն յորոց հանդեր-ձեալ եմք զնիւթ շինուածոյս մերոյ հաւա-քել։

Եղբ ի յարմատոյ անախ մարդկութեան-նս մինչեւ ի գալուստն Քրիստոսի գրեցին

(1) Հին օրէ. ի բաց հանել զանգիտութեանն խաւար։

ցանել զմահաբեր ծուլութիւ-նս բազմաց։

Ալիբիկանոս և Յեսավ և Հեքսիպոս և Յուլ սեպոս հրեայք։

Ինանոս կրօնաւորն Պէրքանդրացի գրեաց Ադամայ մինչեւ ի Կոստանդիանոս թագաւոր։

Եւսեբի Պամփիլեայ ի ստոյանէ և յայլոց պատմագրաց ժողովեալ ասար գիրք մի, և անուանեաց եկեղեցականս։

Օգսիմոս և Սոկրատ և Թէոդորոս (1) հեթեոդիկոս ի Կոստանդիանոսէ մինչեւ ի Թէոդոս փոքրն գրեցին։

Յովհաննէս աղէքսանդրացի (2) և Ղեսելրս և Թէոդորէ գրչակալդաց կոստանդինուպօլսեցին. և Օգաբրիա եպիսկոպոս Սեղեստինուս գրեցին ի Թէոդոսէ մինչեւ Յուստիանոս ծերն։

Յովհաննէս Ասիացին գրեաց Հնաստոս թագաւորէ մինչ ի Մօրիկ (3) թագաւոր։

Կաւրիա իմաստուհին գրեաց Յուստինոսէ մինչեւ ի Հերակլ թագաւոր։

Ի զմտանելն Տաճկաց Ասորիս ի ժամանակս Հերակլեայ։ Սուրբն Յակովբ ուսուցանեցին էանց համառօտ ընդ ասացեալսդ։

(1) Ոմանք ընդ հնագունին Թեոդորիտոս։

(2) Ոմանք Անտիոքացի. Ա- սէն. հնագոյնն ասէ Յովհաննէս Անտիոքայ և ՀԵՍԷԼՐԱ։

(3) Ոմանք Մաւրիկ։

Դիոնեսիոս սարկաւագն (1) գրեաց 'ի Մօրկայ մինչեւ 'ի Թէոփիլոս Թագաւոր Յունաց. և զԱհարոն ամիրայն տաճկաց։

Իգնատիոս եպիսկոպոսն Մելեսինոյ. և Ալիւեայ էրէց 'ի նմին քաղաքէ. և Յովհաննէս 'ի Բեռնոյ, և Դիոնեսիոս Աղէքսանդրացին (2) գրեցին յԱդամայ մինչեւ յիւրեանց ժամանակն կարճառօտ պատմութիւնս։ (3)

Իւ մեր օգնականութեամբն Աստուծոյ զնոյն ջան առաջի եդեալ, հիւսեացուք 'ի սոցանէ, և յոմանց արտաքնոց զոստայնս մեր ցանկալի ծաղկեբանգ յօրինուածով 'ի փաւրս Աստուծոյ։

Բայց պարտ է հանճարեղ մտաց ոչ տալ կարանալ յաղագս աւելի և պակաս քերելոյն զթիւս ժամանակաց. քանզի յոլով զանազանութիւնս գտանեմք յեւթանասնիցն և յայլոց թարգմանչացն գրութիւնս. և մանաւանդ զոր Աբգար արքայն է թարգմանեալ (4) հրամանաւ Թադէոսի Աղաքելոյն (5)։

(1) Հին. օրի. պատրիարք. գոնէ 'ի սարկաւագութենէն պոպ մագրնալ իսէ սա. և ապա 'ի պոպ բիպարսիկէն խուլէշալ. զսա ոչ գիտէն այլ երէս օրինակի։

(2) Այս էնդ հնոյն ասէն զսա Սալիպաց որդին։

(3) Հնագոյնն ասէ. պատրին հարուստ պատմագրութիւնս։

(4) Հնագոյնն և այլք ասէն եռ թարգմանել։

(5) Հնագոյն օրի. չուանի հրամանաւ Թադէոսի Առաքելոյն։

Digitized by Google

Եւ զոր ասուցեալ Յակոբ ուսուցանէր մի-սեալ ընդ հրէութեամբ յաղագս կարծելոյն թէ չեռուն զբաւանեալ (1) գրեանն իւրեանց ճշմարտութեամբ հեթանոսաց սակրս նախանձու։

Եւ զի զարմանաս եթէ բան Տեառն ճշմարիտ է ակարտանալ մարդկան 'ի գիտութիւն ժամուց և ժամանակաց, և գիտել միայն ապարչին և ոչառն ժամանակաց։

Եւ արդ ակիզբն դիցուք գրոցս մերում զակիզբն մարդկութեանս զԱդամ. և ասասցէն իսկ յայտ արտայսուք զանմիաբանութիւն աղանդոցս 'ի թիւս ժամանակաց կալսլ մեր հաստատուն 'ի հաւատս։

Արդ ըստ եւթանասնիցն գրութեան (2) Ադամ լեալ երկու հարիւր երեսուն ամայ ծնաւ զՍէթ. և եկայ այլ եւս չորս հարիւր վաթսուն ամ. և են ամենայն կեանք նոցա լինն հարիւր երեսուն ամ; մինչեւ 'ի հարիւր երեսուն և եւթն (3) ամն Մաղաղեէլ. և մեռաւ վաթսուն ամաւ յառաջ քան զծնունդն Յնովքայ, և է յոյժ փոքր միջոցն։

Իսկ ըստ Աբգարու, որում Աստուածք վարին Ադամ լեալ երկու հարիւր երեսուն (4) ամայ.

(1) Ա.ոլ բովանդակ։
(2) Հին օրի. գիտութեան
(3) Ոմանք ՃԼԵ. (135)։
(4) Հին օրի. ՃԼ. (130)

ծնանի զՍէթ. և եկաց այլ եւս եւթն հա-
ւրիւր (1) ամ. և է ստուգապէս ամենայն
ժամանակք նորա ինն հարիւր երեսուն ամ։
Յնանոս առնու վկայութիւն յՅնովքայ
գրոյն թէ Ադամ յետ ելանելոյն ի դրախ-
տէն՝ յետ եւթանասուն ամի գիտաց զՇայ՝
և ծնաւ զկայէն. և եւթն ամաւ յետոյ ծն-
նաւ զԱբէլ. և յետ յիսուն և երեք (2) ամի
ծննդեանն Աբելի սպան զնա Կայէն, և սգա-
ցին զնա ծնողք նորա հարիւր և վեց ամ.
և ապա ծնաւ զՍէթ որդի մխիթարութեան։
Յս Ադիդիմոս պատրիարքի ասէ. յետ երե-
սուն ամի ելեալն ի դրախտէն՝ Ադամ ծնաւ
զկայէն, և զկլիմայ (3) քոյր իւր. և երեսուն
ամաւ զկնի ծնաւ զԱբէլ, և զԱբելուհի (4)
քոյր իւր. և յետ հարիւր երեսուն ամի ըս-
պանաւ Աբէլ. և երկու հարիւր երեսուն (5)
ամաց լեալ Ադամ՝ ծնաւ զՍէթ. և այսու
գիտասցես զանանմանութիւն (6) ասիցն վասն
ժամանակաց։

Սէթ կեցեալ ամն երկու հարիւր և հինգ
(7) ծնաւ զՅնովս. իսկ ըստ Յոտրոցն հարիւր

(1) Հին օրի. Պ. (800)։
(2) Վեց օրի. ԺԳ. (13)։
(3) Հին օրի. զկահել և զկամիայ։ Վեց օրի. զկահել և զկամիայ։
(4) Հին օրի. զԲեռլուդա.
(5) Վեց օրի. ՃԼ. (130)։
(6) Վեց օրի. զանմիաբանութիւն։
(7) Վեց օրի. ՄԵ. (205). Հնագոյնն. ՄԵ. (205)

Digitized by Google

և վաթսուն ամ. և ամենայն աւուրք ժամանակաց նորա ինն հարիւր եւթանասուն, ըստ Յունաց և Ասորոց։ Յնովս լեալ ամաց հարիւր ինեսուն՝ ծնաւ զԿայնան ըստ Ամրիկանոսի (1). իսկ ըստ Ասորոց՝ հարիւր վաթսուն ամաց։

Այս Յնովս ի բնութենէ օրինացն պատկառեալ սկսաւ գործս բարիս առնել. և ուսուցանել որդւոց իւրոց. և յաւսով կոչեաց զանուն Տեառն Աստուծոյ յոգնութիւն բարւոք մտածութեանցն։ (2)

Ի սմանէ ուսեալ որդիք նորա և եղբարք յիշեցին զկեանս դրախտին և հրաժարեցին յամաւանանալոյ անձինք երկու հարիւր. և ելին ի լեառն Հերմոն և կային ժուժկալութեամբ, պարապեալք երկնաւոր առաքինութեանց. և յաղագս այսորիկ անուանեցան Որդիք Աստուծոյ. և եղեն ժամանակքք Յնովսայ ամք ինն հարիւր և հինգ (3), և վճարեաց։ Կայնան լեալ ամաց հարիւր եւթեսուն՝ ծնաւ զԱղաղիել ըստ եւթանասնից. և ըստ Ասորոցն՝ եւթանասուն ամաց. և եղեն ամենայն աւուրք նորա ութն հա-

(1) Հին օրի. և Ենանասի։
(2) Վ.Հց օրի. ի բարիոք մտածութեանցն։
(3) Վ.Հց օրի. ՉԻ. (907)։ Հինն. ՉԲ. (902)։ ըստ Ամրիկանոսի։

բիւր վեթասուն ամ։ Ի՝ աղաղիէլ լեալ ամաց հարիւր վեթասուն և եւթն՝ ծնաւ զՅարեդ (1), և ըստ Ղ՝ սորոցն, վեթասուն և եւթն ամաց. և ուրթն հարիւր ինանասուն և եւթն (2) ամաց մեռաւ։

Յարեդ լեալ հարիւր վեթասուն և երկու ամաց, ծնաւ զ՝Ենովք ըստ եւթանասնիցն (3), և ըստ Ղ՝ սորոցն (4) վեթասուն և երկու ամաց, և ամենայն ժամանակքն էին հարիւր վեթասուն և երկու, մինչեւ՝ ի վեց հարիւր ամն Ն՝ոյի։

Ի սորա. (Ենովքայ) քառասուն ամին, ըստ յաւ հազար ամն. յելիցն Ադամայ։

Յոյսքան ժամանակս ոչ դոյր թագաւորս, զի Ադամ՝ նախաստեղծն բաւականանայէս խլրատէր զնոսա մինչեւ՝ ի հարիւր երեսուն և եւթն ամն Ի՝աղաղեէլն, և վճարեաց հարիւր ամաւ յառաջ քան զծնունդն Յարեդի. և Աբէթ և որդիք նորա առեալ հրամանս՝ ի Տեառնէ ոչ խառնէին յազգն Կայենի։

Իւ՝ ի հազար ամին ելեալ կացուցին որդիքն Կայենի իւրեանց թագաւոր Սամիլոս (5) անուն։

(1) Ոմանք՝ Արեդ.
(2) Վեց օրի. ՊՂԵ. (895)։
(3) Հին օրի. Ի՝ սորոցն։
(4) Հին օրի. Սամարացւոցն։
(5) Հին օրի. կացուցին

Եւ յայսմ ժամանակի որդիքն Սեթայ. որ կային Հերմոն լեառն ձանձրացեալք ի ջրէն ի լեռնէ անտի և ի կրօնաւորական (1) վարուցն որպէս պատմէ Ենանոս ի գրոց տանտի Հնովքայ։ Եւ բարկացեալ եղբարց իւրեանց ի վերայ նոցա՝ հալածեցին և ոչ ետուն նոցա կանայս. և նոքա պնային իսառնեցան յազգն Կայենի, և առին իւրեանց կանայս յամենայնէ պղծս ընտրեցին. և աստի սկսաւ յաճախութիւն չարեաց ի վերայ երկրի, պոռնկութիւն և զրկոզութիւն (2), և յայսմանէ պատերազմունք և սպանութիւնք։

Ի նմին ժամանակի որդիքն Սեթայ որ կային յերբորդ կլիմն որ է բաժին երկրի, կայցուցին և նոքա իւրեանց Թագաւոր (3) Ենոքս անուն. որ սա Եգիպտ նախ զԹիւս կենդանակերպիս և մոլորակաց (4), և զՀՀՋմունս (5) նոցա, և ի սմանէ անուանեցաւ քաղդէութիւն՝ և աշխարհն այն երկիր Քաղդէացւոց. սա Թագաւորեաց ամս իննսուն

Թագաւոր՝ պատմ անուն էր Սամարիտ. Երկու օրի. Թագաւոր՝ Սամիրոս անուն։ Ասէ երեք օրի. կայցուցին Թագաւոր Սամիրոս անուն։

(1) Հին օրի. և այլ երեք. ի հրեշտակական վարուցն։

(2) Երեք օրի. զրկութիւն։

(3) Հինն յանէրս ի քաղդեացւոց երկրին։

(4) Հինն և այլ երեք օրի. մոլորականաց։

(5) Երեք օրի. զՀՀՋմունս։

և ութն, և աւուրս երկու հարիւր երեսուն։ Յե զկնի նորա որդին Նղփարոս ամս քսան և ինն և աւուրս երկու հարիւր տասնեւհինգ։ Յե զհետ նորա Ամիոն քաղդէացի (1) ամս ինսուն և եւթն, (2) և աւուրս ութսուն։ (3)

Յե զկնի նորա Ամանոն քաղդէացի ամս երկու հարիւր տասնեւութն, և աւուրս հարիւր տասնեւութն (4)։ Յե զկնի նորա Ամակորոս (5) քաղդէացի ամս հարիւր ինն-սուն և եւթն. և աւուրս հարիւր ինսուն և հինգ։ Յե յետ նորա Դինոս հոմիս քաղ-դէացի ամս ինսուն և ութն, և աւուրս ութսուն (6)։ Յետ սորա Յուսուրինքոս (7) ամս հարիւր եւթանասուն և հինգ (8) և աւուրս երկու հարիւր երեսուն (9)։ Յե ապա Ամիլիոս Ամնարքոն քաղաքէ ամս հա-րիւր ինսուն և եւթն (10), և աւուրս երկու

(1) Հին յանելս 'ի փոխ-գիւիլն քաղաքէ։
(2) Հին ՃԻԸ. (128)։
(3) Հին գրի. ՄԽ. (240)։
(4) Հին գրի. ՃԼ. (150)։
(5) Հին գրի. Ամակորոս։
(6) Հին գրի. ՃԼ. (150)։
(7) Ոմանք գրի. Ե. աուրքինոս. և մի գրի. Տուրինոս։
(8) Վեց գրինակ. ՃԷԷ. (177)։
(9) Հին գրի. ՃՂԵ. (195)։ այլ ՃՂԷ. (197)։
(10) Հին գրինակք ՃՂԵ. (195)։

Digitized by Google

հարիւր երեսուն։ Եւ զկնի սորա Աւտիարտոս (1) Յինարքոն քսանչէ ամս եւ թանասուն և ութն, և աւուրս երեք հարիւր և երեսուն. Եւ յետ սորա Քսիսութրոս (2) որդի նորա թագաւորեաց հարիւր եւթանասուն և հինգ ամ. և աւուրս հարիւր ինսուն և հինգ. ժողովին ամք թագաւորացս հազար հարիւր ութսուն. (*) և աւուրք երկու հարիւր եւթն։ Եւ զամս թագաւորացս և զաւուրսն թագաւորութեան ժամանակին հազար յիսուն և երկու (3). ամք լինին երկու հազար երկու հարիւր յառասուն և երկու։ Այսու ժամանակաւ էջ ջրհեղեղն մեծ։

Եւ մեք դարձցուք անդրէն յոտ կարգին։ Զնովք լեալ հարիւր վեցտասն և հինգ ամացն(4) ծնաւ զԱրմաղաղ, և զամս երբ

(1) Հին օրի. Աւտիարտոս։ մի օրի. Աւտարիտոս։ մի օրի. Աւտարտիս։ այլք Աւտարիտոս։

(2) Հին օրի. Քսիսութրոս։

(*) Ասա հազար հարիւր ութսուն թիւն սխալ թուի մեզ. զի ոչ պատասխանէ գումարի ամացդ իշխանաւ թեան նշանակեալ թագաւորացն։

(3) Հին օրի. և այլք ՌԿԲ. (1062)։ և այս իսկ անհամաձայն է ասացելոցն ի վերոյ։ զի ասաց եթէ ի 40 ամն Յարեդի լսան հազար ամք. և թէ Յարեդ ծնաւ ի 165 ամին Մաղալիելի. եւ թէ Ադամ ՆՆԶԿաց 930 ամացդ՝ ի հարիւր երեսուն և եւթն ամն Մաղալիելի։

(4) Հին օրի. յաՆլա ըստ եւթանասնեցն և ըստ Ասորւոցն ԿԵ. (65) ամացդ։

կու հարիւր հաճոյ եղեւ Աստուծոյ. և որ-
ւսաւ սմա շնորհք մարգարէութեան ապա-
գայից. և սա արար նշանագիրս կարճուտու-
նրս (1) և բազմատարս, և այնու եթող զկեա-
նրս վարուց առաջնոցն և զմարգարէութիւն
իւր, և փոխեալ կենդանւոյն յաստուեացս ոչ
ուրեք գտանիւր. և գիտէ զտեղի փոխմանն
փոխադրողն Աստուած. Այլ ասեն սմանք
'ի դրախտին և այլք իմանան (2) թէ դրախ-
տին աւազակին քացաւ։ Այլ յայտ է թէ 'ի
վերոյ դրախտին յօդն լաստ կարելոյն Աս-
տուծոյ զամենայն ինչ. և յորժամ բացաւ
խաչիւն, էջ 'ի դրախտն. թէ հաճոյ է քեզ
ընկալ անվնաս է։

Զամենուսաղաս լեալ սմաց հարիւր ութ-
սուն և եօթն՝ ծնաւ զԱմեք ըստ եւթա-
նանիցն. իսկ Զնանոս հարիւր վաթսուն և
հինգ ասէ։ Զու Զամարացիքն ութսուն և
երկու ասեն. և լինին ժամանակք նորա ինն
հարիւր վաթսուն երկու ամք, մինչեւ յին-
նոսուն և եւթն ամն Զեմայ. այլք ասեն ինն
հարիւր վաթսուն և ինն ամք. և Աղէքսանդ-
րոս ասէ թէ յետ որդեծնութեան եկայց եւթն

(1) Ամանք կարճատուն։ գիմանան. զոր լուէ հնա-
(2) Երեք օրի. ընդիմա- գոյն։
նան. և երկու օրինակք ընդ-

հարիւր ութսուն և եւթն ամ. և առ զը-
բոյն մեծի մեռաւ ։

Ղ ամէն լեալ հարիւր ութսուն և եւթն
ամաց՝ ծնաւ զԼոյ . (1) և ըստ Լ՝սորոցն հա-
րիւր ութսուն երկու՝ ըստ Լամարացւոցն
յիսուն երեք . և եղին ամենայն աւուրք
եօթն հարիւր եւթանասուն և երեք ամք .
զինչեւ 'ի վաթսուն և ինն ամն Լեմայ , եւ
մեռաւ նախ քան զհայր իւր քսան և ինն ա-
մաք . այլք քառասուն և ինն ամաւ ասեն ։
Ի հազար վեց հարիւր վաթսուն և վեց ա-
մի եղիցն Լ՝դամայ 'ի դրախտէն ծնաւ Լ՝ոյ
արդար , որ և հասեալ 'ի չափս հաճոյ եղեւ
'ի վարս արանց ժամանակին . ոչ ամուսնացաւ
զամս հինգ հարիւր առանձնացեալ բնա-
կութեամբ . 'ի սորա յիսուն և ութն (2) ա-
մին լցան երկու դարքն ։ Պատմէ Լ՝նանոս
եթէ հսկայք մեծամեծք և անճոռնիք էին
յաւուրսն յայնոսիկ , և թողեալք էին (3) 'ի
ձեռաց Լ՝ստուծոյ . և յաճախեաց անիրաւ-

(1) Էին օրի . յանէլս ըստ
եւթանասնիցն ։

(2) Էինն և այլ վեց օրի .
ունին զթիւս ՃԾԸ . (358)
բաց 'ի յերկուց որոց մին եւս
հնագոյն . որում եւս հետե-
ւիմք 'ի տարբերութեան . սա-
կայն երեւի թէ ընդօրինակողն
զՃ կարծելով նախդիր ա-
ւելորդ՝ 'ի բաց հանեալ իցէ 'ի
թուահամարս թէնէ . և այս
կրկին օրինակք 'ի նմանէ կամ
յայնպիսեաց իցեն ընդօրի-
նակեալք .

(3) Էինն և այլ վեցք՝ է-
զեն ։

ւուԹիւն. և անդ էր տեսանել սրտերաշ-
մօք զաշխարհս լցեալ. և դիղեալք լինէին
դիակունք կոտորելոցն կոյտս կոյտս 'ի կա-
տարս լերանց, և ցրուեալք ընդ երեսս
դաշտաց զի վերացաւ 'ի նոցանէ հոգի տե-
սան զօրուԹեանց։

Իսկ սրբասէրն Այր հրամանաւ Տեառն
առեալ կին Լեմղաւայ (1) անուն՝ ծնաւ ե-
րիս որդիս, զԱՀմ, զՐամ, և զՅաբեԹ. և շէ-
նեաց զարկղն (2) մեծ եռայարկ 'ի բնակու-
Թիւնսերմանեաց երկրորդի աՃման 'ի խը-
նամոց Ազարչին։

Ի ընալ հինգ հարիւր երրորդի կենաց
Այր ի եղեւ ջրհեղեղ մեծ սկսեալ յերրոր-
դում ամսեանն ի ար. (3) քսան և եւԹն օր
ամսեանն. և տեւեաց ջուրն ամ մի ողջոյն.
մինչեւ 'ի նոյն ամիսն և 'ի նոյն քանիսն. և ել
Այր 'ի տապանէն որդւովքն և կենդանիւքն (4)
որք ընդ նմա մտեալ էին։ Այլ պատուեաց
զԱստուած պատարագօք և էառ զօրհ-
նուԹիւն առաջին մարդոյն. և պատուիրան
չհեղուլ արիւն (5) բանականի և չուտել

(1) Մի օրի. Լեմղարայ։ Նոքա որ երեւի պակ ընդօրինակող.
(2) Երեք օրի. զՑարկն Ինան լինել։
(3) Երեք օրի. ի արի։ (5) Այլք՝ զարիւն բանա-
(4) Այլ՝ օրինակք կենդա- կանին։

աղրիւն ունբանի, (1) և եւ նմա նշան ուխտի ոչ հարկանել զամենայն մարմին կենդանի վասն մեղաց. այլ ըստ մասին իւր ատել զպարաւաւորն։ (2)

Բայց զարմանամ զի Յովսեպոս ասէ, ըղտապանն 'ի Պիսիդացւոց աշխարհն Յուդիմէս։ (3) լեառն որ է ատուգապէս 'ի մեծն Հայք 'ի լեառն Անոսիք (4) ըստ բնագրոյն ոչ յուլթեան։ Եւ եկաց Նոյ յեւ ջրոյն ամս եբեք հարիւր յիսուն. և ծնաւ որդի մի Անիսոն անուն. և բաժանեաց նոցա զերկիր։

Եմայ եւ զՊարսից աշխարհն. և զԱստրոց. և զՊաղեստինէ մինչեւ Յոփինոյ կոքուբրա (5) որ է Նեղոս, և զՆեկոտուբիայ։ Եւ Քամայ եւ Յոփինոյ կոքուբրա մինչեւ 'ի Գադիրան։ Իսկ Յաբեթի եւ 'ի Մադիէ մինչեւ 'ի Գադիրան հիւսիսայ։

Եւ արդ ունի ազգն Յաբեթի Յունէն (6) Տիգրիս գետոյ ոչ բաժանէ ընդ Մադէ և ընդ Պարսս։ Եւ ազգն Եմայ ունի յարեւեւ

(1) Ասէ օրի. բանակնի։

(2) Երեք օրի. զպարաւաւորն ամենայն։

(3) Երեք օրի. Յեւփեմիեւ

(4) Երեք օրի։ Մասիս. Հին օր Ասպագայ՝ որ է Մաս։

(5) Երեք օրի. և հինն. Յոփինոյ կոքուբրայ։

(6) Ասէ օրինակք. Յունէն։

լից և յարեւմտից Լեւփրատ գետոյ և Գկլաթու։ Լեւ ազգն Քամայ ունի զԳեհոն գետ որ բաժանէ զսահմանս նոցա։

Լեւ որդիք Յաբեթի են Հայք, և Անակեդոնացիք, և Անդացիք, Յոյնք, և Լատինացիք, (1) և Աղուանք, (2) և Վրացիք։

Լեւ որդիք Քամայ են Եգիպտացիք, և Հնդիկք, Հեթացիք, Յեբուսացիք, Հաբաշիք, որք են Քուշացիք, Ամուրացիք, Գերգեսացիք, Արուեթացիք, և այլք։

Լեւ որդիք Սեմայ են Ասիւրացիք, Քաղդէացիք, որք են Ասորիք, Եբրայեցիք. Փղուանգք, (3) Պարսիկք, և այլք։

Լեւ ունին Սեմացիք՝ յարեւելից մինչեւ յարեւմուտս ընդ մէջ երկրի։

Յաբեթացիք ունին զհիւսիս յարեւելից մինչեւ յարեւմուտս։ Լեւ որդիքն Քամայ ունին զհարաւ։ Լեւ Մանիտոն (4) էառ յայնկոյս ծովուն զվիճակ իւր։ Սա խնդրեաց 'ի հօրէ իւրմէ յոսկերացն Ադամայ, զոր ունէին 'ի տապանին. և ետ նմա զլուսնոյ ծընգացն. և արձակեաց զնա յարեւմուտս այս։ Սա առնեցոյց զաստեղագիտութիւն, և ե-

(1) Մերս օրի. Ղատացիք։
(2) Հին և այլ հին. Ա-ֆուանիք։
(3) Ոմանք վերջին օրինակք
(4) Հին օրի. Մանտինոս.

գիտ զհաւահմայութիւն եւ զխորութիւն երեւման. և ոմանք 'ի սմանէ ասեն զԱդիւանացիսն։ Այսեն և այլ դուռաթ մի 'Այսի Այսողանուն. որ էառ 'ի հօրէ զմասն ինչ հարաւոյ 'ի ժառանգութիւն։

Այս զգուշացաւ 'Այս. և կացոյց 'ի վերայ երդումն. և ետ նշուլս. զի մի ղոկեսցեն զմիմեանս. այլ կալցին արդարութեամբ զիւրաքանչիւր վիճակս երկիւղիւն Աստուծոյ զի մի սատակեսցին։ Այս եկաց 'Այս մինչեւ յերեք հարիւր ութներորդ ամն Այբերայ. և մեռաւ։ Էմ լեալ ամաց հարիւր՝ երեսուն՝ ծնաւ զԱրփաքսաթ ըստ եւթանասնիցն։ Իսկ ասորոցն հարիւր երկու (1) ամաց։ Էմ ժառանգեաց զոսկերս նախաստեղծիցն և ամփոփեաց 'ի վիճակի կալուածոյ իւրոյ (2)՝ զի վշտացուցանէին զնա 'Բամ՝ և որդիքն իւր։ Արփաքսադ լեալ ամաց հարիւր յիսուն և եւթն (3)՝ ծնաւ զկայնան՝ սա բազմացոյց զԲաղդէացւոյն մոլորութիւնն, և զկախարդեալն (4) եգիտ. և եցոյց բախտ և ճակատագրութիւն ըստ աստեղացդ ընթացից, և շրջագայութիւն մոլորակացդ։ Այս որդիք

(1) Հին օրէ. (ՃԸ) 108։
(2) Երկու օրէ. կալուածոց իւրոց։
(3) Հինն և այլ երեք օրէ. ՃԼԵ. (135)։
(4) Հինն և միւս այլ օրէք։

նորա իբրեւ Աստուածս (1) համարեցան ըզ-
նա, և եպիսկոպանէին նմա, և կանգնե-
ցին նմա պատկեր 'ի կենդանութեանն իւ-
րում: Յետ այս եղեւ սկիզբն պատկերապաշ-
տութեան մեծի չարեացն: Որ չինեաց քա-
զաք և անուանեաց Խստան յանուն որդւոյ
իւրոյ Խստանայ, զոր Ղուկաս աւետարա-
նիչն յիշէ (2), զի եկեալ էր բարձողն կա-
պաշտութեան՝ և Որմէս արածապատումն
ոչ յիշէ վասն ասացելոյ պատճառին: Կայ-
նան լեալ ամաց հարիւր երեսուն և ինն (3)
ծնաւ զԱղաղայ: Յետ Ասղայ լեալ ամաց հա-
րիւր երեսուն՝ ծնաւ զԵբեր և զԵկսան (4)
ըստ Յնանոսի պատմողի. և ըստ Ասորոց՝ ե-
րեսուն և չորս ամաց: Յետ Եբերայ լեալ ամաց
հարիւր երեսուն և չորս՝ ծնաւ զՓաղեկ. յա-
ւուրս սորա բաղմացան ազգ մարդկան, և
սկսան զմիմեանսն ելանել և զրկել զմիմեանս.
և ժողովեալ ք 'ի միասին հին արտնց՝ դարձ-
եալ բաժանեցին զերկիր, և ստուգաբանե-

կախարդութիւն:

(1) Մի օրի. չաստուածս:

(2) Ղուկ. Գ. գլ. 36:

(3) Երկու օրի. ՃԼ. (130):

փոխէ այս ընդօրինակողին:

զի էնիւն Ասղայ. ղծնողն Կայնանայ և ցծնողն Ասղայի

ոչ 'ի հարիւր երեսուն ամի հաստա-
ցին թագաւոր. պայ Կայնանայ. ուստ-
պի մանրբերի ինչ օրինակ սոյա մո-
ռացեալ իցէ ոմի գրչի:

(4) Էին օրինակն ըստ դնէ 'ի
ցոյս ծննդոյ Եբերայ. ասելով՝
բեր ՃԼԳ. ամի ծնաւ ըզ-

դաւ. Փաղէկ անուանն, զի բաժանումն լսի. և լեալ Փաղէկ հարիւր երեսուն և երեք ամաց (1)՝ ծնաւ զԻրագաւ։

Յայնմ ժամանակի տանուտեարք երկրի հաւաքեալք ՚ի միասին խորհեցան գնալ յարեւելս խնդրել զառաջին բնակութիւնն Ադամայ, և գնացին։ Եւ ահա ծով անջրպետեալ էր ՚ի մէջ Ադեմայ. և յիշեցին զգլխեղեղն մեծ, թէ յայնմ հետէ է ջուրս այս, և զահի հարան. քանզի և գործք իւրեանց նոյնպիսիք էին. որպէս կորուսեալսն ջուրբ։ Եւ զի անցեալ էին զսուլտիս, և զնզովիւքն Նոյի ստրդարոյ, և փոխեալ էին զեղեալ սահմանս նորա, և ասէն ցմիմեանս և մեք մի անհոգասցուք յակնկալութենէ նոյնպիսի անցից ապականիլ դարձեալ երկրի, և կորնչիլ մեզ ջրոմ նոյն օրինակաւ։ Այսոքս որոյ դարձան և եկին յերկիրն Արենատար ՚ի լայնանիստ դաշտն Պղանէ և անդ ստրկին հիմն շինուածոյ աշտարակին, գտանեալ հր-

փաղէկ. և ասաց գԵկտան բան Եւանոսի ժամանակագրի, իսկ ըստ Աստրոն ԼԴ. ամ. ամաց. և եկաց ՅԽԳ. ամ. և են որ ասեն թէ տովաս կոչէցան Եբրայեցիքդ։ Եւ զի այսոքիկ պատկանին Ե բերայ. զոր ասայ Փաղէկայ և Եկտանայ.

ուսոսի վատահութեամբ կալցուք զսա առ սխալ ընդօրինակութեան։ Զի և զոր կցէ սմին պատմութեան. և այն վերաբերի Փաղէկայ։ Զոր օրինակ ասէ. բաժանեցաւ երկիր յամհախիլ ազգին։

(1) Հին օրի. ՃԼ. (130).

նարս փրկութեան անձանց յարկածից ջուրցն։

Ի սկիզբն ծննդեան Ադաւայ սկսան շինել զաշտարակն մինչեւ ցքաւանեերրորդամն նորա (1). և բերին (2) զծախս պիտոյիցն յերկրէ իւրեանց. այլ և Նեբրովթ որոյոր շինողացն գազանս և անասունս, և կերակրէր զնոսա։ Իւ գլխաւորք էին Համուր. և Հայկն. և Նեբրովթ, և մինչդեռ շինէին զնա ժրացեալք անհեղգաբար զքաղաքն բազմատարս, և զամբարտակն (3) ամրակառոյց, էջ Տէր հողմով. և փլոյց (փլոյզ) զնա. և զբազումս կորոյս 'ի շինողացն։ Մանք ասեն զՆեբրովթ 'ի յաշտարակին անկմանէն մեռանիլ. (4) բայց մեք ստուգեցաք յեւ ժամանակի սպանանիլ նմա 'ի Հայկայ որդւոյ Թորգոմայ, (5) որդւոյ Թիրասայ. որդւոյ Դամերայ. որդւոյ Նեբեթի. զի ոչ սրաբր Հայկն զպատկերն Բելայ, և ոչ համարեցաւ զնա Աստուած. և եկն 'ի վերայ նորա ծանր ամբոխիւ Էլ. և սպան զնա Հայկ։

(1) Յօրինակին մերում Ներքոս գրել համբ գրի "ցքաւասուն երրորդումն"։

(2) Երկու օրի. բերէին։

(3) Մեր օրինակ. բազմատարտակն. գրել որ և հեպեանդ անհասարանայ օրինակին։

(4) Մեր և այլ երկու. մեռաւ։

(5) Զսա չունի մեր բ օրինակ. ում հետաւիմք. այլք ամենայն նշանակեն։

Իսկ ՝ի վերանալ աշտարակին խառնակեցան եղուքն։ Եւ բաժանեաց Աստուած զմի լեզուն յեւթանասուն և երկու։ Հնգետասան լեզու առին (1) ազգն Յաբեթի։ Երեսուն երկու ազգն Քամայ։ Քսան և հինգ ազգն Սեմայ։ Եւ գնացին այր իւրաքանչիւր ըստ նստարան իւր. և շինեաց Նեբրովթ զՆրեգքաղաք, և զՍՆծբին և զՍՈՌՀայ։ Իսկ ի՞նչ խանն Երեր այր աստուածապաշտ (2) ոչ՝ միաբանեալ ընդ շինողս աշտարակին. և ՝ի յաւերմանն նա կոչեաց զերկիրն Բաբիլոն, որ թարգմանի աւերումն։ Եւ ասեն թէ մնաց բաւն լեզուն առ նմա։ Եւ վկայեն Սուրբն Յակոբ. և Սուրբն Եփրեմ. և Յովհաննէս իմաստասէրն։

Բայց զարմանամ, զի ոմանք ասեն թէ Հեբերայ կոչեցան խարսէլացիքն Երբայեցիքս Եւ թէ զնորա լեզուն ունին տակաւին ազգն Հայոց, (Հրէից)։ Եւ այսպէս անգիտացաւ ՝ի նոցանէ, զի ազգին խարսէլի ընակիչքն ՝ի Յակոբայ է, և յանցանելն ընդ ծովն կարմիր կոչեցան Երբայեցիք. զի Եբերան՝ (3) անցիք թարգմանի։ Եւ առին նոր

(1) Ոմանք օրինակք արա. ին։

(2) Ա՛Ս օրինակք. յատ. լամ այր ծեր և աստուածապաշտ։

(3) Հին գրի. զի Եբրայեցիք.

լեզու իբրեւ զայլ պարգեւսն. ըստ այնմ որ ասէ «Լեզու զոր ոչ գիտէր, լուաւ»։ Զի ա՛ռաջին լեզուն բարձաւ որ էր Ադամայն, զոր Բաղդէացիք ունին այժմ. զի Աբրահամ Բաղդէացի էր, և Հայրենի լեզուն Աբրահամու ոչ մնաց առ Եբեր, այս է զոր մեք ունիմք Բաղդէացիքս (1)։

Որդաւ լեալ ամաց հարիւր երեսուն երկու (2)՝ ծնաւ զՍերուք։ Սերուք լեալ ամաց հարիւր երեսուն՝ ծնաւ զՆաքովր։ Յայսմ ժամանակի լցաւ երկիր ժխորօք պատերազմաց, և սպանութեամբ։ Քանզի սրդիքն Բամայ 'ի դառնալն իւրեանց 'ի ցրմանէ աշտարակին եկեալ յերկիրն Փղշտացւոց, և առ լերամբն Կարմեղայ և 'ի իբանանու, և հայեցեալ 'ի պարարտութիւն երկրին, և 'ի վայելչութիւն նորա, և բնակեցան անդ և ոչ կամեցան գնալ (3) 'ի միճակն իւրեանց. և առին կրկին զնզովն Ահապետին Նոյի. վասն ծիծաղելոյն՝ և յաղագս սահմանափոխութեանն։ Զի յայսմհետէ յաճախեաց

ցին՝ անցին Թարգմանիչ։ Ոմանք՝ Եբեբան, և ոմանք՝ Եբեբան։

(1) Ոմանք. Ցորիքս՝ սրբ

եմք Բաղդէացիք։

(2) Երկու օրի. ՃԿԲ. (162։)

(3) Երկու օրի. գառնալ։

Digitized by Google

հեղմունք արեանց ի վերայ երկրի, այլ և անկաւ խռովութիւն յորդիսն Աստմայ այսպիսի պատճառաւ։

Որդիքն Յեկտանայ 'ի մեռանել հօրն իւրեանց ոչ հաճեցան ընդ բաժինս իւրեանց, այլ եդին իւրեանց իշխանս զԱբա և զԻրիլայ։ Զ(Ա)ւփիր կամ (զԱվփեր), և կազմեցին զէնս զոր գտեալ էին առաջինք. և յաւելին ինքեանք, Թուր, և աղեղն. զրահ, և սաղաւորս և վահան. և այսու հալածէին զեղբարս իւրեանց և զօտարս. 'ԵՒ յաղթողացն կանգնէին պատկեր՝ յաղթութեան. և երկուցեալքն մտանէին յամուրս անձեռագործս, և յայնմանէ իմացեալ չինէին բերդս և ամրոցս և մտանէին անդ յերկիրս (1) որդւոցն Յեկտանայ։ Վասն որոյ եւ յայնմանէ դարձեալ իմացան զմէքենայս առման Բերդից և Քաղաքաց և տապալէին զնոսա. մինչեւ յողբ անկեալ աղաչէին ըզնոսա, զի առցեն բաժինս իւրեանց տեղի զորս ընտրեսցեն, և արասցեն խաղաղութիւն, և դադարեսցէ խռովութիւնն, եւ լուան նոցա։ Իւ էառ Աբայն զինկաբեր երկիրն, զոր սաբայ անուանեաց իւրով անդ ամբն։ Իւ Ուփիր էառ Տեառն ոսկեհաղ

(1) Ոմանք յերկիրս։

նաց որ է հնգիկք, և էառ Իսրայել զերկիրն պատուական ականց, որոն չինեցաւ և կոչեցաւ անուամբ նորա Իսրայէլ։ Իսկ սերունք յիւր ծնանելոյ նորա զԻսաքովն. չինեաց քաղաք և կոչեաց զանուն նորա Սիւռ։ Բայց գիտասցիս զի ի ջրհեղեղէն մինչև ցայս վայր յամէն նահապետէ հարիւր ամ պակաս քան զՍորոց Թագաւորանն։ Իսաքովն լեալ ամաց եւթանասուն և ութն, ծնաւ զՅակոբ. և Յակոբայ լեալ ամաց եւթանասուն ծնաւ զԱբրահամ։

ԳԼՈՒԽ Բ.

Ամպագունք, որ և կին էր Թագաւոր, և այլ կարգ Թագաւորացն Բաբիլացւոց. և ոսկեհանութիւն. և հաւատացն Աբրահամու.

ՅԱՅՍՄ ժամանակի եղեն Ամպագունիքն, որ է զօրութիւն կանանց պատերազմոզաց այսպիսի պատճառաւ. զի կին մնայ թագաւորութեանն Յորդանայ հաստեալ արու զաւակացն, և ոչ կամեցաւ առն լինիլ, և էր քաջասիրտ և քաջագն. և ելանէր ծանր զօրաւ, և աւերէր և գերէր զաշխարհս բազումս մեծաւ յաղթութեամբ. և աջողէր նմա. և ոչ ոք կարէր ի դիմի հարկանել նմա։ Յետ եղեւ դաւ ինչ և նենգութեան խորհուրդ ի զօրան. զի առցեն

զԹագաւորութիւն 'ի նմանէ։ Իսկ նորա նա խագէտ եղեալ կոտորեաց առ սակաւ սա կաւ զամենայն արուեստական զօրան, և արար իւր զօր կոնդակս։ Յետ նոյնպէս յաջողէր յաղ թութիւն 'ի ձեռս նորա, և ստացաւ աշ խարհս բազում. 'Ի զատոյց զորուս աշ խարհաւ. և մի անգամ յամին խառնէին ընդ նոսա և դարձեալ մեկնէին. և ղծնեալ որու սին, էր զի սպանանէին և էր զի տային յայրան և եդ իւր հզօր իշխանութիւն, և քաջաք ամուրք ստացաւ իւր 'ի կողմանս հիւսիսոյ Ալիսն անուն։ Յետ նեղեցան ձանձրացան 'ի նմանէ ամենայն Թագաւորք երկրի և ժողո վեցան 'ի միասին մեծասան Թագաւորու թիւնք և գնացին 'ի վերայ նորա. և առին զամրոց Թագաւորութեան նոցա. և բաժին զանարգութիւն յաշխարհէն, և արքն առին զԹագաւորութիւնն բունք ազգին՝ (1) որինաք ամենայն երկրի։

Այլ մեք անդրէն դարձուսցուք զկարգ պատմութեան 'ի կարգ Թագաւորացն Խաբիլացւոց որ և առաջին Թագաւորեաց անդ 'Էբրոմիթ ասն վաճառն և ինն. Էր Թագ նորա հիւսածոյ՝ որպէս Մենադրոս (2)

(1) Հին օրի. որք ծնեալք էին 'ի կանանց անտի։

(2) Հին. օրի. Մենադրոս. ասնոք. Մենանդրիս։

պատուէր մոգն, և ոչ կռաածու։ Յետ զկնի սա-
տակման նորա. Թագաւորեաց անդ Կամբիզ-
ոս քաղդէացի 'ի ժամանակս Սերուքայ 'ի
յիսուն և վեցն։ Սա շինեաց զՇ օրՀ քաղաք-
որ սահեն զԱսպահան, և եղեւ այս յետ քա-
ռասուն ամի մահուանն Իսրայէլ։ (1) Յետ այս
Թագաւոր սկսաւ վարձաւել զգերեալսն, և
սկսաւ ասկեհանուութիւն և արծաթագործ-
ութիւն։ Սա Թագաւորեալ ամս ութսուն
և հինգ՝ մեռանի։ Յետ Թագաւորէ ընդ նմա
Սամիրոս. 'ի հարիւր վեց (2) ամին Սերուքայ
և Թագաւորէ ամս եւթանասուն և երկու։
Սա պատերազմեցաւ ընդ Յոյնս. և ընդ
Փռանգս. և էր սա յազգէն Սեմայ։ Յետ եւ
պատերազմ ընդ որդիսն Ռամայ և ընդ աղ-
գին Կալատու (3) կռուեալ սաստկապէս ե-
հան զնոսա 'ի լերինս. և արար ընդ հարս-
կաւ զազգն Ռամայ։ Սա շինեաց քաղաքս

(1) Հին օրի. Զկնի քա-
ռասուն ամի մահուանն Դեբ-
որովթայ և խափանելոյ Թա-
գաւորութեանն յորդւոցն Ռա-
մայ 'ի Բաբիլոն. Թագաւո-
րեաց Կամբիզաս Քաղդէացի
'ի ժամանակս Սերուքայ 'ի
ԺԶ. (36) ամին. Սա շինեաց
զՇՀ օրՀ քաղաք և այլն։ Սմա-
պոյ դպրանախապետին սիրելուս-
լոմիան և արծաթանահանութեան ղրա-
գոյք միաբերան տան յաջոր-
գին իւրում (Սամերոս)։

(2) Մի օրի. 'ի ՉՃ. (600)
ամին. սկսալ ընդ օրինակութեան
նոսի լինել։

(3) Զայս պատերազմ եղաւ. և
դպրութեան 'ի վերայ ազգին Կա-
լատա Կամբիզիոյ պոյ հին օրի-
նակի։

Digitized by Google

քաղուն յաշխարհին (1) Բաղդէացւոց, և Պարթեւաց։ Սա սկսաւ չափ դնել և կշիռ և գոյնս ներկուածոց. և խայտուածս. և նը-կարս տաճարաց. և դրամս, և դահեկանս անուամբ կնքոյ իւրոյ, և կատարագործուն-թիւնս. և դնել պատկերս ի կռուս. որպէս վիպէ ըզ նմանէ Սամանդրոս (2) Սոգ. և ասէ թէ երեք աչք ունէր, և եղջիւրք. այր ուժդին, և հսկայ անձն. և ասէ թէ հան ի Բաղդէացւոց աշխարհէ զազգն Աբբովթայ։ Ի քսան և եւթն ամին Այքալրայ էր ճգնուութիւնն Յովքայ, որպէս ասէ զնմանէ. Արուս քանանացին ասէ այսպէս, զ Այր մի էր մեծատուն յորդւոց Յեկոտանայ՝ անուն նորա Յովք, պատերազմեցաւ Նւթն ժամանակս ընդ սատանայի. և զօրութեամբն Աստուծոյ յաղթող դտաւ ի վերայ նորա։ Իսկ Յովսէփ (3) դպիր ասէ ի յիննսուն ամին Այքալրայ եղեւ ճգնուումն Յովքայ։ Բայց ոմանք ասեն թէ էր նա յորդւոցն Նսաւայ, այն որ ասէ ի կարգ որդւոցն նորա, թէ Յոբաբ որդի Զարեհի. և հինգ հարիւր ամաւ յառաջ է քան զՄովսէս։ Յեւթներորդ ամին Թարայի Թագաւորեաց ի Բա-

(1) Եւթն օրի. աշխարհին Բաղդէացւոց։
(2) Ճ-էին օրի. Սամարան։
(3) Ա՛ռ օրինակք Յովսեփ-պոս։

բերան. Աբիաղարայ ամն ութն և տասն։ Եւ յետ սորա խափանեցաւ թագաւորութիւն Դաղդէացւոց ամն եւթն, մինչեւ ի Վիրօ թագաւորն աթուրացի. զի պատերազմէին ընդ միմեանս Դաղդէացիք, և Աթուրացիք. և Ապացիք. յաղագս թագաւորութեանն, մինչեւ զօրացաւ Վիրօ Աթուրացի. և եկ ի հնազանդութիւնէն Խաբերացւոց և թագաւորեաց և իշխեաց ամենայն Աշխարհս (1) ամս վաթսուն և երկու։ Եւ Աթուրա քաղաք է առ ընթեր Մօսայ, զոր Ասորիս կոչեն, յԱստուրէ զինեալ զառաջինն։ Դատարս ամն թագաւորեաց ի Խաբերն և Ահերոն եղբայր Թուրայի սպան զնա. և ասեն թէ վասն ոսկեզէն պատկերին զոր էառ ի Նաբուվրայ որ էր քրմապետ Կայնան կռոցն։ Նոյն չինեցաւ Դամասկոս ի Արիդոս (2) հիւթացւոյ նախ քան զծնանիլն Աբրահամու քսան ամաւ։ Եւ Յովսեպոս ասէ թէ «Յովսէ որդւոյ Աբրամայ չինեցաւ Դամասկոս»։ Ընդրանիկոս պատմագիր ասէ թէ ի Ջրոյն մինչեւ զԱբրահամ են ամք, հազար ութսուն և մի. և յԱդամայ երեք հազար երեսուն և հինգ. Եւ ի բաժանմանէ երկրին մինչեւ զԱբրա-

(1) Եբեռ օրի. ասիմէ հիւթացւոյն։ Մի օրի. ի Մաբ-
Ամաթայ։ քիոս։ Մի օրի. ի Մարգաս
(2) Մի օրի. ի Մարգաս հիւթացւոյ.

Digitized by Google

համ չորս հարիւր քսան և մի ամ, և տասն հաւատարեցան Յունաց և Սորոց թիւն։ Ի ծնանելն Աբրահամու մեռաւ Նոքովը։ Աբրահամու մօրն Սալքա թուէր անուն։ Յայնժամանակի ծնդեան Աբրահամու ծընաւ Խարա դուստր Թարայի, ի Աբրամուհայ կնոջէ, և ոչ ի մօրէն Աբրահամու. որպէս ինքն ասէ առ Փարաւոն, և առ Աբիմելեքն։ Յեղեալ Աբրահամ եւթն և տասն ամաց, սկսաւ խնդրել զաստուած այսպիսի պատճառաւ։ Աշխարհն Քաղդէացւոց պարարտ և արգաւանդ է, վասն որոյ յոլովացեալ բընակչաց աշխարհին պարապէցին աստեղագիտութեան եւ հմայութեան. և զպիր գործոց։ Յայնմ գտեալ Տեառն Աստուծոյ զնոսա յանբաւ չարին. Յետ նոցա պատուհասատարակոյս, և կարօտութիւն, և եբեր ի վերայ նոցա բազմութիւն ճագուց զոր ճայ կոչեն. և ի ժամանակս հասման այգեաց և անդաստանաց ուտէին զբեր երկրին. և այս եղեւ զամս բազումս։ Յայնմ Քաղդէացիքն իւրաքանչիւր ոք սակաւ ինչ հերկեր և ցանէր. և արամբք պահէին զնոսա ի բաց քըշելով զթռչունսն, և զոհեցին զոհս դիցն իւրեանց, և ուխտեցին ուխտս և ոչ լինէր դիւրութիւն, և ոչ կսխարդութեամբն կա-

րէին հնարս գտանել։ Իսկ Ա՛բրահամ եօթն և տասն ամաց եղեալ պահէր զանդաստանս հօրն իւրոյ, և ձանձրանայր. և վաստակէր 'ի վարել զհաւան, և յոգւոց ելանէր (հանէր)(1) խնդրէր յամենայն անուանեալ չԱ՛ստուածոցն, տալ նմա սակաւ մի հանդիստ. յարեգակնէ, և 'ի լուսնէ, և յաստեղայ, և 'ի ձուլածու կռոց, և ոչ լինէր լսելի։ Այլ 'ի գիշերի միում մտախորհ եղեալ եթէ պատուհաս ոչս չԱ՛ստուածոյ է, և ոչէ սա դիպուած, զի բազմաժամանակեայ եղեալ, և ոչէ չարս յաստուածոցս մերոց զի թէ 'ի սոցանէր, բառնալ կարէին աղաչեալք ի մէնջ յորժամ զկամս նոցա կատարեմք։ Այլ զի ուստ նէր 'ի հօրէ իւրմէ զաստեղագիտութիւն՝ յորում քաջ տեղեակ էին 'ի նախնեացն. հայեցաւ Ա՛բրահամ յարուեստն այն, և եգիտ զամենայն գունդն երկնից եւ աստեղաբն ոչք 'ի նմա կան, զամենեսեան 'ի ներքոյ հարկի. ապա ծագեաց ի սիրտ նորա։ Ահաւասիկ լուսոյ մեծին Ա՛ստուածոյ. և ասաց է ոմն անծանօթ Ա՛ստուած շարժիչ և հարկանող ամենայնի և արարիչ կաղմիչ նա է բոլորիս, և մուտացօնք լեալ է արարածոց իւրոց, և կամք հրամանի նորա ոչ է առ մեզ

(1) Երկու օրի. յոգւոց հանէր։

և 'ի նմանէ է վրէժխնդրութիւնք պատու-
հասիս 'ի վերայ մեր։ Եւ զգիշերս ամենայն
հաստատեաց 'ի սրտի իւրում զբանս զայս.
և 'ի տունջեանն երթեալ յանդն եկ 'ի վե-
րայ ծնգաց իւրոց և ամբարձեալ 'ի վեր ըղ-
բազուկն իւր ասաց. անծանօթ Աստուած.
արարիչդ ամենայնի, և շարժիչ. և այս
թուինս ստեղծիչ և հարկիչ, հսկածեա՛ ըզ-
ասուս, և ծանո՛ մեզ զքեզ. և գիտա՛ քո։ Եւ
ընդ ասելն զբանս զայս վաղվաղակի անյայտ
եղեն ձագքն յամենայն անդաստանաց քա-
ղաքին, և ասաց Աբրահամ՝ մեծութիւն և
փառք 'ի բարձունս՝ ահա գտայ (1) զԱստու-
ած. ոչ է այլ Աստուած բայց 'ի քէն Տէր
արարչաւոր և բարի, և զօրութիւնն քո ընդ
քեզ, և փառք քո լցցէ զամենայն երկիր։
Եւ գնաց Աբրամ խնդութեամբ 'ի տուն
իւր. և պատմեաց 'ի տան հօր իւրոյ, և ոչ
հաւատացին նմայ, այլ նա ոչ դադարեաց
'ի խնդրելոյ զՃշմարիտ Աստուած. զի յայտ-
նեսցի նմա ծանօթապէս։

Բայն ժամանակի մեռաւ Ելիսս թագա-
ւորն և թագաւորեաց Ինոս որդի նորա
ամս յիսուն երկու (2)։ Երկրորդ թագաւոր

(1) Մի օրի • գտաք։ Միւս օրի • գտայ։ (2) Երկու օրի • ԺԲ • (12)

Ղ թուրացուց։ Այս չինեաց գնինուէ և եղ զարքայութիւն իւր անդ. սա կազմեաց կուռս հօր իւր ոսկեղէն (1), և ետ երկիրս պագանել նմա։ Ի ժամանակս նորա չինեցան Դաբովթ. և Դասան, և Գրանե, Ի սոյն ժամանակս չինեցաւ Երուսաղէմ 'ի Մելքիսեդեկէ Քանանացւոյ, զոր ասեն որդի Թագաւորին Քանանացոց որուժանունն Մելքի ծանաչիւր. և կամեցաւ հայր նորա զոհել զնա կռոցն, և տեսեալ Աստուծոյ զզօրութիւն որ կայր ծածկեալ 'ի մանուկն. և արժանի իսկ էր լինել օրինակ միածնի իւրոյ, սատանայ մեհենին, և ընկզմեցան ծնողքն նորա քրմօք, (2) և յափշտակեցաւ մանուկն յանապատ և մնաւ խնամօքն Աստուծոյ. և եղեւ այր հրաշալի Քահանայ Աստուծոյ և Թագաւոր երկրին. և չինեալ քաղաք դնէր նմա անուն Իւրիշ ղէմ (3). որ Թարգմանի գեօղ խաղաղութեան։

(1) Մի օրի. կազմեաց կուռս հարիւր ոսկեղէն։

Մի օրի. կանգնեաց կուռք մեծարկու հօր իւրոյ ոսկեղէն։

Մի օրի. կանգնեաց կուռք մեծ ահարկու հօր իւրոյ ոսկեղէն։

Հին օրի. չինեաց գնինուէ և փոխեաց զաթոռ Թագաւորութեն իւրոյ յԱթուրեայ 'ի Գնինուէ. և կազմեաց կուռք մեծ արկածու հօր իւրոյ Բիլոսի, և ետ երկրպագել նմա։

(2) Երկու օրի յաչէրան հանդերձ։

(3) Երկու օրի. Ուրիշ ղէմ։

Եւ Աբրահամ եղեւ յառաջադէմ հաճոյ Աստուծոյ եւ էր նա վաթանամեայ. եւ լուաւ Աստուած բազմաժամանակեայ եւ անձանձրոյթ աղօթից նորա եւ աներկայ հաւատոցն եւ ասէ ցնա. Եկ յերկրէդ յայդմանէ եւ տարայց զքեզ 'ի զրկեալ վիճակ ժառանգութեան Սեմայ հօր քո. եւ անդ ծանուցայց քեզ ըստ կարօտութեան քո. եւ տայց զերկիրն քեզ, եւ զաւակի քում յաւիտեան։

Եւ լուեալ Աբրահամու պատմեաց հօր իւրոյ, եւ կամեցաւ երանելի անդ նմա. եւ եկին մինչեւ 'ի Խառան երեալ յԱռհայէ քաղդէացւոց. եւ անդ զտեղի առին եւ լաստացան անդ տուն եւ ստացուածս, եւ կանգնեաց հայր նորա անդ կուռս, եւ այրեաց Աբրահամ զմեհեանն յորում կանգնեցաւ կուռքն. եւ Լոտն եղբայր նորա կամեցաւ շինել ցանել զհուրն, եւ անդէն այրեցաւ առաջի հօր իւրոյ։

Բայց ոմանք զիշակէան 'ի հնարից նորա ասեն լեալ, եւ 'ի Տեառնէ սպանեալ։

Եւ եղեալ Աբրահամու եւթանասուն եւ հինգ ամաց՝ դարձեալ լինի նմա հրամանն յԱստուծոյ գնալ յերկիրն Քանանու. եւ թողեալ նորա զաղգատոհմն իւր 'ի Խառանայ։

ԳՐԱԴԻՐՔԻՆ
ԳՐԻԳՈՐ ԱՊԱՃԵԱՆԻ
Կարգաթիւ.....

Digitized by Google

Ասեն ոմանք այլ կին նորա բաց ի Սառայէ և որդի Ովեանոսէ անուն, որք ոչ յօժարեցին ելանել ընդ նմա։ Իսկ նորա անդիմադրձ եղեալ հրամանի Աժենակալին (1) ել և գնաց։

Բայց խնդիր տարակուսի (2) է ի սեղուս ջրոս, զի հայր նորա եւթանասուն ամաց ծրնաւ գնա, և երկու հարիւր հինգ ամաց մեռաւ։ Իսկ Ստեփաննոս ասէ, թէ յետ մեռանելոյ հօրն փոխեաց գնա անտի։ Իսկ Աբրահամ եւթանասուն և հինգ ամաց էր։ զարմանք է զի Աբրահամ հարիւր երեսուն և հինգ ամաց գայ։ Բայց թէ Սամարացոյն որք ճշմարտէ (3) զի ասեն թուոյ լեալ եւթանասուն ամաց ծնաւ զԱբրահամ և եկաց այլ եւս եւթանասուն և հինգ ամ. կամ որք զՍառայ Հրաքանոյ ասեն և դուստր Ուռանայ. զիարդ Ուռան քան զտասն ամն ծրնանել կարէր զՍառայ։ զի գիր յայտնապէս ասէ զԱբրամ տասն ամաւ եկեալ քան զՍառայ։ այլ որպէս ասացաքն այնպէս ճշմարիտ համարիմ գոլ զերդ։

Իսկ եկեալ Աբրամ յերկիրն Քանանացւոց և եղեալ ութսուն և հինգ ամայ՝ մինոտաւ (եմուտ) Հիգիպտոս։

(1) Երկու օրի։ յաւելուն սելի։ Աստուծոյ։

(2) Երկու օրի։ տարակուսմարացւոյն որք ճշմարտէ։

(3) Երեք օրի։ բայց զՍ-

Այս երեալ անուն ծնաւ զԻսմայէլ (1) ի Հոգեւորայ Եպիսկոպոսէ. և Սառայ անփորձ մնայ ի փարատանէ, զի ծնցի զորինակ Տեառն մերոյ մանչուր յարգանդի։

Իսկ Թագաւորն Լինոս զանհի հարեալ ի կնոջէ իւրմէ խստագունէ քան զենքն՝ փախչէ յանծանօթութիւն. ոմանք ասեն ի Կրիտէս, և անդ մեռանի։

Այս առնու զԹագն Շամիրամ կին նորա և իշխէ Ասորեստանի։ Այս Թագաւորեաց ամս քառասուն և վեց, այլք երկոտասան (2) ասեն. սոյ արար զՀոզեսկայսն բլուրագ՝ զոր կոչեն Թիկս, վասն Թանկից զգուշութեան և ամենայայց աղուգաւ. բայց գոտաք և այլ պատճառ Թլացդ, սասանեալ եթէ ի յաճախել կուսաչուութեան յամենայն երկիր, սատուեաց Տէր դիւաց և եհան հաղմ փրթորիկ յերկիր, և դողայ երկիր ի հիմանց, և տապալեցան քաղաքք և տունք. և առեալ փոթորկին զկուռան հանգերձ դիւաքն Թաղեայ ի ռեղիս տեղիս հոզակուտիք. և բնակեալ են ի նոսա դիւաքն, իսկ ի տանջանս մինչև ցայսօր և տակաւին լսեմք եթէ կախարդք մանանանդ առ Թլաքդ առնեն զարուեստս իւրեանց, և գայ ի դիւաց անտի որոտումն ձայնից։

(1) Ոմանք օրի. Սմայէլ։ (2) Երիս օրի. ԾԲ. (52)։

Աբրամ նորոգեալ Աստուածածանութեամբն, և նոր իմն ծնեալ պանդխտութեամբ օտարութեանն կոչեցաւ Աբրամ՝ և կին նորա Սառա, անուանեցաւ Սարրա, որ իմացեալ լինի հայր ընտիր, և իշխանական տիկին։

Այլ եղեալ Աբրամ ինանուն և ինն ամաց թլփատի, և զաստղի այնու յաղագս (1) յոլոց միջի բնակեալն էր։ Այլ եղեալ հարիւր ամաց ծնաւ նմա Յահակ ըստ աւետեացն Աստուծոյ։ Այլ հարիւր տասն և եւթն (2) ամաց լեալ էած զորդին 'ի զենումն, և ապրեաւ նմա կրկին պարգեւոք նորագոյ խոյիւն փոխանակեալ յօրինակ մեծին։ Ամենք ասեն երեսնամեայ զՅահակ ած 'ի զենումն։ Ի յինքն ամին Յահակայ՝ պատմեցաւ Աբրահամ թէ ծնան ուստերք և դստերք Նաքորայ եղբօր քոյ. և յերեսուն և եւթն (3) ամին Յահակայ մեռաւ Սարրա։

Ամենք ասեն սատանայ գոյժ եւ Սառայ յի թէ զենաւ որդին քո և մահացաւ 'ի ժամին՝ չէ ընդունելի բնաւ։ Այլ եղեալ Աբրամ հարիւր եւթանասուն և հինգ ամաց

(1) Ամենք ազգացն։
(2) Հինն. և պէտ երկու ԼԵ. (35)։
(3) Հինն. և երկու օրի. ԺԵ. (115)։

մինչեւ յերեսուն և եւթն (1) ամն Յակոբայ, կատարի լի բարութեամբ, և հաճոյիւք Աստուծոյ։

Ի հարիւր քառասուն և ութն (2) ամին առ զկենտուր (3) և ստացաւ վեց որդիս 'ի նմա նէ։

Եւ յաւուրս սորա Շամիրամ հարթեաց զհող երկրին Ասորոց (4) վասն ջրհեղեղաց։ Եւ զԱբրահամ ասեն ոմանք աշխատեալ 'ի գործն։ Եւ 'ի ժամանակս յայս է թագաւորութիւնն Ակինացւոց։ Նոյնպէս և Կրիսացւոցն (5) թագաւորեաց Կրէս անուն, որով կոչեցաւ և երկիրն՝ և յայսմ ժամանակս էր Պիոյ (6) որ և Պերդուպեանէս (7) ասի, և յանուն նորա կոչի երկիրն։ Յութսուն և հինգ ամին Աբրահամու Իսմայէլ ծնաւ, ուստի Աղարացիք (8) և Սարակինոսք, և Իսմայէլացիք և Տաճիկք կոչին։ Ի քառասուն (9) ամին առ Սահակ զԻսրաեկս, և 'ի վաթսուն ամին յընդարձակեաւ, և գնաց հարցանել զԱստուած 'ի

(1) Երեք օրի. Լե. (35)։
(2) Հին օրի. ՃԽԲ. (145)։
(3) Հին օրի. Կենդաւրա։
(4) Երկու օրի. Ասիոյ Մեբիա պիսանէ։
(5) Եւթն օրի. Կրեատացւոց. որ է պոլ. ղի 'ի Լիսոնէ Խլնոս ասէ Երկիրն։
(6) Երեք օրի. Պիբա։
(7) Երկու օրի. Պերպոպեն Պեռասցի։
(8) Երկու օրի. Հագարացիք։
(9) Հին օրի. ԼԸ. (38)։

Digitized by Google

Հեռն Մելքիսեդեկի, որ նախածանօթ (1) էր նոցա. քանզի երկու որդիքս էր յրպայեալ, և վիճէին մանկունքն։

Եւ ասէ Մելքիսեդեկ Քահանայն Աստուծոյ բանիւ տեառն, երկու ազգք են յարգանդի քում, և երկու ժողովուրդք. որք էին Յակոբ՝ յոմէ Իսրայէլացիք։ Եւ Եսաւ՝ յոմէ Եդովմայեցիք որք են Հրանկք։

Օգոստոս ժամանակաք Թագաւորեաց Աքգիսյուոյն Ինաքսո, զոր Եգիպտացիքն Իսիս և Սեբուսիս (2) կոչէին։ Եւ էր սա կին դուստր Ովլայ, և սա կոչեայ զԱրգոս գետն Ինապիոս։

Իյեւթանասուն և հինգ ամին Սահակայ եւթն և տասներրորդ իշխանայսուն Դիոպոս Ապիս, և Աստուած կոչեցաւ (3) և ոմանք Սարապին (4) կոչեցին. և եկաց Սահակ հարիւր ութսուն ամ մինչեւ յեւրեսուն և մի (5) ամն Ղեւեայ։

Եւ Աբիմելեք ազարայի (6) Թագաւոր

(1) Ոմանք. նախ ոնծանօթ։

(2) Մի օրի. ասէ Դայն Իսիս. և լոնէ դեբուսիս։

(3) Ոմանք՝ չաստուած կոչեցաւ. ոմանք աստուած կարծեցաւ։

(4) Մի օրի. սարապին։

(5) Երկու օրի. Լ. (30)։ Մի օրի. ԼԲ. (32)։

( ) Հին օրի. Աբիմելեք Թագաւոր քաղդեացի որ է Գերերայ փղշտացւոց բարեկամ տան Աբրահամու։

Digitized by Google

փղշտացւոց բարեկամ էր նոցա (1)։ Ի հաբիւբ երեսուն և եւթն (2) ամին Սահակայ դնայ Յակոբ օրհնութեամբ հօր իւրոյ 'ի Խառան։

Այսու ժամանակաւ յերկիրն Փղշտացւոց շինեայ Իսմայէլ իշխանն զԱւքիմ քաղաք. յանուն որդւոյ իւրոյ Աւքիմայ յորմէ յապիշատակեցաւ Դինայ։

Յակոբ լեալ անդ ութն ամայ՝ առ զ լայ դուստր Լաբանայ Սորուայ. և ութսուն և հինգ ամայ, ծնաւ զՈրբէն (3) և յութսուն և լինն ամայ՝ (4) ծնաւ զԼեւի, և յինսուսուն և մի ամին ծնաւ զՅուխէփ. և 'ի հարիւր ամին եկաւ Սահակ հայր իւր։

Ի յիսուն ամին Յակոբայ փորն եւ թագաւորեաց Երգիացւոյն, որ նախ օրէնս և աստեանս և դատաւորս եդ. և յեւթանասուն և հինգ ամին Յակոբայ Ավգիսիս շինեայ զՇեւսինա Յասրիկէ, և Թէսապոս Թագաւոր Թեսաղացւոցն (5) ոտով կոչէցաւ

(1) Էին օրի. Ե. լեալ Յաբէն և զՇմաւն։
կոր Հե. (75) ամայ 'ի ՃԼԵ. (433) ամին . . .
(2) Մի օրի. ՃԼԵ. (433)։
(3) Էին օրի. դնէ նախ ընդ Ռուբէն. զՇմաւն ապա զՂևի։ Երկու օրի. Հյիշէն զՌաքէլ։
(4) Էին օրի. 'ի Ժ. (10) մին Ղեւայ. լինի ինսուսան և լինն ամին Խարամ.
(5) Երկու օրի. Թեսապոս. Նիկեցւոց։

Digitized by Google

աշխարհն։ Եւ Մեսինէ քաղաք չինեցաւ։ Ի հարիւր տասն ամին Յակոբայ Թագաւորէ Արգիացւոցն Ապիս։ Զմանք ասեն թէ զեղբայր իւր եթող Թագաւոր Արգիացոցն, և ինքն չոքաւ ՅԵգիպտոս, և սա է Ապիան Եգիպտասի։ Սա շինեաց զՄեմփիս ՅԵգիպտոս։

Ի տասն և եւթն (1) ամին վաճառեցաւ Յովսէփ. և յերեսուն ամին տիրեաց Եգիպտացւոցն ամս ութսուն. զոր պատմութիւնք Եգիպտացւոցն, եւթն և տասներրորդ հաստատութիւնք հովուաց անուանեն։

Ի հարիւր երեսուն ամին էջ Յակովք ՅԵգիպտոս. 'ի յիսուն ամին Յովսեփայ Ապարդա շինեցաւ 'ի Ապարտայ որդւոյ Փոքոնեայ (2)։

Իսկ յետ Շամիրամայ Թագաւորէ Ղամէս եղկնի նորա Ինղոքոս, յետ նորա Մենոս։ Յակովք երկայ հարիւր քառասուն և հինգ ամաց վախճանի։ Բայց մինչդեռ էր նա յերկիրն Քանանացւոց զկնի մահուանն Սահակայ վարձեաց Եսաւ զորդիսն Ամոնայ և Մովաբու և զԱրամ, և եկն 'ի վերայ նորա և ապանաւ 'ի Յակովբայ. և հարկեցան որդիքն Եսաւայ՝ Յակովբայ։

(1) Երկու օրի. ԺԵ. (15)։ Ա յս օրի. 'ի խորգին ղանց արար։
(2) Մի օրի. Փոնորեայ։ ՅԻՍՈՒՍԻԼԱՍ։

Եւ՝ի մնանելն Յակոբայ Եգիպտոս՝ Ասորոց թարգմանն եւ թանասուն ոգի ասէ։ Եւ թանասունքն՝ եւ թանասուն և հինգ ոգի (1)։ Բանզի որդիսն Յովսեփու և զորդիս որդւոց նորա որ չէին ծնեալ՝ ի համար առնուն եւ թանասունքն։

Ղեւի լեալ քառասուն և հինգ ամաց ծնաւ զԿահաթ, ոմանք զփորձանքն Յոլքայ աստ ասեն։ Կահաթ լեալ վաթսուն ամաց ծնաւ զԱմրամ (2). Ամրամ եւ թանասուն ամաց ծնաւ զՄովսէս։

Յայսմ ժամանակի թագաւորեաց Աթուրացոցն Աղապարոս։

Յովսէփ եղեալ հարիւր տասն ամայ վախճանի, և՝ ի վեց ամին Ամրամայ. և խոստմանն Աստուծոյ յերկու հարիւր ութսուն և վեց ամին։

Ամին որդիքն Իսրայելի՝ ի ծառայութիւն յետ մահուանն Յովսեփու։ Եւ թագաւորեաց Ռեբերն՝ ամս երեքտասան, և յետ նորա Ամենափիթիս ամս քառասուն երիք. ասա սկըսաւ հեղձուցանել զտղայսն Իսրայելի՝ ի Նեղոս գետ։

(1) Առաքեաց Յովսէփ և կոչեաց զՅակովբ զհայր իւր և զամենայն ազգատոհմն ոգիս եւ թանասուն և հինգ։ Գործոց. Է. 14։

(2) Հին օրի. յաւելու. և եկաց ՃԼԳ. (133). ամ, մինչեւ յերկոք ամն Մովսիսի։

Եւ Մովսէս վնիկեցեալ ըստ ոճոյն եբարձ զնա ԹերմուԹէս դուստր Փարաւոնի, զոր Եբրայեցիքն Մառի կոչեն, որ եղեւ կին Ֆաղնագրա Թագաւորին Մեմփիս քաղաքի։ Եւ ապրեալ Մովսէս 'ի ջրոյն յերեք հարիւր յիսուն ամի խստմանն Աստուծոյ. և եղեալ ռամանամեայ՝ տուաւ յուսումն յԱթենս եւ յԱմփեան ոքք էին յոյդուոյն Բարիսքայ կախարդի քաղդեացւոյ։ Եւ հաւածեալք անոր վասն գողանալոյ զոսկայս երկրին և զոհելոյն կռոցն զոր յանուն հօրն իւրեւանց կանգնեալ էին. և էին սաքա հմտացեալք քաղդեական և յունական ճաքատարութեամբ, եւ յաւելին զԵգիպտոսին, և այնու վարժեցաւ Մովսէս ստիպեալ զնոսա Խամբշանն Մառիայ։

Ի քսան երկու ամին Մովսէս իշխանացաւ, և շինեաց զքաղաքն Հերմուպոլիս (1), որ և կոչեցաւ յանուն սնուցչին Մովսիսի Մառիա։

Յայնմ ժամանակի Եթովպացիքն որ լեալ էին հարկատուք Եգիպտացւոցն, և գտին

(1) Երկու օրի. 'ի քսան երկու ամին Մովսիսի սկսաւ կաւագործութիւն խաղալ. 'ի քսան և ութն ամին Մովսես իշխանացաւ, և շինեաց զՀերմուպոլիս քաղաք . . . ։

Հին օրի. 'ի քսան երկու ամին Մովսիսի նեղել սկսաւ Թագաւորն զԻսրայէլ շինուածոք քաղաքաց։ Եւ 'ի քսան և ութն ամին Մովսիսի շինեցին զՀերմուպոլիս ։

գնասս, և ապա սպասամբեցին, և եկին 'ի վերայ Եգիպտացւոց և գտին գնասս անպատրաստս, և գերեցին և առին զանասունս մեծաղ մնացին Մովսիսի, և տարան։ Եւ Մովսէս էր մեծաղ զարմացեալ Եգիպտոսի կռուեցսա ընդ Եթովպիայ զուսան ամ, և դնացեալ 'ի վերայ Նոցա ընդ օձուս անապատն եղջամբք և արագլօք՝ ուստի նոքա ոչ ունէին, և զկնի տասն ամի առ զԵթովպիսի՝ վասն զի զԹագուհի Նոցա զՔերեսաս և զԱսի մայր իւր, և դարձաւ յԵգիպտոս քաջ և սրի ա-նուանեալ։ Եւ նախանձեցաւ ընդ նմա այրն Ասեայ և կամէր սպանանել զնա, բայց սպասկաւէր 'ի հնոյէ իւրմէ։

Եւ մեռաւ Ասի, և թագեաց զնա Մովսէս, և առաքեաց այրն Ասեայ զԲասանթիս (1) հարչարիչն խրայելի սպանանել զՄովսէս՝ և յառաջեայ Մովսէս, և սպան զնա և ինքն փախեաւ 'ի Մադիամ։ Եւ զկնի փախչելոյն Մովսիսի առին Ենէան և Միրէան զարդիան խրայելի, և տարան գնասս յանապատ հնգետասան (2) աւուր Ճանապարհաւ՝ և շինեցին անդ դրախտ զեւրեն և տասն (3) ամ, և ամրացուցին յոյժ յոյժ, և 'ի կա-

(1) Մի օրի. Քասանթ.
(2) Մի օրի. ԺԷ. (17)։
(3) Մի օրի. ԺԵ. (15)։

Digitized by Google

տարման շինուածոյն առին 'ի տղայոյն Իս-
բայելի ինն հարիւր ութսուն մանկունս ան-
մեղս, և զոհեցին զիւաց՝ և կոչեցին զիշ-
խանն դիւաց 'ի զոհն, և եդին սպահապան
դրախտին. և յայնմ հետէ մնասանդ հնա-
զանդեցան դեւք կախարդացն 'ի գործս տը-
ղոմայ և յամենայն հնարս։

Այսու ժամանակաւ էր Պրամիթեւս ի
մասատաէր՝ որ ստեղծանել ասեն զմարդիկ,
զի իմաստութեամբ 'ի գիտութիւն ածէր
զոգէտսն։

Իսկ Մովսէս գնացեալ 'ի Քուշայիսն (1)
առ Ջրագուէլ որդի Դադանայ որդի (2)
Յեկտանայ յորգւոց անտի Կենդուրայ. և
առ զդուստր նորա 'ի կնութիւն և ծնաւ 'ի
նմանէ երկուս որդիս՝ և էր Մովսէս քա-
ռասուն ամաց։ Յայսմ ժամանակի ասեն
զՄկղեպիդէս բժիշկ երեւեալ Ճարտար, և
Մկղաս (3) Պրամիդեայ եղբայր՝ ատեղագէտ
որ զերկինս կրեալ (4) ասիւր, զոր Իւրիպի-
դիս լեառն անուանէ 'ի վերոյ քան զամպս։

Եւ զայսու ժամանակաւ ասեն Լիթոսլ
ոգացեալ 'ի Ինդիկէս գետոյ գնացեալ առ-

(1) Մի օրի. 'ի Քուշայիսն։
(2) Մի օրի. որդի դադանայ որ Յեկտանայ։
(3) Ոմանք Աղաս։
(4) Երկու օրի. կրեալ։

Digitized by Google

Եգիպտոսիս բնակեցան։ Եւ Կորիտացիք և Կորիս-բանդք զվինուք Կաքաւսն գտին։

Եւ ասա ասեն առ Դեւկալիոնիս Եթեսաղիայ եղեալ ջրհեղեղ, և առ Փայիթոնիս Այթիոպիայ հրայրեացքն. և բազում ապականութիւնք 'ի տեղիս տեղիս ըստ Պղատոնի պատմելոյն. և վիկրոիս Այոկեայ որ է Ատտիկէ թագաւորել (1) ասեն ոմանք, եւ կէսք Այգիպտոս ասեն թագաւորել նախ, և ապա Ատտիկէ։ Իսկ Յոյնք ասեն սա չինեաց զԱթէնս յանուն կնոջ իւրոյ։ Օ՚սա կոչեն երկրորդս կամ զի երկայն էր և կամ զի երկու լեզու գիտէր զԱգիպտոսին և զՅունացն։ Տիրեաց սա և Միջերկրեայց և յանուն սորա կոչեցաւ Կապադովկիա։

Եւ յաւուրս սորա երեւեցաւ Ձիթենի 'ի Դղեկին Աթենայ ուստի առասպելն եղեւ ստեղծեալ։ Եւ սա կոչեաց զԱրամազդ Օ՚եւս, և նախ եղն զոհեաց և յայսմ ամի Դեւկալիոն Պառնասացւոյ (2) կսպմանցն սկիզբն արար թագաւորելոյ։

Եւ Այլեւնոսէ որդւոց Դեւկալիոնի Եղղադացիք կոչեցան, Գրեկք Եղենքն, (3) և Այկսէ Ատտիկեցիք։

(1) Կէսք թագաւորեալ։ Թեան երեւի լինել։

(2) Մի օրի. Պառն ասս. ուոց։ Սխալ ընդօրինակու.

(3) Հելլէնք և կաէք։

Ի բան և հինգ (1) ամի աւետեացն Աբրահամու Կորնելիոս քաղաք շինեցաւ՝ որ երբեմն Իփրա կոչէր։ Իսահակի ասէ թէ Աբրոնոսի Աթենայեցոց դուստր էր Աստիս անուն՝ ի նմանէ կոչեցաւ աշխարհն Աստիկէ։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս Մովսէսի ընդ ծովն կարմիր։

ՄՈՎՍԷՍ լեալ եւթանասնամեայ, եբեւմանն Աստուծոյ արժանացաւ. և զտասան ամն յապաղէր գնալ Այգիպտոս, և հարկեալ՝ ի Տեառնէ գնաց ուղիսուն ամայ. և յաւետեացն Աստուծոյ չորս հարիւր երեսուն ամ էր թուին. և յեւթանասուն և հինգ ամին Աբրահամու։ Երկու հարիւր հինգ ամ, մինչ՝ ի գալն (2) Յակովբու Այգիպտոս. և երկու հարիւր քսան և հինգ ամ կացին Այգիպտոս. և չորս հարիւր ամն լցեալ էր ըստ հրամանի Տեառն սպանանել զՀգիպտացին՝ և ոչ կամեցան փրկիլ որդիքն Իսրայելի՝ այլ մերժեցին զփրկիչն։ Եւ զտասն ամն Մովսէս յապաղեաց զի առ Աստ-

(1) Մի օրի. ՝ի ՅԻ։ (420)։ (2) Յամանք՝ ի գնալն։

ուած վճարեալ էր. և գնացեալ Մովսէս յԵգիպտոս ասան հարուածով ասանջեաց զԵգիպտոս, փոխանակ ասան փոքանացն Աբրահամու, և փոխարէն հարիւր քառասուն և չորս ամի շարչարանացն Իսրայելի։

Եւ Եգիպտոսն թագաւորեալ հալոց երկամեայ։ Սառաջինն շինեաց զնա Մեծրայիմ որդի Հուշեայ որդւոյ Քանանու. և կոչեցաւ յանուն նորա Մոր։ Եւ զկնի յԵրիանէ Երիա կոչեցաւ՝ և Սամասիա թագաւորս կոչեաց (1) զնա յանուն գետոյն Եգիպտոս. զի Ներոս Եգիպտոս կոչիւր, որ է ինքնաբուղխ։ Եւ անուն թագաւորին ընդ որ պատերազմեր Մովսէս, Փէսիոս (կամ Փէսիոս) (2) կոչէր, այլք Կանաքարիս անուանեն։

Եւ յորժամ արիւն ըմպէին Եգիպտացիքն ասաղտկանային, և երթային 'ի Պեսէմ, և խնդրէին ջուր՝ և յորժամ տային՝ արիւն լինէր (3) և ապա կամէին 'ի բերանացն Իսրայելի առնուլ 'ի բերանս իւրեանց, և 'ի կըլանեն իւրեանց փոխէր յարիւն։ Եւ զայնպէս և զիսաւարն նոցա ոչինչ կարէր լուսաւորել, ոչ կրակ և ոչ ճրագ. և նուղկտէին 'ի ծծել ըմ-

(1) Ընդանք շինեաց։
(2) Հին օրի. Փասնոս։
(3) Երկու օրի. յասելս. և Ջանացին ըմպել 'ի ձեռացն Իսրայելի, և լինէր արիւն։

թանձրութիւնն խաւարեալ օդոյն. և 'ի մահ անդ անդրանկացն Եգիպտացւոց ելին որդիքն Իսրայելի վեց հարիւր հազար արու 'ի քսանամենից մինչեւ 'ի վաթսուն ամն թըւեալք։ Եւ էր յելիցն Աղամայ երեք հազար ութ հարիւր քառասուն և երկու ամ։ Եւ ելին յաւուր հինգշաբաթի և անցին ընդ ծովն 'ի կիւրակէի։

Եւ 'ի ձգելն Մովսիսի զգաւազան 'ի վերայ ծովուն զայն ասաց. Այիս Աստուած իմ(1), Շրայիս դու հաներ զմեզ Աստուած, և 'ի ձախն ասաց, Աբոնիայ տէր Աստուած ընդ մեզ, և խաչանիշ նկարու դրոշմն արար նոցա ճանապարհ նոր՝ ոչ միայն ցամաքեալ 'այլ և կանանչացեալ լայնացեալ յոյժ, մինչեւ երկոտասան ցեղքն Իսրայելի ազխիւք իւրեանց հանդէպ միմեանց չուէին։

Ելս եմուտ ցեղն Բենիամինի և ապա ցեղն Ղեւեայ ապա Յուդային և այլոցն՝ և աստի կոչեցան Եբրայեցի. և տուաւ նոցա նոր լեզու և բարձաւ Եգիպտոսին, և նման է հայրենի լեզուին, զոր և արդ ունին, և այնու երգէին «օրհնեսցուք զՏէր զի փառաւոր է փառաւորեալ»։

Եւ զկնի նոցա եմուտ Փարաւոն և ասու-

(1) Երկու օրի. յոտերն և 'ի յաջ կողմն ձգեալ ասէ։

զան 'ի ջուրն փոխանակ մանկանցն Իսրայելի։ Իսկ. Եհան ջուրն զատրանեալսն՝ մասն բաղումս 'ի կողմն Իսրայելի զինուորքն խրախանց, և իւրաքանչիւր զտէր իւր ճանաչեցաց և թաղեցաց. և առին զարդարանսն Թիւնս նոցա, և այնու կոտորեցին զԱմաղէկ. և յայնմ կարգմանէ զհանեալսն 'ի ծովէն առին Իսրովաքցիքն օրք եկեալ էին 'ի Գանդէս (1) գետոյն, և կատարեցաւ բան Սաղմոսին (2) կերգելոյ զԻսրովաքցիսն։

Այսու երեւեցաւ Իսրակլէս 'ի փիւնիկէ և ղէիւտ որթոյ առասպելեան 'ի Դիոնիսոսոյ ոչ 'ի Սելովմայուցն (3)։

Իսկ 'ի սոյն ժամանակս Աբրոպագոս (4) կոչեցեալ դատարանն, և յետ եղեալ Իսրայելի շարժեցաւ Իսպիտոս զերեթն ամիս՝ և 'ի առնս ոչ բնակեցին։ Իսկ ասեն թէ յընկերոջմէն Փարաւոնի՝ մնացեալքն յԻսպիտոս իւրաքանչիւր ոք զգարծս իւր աստուածացուցին, իբր թէ եղեալ նոցա փրկութեան պատճառ։ Ինչպէս ամի ութներորդի Սովսեայ պարտեցաւ Ամաղէկ հարճորդին Իսաւայ՝ քինախնդիր լինել (5) նախնւոյն իւրոյ։ Իսկ 'ի

(1) Մի օրի. Գանգէս։
(2) Ցմանք՝ մարգարէին։
(3) Եթէ ուրի. Իսմայելու։
(4) Եթէ օրի. Աբիսոպագոս։
(5) Եղեալ։

Digitized by Google

նմին տարեաւոյ յերկրորդումն ամսեանն ել ի լեառն մթամպատ առ տէր։

Այսողիմա խմաստնասէր երբայեցի ազգաւ ասէ. թէ նախ Մովսէս շնորհիւ Աստուծոյ գիր արար ի վերայ նոր լեզուին, զոր առին. և այն գրոցն ետ Աստուած Մովսէսի ի տախտակսն յետ յիսուն աւուր ելից նացա։ Եւ յառաջ զ՝ելից գիրքն գրեաց Մովսէս զոր տեսեալ էր և գիտէր. և ասաց զԱստուած՝ զոր չեմ տեսեալ զլինելութիւն ա բարածոցս որպէս գրեցից. վասն այսորիկ ի մանալն և անմարմնապէս արար առաջի նորա զաշխարհս աւուրս քառասուն. և զգալապէս ետ հրաման ձեւ ակերպել զսա՝ ի կազմութիւն խորանին՝ որ գործեցաւ զեւթն ամիս ընդ եւթն աւուր արարչութեանն։

Եւ ապա գրեաց զգիրս Օննդոցն և զայլ երիսն. և ի մուտս երկրորդի ամի ելից կանգնեցաւ խորանն. և անդրէն դարձան վերանք դրախտին անաշխատ և անցաւ։ Ի կարճոյ կամէր տանել զնոսա Աստուած յերկիրն պարգեւայ զաւուրս քառասուն յետ ըստեսելոյ զերկիրն, որ էր յերկրորդում ամի ելից՝ յորժամ կանգնեցաւ խորանն։ Այլ զի բամբասեցին զերկիրն օրհնեալ ի Տեառնէ, և ի կոխմանէ ոտից Աբրահամու զարբեալն, որ

բառս տարաց. եւ նոցա յամել զամս քառասուն. և ոչ Մովսէս եմուտ յերկիրն, զի երկմտեաց. և զապրեցաւ 'ի հարկանելն զվէմն. զի նորա սուգ էր 'ի վերայ Աստուծոյ քեռւոյն իւրոյ։

Զ. Կնի վեց ամի ելանն Իսրայելի Թագաւորութեան Ալթենացւոցն Կրանոս, յորոյ դստերն անուն կոչեցաւ աշխարհն Աստիկէ։ Տիրեաց և Ինջերկրութեան աշխարհին որ Կապադովկիայ կոչեցաւ 'ի Կիլիկրուպեայ, որ նախ Ալքոս կոչէր։ Իքսան ամի իշխանութեանն Մովսիսի Թագաւորեաց յԵգիպտոս Եգիպտոս անուն ամս վեցթասուն և ութ. ասեն թէ ամս անուամբ կոչեցաւ երկիրն Եգիպտոս. ասոր ասեն շինել տաճար Սղոզոնի յԱթէնս, և անուանիլ Արիսպագոս։ Մովսէս լեալ հարիւր քսան ամաց կատարի, և այն է սկիզբն Յոբելինին Եբրայեցւոց։ Եւ կատարեցան հինգ գիրքն Մովսիսի. որ ունին գործք և պատմութիւնք երեք հազար եւթն հարիւր ութն ամաց ըստ Եւսեբեայ։

Եւ առ Յեսու որդի Նաւեայ զգաւազանն և զիշխանութիւն Մովսիսի, և առաջնորդեաց ժողովրդեանն Իսրայելի ամս քսան և եւթն։ Ի վեցերորդ ամի իշխանութեանն Յեսուայ Դանաւոս եղբայր Եգիպտոսի Թա-

դաւորի յիսուն դատերոք զյիսուն որդիս եղբօր իւրոյ կոտորեաց. բաց 'ի Լինկեայ՝ որ յետ նորա Թագաւորեաց՝ սա է յամենայն կողմանց աշխարհաւն։

Ի տասն և ութերրորդ ամին Յեսուայ Փիւնիկս և Կադմոս 'ի Թեբայեցոց Լիբիպտոսէ Ազորիս եկեալ՝ Թագաւորեցին Տիւրոսի և Սիդոնի. և անուամբ նոցա կոչեցաւ երկիրն Փիւնիկէ և տուն Կադմեայ։ Լիզկնի տոցա բերաւ իմաստութիւն յաշխարհն յայն որպէս Սիկրոպս եբեր զենակիչս Սեմիրիս քաղաքի 'ի Ասիէն. և Սերմանեցաւ աղանդն իմաստասիրութեան 'ի Յոյնս (1). և նա արար Յունաց գիր, զոր այլք զԿադմոսէ ասեն թէ Յունաց գիր արար։

Յեսու կատարեցաւ հարիւր եւթն ամաց, և դատաւորացաւ Գոդոնիէլ եղբայր Բաղեբայ կրտսեր ամս քառասուն։

Աիրիկանոս երեսուն ամ դնէ 'ի մէջ Յեսուայ և Գոդոնիէլի։ Լիւ Յոյնք յիսուն ամ դնեն զԳոդոնիէլի դատաւորութիւնն։ Բայց ութն ամ ծառայեցին Բուսայ զոր ասեն Գոդոնիէլ՝ այն այլ սմա է համարեալ։ Յաւուրս սորա շինեցաւ քաղաքն Դիւթանիայ

(1) Ըմանք Էփանայ ասէլոյ 'ի Յոյնս ասին անդ իմաստասաղանդն իմաստասիրութեան թեան 'ի Յոյն։

որ կոչին Այլոս, Պալպոս, Թէոտոտէ, Կլ-
պիտոտէ, Այրօնոս, և աստ շինեցաւ քաղա-
քքն Սիկիղիայ։

Ի յայսմ ժամանակի թագաւորեաց Ար-
գիտացոյն Պալպոս, ուստի և Փիլոտոն ե-
բեւեցաւ բարեպաշտոն անանուն և թագաւոր։

Յետ Պոդոնիէղլի ծառայեաց Խրայէլ
Եղղոմայ արքային Մովաբացւոց տասն և-
ութ ամ, զոր յարեալ են յամն Ը.ոդայ (1)
Եփրեմացւոյ որ դատեաց զԽրայէլ ամս
ութսուն։

Այսր շինեցաւ Կիստոմն Բաղաք 'ի Պա-
դամոսէ. և յութ ամին սորա թագաւորէ
Ընթեռնայ Ընբիսաթոս. և 'ի քսան ամին սո-
րա թագաւորէ Ընթուրացւոյն Լամբարի-
դոս ամս երեսուն և երկու. և շինեաց զԲ-
Բաղաքսէ. և աստ կատարեցաւ չորեք դար-
քքն, որ է չորս հազար ամք։ Ի Ադամայ մին-
չեւ զՄովսէս քսան և հինգ (2) ծնունդ է,
և անտի ոչ զծնունդն թուէ ոմով այլ զանո-
ւանս դատաւորացն։ Յետ Ը.ոդայ ծառա-
յեցին ազատգեացն ամս քսան. և զօրացաւ
Սամեգար և ապան 'ի Փղշտացւոյն վեց հա-
րիւր այր մահով արօրոյն. և թագաւորեաց
Բարակ Դեբորիայիւ ամս քառասուն. զայ-

(1) Մի օրի. Յաւդայ։ (2) Երիս օրի. քսան և ութ։

լուզգեսայն ծառայութիւնն նոցա հանարին։ Յաւուրս սորա Յովն կացեալ ապարատեսս Աթենացւոց Յոյնս անուանեաց զԱթենացիս։ Եւ Կիրինէ քաղաք շինեցաւ 'ի Լիբիա. և Արգիացւոց Թագաւորքն դադարեցին, զարս մեք ոչ գրեցաք յանուանէ։ Սկ կոնացւոց Թագաւորեաց Սիկան, և 'ի նմանէ Սիկոնացիք անուանեցան՝ որ նախ կոչէին Եգեղացիք։ Ի տասն և եւթն ամին Խարակայի Իղեոն շինեցաւ յԻղեոսէ, և Ապարատացւոց իրքն, որ ասեն թէ վասն ամենայն կողմանց գումարելոյ թշնամեայն Սպարտայ անուանեցաւ, որ է յան ժողովածոյ։

Յաւուրս Խարակայ էին Միսարայ զորավարն Յաբենայ և կոտորեցաւ։ Եւ Յայէլ կին Քաբերայ խորիս վարսեաց ընդ փողս նոր որ էր յանտերացն Մովսեսի. և աստ էր տեսիլ հարիւր իմաստասիրացն 'ի Հռոմ, որք տեսին 'ի Միւմ գիշերի զմի տեսիլ եւ թրն արեգական. զոր Աբիլէ կին իմաստուն մեկնեաց 'ի վերայ եւթն դարուց և եւթն նշանաւոր Թագաւորաց. և զվեցերորդն 'ի Քրիստոս մեկնեաց, որոյ Ճստագայթն ծածկէր զայլն և ոչ մոռանէր նման այլոցն։

Եւ Թագաւորեաց Ամիդոն 'ի վերայ Սիրիկեցւոցն. և Աթուրացւոցն Պանաւոս ամս քառասուն և չորս։ Յետ Խարակայ Իշխե-

ցին Մադիանացիք 'ի վերայ Իսրայելի ամս եւթն, եւ ել Գեդէոնն կոստորեաց զնոսա հաւրիւր քսան հազար (անձինս) և դատեաց զԻսրայելն ամս քառասուն. յայլազգեացն յարին 'ի Գեդէոնէն։

Գեզասոս (1) հիւսն ասա երեւեցաւ. որ կարծեցուցանէր շարժուն զպատկերն զոր առնէր՝ զի նախ զոտն զատանէր, զոր այլք կիրս գործէին։ Ի մետասան ամի Գեդէոնի Կիպրեան քաղաք շինեցաւ. և Տիւրոս քաղաք չինի նախ քան զաշխարն Երուսաղեմի եր կու հարիւր քառասուն ամաւ, որպէս ասէ Յովսեպոս։

Յաւուրս Գեդէոնի Լսիլիս Թրակացին, և Գինոս վարդապետն Հերակլի երեւէին, Թամիրոս Փիլամոնեաց։ Յերեսուն երեք ամին Գեդէոնի Թագաւորէ Աբիմելեքն Սուսրամոս ամս տասն և ինն. և Թագաւորէ 'ի Թերպիս Պղոլն երաժիշտ (ասեն) նուագօքն շարժէր զքարինսն։

Օպեդէոնի եւ Թանասուն որդիսն կոստրեաց Աբիմելեքն հարճորդին, և իշխեաց Իսրայելի ամս երեք. և յետ նորա Թոլայ ամս քսան և երիս. և ասա երեւեցաւ կինն Հեդրաս (2) անհնարին Յովսեստէն զոր ասէ

(1) Երկաւ օրի. Դեդաղոս։ (2) Երկու օրի. Հիդրասա։

Պղատոն։ Եւ Հերակլէս զԼիզիոն աւար հարեալ կանէր և զԱնդէոս ապստամբէր զոր երկրաձին ասէին։ Եւ Աթենացւոցն թագաւորեաց Թեսեւս ամս քսան և ութ։ Եւ Աթուրացւոցն Մեթրոս տիրեաց։

Ի քսան և մի ամին Թովղայ շինեցաւ Տպրտաս Կիւլիկեցւոց 'ի Իրիասէ որդւոյ Տանայի։ Շինեցաւ և Կարկեդան. և Իլիան առաւ։

Յետ Թովղայ Յայիր դաղատացի ամս քսան և երիս. 'ի վեցերորդ ամին սորա Թագաւորէ Աթուրացւոցն Տուտլոս ամս երեսուն և մի. Յայնք Սին Տիտոնիս (1) ասեն. և ասեն թէ՝ սա էառ զԻլիոն քաղաք. 'ի սորա վերջասաներորդ ամին Թագաւորէ Աթենացւոցն Մոսթոս (2) ամս քսան և երիս. և նախ քան զսա Թեսեւս զԱթենացւոց ցորուեալսն ժողովեաց. և զսեղեկոյսն մահուանէ։

. Այս երեւեցաւ Փիլոն. երաժիշտ, որ արարք դասս երաժշտաց։

Օգնի Յայիրայ ծառայեցին այլազգեացն որդիքն Իսրայէլի ամս ութ. և ոմանք ասան և ութ ամ ասեն, որ յայլոցն խառնին։

(1) Մի օրի. Տիթոլուն. մի՝ Տիթոլուսիս. մի՝ Տիթանիսս։ (2) Մի օրի. Մենթիս. մի՝ Մենթաս։

Յեփթայէ ամս վեց (1)։

Այսպէս ասեն թագաւորել զ՝Սկեղեմն Խմենաղոս (2)։ Յետքն դատաւորեաց Իտրայելի ամս հինգ (3)։ Զմանիք աստ ասեն թէ Ա-զեքսանդրոս զ՝Շլինէ առեւանգեաց, և զի-լեռնակոն պատերազմն վասն նախանձու ըզ-ատան ամ։ Յետ Հերակլէս խոցեալ սրով, այ-սեաց զսնձն հրով։ Իսկ յետ Յետքնի կաց յեբրայական մատենին դատաւոր Իզան, և ասան ամ ոչ կաց (4) յեւթանասնիցն։

Ընդ դոն ամս ութ, և աստ թագաւորե-ցին Լատինացիք որ կոչին Հռովմայեցիք։ Առաջին թագաւորն Ենէաս անուն։ Յետ Ընդոնի ծառայեցին որդիքն Իսրայելի Փե-ղշտացւոցն ամս քառասուն. և յարեաւ Սամփսոն փրկել զ՝Իսրայել ամս քսան։

Յետ Ելի ամին սպա եղեն երբն Հռու-թայ։ Յետ թագաւորեաց Ալթուրացոցն Տոսէմէոս ամս քառասուն։ Յետ Ի տասն և ինն երրորդ ամին Սամփսոնի մեռաւ Օնեւս, և թաղեցաւ Ի Կրեսոէ. զոր ասեն կեցեալ ամս ութ հարիւր ութսուն. և վասն շատա-կեցութեանն Օնեւս կոչեաց յանուն ատե-

(1) Մի օրի. առ. զդատաւորսն Ի Յեփթայի ամս վեց։
(2) Մի օրի. զ՝Սկիդեմն Ի Մենաղայ։
(3) Մի օրի. եւթն։
(4) Երկու օրինակ չկայ։

Digitized by Google

զան զի 'ի ծնողացն Դիմոց կոչէր։ Եւ Խա-
դացիք ծովակալէին զառաջինն ամս քնա-
ստուն և երկու։ Եւ յետ ամաց ութից առ-
նոյ Իղիանի թագաւորէին Ասորեացիք որ և
Հռովմայեցիք. յետոյ կոչեցան Հեթանոք։

Սոսին թէ Սամիան գործէր գործ իբրև
Հերակլիս, և Երբայեցիք զԱմգիանի ի-
խանութիւնն քառասուն ամ ասեն. և ե-
թանասունքն քսան. և Յովհաննէս պատ-
մագիր՝ դատաւոր մի ոչ յիշէ զմի
անի Սամեգար անուն. և ասոյ նմա ժամա-
նակ քառասուն ամաց։ Իսկ Աբրիկանոս ա-
սէ զքառասուն ամն չէ՛ոյր նոցա դատաւոր
և խաղաղութիւն էր նոցա՝ և ոչ ուստեք
խռովէին։

Հետ քահանայ դատեաց զԻսրայէլ ամս
քսան, ըստ Եւթանասնեկին, և ըստ Աստրոցն
քառասուն ամ՝ և ամենայն ժամանակն՝ Հե-
զեաց Եւթանասուն և ութ ամ՝ յերեսուն
և ութ ամին դատաւորեաց, և 'ի տասն և
ութ ամի իշխանութեան նորա ծնաւ Սա-
մուէլ. և 'ի քսան և մի ամին ընծայեցաւ 'ի
խորանն։ Սա նորոգեցաւ Իղիան յԱիկտորի
որդւոցն, և Աշտարակն զԱրիեսացւոց մե-
հեանն այրեցին՝ և Ալիկոնացւոց թագաւորն
բարձան. և քաւրմքն առին զթագաւորու-

Digitized by Google

թիւնն մինչ 'ի Բարիտոն քուրմն, որ առ 'ի չժուժալ ծախուցն փախստական եղե. եւ Լ թենացւոց թագաւորութիւնն յաղ ազգ փոխեցաւ. զի Անելանթաս թիմնիտէ յալ թեաց Պայազատի. և տօն սկսան կատարել խաբեբայից, զի խաբէութեամբ յաղթեաց։

Յետ մահուանն Հեղեայ եղեւ տապանակն 'ի տան Ադեդարայ (1) ամս քսան. դարձեալ այլազգեացն. և դատաւորեաց Սամուէլ ըստ Աբրայեցւոցն ամս քառասուն։

Բայց 'ի քսան ամի իշխանութեան նորա խնդրեցին իւրեանց թագաւոր և կատարեցաւ ժամանակ դատաւորայ, և սկսաւ թագաւորայն։ Բայց Սաւուղայ ժամանակն Սամուէլն է համարեալ (2)։ Սաւուլ թագաւորեալ ամս քառասուն. յերրորդ ամի թագաւորութեանն իւրոյ կատարեաց զ Ամաղէկ։

Եւ 'ի տասներրորդ ամի թագաւորութեան նորա ծնաւ Դաւիթ և 'ի քսան երեք ամի թագաւորութեան նորա օծաւ Դաւիթ։ Եւ 'ի քսան և ութերրորդ ամին իւրոյ Դաւիթ սպան զ Գողիաթ։ Եւ յերեսուն

(1) Երկու օրի. Ամինադաբայ. ըստ Աստուածաշունչ գրոց։

(2) Հնագոյն օրի. ունի այսպէս. Եւ 'ի քառասուն և երկու ամի կենացն Սամուէլի և 'ի քսան ամի իշխանութեան նորա։

և մի ամի թագաւորութեան իւրոյ Սաւուղ մարգարէանայր 'ի Լաւաթիհուտա, մարգարէութիւն չարտան իւրոյ, թէ Դաւիթ է թագաւորելոց։ Յերեսուն ամի ծննդեան Դաւթի մեռաւ Սամուէլ, և յետ եւթն ամի մահուանն Սամուէլի սպանան Սաւուղ, Յովնաթան, և Դաւիթ արքայացաւ 'ի Բեթլեհեմ եւթն ամ։ Սա առ զՇրուսաղէմ և շինեաց զՍիոն, և թագաւորեաց անդ ամս երեսուն և երիս՝ և 'ի տասն ամի թագաւորութեան իւրոյ եհան զտապանակն 'ի տանէն Աբեդարայ (1), և 'ի բերելն մեռաւ Ուզիա, զի արգելուլ կամէր զշնորհն Աստուծոյ որ 'ի տապանակին 'ի սիրելոյն իւր յԱղամոյ. զի անկաւ 'ի վերայ գերեզմանի նորա, որպէս սիրելիք առնեն խանդաղատեալ գթութիւք իւրեանց, որպէս ասաց Յուրբն Յակոբ Ուռհայեցին։ Նա այլք այլ պատճառ ասեն։ Նա էր Քահանայապետ Աբիաթար և մարգարէքն Դան (2) և Գադ։ Նա Դաւթան որ ինամէր զԴաւիթ միշտ կալով ընդ նմա. և մինչ էր Դաւթան 'ի Դաբաւոն, յայտնեցաւ նմա մեղքն Դաւթի 'ի Ուերսաբէ՝ և եկն փրկել զնա. և 'ի գալն պատահեաց նքմա մեռեալ մի, և 'ի թաղելն զնա յամեաց

(1) Ամինադաբայ. (2) Երկու օրի։ Գադ։

և գործեցաւ շնութիւնն. և դարձաւ տրրտմութեամբ. և 'ի սպանանելն զԱբրիա, եկն յանդիմանեաց զնա 'ի վերայ երկուց չարեացն. և 'ի զղջանալն՝ թողութեան յոյս ետ նմա. և նշան ետ զմահ առաջին որդւոյն Երոսաբեայ. և երկեաւ Դաւիթ յԱստուծոյ՝ և ապաշաւեաց զամենայն ժամանակս իւր։

Յաւուրս Դաւթի Քաղկեդոն շինեցաւ 'ի Քաղկեդոնէ Ցիւրացւոյ. նոյնպէս և Սամոս շինեցաւ։ Յերեսուն և ինն ամի թագաւորութեանն իւրոյ Դաւիթի ընտրեաց 'ի Լեւացւոց անտի հարիւր ութսուն և ութ անձինս, և արար դասս քսան և չորս, երկոտասան այր 'ի դաս մի սաղմոսաց և սպասաւորս տապանակին։ Լն. յամենայն ժամանակս ետ պատերազմ ընդ այլազգիս մեծաւ յաղթութեամբ։ Վեցեալ ամս եւթանասուն Թագաւորեալ ամքառասուն կատարի։

Լն Թագաւորեաց Սողոմոն որդի նորա ամս քառասուն. երկոտասան ամաց էր 'ի թագաւորելն իւրում, և յառաջին ամին ելն նմա որդի Ռոբովամ 'ի Նամայէ կնոջէ Ամմանացւոյն. սա 'ի չորրորդ ամի թագաւորութեան իւրոյ, սկսաւ շինել զտաճարն, և կատարեաց զնա ութ ամ. 'ի չորս հարիւր ութսուն և մի ամի ելից Իսրայելն յԵգիպտոսէ։

Եւ Աստուածընկալն Գրիգոր ասէ եւ նոր
ցա դատաւորս մինչեւ ի Խամուէլ Մարգա
րէ ամն չորս հարիւր յիսուն։ Եւ եթէ ապա
գէտ է յիսուն ամ ասելի գոյ. բայց գիտայն
ի ծառայութենէ աղքատացն է անդ ասեալ։

Յերեսուն ամի թագաւորութեան թա
գաւորեաց Սողոմոն երկամեայ ի Տեառնէ և շի
նեաց տունս կուսոյ Խամովայ Մաքաբացւոյն
և Մեղքամայ Ամմանացւոյն. ուր և կայր
տունն Փիրոդիտեայ Աստուածուհւոյն
Յունաց. և էր բարձրութիւն տաճարացն
երեսուն կանգուն և լայնութիւնն յիսուն.
և շինեցաւ տաճար Ամմանացւոյն երեքտա
սան ամ և Մովաբացւոյն եւթն ամ, արարող
նոցա ոսկւոյ և ծախուց ոչ էր չափ։ Արար
և ծով սղնձի և եդ եզինս ի ներքոյ նման
տաճարին Տեառն։ Եւ սա քակեաց զՆոսի
ոք քաղաք, և շինեաց զքաղաքս եւթն՝ ըզ
Թէտիւր, մերձ Հէմայ. և զԱրաս, և ըզ
Հէսուր, և զԱկոտուր, և զԳազարէ, և ըզ
Եդդուր ներքին և վերին, այլ և զՄէլէօթ
ութերորդ. և այսոսիկ ի Դամասկոս, թա
գաւորեաց Հադադ սատան Սողոմոնի (1)։

Յաւուրս սորա. Աքիաս մարգարէ ասե

(1) Մի օրի. Հադադաս հա- օրի. Հադադաս տան Սողո-
կադ տան Սողոմոնի. այլ մոնի։

առնէր, զի լուծք երինջոյ կոխէին զ՝շրուանս զէմ, և զուռճարն, և զքահանայսն. և ասայ Սողոմանի թէ կանայքդ այլազգիք հեռաց ցուցանեն զքեզ 'ի սեառնէ. որպէս և եղեւն։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս թէ Դշխոյ եկն առ Սողոմն։

Այր սա եկն Դշխոյն հարաւայ զոր ասեն յապգէ գաստերն Նոյի Յ՝ստզկէ սերեալ, որ և իշխան (1) կանայք կողմանցն հարաւայ ժառանգութիւն ասեալ 'ի նահապետէն Նոյէ մինչեւ ցայսօր, և անուն Դշխոյին Նոյայ կոչի. որ եկն 'ի համբաւ իմաստութեան նորա և փորձեաց զնա բանիւք 'ի հարցուածս առակաց զոր կարգեսցուք ասա ասկաւ ինչ։

Ա. Նախ եհարց յաղագս Աստուծոյ։ Օ՞ինչ է Աստուածն քո. և ո՞ւմ նման է և ո՞ւրով կերպարանի։

Ասէ Սողոմն Աստուածն իմ Է, և ամենայն էից վերագոյն, և յոչ ինչ կերպարանի. զի ամենայն ինչ եղեալ, և հակառակ

(1) Մի օրի. Իշխեին.

ունի, և իմ Աստուածն անեղ և աննեարհակ է։

Բ. Արդէն շարժի գումնդն երկնից. յանի թէ յահեակ, բոլորիւն շրջի թէ մաս ուամբ։

Երկուս օրինակս ունի անուագայուն թեան՝ զի շրջաբոլորն երկնից յարեւելից յաջակողմն շարժմամբ ընդ հարաւ յարեւմուտս գնայցեալ՝ դառնայ ընդ հիւսիսի՝ ի նոյն՝ հրամանաւ հարկի ընդ. տիւ և ընդ գիշեր շուրջ մի կատարէ անմոլար գնդիւն աստեղաց։ Իսկ մոլորակքդ կոչեցեալ յումանց շրջագային յարեւմտից ընդ ձախս կողմն կոյս յարեւելս. եւ իւրաքանչիւր ըստ բարձրութեան՝ և ըստ ցածութեան՝ ըստ նեղութեան՝ և ըստ արձակութեան՝ գօտեացդ կատարեն զշուրջն իւրեանց յամաց երեանից մինչեւ յաւուրս երեսուն, ՝ի Կրօնեայ որ է Երեւակն մինչեւ ՝ի Սահրա, որ է Լուսին։

Գ. Ինչս քան զէանալն ամենայնի ուր էր ամենարարն, և զկնի լուծմանն ուր դադարել անշարժականն։

Յառաջ քան զէանալն ամենայնի, կայր միշտ Ն՝ ի յինքեան, և լինէր (1) էական բնութեանն և զուարճանայր յանեզելական

(1) Ասէր, զի էր էական բնու։

Digitized by Google

բարին։ Իսկ այժմ 'ի նա են, և կան ապա-
ւեալքս, և յետ լուծմանն մնայ նոյնպէս 'ի
յիմքեան և 'ի սրբոյն Հոգին և սուրբքն 'ի
նա, փառաւորէ և փառաւորի։

Դ. Օ՞ր մինչ է զի կին Ընդկայ յետ ու-
սելոյ նուռն ոչ եւս յղանայ։

Նուռն ցրտին է և գիծին. և Ընդկայ
երկիրն ջերմին է և չորին. և կին Ընդկայն
ցրտին է և գիծին. բնութիւն կնոջ և նուռն
խառնեալ 'ի միմեանս հակառակ բնութեան
երկրին՝ ոչ յղանայ։

Ե. Ար հնդուպին ըմպու անպտուղ է
սերմամբ։

Բնութիւն գինւոյ ջերմին է և չորին՝
և յաւելու քուն. և բնութիւն առն նոյն-
պէս, և յաձախեալ առն 'ի հակառակն լինի
անսերմն։

Զ. Իմաստութիւն ընդհանուր է թէ
մասնական. և բնութեամբ է թէ ուսմամբ.
թէ պատրեւոք։

Իմաստութիւն ընդհանուր է սեռիւ,
և մասնական է տեսակօք, և է բնութեամբ
գոյիցս հնչաւորաց և անկոյ և բուսոյ։ Իսկ
մարդկան ապրի է 'ի բնական խառնուածոյ (1).
և է ուսմամբ յաշխատանաց գոյացեալ 'ի

(1) Երկու օրի. բնական 'ի խառնուածոյ։

բնութիւնց գիւտից. և է պարգեւաց ի փա-
ւոր տուողին Աստուծոյ. և այս ոչ է հա-
տարակաց, այլ ընտրութեամբ արժանեաց։

Աշակ. Տունկն թագաւորդ, և ոչ ի բնը
նութիւնէ, և վարեսցին նմա շառաւիղք
յոտոգմանէ բոյսց և հիւսեցան պսակք ա-
նարժան ոդուոց։

Լոգոս. Լուեալ է քո զի Աստուած
վտուեալ մարդեաւ յայտնեցաւ Ադամի,
և յերեւմանէ անոի հարցաւածք և դար-
ձուածք պատասխանեաց եղեն։

Աշակ. Անայր օտար և որդիք պղծութեան
ապանող և մեղցանող անօրինաց, յայտնեալ
գողութիւն և ապրեալ թագաւորք արա-
ատովք։

Լոգոս. Հարքն իմ և զիս այպանեաս,
թոռանդ կարծեալ ապանող արանցն մեցց ըղ-
հատան իմ գողացեալ ի Յուդայէ։

Աշակ. Ոչ է գարշն և զաղկին՝ որ փոխ-
խեալ ամլոք մեղացանէ զԹագաւորս։

Լոգոս. Ի դաշտանէ կանանց թագա-
ւորք և ազգաւորք անանկին պատուելի ստինս
ամկոց (1)։

(1) Մի օրի. Ի դաշտանէ կանանց թագաւորք և ազգաւորք անանկին պատուելք ի ստինս ամկոց։ Ա մի օրի. Ի դաշտանէ կանանց թագաւորք և ազգաւորք անանկին պատուելք ի ստինս ամկոց։

Ն՝ոսկ. Խորհուրդն պահանջողն յաճախեաց զխոհակերան. յաղագս ղնուազանութեան համոյ աշխատող և աշխատէ, և մի է ճաշակն։

Ի՝ոանն. Չթէ ունիս աղնիւ խոհագործ յաւել՝ի հազարս մեր, սակայն որպէս թերի քեզ մի է ճաշակն. բայց օտար է անօրէնն՝ի տեառնէ մերմէ (1) և դառն է մնոց՝ի դատաստան։

Ն՝ոսկ. Փեսայն անեղեւոյթ և հարսանիքքն անփափոխ. և սենեակն անարատ և կաուսղեալ հարսինն դիպի ամօթոյ մեծի։

Ի՝ոանն. Մի՝ նախատեր զժողովուրդս մեր անմտհապէս հարսնացեալ Ն՝ստուծոյ անճառելի խօսմամբ. և ոչ դիպիմք ամօթոյ պատնիլոյ յօտար Ն՝ստուածս. և ձեզ է ամաչելն պաշտողացդ զիրեղէնն թ՝րիանէ որ է արմատն։ Ի՝սայ առ և դու՝ի մէնք առակ մի այդու։

Ն՝շտարակ մի զօրաւոր և անօթի վիրաւորուիցեան. և՝ի նմա տաճար եռանկիւնի որոյ քարինքն ցնծութիւն, և հիմունք նորա սէր. շինուածք նորա ջուր, սկզբունք արձակմանն գգուանք՝ ձեղունք նորա կապարք. սիւնք նորա ուրախութիւն. գիւտ նորա օտար, և

(1) Մի՝ զրի. իւրմէ, մի՝ օ. զի. իմմէ։

բնակչաց նորա ոչ գոն անձինք. և հետե-
ւողք նորա ընդ վայր, և մահարձանք նորա
'ի նմանէ և յինքն. և պատուհանք նորա մեկ
նակք. և գործիք նորա հակառակ են կաղ-
մուածոյն (1), և պահապանք նորա ոչ երևին։

Այլ ասէ դշխոյն լուեալ էաք զքեզ ի
մատուն, այլ ծածկատես ոչ կարծէաք. և
արդ գիտեմ (2) զի Աստուածն քո միայն է Աս-
տուած երեւելեաց և անտեսանելեաց։ Գո-
վեաց Դշխոյն և զկազմուածս տաճարին. և
զսպասաւորս տաճարին, որք ըստ ամենայ
պաշտէին առաջի տեառն երկոտասան դասք
քսան և չորս հազար 'ի դաս մի, և վեց հա-
զար դասաւորք. և չորս հազար քնարերք
գուք և չորս հազար դոնապանք, զոր Դա-
ւիթ հայր նորա կարգեալ էր. և չափ տա-
ճարին վաթսուն կանգուն, և քսան լայն,
և հարիւր քսան՝ բարձր. տասն սեղան ոսկի
և տասն աշտանակ ոսկի. և երկու սիւն արտ-
տաքոյ երեսուն և եւթն կանգուն յաջմէ և
'ի ձախմէ, որոց անուանք Բոաղ և Յաքուամ,
որք ասին զօրութիւն և ուղղութիւն։ Այլ
Սուրբն սրբոյ քսան կանգուն լայն, և քսան
երկայն՝ ընդ որ շատ զարմացաւ Դշխոյն։

(1) Մի օրի. կազմածոյն։ հաւասամ, եթէ։
(2) Մի օրի. իմացայ եւ.

Եւ գնաց 'ի նմանէ բաղում օգտութեամբ։

Եւ Սոլոմոն զկնի մեղացն զղջացաւ, և յիշեաց զպատուէր Հօր իւրոյ, և մոռաալ 'ի սենեակ ապաշաւեաց, և մեռաւ յիսուն և երկու ամայ, թագաւորեալ ամս քառասուն։

Եւ էառ զթագաւորութիւնն Ռոբովամ որդի նորա ամս տասն և եւթն. և բաժանեցան տասն ցեղքն և եղին իւրեանց թագաւոր զՆեբովամ որդի Նաբատայ 'ի ցեղէն Եփրեմի։ Եւ Յուդա և Բենիամին եղեն ընդ Ռոբովամու և անուանեցան Յուդայեանք և տասն ազգն կոչէր Իսրայէլ եւ Եփրեմ։

Յաւուրս յայսոսիկ մարգարէք էին Սադովկ և Աբիաս սիլոնացի և Սամեայ. եւ խմաստասէրքն Հոմերոս և Իսադաս (1) զոր այլք քան զսա յառաջ պատմեն։

Եւ էր քահանայապետ Սադովկ 'ի ցեղէն Եղիազարու և ութերրորդ ԱՀարոնէ։ Եւ 'ի տասն և եւթներրորդ ամին Ռոբովամու եւ Օսակիմ արքայ Եգիպտոսի Հերուսաղէմ և կողոպտեաց զտաճարն Տեառն և գնաց։

Զկնի Ռոբովամու թագաւորեաց Աբիա որդի նորա ամս երեք։ Եւ յետ նորա որդի

(1) Մի օրի. Սիոդոս. մի դոռ. մի օրի. Հոմերոս ա. օրի. Հոմերոս անուն և Սի. նուն ի Իսիդոս։

Digitized by Google

նորա Ոյա ամն քառասուն և մի։ Իսկ Իսրա-
յելի թագաւորեաց Իրոբոամ ամս քսան և
երկու. և վէնի նորա Նաբատայ որդի նորա ամն
երկու, և յետ նորա Բաւսայ ամս քսան և չորս։

Իշ յաւուրս Ասայի և Բաւսայսու էր քա-
հանայապետ Աբիմելեք ի ցեղէն Իթամա-
րայ։ Իշ մարդարէք Ադիա, Սամիա և Յա-
վել. Ազարիա որ և Ազդովանուսանի, և Յով
որ յանդիմանեաց զԻսրոամ, կէսաք զ.Օ սքա-
ւիա ասեն։ Իշ Իպոխիան Խուդ կոչէ, զոր
ապան առիւծն։

Ուռան և եւթն ամին իւրոյ Ասա ա-
թեաց զգուեալ կուռանն Աշրուսաղէմ, և զմայր
իւր Եհան ի սիկնուեթենէն զի պաշտէր
զԱստարտն։

Ի քսան և ինն ամի նորա թագաւորեաց
Ելայ ի վերայ Իսրայելի ամս երկուս. և Օ.ամ
բրրի ծառայ նորա ապան վնաս և թագաւո-
ւթեաց աւուրս եւթն, և յարեան երկու ազգ
ազգ Ամրի և Փանի թագաւորել. և աջողե-
ցաւ թագաւորել Ամրոյ ամս երկոտասան.
ոտ գնեաց զլեռան Սամերոն ի Սամարիոյ,
և շինեաց քաղաք, և կոչեաց Սամարիայ յա-
նուն տեառն լերինն, և յետոյ կոչեցաւ Սե-
բաստիա. և այժմ ասի Սամուղ։

Իսկ Փանի ոչրեաց զարքունիսն ի Սամա-

Digitized by Google

րիայ և ինքն ընդ նմին այրեցաւ. Ի քառասուն և մի ամին Աստի թագաւորեաց Յոգիպատոս Փարքիրիս (1)։

Եւ յետ Աստի թագաւորեաց Յովսաբիաթ որդի նորա ամս քսան և ինն։ Իսկզբանէ որդի ամին սորա թագաւորեաց Խորոգելն Աքսաբ որդի Ամիեայ ամս քսան երեք. սա առ կին զԱզաբէլ դուստր Էքթիելի թագաւորին Սիդոնայ և Սադոնի (2) և շինեաց զԱրիքսալ ընդոլեանն ի Յեսուայ. և Աբիրոն անդրանիկ նորա մեռաւ ի սկիզբն. շինուածոյն։ Եւ Շաւ կրտսերն ի դնել դրանն. և այլք զԱզան Ներթելացի ասեն շինիչ Երիքովի, և այս որդւոցս հայր և զՇաւէ Օնծել կոչեն։

Յերկրորդ ամի Յովսաբաթու թագաւորէ Լատինացւոցն Կարպանդոս ամս տասն և երեք. և չորս ամին թագաւորէ Աթենացւոցն Ամիալոս։ Եւ ի նոյն ամի թագաւորէ Աթուրացւոց Ալբանոխոս ամս յիսուն։ Եւ յերեքտասան ամի նորա թագաւորէ Եգիպտացւոցն Խաքարոս ամս վեց, և ի քսանեքեք (3) ամի նորա թագաւորէ Լատինացւոցն Պրիսպոս ամս քառասուն և մի. և ի քսան և ինն երրորդ ամին սորա թագաւորէ

(1) Ոմն Փարքիրոս. այլ ոմն Փարքիրաս։
(2) Որ և Դայդան, (3) Զորս տրի. քսան և ինն։

Իսրայելի Ոքոզնա ամ մի։ Եւ յետ նորա Յովրամ եղբայր իւր ամս երկոտասան։ Եւ ՚ի նոյն ամի Թագաւորէ ՚ի վերայ Յուդայ Յովրամ ամս ութ։ Եւ զկնի նորա Ոքոզնա ամ մի։ Եւ յետ նորա Ոքոզնայի մայրն ամս եւթն։ Եւ յեւթներրորդ ամին Ովամայ վերացաւ Եղիա։

Եւ Գոդոզնայ կին Յովրամայ քոյր էր Ակաբաւ, և Տէր սպան զՅեհրամ զի սպան զեղբարս իւր. և յաւել ՚ի չարն, և առ ըզ-Գոդոզնայ կինն կապարիշտ։ Ամենք դուռ-տրը ասեն զնա Եզաբելի։ Եւ առաքեաց Եզնսէէ և օծ զՅէհու աքքայ ՚ի վերայ Իսրայելի որդի Ամղեայ որ սպան զՅեհրամ որդի Ակաբաւ, և զՈքոզնայ որդի Յովրամայ. և սպան զԱքաբաւ զեւեթանատուն երկու-որդիսն, և զկնի տան և եւեթն ամի սպան զԱքաբաւ զկինն զԵզաբել։

Իսկ Յովիդայ քահանայ սպան զԳոդո-զնա. և Թագաւորեցոյց զՅովաս վեցամեայ ՚ի վերայ Յուդայ ամս քառասուն։ Եւ Յո-վիդիա եկեալ միայն յետ Ոսմսիսի ամս հա-րիւր երեսուն. և մարդարէանայ Ազարիա որ-դի իւր։ Յէհու Թագաւորեալ ամս քսան և ութ յետ նորա Յոխազ ամս ասան եւ եւեթն։

Digitized by Google

Երեսուն ամին Յովաս սպան զԱզարիա մարգարէ, և յերեսուն և եօթներորդ ամի նորա վախճանեցաւ Եզեկիա մարգարէ։

Եւ յայնմ ժամանակի թագաւորեաց Աթաբացոյն Կրապանիս ամս քառասուն և երկու։ Եւ Եգիպտացոյն թագաւորեաց Երքինոս. և Լատինացոյն թագաւորեաց Հռոմելոս, որ և ամբարուաւանեալ այրեցաւ ի բարկութենէն Տեառն արքունի։

Երեսուն և մի ամին Յովասայ եղեւ դաստաւոր Աթենացոյն Խարակլիս ամս տասն եւ ինն. և ի քառասներորդ ամին սպանաւ. Յովաս ի ծառայից իւրոց, զի ի բաց ի տեառնէ եկաց յետ մահուանն Յեհովայ. և սպան զորդի նորա զքահանայ եւ զմարգարէ։

Եւ թագաւորէ ի վերայ Յուդայ Մանասիա որդի Յովասայ ամս տասն և ինն։ Սա Հաստուծով յաղթեաց Եդոմայեցւոցն, և բերեալ զԱստուածս նոցա պաշտէր։ Եւ ի սորա տասներորդ ամին թագաւորեաց Իւրայելի Յովաս ամս տասն և վեց. և ի վերայ Լատինացւոցն Ենտոնինոս (1) ամս քառասուն և հինգ։ Եւ Եգիպտացւոցն Ամթրոս ամս տասն և վեց։ Եւ աստ եղեւ դաստա-

(1) Զորս օրի. Ղատինոս։

ւոր Աթենացւոց Արիփոն ամս քսան։

Ի տասն և իններորոդ ամին Ամասիայ Թագաւորի Թուրայցւոցն Թոնոսկոն Կոլերոս, որ ասի յունարէն Սարդանի՝ ամս քսան։ Յորոյ ի ժամանակս քարոզեաց Յովհան մարգարէ, և դղջացաւ և դարձաւ յերկիւղն տեառն. որ և զկնիկ ապրելոյն Թուրայ որ է Նինուէ, պատերազմեցաւ ընդ Աքքակէք մեղացին որ է Պար։ Եւ տեսեալ թէ յաղթի ի Պարէն, պրեաց զանձն հրով և բարձաւ թագաւորութիւնն Թուրայ, տեւեալ ամս հազար հարիւր ինն։ Եւ ի խափանուածէ թագաւորութեանն Քաղդէացւոց որ է Բաբելացւոցն յառաջին ամէն Վիլոսի հօրն Նինոսի լինին ամք հազար երեք հարիւր։ Եւ Աբրահամ Պար Աբուռակիս օգնութեամբն հայոց եբարձ զթագաւորութիւնն Թուրայցւոց. և փոխեցաւ ի Պարս, և զկնիկ մահուանն Աբուռակայ Աքքակոյ թագաւորի ի Նինուէ որ զառաջին Թուր կոչէր. և ի Նինոսէ Նինուէ կոչեցաւ. Փուլ անուն Որ ամբարձ զգուխս իւր՝ և կոչեցաւ թագաւոր յորոյ Շաղմանասար և Թակղաթբաղար։

(1) Ոմանք Սալմանասար և և Թակղաթբաղար։

Յիշեն զսոյանէ Աստուածային գիրք, որք տիրեցին Ալեքսանդրացոց և Կապադովկացոց և Կիլիկոց և Փիլիպեցւոց. և 'ի սոցանէ են Նաբոնոս և Նաբուբոզոս և Նաբուպալասար և Նաբուգոդոնոսոր. և Թուին ամք սոցա 'ի փուտէ մինչեւ Ալեքսանդր Մակեդոնացին չորս հարիւր քսան և չորս։ Իսկ զկնի մահուանն Ալեքսանդրի, Սելեւկիոս, Անտիոքոս, Սելեւկոս, որ զՍիւրիա շինեաց, Սուրոս՝ որ զՍուրիա շինեաց, յորմէ Սորիք կոչեցան Բաղդէացիքն։

Ի սոսան և ուԹերբարդ ամին Սմասիայ Թագաւորէ Բոբոսամ 'ի մերայ Իսրայելի աստիս քառասուն. և Յոգիպտոս Տուրմիս ամս երեքտասան։ Ամանք սահեն Թէ Յովասարքայ Իսրայելի սպան զՍմասիա արքայ Յուդայ, զի չքաւ պատերազմել ընդ նմա. և յետ մահուանն Սմասիայ եկին Իսրայելացիքն և քակեցին 'ի պարսպէն Երուսաղեմի չորս հարիւր գիրկս, և առին զոսկին և զարծաթն որ կայր 'ի տաճարին տեառն և 'ի տան արքունեացն, և դարձան 'ի Սամարիա։

Եւ Սմասիա Թագեցաւ Երուսաղէմ, և Թագաւորեաց Ազարիա որդի նորա ամս յիսուն և երկու։

Եւ առաջին ամին Ազարիայ որ և Ողիա ե-

կաց դատաւոր Լ՚Թենայ Թ՝ատարիրոս ամս քը-
տան և եւ Թն։ Լ՚ի յ՚Գիպտոս Թագաւորեաց
Խոխ։ Լ՚ի տասներրորդ ամին Ղեկայ Թագա-
ւորեաց Լ՚ատենացւոցն Փրիկոս։ Լ՚ի քսան
և ութերրորդ ամին Ղեկայ եկաց դատա-
ւոր Լ՚Թենայ Լ՚քմիոդիր. և ՚ի քսան և ինն
ամին Ղեկայ Թագաւորեաց Իսրայելի Ղա-
քարիա ամս վեց։ Լ՚ի զկնի նորա Մեղրամ ա-
միս մի, և յետ նորա Յանայէմ ամս տասն։

Լ՚ի ՚ի քսան և չորս ամի Թագաւորու-
Թեան Իւրոյ Ղեկայ արկ խուռնկ ՚ի տաճարին
տեառն և բարուեալ եղեւ. և արքել ՚ի մար-
գարէանալոյ տէր զ՚Տայի վասն մեղացն Ի-
զկայ. և ժամանակ լռութեան նորա ամք
քսան և ութն, մինչեւ մեռաւ Ղեկայ, եւ
վերոտին մարգարէացաւ վասԹուն և մի ամ։
Լ՚ի նախ քան զլռութիւն նորա, քսան եւ
չորս ամ էր մարգարէութեան նորա բովան-
դակ ութսուն և եւԹն ամ. յերեսներրորդ
երրորդ ամի Թագաւորութեանն Ղեկայ Թա-
գաւորեաց յ՚Գիպտոսի Խասմոս ամս տասն.
և յերեսներրորդ չորրորդ ամին Ղեկայ եկ
փուլ արքայ Բաղդէացւոց ՚ի Սամարիայ.
և առ ՚ի Յանայեմայ հազար քանքար ոսկւոյ,
և դարձաւ։

Լ՚ի ՚ի քառասներրորդ ամին Ղեկայ Թա-

Digitized by Google

գաւառեաց Իսրայելի Փակէէ ամս տասն։ Ի քառասուներրորդ առաջներրորդ ամին Ազիայ Թագաւորէ Մակեդոնացւոցն Կաւոս երկրորդ Թագաւոր ամս երկոտասան. և 'ի վերայ Սինուէէի Թագաւորէ Թոակղաթփալասար ամս երեսուն և եւթն։ Ի քառասուն և վեցերրորդ ամին Ազիայ Թագաւորէ Այգիպտոս Պտղոմ ամս քառասուն և չորս. և 'ի քառասուն և ութերրորդ ամին Ազիայ ել Թոակղաթփալասար 'ի վերայ Իսրայելի, և գերեաց զմեծ մասն տասն ցեղիցն՝ և իշխանք մեծամեծք գերեցան որոց անուանք այսոքիկ էին Աբէլ. Իոթմաք, Այնոք, Կանծ, Այսուր, Գեղաթ, Գաւթի, և զբոլոր վիճակն Նէֆթաղիմայ։

Այս յորժամ մեռաւ Ազիա երեւեցան փառքն տեառն 'ի Տաճարին, որ մեկնեցաւ 'ի խնկարկութեան նորա և Թագաւորեաց Յովաթամ որդի Ազիայ ամս վեշտասան. սա արար ուղղութիւն առաջի Տեառն, և հնազանդեաց զԱմնացիս։

Յերրորդ ամին Յովաթամայ Թագաւորէ Մակեդոնացւոցն Տուկիմոս ամս երեսուն և ութ՝ սոքա են ազգայինք հայոց Պորփիքրոս (1) Պուեաէս։

(1) Հինգ օրի. Պորփիւրոս։

Այսու ժամանակաւ էին և մարգարէք Դատի, Սմուէլ, Ովսէէ, Յովելան։ Եւ Կուրբ արքայ Եգիպտոսի օրէնս դնէր, առ որսամասի թէ գառն խոսեցաւ, եւ ասաւ ակաւ Լեւդացւոց Թագաւորու Թիւնն։

Ոչնի Յովաթամու Թագաւորէ Աբքաղորդի Նորա ամն վեշտասան. սա արար չարիս առաջի տեառն. և Փակէէ արքայ Իսրայելի առեալ ընդ իւր զՀռոսան արքայ Դամասկեայ, և գնացեալ յՇրուսալէմ կոտորեաց զոս երկոտասան բիւր։ Եւ առաքեաց Աբքազ վարձեաց զԹագկրա, և եկն ի Դամասկոս և զսան զՀռոսան և գերեաց զնդոմայեցիս և գնաց։

Եւ յերկրորդ ամին Աբքազու ապստամբեալ Ովսէ սպան զՓակէէ, և Թագաւորեաց Իսրայելի ամն հինն. և յուԹերորդ ամին Աբքազու Թագաւորեաց ի Ինուէ Սաղմանասար ամն չորեքտասան. և եկն ի վերայ Իսրայելի, և արար ընդ հարկաւ և առեալ գերի, գնաց։

Եւ առաքեաց Յովսիա առ Աբիմելէք քուշային զալ օգնել նմա, և լուեալ Սաղմանասար եկն ի վերայ Սամարիայ յեւԹներորդ ամի ԹագաւորուԹեանն Յովսիայ և յուԹերորդ ամին Աբքազու. և պաշարեաց

Digitized by Google

ամս երիս. և առ զնա և գերեաց զտան ցեղ-
ոյն, և տարաւ 'ի Բաբելոն. և բարձաւ թա-
գաւորութիւնն Իսրայելի որ տեւեաց ամս
երկու հարիւր և յիսուն. և լինի Ադամայ
չորս հազար երեք հարիւր երեսուն ամ։

Յայսմ ժամանակի դատաւորքն Աթենա-
ցւոցն Իսքողոս, առ որով եդաւ ապոնն,
որ է մրցութիւն, Ղումպիադն կոչեցեալ.
որով Հելլենացիքն վարին զժամանակս իւ-
րեանց. և հնարեցաւ զայս Հիպարխոս. որ-
պէս թէ 'ի հրամանէ Հերակլեայ առ 'ի
խաղաղել խիստ զպատերազմ. կացէք ասէ
մինչեւ 'ի տարին ութսուներեքեան և ապա
ցուցցէ իւրաքանչիւր ոք զոյժ իւր և զարա-
ուեստս և պատկեսցի։ Այլ Եւսեբի առ
Յովսեփամու աքքայիս ասէ Աֆրիկանոսի
բանիւ։ Այլ առնեն զագոնն 'ի հինգ ա-
մին յորժամ չորքն լնու, և 'ի հնգէն սկսա-
նի և ասէ Նահանջ։

Իսկ զգերին Իսրայելի բնակեցոյց Սաղ-
մանասար 'ի լերինն Սարայ, և առաքեաց
Ասորիս 'ի Սամարիայ տեղապահս. որպէս և
անուն է։ Եւ մարդարէքն էին Եսայի և Յով-
սէէ։ Իսկ Երիստոտէլ 'ի Մակեդոնիայ պա-
ղէտ երեւէր։

Իսկ զկնի մահուանն Աքաղու թագաւո-

րեայ Հրէկկիա որդի Նորա ամն քսան և ինն. և Թագաւորեաց Ասոնացւոցն Հռոմուլոս, և չինեաց զՀռովմ յանուն իւր. կամ ըստ ոմանց յանուն դստերն որում անունն էր Ռոմէ, և մինչեւ ցայս Ասոնացիք կոչէին Թագաւորք եւթն և տասն. և են արդ Հռովմայեցիք։

Յայսմ ժամանակի չինեցաւ Ռոդոս կղզի որոյ պատուղք ծառոցն մաղտաք (1) էին, և չինեցաւ Սպէնոս քաղաք 'ի Սիկիլեայ. և ԻնԹանիայ, Կիզիկիոն. և 'ի Գոնդոս Տրոփոր քաղաք և յԻտալիայ։ Կալաւ Նոյն և Իւկիայ։ Իսկ աստ սկսաւ Թագաւորութիւն 'ի Ասկեդեմոն ամ երեք հարիւր քառասուն յերկարեալ. որոյ առաջինն Հրիոս անուն. և աստ չինեցան 'ի Հռոմ տաճարքք քսան և չորս. փողոցք երեք հարիւր քսան և չորս. կուռք ոսկեղէնք ութսուն, փղոսկրեայ պատկերք վաթսուն և չորս. դարպասք քառասուն և վեց հազար. իշխանաց նիստք հազար եւթն հարիւր ինեսուն և հինգ. փողերակք ջուրց՝ հազար երեք հարիւր յիսուն երկու. խոպաղք՝ երկու հազար եւթանասուն և չորս. տղամունք ոգնձիք՝ երեք հազար եւթն հարիւր ութսուն

(1) Թերեւս մասուրք։

և եւթն. Արուսպագոսք՝ երկու. և սրտաքոյ քաղաքին դայր շուրջն քառասուն միլ, և 'ի մէջ քաղաքին 'ի չորից կողմանց երկուտասան երկուտասան. և է միւն երկոտասան ոճ որ է հինգ դարձս եղանց արօրաձգայ. և թիւ տարանց՝ երկուտասան բիւր. և երկրորդ անգամ թուեալ զտան բիւրն, և երրորդ անգամ թուեալ զքսան եւթն բիւր. և չորրորդ անգամ թուեալ զչորս հարիւր տասն և վեց բիւրն։ Այս 'ի թագաւորութեանն Վղոդեաց վեց հարիւր ինանսուն և չորս բիւր։

Իսկ զԱմարայիսն ռատէին առխնջք. և առաքեաց նոցա Սազմանասար քահանայ մի Անդ անուն որ եկեալ ուսոյց նոցա զօրէնսն, զհինգ դիրսն Մովսիսի. և զայն միայն ընդունէին Սամարացիք յօրէնսց և 'ի մարգարէից։

Իսկ Եզեկիա երկիւղիւ Աստուծոյ զարդարեալ պարս առղուիւն յաչս տեսանն և սրբեաց զԵրուսաղէմ 'ի կռոց. զի թէպէտ հայր նորա չարաւ գնայր, այլ մայր նորա բարի էր դուստր Զաքարիայ Աբիւդ անուն աստուածպաշտութեամբ սնոյց զնա։ Զի Աբիւդ խորտակեաց զօձն պղնձի, զոր պաշտէին Հրեայքն. քանզի 'ի վերջերորդ ամի թագաւորութեանն Եզեկիայ, թագա-

Digitized by Google

ւորէ Աթուրայոյն Անենքերիմ՝ և եկ ի վերայ Հրուսաղէմի՝ և լուա եթէ Խարքոթիս ազգայ Հեթովպիայ գայ ի վերայ նորա՝ դարձաւ ի Լիբանէ. և առաքեաց զաղարս իւր Հրուսաղէմ՝ և սատակեցան տասն և ութ բիւրք. և հինգ հազար ի հրեշտակէ Աստուծոյ. զի ազատէաց Հեզեկիա զՀրուսաղէմ աղաչեալ Աստուծոյ։

Օրհասս ժամանակաս ի Ակիկիա Բէռեենատն շինեցաւ։

Իսկ Սենեքերիմ յիններորդ ամի թագաւորութեանն զբազուսմն կոստարեաց ի դերբերոյն. և անթաղ ընկեցեալ լինէին շանց զի զոքք նորա ուրանան Հրուսաղէմ՝ և որդիքք նորա Սանասար և Աբիս ալանին զնա ի տան կռոցն և փախեան ի Հայս։

Ի Աստրդան միւս որդին թագաւորեաց ամն երիս. և յետ նորա Աբեղդան եղբայր նորա ամն եւթն։ Այս առաքեաց պատուական Հեզեկիայի յութերորդ ամի թագաւորութեան նորա յաղագս գաղթի արեգսկանն ի նշան առողջութեան նորա։ Ի այս Բելդան քարոզութիւնս եւ առնել վասն զարուս որ անուան տեսանն Աստուծոյ ընդ ամենայն Աստրիս և Բաբելացիս. և կանգնեաց պատկեր Ղնմատին Աստուծոյ և սե-

գան. և զսիեաց նեռն, և երկրպագեսցեն նմա. և հրամայեսցեն իւրոցն զնոցն առնել. և հրամայեսցեն մի պաշտել զարդեգանին զնեռայ հարկի, այլ զաստուծն նորա. և եհան զյոլովս ի բանտէ Հրէիցն, և ուսուցին ընդ նեռն ոսկեզինաք, և զգեցոյց նոցա պատմուճանս ազնիս. ի քառասներորդ ամին Զրեկիայ՝ թագաւորութեան Զրեկիայ Տրաքոս Հնդկացի ամին քառասն. և Մնադացոցն Լսրտակոս ամս եր՝ ինքնասան։

Յետ Զրեկիայ թագաւորեաց Մանասէ որդի նորա ամս յիսուն և հինգ։ Սա ոչ գնաց ի ճանապարհս հօր իւրոյ, այլ յերրորդ ամի թագաւորութեան իւրոյ սպան զնոցին մարգարէն սգոցիւք. և բազում արիւն հեղլ արդար ի մէջ Զրուսաղէմի, և թողուս ի ձեռանէ Աստուծոյ. և եղեւ ի գնալն իւրում առաքաստակաւ Ասորիս մնացեալոց զնա Տէր ի ձեռս զօրացն. և կալան զնա և տարան Ասիրիա, և արկին զնա ցաւագին կապանօք ի հոր խորագոյն և անդ եհար զնա սիրտ իւր ապաշաւանօք. և եաս իրաւունս Տեառն, և ապաշխարեաց սրտաստուրք և անդ ասաց զաղաւոտութիւնն աղօթիւքն ապաշխարողաց. և ընկալաւ Աստուած զաղաչանս նորա, և արձակեցին ձրի, և եկն Յերուսա-

ղէմ յերեսներորդ հինգերորդ ամին արքայութեան իւրոյ։

Իսկ Նասայի մարգարէն եղաւ 'ի Աելիմ. ընտրեալ գնացեալ ժողովրդեան 'ի պաշտամանն Աստուծոյն, եկանէր ջուրն և 'ի գալն ոչ լազգեացն արբելոյր յաւուրս Աքազու եւ յաւուրս Եզեկիայ. և 'ի պատճառս գերեցմանին Նասայեայ առաքեաց Աստուած շնորհս բժշկութեան ջրոյն Աելիմայ որ ասի Աուսքեալ։

Յերեսներորդ երրորդ ամին Անանասէի թագաւորեաց Եգիպտոս Թեփանեթաս ամս քսան և վեց. և յերեսներորդ վեցերորդ ամին Անասէի թագաւորեաց Սորոց փոքր Աենեքերիմ ամս երեսուն և եւթն։

Ի քառասներորդ ամին Անասէի թագաւորեաց Հռովմայեցւոցն Տակլեա ամս եր եսուն և երեք։ Սա եգիտ զհանդերձն ծիրանի աբքսանի և զմանկան տակի. այլք Տուէ լոս ասեն ամս։

Յաւուրս Անանասէի Նումա Պոմպիլոս երկաւ ամիս յաւել 'ի տարին Հռովմայեցւոց. զի յառաջ քան զնա տասն էր ամիս, և յաւել նա զՅանուար և զՓեբրուար. եւ Ամկամիդոս շինեցաւ, որ նախ Սրատական կոչէր. և Նկրատան շինեցաւ 'ի Դիոկեսարէ.

Digitized by Google

և ասաս խմացաս Պղոկիս զերկաթոյ զոգն։

Եւ Թագաւորն Փաֆլագացոյց ցլաս ա-
ղիսն արք, և մեռաս. և Կալիքեդոն քալաք
շինեցաս։ Ի քսդասանեերորդ (1) ամին Անա-
սէի Թագաւորմոց յԵգիպտոս Փսամեսիկոս
(2) ասմ քառասուն և հինգ։ Եւ Ամենաց-
ուցն Թագաւորք և դասաորք դադարե-
ցին։ Եւ Իւղանդիան շինեցաս 'ի Խա-
զաս իշխանէ, որ զկնի հնն հարիւր եւ Թանասուն
ամի ընդարձակեցաս 'ի Կոստանդիանոսէ։

Յետ Մանասէի Թագաւորեաց Ամոն որ-
դի նորա 'ի վերայ Յուդայ ամս երկոտասան.
և յերրորդ ամին սորա Թագաւորեաց Ա-
դացոյն Իրակլոս ամս քսան և չորս, եւ
յերկոտասան ամին Ամոնի Թագաւորեաց
Ամ Թուլացոյն 'Նաբուսալասար ամս երեսուն
և երեք. և էր սա Ազգ քալդ. և 'ի սոյն ամի
Թագաւորեաց Սակեդոնացոյն Փիլիպպոս
ամս երկուս և ութ։

Յերրորդ ամի Թագաւորութեանն Ամ-
նոնի ծնաս Հոսիա, և Ամոն պաշտէր կուռս
և ապրնաս 'ի ծառայից իւրոց. և ամենայն
ժառանգակ նորա քսաս և երկու (3) ամ։

(1) Երկու օրի. 'ի քառա-
սուն և չորս։

(2) Երկու օրի. Փսամեսի-
կոս. մի օրի. Իֆիսմիսիկոս։

(3) Երկու օրի. քսան և
չորս։

Եւ թագաւորեաց Յովսիա որդի Ամոնի յԵրուսաղէմ ամս երեսուն և մի. և արար ուղղութիւն առաջի Տեառն, և եղէն նմա որդիք չորք՝ Յովհանանէս, Յովակիմ, Յովաքազ, Մատթանիի. և մարգարէացաւ Սուփոնիա յաղագս Շմաւոնին։

Ի տասներորդ ամին Յովսիայ թագաւորեաց ի Հռոմ, Սարկոս Ընիկատոս ամս քսան և չորս։ Երրեքտասան ամին սորա մարգարէացաւ Երեմիա. ի վերջասաներորդ ամին մարգարէացաւ Ողդի կին քահանայի, և գտաւ օրէնքն կորուսեալ առ Քեզեկիա քահանայիս որ է հայրն Երեմիայի։

Եւ ելաց Յովսիա առաջի տեառն և հաստատեցին եւ թանաստուն ամի գերբաթեանն Խարտեի։ Երեսներորդ առաջնեւորդ ամին Յովսիայ թագաւորեաց յԵգիպտոս Նեփոս Նէքաւոս (1) ամս վեց։ Սա եկ ի վերայ Ասորոց. և գնաց ընդ առաջ նորա Ոսիայ և սպանաւ ի նմանէ։ Իսկ Նեփոս գնաց և առ զերիսին Ասորոց գերի. և դարձաւ յետս երեք ամաց, և եկն յԵրուսաղէմ. և տարաւ զՅեքոնիա յԵգիպտոս զոր թագաւորեցուցեալ էին յԵրուսաղէմ. և կացոյց նոցա թագաւոր զՅովակիմ եղբայր

(1) Երկու օրի։ Նեփոս Նէքաւոս։

Հրոմէից. և եղ հարիւր յԱշտուսաղէմ տասն քանքար տակուց. և հարիւր՝ ոսկեղինաց, և գնացեալ

Եւ յերրորդ ամին Յովակիմայ թագաւորէ և Վիթուրայոցն Աղբաւ գողմնասոր որդի Աղբաւ պարապարայ Բաղդէացւոյ սամ քառասուն և չորս. Եթէ յառաջին ամին իւրոյ եկ յԱշտուսաղէմ, և սա զանձօքս տասնն տեսան, և յապգէ թագաւորացն զԱնակէլ, և զանձիցս իւր, և տարաւ զնոսա ի Բաբելոն, և չինեաց զԱբելն և անդ փոխեաց զաթոռ թագաւորութեան իւրոյ յԱթուրայ։ Եւ եկ զարձեալ Նեբուսոզ ի կոզմանս Եփրատայ և առ երեսաց զԱնակէլ և եկն ընդ առաջ նորա Աղբաւ գողմնասոր, որ և տարան գնա. և վերստին չինեաց զԱնբէլ և անդ փոխեաց զայլնան կուռքն, և կոչեաց գնոա Ասարոքիա որ է քաղաք քահանայից. զի յաշխարհեաց անդ զքուրմն։

Եւ յչորրորդ ամին Յովակիմայ եկ Աղբաւ գողմնասոր յԱշտուսաղէմ յերրորդ ամի թագաւորութեանն և առ զհարկն և զարձաւ։ Եւ ի մեռանելոյդ ամին թագաւորութեանն (իւրոյ) մեռաւ Յովակիմ։ Եւ թագաւորեաց որդի նորա Վաքին (1)։

(1) Ցեքոնիա։

Ի՝ լուեալ Լատաւ գաղանատր եկն յԵրուսաղէմ յութերորդ ամին իւրոյ թագաւորութեանն, և առ զՔրիստոս և զմայր նորա, և զՅովհաննէս որ թագաւորեցուցին զՔրիստիա, և տարաւ զնոսա ի Խաղերոմն, և եդ ի կապանս ամս երեսուն և եւթն. և Յերուսաղէմ եդ թագաւոր զՄատթանիա զոր Մեդիկիոյ անուանեաց. և մեծացաւ Լատաւ գաղանատր, և աճեալ եմաս. զի առաջին գալսն Յերուսաղէմ, հայրն իւր առաքեաց զնա, և յորժամ դարձաւ յաղթութեամբ մեռեալ էր, և եղեւ ինքնակալ։

Ի չորրորդ ամին Մեդեկիոյ թագաւորեաց Անդրեասն Խառակոս ամս երեսուն և ութ և ի մեռանելորդի ամին Մեդեկիոյ թագաւորեաց Յեգիպտոս Լիբոս ամս քսան և հինգ։ Ի՝ ինչն ամին տարաստաբեաց Մեդեկիա, և գերեցաւ ինքն և ամենայն ազգն բայց ի սակաւուց աղքատացն որ գործէին զգործն արքունի, եւ այրեցաւ Յերուսաղէմ և տաճարն. բայց զերիս ամս պաշարումն կրեաց և սով մեծ։ Ի՝ նախ քան զգալ Բաղդէասցոյն Նրեմիա մարգարէ տարաւ զտապանակն տեառն ծածկատէս ի Մեդեկիայ, և պահեաց ի մէջ Քորեբայ և Սինայի. և այրեցաւ տաճարն ի Լաբա-

զարդաց Լուսաւորչեան յիշատակարանի ամի
թուականութեան Լաբուդոնոսորայ։
Եւ Մեդեկիա խաւարեալ աչքք մեռաւ 'ի
գնալն 'ի Խալդէայսն։ Եամանց պատն թէ 'ի
սուսան և յիշատակարանի ամին իբրոյ եկն Լաբու-
դոնոսոր Յերուսաղէմ. և նոա ասէ գնա.
և եթէ զՄեդեկիա նա ապան զի արդեալ ըստ
հարկին։

Բայց զմի աւերումն Երուսաղէմի գնաց
Լաբուդոնոսոր 'ի վերայ Տիւրոսի, որ է
Սուր. և Սաբայիք յետ բազում ընդդի-
մութեան. յաղթահարեալ լինէին 'ի Բաբ-
դէայցոյն։ զասն որոյ զգաստասարեան սուս
ցաւածս իւրեանց 'ի ծովն ընկենցեալ. և զոր
կարացին առնուլ ընդ ինքեանս երթալ 'ի նաւ-
ակաց մի փախեան 'ի Կարթագոն. և Լաբու-
դոնոսոր առ զԱբրն քանդեաց զնա, և ըստ
բաբիլոնն ծուխասոյզ արար։ Եւ բմբռնեալ
զԲիբլոսն արքայն նորա ապան. որ կեցուցեալ
էր հինգ հարիւր ամ զանձնայն ժառանգակ
թագաւորութեան Յուդայ։ Եւ յետ այսր
ոչիկ մատնեաց Տէր զԵգիպտոս 'ի ձեռն Լա-
բուդոնոսորայ փոխանակ աշխատանացն նո-
մա և զօրայն նորա 'ի Հուր։ Եւ 'ի քանի և
հինգերորդ ամի աւերումն Երուսաղէմի
մեռաւ Լաբուդոնոսոր. և առ զթագաւ-

Digitized by Google

սարութիւնն Խաղտատար սահմ երիս։ Եւ
յետ նորա Իշմարուդակ եղբայր նորա սահմ
երիս։ Ամենք զայս սահմն, բայց զկնի Յա-
բուզոդոնոսորայ Իշմարուդակէս թագաւո-
րեաց. և ելեալն զԵրքանիս ի բանտէն զկնի
երեսուն և հինգ ամի դերութիւնն իւրոյ.
և ապա Խաղտատար եղբայր իւր։ Եւ յա-
ռաջին սահմն Խաղտատարայ եռես Գանիել
զսահմանն չորից կենդանեացն։ և Գարեհ Այր
եռասն զԽաղտատար. և էառ զթագաւո-
րութիւնն Վաղդէացւոց. և կացոյց զԳա-
նիել մեհեանս ամենայն իշխանայ իւրոյ. և
վասն նոսանանձս ասիցս. ի գուբասիւծուց
և ապրեցաւ ի Տեառնէ Աստուծոյ. և զկնի
երից սահմանց եկ Վիրաս Պարսիկ ի վերայ Վա-
բելոնի, և ապան զԳարեհ, և եբարձ զթա-
գաւորութիւնն Ադացւոց և Մեծրայոց,
և գրաւեաց ի Պարսս. և խաստագոնս
չարչարէր զՔրիստոսն յառաջնում ամի թա-
գաւորութեանն իւրոյ։ Եւ լուաւ զԱնա
նիանցն և կոչեաց զնոսա, և ասիպէր զահել
և նոքա անարգեցին զնա, և հրաման եառ
զվերատեսեալ զնոսա։ Եւ յետ ապանման յարե-
ցան կրեցան գլուխք նոցա ի մարմնոս իւ-
րեանց, և երեն սքանչելիք մեծամեծք. և
ասէր չարչարեաց զվիրաս, և զգնացաւ յետ

Digitized by Google

չարչարելոյն զԴանիէլ և կրկին ասկանելոյն զնա ի գուբ և ասելոյն։ Եւ յերկրորդի տարի թագաւորութեան իւրոյ Խրոս արքայի զարձանելոյ զԵրիսաղէմ, և արար զԴանիէլ հաստատութիւն և զ՝զատիս թագաւորութեան իւրոյ ի Բաբելոն։ Իսկ Դանիէլ նոսրանձայն Աստուծոյ վասն երկրածանոյ զկուռսն զոր կանգնեալ էր Նեբոյ ունայն։ Իբրոյ, և ընդ սպան զմիշտսն զոր սպաշտէր Խրոս։ Եւ զչորեսեալ յոյժ Հաղդէացւոցն զայրացուցին զԽրոս, և յորմէ՝ի սպասաւորացն ասան զանունն զանկանեալն Դանիէլի՝ի մէջ եւ ասին ասելոց՝ի գուբ. և Աստուածոյ բերեալ ծանոյ կերակուր։

Եւ ելեալ առնոյ կենդանոյն մեծացաւ առնուն Աստուծոյ, և Աբակում՝ի նոյն տարին մեռաւ։ Իսկ Դանիէլ պահեցոյ զքսան և զմի օր, և բնակեցաւ զբուսեն եւ թանաստուն տարի միտնելոյն տեռաւն՝ի ձեռն Սրեմիայ մարգարէի. և եռեռս զտեսիլ եւ զմեներորդ դացն, և զայրն որ զգեցեալն էր սպիտակ և կայր՝ի մերայ Տիգրիս գետոյ, որ ասէր ցքնաս. քսան և մի օր է որ կրուսիմ ընդ խշտեհին Պարսից դարձուցանել զտիդիս ազգի քու. որ և դարձան զատաջինն հինգ բիւր, և սկըսան շինել զտաճարն։

Յե՛ի վերծանեցրողի ամի գերու-
թիւնն Հրէից ապանաւ Կիւրոս՝ ի Պարսս-
կաց կնոջէ խրմէ, և առ զիշատաւորու-
թիւնն Կամբիս որդի Նորա ամն ութ. զամա-
նէ ասեն Յերայեցիքն թէ Յարուցեալ ոգեն-
սոր կոչէր՝ որ ապան զԿրիսաբադ Պաք. և
առ սովաւ եղէն կրկն Յուդիթ կնոջ որբ-
պան զՀողեփերնէս՝ ի յաղագս Պատուական
սր էն թ. ուրբ։

Օ. կնի Կամբիս՝ Թագաւորեցին Պոգ-
երկու, երկու եղբարքն ամիս եւթն. եւ
յետ նոցա Թագաւորեաց Դարեհ մոգացի
Պ. շատապետ՝ որդի ամն երեսուն և երիս.
յերկրորդ ամի սորա կատարեցաւ երկրորդ
եւթանասուն գերութիւնն սկսեալ յայր-
մանէ տաճարին։ Յե՛ առաջին եւթանասուն
յերեքտասան ամին Յովսիոյ, և՝ ի վճռեն
Յոսիայի՝ ի Կիւրոս Պարսկ. և ժողովին
ամք ի Սողոմոնէ և՝ ի քինուածոյ տաճարին
մինչեւ՝ ի վերջերորդ ամն Դարեհի, հինգ-
հարիւր ութ ամ։ Յե՛ հնգետասան ամին
Դարեհի քրիստ հինգ դարն. և՝ ի վերջոյսս
նեբրորդ ամին Դարեհի սկսաւ վերջերորդ
դարն։

Յե՛ մարդապետանային Ինգէաս, և Զաքա-
ռիաս, և Զաղաքիաս, և Զորաբաբէլ որդի

Սազամիէլի որդւոյ Յերոնեայ առաջնորդ դարձի գերութեան. և Յեսու Յովսեդեկեայ Քահանայապետ։ Ամենք զՍազամիէլ ասեն որդի Սեդեկիայ 'ի Բաբելոն ծնեալ 'ի կուրութեանն։ Այսու ժամանակաւք Իսն յեւթն խմասանոյն պարէտ եղեւ. Լակեդեմոնացւոցն. աստ և Տարկինոս ասեն եգիպտոնանջանարանս, բանտս, կոճեղս, շղթայս և տուեալ 'ի պինձահատոս գործել հրամայեաց և Իդոգնիս Պուեոէս ճանաչէր։

Այնի Դարեհի թագաւորեաց Քսերքսէս որդի իւր ամս քսան և մի։ Սա յերկրորդ ամի թագաւորութեան իւրոյ սա զԻպիպտոս. և 'ի մեստասաներորդ ամին առ զԹէնս, և հրով այրեաց զնա. և էառ սա քաղաքս բազումս, և աշխարհս յոլովս, և հարիւր քսան գաւառս։ Եւ յաւուրս սորա եղեն իրքն Իսթերայ. Մուրքէի և Համանայ, որ էր յազգէն Ամաղեկայ։ Այսպէս Յովհաննէս Սիտացին ասէ. թէ աստ լեալէր Իսթերայ իրքն Իսր ընդէր ոչ գրեաց։ Եւ սովաւ ասեն. ոմանք զգարձն Հրէից. յետ սորա թագաւորեաց Արտաւան եւթն ամիս։

Եւ զնի սորա Արտաշէս երկայնաձեռն ամս քառասուն և մի։ Ի սորա եւթներորդ

ամին եւ Աղբաս դպիրն Հրուսաղէմ՝ օգնեալ
չինուածոյն։ Այլ և նա ի պարպեւաց Հոգ-
ւոյն գրեաց վերատին զհին մատեանսն։ Յե-
ի քսաներրորդ ամին Արտաշիսի եւ Հայեմի
տակառապետն շինեալ զպարիսպն Հրուսաղե-
մի հրամանաւ Նորին. եւ կատարեցաւ
գործն սմա երկոտասան ի ձեռն Հա-
յեմայ։ Յե ոա ետ բերել զմնիսիր ողջակի-
զեալն մոռացեալ ի ջրհորն և սրսկեալ ի սե-
զանն վառելոյ հուր։

Յետ Արտաշիսի միւս Արտաշէս զոր Բը-
սերքսեան կոչեն ամս երկու։ Յե զկնի Նորա
Մեկդինոս ամիս եւթն. և յետ Նորա Դա-
րեհ Հոդոս հարճարդի սմա տան և ինն (1).
և ի հնգետասան ամին սորա ապստամբեաց
Եգիպտոս ի Պաբսից և եղին իւրեանց թա-
գաւոր զԻնանէսիոս, զկնի հարիւր քսան և
չորս ամի դադարելոյն. և ի տան և իններ-
որդ ամին Դարեհի թագաւորեաց Մակե-
դոնացւոյն Արիստոս ամս երիս։ Իսկ ի Հռ-
ոմ պատերազմ սաստիկ էր. զի Կալբրիոն
պատերազմէր ընդ Կալատուկք և ընդ Դա-
պատայիս կեղտս, և յետ հարիւր ամի յաղ-
թեցան Հռոմայեցիք. և առաւ Հռոմ և
քակեցաւ ի հիմանց, և մնաց միայն արքու-

(1) Մի օրի. քսան և ինն։

նիքն։ Իսկ ի սոյն ժամանակս եղեւ շարժ սաստիկ, և կրաւ երկիր քաղաքս բազումս։

Իսկ Պարսից թագաւորեաց Արտաշէս ուշիղ ամս քառասուն։ Արքայեցեալք առ առվաւ սահեն զնշխարս։ Յեւթն և ութսանեարդ ամին սրբոյ Սիլվեստրի Ութսուներկուս Հռոմայ աւերեալ պարսիցն, և յանուն իւր կոչեաց զնա Վիրատին շինեալ։ Իսկ յԴիոկղետիանոս թագաւորեալ Ութսներորդ ամն վեց. և Սանիդունացոյն Բրեզայոս ամս ութ (1). և դարձեալ Ամուսոս ամ մի։ Իսկ ապա Կարին ամ մի։ Իսկ ապա Նիկոսոպ իսամն տասն և ութ։ Իսկ յերեսուն և հինգերրորդ ամին Արտաշիսի թագաւորի Սանեդունացոյն Աղեքսանդրոս ամ մի. և զինի նորա Պոլամէոս ամն երիս։

Ի քառասներրորդ ամին Արտաշիսի թագաւորի Եպիսկոպոսաց Դիոս ամս երկուս. և զինի նորա Աղեքսանդրոս ամս երկոտասան։ Յետ մահուանն Արտաշիսի թագաւորի Պարսից միւս Արտաշէս Ութսուն ամս քսան և եւթն. այլք երեսուն և վեց ասեն։ Սա եբարձ զթագաւորութիւնն Եպիսկոպոսաց հնազանդել զնոսա. զի Աղեքսանդրիայ աղանդոյ խմացեալ զարուն իւրեանց փախեան

(1) Ընդունք՝ ասան և վեց։

Յ Թուվլիա. և անտի եկն 'ի Մակեդոնիա։ զոր ասեն ոմանք հայր Աղեքսանդրի։

Եւ մնաց Եգիպտոս անթագաւոր ամս քսան և երկու մինչեւ 'ի Պաղեմոն. որ է Պաղամէոս մի 'ի բարեկամացն Աղեքսանդրի։

Իսկ Ասրտաշէս թագաւոր Պարսից բնակեցոյց զՀրեայսն առ ընթեր Կասբից ծովն Յուռկանա քաղաք։ Եւ յայնմ ժամանակի թագաւորէ Մակեդոնացւոցն Փիլիպպոս հայրն Աղեքսանդրի ամս քսան և եւթն. և անուն կնոջ նորա Ոլիմպիադայ. և հնազանդեցաւ Պարսից։ Եւ իմաստասէրքն էին Արիստոտէլ և Սպիկուրոս։

Յերիքովասանելորդ ամին Ալքսղիայ ծընաւ Աղեքսանդր որդի Փիլիպպեայ յուրթերորդ ամի թագաւորութեանն հօր իւրոյ. յետ Ասրտաշիսի Ալքսղայ թագաւորեաց Պարսից Դարէս որդի նորա ամս չորս։

Եւ զկնի նորա թագաւորէ Պարսից Դարեհ որդի Արշաւրի ամս վեց։ Եւ յառաջին ամի նորա թագաւորէ Մակեդոնացւոցն Աղեքսանդրոս որդի Փիլիպպեայ ամս երկոտասան՝ և էր ամաց քսանից, հասակաւ երեք կանգուն և երկայն իմաստութեամբ և բարձրը քաջութեամբ։ Այս կորոյս երեսուն և եւթն թագաւոր, որոց մի էր Վահէ Հայոց

մեծաց թագաւոր. և զառաջինն թագաւորեաց Յելատայ (1), և ունէր զօրք երկուտասան բիւր և բնակէր անդ երկուտասան հազարաւոր։

Այս 'ի վեցերորդ ամի թագաւորութեան իւրոյ, և 'ի նոյն քանիս Դարեհի Պարսից, զատերազմեցաւ ընդ Դարեհի 'ի Սիս Կիլիկեցւոց, և ոգանաւ Դարեհ և կառարեցաւ 'ի նա թագաւորութիւնն Պարսից տեւեալ ամս երկերիւր երեսուն և մի։ Այս ինքեաց քաղաք երկուտասան յանուն իւր. ստեղ դաւուն 'ի կողմ Հոնաց՝ հապականել նոցա զերկիր. և դաւուն երկաթի երկայնութիւն ունելով կանգուն երկուտասան, և լայնութիւն կանգուն ութ։ Այս եկն Յերուսաղէմ և պատարագս մատոյց Աստուծոյ և պատուեաց զքահանայապետն Ընդրիմաքոս, և գնաց Յեգիպտոս. և լուան Սամարացիքն զկրան, եւ սպանին զԸնդրիմաքոս զի ոչ արգել զհեթանոսն 'ի տաճարէն և 'ի պատարագելոյն. և լուր եղեւ Ալեքսանդրեայ. և եկն ցասամբ, և քակեաց զՍամարիա և բընաւին չթողեաց զազգն Սամարացւոց. և ածեալ 'ի տեղի նոցա Մակեդոնացիս բնակեցոյց անդ. ապա կոչի առաջին թագաւոր Յունաց։

(1) Մի օրի. Յելատա։

Սա մեռաւ ի Բաբելոն գերզատուութեամբ. և առին զվերագաւորութիւն նորա չորեքին բարեկամք նորա. և կստարեցաւ բանն, եթէ քաջն այծեաց կուռեցաւ ընդ խոյին Դարեհի և բարձաւ մի եղջիւր։ Եւ յայտնեցաւ չորեքին եղջիւրք՝ բարեկամքն Ալեքսանդրի. և առ զթագաւորութիւն Եգիպտոսի Պտղոմէոս ամս քառասուն։ Սա առաքաւ զմարմինն Ալեքսանդրի ՅԵգիպտոս, և անդ թաղեաց. սա յառաջին ամին առ զԵրուսաղէմ նենգութեամբ առ Ոնկիաս քահանայապետին. և ած գերին ՅԵգիպտոս. անուամբ սորա կոչէին և այլ թագաւորք Պտղոմեանք։

Ի յերկրորդ ամի սորա թագաւորեաց ՅԱսիա Անտիքոնոս ամս տասն և ութ։ Սա ընդարձակեաց զԱնտիոք, և անուամբ որդւոյ իւրոյ կոչեաց։

Յերեքտասան ամին Պտղոմեայ թագաւորեաց Սորոց և Բաբելացւոց մինչեւ ի Անդիոկ Սելեւկոս ամս երկոտասն և երիս։ Եւ սա յինքն պրաւեաց զԱնտիոք, և եւս ածակեաց և շինեաց զՍելեւկիա յանուն իւր առ լերամբն Ասխանձրայ, և զԱնտիոք կոչեաց յանուն որդւոյ իւրոյ. որ նախ Անտեղիա կոչէր առ տղուսաշէն գետովն, զոր

Digitized by Google

Դիոկղետիանոս եւս մեծապոյծ։ Լուսեր Աղեքսանդրոս չորս դստերս, Էոդիկա յորոյ անուն շինեաց զ Աւոդիկէ, որ է Օատիկ. զ Եփեմիա, յորոյ անուն շինեաց զ Փեմիա. զ Էռիա, յորոյ անուն շինեաց զ Երիա որ է Ալոպ։ զ Դեսէ, յորոյ անուն շինեաց զ Դեսէ որ է Լուսհայ։ Շինեաց և զ Սալու և զ Սարաշ և բնակեցոյց ի Նոսա. Նրեայս։ Նա պատուեաց զ Սրայել. և հրամայեաց մոանել առնա ընդ սիրելիս նորա ըստ կամայ իւրեանց։ Նա աստ կտարեցաւ մեծ աշտարակն ի մէջ ծովուն Ալեքսանդրիոյ և կանգնեցաւ Պլոտոս (1). և շինեաց զնա Պոստրատոս Կանտիոսացի, դէտ լինել Աղեքսանդրու ընդ ծով և ընդ ցամաք։

Նա Սելեւկոս ըմբռնեաց զ Դեմետրոս քանզի ի բարեկամացն Աղեքսանդրի էր։ Կասանդրոս Թագաւորեաց ի Մակեդոնիա ամս տասն։ Նա յետ նորա Դեմետրիոս, որ և յինքն գրաւեաց զԱթենիսիա և Թագաւոր կոչեցաւ. Ախոյ զոր կալաւ Սելեւկոս, եւ տիրեաց ամենայն Ասիոյ։ Ի սկիզբն Թագաւորութեանն Սելեւկեայ, որ է երկրորդաստան ամ զկնի մահուանն Աղեքսանդրի, սկսաւ Թուականն Ասորոց։ Իսկ յետ մահուանն

(1) Գմբեթ՝ Գոտաս։

ռաջինն Պողոմեայ, Թագաւորեաց Անդիոպատոս Պաղոմէոս փիլադելփիաս ամս երեսուն և ինն։ Յառաջին ամին սորա Թագաւորեաց Անակեդոնացւոց Կռոնոս ամ մի. Պալագրոս՝ ամիսս երկուս. Ընթիոպատոս՝ աւուրս քառասուն և վեց. Սոսթենէս՝ (1) ամս երկու, զոնի Սելեւկոսի Թագաւորեաց Ընտիոքոս Սովտէր՝ ամս տասն և ինն։

Յերկրորդ ամին սորա Թագաւորեաց Անակեդոնացւոցն Ընտիգոնոս՝ ամս երեսուն և վեց։

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագս Թարգմանութեան հին կտակարանացն 'ի Կիպրոս կղզի։

Ի վեցերրորդ ամին Պողոմեայ Թարգմանեցան հին կտակարանքն 'ի Կիպրոս կղզի, այլք ասեն Ալեքսանդրիա Եգիպտոսի, եւ Թանասուն երկու ազգաքն, վեց վեց այր 'ի ցեղէն Իսրայելի. որք են յանուանէ ասասքիկ։ Ի ցեղէն Ռուբենի՝ Յովսեպոս, Եղեկիէլ, Եղիսէէ, Ղազարիայ, Յովհաննէս,

(1) Երկու օրի. Սոսթենէս

Եղեկիել։ Ի ցեղէն Շմաւոնի՝ Յուդայ, Շմաւոն, Եղդէ, Սամուէլ, Մատթէ, Սաղամիա։ Յազդէն Ղեւեայ՝ Նոյեմի, Յովսէփ, Թէոդոս, Իբռոսոս, Ուլանիայ, Տուկիոս։ Ի ցեղէն Յուդայ՝ Յովնաթան, Աբարի, Եղիսէ, Ինանիա, Օսքարիա, Եղեկիա։ Ի ցեղէն Իսաքարայ՝ Իսահակ, Յակոբ, Յեսու, Շամպատ, Շմաւոն, Գեւի։ Յազգէն Օսքուղոնի՝ Յուդայ, Յովսէփ, Շբմաւոն, Օսքարիա, Շմաւոն, Սաղամիա։ Ի ցեղէն Գադայ՝ Սամպատիա, Սեղեկիա, Յակոբ, Իսահակ, Եսայի, Մատթէոս։ Ի ցեղէն Սերայ՝ Թէոդոս, Իսաան, Յեսու, Թէոդորոս, Յովհաննէս, Յովնաթան։ Ի ցեղէն Դանայ՝ Թէոփիլէ, Աբրահամ, Իդամոս, Իսաան, Երեմիա, Դանիէլ։ Ի ցեղէն Ներֆթալիմայ՝ Երեմիա, Ղազար, Օսքարիա, Ինանիա, Եղիշէ, Տաթան։ Ի ցեղէն Մանասէի՝ Յովհաննէս, Իւղոս, Եկոտ, Թէոդոս, Երուսամ, Եզեկիել։ Ի ցեղէն Յովսեփայ, Բաղէբ, Սամուէլ, Յովսէփ, Յուդա, Յովնաթ Եւթոպի։ Յարանց աստի թարգմանեցան հին մատեանք 'ի Պիպրոս կղզւոջ և տարեալ Յեգիպտոս Եդան յարքունական տան. այլք Յեգիպտոս ասեն 'ի Փարան կղզւոջ։ Այլ մեք ստոյգն խուզե-

ցուք յետ եւ Թանասուն և չորս ամի իշխա-
նութեանն Յունաց, և 'ի վամԹասուն երկու
Թուին Սորոց 'ի խորհուրդ մտին կողմանք
Երեւելից ՊարԹեւք, և Պարսիկք և ա-
ռեն. պատառեցան Թագաւորութիւնն Ա-
կեղոնացւոց և տկարացան, զի կայ մեր
և նոցա այնչափ հեռաւորաց, դիպուք մեզ
Թագաւոր 'ի միջի մերում։ Իւ Թագաւո-
րեցուցին յորդւոցն Աբրահամու որ 'ի Կեն-
դուրայ 'ի ցեղէ Իսմայելի զԱրշակ քաջ 'ի
Խահլ մայրաքաղաքի աշխարհին, և հնա-
զանդեցան նմա ՊարԹեւք և Պարսք և Ա-
դացիք սահմանակիցք նոցա։

Իւ զայն տեսեալ վրկան աշխարհին որ
կայ 'ի հիւսիսոյ Պարսից, եղին և նոքա իւ-
րեանց Թագաւոր, բայց հնազանդեցան Պար-
ԹեւԹացւ։ Մանաւանդ և Հայք եղին իւրեանց
Թագաւոր զկնի քաջ և յաղԹող և տիեղե-
րասաստ Թագաւորացն Հայկազանց, որք
բարձին զԹագաւորութիւնն Ադացւոց
և հնազանդեցուցին զամենայն Թագաւո-
րութիւնն հիւսիսոյ, և զամենայն ազգն
շարժանակի զոր մեք ոչ տեսաք 'ի գրի զշա-
րս նոցա և զժամանակս, վասն որոյ ոչ գրե-
ցաք ասա։

Բանզի ձգեցաւ Թագաւորութիւնն

Հայկայ մինչեւ 'ի Սահէ, զոր ասին Հղեբ-
սանդր և Վերսոտին տիրեցին 'ի Պաղեստի-
նէ մինչեւ ցԹրակիա 'ի ծովն Կասպից յայն-
կոյս լերինն Կաւկասու։ Եւ Թագաւորեաց
'ի վերայ նոցա մի յորդւոց Հրշակայ Վա-
ղարշակ անուն, հոգոր Թագաւորութիւն
զոր ժողովեաց մեք Հայաստի գրողաց։

Հայ զինի Պողոմեայ խոհեմագունի Թա-
գաւորեաց յԵգիպտոս Պողոմէոս Հրկադիս։
Եւ 'ի կողմանս Հորոց Թագաւորեաց Սե-
լեւկոս, Կալանիկոս։ Եւ Մակեդոնացւոցն
Թագաւորեաց Դեմետրոս Փիլիպպոս։

Եւ յայսմ ժամանակի Բահանայապետն
Հրէից Սիմա որդի Սիմէոնի արդարոց ոչ կա-
մեցաւ տալ զհարկն Պողոմեայ։ Եւ զայրա-
ցեալ Պողոմէոս կամեցաւ գալ 'ի վերայ Հ-
րուսաղեմի։ և Հրեայքն առաքեցին առ նա
զՅովսեպոս առնել խաղաղութիւն. և եդիս
հնարս առաջի նորա, և արար զնա զօրագլ-
խաւոր ամենայն Հրէաստանի։ Իսկ ի յուսուն
և հինգերորդ թուին Հորոց Թագաւորեաց
Սիրոյ Սելեւկոս Կուանոս ամս երիս. և զհետ
նորա Հնտիոքոս մեծ ամս երեսուն և վեց։
որով նահատակեցան Մակաբայեցիք։

Եւ յիններորդ և երեք թուին Հորոց Թա-
գաւորեաց յԵգիպտոս Պողոմէոս Փիլոպա-

Digitized by Google

տոր ամն տասն եւ թն. սա յոյժ նեղէր զՀռոմայն։ Եւ գնաց Անտիոքոս և հնազանդեաց զԵգիպտոս կոտորմամբ սրոյ. և դաշաւ յԵրուսաղէմ, և առ զնա. և ասա կատարի առաջին գիրքն Մակաբայեցւոցն։ Ի հարիւր տասն թուականին Սորոց թագաւորեաց յԵգիպտոս Պտղոմէս Եւպիփանէս ամն քառասն և մի. սա առաքեաց զԵաքոպ զօրավար և հնազանդեաց զՀռոմայս և զՓղշտացիս։ Եւ եկ Անտիոքոս ընդդէմ նորա, և կոտորեաց զնա. և առ յինքն գրաւեաց զքաղաքն զոր առեալն էր։

Այս Անտիոքոս աթոռ սալայարկս գիտողց քաղաքաց բազմաց. և սա սրար նշանս չափածոյս ինքեանց 'ի ճանապարհս. զոր փարասան կոչէն. և շինեաց կամարքս քարակուռս յանցս գետոց և առուոց. և հաստեաց զնշորութիւն ճանապարհաց 'ի դիւրագնացութիւն. և 'ի մետասան ամին իւրոյ արաբ պատերազմ ընդ Հռովմայ և պարտեցաւ 'ի նոցանէ, և ըմբռնեցաւ։ Եւ եդ զորդին իւր պատանդս տալ զգինս անձին իւրոյ, և հարկս ամի ամի հազար քանքար ոսկւոյ. և այս եղեւ սկիզբն հարկեալոյ Ասիոյ և Սորոց 'ի Հռոմայեցւոցն։

Ի սոյն ժամանակս թագաւորեաց Մակե-

կեղծանացուցին Փիլիպպոս ամն քառասուն և չորս (1). և ասան կատարեցան մարգարէութիւնն Դանիէլի թէ թագաւորն հիւսիսոյ պատչէ պատերազմ ընդ արքային հարաւոյ. որ է Անտիոքոս ընդ Պտղոմէոսի, որ եւս նմա զդուստր իւր. և անդրէն էառ վերստին։

Այս Անտիոքոս ապան զՇ մոնայ և զորդիսն իւր, և այսուհարեալ չարչարէր զառաքեալս իւր. և գնաց առ յերկիրն Լուսանցուոց բազմիկ անդ ի գիւղին իւրոց։ Այլ անդ ասացին ցնա ծերքն եթէ սուր բերել զոսկերս սպանելոցն ի քէն. և անկեալ առաջի նոցա ողնայիս, և առաքեաց փոխ թանակի յԱնտիոք և բարձին սակաւ օք զնշխարս սրբոցն և գնացին։ Այլ հասեալ ի Հաթախ քաղաք դիպեցան նոցա ապք, որք ասացին եթէ քարկածեցաւ թագաւորն ի տան աստուծոյ հաւայն իւրոյ վասն չարեաց իւրոց։ Այլ իբրեւ լուան զայն եղին ի տեղւոջն զառաքեանս ընթեր կաղնւոյն մեծի։ Այլ յետ ժամանակաց յայտնեցան նշխարք նոցա, և շինեցաւ տեղին Ալանք և է մինչեւ ցայսօր ժամանակի։

Այլ թագաւորեաց Ախիս Վեղեւկոս. և Դիոդորոս հաւատարիմ նորա նեղէր զՀրեայսն. և պատժեաց զնա Տէր։

(1) Մի օրի. քան. և չորս։

Ի հարիւր երեսուն և մի թուին արձակեցաւ Անտիոքոս 'ի Հռոմայ և թագաւորեաց 'ի տեղի հօր իւրոյ։ Այս կոչէր Էպէփանէս և թագաւորեաց ամս մեռուսան. կամեցաւ գնալ յԵգիպտոս և արգելին զնա Հռոմայեցիքն, և դարձաւ ետկն 'ի Հրէաստան և եհան զԲահանայապետութիւնն յԱ-սոն՝ յեղբայրն Մնիայ. և յետ սակաւու առ 'ի նմանէ և եհան զՄնիա. և եղեւ ազմուկ 'ի մէջ եղբարցն։ Իսկ Մատաթիէ որդի Յոհանանու որդւոյ Շմաւոնի Բահանայի յորդւոցն Յոյիարեանց նստէր 'ի Մոդիմ քաղաք. և եւթին որդիք նորա ընդ նմա Յուդանէս, Շմաւոն, Յուդաս, Մակաբէ, Էղիազար, Ալարէ, Յոնաթան. սա վատեցաւ նախանձու Ասուծոյ և տեսեալ մեղս անհնարինս ազգին զյանցաւորս. և ապստամբեալ ել 'ի լեռնն իւրոցքն։

Իսկ Անտիոքոս հարուածովք հօր իւրոյ մեռաւ 'ի Պարս 'ի յասմանէ Տեառն, զի նա պնաց զՃանապարհս հօր իւրոյ, այն որ պրպտեաց զտաճարն կանգնելով 'ի նմա պատկեր Օրեսայ. և 'ի լեռնն Պարիզին չինեաց տաճար յանուն Օրեսայ և Բանթեայ՝ ազատ չեցեալ գնա Սամարացւոցն։

Յութսուներորդ ամին Պտղոմեայ

Digitized by Google

թագաւորեաց Յոպիփան Բ. պատուոր ամս եւ կուս. սա առաքեաց զՇաւ. ղղօրա զօրապետն իւր հարիւրքսան հազար զօրաւք և փղաւք ի Հրէաստան, և կոտորեցան ի նմանէ բազմութիւն Հրէից, եւ մեռաւ Յոպիտարդ ի ներքոյ փղի. և եղեւ ի թագելն զսպանեալ զոն Խորայելի գտան ի ներքոյ հանդերձիցն, նկարք և պատկերք կոց։

Յայսմ ժամանակի Ինիա Քահանայապետն գնացեալ Յերիպտոս շինեաց տաճար Տեառն նման տաճարին որ Յերուսաղէմ, առանց հրամանի տեառն. և առնէին անդ քահանայապրծութիւն ըստ օրինացն։ Յետ զտաճարն որ Յերուսաղէմ նորոգեաց Յուդա Մակաբէ և մնաց չէն մինչեւ. յաւերն վերջին ի Հռոմայեցւոցն, զի նա էր առաջ նորդ Հրէից։

Յետ յետ Յուդայի եկաց Յոնաթան, որ սպանաւ ընդ Պղեքսանդրի ի Տրիփանայ։ Յետ եկաց ի տեղի նորա Շմաւոն. սա առաքեաց ի Հռոմ վահան ոսկեղէն, և խնդրեաց դաշն և բերին նմա տախտակ պղնձի նշան ուխտի։ Յետ սա առաքեաց զՅովհան նէս զորդին իւր. և կոտորել էտ զզօրսն Ինտիոքոսի և ազատեցան ի հարկէ նոցա։ Յետ սատ կատարեցան երկրորդ գիրքն Մակաբայեցւոց։

Digitized by Google

Ի հարիւր եւ թանասուն և չորս թուին սպանաւ Շմաւոն ի Պողոմեայ. և առ զգաստեղն նորա Յովհաննէս որդի նորա։ Յայսմ ժամանակի իշխանացաւ ոմն Հրեայ Յովհայ, և գնաց մինչեւ ի հայրն Աբգարու Աբգայի։

Ի զայսու ժամանակաւ գնաց Յովհաննէս Յովկանիայ, և եհար զնոսա. և կոչեցաւ անուն նորա Հիւրկանոս։

Ի թագաւորեաց Անտիոքոս Սկրիպաս, և եկն Յերուսաղէմ խնդրեաց հարկս յոյժ ծանրագոյն. և եբաց Յովհաննէս զգերեզմանն Դաւթի թագաւորի, և եհան անտի զոսկին և զզարդն ամենայն թագաւորացն Յուդայ, և երեք հազար քանքար ոսկւոյ առեալ՝ ամփոփեաց զայլն. և տուեալ երեք հարիւր քանքար Անտիոքու գնաց ի նմանէ՝ և էրքաւ Հիւրկանոս որ և Յովհաննէս, եւ քակեաց զՅամարիա։

Ի թուին հարիւր իններորդն և վեց թագաւորեաց Յգիպտոս Պտղոմէոս Սովտեր ամս եւթն և տասն։ Ի գնացն Անտիոքոս, և Հիւրկանոս ընդ նմա, և սպան նոքին զՏիտոս թագաւորն սպարթեւաց։

Ի չորրորդ ամին Պտղոմեայ թագաւորեաց Յասիա Անտիոքոս Կիզիկոս ամս ութ

և տան։ Ի մեռանելորդ. ամին Պողոս մեայ մեռաւ Յովհաննէս Հիւրկանոս, և առ զտեղի նորա Արիստաբուլոս որդի Յոթնեալեայ ամ մի. սա 'ի վերայ սիճնաւորին թագ յանել. և եղկոքին եղբարք սորա Ալեքսանդրոս և Անտիգոնոս ներնգութեամբ սպանին զմիմեանս լաստ մարգարէութեան հօրն իւրեանց զի շնորհ մարգարէի գոյր ընդ նմա։

Յետ Արիստաբուլեայ առ զպատիւն Յովհաննէս եղբայր իւր, որ կոչեցաւն Յանէ ամս քսան և եւթն, որ խստագոյնս դատէր զազգն իւր։ Յոյսմ ժամանակի հալածեցաւ Պողոմէ 'ի Կղէոպատրայ մօրէն իւրմէ։ Եւ թագաւորեաց յԱգիպտոս Պողոմէոս Ալեքսանդրոս ամս տասն։ Ի վերջերորդ. ամին սորա բարձան թագաւորք Սիրոյ և Սորոց, և եղէն ընդ Հռովմայեցւովք։

Եւ աստ կատարեցան հին գիրք մողովդեանն։ Եւ են յԱդամայ հինգ հազար և եւթանասուն երկու ամք, և աստի մինչեւ 'ի ծնունդն Քրիստոսի ամք հարիւր քսան և չորս։ Եւ ժամանակ թագաւորացն Սիրացւոց ամք երկերիւր վեշտասան. որ սկսաւ դէնի մնհուանն Ալեքսանդրոս և 'ի թուին Սորոց՝ երկերիւր քսան և երկու։ Դարձաւ Պողոմէոս հալածականն յաթոռս իւր ամս ութ։

Եւ յետ նորա թագաւորեաց Պաղամէոս Դիոնէսիոս, ամս երեսուն որ էր երկայր Աղեքսանդրայ։ Ի հինգերորդ (1) ամին Պաղամեայ մեռաւ Յովհաննէս որ և Աղեքսանդրոս, և առ զեշխանութիւնն կին նորա Աղեքսանդրիայ որ կոչեցաւն Սաղինա ամս ինն. օրինապահ և Աստուածապաշտ, որ ունէր ուսուցիչս երիս, զՀիւրկիանոս, զԱրիստաբուլոս, զԱնտիգոնոս։ Եղեւ Հիւրկիանոս քահանայապետ, և Արիստաբուլոս առնուլ կամէր ի նմանէ. մինչեւ էին Պոմպէոս զօրապետն Հռովմայեցւոց, և տարաւ զնա կապանօք, և հաստատեաց զՀիւրկիանոս ամս երեսուն և չորս։ Սա շինեաց զպարիսպն Երուսաղեմի և զքակեանն ի Պոմպայ և մտին Հրեայք ընդ Հռոմայք։

Իսկ Պոմպէոս կրճատեաց բաղումս աշխարհս ի Հայոց և ի Սորոց և ի Արաբացւոց և մեծացաւ յոյժ, մինչեւ կոչել նմա Եւտուկարտոր։ Եւ ի նոյն ժամանակս մեռաւ Պտղոմէոս, և թագաւորեաց Կղեոպատրա ամս երկու։

Եւ ապանաւ Պոմպէոս ի Յուլիոսէ որ և Կայիոս ի կարծիս ապստամբութեան։

Այսպէս ժամանակաւ էր Հերովդէս, և այս է ազգն նորա։

(1) Երեք օրի չափն։

Այլ մի էր Այսկաղմնայ Անթիոպատրոս անուն որդի Հրովդէի Թրմապետի Այսղմնի կուռց։ Այս գերեցաւ Յոդոմայեցւոցն և անդէն ամուսնացաւ, առեալ ի կնութիւն զյուփրիտէ դուստր Արեստայ արքայի Արաբացւոց. և եղեւ սա բարեկամ Հիւրկիանայ. զի օգնէր նմա ի Պոմպիոյ կողմանէ. սակս քահանայութեանն. զի ծանօթացաւ Հռոմայեցւոցն և հնարհ եգիտ յաչս նոցա. մինչ կացուցին զնա իշխան Հրէից կամելով Հիւրկանեայ և ունէր նա չորս որդիս Յովսէփ և Փերուբի և Փեսաղոս և Հերովդէս և դուստր մի Սոզոմ անուն։ Իսկ Յովսէփ և Փեսաղոս եղեն ընդ հօրն գործակից Հրէից։ Եւ ոմն ի Հրէից սպան զԱնթիպատրոս դեղմամբ Յովսեփիս որդւոյն իւրով։ Եւ զՓեսաղոս Անտիգոնոս սպան դեղերով ըզխոցեալ գլուխ նորա։ Բանզի զօրապետն Հայոց Բաղափրան եկն Այրուսաղէմ զայսու ժամանակաւ, և գերեաց զնա. և հանեալ զՀիւրկիանոս եգ ի տեղի նորա զԱնտիգոնոս, և զՓերուբի. և զՀիւրկիանոս տարաւ կապանաւք ի Հայս։

Եւ Հերովդէս գնացեալ ի Հռոմ եւ պատմեաց զվիշտս հօրն իւրոյ. և զերգարոյն

Digitized by Google

'ի վերայ հաւատարմութեան իւրեանց, և վասն այսորիկ թագ եդ նմա կայսրն Հռոմայ, և եկեալ յԵրուսաղէմ սպան զՆիտիգոնոս, և յետ ժամանակի զՀիւրկիանոս. և զերծեալ 'ի գերութենէ Հայոց, Թագաւորեաց Հրէից անհոգապէս։

Նոյնպէս սպան և զորդին Հիւրկանեայ. և զՆեմրեան։

Եւ կատարեցան գիրք եթէ 'ի պակասեալ ազգութենանցն Հրէից երեւի բնաձին պղծայ. և եւթներորդքն Դանիէլի որ ասէ եւթներորդք եւթն. և եւթներորդ վաթսուն երկու. որ լինի վաթսուն և ինն եւթներորդք ոչք են ամք չորս հարիւր ութսուն երեք։ Ակսեալ 'ի վեցերորդ ամէն Դարեհի Մադիայ մինչեւ յաւետիս կուսին Մարիամայ Դամանուէլի. և գտաք 'ի թարգմանութենէն Աբգարու արքայի՝ եթէ Դանիէլ յետ խմանալոյն վասն Քրիստոսի, նեղէր 'ի կարօտութենէն. և 'ի վախճանելն իւրում յեղբ Տիգրիս գետոյ, անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց, կոչեաց առ Տէր և ասէ. ցոյց Ստուած Իսրայելի զՔրիստոսն քա մինչեւ մեռեալ ի՞ցեմ։ Եւ եկն առ նա Գաբրիէլ և ասէ. հանգիր խնդալութեամբ ապր ցանկութեան. զի չեւ է ժամանակ, այլ

'ի կատարման տեսչեանն քո գայ. և խաչի, և մեռանի, և ինքնին և կեալ 'ի դժոխս հանէ զձեզ անտի. արդ՝ միսիթարեա զքեզ յուսով գալստեան նորա։

Ըստ որում և 'ի կատարման ժամանակին ծնաւ Յիսուս Քրիստոս օծեալն Աստուած 'ի Բեթղեհեմ Յուդայ 'ի քառասուն և չորս ամի թագաւորութեանն Օգոստեայ, և ի ջեալ հուր յերկնից այրեաց զյաճախութիւն կռոցն որ կայր յԱլոմպիոս լեառն, զոր առ տուածաբնակն կոչեն։

Այս էր ամն առաջին թագաւորութեանն Աքգարու, և Հերովդի՝ երեսուն և երկու։ Այս այսպէս մեր պատկաւորն Աքգարիոս արքայակից է ըստ մարմնոյ արքայութեան Տեառն։ Այս է Ադամայ հինգ հազար հարիւր ութ՝ ըստ եւթանասնիցն։ Ըստ Լուսեբայ՝ հինգ հազար երկու հարիւր ութսուն և չորս։ Ըստ Երանոսի՝ հինգ հազար իններսուն և մի. և ըստ այլոց՝ հինգ հազար հինգ հարիւր երեք։ Այս ըստ Աստոր՝ հինգ հազար քսան և վեց. և էր մուտն Նիսանայ և երկուշաբաթ. և տարին երկոտասան լուսնեայ (1) յորում ամի առաքեցաւ Կիւրինոս 'ի Սենկղիտոսէ Աստրիս, և 'ի Պաղեստին

(1) Մի օրի. լուսնոց։

Digitized by Google

գրել զազգսն, և դնել հարկս։ Բանզի լուան 'ի Հռովմ վասն Թեոդասայ և Յուդայի ապստամբաց, եթէ ասեն Հրէիցն մի տալ հարկս մահկանացու Թագաւորի, և բարկացան յոյժ. և 'ի պատճառս ապստամբողացն (1) եղեւ իրքս այս, որ բնաւ չէր լեալ։

Իսկ Օգոստոս երկրորդ ինքնակալ էր, և կայսր Հռովմայեցւոց յետ Յուլիոսի, զոր ասեն Փորահան, այն որ բարեբախտ եղեալ Թագաւորեաց յետ չորս հարիւր վեցտասն երկու ամի խափանելոյ Թագաւորացն Հռովմայեցւոց 'ի Տարկինոսէ մինչեւ ցնա։

Եւ զառաջինն պատիւ Թագաւորացն նոցա Բոբիոս էր. և արդ կայսերք Եւտուկարտորք կոչին։ Եւ 'ի շինելոյն Հռովմայ մինչեւ երկրորդ անգամ Թագաւորեցին եւթն հարիւր երկու ամք. և մեծք եղեն յերկրորդումն քան յառաջնումն. զի Գայիոս առաջին Թագաւոր նոցա գնացեալ Ալեքսանդրիոս՝ հնազանդեաց այնորոյ անուանն Թարգմանի Կայնան, որ է Ընդրանիկոս (2) կոչեցեալ յոմանց։ Եւ այս (3) Յուլիոս, որ է հինգ ամ Թագաւորեալ սղանաւ նենգութեամբ։ Երկրորդեաց Օգոստոս, որ մե-

(1) Մի օրէ. ապստամբաց կոս։
(2) Հարս. օրէ. Անդրանիկ. (3) Ամենայն օրինակք ոչ նենգաւոր.

Digitized by Google

ծագունի փառաց արժանացաւ մնալ եղեալ
ի ժամանակ Տեառն մերոյ։

Եւ տիրեցին Ասիոյ և Աղուանեայցն։
Եւ կացուցին զայսու ժամանակաւ զ Ղազի-
սս Հռովմայեցի ի կողմանս Աղուանից, զի
գրեսցէ ի Հռովմ զամենայն պատահեալսն
յայսմ կողմանէ. ըստ որում և գրեաց ըզ-
ժամանակ ծննդեան Տեառն մերոյ և զգալ
Մոգուցն, և ասաց։

Գիտասցէ ինքնակալութիւնդ քո, զի
Պարսիկք ոմանք արք փառաւորք եկին եւ
մտին յիշխանութիւնս ձեր. և երկրպագե-
ցին տղայի միոյ ծնելոյ ի Հրէաստանի, ա-
ռաքելորդեալք յերկնաւոր փառաց։ Այլ
թէ ոմ է մանուկն, կամ ոյր որդի ուղղա-
կանամբ։

Եւ գրեցաւ նմա պատասխանի եթէ ըզ-
Հերովդէսդ արքայ կացուցեալէ մեք ի վե-
րայ Պաղեստինեայ. ի նմանէ լուիցուք Մո-
գուցն գալ։ Իսկ եթէ ոչք էին Մոգքն. Եւ-
սեբի և Գրիգոր ասեն յորդւոցն Աբրահա-
մու էին. և այլք՝ եթէ յորդւոցն Խաղտամու
Մոգք էին։ Եւ գտաք մեք Նիւսացւոյն բա-
նիս գրեալ զայս, և նման է. և Յակոբ ա-
սէ, յազգէն Իսմայէլ էին Եմանցիք։ Եւ ո-
մանք՝ եթէ ի Թագաւորացն Արաբայ, եւ

Սաբայ էին ըստ Դաւթայ վկայելոյն։ Սա-
կայն էին երեք թագաւորք զի երեք ցեղ
պատարագս մատուցին։ Եւ ոմանք ուրթն
ասեն ըստ Անքիայ, թէ ութ վարիչ։ Եւ
սուրբն Յակովբ երկոտասան իշխան ասէ.
և ստուգիւ գրեալ է նորա գիրք մի. երեք
հազար հեծեալ ասէ, և հինգ հազար հե-
տեւակ։ Եւ եկեալ Յերուսաղեմ ի տեղին որ
ասի Կալանիկոս որ է Որաղայ, լուան եթէ
սովէ ի Հրէաստան այլ եւս վասն կասկածի
շփոթման, թողին զյորովս և ինքեանք եր-
կոտասանքն հազար հեծելով գնացին եւ
դարձան առ զօրս իւրեանց։ Եւ անուանք
իշխանացն են այս՝ Դահանդուբ՝ որդի Ար-
տազդայ։ Շահէփ, որդի Դուդբարայ. Ար-
շակ որդի Անհգուդայ, Օրեւանդ (1) որդի
Վարիդուդայ, Երիհու որդի Խասրովու, Ար-
տաշէս որդի Ուլիսթայ, Իշթանքուզա որդի
Շիշոնթայ (2), Մեհդուք (3) որդի Հումայ,
Աքշերիշ որդի Սահապանայ, Սարտանա (4)
որդի Բելդանայ, Բարուդոք որդի Բեղայ։
Իսկ թագաւորն որ առաքեաց զնոսա՝ Փիր-
շապուհ անուն. ոմանք երկու ամաւ յետ
Ծննդեան ասեն զգալն Նոցա։ Բայց Ճշմար-

(1) Երկու օրի. Զրեւանդ։ (3) Երկու օրի. Մեհդուդ։
(2) Երկու օրի. Շիշոնայ։ (4) Երկու օրի. Սարտանա

տեն ոմանք երկու ամաւ յառաջ գուշակեալ աստեղք և յուշի անկեալ։ Եկեալ ժամանեցին 'ի (տեղն) ծննդեանն, միով աւուրբ զկնի ծննդեանն, բան որում գտին պատեալ 'ի խանձարուրս և եդեալ 'ի մսուր։

Եւ քառասուն օր կացեալ անդէն 'ի Բեթղեհեմ, և գնացեալ 'ի տաճարն ընկալաւ զնա Սիմէոնն որ հրամանաւ Հոգւոյն պահեցաւ կենդանի։

Ի Պտղոմեայ հետէ, որ մի էր 'ի թարգմանչացն, որ 'ի գրել զԳսային և զտեղին թէ՝ Կոյսն յղացցի, գրեաց և ապա զղջացաւ, և ասաց թէ՝ Հեթանոսքս որ խնդրեցին զգրքեանս, ծաղր առնեն, զիմիրդ հաւատան։ Եւ դարձաւ ինքեաց, և դարձեալ տրտմեցաւ. և ասէ. Ինկերքն իմ գրեն և այսն լինիմ ես, և վնասի հակառակութիւն։ Զիտելով ընկերին որ ընդ նմա, և 'ի տրտմութենէն ննջեցին երկոքեանն. և յոլովամ զարթեան, տեսին զի գրեալ էր զարմանալի գրով ոսկեղինաւ։

Իսկ Սիմէոն եկաց զօրն ողջոյն, և երանի տայր ժամանակին և տեսողացն զկուսածին Մանուկն։ Եւ ասէ ցնա Հոգին. Ոչ մեռցիս մինչեւ հասցես երանութեան։ Եւ եհաս բաղձանացն յերեք հարիւր քառասուն և չորս ամի ժամանակաց խաղոց. և 'ի տաճարին

գնաց (1) 'ի Լազարէթ, և անտի Յոգիպատոս, զկնի վաթսուն երկու աւուր ծննդեան իւրոյ. այլք ասեն յետ երկու ամի գնաց Յոգիպատոս. և գու զայս ընկալ։

Եւ Հերովդէս խաբեալ 'ի մոգուցն և զայրացեալ՝ այրեաց զամենայն գրեանն Հրէից, և ջնջեաց զյիշատակ թագաւորացն Հրէից և զքահանայութեանն, զի իւր լիցի թագաւորութիւն սեպհականութեամբ. և կոտորեաց զմանկունսն թուով հազար չորս հարիւր վսթսուն և երկու, յուսուն և չորս գեղջէ։

Այս Հերովդէս խափանեաց զթագաւորութիւն և զքահանայութիւն Հրէից. զի ընդ ձեռամբ արար զվասան, և տայր կաշառօք անարժանից։ Սա քակեաց զպաքիսան Երուսաղեմի, և արար կոտորած սատանիկ մինչեւ ընկալան զնա ամենայն Իսրայէլ։ Սա առաքեաց 'ի Բաբելոն և եւս բերել զՆանէ, և արար զնա քահանայապետ ամ մի, որ չէր Ղեւտացի։ Եւ ապա արար զԱրիստոբուլոս զորդին Հիւրկիանեայ զեղբայր կնոջ իւրոյ, և սպան զնա և արար դարձեալ զՆանէ։

Ի սմին ժամանակի յաղթեցան զոքն

(1) Մի օրի. յոյնս Յիսուս։

Հայոց որ կային 'ի վերայ Եփրատայ. և ելեալ Սամուսատ ընդ Հռոմովք։

Եւ 'ի ժամանակս Օգոստեայ, զորսվաբ նորա Անտոնինոս սիրեաց զԿղեոպատրայ. և ապստամբեալ թագաւորեաց և գնաց յԵգիպտոս և գնաց 'ի վերայ նորա Օգոստոս և կալաւ զնա, և եթող կենդանի զն աղաչեցին վասն նորա Սինկղիտոսքն։ Եւ ած Օգոստոս գերի բազում յԵգիպտոսէ 'ի Հռոմ. և չոգաւ ինքն, և վերստին ապստամբեաց Անտոնինոս, առեալ զԿղեոպատրայ. և ունէր որս Կղեոպատրայ ընդ Հայս և ընդ Հրեայս և ընդ Արաբացիս. և 'ի ձեռն Անտոնինոսի թափէր զնսխանձ իւր։

Իսկ լուեալ Օգոստեայ գնաց 'ի վերայ նորա և պաշարեաց զնա յԵգիպտոս. և յորժամ գիտացին զպարտութիւնս իւրեանց Կղեոպատրայ և Անտոնինոս ոչք կռուէին ընդ Օգոստեայ 'ի միասին, անձնասպան եղեն։ Եւ Օգոստոս եսպան զԱրեգակն և զուսին զորդիսն Կղեոպատրայ. և եբարձ զթագաւորութիւնն Պտղոմեանց, որ Յունաց կոչէր. տեւեալ ամս երկու հարիւր ինսուն և վեց։ Եւ Սեբաստոս կոչեցաւ Օգոստոս որ է յաղթող։

Եւ հն ամանք որ աստի թուեն զժամա-

Digitized by Google

նակն Օգոստեայ։ Յե առաքեաց Օգոստոս զՏիբերիոս զորդեկան իւր և զարար ընդ նոսա խաղաղութիւն։ Յե անտի գնացեալ 'ի Կիւռենական աշխարհն, արար զնոսա հնազանդս։ Յե շինեաց Հերովդէս զՍամարիա, և Սեբաստիա կոչեաց յանուն կայսրի. և շինեաց քաղաքս բազումս և մեծացոյց զարքունիսն Յերուսաղէմ։ Յե շինեաց զաշտարանն Ստրատոնեայ, և կոչեաց յանուն կայսերի. և իբրև այս գործեցան յառաջ քան զծնունդն Տեառն մերոյ Թէպէտ դրեցաւ այսպէս։

Բայց Հերովդէս յաճախեաց 'ի չարիս իւր և սպան զՄարի զկին իւր, և զամենայն արուեստագէտս և զիմաստունս Հրէից. և Տէր եհար զնա չարաչար ցաւովք յոտից մինչեւ ցգլուխն. և տրորեցաւ ամենայն մարմին նորա, և քաջիւքք ոչ կարացին օգնել նմա. և եդին զնա 'ի ջերմ ձէթի, եւ խոտացաւ ցաւն. և կալեալ զգլխաւորս Հրէից և պատուիրեաց փեսային իւր Ալեքսին և Յողոմեայ քեռւ իւրում զի սպանցեն զնոսա յելանել ոգւոյ նորա. զի ակամայ լացցեն Հրեայքն յաւուր մահուան նորա. զոր և արարին իսկ. զի նեղեալ 'ի ցաւոց ըստան զանձն իւր և եղեւ չարամահ յերե-

սուն և եւթն ամի արքայութեան իւրոյ։
Այս Հերովդէ էին կանայք ինն, եւ
որդիք ութ։ Ի Դոսիոսէ կնոջէ ծնաւ Ան-
թիպատրոս, սա եւպան զերկու եղբարս
իւր, և սպան զնա հայրն իւր։ Եւ Ասրի
դուստրն Հիւրկանեայ ծնաւ զԱղեքսանդ-
րոս և զԱրիստաբուլոս, զոր սպան Անթի-
պատրոս, և զՀերովդէս զոր ոմանք կոչէին Ան-
թիպատրոս. սա էառ և զՀերովդիադայ և
սպան զՅովհաննէս։ Եւ Ամեղքոս Սամարացին
ծնաւ զԱրքեղայոս զոր Օգոստոս թագաւոր
կայսրն 'ի տեղի հօրն ամն ինն։ Կղէոպատրա
ծնաւ միւս Հերովդէս, զՓիլիպպոս, զորոյ
կինն տա Հերովդէս եղբայր նորա (1) և ըս-
պանաւ 'ի պատճառաւ կնոջ իւրոյ։ Եւ Բազայ
ծնաւ զՓիլիպոս։

Եւ այս են որդիք որդւոց նորա, Արիս-
տաբուլոս ծնաւ զՀերովդէս, որ թագաւո-
րեաց 'ի Քաղկիդա։ Եւ զԱգրիպպաս որ
կոչեցաւ Հերովդէս, որ սպան զՅակոբոս

(1) Ասա խառն և չիմիթ գան անուանքս ըստ Ս. Գրոց կրկնեալ առաւել որպէս Հերովդէս զոր ասացն 'ի վերոյ առեալ զՀերովդիադայ 'ի կընութիւն, և սպանեալ զՅովհաննէս, զՄկրտիչն անշուշտ, և ասա ասէ ծնեալ 'ի Կղէոպատրայ Հերովդէս եղբայր Փիլիպպոսի. որ նոյն ինքն է, և առ 'ի կին զՀերովդիադայ զկին եղբօր իւրոյ Փիլիպպոսի. որոյ 'ի պատճառաւ եւ. Յովհաննէս սպանաւ։

զեղբայրն Յովհաննու։ Այս մարտեաւ ընդ հօրեղբօրն և առ զթագաւորութիւնն 'ի նը-մանել, և սմա եղեւ որդի Աղրիպպաս որ յետ նորա թագաւորեաց։ Եւ դատերք սո-րա Բերենիկայ և Դրուսեղա որ եղեւ կին Փեղիքս դատաւորի։

Իսկ իբրեւ թագաւորեաց Աղբեզայոս ինն ամ ոտուտ յաքսորս 'ի Բենան (1) քա-ղաք վասն չարեաց իւրոց։ Եւ թագաւորեաց Ներովդէս չորրորդապետ. և 'ի նմին ամի մեռաւ Օգոստոս։ Եւ առ զթագաւորու-թիւնն Տիբերիոս ամս քսան երեք։

Իսկ ամենեցուն Տէրն դարձեալ Յոդիպ-տոսէ, անանէր 'ի Լազարէթ լուելեացն օրի-նաք մանկանց։ Յերեք հարիւր երեսուն և եւթն թուին՝ 'ի չորեքտասան ամին Տիբե-բայ, առաքեցաւ Պիղատոս դատաւոր Երու-սաղէմի. և հնգետասան ամին Տիբերայ գայ Տէրն մեր 'ի մկրտութիւն 'ի Յովհաննէ որդ-ւոյ Զաքարիայ յամին հինգ հազար հինգ հարիւր երեսուն և եւթներորդի ելիցն Ա-դամայ 'ի դրախտէն՝ 'ի վեցն Յունուարի լուսոյ Հռովմայ՝ 'ի քսան և մի 'ի Տբէթ ամ-սոյ ըստ Եբրայեցւոցն։ Յամն Տիբերայ

(1) Մի օրի. Իբենան քա- քաղաք։
ղաք։ Մի օրի. 'ի Գենենէա

կայաբը շինեաց Հերովդէս զՏապարիա և զԲ-
բայիս (1)։ Իսկ Պիղատոս զպատկերն Օ.եւասայ
եմայծ 'ի տաճարն, և զգանձանակ տաճարին
Թափեաց 'ի ջրէջան։ .

ԳԼՈՒԽ Զ.

Յաղագս կարգաւ առաքելոցն որք կատարեցան։

Յերեսներորդ ամի տնտեսութեան Տեառն մերոյ ընտրեցան Առաքեալքն և կոչեցան. առաջին Սիմէոնն Պետրոս՝ 'ի ցեղէն Նեփթալեմի, որ եդ խորան առաջին Յինքոք, որ յամս Կղոդեայ եղ 'ի Հռոմ, և եղեւ անդ ամս քսան և եւթն. և 'ի Ներոնէ պսակեցաւ։ Եւ Անդրէաս եղբայր նորա, որ քարոզեաց 'ի Նիկիա, և 'ի Նիկոմիդիա, և 'ի Ակիւթիա և Յաքայիա. և նախ սմա դրեցաւ ամթոռն Յփեսոսի, որ փոխեցաւ 'ի Կոստանդնուպօլիս։ Յակովբոս որդի Օ.եթեդեայ՝ 'ի ցեղէն Զաբուղլոնի, որ չոգաւ 'ի Սպանիա, և դարձաւ Յերուսաղէմ, և սպանաւ 'ի Հերովդիայ յութ ամի Տեառն չարչարանացն. և կայ մարմին նորա 'ի Յուբ Մարմարիկէ։ Եւ Յովհաննէս եղբայր նորա յետ ննջման Աստուածածնին գնացեալ Յիփեսոս կատարեցաւ յեւթներորդ ամն Տրայիանու։ Փիլիպպոս՝ յազգէ Աստրայ 'ի Բեթ-

(1) Երկու օրի. յոգեղ. յանուն Տիբերիայ կայսեր։

սայիդայ, քարոզեաց յԱՒրիկէ, և կատարեցաւ 'ի Փիսիդիա։ Բարդուղիմէոս՝ 'ի ցեղէն Իսաքարայ, յԱդաւիր գեղջէ, քարոզեաց 'ի Պարթեւս և եկեալ 'ի Հայք ներքին խաչեցաւ 'ի Անանարկոյ արքայէ. եւ հանեալ մորթ նորա։ Թովմաս՝ 'ի ցեղէն Յուդայ. քարոզեաց Պարթեւաց և Մարաց և Հնդկաց, և անդէն կնքեալ զկեանս իւր վկայութեամբ։ Մատթէոս՝ յազգէն Իսաքարայ 'ի Նազարեթէ. քարոզեաց Հրէից և մեռաւ 'ի Դաբաազ, և թաղեցաւ յԱնտիոք. և յետ ժամանակի տարան զնա յայնկոյս Ծովուն։ Ակման կանանացի՝ 'ի ցեղէն Եփրեմի, ննջեաց 'ի Համա, և գտաք ուրեք թէ 'ի Կուրիս։ Յուդա՝ որ կոչեցաւն Թադէոս, որ սակս իւ մասաստութեան նորա կոչէին Ղեբէոս՝ որ է սիրտ և հոգի. քարոզեաց յԱսորիս և 'ի Հայս, և կատարեցաւ 'ի ներքին Հայս 'ի Բիւրուդիս տեղւոջ 'ի Սանատրկոյ. և գտաք ուրեք, թէ բերաւ յՍուրհայ։ Յակոբոս Ալփեայ՝ յազգէն Մանասէի, կատարեցաւ 'ի Սրուճ։ Յուդա մատնիչ 'ի ցեղէն Դանայ 'ի Սկարիովտայ, որ գնաց 'ի տեղի իւր։ Մատաթիէ փոխանորդ նորա՝ յազգէ Ռուբենի, կատարեցաւ յերկիրն Մարդակերաց։

Եւ յետ սոցա երեւեցոյց Տէր եւս եւ թանասուն երկու, որոց անուանքն են այս։

Digitized by Google

Աղդէ որ կատարեցաւ Լեռհայ, Ախէ՝ որ կատարեցաւ 'ի Սերենոսէ Աբգարայ որդ-ւոյն։ Անանիա՝ զոր Փուլ զօրավարն էսպան 'ի բարին ասէր որ զՊողոս պաշտէր 'ի Դամասկոս (1)։ Պազար զոր յարոյց Տէր, 'ի Կիպրոս կատարեցաւ։ Սելեւաւ՝ որ 'ի Ռոդոս ծովակուր եղեւ։ Կեփաս կացեալ 'ի Հռոմ, և կատարեցաւ 'ի Փիլիզոր իւրով մահուամբ։ Բառնաբաս՝ որ 'ի Սամոս մեռաւ։ Սոսթենէս՝ որ 'ի Պոնտոս 'ի ծով ընկեցաւ։ Կիւրակոս որ Աղէքսանդրիա 'ի բանտի (2) մեռաւ։ Յովսէփ Փիլիտուս՝ որ զՏէրն Թաղեաց 'ի տան իւրում մեռաւ։ Ակոդեմոս՝ որ Հրուսաղէմ կատարեցաւ։ Շիղայ՝ որ 'ի Փիլիպուս կատարեցաւ։ Յուդայ Յակոբեան որ 'ի Պիսիթ կատարեցաւ. և ըստ այլոց Ամմի քաղաք Հայոց Յուդայ՝ Հապիւ որդի 'ի Խլաթ քարոզեաց և անդ կատարեցաւ։ Մարկոս որ կոչեցաւն Յովհաննէս Աղեքսանդրու կատարեցաւ։ Ուռնաս՝ 'ի Սելոնիկ կատարեցաւ։ Նիկէ 'ի Պտուղնի կատարեցաւ։ Յասոն՝ գազանակուր եղեւ 'ի Պոլսոմպուս։ Մանասուլ որ այրեցաւ Աղքքայ։ Ռուփոս 'ի

(1) Թէրեռ. ւէրի. Անանիա՝ 'ի Դամասկոս։ զոր Փուլ զօրավարն սպան 'ի Բարին. սա էր որ զՊողոս պաշտէր։

(2) Մի օրի. յաջորդ սովվի։

Տէրք սպանաւ։ Աղեքսանդրոս ընկեցաւ 'ի վիհ Յերակլապօլիս (1)։ Ամոն Կիւրինեայ սրբով կատարեցաւ։ Օլինոս, որ 'ի մէջ ձիոց կոխեցաւ։ Կղեոպաս՝ խաչեցաւ Յերուսաղէմ։ Ավսէս և Յակովբ եղբարք քարկոծեցան 'ի Սպարտայ։ Թէոդորոս հրով կատարեցաւ 'ի Աւոդիկէ։ Դեստորիոս կատարեցաւ 'ի Նալ։ Աբիղոն և Սամոն մտին 'ի քօշացուց երկիրն և անդ կատարեցան։ Յոնիաս 'ի Սամոս կատարեցաւ։ Տիտոս 'ի Պաշրիտէ կատարեցաւ։ Պատրուբաս 'ի Բազկեդոն կատարեցաւ։ Յասոն կրիտէ 'ի Խուղիա կատարեցաւ։ Երմէ հովիւն Յանտիոք Պիսիդա կատարեցաւ։ Միւս Կիբակոս 'ի Կեսարիա կատարեցաւ։ Խրիսիմոս 'ի Ռգնունիս կատարեցաւ։ Նարկիսոս 'ի Աւոիկն կատարեցաւ։ Աբրոս 'ի Կեսարիա կատարեցաւ։ Մամաս 'ի Սիկիլիա հրով կատարեցաւ։ Տիմոթէ Յեփեսոս մեռաւ։ Մարկոս աւետարանիչ Յաղեքսանդրիա կատարեցաւ։ Պաւղոս աւետարանիչ 'ի Պաւոս քաղաք կատարեցաւ։ Պետրոս, 'ի Փեանիս կատարեցաւ սրով 'ի Խորոմսոկ։ Եփրեմիոս 'ի Պաշաւ կատարեցաւ։ Նիկիտաս 'ի Տիբերիա սղոցեցաւ։ Ռոդոս, և Պինոս Աքայիա սպանան։ Յովհան-

(1) Երկու օրի-յերապօլիս։

Digitized by Google

նէս եւ Դէմուդոս 'ի Բալքիաք գաղանաց արկան։ Ստեփաննոս՝ Յերուսաղէմ քարկոծեցաւ։ Ղեւկիէս՝ սպանաւ Յեկեղեցին 'ի Խիսոնեայ Իշխանէն։ Սարտէլոս՝ 'ի Պաղնամոսոս կատարեցաւ։ Լիասոն 'ի Պափիս կատարեցաւ։ Օաքարիա այրեալն որդի քարքկոծեցաւ 'ի Հուրինա. եւ միւս Օաքարիա ընդ նմա։ Օաքէ եւ միւս Օաքէ կատարեցան յանապատն։ Սիմոնի բորոտն Յամթայ(1) կատարեցաւ։ Ուլոմպոս եւ Ստեփանէ եւ Ստուգի 'ի Տապարիա 'ի բանտի մեռան։ Էպենդէ 'ի Պանդրա այրեցաւ 'ի դատաւորէն Դէսկրիտեայ։ Իպէլիս որ Յերախայ կատարեցաւ։ Ղնանիա եւ Սիմոն 'ի Իւզանդիա սրով կատարեցան յեռազրքոսէն։

Ամոքիկ Թիւք պատուեալք եւ յորովայնեկնտրեալք եւ յառաջքան ղբինեալն աշխարհի նկատեալք(2)։ Կազմեցան բաղիոք բանին եւ եղան հիմունք Եկեղեցւոյ. եւ սոքօք ոսկեայ հաւատն որ է Կաթուղիկէ եկեղեցի, որ եւ բնակարան փառացն Տեառն խստուն աստուղոք բոցափայլեալ 'ի փառս երկնաւոր փեսային։

Յամն Տէրեբոյ կոյսերն փայլեր իմաստութեամբ սրանչելին Փիլոն Յղեբանդ.

(1) Երիկոս օրի. 'ի Յրամթոս։ (2) Ոմանք՝ կատարեալք։

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼԵԱՆ
Կարգաթիւ.....

Digitized by Google

րիա։ Սա գրեաց զամենայն պատահմունս Հրէից. գրեաց և մեկնութիւնս արարածոցն. և վասն վաստակոց երկրի. և վասն մոռացն արդարոց։ Օ՛ի յորժամ զարթնու աչ զօթէ և ոչ նզովէ. գրեաց և վասն աւերման լեզուաց. և վասն աշխատելոց 'ի վարդապետութիւն. և վասն զանազան անուանց գրոց. և վասն երկու կտակարանաց. և հինգ ճառս վասն տեսլեան երազոց. և հինգ ճառս վասն ելանելոյ հոգւոյ 'ի մարմնոյ. և չորս՝ վասն օրինացն գրեաց և վասն արանցն որ Այգիպտոս ըստ Բրիստոսի ճգնէին։ Գրեաց եպերանս Գայիոսի որ զանձն իւր Աստուած արար. և այլ բազում ճառ խրատուց։ Խօսեցաւ և վասն Բրիստոսի մարգարէաբար. և յետ խաչին, հաւատաց եկեղեցութեան նորա յարանցն որ Այգիպտոս գուսումն Տեառն ունէին. զոր էին յաշակերտաց անտի առաքելոցն։ Եւ յաւուրս Կղոդեայ կայսեր եղաւ գրեան նորա 'ի դիւանն արքունի։

Եւ 'ի ժամանակս Տեառն մերոյ գտաւ 'ի Հրեայսն եւթն հերձուած որպէս ասէ Յովսեպոս։ Առաջին Գպրացն, որ կոչին Օրինականք. երկրորդ Ղեւտականք որ ունին զաւանդութիւն ծերոցն. երրորդ Փա-

Digitized by Google

բիսեցւոցն՝ որ մկրտին յաշխարհս և հաւատան աստուծոյ և բարեսիրոյ. բայց հաւատան յարութեան. և խոստովանին հոգի և հրեշտակ, և պահեն երկիրս 'ի շաբաթու, վերկուշաբաթի և գինգշաբաթի։ Զորրորդ՝ Սադուկեցիքն որք ոչ խոստովանին հոգի և հրեշտակ և յարութիւն. և առին զանուն և զուսումն 'ի Սադովկայ (1) քահանայէ։ Հինգերորդ՝ Սկրտողքն, որք ասեն թէ ոչ կարէ մարդ ապրիլ եթէ ոչ ամենայն աւուր մկրտի։ Վեցերորդ՝ որք շնչաւոր ինչ ոչ աւանեն և զՍոմսէս և զմարգարէսն ոչ ընդունին։ Այլ՝ այլ գրեանս ունին փոխանակ նոցա։ Եւթներորդ՝ Հրէութիւնն որ զօրութիւն գրոց ոչ իմանան, այլ 'ի գիրն հայցին. և մի Աստուած մի անձն դաւանին, և պահեն պօրէնան։

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս Ադգարու որ առաքեաց յԵրուսաղէմ նկարագիր վասն պատկերին Քրիստոսի։

Յոն և ասան ամին Տիրերեան վայսեր Ադգար արքայ Հայոց և Ասորոց լուաւ զբազմաբաւ Տեառն մերոյ, և երկրպագեաց նք-

(1) Եբրայ. 'ի Դասոփիայ։

մաս. և հաւատաց 'ի նա, և առաքեաց նմա
թագաւորն աղաչանաց 'ի ձեռն Յոհանէ հաւատա-
լոյն իւրոյ, գալ առ նա և բժշկել զնա 'ի ցաւ-
ցըն, որ դիպեալ էր նմա 'ի Պարսս յաստաջ-
քան զեւթն ամ. և թագաւորել ընդ նմա։

Իսկ Տէրն խոստացաւ յետ խաչին իւրոյ
և յարութեանն առաքել նմա բժիշկ յաշա-
կերտաց իւրոց, և արժանի արար զնա թագաւ-
թոյ. և երանեաց նմա։

Յաւ արքայն բարեբախտ առ անձուկս
կարօտութեան իւրոյ առաքեաց զՅովհան-
նէս նկարիչ բերել զպատկեր Նորա, փոխա-
նակ անձին Նորա։ Յաւ Նորա եկեալ և տե-
սեալ զՅիսուս, Ջանայր սկզբել (1) զգծել նո-
ցա 'ի դաստառակն Աբգարու, և ոչ կարէր
զի փոխէր նա փառաց 'ի փառս, և ցնծացեր
'ի հաւատս հեթանոսաց։ Ապան որոյ խընդ-
լեալ առ ինքն զկտաւն աղբիւրն գթութեան
դնէր երեսաց իւրոց, և նկարեալ լինէր տիպ
Նորա 'ի հանդերձիցն (2) և տայր ցնկարիչն։

Յաւ էր այս նախ քան զԲրիստոսի չարչարանն եւթն աւուրբք։ Յաւ պատկերն
բերաւ և տուաւ թագաւորին և քաղաքն
Նշանք լինէին 'ի նմանէ (3) մինչեւ եկն թագ-

(1) Երեք օրի. նկարել։
(2) Երեք օրի. 'ի դաստառ-
ռանին։
(3) Մի օրի. յանէն. եւ
բժշկեաց զկնա գոգութիւն
թագաւորին։

գէոս Պռաքեան։ Եւ 'ի նոյն ամի կամաւոր մահն Տեառն խաչիւ, թաղումն, և յարութիւն, և կործանումն դժոխոց, և ազատութիւնն տարտածոց, և յետ քառասուն աւուր համբառնալն առ Հայր։

Զրէ և զայս Յովսեպոս և ասէ այսպէս յառաջ քան մեր երեւեցաւ այր մի որում Յիսուսն ասէին, և 'ի ձեռն քազաւմ նշանացն զոր առնէր, յայտնի երեւէր թէ նա իցէ Քրիստոսն. և վասն նախանձաւ մատնեցին զնա անօրէնքն Պիղատոսի դատաւորին, և սպանին զնա խաչիւ. և յետ երից աւուրց տեսին զնա կենդանի. և ոչ մեկնեցան 'ի սիրոյ նորա հաւատացեալքն 'ի նա։ Եւ մինչեւ ցայսօր ասէ հաւատքն նորա. և ստուգեցաւ թէ նա ինքն է Քրիստոսն որ դի Աստուծոյ կենդանւոյ։

Եւ ասէ Յովսեպոս թէ 'ի նոյն ամի 'ի ոսնի Պենտակոստին Պիղատոս եմոյծ զպատկերն կայսեր 'ի տաճարն. և յայնժամ ձայն լսելի լինէր թէ գնամք, ահա գնամք ասի, և ոչ եւս այլ դարձցուք։ Յիշէ և զայս Փիլոն յերկրորդ գիրսն իւր։

Իսկ յաղագս անկեալ պատմուճանին Տեառն. ասէ Սուրբն Եփրեմ. թէ արկին զնուագքն վիճակն վասն չպատառելոյ, և եկ վիճակն զինուորի մի՝ որ ընդ ձեռամբ Ղուն-

կիանասի. և առ զնա Լուսնկիանոս հարիւրապետն, և եբեր զնա յաշխարհն Գադարացւոց 'ի քաղաքն իւր Սոքան (1). և պատուի անդ մինչեւ ցայսօր։ Եւ միւս հարիւրապետն զառնկեցի եբեր զիւր մասն հանդերձին 'ի քաղաքն իւր Փուդ 'ի մայրաքաղաքն Եդեսացւոց, և արկեալ 'ի պուտնարդ տապակեղէն կախեալ կայ Յիկեղեցին անհպելի յամենեցունց. հուսկ եկեալ բերան ապակւոյն և տեսանի յամենեցունց։ Եւ զայս պատմուճան անկար հիւսեաց քոյրն Աբգարու. և առաքեաց Տեառն մերոյ 'ի ձեռն Ինան սուրհանդակի։

Իսկ ղկնի փրկչէտ չարչարանաց Տեառն գնաց Աբգիպաս ամբաստանել զՀերովդէ հօրեղբօրէն իւրմէ. և առաքեաց կայսրն կալաւ զՀերովդէս կնաւն Հերովդիադա։ Եւ եղաւ 'ի բանտի 'ի Պառանիա քաղաքի. և յետ աւուրց սպանան երկոքին։

Իսկ Աբգար ապքայ երկիցս գրեաց առ Տիբերիոս վասն Քրիստոսի աստուածութեանն և տրուանջ զՊիղատոսէ։ Եւ առաքեաց Տիբերիոս կոչեաց զՊիղատոս. և զամենայն ինչ ստուգեալ 'ի նմանէ, սպան զնա։ Գրեաց Աբգար. և 'ի Բաբելոնն առ Ներսեհ ապ-

(1) Երկոս. օրի. Մաքսոն։

քաց. Նոյնպէս և սա Պարսից թագաւորն հաստատել ի Բրիստոսի աստուածութիւնն։ Եւ այս ի բարի կամացն Աստուծոյ եղեալ զի մի կրեսցէ աւետարանն հակառակութիւն ի նեռութեանն խրատմ, մինչեւ կատարելապէս հաստատեսցի. որպէս և եղեւ ի ժամանակս այսր թագաւորաց ընդարձակութիւն և խաղաղութիւն քարոզողաց բանին. և յանկարծակի թռեաւ աւետարանն ընդ չորս կողմանս աշխարհի ի ձեռն աստուածասէր և նախընծայ այսր թագաւորի, որ յառաջեաց ձեռն ետ ի Բրիստոս. ըստ Դաւթայ մարգարէի գնալով ընդ սպարտս երկրի սրբոց Առաքելոցն՝ հրամանաւ Հոգւոյն որպէս և գրեցաքդ վերագոյն։

Իսկ Տիբերիոս կեցեալ ամս եւթանասուն և ութ, և թագաւորեալ ամս քսան երեք, մեռաւ։ Եւ թագաւորեաց Գայիոս ամս երիս և ամիսս չորս. և եդիս զ՝Գրիպաս կապեալ ի Հռովմ ի Տիբերէ. և հանեալ զնա առաքեաց թագաւոր Հրէից։ Եւ զՓիլիքոս դատաւոր Եգիպտացւոցն, ետ նմա իշխանութիւն հոգալ և զՀրեայսն իբրեւ ամենայն։ Վասն որոյ նեղէր զնոսա խստագոյն։ Եղեւ. և զսուրբ տեղիս նոցա պղծէր զոհիւք պղծովք զամս եւթն. վասն որոյ առաքեցին

զդեսպանս առ Դարիոս աղաչել զնա, որոց մի էր և Փիլոն փիլիսոփայ, և ոչ լուաւ նոցա այլ և տրամեցաւ յոյժ. և առաքեաց զի Պարսանիա իշխանն Աստրոց դնել զպատկերն նոր յամենայն մեհեանս և զի տաճարն Երուսաղեմայ պաշտել իբրեւ առաւաւած, ըստ տրամ և ասէն իսկ. և կատարեցաւ առաջեալն զի Դանիէլ, պղծութիւն աւերածոյն։

Յայսմ ժամանակի Սիմոն և Անանդրոս և Կերինթոս երեւեցան։

Իսկ Դարիոս ապստամբեաց զինեալքիւրոյ միոջէ իբրեւ զամսոյ մի չար և մահկանացու. և թագաւորեաց Կլոդիոս ամս չորեքտասան։

Իսկ Աղրիպաս կեցեալ չորրորդ ապետ ամս երիս. և թագաւորեաց ամս ութ և յոյժ չար կամաք ընկալեալ զպատիժն Աստուծոյ յամբոխէն եհար զնա հրեշտակ Տեառն և մեռաւ։

Յայնմ ժամանակի զի զատկի տօնին ամբոխեալ Երուսաղեմի զի տաճարին ապանին անձինս երեսուն հազար։ Եւ կացոյց Կլոդիոս թագաւոր Երուսաղեմի զԱղրիպ (1) որդի Աղրիպայ և զՓելիքս առաքեաց դատաւոր Դալիլեա

(1) Երկու օրի. զԱղրիպ- պաս։

ցուց և Յանդրոնիկոս։ Եւ Կղեմենտոս վախ-
ճանեալ առ զԹագաւորութիւնն Լիրոն որ-
դի Նորոս ուստն Երիքսոսան։ Եւ առաքեաց
զՓեստոս դատաւոր և զՀան զՓելիքս, որոյ
առաջի եկաց Պօղոս. և դարձեալ հանաւ
Փեստոս և եկաց Ղուտերի Նորոս Ֆամբիոս.
և զոսա եւս զՀան Լիրոն և եղ զԱնդրոս։
Յորոյ առուրս ապստամբեցին Հրեայք ի
կայսերէ։ Ի սոյն ժամանակս հուր էջ յերու-
կնից և այրեաց շինուածս բազումս մեծ ասէ
բոլոր մարդկան ընդ Նոսա։

Եւ յետ այսորիկ խստապրտեալ Ներոնի
սպան զընտանիս իւր. և յերիքսոսան ասի
արքայութեանն իւրոյ սպան զԱքիպաս.
և յապրոցց հալածանս եկեղեցւոյ. և առա-
քեաց զԱշրուսաղէմ զԵսպասիանոս (1) և զՏի-
տոս որդի Նորոս վասն ապստամբութեանն
Հրէից։

Իսկ Յովսեփոս զօրավար Հրէից և խնա-
ստասէր, ամրացեալ կայր ի Յոտգբուղայ (2)
Գաղիլէ. և գնացեալ Եսպասիանոս և առ զքա-
ղաքն, եւ սկսաւ կռտրել զնա. եւ չոգաւ
Յովսեփոս ընդ առաջ նորա և ասէ. աւե-
տիս քեզ Եսպասիանէ, զի ի մօտոյ թագաւ-

(1) Երկու օրի Վեսպեսիա. (2) Երկու օրի. Ի Յոտ-
գբուղայ։

ւորեցեալ. քանզի վճարեաց Լերան զկեանս իւր. զոգիս և եղեւն։ Քանզի Լերան ա-տեցեալ յամենեցունց սպան զանձն իւր։

Եւ թագաւորեաց Գապափոս ամիսս եւ-թիւն և սպանաւ 'ի մէջ Հռովմայ. և թա-գաւորեաց Ռուբիտալոս 'ի Գերմանիա։ Եւ Ա-թեմոն 'ի Հռովմ. որ և յետ երից ամաց սպանաւ։ Եւ թագաւորեաց Ուեդալիոս (1) ամիսս ութ. և լեալ ամբոխ 'ի վերայ նորա սպանին զնա։

Իսկ Վեսպիանոս առեալ զՅովսեպոս սպա-ռաւոյ ընդ ինքեան պահէր և նստէր շուրջ զԵրուսաղեմաւ։

Եւ 'ի հասանելս յամ համբառաւ առ զօրն որ ընդ Վեսպիանոս, յանկարծ քարոզեցին զնա թագաւոր և Երուսաղեմաւ։ Եւ նա զբ-ուարձացեալ յանձն եթող զորդին 'ի վերայ Երուսաղեմի, և ինքն չոգաւ յԵգիպտոս և պատր զնա հնազանդս։ Եւ զայնր կոչմամբ չոգաւ 'ի Հռովմ. և թագաւորեաց 'ի վե-րայ նորա սմա ինն. և ամիսս տասն։ Իսկ Տիտոս առ զԵրուսաղէմ 'ի Ի. ամսի ութն. և կորոյս Հրէայս բիւրս հարիւր քսան եւ վեց. և քակեցաւ պարիսպն և այրեցաւ հրով. քան զվերջին աւերն յահկի ամսեանն։

(1) Մի օրի. Գիլդաքս.

Digitized by Google

Յուսուն Երուսաղեմի և աւերն լինին Յ Դամայ ամք հինգ հազար հինգ հարիւր(1) երեսուն և եւթն. և ի յարութենէ Տէրառն մերոյ ամք քառասուն. և յառաջին շինուածէ տաճարին մինչ յետին յաւերն ամք հազար հարիւր երեք։

Յերկրորդ ամի Վեսպիանոս առաւ Երուսաղէմ։ Յե ժողովեալքն անտի գաղուդ երեք հարիւր բիւր էին։ Յե յայնմ զաւակին ածին (2) ի զենումն քսան և հինգ հազար գառինս. և տասն այր ի մի գառն էին աւրբք և անսուրբք. ոչ կարէին ուտել, և որք կերանն երկերիւր տասն բիւրք էին. վեց բիւր արով մեռան. հարիւր տասն բիւր ասվով. տասն բիւր գերի վարեցան. ի տասն եւթն ամէն ի վեր Յ Եգիպտոս տարան յաշխատագործութիւն. և ի տասն եւթանէն ի վայր բաժանեցան զօրացն։ Յե այսպէս խնդրեցաւ արիւն որդւոյն Աստուծոյ։

Յետ քառասուն ամի տուաւ նոցա ժամանակ ապաշխարութեան ի մարդասիրէն Աստուծոյ։ Յե տարաւ Տիտոս ի Հռոմ զիւնան զերկու գնշանաւորս և դուռն մի զտաճարին։ Յե աստ բարձաւ թագաւոր

(1) Երկու օրի. հարիւր։ (2) Մի օրի. ածան։

բուԹիւնն ՚ի Հրէաստանէ և Յեգիպտոսէ և Յասիոյ և Գերմանիկոյ. և ոչիրեցին միայն Հռովմայեցիքն։

Յետ Վեսպասիանոսայ Թագաւորեաց Տիտոս որդի նորա. և յերկրորդ ամին Սատուածքարոզեցաւ և հաւատաց ամբոխն, և եհար զնոս հրեշտակ սուսերն և մեռաւ։ Յետ Թագաւորեաց Դոմետիանոս (1) եղբայր նորա ամս տասն և եւԹն և ամիս հինգ. սա հալածեաց ՚ի Հռովմէ զամենայն աստուածպաշտս և զկախարդս և աւերել ետ զայգեստանն։ Յետ յաւուրս սորա աՀեաց Քրիստոս նէուԹիւն. վասն զի եհարց Պատրուբաս (2) իմաստասէր զվարդապետն իւր զՍոսինոս և ասէ. զինչ է ուսումն այս ՔրիստոնէուԹեանն որ հաւատան առն խաչելոյ այսքան բազմուԹիւն. այլ և զարմանամ զի և Թէոդորոս իմաստասէրն ՅԹենայ, և Փիլիպոս Նոս Յղեբանդրացի և Պարմենոս ՚ի ԽոմԹուհաւատացին ՚ի նա Թողեալ զվայելչուԹիւն աշխարհի և զուսումն իւրեանց։ Յետ պատասխանի վարդապետն և ասէ մի զարմանար ընդ այդ, զի կարծեմ ես, Թէ նախ և Յատուածք հնազանդին. և նա ասէ. զինարդ.

(1) Երկու օրի. Դեմետրիանոս։ (2) Երկու օրի. Պատրոբոս։

և ասէ ցնա քանզի անմեղութիւն և խոնարհութիւն և անընչութիւն է քարոզութիւն նորա, և է դա վերագոյն ամենայն քարոզ էաց։

Իսկ Գոմեսիանոս արգել առնել զօրականս ընդդիմինին։ Յաւուրս սորա երկուսամեայ անուանք փոխեցան. Սեպտեմբեր՝ Գերմանոս. և Հոկտեմբեր՝ Պարթենիկոս։ Եւ հրաման եառ Գոմեսիանոս զաղդն Գաւթի ընջել ղի մի մնասցէ ժառանգ թագաւորութեանն Հրէից. և զբազումս հալածեաց ի Փրիստոնէից ընդ որս և զՅովհաննէս աւետարանիչն։

Օգոստոս առաւելագոյն Անտոնինոս տիրանայի ի ձեռն արուեստին իւրոյ կապմեաց տրամս բազումս դիւական հնարիւք և ասաց, սաւանդ լինիցի զի որդին Մարիամու կանխեաց քան զիս. զի ես ուղղի հնազանդել զաշխարհս։

Իսկ Գոմեսիանոս վասն խստութեան իւրոյ ապանաւ և թագաւորեաց Ներուան ամ մի. և աստուած քարոզեցաւ ի Սինկղիտոսէն, և հիւանդացեալ մեռաւ չարաչէս։

Եւ թագաւորեաց Տրայիանոս ամս տասն և ինն, սա հալածեաց զՇիմէոնեցի սուրբ և ի սմանէ պատակեցան Շմաւոն Եղեսպատացոյ

Երուսաղէմի Եպիսկոպոս՝ և Իգնատիոս Անտիոքու։ Բայց զՅովհաննէս յաքսորիցն Վերաս դարձոյց և կէսք զսա ասեն։ Եւ Յուստոս տիբերացի Հրէից պատմագիր ասաս էր։ Իսկ Իրենոս (1) Ամենգղեստոս հրամանաւ Թագաւորին զաղուամն կոտորեաց ի Բրիտանէից և ապա զողջացաւ և գրեաց առ Թագաւորն և ասէ. ամենայն իրք բարի է Բրիտանէից. բայց զի կռոց ոչ զահեն և ընդառաւօտս երկրպագեն Բրիտոսի։ Եւ նա գրեաց և ասէ, Ջնջեա զդուռս և մի խնայեր։

Յաւուրս յայսմիկ ոպատամբեցին Հրէայքն Յոգիպտոս և եղին իւրեանց Թագաւոր Լուքասն (2) անուն, և եկին Յերուսաղէմ։ Եւ առաքեաց Տրայիանոս եւ կոտորեաց զնոսա, և մնայ ինքն իշխան ի վերայ Հրէից։

Յայսմ ժամանակի Հրեայքն որ ի Կիպրոս կռուեցան ի վերայ Սաղամինայ քաղաքին. և կոտորեցին զՅոյնան որ ի նմա։ Նոյնպէս և որք ի Լիբիայ և ի Կիւռենական աշխարհն էին ամբարձին զգլուխս իւրեանց և կորեան ինքեանք։

Յայսու ժամանակաւք էր Մեկունդոս քա-

(1) Մի օրի. Լիբիանոս։ (2) Մի օրի. Լուքասոս։
Մի օրի. Լիբինոս։ Մի օրի. Լուքասոս։

Digitized by Google

առակացն։ Եւ ի Հռոմ ոսկեղէն առուն այ-
տեցաւ հրով։ Եւ ի Պաղատիայ երեք քա-
ղաք շարժմամբ կործեաւ (1)։

Յետ Տրայիանոս Թագաւորեաց Ադ-
րիանոս ամս քսան և մի։ Ի չորրորդ ամի սո-
րա Թագաւորքն որ յԱրաբիայ՝ բարձան. և
ծնաց ի մեծն Հայք Թագաւոր։

Ադրիանոս ինքնակալ և հայր աշխարհի
անուանեցաւ զի զմուրհակս պարտուց այ-
րել ետ։ Ի չորեքտասան երրորդ ամին սորա
ապստամբեցին Հրեայքն խաբեալ յառնէ
մոլէ որպ ասեն Աստղ Եւ առաքեաց Ադ-
րիանոս կոտորեաց զնոսա և հալածեաց զա-
մենայն Հրեայսն որ յԵրուսաղէմ, և քան-
դել հրամայեաց զքաղաքն և առ ընթեր նո-
րա հրամայեաց շինել քաղաք. և անուա-
նեաց Իլիա որ է աթենական. և բնակեցոյց ի
նմա Պրիստոնեայս և հեթանոսս. և զՀրէից
ականջն կտրել հրամայեաց, զի նշանաւոր
լիցին. եւ յԵրուսաղէմ հայել մի իշխեսցեն
աչօք։

Ի քառասներորդ առաջներորդ ամի սո-
րա եղեւ առաջին ժողովն Նիկիոյ քսան-
սուն երեք Եպիսկոպոսաց, վասն Սաբելի
Լիբացւոյ աղանդին. և նզովեցին զնա որ

(1) Երկու Հրի. կործան. Ներ։

մի անձն ասէր զՔրիստոսդ-Թիւնն և զԱ՝ ստղի-դիանոս որ ասէր զմարմինն Քրիստոսի յերկ-նից բերեալ։ Յաւուրս սորա էր Ակիւղաս թարգմանիչ և աստեղագէտ։

Օրինի Ընդրիանոսի թագաւորեաց Տիտոս Ընտոնիոս, որ կոչեցաւ Սեբաստոս և սրդար. և որդիք իւր ընդ նմա թագաւորեցին ամս քսան երկու։ Իսկ Ընտոն աշխարհի հայր թարգմանի։

Ի սորա ժամանակս Յաւստինոս Ափիու-պօլսացի՝ գնաց 'ի Հռոմ և ետ թուղթ ա-ղաչանաց թագաւորին. և դադարեաց հա-լածումն Քրիստոնէից։ Յաւուրս սորա ե-ռեւեցան Վերտոն որ է Սարկոն. և Սարկոս եկեալ 'ի Հռոմէ ասացին ոչ գոլ զՅիսուս Քրիստոս որ 'ի մարգարէիցն քարոզեցաւ որ-դի Աստուծոյ, և ոչ գոլ յարութիւն, և 'ի վերայ մկրտելոցն ասէին յանուն հօր երե-ւելոյն, և յանուն մօրն ճշմարտի, և յանուն որդւոյն որ էջ 'ի վերայ Աստուծոյ, և այլ անուանս բաշաղէին։

Իսկ 'ի թուին Աստոց չորս հարիւր եւ թանասուն և հինգ, թագաւորեաց Սար-կոս Աւրեղիոս ընդ որդիսն Ընտոնի և խ-ախոսի ամս տասն և ինն. յառաջին ամին սո-րա Վաղքէշ թագաւորեալ Պարսից եկն.

յաշխարհն Հռովմայ. և բազում գաւառս առեալ։ Եկին ընդդէմ նորա սրդիքն Լեռ-
ոնեայ և հալածեցին զնա. և հնազանդեցին զՊարսս և զՊարթեւս. Ի Իւսիոս կայսր
անուանեցաւ։

Իսկ եղեւ այլ պատերազմ ընդ Հռովմա-
յեցիսն և ընդ Գերմանացիս. և ընդ Կա-
ղուտոց և ընդ Սամասատ (1) և ընդ Գալլիա-
ցիս։ Իսկ դարձեալ զօրացեալ Իւսիոս
յաղթեաց նոցա և կոչեցաւ Իսուկարտոր։

Իսկ զկնի մահուանն Ներոնի էառ ընկեր
Թագաւորութեան իւրոյ զՎիսպասիանոս որդի
եղբօր իւրոյ. զոր նեղէին յոյժ ջրհակայքն
զնոսա։ Իսկ Թագաւորեաց Վիսպասիանոս ամս
երեքտասան. և հեղձուցին զնա Ի տան ձի-
ոց։ Իսկ յետ նորա Թագաւորեաց Պերտի-
նաքս ամիս վեց և սպանաւ։

Իսկ Թագաւորեաց Սուրինոս ամս տասն
և ութ. և յաստաջին ամին նորա եղեւ պա-
տերազմ մեծ ընդ Հրեայս և ընդ Սամարա-
ցիս։ Իսկ Յինեերորդ ամի յարքայ հալածանս
եկեղեցւոյ, և յոլովք վկայեցին։

Իսկ ելաղդ մի յարեւմտից հիւսիսոյ և
զնաց ընդդէմ նորա Սուրինոս և սպանաւ։
Իսկ Թագաւորեաց Ներոն որդի նորա ամս

(1) Ըստ Սամասատ. ասի Սար-մատ։

եւ թն։ Սա դարձոյց զաքսորեալս 'ի հարկ իւրմէ, և 'ի նոցանէ էր Աղեքսանդրոս եպիսկոպոսն Երուսաղէմի։ Եւ սպանաւ Աշտոն 'ի մէջ Ուռհայու և Խառանու։ Եւ թագաւորեաց Մակար ամ մի և սպանաւ։ Եւ թագաւորեաց Անտոնինոս ամս չորս։ Յաւուրս սորա չինեցաւ Ամիդոպոլիս յերկրին Փղշտացւոց որ է Իմմաւուս։

Եւ զկնի նորա թագաւորեաց Աղեքսանդրը Մամեայ որդի կնոջ հաւատացելոյ և երկիւղածի, և եղեւ յոլով օգուտ քրիստոնէից։

Ի թուին Յունոց հինգ հարիւր քառասուն երկու թագաւորեաց Պարսից Աղտաշէր որդի Փափակայ (1) սկիզբն վերջին թագաւորութեանն Պարսից որ տեւեցին ամս չորս հարիւր տասն և ութ, որ և Սասանեանք կոչին թագաւորք քսան և եւթն, մինչեւ ցթագաւորութիւնն Արաբացւոց Մահմետիս։

Յետ Աղեքսանդրի թագաւորեաց Փիլիպպոս ամս եւթն և խաղաղացան Քրիստոնեայք։ Յառաջին ամին սորա թագաւորեաց Պարսից Շապուհ որդի Աղտաշէրի ամս երեսուն և մի. և հազար ամ լցաւ շի-

(1) Մի օրի։ Փակինայ։

Հռոմեանն Հռովմայ։ Յետ այսորիկ Դոքսիոս սպան զՓիլիպպոս որդւովն, և թագաւորեաց ամ մի. և սպանաւ 'ի Բուրիդոս. և թագաւորեցին Բուրոս և Բուրինոս և Դաղիոս և Բալրն ամ մի։ Յետ զկնի նոցա թագաւորեցին Ուլիրանոս և Դաղերոս ամս տասն և եւթն. և յարուցին հալածանս Յեկեղեցւոյ։

Իսկ Հ ապտ ր թագաւորն Պարսից ապստամբեաց զՍորիս և զՄիլիկիա և զԿապադովկիա գերութեամբ. և Դոդացիք անցեալ ընդ Դանիս գետ. գերեցին և նոքա զաշխարհն Հռովմայ. և ապա դարձեաց Դաղերոս 'ի հալածելոյ զԲրիստոնեայս. և աճեաց Եկեղեցի 'ի նշանացն որ գործիւր 'ի ձեռն սքանչելի արանցն։

Յետ սորա թագաւորեաց Դալատիս ամ մի. և զկնի սորա Ազուրիս ամս վեց. սա ած Հռովմայ շրջապատ պարիսպ մի այլ. և ապա մարտեաւ ընդ հաւատս մերս և եղեւ չանթակէզ 'ի Տեառնէ։

Յետ թագաւորեաց Տատիանոս ամս վեց. և սպանաւ 'ի Պուտոս։ Յետ թագաւորեաց Պաղերինոս և յետ սակաւուց սպանաւ 'ի Տարսոն։ Իսկ զկնի Հ ապտ ր թագաւորեաց Պարսից Ամիզդ։ Ի թուին Աստուծոյ հինգ

Digitized by Google

հարիւր ինն տուն երեք ծնաւ Կոստանդիանոս։

Եւ զկնի Պուղերինոսի Թագաւորեաց Պրոբաս ամս եւթն. և 'ի նոյն ժամանակս Թագաւորեաց Պարսից Վահրարան ամս եւրիս։ Եւ Յետ նորա Վահրայ որդի իւր աթոռս տան և եւթն։ Ի սորա աւուրս Մինկղիտոսն ամբաստանեալ զՆոտաք ապստամբեաց. և սպանին զնա զօրք Թագաւորին։

Իսկ յետ Պրոբայ Թագաւորեաց Կարոս, և որդիք իւր Կարին և Կարինոս և Նումերոս ամս երկու. Կարոս մեռաւ 'ի Մինջագետոս. և Կարինոս 'ի պատերազմի 'ի Գոմերացւոց սպանաւ, և Նումերոս սպանաւ Ամփրիկէ. և Թագաւորեաց Մինկղիտոսն. և աստի սկըսանի Թուականն Դիոկղետիանոսի, որ է Ն-սորուց հինգ հարիւր ինն տուն և չորս. զի ետ Մինկղիտոսն զԹագաւորութիւնն Դիոկղետիանոսի. և 'ի սորա կամայ Թագաւորեցին Մաքսիմիանոս և Մաքսինդէս որդի իւր, որոց փեսայացաւ Դիոկղետիանոս։

Եւ 'ի սոյն ժամանակս Թագաւորեաց 'ի Գալլիա և 'ի Իսպանիայ Կոստանդիանոս։ Եւ Մաքսինդէս ունէր զՀռոմ. և Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս ունէին զկողմանս արեւելից, և կային միաբանութեամբ. յորում ժամանակի ապստամբեաց Եգիպ-

Digitized by Google

տոս. և չոգաւ զոր 'ի հրամանէ սոցա, և հնազանդեցան։ Դարձեալ 'ի մետասան ամին Դիոկղետիանու թագաւորեաց Պարսից Խերսեհ ամս եւթն. և յետ նորա Որմիզդ որդի իւր ամս հինգ։ Եւ 'ի տասն և ինն ամին Դիոկղետիանու զօրացաւ հալածումն Քրիստոնէից և քակեցան Եկեղեցիք։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս թէ սուլ սատանիկ եղեւ 'ի Դիոկղետիանոսի ժամանակին։

Եւ եղեւ սուլ սատանիկ մինչեւ եղեւ մեթ մի ցորեան երկու հազար հինգ հարիւր դահեկան արծաթի։

Եւ եհար Տէր խոշիւ զսիրտն Դիոկղետիանու, և զղջացաւ և յանձնեաց զմտան իւր Մաքսիմիանու. և նա եւս չարագոյն եղեւ քան զնա յամբարշտութիւնն. և անկան երկոքեան թագաւորքն յախտս դըժնեայս, և դադարեցուցին զհալածումն. և խնդրեցին աղօթս 'ի Քրիստոնէից, և ոչ կացին մնացին 'ի զղջմանն, որպէս թէ Աստուածքն նոցա ոչ կամին. վասն որոյ և տան-

ՀԵՑաւ աշխարհ տարաժամ մահուամբ. զի զտան այր դնէին 'ի մի գերեզման։ Այլ և երաշտով պատուհասեալ լինէր և ազգի ազգի ցաւովք. և Թագաւորքն այնոքիկ վճարեցին զվարս (1) իւրեանց։ Իսկ Կոստանդիանոս Թագաւորն Պալլոնի ունէր երկսա կանայս, զՀեղինէ և զԷոդորիկ (2) դուստր Մաքսիմիանոսի։ Սա յուԹերորդ ամի Թագաւորութեան իւրոյ էառ իւր հաղորդս և Թագաւորակից զԿոստանդիանոս որդին Հեղինեայ. և յետ երից ամաց վճարեցաւ. և տիրեաց որդին միահեծան։

Այլ Իգնատիոս մեղրեենացին ասէ Թէ 'ի Թագաւորելն Կոստանդիանոսի չորս Թագաւորք ունէին զերկիր Մեւերոս, Մաքսիմոս, Մաքսինդէս և Մաքսիմիանոս միաբան 'ի հալածանս Իկեղեցւոյ։ Իսկ 'ի մեռանիլն Մեւերեայ իշխանք նորա եռուն զԹագաւորութիւնն Կոստանդիանու։ Իսկ զ՝իկիանէս փեսայ նորա Կեսար կարդացին։ Իսկ յետ եւԹն ամի Թագաւորութեան իւրոյ Կոստանդիանոս կալաւ իւր հաղորդ զ՝իկիանէս։ Յայսմ ժամանակի Թագաւորէ Պարսից Շապուհ ամս եւԹանասուն։

Իսկ Կոստանդիանոս գնաց պատերազմել

(1) Մի օրի. զկեանս։ (2) Երկաւ օրի. Դեոդորա

ընդ Անաբինդեայ 'ի Հռոմմ. և մինչդեռ գնայր եղեւ ազդումն ինչ 'ի միտս նորա և ասաց ։ Այս գիտեմ զի կուռքդ չօգնեցին ինչ առաջին Թագաւորացն. և ասաց եթէ օգնէ ինձ Աստուածն Քրիստոնէից, նման երդիպագանեմ ես ։

Եւ 'ի հասարակ աւուրն տեսանէր առաջի իւր նկարեալ յօդն նշան խաչի (1) և գիր 'ի նմա ձեւացեալ այսու, յաղթեա 'ի տեսիլ ամենայն զօրացն. և անկաւ ահ 'ի վերայ նոցա ։ Եւ յայնմ գիշերի երեւեալ նմա Քրիստոս ասէ. արա զօրինակ երեւելոյն քեզ (2) և յաղթեսցես. և զարթուցեալ առաւօտուն արար այնպէս, և հրամայեաց առաջի իւր տանել. և այն եղեւ. 'ի կրօնս խաչ տանել առաջի զօրաց ըստ Քրիստոսի ։

Եւ 'ի խմբել պատերազմին ել հողմ բրտնութեան 'ի նշանէ խաչին, և ելից զամբարտաւանն 'ի Տիբերոս գետ. և տիրեաց Կոստանդիանոս Հռոմայ. և հաւատացին 'ի Տէր նաեւ կին իւր Դիկղեդա դուստր Դիոկղետիանոսի, և Իկիանէս փեսայ իւր ։

Բայց Իկիանէս ոչ պահեաց զհաւատսն և ապան ելնա Կոստանդիանոս ։ Զմանք ասեն

(1) Մի օրի. յաւելու առ. տեղք ։

(2) Մի օրի. ընդ քեզ և ընդ Ժողովրդեան զօրաց ։

Կոստանդիանոս խաբեալ 'ի կնոջէն ուրացաւ, և հալածէր զԵկեղեցի Աստուծոյ մինչև բոլորոտեցաւ 'ի Տեառնէ. և 'ի ձեռն Սեղբեստրոսի մկրտեալ ողջացաւ։ Այլ Յովհաննէս ասիացին զկիրակս զայս հօր Նորա ասէ Կոստանդեայ կրել. և հաւատացեալ 'ի Տէր և հարսն առեալ զԴիկղիդա, որ ոչ ետ գնալ որդւոյն 'ի ճանապարհ հօր իւրոյ. մինչեւ երեւմամբ երկնաւոր լուսոյ երկոքին հաւատացին 'ի Քրիստոս արտի մեռոք. վասն որոյ և սպառեցան ամենայն թշնամիք Եկեղեցւոյ. և եղեւ ինքնակալ Կոստանդիանոս։

Բայց յիշեսցուք ատտանօր զբանս իմաստնոյն Թէոդորեայ որ ասէր՝ թէ նկարիչք ըզտախտակ և զարմ զարդարեն 'ի վայելս աչաց. իսկ վիպասանք՝ զպատմութիւնս բանիւ զարդարեն նշանաւոր իրօք։

Արդ զայսու ժամանակաւ երեւէր արեգական արեւելեան աքանչելին Գրիգորիոս Պարթեւն. որ և մեծամեծ հրաշիւք և նոր բաղոյն նշանաւք լուսաւորէր զքրիստոնէական զայս, զվերնական Թադէի և Բարդողիմեայ, նմանեալ նոցա ամենեւին. նա մկրտեաց զՏրդատէս թագաւոր զպղտային իւր. և առեալ զինա գնայր 'ի խնդակցութիւն Կոս-

առանդիանոսի բազում պանչելագործու-
թեամբ 'ի ճանապարհին։

Եւ ելանէր թագաւորն Կոստանդիանոս
ընդ առաջ նոցա, և առնէր նաւակատիս
գալստեան նոցա ամենայն աշխարհաւ-թեամբ
իւրով։

Եւ խորհեալ 'ի միասին զկարգս Եկեղե-
ցւոյ, և զգուստ աշխարհի. և ուխտեալ մի-
մեանց անջրելի դաշամբք դառնային յաշ-
խարհն իւրեանց երեւելի փառաւք և պար-
գեւաւք (1)։

Իսկ Կոստանդիանոս խաղաց գնաց 'ի Միւ-
զանդիոն և ընդարձակեաց զնա. և յաւել
'ի նա չորս միլ, և զարդարեաց զնա զարդուք
յերրորդ ամի թագաւորութեան իւրոյ, և
յանուն իւր կոչեաց։ Շինեաց 'ի նմա մեծ
եկեղեցի յանուն Յուրինեայ. և միւս եւս
յանուն Աղաքելոցն. և անդ փոխեաց զար-
քունիս Հռովմայ. և եդ զամենայն հոգս
իւր ընդ Աստուծով. և եւ հրաման ընդ ա-
մենայն երկիր, քակել զմեհեանս և շինել
Եկեղեցիս և հրամայեաց ոչ զինուորիլ և ե-
լանել 'ի զօրս, որ ոչ իցէ ծնունդ աւազանին։

(1) Մի օրի. մեծաւ շքեր. զութեամբ։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս Արիոսի հերձուածողին։

ՅԱՌՆՍ ժամանակի երեւեցաւ Արիոս ե-
ռեց Աղեքսանդրացի ի մէջ եւթն բարեկա-
մայ իւրոց. զորս եպիսս սատանայ զէն չա-
ղութեան իւրոյ. և չանայր նոքաք կրկնել
զերկրպագութիւն արարածոյս։ Բանզի եւ
նոցա ասել զԿոդին Աստուծոյ արարածոց
անդրանիկ։ Այս գրեաց Թուղթ առ Եւսեբի
Նիկոմիդացի. և եցոյց ընդ ինքեան զվեց
բարեկամս իւր, և արար զնա ընդ իւր. և
են համախոհք նորա այսոքիկ. Մեբէոս՝ Կե-
ռարու. Թուտոս՝ Լաւոդիկոյ. Փուլիանէ՝
Աշոյ եպիսկոպոսք. Ընթանաս՝ Ինաւարզայ.
Գրիգոր՝ Տարսթայ. Ադիոս Ղեւդիոյ կամ
Լիդիոյ։

Իսկ յորժամ յայտնեցաւ չարութիւն նո-
րա նզովեաց զնա Պետրոս Աղեքսանդրու Ե-
պիսկոպոսն։

Իսկ նա յետ վկայութեան հայրապետին
արար իւր խորհրդակիցս արս երեւելիս ըզ-
Մարիս Բաղկեդոնի Եպիսկոպոսն, զՄեբի
Նիկոմիդայ. զՄելիտոս Եպիսկոպոս Եգիպ-
տացի, որ հալածման ժամանակին զոհեալ

էր, և լուծեալ յաստիճանէն, և զԱյիթալէս և զայլս բազումս, և արար ընդ ինքեան։ Յորում ժամանակի եղեւ շարժ սաստիկ Այգիպտոս. և բազում քաղաքս և տաւանս ապականեաց զշարժումն ազանդին Աբրոսի նշանակելով։

Եղեւ այլ ինչ պատահումն (1) Այկեղեցի վասն զատկի։ Քանզի կողմանքն արեւելից ընդ Հրեայսն առնէին 'ի չորեքտասան լուսնին. և արեւմտից կողմն միշտ 'ի կիւրակէի։

Իսկ սուրբն Աղեքսանդրոս փոխանորդ Գեորգայի արար ժողով Այգիպտոս բազում Եպիսկոպոսաց սակս Աբրոսի և նզովեաց ըզնա. և զամենայն խորհրդակիցս իւր։

Գրեաց զնզովսն և ետ տանել ընդ ամենայն երկիր. բայց ոչ չիջանէր հուրն ապականիչ մինչեւ խմացոյց Թագաւորին զբանն և աղաչեաց հրաման տալ տիեզերական ժողովոյ։

Եւ իբրեւ լուաւ Թագաւորն տրտմեցաւ յոյժ. և նախ գրեաց Թուղթ առ Աղեքսանդրոս և առ Աբրոս զի Թաքուսցեն ըզբանն, և հաշտութիւն արասցեն։ Եւ ջանացաւ Աղեքսանդրոս. և ոչ դադարէր հիւանդութիւնն, այլ տարածանէր ընդ ամե-

(1) Մի օրի, պատահումն։

իւրոյ, Աստուածաբանն եւ 'ի Կոստանդնուպօլսէ, և էառ զաթոռն Նէքտարիոս։ Եւ Թէոդոս յորժամ ետես զՄելիտոս, ասաց թէ «Օ՛սա տեսի ես յերազի, որ օրհներ զիս թագաւոր։» Եւ սա մեռաւ 'ի ժողովին, և խօսեցաւ Գրիգոր Նիւսացի վասն նմա գերեզմանական ճառս. և բերաւ մարմինն Ա՛նտիոք։ Եւ Մելիտոս խափանեաց զքահանայն ընդունելոյ զհոստոմանութիւն, և սահմանեաց զի կատարեալքն առցեն և յամենեցունց վկայեալքն։ Օ՛ի քահանայ մի Ա՛նտիոք հրապարակեաց զհոստոմանութիւն սարկաւագի միոյ, որ անկեալ էր 'ի կին մի մեծազգի, և եղեւ յոլով սպանութիւնս (1)։ Եւ ասաց Մելիտոս, թէ «Լաւ է զաջ դնել 'ի վերայ դժնկի փշոյ և ոչ 'ի վերայ տգիտաց և անկատարից։»

Յայսմ ժամանակի հանդիպեցաւ Թէոդոս 'ի Թեսաղոնիկէ, և հիւանդացաւ, և մկրտեցաւ Ա՛ք.իլասայ և առողջացաւ. և եկեալ 'ի Կոստանդինուպօլիս շինեաց ըմեծ եկեղեցին զՆաստասիա (Յարութիւն)։ Եւ յայսմ ժամանակի ծնաւ նմա որդի 'ի Գալիէ (Գաղլայ) կնոջէն, և կոչեաց զանուն նորա Ոնորիոս. և Գալիէ ծնեալ զՈնորիոս՝ մեռաւ (2)։ Եւ կայր նմա պատկեր Ա՛ն-

(1) Սոկրատ. ճԺ.

(2) Տես 'ի ծանօթութեան 3. յեր. 154.

տիոք, և լուեալ զմահ նորա՝ քարշեցին և ընկեցին 'ի շուկայն։ Եւ բարկացաւ յոյժ Թագաւորն Թէոդոս. և առ զիշխանութիւնն Անտիոքու, և ետ զնա Լատիկ (Լաւոդիկէ) քաղաքի՝ զանուանիլն մայրաքաղաք և ամենայն Աւեստարանչի. և դատաւորքն արարին յոլով սպանութիւն վասն այնմ գործոյ (1)։ Եւ լուեալ զայն միայնակեաց մի Ապողոս անուն (2). եկն և յանդիմանեաց զիշխանան, և գրեաց առ Թէոդոս, թէ "Լան պղնձի պատկերի միոյ չէ պարտ այնչափ բարկանալ, և զպատկեր Աստուծոյ սպանանել՝ զմարդիկ։ Պղնձի պատկերք շատ կարեն կազմել. թէ պատկերք Աստուծոյ անկարանաս շինել, զայդ ոչ գիտեմ։ Եւ քանի՞ եւս զհոգիս մեր անարգեմք մեղօք, և չէ ուրեք հոգ, որ է պատկերք Աստուծոյ նախատեալն։" Եւ զայս

(1) Ըստ պատմութեան Յունաց՝ Թէոդոս եդ նոր հարկս 'ի վերայ Ասիացւոց առ 'ի տօնախմբել զՀնգամեայն որդւոյ իւրոյ և զտասնամեայն իւր։ Անտիոքացիք ընդդէմ կացեալ հրամանին և զարձանն իսկ պղնձի զկայսեր արկեալ կործանեցին։ Լատիկ զայրացեալ կայսեր ընդ անարգեանն, զանցաւորսն մահու դատեաց, և գլխատուքն 'ի բնակչաց եդան 'ի բանտի։ Յայնժամ Փլաբիանոս հայրապետ Անտիոքայ եթեալ առ կայսր, հզօր բանիւք իւրովք հաշտեցուցանէ ընդ ժողովրդեանն, և զպատուհասն նորա 'ի բաց դարձուցանէ։ Յովհ. Ոսկ. Ճառ անդրէնական, ԻԱ։

(2) Ապողոս կամ Ապողոն էր միայնակեաց և այր առանց դպրութեան, Մակեդոնիոս կոչեցեալ ըստ Թէոդորետասի։ և Գարնիէր մականուանեալ։

բել մարտիրոսաց և հաճոյացեալ ծառայից Աստուծոյ։

Օ՛ի լուեալէր Թագաւորին 'ի Մեղքեստրոսէ և 'ի Պարթեւէն Դրիգորէ յալագաստոցիկ, և արարին այնպէս և կանոնեցին զայն սահման յաւիտենական հրամանաւ Հոգւոյն սրբոյ։ Իսկ Թագաւորն կանոնս հաստատեաց ձեռօք իւրովք, զանարգողսն և կեղեցականաց չար և դառն տանջանօք սպանանել։

Ի քսան ամի արքայութեանն Կոստանդիանոսի եղեւ ժողովս այս յամի հինգ հարիւր ութ հարիւր երեսուն երեք ելոյն Ընդ սմայ։ Եւ նզովեցին զկնի Արիոսի զ՝Եւսեբի Նիկոմիդացւոյ եպիսկոպոս և զ՝Էոպնիս Նիկիացւոյ, և զ՝Ատոս՝ Բաղկեդոնի, և զ՝Թոզմանա՝ Մարկակի, որք էին (արք) նշանաւորք։

Իսկ մայր Թագաւորին տեսլեամբ Աստուծոյ եկ Յերուսաղէմ Մեղքեստրոսիւ. և եդիտ 'ի վերայ գերեզմանին Քրիստոսի պատկերս կանգնեալ Աստղկայ. և խոշտանգանօք եդիտ զնաչն Քրիստոսի որ Թաղեալ կայր 'ի Գողգոթա, 'ի ձեռն Յուդայի յայտնեալ առ Մարկոսիւ Հայրապետիւ Երուսաղեմի։

Եւ սրբեաց դշխոյն զ՝Երուսաղէմ և շինեաց եկեղեցիս 'ի անօրինական տեղիսն. և

յանձնեաց 'ի Մակարիս, որ է Մարկոս ե-
պիսկոպոս Երուսաղեմի։ Եւ շինեաց վանք
բազմաց սրանց և կանանց և կուսանաց. եւ
խնամէր զնոսա ծախիւք սրբոյն։

Բայց Երիսոս 'ի հնարս մտեալ խաբեաց
զպարզամիտս Թագաւորին. որպէս զղջացեալ
աղաչէր տեսանել զԹագաւորն, զի տացէ
վստահութիւն ուղիղ դատաւորութեանն.
և եմուտ առաջի արքային ունելով երկու
կոնդակս 'ի ձեռին. մինն մեծ գրեալ պաթ-
զապէս. զկնի զդատաւորութիւնն, զոր կալաւ
առաջի Թագաւորին. և զմիւսն փոքր, զոր
ծածկեաց 'ի թեզանին որ էր իւր հայհոյու-
թիւնն. և ասաց թէ Երիսոս այլ ազգ փա-
ռաւորէ զԱստուած քան թէ որ այսր է, մի
տեսցէ զփառս նորա։ Եւ հաւատաց Թա-
գաւորն մինչեւ ծածկատեսն խայտառա-
կեաց զնա պատառմամբ աղօթիւք սուրբ
եպիսկոպոսին Աղեքսանդրի։

Եւ Թագաւորն առաւել հաստատէր 'ի
հաւատն Միկիոյ և փառաւորէր զԱստուած.
պարտ ազատ զԵկեղեցի ընդ ամենայն երկիր.
և կարգեաց առատ հոգս իւրաքանչիւր
եկեղեցւոյ. զի որբք և այրիք խնամեսցին
'ի ծախս եկեղեցւոյն. և ամենայն եկեղեցի
ասէ կալցի անպակաս զհին և զնոր կտակա-

Digitized by Google

ղուԹիւն կրեցեր, զի զնա և զդուռն եկեղեցւոյս տեսցես։» Եւ Թագաւորն ասէ. «Ինչ ցոյց դեղ վերայ իմոյ և արարից։» Եւ ասէ եպիսկոպոսն. «Խիստ ես ընդդէմ ՀԼասակարայ. դրել տուր օրէնս, զի արգելցեն զՀնասատարսն երիս աւուրս. և Թէ տակաւին կասկածանաք է, քառասուն աւուրս. և հարց և փորձ լեցի, և վկայիւք և քննուԹեամբ Ի յայտ եկեսցէ իրաւն. և զինչ տեսցեն զկնի շինման բարկուԹեանն, արասցէ զնա պատշաճն պատուհաս։» Եւ նոյն ժամայն գրեցին. և առաքեաց առ ամենայն գաւառս և իշխանս երկրի, զի այնպէս արասցեն։ Եւ ապա հրամայեաց Թագաւորին մնանել յեկեղեցին. և նա մնեալ յեկեղեցին՝ ընկէց զինքն Ի վերայ գետնոյն ասելով. «Ներձեցաւ անձն իմ Ի հող. Տէր ապրեցո զկս ողորմուԹեամբ (1)։» Եւ արտասուեալ արքայ կանգնեցաւ և գրնոյց մերձ Ի խորանն. և կամեցաւ երԹալ յիւր տեղին, և արգել զնա եպիսկոպոսն և ասէ. «Լաւ է քեզ լինել յետոյ և Ի վայր քան զամենեսեան, մինչեւ կատարեալ ապաշխարես։» Եւ յանձին կալաւ ամենայն խանարհուԹեամբ, և գնոյց կանգնեցաւ ընդայլ ապաշխարողն։ Այսպիսի էր երկիւղ և հաւատ Թագաւորին (2)։

(1) Սաղմոս. ՃԺԸ. 25։
(2) Սուրբ Օգոստինոս, ՅՂ. Խոպոխին Ասոյնոյ. Ե. 26։

Յայսմ ժամանակի գտան նշխարք Ամբակում մարգարէին և Միքիայ, Աղաթոնիկեայ Պաղեստինացւոյ (1) յայտնութեամբ եպիսկոպոսին, և Երուսաղէմ գտան նշխարքը սրբոյն Ստեփաննոսի և որք ընդ նմա առ Յովհաննու եպիսկոպոսին Երուսաղէմի։

Ի յերեքտասան ամին Թէոդոսի քարոզել ետ զորդին զԱրկադիոս Թագաւոր յարևելս. և յայնժամ Լեգանոս (Եւդինէոս) և Ուրբանոս (Երբոգաստոս) իշխանք խաբէութեամբ սպանին զԱղենտիանոս 'ի Հռոմ։ Եւ Թէոդոս Թագաւորեցոյց զՈնորիոս 'ի Հռոմ։ Եւ ելեալ սակաւուք ընդդէմ տպրստամբացն որ էին բազումք, և ասեն ցԹագաւորն որ ընդ նմա էին. «Թոյլ տուր մինչեւ հասանեն զօրքն։» Եւ նա եմուտ 'ի քարայր մի սառանձինն, և գոչեաց առ Տէր. և երեւեցաւ նմա Յովհաննէս Աւետարանիչն և Փիլիպպոս առաքեալն, և ասեն ցնա. «Մի՛ զարհուրիր և օգնականի մի՛ մնար, զի մեք եկաք 'ի Քրիստոսէ օգնել քեզ.» որ եղեւ իսկ. զի 'ի վաղիւն կորեան երկոքին բռնակալքն(2)։

(1) Այն է Եղեւթերոպոլիս քաղաքն Յուդայաստանի, 'ի ցեղին Դանայ։

(2) Սոկրատ ասէ, եթէ Եւդինէոս պարսեալ 'ի մաքտին յոտս Թէոդոսի դիմէր յանկարծաբուխ ինքնին ապաստանեալ, և զօրքն անդէն զնա գլխատեցին։ Իսկ Արբոգաստոս 'ի հետամտիցն իւր ոչ կարացեալ զերծանիլ, ընդ սուր իւր ելեալ վախճաներ։ ՃԺԴ։

հականեաց ինքեան խոստանալով երիցուն պահել զաղանդ նորա։ Իւ ետ աւագ որդ-ւոյն զԿնտիոքու. կտակն։ Իսկ զկնի աւուրց գնաց երէց որդին պատերազմել ընդ կրտ-սերոյն վասն Հռոմայ. և Դաղմատիոս որ էր Կեսար և զօրագլուխ 'ի Հռոմ, եկ ընդ առաջ նորա և սպան զնա. և ապստամբու-թիւն մոաբէերեաց, և սպանաւ 'ի չարիս իւր։ Կամեցաւ Կոստոս և զորդին սպանա-նել. և դարձեալ խնայեաց 'ի նոսա զի Դա-ղոս հիւանդապին էր, և Յուղիանոս մա-նուկ։ Իւ այսու պատճառաւ զերծան 'ի մահուանէ։

Իւ յետ աւուրց գնացին առ միջին որ-դին Կոստանդիանոսի. և նա ետ զնա յու-սումն մերձ 'ի Կեսարիա 'ի գիւղ մի Ա՝ակա-զի անուն. և էին կայտառք յաստուածպաշ-տութիւն. և եղեն վկայասէրք. և սկսան շի-նել վկայարան յանուն սրբոյն Ա՝ամասայ 'ի Կեսարիա. և վաստակէին երկոքին անձամբ. և ջնուաձն Դաղիոսի հաստատէր, և Յու-ղեանոսին փլանէր և ցրուէր գուշակերով զհանդերձեալն։

Իւ կոչեաց զԴալինոս առ ինքն Կոստան-դիանոս, և Կեսար կարգեաց յԱ՝նտիոք. եւ խորհեցաւ ապստամբութիւն և նա նման

հօր իւրոյ. և սպան զնա Թագաւորն։ Եւ զՅուլիանոս կալաւ եդ ի բանտի զի ձեռն ետ եղբօրն. քայց զկնի աւուրց բարեխօսութեամբ Թագուհւոյն Եփսիայ եհան ի բանտէն. և առաքեաց զնա ուսանել յԱթենս. ուր կային և ամոլքն հաւատոյ Գրիգոր Աստիածաբան և Բասիլիոս, որք մարգարէացան նմա զհանդերձեալն։

Յայնմ ժամանակի շինեաց Թագաւորն Կոստանդին քաղաք մի ի յերկրին Սելեւկացւոց, և անուանեաց Կոստանդնուպօլիս։

Ի վեցերորդ ամին Կոստոսի Հռովմայ Թագաւորին բռնացաւ Մագնիտոս, և եհան ի նմանէ զԻտալիա և զԱփրիկէ. եւ Թագաւորեաց ի Միրմի։ Եւ ոչ առեալ չարեաց ոմանց սպանին զԿոստոս. և զեղբօրդին նորա Կոստանդիանոս՝ որ Թագաւորեալն էր ընդ նմա զամս երիս։

Եւ լուեալ զայս Կոստանդին և զայրացեալ գնաց ի վերայ Մագնիտոսի, և սպան զնա, և Օրուփիլիս (1) որ ընդ նմա էր Թագաւորեալ։

Եւ երեւեցաւ յաւուր յայնմիկ նշան լուսեղէն խաչի յարեւելից կուսէ։

Եւ չոգաւ Թագաւորն ի Հռովմ. եւ

(1) Մի օրի. ԳՌուփիլիոս։

Digitized by Google

ցաւ, և ոչ նպուէեաց զոք, և ոչ ապրք գինի, և ոչ ծիծաղեցաւ, և ընդ մարդոյ ոչ ճաշակեաց. և յորժամ երթայր յաքսորս, եհար զձեռն յեկեղեցին և ասաց. «Ողջ մնա, սուրբ Եկեղեցի, բնակարան փառացն Տեառն։ Եւ ես 'ի պարգեւացն 'զոր առի Աստուծոյ, երկրատաան հաղար ճառս եդի 'ի դանձս քս, որ են ուրթ հարիւր գիրք։»

Յետ այսորիկ հիւանդացաւ Երկադէոս, և եդ քարոզել զորդի իւր զԹէոդոս Թագաւոր ուրթամեայ։ Եւ Անորիսսի ոչ եղեւ որդի, և նա միայն էր ժառանգ, երկեսաւ Երկադէոս վասն որդւոյն և արար կտակ, եւ յանձնեաց զորդին 'ի Պարսից Թագաւորն Յազտաճատ (Յազկերտ)։ Եւ խնդաց յոյժ յորժամ լուաւ Յազտաճատ, և առաքեաց դաստիարակ մանկանն այր մի բանաւոր Աէոտիքոս անուն, և առաքեաց սպառնալիս յամենայն տուն Թագաւորութեանն Հռոմոյ, եթէ ոչ ահիւ և դողութեամբ տեսցեն զմանուկն։ Եւ մեռաւ Երկադէոս Թագաւորեալ ամս երեքտասան։ Եւ կայր խաղաղութիւն 'ի մէջ Պարսից և Հռոմոյ. և Բրիտոնեայք որ 'ի Պարսս էին, աճէին և կային անկասկածս 'ի ձեռն միջնորդութեան Պարութայի եպիսկոպոսի։ Եւ մեռաւ Անորիսս 'ի Հռոմ անորդի, և Թագաւորեաց Կոստանդիանոս (Կոստաս գ.) և նա

ապանաւ 'ի քառնակալէ ուամենէ, և մնաց Թէոդոս միայն զկնի Մնորիսոսի, որ Թադաւորեաց ամս երեքտասան, և ժառանգ ոչ եթող։ Յս յայնժամ Թէոդոս զԱզենոիսնոս հօրաքեռորդին իւր արար կեսար, և առաքեաց 'ի Հռոմ ընդ մօր իւրոյ. և յետ այնորիկ առաքեաց նմա Թագ, որ և Թագաւորեաց ամս երեսուն և երկու։ Յս էր Թէոդոս այր սուրբ և չարակեր, և անձէթ և անդինի էր սեղան նորա զաւուրս պահոյն։ Յս սա զԲերբոնի եպիսկոպոսին մաղէ զէնն առնոյր զկնի վախճանելոյ եպիսկոպոսին, և զգենոյր զամենայն գիշեր. և էր անոխակալ և ողորմած այնչափ, որ 'ի հարցանելն թէ՝ "Ընդէր թողուս զմահապարտսն կենդանի." և նա ասէ. "Յրամեր թէ զմեռեալսն կարէի 'ի կեանս դարձուցանել, թող թէ զկենդանիսն 'ի մահ փոխել։ Այդ Աստուծոյ է գործ՝ ապանանել և կեցուցանել։"

Յայսմ ժամանակի Յաղտաճատ թագաւորն Պարսից մեռաւ, և առ զԹագաւորութիւնն Աբհարան որդի նորա ամս քսան և երկու (1)։ Յս բարձաւ սէրն 'ի միջոյ թագաւորացն. և հարան Պարսիկք յոլով անգամ ազգթիւք թագաւորին։

Յայսմ ժամանակի առաքինի երեւեցաւ

(1) Այնէ Վրամ Բ. որ նստաւ զկնի Յակոբի յամի 419 կամ ըստ այլոց 421։

կինն և զգեցաւ հանդերձ փիլիսոփայի սեկ-
ներկեալ զոր Ադէմն կոչէն. և ծաղը արար
զծիրանին։

Բայց ոմանք այսպէս ստուգեն վասն
Յուլիանոսի. եթէ Ասկղէպոս և Լիկիանէս
եղբարք երկոքին փեսայք Կոստանդիանոսի
Թագաւորին՝ երկու քեռ։

Յուլիանոս որդի էր Ասկղեպոսի. և Գալոս
եղբայր իւր որ սպանաւ 'ի պատճառս ապրա-
տամբութեան. և Յուլիանոս անկաւ 'ի սե-
զանն սուրբ և ապրեցաւ, Աթանաս հայ-
բապետին աղաչանաւք։ Եւ Լիկիանէս ունէր
դուստր մի Հելենա անուն. որ զկնի հօրն
սպանման ժառանգեաց զինչս նորա և կեայր
կուսութեամբ և քրիստոնէութեամբ. և կա-
մեցաւ գնալ Յերուսաղէմ, և աղօթել անդ,
և վստահացաւ զստացուածս իւր 'ի Յուլի-
անոս որպէս յանագահ և 'ի փիլիսոփայ. զի
մաշկեայս զգենոյր. երեքտասան Թագ ոսկի
ականակուռս, հարիւր յիսուն և հինգ կեն-
դինարս զարդ կանանց ոսկի և ինանուն եւ
եւթն կենդինարս անգին ոսկի, և հանդեր-
ձեղէնս անգինս և անթիւս։

Իսկ Յուլիանոս խորհեցաւ ընդ վարդա-
պետն իւր հեթանոս Մելենոս չտալ զինչսն
Յելենայի, և թաքոյց 'ի տան նորա. և 'ի

Digitized by Google

գառնալ կնոջն ուրայաւ և երդուաւ յա-
ւետարանն. և երթայր ՅլուԹրա Թաղ-
ծեալ 'ի տուն իւր. և էր ժամացոյց որ 'ի
ճանապարհին, և 'ի նմա պատկեր կոց, և
խօսեցաւ ընդ նմա դեւն և ասէ. երկրպա-
գեա ինձ և լեր իմ սիրելի որպէս 'ի հայրն
քո, և առ քեզ դարձուցից զինչն քո. և
ոչ արար փոյթ բանիցն խօսեցելոց ՅլուԹրայ։

Յե եղեւ զի անցանէր ընդ այն Յու-
լիանոս, ասէ ցնա նոյն դեւն արտաքոյ զքեզ
նշաւակ ընդ ամենայն երկիր, զի առեր
զինչն ՅլուԹրայ զոր ես ետու. հօր նորա
սիրելւոյն իմոյ, և երդուար սուտ. և զա-
հի հարար. Յուլիանոս և պատմեաց Մելե-
նոսի. և նա ասէ ցնա. երկրպագեա նմա
զի մի արասցէ զսպառնալիսն և առ տարաւ
զնա, և նուիրեաց դիւաց, և էր դուստր մի
Մելենա յղի, զնա զոհեցին և հանին զմա-
նուին և ողջակիզեցին՝ և եմոյծ զՅուլիանոս
յայրս ինչ խորագոյնս բնակութիւն դիւաց,
և խոստացաւ նմա ժամանակս հարիւր ամ
սոյ և Թագաւորութիւն նմա զամենայն եր-
կրի։ Յե Յուլիանոս կրճատեաց զանձն. և
հաւատաց դիւաց զանձն իւր. և յորժամ ե-
ղեւ Կեսար և յաջողեցաւ նմա Թագաւո-
րութիւնն, եւս առաւել հաստատեցաւ և

սկսաւ կսխարդել և հմայել զոհել դիւաց և յարենէ զոհիցն ցանել յաղբերակունսն և յամենայն կերակուրս . զի լմսպղքն և կեռողքն իբրեւ զնա սիրտ ստացին : Սա լուաւ թէ պատկերն Քրիստոսի ոք 'ի Կեսարիա պղնձի՝ որ 'ի տան կնոջն տեռատեսի բազում բժշկութիւնս կատարէ, առաքեաց քակել ետ , և 'ի տեղւոջն կուռս կանգնել : Եւ իջեալ հուր 'ի Տեառնէ այրեաց զկուռսն։

Եւ եկն Յուլիանոս Անտիոք , և յորժամ մոտանէր 'ի քաղաքն , պատմեցաւ նմա իրքս և զայրացաւ յոյժ . և 'ի նմին ժամն ետես զմի ոք 'ի վարդապետաց Քրիստոնէից , և ասէ ընդ Լիբանոս իմաստասէրն, հարց ընդ վարդապետդ և ասա , ուր է հիւսանն որդին : Պատասխանի ետ և ասէ , զարուեստ հօրն կատարէ . դագաղս և թաւուղթս կազմէ սպանման թագաւորիդ , որ դիպելոց է դմա 'ի Պարսս . և խոցոտեալնացա 'ի սիրտս ոչինչ ետուն պատասխանի առ ժամն . և մտեալ 'ի քաղաքն առատացոյց հրամանաւ զուռձիկն և սղեաց զդահեկանսն 'ի պատճառս զօրացն , զոր ժողովեալ տային էր 'ի Պարսս :

Եւ Ամիկք քաղաքին ասացին նմա բանս նախատանաց , զիսոր և զերկայն մօրուսդ

ասեն պարապ ընդէր ունիս, բեր, ճողեմք զգա, և ապա չուան, և դիր յեղջիւրս ցը-լոց, և ապար զոհեա դիցն քո պառաւեալդ 'ի սէրս նոցա։ Եւ կատարեալ Թագաւորն հրաման ետ զորոց պրով մաշել զնոսա. և ո-զոքեաց զնա ճարտասանն, ոչ պարտին քեզ մահ ազգայ, այլ նախատինս։

Եւ ժողովեալ զնոսա 'ի միասին ձաղեաց զնոսա և եթող։

Եւ կայր 'ի լեռան Նոտիսքա վանք մի Պղուլա անուն յորում կայր ջրիմն Բաբե-ղայ հայրապետին. հրամայեաց հանել զնա և տանել 'ի քաղաքն. և զուարճացեալ քրիստոնէիցն հանին զնա և տարան սաղմոս-սիւք և օրհնութեամբք, քանզի կանգնեաց անդ պատկեր Պղոնսի և եհարց վիճակաւ վասն երթալոյ նորա 'ի Պարսս. և դեւն ոչ ետ նմա պատասխանի։ Եւ գիտաց երթէ վա-սին Բաբելայ է, և յետ տանելոյն զնա խոշ-տեցաւ ընդ նմա դեւն բանս բարիս, եւ ցնծացեալ Թագաւորն եդ առաջի պատկե-րին սեղան երկու. զմինն ելից հրով, և ըզ-միւսն ոսկւով, և ասաց որ աք արասցէ անձին իւրոյ բարիս, ահա առ ձեռն է. և եդ սե-ղան մի այլ, և ելից զնա խնկով և հրամա-յեաց ափով մի խունկ առնուլ, և արկա-

նել 'ի վերայ հրոյն. և առնուլ նովին ձեռամբն յոսկւոյն, և բազումք պարզմտութեամբ պատրեցան (1) ոչ իմացեալք զինչ ասն։

Այսպէս գնացեալք 'ի Ճաշ և նստեալք 'ի սեղան նկարէին զկնաչն ըստ սովորութեանն 'ի վերայ բաժակին և հացին։ Իսկ ոմն 'ի գիտողացն ասէ զինչ է այդ. զոր գործէք զկնի սուրացութեանն։

Իսկ նոցա զարհուրեալ ասեն և երբ ուրացաք, և նա ասէ. 'ի խունկն զոր նը-ւիրեցէք 'ի հուր և առիք ոսկին։

Յետ նոցա լուեալ արտաքս ելանէին խբրեւ զմոլեկանս. և տարեալ զոսկին ընկեցին յերեսս Թագաւորին՝ քրիստոնեայ զինքեանս կարդալով և պատրաստ 'ի մեռանել վասն սիրոյն Քրիստոսի։

Յետ ներեալց նոցա Թագաւորն զի մի աւրացեն զնոսա մարտիրոս. զնոյն Նախատոիկ նոս կրեաց և 'ի Կեսարիա,, և կոչեաց զանուն քաղաքին Բաղկէն և զկոստանդնուպօլիս Բիւզաս կոչեաց հանեալ զանունն Կոստանդիանոսի, և հրամայէր տալ զդրպրոցս 'ի հեթանոսս. և շինել տայր հիւրանոցս և կուսանոց յանուն դիւացն, և ուսանել և գրել զառասպելս հեթանոսաց։

(1) Մի օրի. խաբեցան. ոմանք պարտեցան։

Digitized by Google

Եւ Աղաքէր ապա յՈՒռհայ քաղաք պատ-
բաստել անդ նմա սրքունիս, և ոչ ընկալան
զնաս. և զբարկութիւն իւր 'ի վերայ Ուռ-
հայի ապա ընկենոյր 'ի դառնալն Պարսից
խաղաղութեամբ։ Եւ եկին 'ի Խառան. և
ընկալան զնա պատուով և զոհեաց անդ զոգ-
հրս բախտից. և մեծարեաց զՀրեայսն որ
անդ էին, և գովեաց զհրէութիւնն և հրա-
ման ետ երթալ յՅերուսաղէմ, և շինել զտա-
ճարն և զսահել ըստ օրինացն։

Եւ նոցա թեթեւամտութեամբ ձայն
տուեալ միմեանց և ժողովեալ 'ի միասին,
բարձին կիրմոբս երեք հազար, և գնացին
յՅերուսաղէմ. և ակսան շինել զտաճարն. և
ելեալ հուր 'ի Տեառնէ այրեաց զհիմունսն
զոր արկին, և զգործին որովք գործէին
զքնուածս։

Իսկ Յուլիանոս յամեալ 'ի քաղաքն Խա-
ռան, կանգնեաց անդ կուռս և սկսաւ զո-
հել. և յանկարծ անկաւ թագն 'ի գլխոյն,
և ձին զոր սնդէին առ ընթեր կոխեաց զնա.
և ձգեալ զոտսն պատառեաց զհանդերձ
թագաւորին։ Եւ ասացին Հմայքն եթէ
յանդիմանութիւն է քեզ այդ, փոխանակ
զի ունիս ընդ քեզ զայդ զօրսդ Քրիստո-
նեայս թշնամիս Աստուածոյն։ Եւ հաւա-

Digitized by Google

տաց նոցա, և դարձոյց 'ի նոցանէ քսան երկու հազար։ Բայց զնշան խաչին զոր տա-նէին առաջի ըստ առաջնոյ սովորութեանն՝ ոչ դարձոյց. զի ասաց, ո՞ գիտէ եթէ յաղ-թեն մեզ Պարսք, պարտութիւն խաչելոյն իցէ և նշանի նորա։

Յետ թիւ զօրացն զորս ընդ իւր տարաւ երեք հարիւր ինանուն և եւթն հազար էին պաղեալք յերկաթս, բաց 'ի սպասաւորացն և յարուեստաւորացն և 'ի վաճառողացն. և ուր երթայր կուռս կանգնէր և զոհէր նոցա և հարցանէր զնոսա. և նոքա ասէին համագունդք գամք ընդ քեզ։ Բաջալերեաց զքեզ Աբէս աստղն կայ 'ի գլուխ զօրացդ քոց. և բախտ Աղեքսանդրու և գիր ճակատու նորա քեզ շնորհեալէ։

Յետ գնաց 'ի Տիզբոն և աւերեաց զնա. և Շապուհ արքայ Պարսից եկ 'ի Տիզբոնէ, և գնաց փախուստական 'ի Նմանէ. և առաքեաց առ նա և խնդրեաց խաղաղութիւն, զի տայցէ նմա հարկս, դարձցի 'ի Նմանէ, և ոչ առասց նմա ըստ հպարտութեան սրտի իւրոյ։

Իսկ Շապուհ ժողովեալ առ ինքն զզօրս Պարսից եկն 'ի վերայ նորա առ Տիգրիս գետովք. և նստան բացագոյն. և տակաւին գընային և գային պատգամաւորքն, և ոչ լսէր

նոցա Յուլիանոս, և յանկարծ եկն նեռ մի և եհար զնա յաղին. և վայթեցաւ արիւն բազում առաջի նորա. և առեալ յարենէն ցանեաց ընդ երկինս ասելով. յաղթեցեր յաղթեցեր, Գալիլեացի արդ առ 'ի վերայ Աստուածութեանդ և զթագաւորութիւնս իմ։

Այլք զնեռն ասեն որ էառ ոչ 'ի մարդկանէ այլ 'ի ցասմանէ Աստուծոյ։ Եւ թէպէտ հպարտութեամբ ոչ ազանէր զրսահս, այլ բարկութեան Տեառն ի ընդդիմանայ։

Եւ եղեւ բան առնն Աստուծոյ որ յԱնտիոք։ Կազմեալ թաւութ եղաւ մարմին նորա 'ի ներքս լի ամենայն գարշութեամբ. նա սրար Ճառս փիլիսոփայականս հազար (1)։ Իսկ զօրացն տարակուսեալ 'ի սովոյն եդին իւրեանց թագաւոր զՅուբիանոս զօսգլուխ՝ որոյ զառաջինն ընդդիմացեալ ասէր, ես ոչ կամիմ թագաւորել դիւանուէր զօրայ. և նոցա միաբանեալ ասացին ծառայք Քրիստոսի Աստուծոյ եմք. և երկրպագեալ նշանի խաչին, և հաւանեցաւ և եդ զթագն 'ի գլուխն, և արար սէր ընդ Պարսս. և ետուն 'ի նուսա զԱծբին հանեալ 'ի նմանէ զՔրիստոնեայսն։ Եւ դարձեալ բերելով զմարմին

(1) Մի օրի • քառասուն • Մի օրի • Թ։

անօրինին 'ի Կիւրեղեկիայ, Թաղեցին 'ի սահմանս Տարսոնի։

Իսկ զի տէրն բարերար սաստիկ մեծ ցաւոցն արար զօրաւոր զբժշկութիւն զՅոբիանոս այր բարի և աստուածասէր։ Բայց զի ոչ էաք արժանաւոր սակաւ ինչ վայելեցաք. եւթն ամիս միայն Թադաւորեալ կալաւ ըզնա ցաւ երիկամացն, և մեռաւ 'ի մէջ Գոնզատոյ և Իւրթանիոյ. և ոչ եհաս 'ի Կոստանդնուպոլիս։

Եւ եկեալ զօրացն 'ի Լիկիայ Թագաւորեցուցին զՎաղենտիանոս 'ի Կապեղոնն քաղաքէ 'ի Փանուոյ երկրէ այր իմաստուն և քաջ, և կամեցան դնել նմա ընկեր. այդ ոչ 'ի կամս ձեր է ասէ. այլ յիմս զի դուք զկս ընտրեցէք և ես զընկերն իմ. և հաւանեցան նմա։

Եւ առ նա հաղորդ Թագաւորութեանն իւրոյ զՎաղէս, և եւս նմա զկողմ արեւելից։ Եւ զի առեալ էր մկրտութիւն յԵւդոքսիա Եպիսկոպոսէ Կոստանդնուպոլսի, մեծարեաց զչարափառութիւն նորա՝ որ էր Արիոսին. և էր սա եղբայր Վաղենտիանոսի որ կալաւ զՀռոմն և զկողմ արեւմտից, և պահեաց զհաւատն Նիկիոյ. և զորդի իւր Գրատիանոս Օգոստոս քարոզեաց։

Իսկ Վաղէս գնաց յԵգիպտոս և եմուտ

Digitized by Google

'ի քաղաքն Կարկիանուապոլիս. և ընդ մնա-
նել նորա եղեւ շարժ ահագին և եղարկ ըղ-
նաւան ընդ ցամաքն, և խորտակեաց։ Իւ
դիմեցին. բաղմութիւն արանց զի առցեն
ինչ 'ի նաւացն զի գնաց ծովն 'ի ներքս քան
զահմանս իւր. և գարձաւ անդրէն և տա-
ռածեցաւ ընդ երկիրն. և բազում քաղաքս
և գաւառս ապականեաց, և հազիւ զեր-
ծաւ Վաղէս։ Իւ եղեւ հրաշքս այս գու-
շակումն աւերման Իկեղեցւոյ 'ի Վաղեսէ.
որպէս արարն իսկ մեծ պատերազմ ընդ ու-
ղղափառան։ Իւ եղբայր նորա յանդիմանէր
զնա և ոչ լսէր. և եղեւ պատերազմ Վա-
ղեսի ընդ Գոթացիսն և նեղացաւ և խնդ-
րեաց օգնութիւն յեղբօրէն. և նա ասէ. ոչ
օգնեմ առն՝ որ ընդ Աստուծոյ պատերազմի։

Իւ ինքն Վաղենտիանոս չոգաւ 'ի Սար-
մատիայ պատերազմել ընդ նոսա։ Իւ զա-
հի հարան յերեսաց նորա և առաքեցին առ
նա ինդրել զխաղաղութիւն. և զարմացաւ
արքայն ընդ գարշ տեսիլն նոցա և ընդ տր-
գիտութիւնն. և տեղեկացաւ 'ի նոցանէ,
զի առնս եկեալքն ընտրելագոյնք էին քան
զամենեսեան. և ասէ բարձր ձայնիւ եղուկ
են Հռովմայեցեցիք, եթէ ընդ սոսա խա-
զաղութիւն արասցեն. և զիարդ թողին ըզ-

Digitized by Google

սոսա մինչեւ ցայսօր կենդանիս։ Իսկ խստա-
գոյնս գոչելոյն պատառեցան երակք փողնցն,
և մեռաւ ուրթսուն և չորից ամաց. Թագա-
ւորեալ ամս մետասան։

Այս արտաքոյ օրինաց ունէր երկու կա-
նայս զՍիւերա և զՍուսոնէ դուստր Յուս-
տինանոսի իշխանի՝ զոր ապան յաղագս երա-
զոյն զոր ետես՝ և պատմեաց Ծիրանիս ե-
լեալ յինքեանէ. զի մի ասէ ծնցի Թագաւոր՝
և առեալ զդուստր նորա ծնաւ որդի մի
համանուն իւր, և երիս դստերս. անուն
միումն Գալիէ, որ եղեւ կին Թէոդոսի Թա-
գաւորի՝ որ ծնաւ զԱրկադէ և զՀոնորի։

Իսկ 'ի յառաջնոյն ունէր զԳրատիանոս
երէց որդին՝ որ ոչ էր մերձ մահուան հօրն.

Իսկ զորքն Թագ եդին Վաղենտի որ էր
տղայ ամաց չորից։

Իսկ Վալէս արար զզօրս իւր Գրատիա-
նոսիւ և առաքեաց 'ի վերայ Գոթացւոցն,
որ և կորագլուխս դարձաւ 'ի նոցանէ. եւ
այպանեաց զնա։

Ասէ ցնա Գրատիանոս յաղթահարու-
թիւնս այս ոչ է իմ այլ չարափառութեան
քում. զի կռուիս ընդ բազուկն հօր։

Յայնմ ժամանակի բազում վիշտս հա-
ստուցանէր Սաւիէ դշխոյն Տաճկաց աշխար-

հին Հռովմայեցւոց՝ որ էր ազգաւ Հռովմայեցի և օրինաւք Քրիստոնեայ, գերեալ ի Տաճկաց կին եղեւ. Թագաւորի նոցա։ Իսկ զկնի մահուան առնն, ինքն ուներ զիշխանութիւնն, և ի պատճառս նորա բազում եղեն քրիստոնեայք։

Այս խնդրեր Եպիսկոպոս երկրին իւրում զՈվսէս կրօնաւորն. զոր թէ տացէ Պաղէս լուծցէ զպատերազմն որ ընդ նմա. և առաքեաց Պաղէս կոչեաց զնա և աղաչեաց երթալ։ Իսկ նա հազիւ հաւանեալ զգնումն՝ բայց ոչ ընկալաւ ձեռնադրութիւն յարիանոսացն այլ յաքսորելոցն սակս ուղղափառութեան՝ որ և ի գնալն նորա ի Տաճկաստան՝ բազմացաւ քրիստոնէութիւն։

Իսկ Պաղէս ետ շինել Անտիոք դիմիսոն՝ որ է բանդ ուղղափառաց։

Եւ ի նոյն ժամանակս երեւեցան անբաւութիւն զօրաց՝ որք դնային ընդ երկինս մարմնաւոր տեսլեամբ։

Եւ ծնաւ տղայ մի Անտիոք միականի՝ ունայ չորս ձեռք էին, և չորս ոտք, և մօրուք թաւ։ Եւ զկնի սակաւու ելին Գոթացիքն և գերեցին գաւառս բազումս, զՍկիւթիա զԹրակիա, զԻսիա, զՄակեդոնիա, զՀաքայիա, և զամենայն Հելլադա։

Digitized by Google

Իսկ Վաղէս փախեաւ 'ի Կոստանդնուպոլիս. և ռամիկն այպանէր զնա ասելով. չարահաւատ, եկ պատերազմեա ընդ Թրջնամին. կամ տուր զէնս զի գնասցուք մեք։ Եւ բարկացեալ Վաղէս գնաց զայրացեալ. և սպառնայր եթէ դարձցի խաղաղութեամբ, այրեսցէ զքաղաքն նոցա հրով։ Եւ երթեալ Վաղէս 'ի կռուել ընդ Գոթացիսն. և պարտեցաւ 'ի նոցանէ, և փախեաւ 'ի գեօղմի. և բարբարոսքն պատեցին զգեօղն. և թաքեաւ 'ի տան յարդի. և իբրեւ ոչ գըտին զնա, այրեցին զգեօղն և այրեցաւ ընդ յարդն չարն չարեաւ։ Կորուսեալ։ Եւ կայ մնայ 'ի հանդերձեալ գեհենին։

Եւ բարբարոսացն ասպատակեալ մինչև ցդուռն Կոստանդնուպոլսի առին աւար բազում։

Եւ Թէոդոս զօրագլուխ ընդդէմ նոցա եկ և կոտորեաց զնոսա։

Իսկ Գրատիանոս առեալ զթագաւորութիւնն՝ զկնի կորստեանն Վաղեսի՝ որ թագաւորեաց ամս հնգեւոտասան (1), արար ըզթէոդոս հաղորդս թագաւորութեան իւրոյ, տալով նմա զբաժինն արեւելեան, այր Սպանիացի իմաստուն և արի և աստուա-

(1) Մի օրի. եւ թն և տասն։

ծապաշտ՝ որ և սպառեաց զբարբարոս զօրսն, և գնաց յաշխարհն Նոցա և արար զնոսա ընդ հարկաւ։ Եւ դարձաւ անուանի և ելեալի փառաք. և գնաց 'ի Կոստանդնուպոլիս հրամանաւ Գրատիանոսի. այն՝ որ զառաջինն Թէոդոս քարոզեաց զնա ինքնակալ Թագաւոր. և նա փոխարինեաց նմա։

Եւ ասա եղեւ խաղաղութիւն մեծ Եւ կեղեցւոյ զկնի քառասուն ամի արիանոսացն չարութեան (1)։

Եւ 'ի նմին ժամանակս Թագաւորեաց Պարսից Շապուհ, զկնի մահուանն Արտաշիրի։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս Մելիտոսի որ կանոնեաց չառնել խոստովանութիւն անիմաստ քահանայի։

Եւ յերրորդ ամին Թէոդոսի սպանաւ Գրատիանոս 'ի Մաքսիմոսէ բռնակալէ, և ելին ընդդէմ նորա Թէոդոս և փոքրն Վալենտիանոս և սպանին զբռնակալն՝ և ինքեանք մնային 'ի Հռովմ երեսելի. փառաք։ Եւ Թագաւորեաց 'ի Հռովմ Վալենտ

(1) Մի օրի. չարաբաստութեան։

Digitized by Google

ոիանոս. և Թէոդոս դարձաւ 'ի Կոստանդնուպոլիս. և առաքեաց զՍտրատիկոս զգրաւիար յարեւելս, որ և եկեալ Անտիոք եգիտ հակառակութիւն յեկեղեցին, և արար խաղաղութիւն, և ետ զսթոռն 'ի Մելիտոս։

Ի չորրորդ ամի արքայութեան Թէոդոս կամեցաւ սրբել զեկեղեցի յաբիանոսացն 'ի ձեռն խրատու Կիրիգորի աստուածաբանի. որ եկեալն էր յօգնութիւն հաւատոյ յառաջ քան զութն ամ Թագաւորելոյն Թէոդոսի։

Եւ ետ Թագաւորն հրաման ժողովս ընդ ամենայն եկեղեցիս, և ժողովեցան հարք հարիւր յիսուն որոց գլխաւորքն են այս։ Տիմոթէոս՝ Աղեքսանդրու. Կիւրեղ՝ Երուսաղեմի. Մելիտոս՝ Անտիոքու. Սուրբն Ներսէս՝ Հայոց մեծաց, դարձեալ յարտասահմանութենէն Ալաղեսի. Գրիգոր Նազիանզու՝ Կոստանդնուպոլսի. և Գրիգոր Նիւսիայ, որ և նախ որոշեցին զաղանդն Արիոսի. ապա Մակեդոնին՝ որ իշխեաց հայհոյել զՀոգին սուրբ։ Եւ յաւելին 'ի հաւատն Նիկիայ ըստ յիշատակ Հոգւոյն սրբոյ։

Իսկ Գրիգոր աստուածաբանն ել կամաւ խլոյլ 'ի Կոստանդնուպոլսէ. և ետուն զսթոռն Նեքտարեայ։

Այլ մեռաւ Սելիտոս 'ի ժողովին. և ելաց թագաւորն 'ի վերայ նորա և ասաց. զսա տեսանէի ես 'ի տեսլեան, զի օծանէր զիս թագաւոր մինչ ոչ էի առեալ զսա արդեամբք։ Այլ պատուեաց զնա Գրիգոր Նիւսեայ ներքոյական ճառիւ. և թերաւ մարմին նորա Յունոիոք և անդ եդաւ։

Այլ Սելիտոս կանոնեաց. մի առնել (1) խոստովանութիւն Քահանայից որոց ոչ իցէ վարժեալ հին և նոր կտակարանաց. զի Քահանայ մի Յունոիոք հրապարակեաց զխոստովանութիւն Սաբկաւագի. միոջ՝ որ անկեալ էր ընդ կնոջ գլխաւորի քաղաքին. ուստի եղեւ քաղաքամարտ խռովութիւնս և սպանմունս։

Այլ ասաց Սելիտոս լաւ է դնել ձեռն 'ի վերայ դժնկի կամ թիւնաւորի ինչ, քան 'ի վերայ տգիտաց և անարժանից։

Յաւուրս յայսոսիկ խօթացաւ Թէոդոս 'ի Թէսաղոնիկէ և մկրտեցաւ Յկիւզաստոյ եպիսկոպոսէ և առողջացաւ. և եկեալ 'ի Կոստանդնուպօլիս շինեաց զմեծ եկեղեցին Գնաստասիայ և աստ եղեւ նմա որդի Յունրիոս 'ի Գալիոսէ կնոջէ։ Այլ զկնի նորա Աբրկադիոս և յետ այնորիկ մեռաւ կինն։

(1) Ումանք՝ առնուլ։

Եւ կայր նմա պատկեր յԱնտիոք. և ուստ միկք քաղաքին լուեալ զմահ նորա քարշեցին զպատկերն և ձգեցին նախատանօք։ Եւ լուեալ Թագաւորն բարկացաւ և դատաւորք քաղաքին արարին յոլով սպանութիւնս։ Եւ էառ Թագաւորն զպատիւ քաղաքին զկոչէին մայր քաղաքաց, և ետ Ղատիկ քաղաքին։

Եւ լուեալ զայն միայնականն Աստղն. և եկեալ յանդիմանեաց զիշխանս քաղաքին. և գրեաց առ Թագաւորն Թուղթ և ասաց, Թագաւոր, ապաքէն գիտես զի օր ըստ օրէ անարգեմք զպատկեր Աստուծոյ զոգիս մեր, ընդէր ոչ բարկանաս և ցաւիս. իսկ վասն անարգանաց պատկերի կնոջ քո պը ղնձեղէն՝ ցասնուս. այլ և զպատկերս Աստուծոյ զմարդիկ սպանանես. միթէ անգիտանաս եթէ պատկերս պղնձիս շատ կարես ստեղծանել բայց ոչ զպատկերս Աստուծոյ։ Եւ լուեալ Թագաւորն պատկառեաց և ցաւեաւ 'ի բարկութենէն և հաշտեցաւ ընդ քաղաքին։

Յայնմ ժամանակի Թեսաղոնիկէ գլուխ Իտալեայ ապստամբեաց 'ի Թագաւորէն, և քարկոծեցին զիշխան քաղաքին. և զայրացեալ Թագաւորին առաքեաց զօրս 'ի վերայ քաղաքին, և հրամայեաց կոտորել զնա

ատ. և մեռան հինգ հազար անձինք արդարք և մեղաւորք։

Իսկ Աղեքսանդրոս եպիսկոպոսն եկն առ Թագաւորն 'ի Անդուլիէ. և դիպեցաւ Թագաւորին առ դրան եկեղեցւոյն զի կամէր մտանել, արգել զնա և ասէ ցնա. ոչ ամաչէս արեամբ շաղախեալդ, մտանել 'ի տուն Աստուծոյ. այլ դարձիր յետս. և առ կապանս զոր առաքեաց քեզ Աստուած 'ի ձեռն իմ. Այլ դարձաւ Թագաւորն արտասուօք. և եղեւ յետ ութն ամսի տօնի ծնընդեանն նստեալ Թագաւորն լայր 'ի սենեկի իւրում դառնապէս։

Այլ համարձակեցաւ առ նա Ռուփինոս մագիստրոսն և կացեալ մօտ ասէ. ընդէր լաս արքայ, ետ պատասխանի և ասէ ցնա. զի արդ ոչ լացայց, զի ծառայք իմ և մուրականք երկրի ազատք են և արձակք. և Թագաւորս անուանեալ կապեալ յերկինս և յերկրի, զի նոքա մտանեն 'ի տուն Աստուծոյ. և վայելեն յերկնաւոր պարգեւս տօնիս և ես զուրկեալ եմ։

Ասէ ցնա Ռուփինոս. եկ երթամք աղաչեմք զեպիսկոպոսն. ոչ ապաքէն ութն ամիս է ապաշխարութեանդ։ Այլ ասէ Արքայ ես ոչ հաւատամ եթէ լսէ նա, և ակն առնու

երեսաց. և արհամարհէ զօրէնս Աստուծոյ իւրոյ, եթէ ոչ իցէ լրեալ ժամանակն։ Եւ գնաց Ոսփինոս և Թագաւորն զկնի։

Իսկ յորժամ ետես եպիսկոպոսն զՈսփինոս իմացաւ զկիրն սաստեաց նմա և ասէ. ա՛ նօրէնութեան խրատուս. և յորդորիչ չա՛ ր՝ի. ո՛ւր երթաս. և անկաւ յոտս նորա Ոսփինոս և ասէ. ահա Թագաւորն գայ զկնի իմ՝ի խոնարհութիւն. բարեխօս առնել ըզ տօնիս խորհուրդս. ասէ ցնա եպիսկոպոսն, եթէ՝ի սպանանել գայ զիս ընդունիմ՝ի ձեռաց նորա իբրեւ զայլն, այլ յեկեղեցի Աստուծոյ իմոյ ոչ թողից զարիւնարբուն զայն, և գնացեալ պատմեցին Թագաւորին։

Այսէ Թագաւորն թող երթամ առնում զնախատինս յանցանաց իմոց, որում արժան իսկ եմ։

Իսկ եպիսկոպոսն կայր յեկեղեցին և Թագաւորն չոգաւ եկաց առ դրանն, և լայր բարձր ձայնիւ. ասէ ցնա եպիսկոպոսն ամբարտաւանիս, յանդգնիս. ասէ ցնա Թագաւորն ո՛չ հայր սուրբ առանց քոյոյ կամայ ոչ ինչ առնեմ. միայն տեսից զդուռն եկեղեցւոյն, և լուայց զձայն քո։

Այսէ եպիսկոպոսն զնո՛ր ապաշխարութիւն կրեցեր, զի զայդ տայ քեզ։

Digitized by Google

Ոչ է ցնա Թագաւորն զպահան և զողորմութիւն զոր պատուիրեցեր հայր սուրբ. և զոր ինչ այլ հրամայեացես դեղ վիրաց ի մոց կամ առաջի քո։

Ոչ է ցնա եպիսկոպոսն, բարկասիրտ ես, խիստ ես առ յանցաւորս և գիւրակործան 'ի բանս զրպարտչաց վնասակոսաց քոցուց։ Գրեա՛ ձեռամբ քո օրէնս քննել զերիս աւուրս զմատնութիւնս զոր լսես. և զմահապարտսն յայտնիս պահել զաւուրս քառասուն և հարցափորձք լեցի. և սիրտք քո հանդարտեսցի (1) և հանգիցէ 'ի զայրացմանէ։ Եւ զայդ արասցեն ամենայն դատաւորք, և իշխանք երկրի որ ընդ ձեռամբ քո են։

Եւ առ ժամայն գրեաց և առաքեաց առ ամենայն դատաւորս երկրի. և առ իշխանս։

Եւ ապա հրամայեաց եպիսկոպոսն Թագաւորին մնանել յեկեղեցին. և նորա մնաեալ ահիւ և դողութեամբ. և լայր ամենայն բազմութիւնն զկական բարձեալ։

Իսկ Թագաւորն ընկեցեալ զինքն յերկիր ասէր, մերձեցա՛ անձն իմ 'ի հող Տէր ապրեցո զիս ողորմութեամբ. և շատ արտասուեալ արքայի կանգնեցաւ. և գնաց մերձ առ խորանն և կամեցաւ դնալ 'ի տեղին իւր։

(1) Ոմանք՝ պարապիցի։

Այս ցնա եպիսկոպոսն. լաւ է քեզ խոնարհութիւնն կայ ընդ ժողովրդեանդ Տեառնէն, և յետոյ քան զամենեսեան մինչեւ կապրասցես կատարելապէս սրբիլ։

Եւ գնաց սրբոյն խնդութեամբ կալաւ զյետին տեղին և կանգնեցաւ. ընդ ապաշխարողն։ Այսպիսի էր հաւատ և երկիւղ Թագաւորին։

Յայսմ ժամանակի գտան նշխարք սրբոյն Ստեփաննոսի և որոց ընդ նմա. առ Յովհաննու հայրապետիս Երուսաղեմի. առն յոյժ առաքինւոյ և ուղղափառ քարոզի։

Յերեքտասան ամին իւր Թէոդոս՝ զբոդին իւր զԱրկադէոս Թագաւոր քարոզեաց կողմանն արեւելից։

Ի նմին ժամանակս Օգանոս և Արբոգաստիս իշխանք 'ի Հռոմ ապստամբին զԱղենտիանոս։

Եւ լուեալ Թէոդոս տրտմեցաւ ել սակաւ զօրու ընդդէմ բռնակալացն. և յորժամ եհաս առնոսա, և լուաւ եթէ կարի բազումք են. ասացին որ ընդ նմա էին, թոյլ տուր արքայ մինչեւ հասանէ զօրն։

Իսկ Թագաւորն 'ի ժամ երեկոյին առանձնացեալ եմուտ 'ի քարայր մի և գոչէաց առ տէր զմեծ մասն գիշերոյն։

Digitized by Google

Եւ երեւեցաւ նմա Յովհաննէս աւետարանիչն և Փիլիպպոս առաքեալքն Քրիստոսի. և ասեն ցնա ահաւասիկ առաքեաց զմեզ տէրն օգնել քեզ. արդ մի զարհուրիր և օգնականի մի մնար, և վաղիւն է օրն յաղթութեան։

Եւ սրտապնդեալ արքային 'ի վաղիւն անդր կատարեաց զյաղթութիւնն կորստեամբ բռնակալացն և թագաւորեցոյց 'ի Հռոմ զՄորիոս որդին իւր ըստ ոմանց ասելոյն կրտսեր քան զՄրկոդէոս։

Եւ դարձաւ թագաւորն 'ի Միտիոլ. և հիւանդացեալ անդ կատարեցաւ 'ի Բրեքստոս. կեցեալ ամս վաթսուն, թագաւորեալ ամս վեշտասան և ամիս ութ։

Իսկ 'ի Պարսս թագաւորեաց Ուրհաբանն Դերմանշահ որդի Շապհոյ եղբայր Ադաշիրի ամս մետասան։

Իսկ Թէոդոս բազում ունէր դրուատիս և մանաւանդ հնազանդութիւն Եկեղեցւոյ և զիսաղաղութիւն. քանզի զառաջինն ոչ կամէր հալածել զարիանոն մինչ Ամղիքոս եպիսկոպոսն յաւուր միում եմուտ առաջի արքայի և ետ ողջոյն նմա. և զթագաւորեալ որդին որ ընդ նմա նստէր, ոչ ողջունեաց և ոչ հայեցաւ 'ի նա. և ասէ արքայ

օրհնեա հայր զորդի իմ զԹագաւորեալ։

Այլ ցնա եպիսկոպոսն դու բաւական ես մեզ Թագաւոր. զդա ոչ պատուեմք, բայց եԹէ՝ ընդ ծառայագ։ Եւ բարկացաւ յոյժ Թագաւորն։

Պատասխանի ետ Այղիքոս և ասէ՝ ցնա, դու մահկանացուդ զանպատուութիւն որդւոյ քո ոչ տանիս. իսկ անմահն Աստուած զմիածնին իւրոյ զարարած ասելն տանիցէ։ Եւ զինչ կամիս ասել առաջի նորա։

Եւ զարհուրեալ Թագաւորն ետ (հրաման) հալածել զարիանոսն և ընկեցուալ յամենայն համարձակութենէ։ Եւ զնոցն պատուիրելով որդւոցն և իշխանացն հանգեաւ 'ի Բրիտոս։

Եւ զկնի մահուանն Թագաւորին ծնաւ յԱմաւուստղայ մի՝ որոյ 'ի լանջացն վերն երկու գլուխ էր և չորս ձեռք և 'ի վայրն միաւոր, և ապրեցաւ երկուքեամբ. 'ի յուտել միոյն ոչ ուտէր միւսն. և 'ի ննջել միոյն արԹուն կայր միւսն։ Եւ էր զի խաղային ընդ միմեանս և ծիծաղէին, և էր զի լային. և մինն քան զմիւսն չորս աւուրքք յետոյ մեռաւ։

Իսկ Թագաւորն Այրկադէոս գնաց 'ի ճանապարհս աստուածպաշտութեան հօր իւ-

րոց, զի էր ողջախոհ և պարկեշտ. և ազանէր 'ի ներքոյ ծիրանեացն այծեայս և էր առաքինասէր և բարեսէր յոյժ. ըստ որում եւ ածել զՅովհան 'ի Այնտիոքայ Սուրոց փառաբեալ համբաւովն որ զնմանէ գայր։ Եւ յորժամ եառեալ զնա, գտաւ, (Եգիպտոս) տասնապատիկ բանիւք, և նշանօք, և սրբութեամբ ըստ որում եգին զնա եպիսկոպոս Կոստանդնուպոլսի. բայց յոմանց անգոսնեալ լինէր վասն ոչ յառակագոյնս խօսելոյն զառաջինն 'ի բարբառն Յունաց. զի Սուրի էր 'ի հօրէ կողմանէ և այնու էր վարժեալ լեզուաւ։ Այս եկայ եպիսկոպոս Եւթն ամ և առաւ յաքսորս ամս երիս և հանգեաւ 'ի կողմանս Հայոց ամաց յիսուն։ Այս յորմէ հետէ մկրտեցաւ ոչ էարբ գինի և ոչ ծէր ծաղեցաւ և ոչ երդուաւ, և ոչ երդմնեցոյց, և ոչ զաբ նզովեաց. և ոչ 'ի տեղի սպասուոյ ուրեք ընթացաւ յորժամ մեծարէին։

Եւ յորժամ եթթայր յաքսորս եդ զձեռն 'ի վերայ եկեղեցւոյն և ասայ ողջ մնա սուրբ Նիկեղեցի բնակարան փառացն Աստուծոյ. և մի մոռանար զաշխատութիւնս իմ, քանզի 'ի պարգեւացն զոր տուի յԱստուծոյ՝ յաւելի 'ի դանձս քո գիրք ութ հարիւր, ճառս երկոտասան հազար։

Digitized by Google

Յայնմ ժամանակի թագաւորեաց Պարսից Աշտաճատ։ Եւ արքայ Արկադ հիւանդացաւ. և ետ քարոզել զորդի իւր զԹէոդոս թագաւոր ուղղն ամաց։ Եւ զի Մնորիոս որդի ոչ ունէր և նա միայն էր ժառանգ թագաւորութեանն երկեաւ 'ի տղայութենէն Թէոդոսի, գրեաց կոտակ և յանձնեաց զմանուկն Աշտաճատ. և կատարեցաւ 'ի Տէր թագաւորեալ ամն երեքտասան։

Եւ լուեալ արքային Պարսից առաքեաց դաստիարակս մանկանն այր իմաստուն եւ սպառնալիս. եթէ ոչ միամտութեամբ ծառայեսցեն մանկանն Թէոդոսի։ Եւ էր խաղաղութիւն ընդ Պարսս և ընդ Հռովմայեցիս. և աճեաց Քրիստոնէութիւնն 'ի Պարսս 'ի ձեռն Մարութայի Եպիսկոպոսի երթեւեկութեամբն անդ։

Մեռաւ և Մնորիոս 'ի Հռովմ. և ոչ եթող որդի. և թագաւորեաց Կոստանդին ազգական նորա։ Եւ յետ սակաւու նա մեռաւ 'ի բռնակալէ ումինէ նենգութեամբ։

Եւ Թէոդոս կացոյց 'ի Հռովմ Կեսար զՎաղենտիանոս հօրաքեռ որդին իւր. ընդ նմա առաքեաց և զմայր նորա. և յետ այնորիկ առաքեաց նմա թագ, որ թագաւորեաց ամն երեսուն երկու։

Իսկ Թէոդոս էր այր պարկեշտ և չորա-
կեր, որ և զամենայն աւուրս պահոց ան-
ձէթ և անգինի էր սեղան նորա։ Այս զԲեր-
ոնի եպիսկոպոսին զաղտեղեալ մաղեղէնն
առ ինքն խնդրեաց յետ վախճանի նորա. և
զգենոյր զնա զամենայն գիշեր։ Իր և անսիւ-
կալ այնչափ որ յասեն յոմանց եթէ վասն
էր Թոզուս զմահապարտան կենդանի. ասէ
այդ Աստուծոյ է գործ և կարողութիւն ը-
պանանել և կեցուցանել, և մեզ երանի
թէ կարէաք աղաչել զՏէր այսրէն դարձու-
ցանել զվախճանեալն Թող թէ զկենդանի-
սըս յաւելուլ 'ի մեռեալսն։

Յայնմ ժամանակի մեռաւ Աղուանստ,
և Թագաւորեաց Պարսից Ահրհարան որդի
նորա ամս քսան երկու։ Իր եբարձ զդաշն
հօրն իւրոյ, և արար պատերազմ ընդ Թէո-
դոս. և աղօթիւք նորա յաղթահարեալ լի-
նէին Պարսիկք և սատակեալք և գերեալք։

Յորում ժամանակի առաքինացաւ Ակակ
Ամթայ եպիսկոպոսն գնելով զգերեալսն 'ի
Պարսից և անդրէն առաքելով. այլ և զսպաս
եկեղեցւոյն ծախեաց 'ի պէտս գերեացն. վա-
սն որոյ գովեցաւ հաւատ նորա 'ի Պարսս.
և խնդրեաց զտես նորա Թագաւորն Պարսից.
և յոյժ մեծարեաց զնա 'ի փառս Քրիստոսի։

Digitized by Google

Յայնմ ժամանակի անուանիք էին Միմոն սիւնակեաց յԱնտիոք. և Մօր պարտաւ մաւ (1) 'ի սահմանս փոքր Հայոց։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Նեստորի հերձուածին։

ՅՈՐՈՒՄ ժամանակի ածաւ յԱնտիոքայ 'ի Կոստանդնուպօլիս Նեստոր եպիսկոպոս. և էր երէց նորա ոմն Անաստաս անուն։ Սա յաւուրս միում խօսեցաւ յամպիոնն նոր հերձուած, ասելով զՄարիամ մարդածին. և ոչ Աստուածածին. և պակեաւ ժողովուրդքն և ակն ունէին պատուհասիլ նմա 'ի Նեստորէ։

Իսկ անմիտն Նեստոր օգնեալ 'ի դիւաց հաճեցաւ յստացեալն և տարածեաց զնա ընդ երկիր։ Վասն որոյ եղեւ մեծ Միւնհոդոս յԵփեսոս 'ի քսան և մի ամին Թէոդոսի. և յեւթն հարիւր քառասուն երկուքթեւին Աստուծոյ. և 'ի Բրիտոսէ չորս հարիւր քսան երեք։

Եւ ժողովեցան անդ հարիւր ինսուն երեք եպիսկոպոսք և քահանայք և կրօնաւ-

(1) Մի օրի Մաւրպաւքսաւմ։

առաքք յոյժ բազումք և գլխաւորք էին այսքիկ. 'ի Հռովմայ Արկադէ և Պրոկրիոս եպիսկոպոսք փոխանորդք Կեղեստիանու Հռովմայ Պապուն։ Կիւրեղ Աղեքսանդրիոյ, Մեմնոս (1) Էփեսոսի, Յովհաննէս՝ Անտիոքու, Ակակ՝ Մելտենոյ, Յոբնաղիս՝ Երուսաղեմի։ Իսկ Սահակ հայրապետն Հայոց (2) անպարտապէս լեալ գրեայ թուղթ հաւանութեան զոր ինչ և սահմանեսցեն։

Եւ արարին ամենեքին նզովս 'Նէստորի բայց Յովհան Անտիոքայ, և քսան և վեց (3) եպիսկոպոսք ընդ նմա ոչ հաւանեցան. և առին նզովս և նոքա ընդ 'Նէստորի։

Եւ թագաւորին հրամանաւ տուաւ յաքսորս 'ի Խուժաստան Պարսից։ Եւ ապա զղջացեալ Յովհանեանքն եղեն ընդ Կիւրղի խոստովանել զանդիտութիւնս իւրեանց եթէ ինչ այնպէս 'Նէստորիոս։ Եւ միաբանեալք 'ի միասին ասացին կատարեալէ ուղղափառութիւնս (4)։

(1) Երկու օրի՝ Մեմնոն։

(2) Մի օրի. Սահակ հայրապետն Հայոց և Մեսրովբ վարդապետ անպարտապէս լեալ գրեցին թուղթ։

(3) Մի օրի. քառասուն և վեց։

(4) Մի. օրի. յանէր և այսպէս. և փառաւորեցին 'ի մի բերան զսուրբ կոյսն Մարիամ Աստուածածին. և գաւանեցին զսուրբ Երրորդութիւնն մի Աստուածութիւն Հայր, Որդի և Հոգի սուրբ. և նզովեցին զգովանդակ 'Նէստորականքն, և 'ի զատ բաժանեցին։

Արդ որ ոք յայսմ հետէ այլ նոր հաւատս և դաւանութիւնս դնէ թագաւոր կամ եպիսկոպոս, կամ ժողով, եղեցի նզովեալ։ Այլ (1) Նիկիայն կացցէ մինչեւ ցկատարած աշխարհի։

Իսկ որք նզովեցան զկնի Նեստորի Էֆեսայոգքիկ. Թէոդորիտոս՝ Կիւրիս քաղաքի եպիսկոպոս՝. Ընդրէ՝ Սամոստիայ. Աղեքսանդրոս՝ Մմբեճայ, Արիանէ՝ Սրոյ, Յովհաննէս՝ Կիւլեկիոյ, Ռեթոիոս՝ Տարսունայ (2). և այլք ընդ նոսա։

Իսկ 'ի տեղի Նեստորի եդին եպիսկոպոս զՍաքսիմոս։

Իսկ 'ի քան և ինն ամի արքայութեան իւրոյ Թէոդոս լուաւ. զաղմուկն Փլաբիանոսի եպիսկոպոսի Կոստանդնուպօլսի. և զնորոյ վանքի վանապետի. և ետ հրաման երկրորդ անգամ ժողով լինել Յէփեսոս, զկնի ուրեմն առաջնոյն։

(1) Մի օրի. յունարէն ապոգրաֆ Այլ երեք սուրբ ժողովքն կացցէ. Եփեսոսի և Կոստանդնուպօլսի, և Նիկիոյն. զի առաջին Սուրբ ժողովն Նիկիայ՝ Թագաւոր Կոստանդիանոս, և Կոստանդնուպօլսոյ ժողովոյն մեծն Թէոդոս Թագաւոր. և յայս ժողովս Եփեսոսի փոքր Թէոդոս Թագաւոր. և այլ թէ եղեցի ուրիշ. եղեցի նզովեալ յԵրրորդութենէն։ Այլ հինն այս է, և շինեսցեն 'ի վերայ այսր հիմանս։ Իսկ որ նզովեցան զկնի Նեստորի . . . .։

(2) Երկու օրի. Տարսնայ։

Digitized by Google

Իսկ Թագաւորն գրէ Թուղթ առ Դէ-
ոսկորոս փոխանորդն Կիւրղի զայս օրինակ։

Լուսաւկարտոր կայսր Թէոդոս և Վաղե-
ոիանոս յաղԹող Թագաւորք հօրդ սրբոյ
Դէոսկորեայ եպիսկոպոսի ինդալ։

Դիտելի լեցի սրբութեանդ քո զի ար-
մատն դառնութեան Նեստորի շառաւիղ
եղաց առ Փլաբիանոս. և Անեայ կարծիքն
առ Լուտիքէս վանական, որպէս և լուաք
'ի մերոց գիտնոց. և գործդ այդ հոգեւոր
մշակութեան ձեր է սրբել զեկեղեցի անա-
բատ հարսն Քրիստոսի. յաղագս որոյ փու-
Թա 'ի Թիկունս հասանել որոմութեան մօր
քո երկնաւոր առագաստին. և բերցես ընդ
քեզ տասն մետրապոլիտս և տասն եպիսկո-
պոս բանաւորս որ կարող են զՋահն հաւա-
տոյ ուղղափառութեան վառել և դնել 'ի
վերայ աշտանակի, յուրախութիւն երկնա-
ւորաց և երկրաւորաց. և 'ի գալն քո 'ի Պա-
ղեստինէ ածցես անուի տասն եպիսկոպոս 'ի
Փղշտացւոցն և զՅոբնաղիս եպիսկոպոսապե-
տն Իրուսաղեմի։ Իսկ մի (1) բերցես զՀի-
ւանդացեալն 'ի հաւատս առ Կիւրղիւ. զՊ-
Թէոդորիտէս և զայլն որք ընդ նմա. եւ
Յուլիոս Հռովմայեցի առ մեզէ։ Այս ինչ

(1) Ոմանք՝ ասեն զմի։

Digitized by Google

զտեղն Լեւոնի որոյ տուամարն զոր գրէ առ ոմանս՝ ասեն ոչ է հաճելի. այն զոր ետ բերել ի ժողովն, որ առ Կիւրղիւ, զոր ոչ ընկալաւ։ Յետ ած ընդ քեզ զմեծ ճգնաւորն զհայր անապատի Մաւրպարսամա փոխանակ վանօրէիցն արեւելից. զի և մեք առաքեցաք աղաչել զնա, զի հոգի Աստուծոյ գոյ ի նմա և յոյժ ատեաց սա զՆեստորիոս և զտուամարն Լեւոնք։ Յետ զայս արարեալ ողջ եկեալ ցեսս աջողեալ ճանապարհաւն ճշմարտութեան։

Յետ առեալ Դիոսկորոս զթուղթն ցաւեաց նմա վասն իրացն. և փութացաւ յոյժ և կատարեցան խրքն, և եկն Յիպեսոս. և եկին առ նա հրաւիրեալքն. և եղեւ թիւն հարիւր քսան (1) եպիսկոպոսաց։ Յետ գլխաւորք էին այս, Դիոսկորոս՝ Աղեքսանդրի (2). Յովնաղ՝ Երուսաղեմի. Դոմնոս Անտիոքու. Յեւստաթէոս՝ Ինբրատուոյ. Թէոդուրոս՝ Կեստրու Հայոց. Յեսեբիոս Սելեւկիայ (3). և Մաւրպարսամա գլուխ վանականաց. և արարին քննութիւն. և գտին զԹլաբիանոս համաբան Նեստորի։

(1) Երկու օրի. հարիւր քսան և ութ։ Մի օրի. հարիւր տասն։

(2) Մի օրի. Աղեքսանդրացի։

(3) Մի օրի. Կիւլիկիոյ։

Իսկ Լուտիքէս նզովեաց զհերձուածն իւր բայց ոչ եկաց 'ի բաց յաղանդէն. զի առ ա-չքաւ ասէր զանտեսութիւն Տեառն մերոյ. և նզովեցաւ 'ի ժողովէն։

Եւ Փլաբիանոս արարեալ էր գրով ըգ-խոստովանութիւնն իւր. և գտաւ 'ի նմա ձեռագիր Խալի Մելեւկիոյ եպիսկոպոսին, և Յուլիանոսի Հռովմայեցւոյ. և զԵւտո-կոսի Կիպրացւոյն, և Մելեւկիոսի Լմեսացւոյ. վասն որոյ յընթեռնուլն զգրեանսն մի-ձայնեալ բազմութեանն ասեն. այրեցէք, այրեցէք զանաստուած տումարդ. և եղի-ցի նզովեալ Փլաբիանոս, և հաւանեալքն նմա։ Եւ ընկեցին զնոսա յաթոռոյ։

Օգնի ապա զԻոմնաս Նստիոքացի, և-եւթն եպիսկոպոս 'ի հնազանդելոց նորա. զԻրինոս՝ (1) Արոյ եպիսկոպոս. և զԿիմոս զՇա-ալայ՝ և զԹէոդորիտոս Կիւբիսոյ(2), և զԲաս Լուհայոյ, և զՄեթերիոս Թմուզոյ, և զԻա-նիէլ Խառանու. և նզովեցին ընդ նոսա և զոմանսն Լեւոնի զարհամարեալն յառաջին ժողովէն. և արժանի ոչ համարեցան ընթեռ-նուլ։

Եւ գայր թուղթ աղաչանաց 'ի Թագաւ-

(1) Մի օրի. զԵրինիոս. զԵրինոյ։
Մի օրի. զԵրինոս. Մի օրի.
(2) Մի օրի. Կիւրիոյ։

Digitized by Google

ւորացն ոչ յաւելուլ և ոչ պակասեցուցանել յերից ժողովոյն սահմանաց. այլ ըզնոյն հաստատել զերրորդն պատուել 'ի փառս սրբոյ Յրրորդութեանն. զոր և արարին իսկ. և գրեցին խոստովանութիւն ոնտեսութեանն Քրիստոսի։ Մի դէմ, մի բնութիւն, մի Քրիստոս, որոյ մի կամք, և մի գործք. նոյն Աստուած և մարդ կատարեալ այսինքն հոգի, մարմին, միտք ճշմարտապէս և ոչ կարծեօք. և յայսմանէ հրաժարեալքն եղիցին նզովեալք։

Իսկ յետ արձակման գնացին առաքեալքն 'ի Լեւոնէ և պատմեցին զեղեալն. և խոցեցաւ խորապոյնս. և առաքեաց կոչեաց ըզՓլաբիանոս և լուաւ զխոստովանութիւն նորա, և յոյժ հաճեցաւ։

Եւ ասաց Փլաբիանոս ցԼեւոն եթէ Կեստորական ասաց զքեզ Դիոսկորոս և ընդ նմին նզովեաց զքեզ. և զամենայն հաւատնեալսն քեզ։

Իսկ Լեւոն անկաւ 'ի տարակոյս. խորհէր հնարս ընկենուլ զԴիոսկորոս։

Յայնմ ժամանակի 'ի պատճառս աղօթից գնացին 'ի Հռովմ կին Թագաւորին եւ Պօռքէր (1) քոյր նորա. և ըստ իրաւանց պա-

(1) Ուստք՝ Պօղքէր։

տուեցան 'ի Վաղենտիանոսէ Թագաւորէն, որ էր հօրաքեռ որդի փոքր Թէոդոսի, և յամենայն բնակչացն Հռովմայ. և առեալ տանէին զնոսա 'ի տաճար սուրբ առաքելոցն. և ելին ընդ առաջ նոցա ուխտ եկեղեցեաց, և Լեւոն ոչ էր ընդ նոսա. այլ ընկէց զինքն 'ի ներքոյ վարագուրին յերեսաց կուսէ, և սկսաւ լալ. և վերացուցեալ զվարագոյրն հարցին ողբանօք և պատկառանօք զպատճառն, և բուռն հարեալ նրա տուցին զնա, և ասէ ցնոսա. պատառեցայ Դիոսկորոս զհաւատս ուղղափառս, և նա խատեաց զաթոռ սուրբ առաքելոցն։

Եւ նոքա մխիթարեցին զնա և ասեն. լի՛ և ըստ կամաց քոց հայր զոր ինչ և հրամայես։

Եւ կալաւ. զնոսա բարեխօս առ Թագաւորն դարձեալ հրաման տալ տիեզերական ժողովոյ։ Եւ գրեաց ընդ նոսա Թուղթ աղաչանաց, զայն առնել, զի լուիցեն ասէ ամենայն տիեղերք զձեռագիրն իմ և քննեսցեն, և մի դնեսցեն զիս ընդ նզովիւք Նեստորի չարափառի։

Իսկ իբրեւ լուաւ Թագաւորն՝ հրաժարեաց 'ի խնդրելոյն և ասէ, ես հաւատացեալ և հաւանեալ եմ ընտրութեանն Կիւրղ

Digitized by Google

ղն և Դիսկորոսի. որք գատեցան զ Եւտն զուգաբան Նեստորի, և այն կացցէ սահմանն հաստատ զոր նոքայն եդին։

Եւ մնացեալ Թագաւորն երկիւղած յառաքելական հիման հանդերձ 'ի Քրիստոս, յիսուն ամաց, Թագաւորեալ ամն քառասուն երկու։

Եւ էառ զԹագաւորութիւնն Մարկիանոս քեռորդին Թէոդոսի, այր ծեր, ոգէոր և առանց դպրութեան, ամս վեց, ընտրութեամբ Պուլքերայ քեռ Թագաւորին որ և պոռնկութեամբ անկեալ էր ընդ նմա, 'ի հաւատաւորաց կարգի գոլով. և յառաջին ամին Թագաւորութեան նոցա գայ նոյն Թուղթ աղաչանաց 'ի Եւտնէ ժողով առնել որքան և է հնար յոլովութիւ (1) քան զԴիոսկորոսին 'ի պարծանս ինքեանց. և յիշեցուցանէր Պուլքերայ զխոստումն իւր և ասէր. աւադիկ առաքեցի առ ձեզ զտոմարդիմ պատուելի. զի նախ քան զգումարումն ժողովոյն առաքիցէք 'ի կողմանս Լիբիոյ առ ամենայն եպիսկոպոսունսն. և պահանջիցէք ձեռնարկս, զի մեզ սիրս ստասցուք։

Եւ նոքա յորժամ լուան հաւանեցան սակս երկու պատճառի, մի՝ վասն երդման

(1) Մի օրի. յոլով. ո. մանք՝ յոլովութիւն։

Digitized by Google

և խաստմանն Պողքերայ, և երկրորդ՝ վասն երկիւղին Վաղենտիանոսի և Հռովմայ, և նորին Լեւոնի. զի ոչ էր օրէն առանց նոցա թագաւոր օծանել 'ի Կոստանդնուպօլիս. յորմէ յոյժ էին զարհուրեալք, մի վարային զայն ոչ ներեսայ քնել ըստ օրինացն։

Իսկ այսու կամեցան հաճել զկամս նոցա ընդ ինքեանց. վասն որոյ գրեցին թուղթս աբբուռնի հրամանաւ ազաչանաց, այլ և սաստիւ և սպառնալեաւք եթէ ոչ հաւանեսցին ձեռագրել 'ի տոմարն Լեւոնի։ Եւ առաքեցին ընդ աշխարհն պատուաւոր ապասանք աբբուռնի. և 'ի Հռովմայ եկեալ եպիսկոպոսք եռուն ձեռագրել հաւանեցան. և դարձուցին առ թագաւորն և առ Պողքեր զտոմարն յորոմ կայր չորս հարիւր քառասուն և վեց եպիսկոպոսի ձեռագիր. և խլեն դացին յոյժ։ Ձեռագրեցին ապա և ինքեանք։

Եւ ապա առաքեցին հրաւիրակս ընդ ամենայն երկիր բաց 'ի Հայոց, որ ոչ էր ընդ իշխանութեամբ նոցա. և յայնմ ժամանակի հայրապետն (1) ասեն վախճանեալ էր. և

(1) Ասա ամենայն օրինակք չգիտեն զանուն Հայրապետին, միայն մի օրինակ դնէ զԱհակ Հայրապետն։ Իսկ պատմութիւնք հաստատեն յայսոսիկ պատրս և ըզ-

այլ ոչ էր եղեալ, ոչ առաքեցին առ նոսա, և եղեւ ոչ առանց խնամոցն Աստուծոյ. զի նախնեացն յիշատակն պահեցի առ նոսա։

Սակայն Ժողովեցան եպիսկոպոսք եւթն հարիւր, որոց գլխաւորք Տրոմոպիկոս, Լ ը ղբաս, Լ ունկինիոս, Սկոզայոն փոխանորդ Լ եւոնի Հռովմայեցիք, Յոբնաղ Երուսաղեմի, Դիոսկորոս՝ Աղեքսանդրի, Դոմնոս Անտիոքայ, Վասիլոս՝ Սելեւկիոյ, Պետրոս՝ Վ իրիայոյն՝ եպիսկոպոս Դաղացւոցն՝ և գլխաւոր Փղշտացւոցն՝ և Թէոդորիտոս զոր եդին գլուխ Ժողովոյն զնզովեալն եբկիցս անգամ, ցոր սուտս սուրբն Դիոսկորոս ճնչէ այդ անօրէնութիւնդ զոր առնէք. ոչ յիշէք զբանն Պօղոսի, եթէ զոր քակեցին միւսանգամ շինիցեմ, յանցաւոր անձամբ գտանիցիմ, և զիարդ զքակեալդ անիծիւք դնէք շինիչս՝ զմեռեալդ Աստուծոյ։ Լու կցորդեաց նմա Յոբնաղ և շարժեցան ամենեքեան. և եղեն ընդ Դիոսկորի, և ասեն, նզովեաց մեծըն Կիւրեղ եթէ զիցէ ոք ինչ նոր օրէնս. և զնոյն ասեմք և մեք եղիցի նզովեալ նորա զիրն հաւատ զոր ոչ եդին առաքեալքն.

Յովսէփ կաթուղիկոսն իսկ վախճանեալ զյաջորդն Սահակայ, Պարթեւ։ Եւ յայսոսիկ աւուրս յաջորդէ ըզգահն կաթողիկոսութեան Մեքենէ կաթուղիկոս։

եղեցին նղովեալք, նղովեալքն 'ի Կիւրղէ։
Եւ տրտմեցաւ Թագաւորն և Պողքեր. և սկսան փաղաքշել սպասաւորելով անձամբք և տալով կաշառս. և ետ Յորնաղայ 'ի Փը զտուացւոց յաշխարհէն երիս (1) քաղաքս. և ած զնոսա 'ի հաւան. գնացին ընդ նմա և չորս հարիւր քառասուն և վեցքն, որ ձեռագրեալ էին 'ի տոմարն։ Եւ մնացին ընդ Դիոսկորի երկու հարիւր յիսուն և չորս, որք կապեցան չարչարեցան աքսորեցան և մեռան և ոչ մեկնեցան 'ի սիրոյն Քրիստոսի։ Եւ այլքն որք ընդ նմա՝ յորոգայթս գնացին խաբէութեամբ, զկոյսն Աստուածածնին ասացին. և երկու բնութիւնս Քրիստոսի յատկացեալս, զի թէ յատկական բնութիւնքն ըստ նոցա չարեացն, զնմոդ իցէ կոյսն Աստուածածնին. յաղագս որոյ լցան տիեզերք խռովութեամբ. և երկու ամ և կէս յամեաց ժողովն։

Եկին ոմանք բանիբուն փիլիսոփայք 'ի Հայոց (2). և մեղադրեցին և յաղթահարեցին զԷոնեանն (3) Աստուածաշունչ գրովք

(1) Երկու օրի. երկաս քաղաքս. ոմանք՝ երկիցս քաղաքս։

(2) Մի օրի. Դշանակեալ ունի 'ի լուսանցն Մովսէս և Դաւիթ։

(3) Մի օրի։ զԷուենեանս։

և փիլիսոփայական ոճով. և գնացին անեղբ կիւղ համարձակութեամբ։

Իսկ նզովեալքն 'ի Կիւրղէ և 'ի Դիոսկորոսէ և պատուով և ճոխութեամբ գնացին յամթոռաս իւրեանց. զօրականաք և պարգևաք։

Իսկ զՅոբնաղ ոչ ընկալաւ Նշրուստաղէմ. այլ եդին իւրեանց Պատրիարք զԹէոդորոս և հաւանեցան նմա։

Բայց Յոբնաղ գրեաց զիրսն առ Մարկիանոս, և նա առաքեաց զօրս. և եհան ընդ Թէոդորոս. և հաստատեաց զՅոբնաղիս. որ և շրջէր ընդ Պաղեստինէ հրէիւք և հաւանեցուցանէր աղանդին. և զոչ հաւանեալսն չարչարէր, կոզոպոռէր, սպանանէր 'ի ձեռն Հրէից։

Բայց միայն պատկառէին 'ի Պետրոսէ Պաղեստացոյն եպիսկոպոսէ վասն առաւել առաքինութեան նորա զոր ասեն զնա որդի լեալ արքային Վրաց, լեալ պանդուխտ (1) 'ի Կոստանդնուպօլիս որ և ուսաւ զաստուածաշունչ գիրս. յօժարեցաւ 'ի խիստ կրօնս և եղեւ հոչակաւոր, և հարկեալ զնա արքային քահանայ, և արքեպիսկոպոս Պաղեստինոյ որ նստէր 'ի Դաղայ և ոչ ոք իշխէր ընդդիմանալ նմա։

(1) Երկու օրի. Պատանդ։

Այս գրեաց Թուղթ 'ի Հայս և երանեաց նոցա վասն ոչ լինելոյ նոցա 'ի ժողովն. և ասաց որպէս երբեմն աշխարհդ այդ տապա նաւն եւ զսերմ մարդկութեանս ամենայն երկրի, նոյնպէս տալոց է և սերմ ուղղափառութեան ամենայն աշխարհի, արդ՝ պինդ կացէք յանսասան վէմն Քրիստոս որդեակք իմ սիրելիք, և ողջ լերուք յաւիտեան։

Այս Պետրոսի սրբոյ աշակերտ ոմն Յովհան անուն միայնակեաց և տեսուղ գրեաց բան եւթանասուն երկու (1) զոր գիտէրն, և զոր լուան նախատեսութիւնս ինչ, որ և նախ քան զժողովն. և յետ ժողովոյն ցուցանէ. և ասէ թէ ամբարտաւան ժողովն Քաղկեդոնի և անօրէն 'ի բարկութենէն Աստուծոյ եղեւ և 'ի թողլոյն 'ի ձեռաց. և ոչ 'ի յազդմանէ Հոգւոյն սրբոյ որպէս Նիկիոյն, Կոստանդնուպօլսին և Էփեսոսին. զոր մեք կամիմք ասատէն 'ի տեղւոջս կարգել յօգնութիւն ուղղադաւան հաւատացելոց։

Եւ թէպէտ յետոյ և առաջոյ եղեւ իրքն, մեք մի հաւոցուք զբանս սուրբ առն Աստուծոյ Յովհաննու որ է այսպէս։

(1) Ամենայն օրի. միաբան և. եւթանասուն դնեն 'ի բառանն եւթանասուն երկու, նը՝ 'ի կարգի։

Ա. Պատմեաց մեզ հայրն մեր և հայրապետան սուրբն Պետրոս. թէ սկիզբն աղանդոյն Քաղկեդոնի՝ Նեստորիան եղեալ. քանզի էր ինքն ասէ՝ ի Կոստանդնուպօլիս՝ ի տաճարի սրբոյն քառասնիցն։ և էաք յաւագ եկեղեցին. հայեցաւ Նեստոր՝ ի պատկեր Տիրամօրն. և ասաց. ով Մարիամ՝ մի պարծիր թէ զԱստուած ծնար։ զի գուն մարդ ես և մարդ ծնար որպէս ասաց քահանայն իմ. և առ ժամայն հարաւ՝ ի դիւէ և զարկաւ զգետնի։ Եւ բարձեալ զնա տարկաւաքացն տարան յարկս իւր. և այս եղեալ սկիզբն պղտորման Եկեղեցւոյ։ Թէ և սակաւ մի լռեաց Նեստոր յետ ապաստահասին։ այլ ոչ ելթող զանօրէնս թիւնն։

Բ. Պատմեաց ինձ և նոյն սուրբ հայրն իմ վասն Պալակիանիսի (1) Ուռհայեցւոյ. որ էր սուրբ ճգնաւոր. և ունէր հոգի մարգարէութեան, ելթէ լուաւ նա զէջերաւանցն Հիւբասայ։ և յանդիմանեաց զնա. և ոչ լուաւ նմա. և զայրացաւ սուրբն և եկն՝ ի Փիլիշտա. և կայր անդ լաւ թեամբ։ Եւ գայր առիս՝ ի Գազայ օր ըստ օրէ վասն հոգեւոր իրաց ինչ։ Եւ յաւուր միում եղեւ՝ ի զարմացման (2) ժամն ինչ. և խնդացաք ելթէ երեւումն ինչ եղեւ նմա. և հարցեալ մեր զպատճառն, յետ այնորիկ ասաց. յառնէ թագաւոր յետ եւթն ամի Մարկի (3) անուն. և առնէ ժողով և հաստատէ զՆեստորին, և կրեմք ես և դուք զվիշտս՝ ի նոյն կատարիմք։

Գ. Դարձեալ նոյն սուրբ Պալակիոս յաւուր միում եղեւ՝ ի տեսլեան և ասաց. վայ Պողքէր. վայ Պողքէր. և ժողովեցան բազումք՝ ի հարցանել. և ասէ Պողքէր որ նաւիրեաց զանձն Աստուծոյ պառնկեալ անկանի յԱստուծոյ և լինի կործանիչ ուղղափառութեան (4)։

Դ. Պատմեաց նոյն այլն Պալակիոս ելթէ գնացի ես երբեմն յԵրուսաղէմ և գտի անդ զսուրբն Աստուծոյ զԵ-

(1) Մի օրի. Գլաֆիանոսի։ նոնն։
(2) Մի օրի. ՝ի զարմացման։
(3) Երիս օրի. Մարկիանէ ա-
(4) Մի օրի. հաստատոյ։

ելիսս(1) եպիսկոպոս Ճգնաւոր և առաքինի. և սուրբ Պամֆիլ-ի սարկաւագն աղօթէր 'ի սուրբն Դաղդոնայ. և եղև 'ի զարմացման. և յետ աղօթիցն ասաց, էզբ՝ այս Եւլիսս ոչ պատուհասաց է յամենեցուն, լինի ժողով 'ի Քաղկեդոն. և քանոնուն զնա յաքսորս վասն ուղղափառ հաւատոյ և յայսոսիկ մեռանի։

Ե. Դարձեալ նոյն սքանչելին Պաղակիոս յաւուր միում առաց ընդ հայրն Պետրոս և ցՅովսեփ ներքինի. այժմ ընթերցարանք զգրեանդ, զի զգուշացուսցիք՝ զիօանն (2) Քրիստոսի զոր յանձնեաց ձեզ։ Զի գան աւուրքս որս ոչ պարապեմք 'ի հալածանաց։ Եւ ասէ ցսուրբն Պետրոս, մեծ որմանութիւն է կրելոց սուրբ Եկեղեցի յետ աւուրց. եւ յորժամ մինիցի յիշէք ապաքէն. և ինքն ակաւ աղօթել։ Տէր իմ Աստուած Յիսուս Քրիստոս, մի տանիր զիս 'ի ժամանակին յայն. ոչ փախչիմ 'ի հալածանաց. այլ ոչ կամիմ տեսանել զանարգանս Եկեղեցւոյ քո։ Աստ որպէս և կամիս առ զոգի իմ յինէն. և ուր և կամիս ժողովեա զիս։ Եւ եղէւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ գնալ նմա 'ի տեղի իւր. և կալաւ զնա ցաւ, և պատահեաց նմա այր մի սուրբ, և Աստուծոյ կամեցեալ ընուլ զաղօթսն Պաղակիոսի, անկաւ առաջի նորա և ասէ. հայր, յիշեա զիս յաղօթս, և մխիթարեցար. և ազդ արար այրն մերձակայ գեղջն. և եկեալ տարան զնա և պատուով թաղեցին։

Զ. Պատմեաց մեզ Յովհաննէս քահանայն Աղեքսանդրացի, եթէ մինչ մանուկն էի ես կամեցայ գնալ 'ի մեծ քաղաքն Աստիոս յուսումն իմաստասիրութեան. և մնի յայն ուր էր մարգարէն մեռեալ. և ակայ աղօթել, և ինդրել զկամս Աստուծոյ բարեխօսութեամբ սուն Աստուծոյ. և եղէւ առ իս ձայն, որդեակ չկայ, խաղաղութիւն չկայ ժամանակ բարւոյ, զի յառնէ թագաւոր Մարկիանէ անուն, և առնէ ժողով որ ուրանան զմահն Աստուծոյ խա-

(1) Մի օրի. ղեւիս։ փգիպոսրիւմբ հասան՝ ղիսասաց
(2) Ոմանք՝ ղհասան. Ինդրեա ընդ օրինակեալ։

չիւ, և ասեն մարդ խաչեցաւ. և յանձնէ պատրիարք Դիոսկորոս անուն որ կոչ ընդդէմ աղանդոյն՝ և 'ի նոյն մեռանիցի վկայութեամբ. և չիսոթ ժողովոյն ոչ գտապէ մինչև ցնեռանիս։

Է. Հայրն Զենոն 'ի Քրաղոս (1) գեղջէ Փղշատցիս ասաց ցայրն Ստեփաննոս, եթէ կամիս յաստուածութիւն գնասցարի գնա. և եթէ կամիս ինչ բարի առնել, արդ ապատանի ժողով լինելոց է խառնիչ Եկեղեցւոյ. և ինքն խնդրեաց 'ի Տեառնէ մահ, և վճարեցաւ ըստ ասելի իւրոյ։

Ը. Պատմեաց հայրն Անաստասիոս Պամֆիլացի գլուխ եղբարց, եթէ այր մի սուրբ բնակէր յանապատական խրջիթի։ Եւ եկն առ նա ասատանայ և ասէ ցնա. հնազանդեսա ինձ, և նա ասէ մի բարի քեզ, և ասէ ասատանայ չհնազանդիս, ահա առնեմ ժողով զի ամենեքեան հաւանին ինձ. և զայս ասաց, զի լցին զկամսն ասատանայի, ասելով թէ մարդ խաչեցաւ վասն աշխարհի. զի նա հաւանեցոյց։

Թ. Ի նմին ամի յորում լինելոց էր ժողովն, խաւարեցաւ արեգակն, և տեղեաց օդդ քարինս և հողս ընդ յերկիր, և էին քարինքն որպէս ձեռագործս մարդկան, և որք առին զքարինս 'ի ձեռս իւրեանց կուրացան Երուսաղէմ և 'ի Փղշտ։ Իսկ Եւսեբի առաքեաց 'ի Կոստանդնուպոլիս առ Եդոքսիայ զի անդ ոչ եղեւ, և գուշակեաց եթէ պատճառ խաւարման Եկեղեցւոյ լինելոց է։

Իսկ Պետրոս և Անդրեաս աշակերտքն իւր վկայեցին եթէ 'ի լինել ժողովոյն կուրացեալքն օծանէին զաչս իւրեանց արեամբ սպանելոցն վասն ուղղափառութեան. և լուսաւորէին 'ի փառս խաչելոյն Աստուծոյ։

Ժ. Ի նմին ժամու յորում զլիճգն եդին 'ի գլուխ Մարկիանեայ (2) խաւարեցաւ արեգակն և ասաց Մարկիանէ թէ այս նշանակս այս է որ մինչև 'ի յիմ թագաւորութիւնս խաւար էր, և արդ լինելոց է բարութիւն և լոյս, մի ինչ տրտմիք ընդ պատահմանս։

(1) Երեւ՝ գրի. 'ի Քրաղս։ Մարկիանէ։
(2) Ամենայն գրինակ՝ ասին

ԺԱ. Ի գմբէթ եկեղեցւոյն որ կայ 'ի տեղւոջ համբարձման տեսանն; կայր խաչ ոսկի. և 'ի լինել ժողովրդոյն յանկարծ սպրդեցաւ, և եղեւ փոշի և գրեցին 'ի Կոստանդնուպոլիս և տարածեցին խաչ պղնձի գնել 'ի տեղւոջն։

ԺԲ. Եւ յորժամ եղեւ ժողովքն վիճեին 'ի Կեսարիա թէ մարգն խաչեցաւ և եղեւ պատարագ նոցա միս և աթիւն մարդոյ, և ոչ կարացին ճաշակել. և պահեցաւ առ բազումս։

ԺԳ. Պատմեաց հայրն Եսայի եթէ ասաց հայրն Պողոս Եթոմիզացի որ հարիւր տասն ամաց էր 'ի Տէր. եթէ գինի քսան ամաց մեծ շփոթ լինի Եպիսկոպոսաց 'ի ձեռն Մարկիանեայ, որ թագաւորեաց մեց ամ. և յետ այնորիկ լինի տակաւ մի խաղաղութիւն, և դառնան վերստին 'ի նոյն չարիսն մինչեւ 'ի սուտ Քրիստոսն։

ԺԴ. Ասաց հայրն որ ասի երեք մեռելեան որ յԱնգլեայն Աղէքսանդրի (1) էր. թէ գնացի ես առ հայրն Եսայի և նա ուներ 'ի ձեռս իւր Սիրա (2) և միաբ իւր վերցուցեալ էր և յամենցի առ նմա. և պատասխանեալ իմ գարձայ. և կոչեաց զիս. և ասէ. Նիստ և գրեա թէ առ ըրն, Տիմոթէոս որ պաօր յաքարս է. յետ տակաւ դառնայ և կանգնէ զուղղափառութիւն զերկուս ամս, և ննջէ։ Եւ յետ նորա լինի արկաւագապետն իւր եպիսկոպոս և յաւուրսն յայնոսիկ լինի պատառաւմն մեծ որ աչ ողջանայ մինչեւ յերեւումն առ Քրիստոսն։

ԺԵ. Պատմեաց հայրն Պողոս անապատաւորն և ասէ 'ի հարանցն ասողմարդարէ, տեսանէր ժողովրդական Եպիսկոպոսս երկրի. և վառէին թանիր, և կարեալ լուսապակէր երիտասարդ մի, և ընկեցին զնա 'ի թանիրն և ծեփեցին. և յետ երից աւուրց տեսանէր կենդանի երեալ գիտիասարդն. և ասէ ցնա տէր. մի էին որ ընկեցին զքեզ 'ի հուրն. և՝ մի ետան զքեզ անտի. և նա ասէ Հրեայքն

(1) Մի օրի. յԱնդրէայն Ա- ղեքսանդրի։
ղեքսանդրի էր. այլ յանդրիան Ա-
(2) Երիս. օրի. սիրա։

Ղեռատրակունքն։ Քաղ'ՀԷդոնեայքն և Էպիսկոպոսքն այնք որ ասեն մարդ խաչեցաւ վասն աշխարհի. և այրեցին զԷկեղեցի իմ. և ծեր մի որ ոչ միաբանեաց ընդ նոսա փրկեաց յամենեւին յայրմանէ զմարմին իմ։ Եւ ասեմ ՚ի էր նա Տէր։ և ասէ. Դիոսկորոս։ զի որպէս Կիւրենացին էր Սիմոն որ երարձ զխաչն իմ, և Կիւրենայ աշխարհ է Լիբիոյ որ բառնան զխաչն իմ պարծանաց, ՚ի ձեռն Դիոսկորեայ և պահէն զուղղափառութիւն։

ԺԶ. Սուրբն Տիմոթէոս ՚ի ժամանելման իւրոյ պատմեաց եթէ մինչ մանուկն էի և երթայի յաւուր միում ՚ի դպրոցն պատահեաց ինձ այր մի լուսազարդ ծեր։ համբուրեաց զգլուխ իմ և ասէ ցիս երիցս։ ողջոյն ընդ քեզ Տիմոթէոս հայրապետ կատարելութեան։ դու լինիս պատճառողն աթոռոյ Քրիստոսի։

ԺԷ. Պատմեաց նոյն Տէմոթէոս։ եթէ գնայի ես ՚ի սեղանն ՚ի Սեղոյամ. և տեսի անդ վանք մի աւեր և ամենայն պտղաբերքն նորա գարձեալ էին ՚ի փուշ և այգիքն բերկտեալք ուռք և որթք։ և ասեմ զի՞նչ է այս. և ասեն ցիս։ այս վանքն է Յոբնազայ ուստի կուչեցաւ նա յեպիսկոպոսութիւն և եղեւ հակառակ Դիոսկորի ՚ի Ժողովն Քաղկեդոնի։ և կատարեցաւ առ նա բանն թէ եղիցի բընակութիւն նորա աւերակ և ՚ի յարկս նորա մի ոք լիցէ որ բնակիցէ։

ԺԸ. Յաւուրս աղուհացիցն շրջէր Յոբնազ ըստ առաջին սովորութեանն խրատել զնոսա և գնաց ՚ի դուռն տեղոյ մենաւորի և փակեաց ընդդէմ նորա. և նա երթեալ բախէր. և ասէ ցնա միայնականն գնա՛ տուա քրիստոնեայ(1)։ գնա՛ Յուդա մատնիչ, և նորա հեգնեալ ասէ պտՀքն տարեալ է զվնէան։ թոյլ տուք դմա և գնացին ամօթով։

ԺԹ. Անագոս մի յԵրուսաղէմ ՚ի Պրոպատիկէն ասեանէր զՏէրն զի մտանէր ՚ի տաճարն հրեշտակաւք, որք ուղեին լապտերս շինեալս, և ասէ Տէրն մոռացան զերբախտիան

(1) Ոմանք՝ տուա Քրիստոս.

քամ՝ ի զպարգևսն իմ. վասն քեզ եղկելի Յոբնազիոս արարեր զասունս իմ այդպս աւազակաց, բազոյ և պոռնկոց, և շնանոց, և բացատ տուաջի նորա խորհրդանոցն. և սկիզն էր ազատ-զեալ և փոշատեալ կոստալ ծառկեալ և սատց Տէրն հանէք զդա և ձգեցէք զի չէ դա իմ. և յԱնագոան ասէ եղ ասասի. և նա ասէ ողորմութեամբ օգնեա՛ ինձ Տէր. և վերացաս Տէրն. և լուսա Յոբնազ զբանն և զանգիտեալ երթէ համ-քաւեցէ տեսին, 'ի գիշերի աներևոյթ արարին զԱնագոան։

Ի. Յաւուրսն յայնոսիկ ոմն 'ի սրբոցն Պետրոս անուն եռեա զսուրբ խորհուրդն ապաստանեալ 'ի տեսլեան. և ոչ ելս հաղորդեցաս մինչև յօր մահուանն իւրոյ։

ԻԱ. Ոմն անապատաւոր Պօղոս անուն որ բնակիալ էր Յերուսաղէմ հեռագոյն 'ի քաղաքէն տասն և երեքն միլ. տեսանէր 'ի տեսլեան գաշտ մի և 'ի մէջ նորա բլուր մի. և 'ի վերայ նորա խորան մի. և 'ի վերայ նորա սիւն մի ոսկի. ա-կամբք և մարգարտով զարդարեալ. և ցոլմունք շառաւիղաց հրեղինաց հոսանէին 'ի նմանէ, և բազմութիւն զօրաց կա-յին նմա 'ի ապատս հապարք հազարաց և բիւրք բիւրուց։ Եւ եղեւ ձայն յերկնից, որ ասէր, նզովեալք եղիցին ամենե-քեան որ ասեն Քրիստոսի երկու բնութիւն. և շուրջքն ա-ստացին ամէն. և ազգք և լեզուք ամենայն լցեալ ունէին զգաշան ասասանեալք յոյժ։ Եւ եղեւ կրկին ձայն որ ասէր նզովեալք եղիցին որք բաժանեն զմին և զանբաժանելին. անխառնեալք են ուրացողք միութեանն. և միձայնեալ հաստ-բակ ասացին. ամէն եղիցի։ Եւ տեսանէր սուրբն ըղ-Յոբնազ զի անցանէր և ասէր. անցանեմ ընդ քեզ և ահն ոչ ունիմ տեսանել զքեզ 'ի ժողովն գնալոյ. 'ի պատերազմ երթալոյ կռիւել ասան զիսորհուրդն Աստուծոյ կամ մեռա-նել։ Ուրանալ ասան մեզ զհաւատն մեր, և զՄիմ-ին խոստովանել և զՀրեշտին։ և ասել ոչ էր Աստուած խաչեալն։

ԻԲ. Յետ այսորիկ տեսանէր նոյն ծեր զՅոբնազիս յանիկան մի կանգնեալ տեսացեալ իբրև զքարանի որ բա-

Digitized by Google

զանիան այրէ. և ասէ ցնա Տէրն ընդէ՞ր ես այդպէս. և նա ասէ, զի տեսանեմ զամօթ իմ. քանզի ասէի թագաւոր ժողովեմ սուտ Քրիստոսին. այն որ պատերազմելոց է ընդ բարեաւթիւն հողոյ. և իմացաւ Տէրն թէ ընդ մարդկային բարեաւթիւնս է պատերազմելոց՝ որ 'ի հողոյ է։

ԻԳ. Վանք մի էր 'ի սահմանս Տրապօլեայց և անուանի առաջնորդին Պամիս ըիսա որ 'ի հարիւր լեալ էր եպիսկոպոսաց աքանչելի վարուք։

Իսկ Վասիլիոս եպիսկոպոսն Սեբաստիոյ մինչ գնայր 'ի ժողովն, տարաւ և զնա աղաչանաք. և յորժամ հասեալ նա զի զառաջինն նզովեցին զերկոս բնաւթիւն ասողն, և դարձան ապրացան, և աքսորեցին զաւագրափառն, տրտմեցաւ զայրացաւ, խռովեցաւ, և առանձնացայց զինքն 'ի տան միոյմ, և. խնդրէր յԱստուծոյ արտասուօք զայդ և զդերեկ յարտնել նմա զոր արարին նոքա. և թէ զի՞նչ է հաճոյ նորա բարեկամացն. և երեւեաց տուրքն 'ի տեսլեան և տեսանէր տոմար մի ոսկեգիր 'ի կամպէ երկնից մինչև առ ինքն պարկեալ գրեալ ճարտար գրչի յերկուց կողմանց դոյա օրինակ. նզովեալ եկեսցի Ժողովն Քաղկեդոնի. ուրացան զիւ ։ ուրացան զիւ. նզովեալք եղիցին ։ նզովեալք եղիցին. և տեսեալ զայս 'ի գիշերի միում, եմուտ 'ի նաւ և գնաց 'ի տեղի իւր և պահեաց զբարեալքն իւր Տրապօլիս յուղղափառաւթեան ասա տասն և եօթն։ կրելով վիշտս ։ չ տակաւ 'ի Վասիլիսէ։

ԻԴ. Սուրբն Հայր եղբայրդ Դաւիթ վանքից 'ի Սեբաստիայ ասէ, թէ ոչ կարէմ հաւատալ եթէ Վասիլիոս անիկա 'ի ճշմարտութենէն, զի հնարհաւանակ և գիտուն էր. և յորժամ գարձաւ 'ի ժողովոյն. խնդրեաց յԱստուծոյ յայտնել նմա եթէ ուղիղ զճշմարտութիւնն. և տեսանէր 'ի տեսլեան զի մտանէր Վասիլիոս յեկեղեցին. և ժողովուրդն պատուէր զնա. և յորժամ էանէր բանալ զբերանն և ասել աղօթս. այր մի լուսաւոր մտեալ ընդ նմա. և ասէ զմտանն 'ի բերան նորա. և եհան զնա արտաքս և ասէ ։ չես ազատ

նէ, այլ որպէս դու դարձուցեր զԵլիսեդ յԱստուծոյ, դարձոյց և Աստուած զԵլիսս իւր ի քեզ։

ԻԵ. Դարձեալ նոյն Ստեփաննոս ինդրեաց ի Տեառնէ ցու ցանել նմա թէ զի՞նչ կոչի ժողովն Քաղկեդոնի. և ասէանէր զմի առաքելոյն Քրիստոսի. որ տանէր զնա յարքունիս ինչ, ուր կային եպիսկոպոսք ժողովոյն. և ասէ ցնոա առաքեալն Քրիստոսի, այս են ատելիքն Քրիստոսի. այս են ուրուցողք նորա. և եռ ի ձեռս նորա խարազան և ասէ, հան զամենեսեան արտաքս զԹշնամիսդ Ճշմարտութեան։

ԻԶ. Այր մի էր հոգեւոր Ռամանոս անուն ի գեղջէն Աբելմուլայ ի Պաղեստին, առաքնորդ եղբարց վեց հարիւրից. ուրք ասէին ցնա ընդէ՞ր լռեալ կաս և ոչ նախանձիս զնախանձ Տեառն. և ասէին ինդրեա՛ ի Տեառնէ թէ զի՞նչ է աղմուկ ժողովոյն Քաղկեդոնի որով խռովեալ է աշխարհ. և ասէ ցնոսա. ներեցէք ինձ զաւուրս տասն և գնաց ընդ յանապատն ինդրուածովք արտասուաց. և եղեւ առ նա ձայն և ասէ ցնա. գնա՛ պահեա՛ զկնեւասան Ակիկիոյ. և եկեալ պատմեաց նոցա. և ասէն եղբարքն. իսկ Յոյնք ասէն եթէ զԱկիկիոյ հաւատն մեք ունիմք. և գնաց հայրն և կալեալ պատմեաց. և ասէ՝ ցնա երկրորդ անգամ ձայնն, գնա՛ պահեա՛ զխոստովանութիւնն Պետրոսի և Բարսղի և Գրիգորեանց. և եկեալ ասաց եղբարցն։ Եւ նոքա ասէն վասն Տեառն որովհետեւ գաւեր շնորհս յԱստուծոյ, պարզեա զսիրտս մեր. նոքա ասէն եթէ մեք անսխալ ունիմք զդաւանութիւն յիշեալ սրբոցդ. և դարձաւ սուրբն անդրէն երրորդեաց զաղօթն վասն ինդրոյն. և ասասէր կոնդակս ինչ գրեալ և պարզեալ յերկնից մինչեւ առ ինքն. և գիրն էր այս, ուրացան զիս ժողով Քաղկեդոնի և անցին զսահմանոք աւղղափառացն։ Այ է նոցա և նզովեալ է բաժին նոցա. և իրրեւ ընթերցաւ զայս և լուաւ. ոչ չոգաւ առ եղբարսն, այլ Յերուսաղէմ երթեալ պատմեաց. և շարժեցաւ քաղաքն Երուսաղէմ և հանին զքարափառսն. և հանին

զՅոբնաղ, և եդին զԹէոդորոս. և լուաց Մարկիանէ և առաքեաց հաստատեաց զՅոբնաղ ասնիլով զընդդիմանալսն, և լուեցին. և եղբարքն հաստատեցան։

ԻԷ. Պատմեաց քահանայն Աբիբիոս (1) Կիսարացին եթէ մինչ էր Տիմոթէոս յաքսորս 'ի Խրսոանոս կղզին, դէնացի ետ առ նա և տեսի վէր ասատիկ յոտս նորա՝ որ էր նոտուր ցաւ անբժշկելի. և մերձակայք նորա ոչ դարմանէին զնա և ետ աղաչեցի զի լուացից զԹարբանն. և ասէ ցիս «Ի ասանանես սպի յաչս իմ։ և ասեմ այս. և ասէ ցիս մինչ կայի ետ 'ի Ժողովն Քաղկեդոնի առանձնացեալ յաղօթս. երեւեցաւ ինձ եթէոդիպացի մի ահաւոր. և ասէր 'ի ձեռին տամբ ինչ՝ յորում կայր ձեռագիր բաղում եպիսկոպոսաց, և ասէ ցիս դիր զձեռագիրս քո 'ի սմա, եթէ ոչ՝ առլից զոգիդ քո և իբրեւ աչ լուայ նմա ետաք ձեռամբն զաչս իմ. և փղոյց զպտուղ իմ յաչաց իմոց, և հեզաւ արիւն բազում. և առնուամբն Քրիստոսի եդի զձեռն իմ աչաց իմոց և բժշկեցաւ և տեսի. և ասեմ սպիս այս յիշատակ իրացն։ Նշանս էս և այս վէրքս 'ի ատանայէ է, որ կաղացոյց զիս, և ետ հրամայել եմ ընդ սա. և արդ թող տուր, կարող է Տէր բժշկել զսա յարժամ և կամի.

ԻԸ. Ասէ մի էր զօրագլուխ Մարկիանեայ Պետրոս անուն. պատմեաց զօրավարին Զենանի և ասէ. 'ի ոտսն հաւատացեալ էի ես Ժողովոյն Քաղկեդոնի, և էի ջերմ հալածիչ ուղղափառաց. մինչ տեսի 'ի տեսլեան զոմն փառաւոր որ ասէր ցիս 'ի բաց կաց 'ի չարէդ. և ես տես զոր ցուցանեմ քեզ. և ասի՝ ալ էցայ ինձ տեղն անձառելի հանգստութեան և լուսով լցեալ և կային անդ Թէոդոս և Կոստանդիանոս. և տեսի այլ տեղն ուստի հուր բորբոքէր անպոյծ, յորում կայր Մարկիանոս և ամենայն դաւանողքն Լեւոնի ասմարին. և տեսեալ զայն եղէ ընդ Դիոսկորեայ և ընդ Տիմոթէի։

ԻԹ. Կոծնաւորք երկու կիպրացիք՝ Կիւրակոս և Յու-

(1) Մի օրի. ԱՂԲԻԼԻՈՍ Մի օրի. ԱՆԹԻՈՔԻՈՍ.

Digitized by Google

քանաս անուանեալ պատմեցին մեզ. եթէ կայր առ մեզ վկայութեան մի նշանագրեալ, և 'ի լինել ժողովոյն չարի, ձայն եղեւ 'ի շնորհէն որ անդ, և ասէ. ես այլ ոչ նատիմ ասա զի ուրացայն զՔրիստոսս 'ի Քաղկեդոն, և առաքելորդքն ձեր ընդ նոսա. այլ մի գայք առ իս։

Լ. Ի Կեսարիայ Փղշատացւոց կային տապանք երկու Յովհաննու մկրտչին և Եղիսէ մարգարէին. և սարկաւագ մի Կոստանդին անուն սպասաւորէր նոցա սրբութեամբ. և զկնի ժողովոյն Քաղկեդոնի լուր սարկաւագն հանապազօր. և եղբայր, ումն Պօղոս անուն եհարց զնա, և նա ասէ. քանի՞ սաք են որ կամ 'ի սղտասու սրբոցս, և 'ի մնանելն իմ յամենայն առաւօտու տեսանէի զսուրբսն նստեալ յիւրաքանչիւր տապանի. և 'ի սարածել աղանդին Քաղկեդոնի այլ ոչ տեսանեմ, և կամիմ գնալ ասեմ և զբկիլ 'ի միխիթարութենէ սրբոցս. և ասէ զնա Պօղոս. նախ աղօթիւք հարց զսուրբսդ և առ զխրատս. և արար այնպէս. և երեւեալ սրբոցն ասէն զնա ասի՛ գնա՛ ասեմ, զի և ոչ մեք կարոց եմք ասել. բայց մի տրտմի՛ր, զի գամք ընդ քեզ ուր և երթաս։

ԼԱ. Հայրն Զոսիմոս անապատաւորն խնդիրս տեղի, և եկն 'ի Բեթել. և էր անդ վանք մի, և աղաչէցին զնա լինել առ նոսա, և նա ասէ. յաղանդն Քաղկեդոնի փախչիմ եւ. և նոքա ասացին նմա ասելով թէ առ մեզ ոչ է մոռա. և հաւատաց նոցա, և յանձին կալաւ կալ առ նոսա։ Եւ 'ի գիշերին յայնմիկ երեւեցաւ նմա տեսիլն Յակովբ. և ասաց նմա. մի՞ թեաբ այսք զի յուրացողացն Քրիստոսի են. և գնայ անտի։

ԼԲ. Պատմեաց հայրն մեր Պետրոս, վասն Աբեւ-Թարսի սրբոյ որ բնակեալ էր 'ի Նիւլիկիայ 'ի լեռան Տորոս գիտաւոր և ընդարձակ. և կալան զնա որսորդք իբրեւ զանասուն. և յոգեաժ իմացան, զնա աղաչէցին զի կացցէ ընդ եղբարս. և լուաւ նոցա և զգեցաւ. և յարեցան 'ի նա աշակերտք յոլովք։ Նա մնաց 'ի վանքն ասաց աշակերտաց իւրոց. գրեցէք արդեակք, և առաքեցէք ընդ ամենայն երբ-

կիր, թէ զկնի քան և չորից ամաց լինի ժողով ի Քաղկեդոն և ուրանան զՔրիստոս. և գնաք գնացէք ի մեծն Հայք և յԱղեքսանդրիա. քանզի առ նոսա ունայ ուղղափառութիւն, ի նացանէ ածէ և փառաւորի Քրիստոս։

ԼԳ. Դարձեալ պատմեաց հայրն Պետրոս, թէ ի մեռանելն Թէոդոսի ոմն անասպատուար հոգւովն խնացաւ, և գոչեաց մեծաձայն և ասաց. մեռաւ այսօր ուղղափառութիւն, ահա փլաւ երկինք և ոչ ոք է որ ցաւէ նմա և ողբայ զաղէտս։

ԼԴ. Մինչ կայր Նեստոր յաքսորս ի Թեբաս Եգիպտոսի, գնաց ոմն ի Թագաւորէն Կոմիտոս տալ հոգ զօրացն. և երթեալ առ Նեստոր ասաց. թէ կամին ժողով առնել և կոչել զքեզ. և խնդաց յոյժ. և եկն կոչնական վաղվաղակի Մագիստրոս մի, և նա ոչ կարաց տանել ըզխնդութիւնն. այլ ասաց մի թէ կարացէ փոխել զքանն իմ կամ սուտ երբէք խօսեցայ. եթէ չէ Մարիամ Աստուածածնն. և առ ժամայն թափեցաւ լեզուն. և ոկսաւ ծամել զլեզուն և ուտել զմարմինն մինչ սատակել եղեւ։ Եւ գերեզման ոչ ընկալաւ զնա. զայս ասաց Տիմոթէոս ի գիրսն իւրում։

ԼԵ. Պոտիմոն Մենաւոր Իսկիւթացի եկն յԵգիպտոս առ սուրբն Պետրոս և ասաց. հայր. մի տխրիր վասն շար ժողովոյն, և վասն Պռոտերի, զոր առաքեցին ասա պատրիարք. զի երկրաւորն Երուսաղէմ աղաչեաց զՏէր վասն սուրբ Եկեղեցւոյ. և վաղագոյն կոմնչի նա. որ և զկնի երից աւուրց սպանաւ նա։

ԼԶ. Սարկաւագ ոմն Վասիլ անուն աշակերտ Պետրոսի Թեբայեցւոյ որ էր առանձնական երեսուն և եւթն ամ։ Եղեւ առ նա ձայն երկնաւոր. թէ եկ ասէ և քարոզեա և օգնեա ուղղափառութեան և եկն ի Լիբիայ գաւառ և եղեւ անդ երկոտասան ամ. և գնաց անէծ զՆեստոր առ ընթեր Թէոդոսի. և ոչ եհան ի բաց զՆեստոր յաթոռոյն Թագաւորն. և յանկարծակի անկաւ կղմինգր մի ի գլուխն Թէոդոսի, և յաւելցոյց զնա շատ. և Մագիստրոս ոմն սանջէր զառաքն։

Digitized by Google

Եւ լուաւ 'ի տեսլեան Թէոդոս Թէ վասն սրբոյն Եղեւ. և կոչեաց զնա և եւս աղօթել 'ի վերայ գլխոյն և ողջացաւ. և նա խրատեաց զԹագաւորն առնել ժողով յԵփեսոս. և ասաց Թէ որ զինի քո Թագաւորէ, նայեցէք վերաբերեալ զազանդն Նեստորի։

ԼԻ. Ամենի կին մի երկիւղած յԱստուծոյ խրատեաց 'ի տեսլեան, Թէ Նեստոր անուն գայ պատրիարք 'ի Կոստանդնուպոլիս, մի հաղորդիր 'ի նմանէ. և ժողով լինի 'ի Քաղկեդոն նովին ախտիւն, և դու զգուշացիր զորդիսն քոյ։

ԼԸ. Պատմեաց հայրն Պետրոս Փիւռիկեցին Թէ մինչ մանուկն էի առ վարդապետին իմում 'ի Կոստանդնուպոլիս, անկաւ յիս տարակոյս Թէ զիարդ սուրբ Երրորդութիւնն իցէ հաւասար և երիք և մի. և եկն 'ի վերայ իմ հոգի. և երեւեցաւ ինձ սուրբն առաքեալն Պետրոս, և ետան զնա 'ի բերան մի, և ետուցեալ ինձ լոյս անպարագիր մեծութեամբ և անհասս. ասէ ցիս, ահա Հայր. և ետուցեալ ինձ այլ լոյս անպարագիր և ասէ ահա Որդին. և ասէմ նման է Հօր յոյժ. և ետուցեալ ինձ այլ լոյս անպարագիր, և ասէ ցիս. ահա Հոգին սուրբ. և ասեմ. նման է Հօր և Որդւոյ. բայց պատկեր Որդւոյն մարդասէրակ փայլէր անճառաւ և անհասական կալով 'ի մէջն յայմմէ Հօր, և Հոգին սուրբ յայմմէ Որդւոյ։

ԼԹ. Անենոս ոմն Աղեքսանդրացի որ մկրտեալ էր 'ի հօրէն մերմէ, և կին նորա ոչ հաղորդէր ընդ առանն. զի խմբեալ էր ընդ աղանդն Քաղկեդոնի. սա հիւանդացաւ մերձ 'ի մահ և եկն 'ի տեսիլ տեղւոյն անպատմելի դրախտի. և ասէին սոյս է տեղի առանն քո. և տեսանէր տեղի հրաշալի խաւարի. և գայր անտի ձայն լալոյ. և ասեն այդ է տեղի այդմ աղանդոյ ուր կայզ, և առողջացեալ դարձաւ յուղղափառութիւնն։

Խ. Մովսիսոնէ (1) որ ասի խաստովանող, խնամատար եկեղեցւոյ, և յոյժ աղօրմած. սա հիւանդացեալ եկն 'ի տեսիլ. նման ասացելոյ կնոջդ, և եւս տանել զինքն 'ի վանքն

(1) Մի օրի. Փոխինէ։

Ռոմանոսի ուղղափառի, և հաղորդեցաւ. և զիւրն երթեալ տաւաւր հանգիստաւ 'ի Քրիստոս, զի ողորմածութիւնն իւր ոչ եթող զնա 'ի կորստեան։

ԽԱ. Պուենիփոս երէց, ապրդաւ Փառանդ. որ ոչ հաւանէր երկու բնութիւն ասել Քրիստոսի ոչ մտաք և ոչ բանիւ, ասէ տեսի 'ի տեղեան մեռեալ մի հոսեալ 'ի յարութիւնն Յերուսաղէմ որ յանկարծ կենդանացաւ. և ուներ թուղթ 'ի ձեռին, երեւմամբ ոսկեներկ. և 'ի բանալն լիմանային աղտեղութիւնամբ. և զարթուցեալ ելոյծ և ասաց. գաբէալ նոթգի աղանգն Քաղկեդոնի զի յայնժամ բարձեալ էր 'ի Զենոնէ այրոյն։

ԽԲ. Սարկաւագ մի ապաստաղէր 'ի սուրբ յարութիւնն Յերուսաղէմ. և անկաւ 'ի շնութիւն. և եկեալ 'ի սուրբ Գողգոթա ննջեաց. և շնորհն որ անդ՝ ձգեաց զնա արտաքս 'ի փողոցն, և եղեւ գոչիւն ահաւոր որ ասէր. ապականեաց Յոբնաղ և աշակերտք իւր զարքութիւնս իմ. և լուաւ քաղաքն և զղջացան բազումք յաղանդոյն և խոստովան եղեւ սարկաւագն զչարիս իւր։

ԽԳ. Պատմեաց երանելին Վասիլիոս եթէ 'ի գեւղմէր Պատղինէ երէց մի Քաղկեդոնիկ և պարզամիտ աշխարհական մի ուղղափառ վիճէին վասն հաւատոյ և կոստրուումն իրացն եկին յայս. զի կամեցան հրով փորձել զհաւատսն. և կապեցին զայլոյ ձեռս զերկուքն և վառեցին 'ի ներքոյ հուր. և այրեցաւ ձեռն երիցուն անաղխանաքի. և աշխարհականին և ոչ մնաց մի խանձատեցաւ, և օրհնեցաք զԱստուած։

ԽԴ. Ի գիւղ մի անուն Սալտու այր մի Եպիփան անուն ոչ հաղորդէր ընդ այլսն. և երէցն ապատնացաւ նմա. և նորա առեալ զորդիսն գնաց անտի և երէցն հարեալ բարձութեամբ Տեառն մեռաւ նոյն ժամայն. և իմացեալ գեղջն գարձուցին զԵպիփան. և ասենայն գիւղն գարձան յուղղափառութիւն։

ԽԵ. Գեորգ պարիարքն յաքսորս կոչէ զԱղիքսանդ-

Digitized by Google

բիսոյն եկեալ ձայն առ Պիտեր մինեալոր և ասէ. գնա՛, մի՛ թաքուցանէր Պետրոս. և նա առաքեցուցանէ սիւն լուսոյ. և շոգաւ 'ի առանն յորում կայր Պետրոս. և տեսեալ տեսանողքն շնորհս երկնաւոր 'ի վերայ նորա, և զարուսանեալ զնա մկրտել զորդիս նորա. և դարձաւ յուղղափառութիւն, և սուրբն Պետրոս 'ի ձեռն Ապոստոլական Գրառանդաղոլսի հաւատացեալ զՔրիստոս. և դարձաւ ամենայն երկիրն յուղղափառութիւն։

ԽԶ. Հայրն Պետրոս եղեալ տեսիլ զի բարձեալ ի աբեղայից առեալ խաչ մի ձգձգելն առ միմեանս. և ասաց թէ հերձուածն լինելոյ է, որ ոչ բժշկի մինչև յկատարած։

ԽԷ. Կին մի էր բարեպաշտօն Յերուսաղէմ Ուլուսիթայ անուն, գնաց ուղղութեամբ 'ի տաճար հաւքարձման Տիրոջն. և եռեալս զարիրանալն նստեալ անդ փառաց, և անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց. և կանգնեաց զնա տիրուհին և ասէ. մի վախիր՝ այլ կաց յուղղափառութեան. զի շարչարանք որդւոյ իմոյ այլայլեցան 'ի բերանս պղծոց ոմանց. և եղեւ Եկեղեցի իրբև զկատարեալ անուանս զերեսանց. և ոչ խաղաղի մինչև ցկատարած։

ԽԸ. Զենոն անասպատուոր մարգարէացաւ վասն Լեւոնտեայ ասկալոնացւոյ՝ թէ լինիս եպիսկոպոս. որ եղեւ իսկ. քան զի յաթոռն Աղեքսանդրի ազաւ զքեր զՔրիստոսեղ զնորայն հաստատել, և առաւել յորժամ եղեւ ժողովին զերիսու բնութեանն. և 'ի գառնալն 'ի քաղաքն իւր կամեցան զնա քարկոծ առնել, և փախեաւ 'ի Կիպրոս. և ցաստմանէ Տիրոջն ձեռաւ անդ. և գնացին ընտանիքն բերեալ զմարմին նորա նաւով. և ոմն աշխարհական մեռաւ 'ի նաւն, և 'ի լինելոյ սաստիկ հողմոյ ձգելոյն զԼեւոնտիոս 'ի ծով, կարծելով զշիտարհականն՝ և կատարեցաւ մարգարէութիւնն։

ԽԹ. Կին մի ասկաղոնացի Ղիկէ անուն. սատանիկ այրանէր զԲաղիկգոնիան, և երեւեալ նմա սատանայի 'ի ձեւ հրեշտակի ասէ ցնա. ընդէր հայհոյես զսուրբ ժողովին. և փոյթ զարմն 'ի վերայ նորա. և ոչինչ եղեւ նմա շար. այլ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՓՈՍՏՈԼԻՆ
կարդա՛ն .....

յարուցեալ խաչակնքեաց զինքն և չիք եղեւ չարն (1)։

Ծ. Երկու եղբարք ի Կիւրիկիայ, պատմեցին մեզ թէ գնացաք ի Մամուեստիայ և յանդիմանեցաք զԹէոդորոս որ անկեալ ի խելաց ալարեալ էր մեկնութիւն գործոցն, և աւետարանին Յովհաննու. և ասացաք նմա անէծք, և մոռացաւ. սա էր աշակերտ Նեստորի։

ԾԱ. Ի Պամիւլիայ բազմութիւն արանց փարոս կուսորեին. և էին երկու դաշք ուղղափառաց և չարափառաց, և վիճեցան վասն հաւատոյ և վաւերին հաւատ. և բերին զառմարն Լեւոնի և զահմանն ուղիղ. և այլեցաւ Լեւոնին և անվնաս մնաց ուղղափառացն. և բոլորն գարձան յուղղափառութիւն։

ԾԲ. Երեք ամաւք յառաջ քան զժողովն Քաղկեդոնի յեւթն ժամու աւուրն յԵրուսաղէմ քաղաք երեք արքայական տեսին յարեւելս և յարեւմուտս և ի միջոցս երկնի. և սուրբ սոն մեկնեաց թէ երեք ժողով լուսաւորեցին զաշխարհ ի հաւատս, այն որ վնիք ոչ է ընդունելի։

ԾԳ. Ի դառնալն Յովնաղայ ի ժողովն (ի ժողովին)։ ելին ընդդէմ նորա եկեղեցականքն յանդիմանել զնոսա Իակ հայրն Պետրոս նստաւ ի լուութեան. և երեւեալ նմա տեր ասէ, ես զքեզ եմ, և հաւատն Եկեղեցւոյ իմոյ այսպէս է. և գու հանգիստ ընդուն. և նորա երկուցեալ յատն յարեաւ և առեալ զԹէոդորոս գնաց. և բուռն եհար զուրբարէն Յովնաղայ և պատառեաց և ասաց. զայլ գործսն քո թող. ասէր զինչ գործեցեր յայսմ գիշերի. և կոչեմ հուր երկնաւոր մաշել զքեզ. գու հաւատ փոխեա. և անկաւ Յովնաղ յոտս սրբոյն. և ասաց խնայեա հոգոյ սուրբ։ Եւ առեալ զԹէոդորոս դարձաւ. այն զոր եպիսկոպոս ձեռնադրեցին զկնի։

ԾԴ. Թէարիոս այր սուրբ և իմաստուն տարակուսեր վասն երկուց բնութեանց. և արտաստուաք ինդրեր Աստուծոյ յայտնել նմա. և երեւեալ նմա Յովհաննէս ա-

(1) Մի օրիս հալածեցաք ի նմանէ չարն։

ունեսարանիչն ասէ, որ էին 'ի սկզբանէ բանն, զնա շշաւ-
փեցէք զկենանն. և ոչ է երկու բնութիւն. և լուեալ զայս
հաստատեցաւ 'ի միութիւնն։

Դ. Ոմն 'ի տեսողացն սրբոց տեսանէր ժողով ե-
պիսկոպոսաց և Պօղոս առաքեալն 'ի մէջ նոցա. որ ասէր. ով
եղկելիք. այդ է իմ պատասէրն. զայդ ուստեղի ձեզ. արդ ա-
ռէք 'ի սափորոյս և լուացէք զերեսս ձեր. և իբրեւ լուա-
ցան. սեւացան. և ասէր այդպէս ամենեքեան սեաւք եղէք.
վայ ձեզ։

Դ. Մարկիանէ անուն ոմն, աշխարհական յանդի-
մանէր զՊամփիւլիոս եպիսկոպոս վասն երկու բնութեանց.
և մատնեցին զնա Տուկի քաղաքին. և ասէին զնա սատ-
տիկ. մինչ իջանէր արիւն յոտով 'ի նմանէ, և արար բժշկու-
թիւն քաղուամ ցաւոց, և հրեշտակաց Աստուծոյ առ ըն-
թեր կացեալ դիւրէր նմա և մխիթարէր, և զվերան բժշկէր։

Դէ. Սուրբն Տիմոթէոս պատմեաց հօրն Յովհան-
նու յորժամ յուքսորս էր, եթէ յորժամ եկին հրաւ իրեցին
զնս 'ի ժողովն շաբ. յայնմ գիշերի տեսի զնս 'ի պատարագի
և նշխարն հնացեալ և սեւացեալ և դինին քացախեալ, և
ոչ կարացի ճաշակել, և խմացայ զինչ լինէրն։

ԴԸ. Անաստաս աբեղայ Ռուհայեցի հաղորդեցաւ
'ի հօրէն մերմէ Պետրոսէ. և յայնմ գիշերի նոր մկրտեալ
լինէր և նոր զգեցեալ. և մեկնեցին նմա թէ դառնալն յուղ-
ղափառութիւն նոր մկրտութիւնն է և նորանալ։

ԴԹ. Թոմասիոն երէց պատմեաց մեզ թէ յորժամ
գայր 'ի ժողովն հերետիկոս ասացեալ Շեպիսկոպոսն մեր,
մկրտէի ես աղայ մի. և տեսի ես և ժողովուրդն զՀոգին
սուրբ. զի ազաւնակերպեալ երթայր ելեալ յասպանէն. և
լուաք զի ասէր ես այսուհետեւ յայդ աւազանդ այլ ոչ
լինիմ (1)։

Կ. Պատմեաց մեզ հայրն Պետրոս։ թէ կայր իմ
եկեղեցական խմբուեալ աղանդոցն Քաղկեդոնի. և հանդի-

(1) Մի տի. այլ ոչ մտից։

Digitized by Google

պէտք ինձ 'ի մէջ փողոցի նեղագոյն. և անկաւ յոտս իմ
ողորմեալ զիս. և ես յամօթոյ առի զողջոյնն. և յայնմ
գիշերի տեսի գաշտ մի, ուր ժողովեալ կային ամենայն
սուրբք. և Քրիստոս Աստուած 'ի մէջ նոցա փառաւոր նստ-
եալ. և գնացի երկիր պագի նմա. և դարձոյց զերեսս իւր
յինէն, և մինչև ազաչէցին ամենայն սուրբքն, ապա դարձաւ
յիս տէր։

ԿԱ. Երկուք ամենք աշխարհականք արեւելեալք Հայ
ազգաւ 'ի պատճառաւ աղօթականութեան գնացին մինչև
ՅԵՐՈՒՍԱԼԵՄ. և կոչեաց զնոսա սիւնակեաց մի և ասէ.
լսեմ թէ ոչ հաղորդիք յեկեղեցիս մեր. և նոքա ասեն ասենմք
առ մեզ հաղորդ մեր հայրն ուղղափառաց, անսի հաղորդիմք. և նա ասէ. և դուք աշխարհականք զինքդ իշխեք,
և այդ ոչ է հաղորդ, և տրտմեցան նոքա. և յաւուր կիրակեին տեսին զհաղորդն իւրեանց վառեալ հրով և լուսով
և անոյշ հոտով և հաղորդեցան. և ոմն ասկաւ մի տեսարան
ցեղ էր 'ի բանս սիւնակածին, մասն նուրա եղեւ միս աքիւնաս, և զղջացաւ և ելաց. և փոխեցաւ գաղթեալ 'ի նոյն. և հաղորդեցին անխիղճ։

ԿԲ. Ստեփաննոսի սարկաւագապետին Երուսաղէմ քոյր մի էր կուսանն սուրբ և պարկեշտ հասեալ 'ի կատարելութիւն այնչափ, զի յորժամ երթայր յեկեղեցի սրբոյն Ստեփաննոսի և Յովհաննու Մկրտչին. և ելն(1) նեանս սուրբքն և զկնիք Քաղկեդոնի ժողովոյն ըստ սովորութեանն երթայր աղօթել ընդ խմբեալսն յապանգն. և երեւեալ նմա սուրբքն Ստեփաննոս ասէ. քոյր, գնա՛ աղօթեա՛ 'ի տան քո. և մեք գամք առ քեզ. զի՛ ոչ կամիմք լինել ընդ ուրացողացս։

ԿԳ. Կին մի ուղղափառ Պամփիլոյսի բնակիչ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ. գնաց 'ի տաճար համբարձմանն Տեառն 'ի տանին իւրում. և մնաց պատարագին, և գնաց 'ի տուն իւր և հիւանդացաւ 'ի մահ, և խնդրեաց օրհնս, և ետ զնաստաւորութիւնն հաւատոյ. և տեսանէր զհրեշտակ Աստուծոյ

(1) Ամենայն օրինակք այսոքս ասին. քայց Իերեսս լեյի երեսէին

զի ասէին ցնա. զնոսդ համարիս կատարել ուղղափառութեամբ զկենաս քո. զի տեսեր զանարժանիցն պատարագն. և ապօթեցեր ընդ նոսա։ Իսկ կինն բարեպաշտն խնդրեաց Աստուծոյ ժամանակ ապաշխարութեան տալ նմա։ Եւ առաւա նմա. և յարուցեալ 'ի հիւանդութենէն, և արտասուաւք հայցեր յեկեղեցւոջն յայտնել նմա զարժանաւոր խոստովանութիւն. և եղև բան լսելի 'ի տեղւոյն անտի որ ասէր. զդին Աստուծոյ նայնն է որ ծնաւ 'ի կուսէն նայն խաչեցաւ, և թաղեցաւ, և յարութեաւ. մի բնութիւն փառաւորեալ. անշփոթ միաւորեալ ընդ նմա կատարեալ մարդ։

ԿԴ. Յիտալիա վանք մի էր կուսանաց ուղղափառաց անուն առագին Ջոյի, որ յարիշտակեցաւ 'ի դրախան մեռացն թուելով. և ետես անդ գծաւն կինոց. և զի պարք մեղուաց ջանային հայիլ 'ի ծառն. և սարկաւագ մի լուսապատակեր հալածէր զնոսա, և ասէր ցՋոյի. Քրիստոս է ծառն, և մեղուքդ հաւանեալ քն Քաղկեդոնի, որք ոչ են արժանի մերձենալ 'ի Տէր. և իբրեւ եկին Կաղանիոս յիտալիա. մեղադրեաց նմա Ջոյի. թէ ընդէր ձեռագրեցեր զտոմարն Լեւոնի. և նա ասէ ձեռագրեցի, բայց մեռաք ոչ միաբանեցի։ Եւ ասէ ցնա. ձեռքն մեռեալ զիսիդ գրեաւ ցնդանի մոաց. և հրաժարեաց 'ի նմանէ։

ԿԵ. Լեւոնաիոս անաստուածական տեսանէր զեկեղեցի մերկ, և զխաչհուրդն հեզեալ, այս է Եկեղեցին և պատարագն որ չարդարութիւն խոստովանեցին 'ի Քաղկեդոն։

ԿԶ. Յարքամ Եալ համբաւն Քաղկեդոնի, ոմն 'ի սրբոյնն տեսանէր զեկեղեցին Կոստանդնուպօլսի դամ լքեալ դարշ և զանիր, անուսերք կենդանեաք։

ԿԷ. Էպիքարիոս հայր վանացն Պանփելայ տեսանէր զԱմենքեան զՍուագրիա քաղաքի. որ կոչէին ողորմած. և զԵպիփան պերկացի (1) թաղեալ յաղք մինչեւ ցպարանոցսն. և ասէ Ամենքեան. բարեգործդ զիսիդ երդեր այդպէս. և նա ասէ քարին Աստուծոյ էր. և չարս 'ի մինչ էգաւ, զի հա-

(1) Եպիս. գրի. Կիպրի։

եանեցաք Ժողովոյն Քաղկեդոնի. և ասեն թէ Նորոգեաց նա զոտմայն Լեւոնի։

ԿԸ. Կին մի զգաստ և սուրբ Ակթաստղիայ անուն զկնի Ժողովոյն Քաղկեդոնի յերկուս բաժանեալ մոռք հայցէր յԱստուծոյ ցուցանել նմա թէ յոմն հաղորդեսցի. և տեսանէր եկեղեցի մի երկխորանի մինն մեծ և մերկ, և Քաղկեդոնիք 'ի վերայ նորա. և մինն փոքր և զարդարեալ լուսով. և մանուկ մի հրեղէն 'ի վերայ նորա. որ էր ինքն Քրիստոս և ասէր. 'ի բաց կայց յուրացողէդ. առ իս եկ, և հաղորդեաց կենաց։

ԿԹ. Երկու եղբարք էին 'ի վանսն Ռոմանոսի, Տիմոթէոս և Յովհաննէս։ Տիմոթէոս մեռաւ, և տարան 'ի Թաղել, և յանկարծ նստաւ 'ի դագաղսն և ասէ. գիտացէք եղբարք, զի առիս չկայր ինչ պատճառ վնասու։ Բայց միայն իրաւ կարծէի զերկու բնութիւնն, և ահա տանին զիս 'ի տանջանք. և խնայեաց Տէր 'ի ձեզ և ետ ինձ ասել ձեզ զայս 'ի զգուշութիւն, և խնդրեցէք ինձ ողորմութիւն և դարձեալ ննջեաց։

Հ. Յանտիոք Ասորոց բնակեալ էր մերձ յարքունական այր մի սքանչելի որ սակաւ բանչարով ընդ զպէտս իւր, և շառնոյր ինչ յումեքէ. և էր յանդիմանիչ յոյժ Քաղկեդոնացւոցն. և ասէր եթէ հատ անօրէնութեան և մեղաւ գայ ինձ 'ի ձէնջ և ոչ կարեմ տանել լուութեամբ. և ապանին զնա. և բազում նշանք եղեն 'ի նմանէ։

Իսկ Մարկիանէ վեց ամ բռնակալեալ. սատակեցաւ լցեալ անիծիւք։ Յետ Վաղենտիանոս ութկաւ 'ի նոյն ամի 'ի Թուին Կոստոց եւթն հարիւր վաթսուն և ինն. և պատառեցաւ Թագաւորութիւնն Հռովմայ 'ի Կոստանդնուպոլսէ. նոյնպէս և բարձաւ Յ-

կեղեցւոյ խաղաղութիւն։ Եւ անձամբ Թագաւորեաց | Եւոն 'ի Հռովմ Թրակացի յիշխանացն Պարկիանեայ։

Եւ 'ի նոյն ամի Թագաւորեաց Պարսից Պերոզ. և արար հալածումն Քրիստոնէից և պատերազմ ընդ Հռովմայեցիս։ Իսկ | Եւոն ետ զդուստր իւր Օ՚ենոնի իշխանի. և կացոյց զնա Թագաւոր արեւելից կողմանն. և զԱսիլիսկոս արար ստրատելատ 'ի Թրակիա, և զՈւրինոս կեսար 'ի Հռովմ, որ յետ ասկաւուս սպանաւ Յրամիկայ (1) և քարոզեցան Ընթիմոս և | ուքարոս կեսարք։

Յոյնմ ժամանակի շինեցաւ Կալանիկոս՝ որ Պարսս, հրամանաւ | Եւոնի Թագաւորի, և կոչեցաւ | Եւոնտիպոլիս (2)։ Եւ 'ի սոյն ժամանակս եղեւ հրայրեաց 'ի Կոստանդնուպոլիս, որպիսի քնաւ չէր եղեալ. և այրեցաւ ծովէ 'ի ծով. ի եկ Թագաւորն արուաքոյ քաղաքին. և ոչ կարաց մնանել 'ի նա ամիսս վեց։ Եւ | Եւոն կանոնել ետ Թէ յօր կիւրակէի բնաւ մեծ և փոքր յեկեղեցիս կացցեն յաղօթս և յուսումն։

(1) Մի օրի. Յրակմիուայ Մի օրի. Յրակմիուայ։

(2) Երկու օրի. Լեւոնտիպոլիք։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս նշանաց որ եղին՝ ամիս մի օդդ փոշի տեղաց և թիզ մի կուտեցաւ։

Բայց զկնի այրմանն ամիս մի օդդ փոշի տեղաց, և թիզ մի կուտեցաւ, և տարաւեալ 'ի Կոստանդնուպոլիս, և զահի հարաւ աշխարհ. զի շարժէր աշխարհ և հուր ելանէր 'ի պատառմանէ երկրի, և այրէր զքաղաքամ տեղիս. և ակն ունէին կորնչելոյ երկրի։ Յետ Կիրեկոն քաղաք 'ի շարժմանէն և 'ի կայծականց անյայտ եղեալ շրջելով. և յոլով մասն Թրակիայ ապականեցաւ։

Իսկ զԹագաւորն կալաւ աղէկցաւութիւն սաստիկ, և մեռաւ Թագաւորեալ ամս տասն և ութ, ոչ պարապեալ 'ի խռովութենէ. և գիտաց ամենայն այր խմաստուն, եթէ ժողովն Քաղկեդոնի զայրացոյց զՔրիստոս զին սուրբ Կուսոյ անարատուած դաւանութեամբն։

Յետ Թագաւորեաց Լեւոն փոքր թոռն Լեւոնի հրամանաւ նորա՝ տղայ վեցամեայ։

Յետ ամի միոյ եկն Զենոն հայր տղայոյն հնազանդել որդւոյն. և մայրն խաբեաց զտղայն որպէս մանուկ և ասաց. յոր

ժամ տեսցես զՀայր քո, դիր զԹագդ 'ի գը-
լուխ Նորա, և երկրպագեա նմա (1). և արար
այնպէս, և Թագաւորեաց Հայրն Միհրեծան.
զի զկնի սակաւու մեռաւ տղայն։

Իսկ Ներսնայ Թագուհին մեծ Լեւոնի
ապաշէր զՕՏենն վասն աղանդոյ Բաղկեդո-
նի ընդունել զնա։ Այլ իբրեւ ոչ լուաւ նման՝
նենգեաց նմա. և խորհրդակցաք իւրովք
զեղբայր իւր զԱսափլիսկոս Թագաւոր եւ
կարգալ. և զորդի Նորա զԱրկոս՝ կեսար։
Այլ իմացեալ Օ.ենանի փախեաւ յԱրիս յազ-
գին իւր, և մտեալ 'ի բերդն Սաղամէ դա-
գարեաց անդ. և կին Նորա Արկանիայ չը-
գաւ առնա։

Իսկ Ասափլիսկոս Թագաւորեաց որդւոցն
ամն երկու։ Այլ էր ոսիղծ և չարադեւ. և հա-
լածիչ ուղղափառաց, և եդ յաշտանակի զբ-
Բաղկեդոնին (2) և եղեւ ատելի բազմաց.
և գային առ Օ.ենան, և եղեն բազումք։

Այլ առաքեաց Ասափն զԱրտեմոս զօրա-
պետն իւր պատերազմել ընդ նմա, և խօսե-
ցաւ Օ.ենան ըստ սրտի Նորա, և խոստացաւ
կեսար առնել զնա, և առին զօրքն զՕ.ե-

(1) Մի օրի. յաջող եւ յարժամ եկն Հայրն, ինքեւս զնա և արար այնպէս։

(2) Երկու օրի. բարձրացոյց զԿաղկեդոնիան։

Digitized by Google

նոն և գնային 'ի Կոստանդնուպոլիս. և ընկալան քաղաքն խնդութեամբ։

Եւ փախեաւ Բասիլիսկոս որդուովն յԵկեղեցին. և առաքեաց Զենոն մերկացուցեալ զնստա 'ի Ծիրանեացն, և ետ տանել 'ի Լամիկատրա (1) Կապպադովկացւոյ. և ածին 'ի բուրգն (2) մի և փակեցին յամենայն կուսմանց. և մեռան անդէն դատնապէս։

Իսկ Զենոն արար զԱրտեմա (3) զորապետ, և զորդին նորա Լեսար. և զկնի այնորիկ սպանաւ Արտեմիս. և որդի նորա եղև ընթերցող եկեղեցւոյ։

Յայնմ ժամանակի Զենոն 'ի ձեռն Աղկակայ պատրիարքի Կոստանդնուպոլսի հաստատեաց զուղղափառութիւն։ Եւ առաքեաց առ պատրիարքն Աղեքսանդրի, և առ Պետրոս պատրիարքն Անտիոքու, որ կային անդ 'ի բանտի 'ի Կոստանդնուպոլիս՝ հարցանել 'ի նոցանէ զհաւատոյ խոստովանութիւնն. և նոքա ետուն զԱիկիայն և զԿոստանդնուպոլսին և զՎիւրղին և զՄիսկորոսին. և թագաւորն առաքեաց զդատանութիւնն ընդ ամենայն երկիր և ձեռնագրե-

(1) Մի օրի. 'ի Լամիկատրա։ Մի օրի. 'ի Լամիս 'ի Կաստրա։

(2) Երկու օրի. 'ի պուրճ փակ։

(3) Մի օրի. զԱրտեմն։

Digitized by Google

ցին զայն Եւթն հարիւր եպիսկոպոսք. և գրեցին 'ի ձեռնարկն թէ նզովեմք զտու-մարն Լեւոնի (1), և նզովեմք զԼեստոր. նզո-վեալք եղիցին ոչ նզովողք նոցա։

Եւ լուեալ Թագաւորն զուարճացաւ. և առաքեաց զՊետրոս մեծ ոպատուով յԼնտիոքայ յաթոռն իւր՝ զոր Թափիչն կոչեն։ Եւ զՏիմոթէոս յԱղեքսանդրիա, զայն՝ զոր ուղղափառքն ձեռնադրեցին զկնի Կոռոտեբայ (2)։ Եւ աքսորեաց Անարկիանէ։

Յայնմ ժամանակի ապստամբեցին Սամարացիքն. և եդին իւրեանց Թագաւոր զոմն Յոսատոս անուն. որ զբազումս կոտորեաց 'ի Երիստոնէից. և մնեալ յեկեղեցին 'ի Կեսարիա ալար արիւն. և քակեաց զեկեղեցին և շինեցին անդ տաճար իւրեանց. և լուան զայն զօրքն Օ՚ենանի. և գնացեալ 'ի վերայ նոցա կոտորեցին. և զչլուխ անուանեալ Թագաւորին կտրեցին. և առաքեցին առ Թագաւորն Օ՚ենան, և զշինեալ տաճարն եկեղեցի օրհնեցին յանուն սրբոյն Անարիամայ. և զՀրեայսն որ յԼնտիոք կոտորեցին։ Ի նոյն աւուրս. կործանեցաւ Ամիկոմիդայ 'ի շարժմանէ, և էր նորա վեցերրորդ

(1) Եւկու օրի. յաւլան և վերք զԱկակ։ զժողովն Քաղկեդոնի, նզո-

(2) Եւկու օրի. Գռ ատեբայ

տապալումն (1)։ Յետ այսորիկ մեռաւ Օլենոն Թագաւորն վաթսուն ամաց՝ Թագաւորեալ ամս վեշտասան։

Իսկ Թագաւորն Պարսից չարամահ եղեալ Թագաւորեաց Պալուշ ամս չորս. և արար խաղաղութիւն Յունեցոց։

Իսկ զՀռովմայեցւոց Թագաւորութիւնն էառ Ինաստաս այր բարի և արքասէր. որ զի գտաւ անօրէնութիւն ի դպրոցն Կոստանդնուպօլսի, զայրացեալ կոտորեաց զամենայն դպրոցն. և տրտմութիւն կալաւ զքաղաքն։ Այս չինեաց զՏարազ աւերեալն առ սպանմանն Դարեհի. և կոչեաց Ինաստասուպօլիս։

Իսկ Պարսից Թագաւորեաց Կուսան՝ զոր հալածեաց Համզա եղբայր իւր ամս երկու, և դարձեալ զօրացաւ Կուսան և սպան զեղբայրն. և Թագաւորեաց ամս երեսուն։

Այսու ժամանակաւ եկին Հունք. և աւերեցին ի Պարսից աշխարհէն. և կարծեցին Պարսիկք թէ բանիւ (2) Ինաստասայ եղեւ. և եկին յերկիրն Միջագետաց, և բազումս աւերս արարին և գնացին։ Յորում ժամանակի եղեւ Պատրիարք ի Կոստանդնու-

(1) Երեք օրի. էք նորա ի տապալումն։

(2) Չորք օրի. ոչ ոՀԷՀ զբանիւք։

պօլիս քահանայապետ Տիմոթէն՝ այր առաքինի և իմաստուն։

Սա իմաստանայոյց զԱնաստաս և գրեաց կանոնս և առաքեաց ընդ ամենայն երկիր զառաքն Աստուածն խաչեցեալ ասել, և 'ի մի բնութիւն օրհնել զՔրիստոս Աստուած (1)։

Իսկ Նեստորականքն որ 'ի Կոստանդնուպօլիս խռովութիւնս ոչ սակաւս արարին։ եթէ զԱրդարդութիւնն խաչեալ ասեն. և 'ի ժխորմանէ անտի մեռաւ երէց մի Տիմոթէի. ընդ որ զայրացեալ Տիմոթեայ գնաց յանապատ։

Յայնմ ժամանակի երեւեցաւ այրն բանաւոր Փիլիքսիանոս (2) եպիսկոպոսն Յարապօլսի. որ արար բազում վարդապետութիւնս և գրեանս փսան ուղղափառութեան։

Այս կոչեաց մեծարանօք թագաւորն 'ի Կոստանդնուպօլիս, կոչնականս առաքեալ նմա զՍեւերոս վարդապետն և երկերիւր (3) քահանայ ընդ նմա. և ժողովեալ 'ի Կոստանդնուպօլիս բազմութիւն յոյժ յերկուց կողմանց Ալիքիականաց և Բաղկեդոնականաց

(1) Խաչեցաւ ասելով, և նաւն։ մի բնութիւն խոստովանել զՔրիստոս Աստուած։

(2) Մի օրի. Փիլիքսի առ

(3) Երկու օրի. քահանայ մի ընդ նմա։

նացուց, արարին քննութիւն յոյժ։ Իսկ յաղթող երեւեցան ուղղափառքն. և առաջ քան զթագաւորն և ետ հանել 'ի գերեզմանէն Իւփեմեայ զտոմարն Լեւոնի, և զոչ կանոն ժողովոյն Քաղկեդոնի զսահմանեալսն, և այրեաց առաջի իւր. և կամէր Պալատիոն պատրիարքն Անտիոքայ մեղադրել թագաւորին վասն իրացն. և ասէ ցնա արքայն երեւեցար Նեստորիոս. և անարգեաց զնա. և առաքեաց յաքսորս Նղովիւք ժողովոյն. եւ ձեռնադրեաց Փիլիքսիանոս զԱեւերոս պատրիարք 'ի Կոստանդնուպօլիս լի հոգւով սրբով և փարիսեամ գրովք. որ և յաւուր ձեռնադրութեան իւրոյ խօսեցաւ զՀառն՝ որոյ սկիզբն է որք բաժանեն զմիաւորութիւն բանին Աստուծոյ. յորում կայր արատ (1) ամենայն աղանդաւորաց. զոր ունին Յոյնք. և միշտ ընթեռնուն վասն կորովութեան իմաստիցն 'ի յանդիմանութիւնս իւրեանց։

Զայս Աեւերիոս առաքեաց թագաւորն երեւելի փառաւք յԱնտիոք քաղաք։ Սա էր աշակերտեալ Յակովբայ սրբոյ Սրճոյ եպիսկոպոսին. այն որ ոչն էր իմաստնացեալ 'ի մարդկանէ այլ 'ի Հոգւոյն սրբոյ. քանզի

(1) Զամանք՝ յորում կայ անարատ ամենայն աղանդաւորաց, որ Բերոս ունի յորում կայ մեղ ապաք ամենայն աղանդաւորաց։

հինգ (1) ամաց եղեալ Հոգին սուրբ խօսէր 'ի բերանոյ նորա։ Զոր լուեալ պատրիարքին Աթանասս, եկն 'ի փորձել զնա 'ի տան հօր իւրոյ. և նստեալ 'ի ճաշ առեալ 'ի սեղանոյն ձաւ մի ասաց. Յանկարծ որդեակ, հաւն է աւասպ թէ այս ձուն, եթէ պատասխանի մա նուէրն և ասէ. մի խաբեր զիս, ոչ է հայրն ա ւասպ քան զբանն իւր միածին։ Եւ հիա ցեալ պատրիարքն յայլում աւուր մտեալ յեկեղեցին Եհան զտղայն յամպիոնն. և ա սաց. որդեակ, ասա մեզ բան 'ի խորհուրդ աստուծոյն զոր եսես Յզեկիել. և սկսաւ ա սել, որ 'ի բարձրդ ես յաստուծ Խանդ բարձ բեալ. և 'ի միջոցի ճառին ասաց առաւ Ա վիթ 'ի Պարսից, և ընկղմեցաւ արքունիքն 'ի Հալապ (2), և էր այնպէս յորժամ իմացան։

Եւ լուեալ 'ի սմանէ պատրիարքին զմե ծամեծան Աստուծոյ ասաց ստուգապէս Հոգ դին սուրբ խօսի 'ի բերանոյ սորա. և համ բուրեաց զնա։

Այս իսօսեցաւ ճառս ուրթ հարիւր. 'ի սորա հոգւոյն առեալ Մեւերեայ լուսաւո բեաց զաղաւոմն, 'ի սոյն ժամանակս երեւե ցաւ Սիմէոն բրուան՝ որ ապարտ ճառս վասն

(1) Եռկու օրի. Լեթն։ մի օրի. 'ի Դարց։
(2) Երեք օրի. 'ի Հալպ։

աստուածապաշտութեան, եւ շարականաց ուղղափառ մոգք լցեալ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս սուրբն Ամթայ. և Զօզոս անուն չքնաց եղեալ պատրիարք Անտիոքայ, և Ժողովուց զամենայն եպիսկոպոսունս. զինի Զօղի Աւկղիպէ. և շար գաւան. և հեղեղն որ Ջրասոյզ արար զՈւռհայ։

Զ ԱՅՍՈՒ աւուրքս խաղաց Թագաւորն Պարսից Կուռն ընդ Միջագետս, և գնաց ցեալ առ գքաղաքն Թէոդուպոլիս. և ոչ կոտորեաց զքաղաքն զի ոչ անարգեցին զնա բանիւք 'ի պաշարմանն. և դարձաւ եկն յԱմիթ. և պաշարեաց զնա և չինեաց բերդս փայտեղէնս. և մերձեցոյց 'ի պարիսպն, և նեղէր զնոսա խստապէսն. և իմաստուն քաղաքին Թրջեալ համեմ հացի, և զքուրն արկին 'ի վերայ փայտեայ բերդին. և ընդ նմին հուր, և այրեցին զնա. և եկն անձրեւ սաստիկ, և Պարսիկք երկայն հանդերձիւքն իւրեանց նեղջան. և խնդրեցին ոսկի զի գնասցեն. և ոչ լուան նոցա վասն աջողմանն իւրեանց։

Digitized by Google

Սակայն հասեալ էր ի վերայ նոցա օր վրէժխնդրութեան. զի սակաւ մի յառաջ աւուրքդ եկեալ էր առ նոսա վանական վարդապետն սուրբ Յովհաննէս, և գուշակեաց նոցա զաւերս քաղաքին, եթէ ոչ պահովք և աղօթիւք (և լալով), և հսկմամբ և ողորմութեամբ հաշտեցուսցեն զԱստուած։ Բայց նոքա ոչ լսեան նմա։ Այսն որոյ առին զքաղաքն Պարսիկքն և կոտորեցին անձինս ութսուն հազար. և բազումս գերեցին։

Այլոց աւագ եկեղեցին լցաւ արամբք և խնայեցաւ ի խնդրոյ զօրագլխին Հայոց՝ և ոչ մեռան, և ոչ գերեցան. և մտեալ թագաւորն յեկեղեցին և եռեաս նկարեալ ըստ պատկեր Փրկչին. և ասաց ովքէ նա. և ասեն պատկեր Աստուծոյն իւրեանց է. և ասէ ստ երեւեցաւ ինձ և ասաց մի յառներ ի քաղաքէդ, ես մատնեմ զքաղաքդ ի ձեռս քո. և արդ ես ոչ առի զքաղաքս, այլ Աստուածն իւրեանց. զի մեղան նմա։ Բայց եկն թագաւորն Պարսից ի Այուռհայ, և ոչ կարաց առնուլ զնա. և գնաց յերկիրն իւր թողեալ ի յԱմիթ սակաւ բնակիչս և հեծեալս երեք հազար. պահապանն նոցա ի գլխաւորս երկու վատահացեալ զնոսա։

Digitized by Google

Եւ լուեալ զօրացն Հռոմայեցւոց եկին պատերազմել ընդ Պարսիկսն որ Միթ. եւ նոցա մեռեալ ի քաղաքն ամրացան։ Եւ եկին այր մի ի Կարթայոյ գեղջէ Գոթ անուն. խօսեցաւ ընդ Հռոմայեցիսն զոր ինչ առնելոց էր, և գնաց խաբէութեամբ եհան զքաղաքէն զմի ի գլխաւորացն որոց անուն էր Կիդոն չորեք հարիւր արամբք. որպէս թէ երթան բերեն զեքսամակն Հռոմայեցւոցն։ Եւ տարեալ զնոսա մատնեաց ի կրուսա։ Զոր իմացեալ Պարսիկն ուստն հազար այր ի Բրիստոնէիցն արգելին ի տան միում. և արարին զնոսա սուսերով. և ինքեանք ի գիշերի միում գնացին յաշխարհն իւրեանց։

Ի քսան երկու ամին իւրոյ Աշնատաս առաքեաց դեսպան ի Հայս և ասպատանք դարձոյց զնոսա ի Պարսից և արար ընդ ինքեամբ. և յաղթահարեալ Պարսիկք դագարեցին ամս երեք։ Իսկ Աշնատաս լեալ քսան եւ երեքն(1) ամաց՝ կատարեցաւ ի Տէր ի քսան և ինն Թամուզ ամսոյ։

Ի սորա չորեքտասան ամին լցաւ վեց հազար ամն յեղեցն Աղամայ յորմէ հարիւր եւ քառասուն երկու թուին Աստրոց։

(1) Երկու ՀԻՆ. քսան եւ հինգ։

Եւ Թագաւորեաց Յուստիանոս Թրակացի. զսա ասեն զակիզքն Թագաւորացն Յունաց, որ էր 'ի գեղջէն Իեդրինայ՝ զոր քաղաք ընդարձակեաց յանուն իւր կոչելով. զոգոյ զջուրն ասեն, եթէ շատ եփեն՝ արիւն լինի։

Եւ Յուստիանոս (1) էր անվարժ գրոց և անմիտ. և մնացեալ էին 'ի Թրակիա բազումք 'ի ծածուկ աղանդոմն Քաղկեդոնի. որք պատրեցին զնա և ասեն, թէ լսեա և հաւանիս պատուական ժողովոյն՝ հնազանդին քեզ ամենայն տիեզերքք (2), և խնդաց յոյժ. և եհան քարոզ զորոք և զորագլխոք ընդ ամենայն երկիր ընդունել զչորրորդ ժողովն։ և որք ոչ հաւանին ասէ, զկեացին յաթոռոյ և 'ի պատուոյ և յամենայն հասարակաւ կութեանէ. և արարին այնպէս խմորեալ և կաշառեալ զորքն և զորապետքն. և լցան տիեզերքք պատերազմաւ։

Իսկ Սեւերոս պատրիարքն Անտիոքու բարկացաւ յոյժ, և անէծ զՔաղկեդոնն. և որոշեաց նզովեաց (3) զամենայն հաւանեալ

(1) Երկու օրի։ Ուստիոս։

(2) Ոմանք՝ յաթէլան այն է խաբուսն երրորդ ժողովոյն և հաւատ ուղիղ. ոմանք ետ և հաւատաց ուղիղ և խընդաց յոյժ։

(3) Ոմանք՝ որոշեաց նզովեաց։

սէն (1) չար կամաց Թագաւորին զեկեղեցաւ կանա և զաշխարհականան. և ինքն գնաց յԱ-գիպտոս։ Ինդ ելանել սրբոյն 'ի քաղաքէն ինչեալ հուր այրեաց զարքունիսն. և զվեց ամիս ոչ շինեաւ հուրն, մինչեւ Ճարակեաց զամենայն քաղաքն Անտիոք։

Իսկ զկնի ամի միոյ Պօղոս անուն ազգաւ Հրեայ անօթ բարկութեան եղեւ պատրիարգ Անտիոքու. և առ ինքն Ժողովեալ զամենայն Ասորոց եպիսկոպոսունսն հրամանաւ Թագաւորին և ողոքեաց և սպառնացաւ. զի ընկալցին և քարոզեսցեն զՏրրորդ Ժողովն ընդ ուղղափառան. և զհաւանեալսն բանիս իւրոյ, առաքէր յամԹոռս իւրեանց, և զոչ հնազանդեալսն յաքսորս առաքէր։

Եւ արդ Թող զկորուսեալսցն բազմութիւն որք մնացին յուղղափառութեան, և հաւատ ծեցան այսոքիկ են ըստ Յովհաննու Ասիացւոյն։

Անտիքեերոս՝ (2) եպիսկոպոս Անաւարզայ, Յուլիոս՝ Հագոնի. (3) Յովհաննէս՝ Աեռրոպոլիս Ամեստիայ (4). Պօղէ՝ Նբերիոյ, Յովհաննէս՝ Յարապօլսի. Պօղոս փոքր՝ Ա-

(1) Երեք օրի. հաւատաքեալսն։

(2) Մի օրի. Անտիգոնոս տեսայ։

(3) Երիս օրի. Հագոնիայ։

(4) Երիս օրի. Մասեստ-

զԷքսանդրի, որ է Ակենդրուն (1). Նիկոլաս՝ Տարսոնի։ Իսկ 'ի Կապպադովկիայ երկրէն Գոկդ Կոդնիոյ. Աթինաս՝ Ամասիոյ. Նիկոպար՝ Սեբաստիոյ Հայոց։ Իսկ յԱնտիոքայ Աղթոյ Կոստանդինայ՝ Լուսկինայ եպիսկոպոս, որ վասն առաւել սրբութեան իւրոյ նստէր աթոռով առ ընթեր պատրիարքացն, և անաւասմբ յիշատակէին զնա յամենայն պատարագս զկնի անուանց պատրիարքին։ Անտանինոս (2) Հալպայ. Փեղոքսինոս արհի եպիսկոպոս Ամբեռնայ. զոր յետ յոլով տանջանաց և խոշտանգանաց այրեցին 'ի կրակ փաւռն ընկեցեալ 'ի Դանգրա։ Խադրա՝ Իւփիմիոյ. Թէոդոս և Ընէսիմոս՝ Զոմայ և Կրեմին։ Նոյնաս Սելեւկիոյ. Խիդորակ՝ Կիլզի. Աարի՝ Մէթայ. Թոմման՝ Դամասկոսի, այր սուրբ և ճգնաւոր որ զքսան և ութ ամ հաց ոչ եկեր, բայց միայն ունդ և բանջար։ Աղեքսանդրոս՝ Բեղեքաղաքի. Թուման՝ Դարդաբայ. Յովան՝ Թէուրայ։ Յովհան՝ միւս Հուրանի. Սարգիս՝ Կուրիայ. Թոմման՝ Աարաշայ, որ 'ի Գերմանիկէ. Պօղոս՝ Ուռհայոյ, որ զկնի ուրացաւ և դարձաւ յաթոռն։ Յովհաննէս՝ Խառա-

(1) Աղեքսանդրիա Աստ. (2) Երկու օրի. Անտանիոս ոչ, որ է Իսկենդերան։

նոյ. (1) Յովհաննէս՝ Իմինու։ Դիւոսոսթէ՝ Փիւրինի. Պետրէ՝ Թասլին. Նունա՝ Կրկիւ սունի. Պօղ՝ Կապանիկոսի. Սարիոն՝ Հռոմ մայ քարն կոչեցեալ, որ է Հռոմ Կլայն. Յովհաննէս Թալային (2). Թովմայ՝ Տարսայոյ. Հարոն՝ Հշմու շայ։ Իսկ Սիսիոյ 'ի Կարիոյ եպիսկոպոսապետն Աւիմիոս (3). Յնտիոքայ՝ Պիսիդեայ՝ Սենեքանոս։ Յերկոսայ քաղաքէ Օրոսիս. Յերանայ՝ Պետրոս. Յուլիայ Սիկառնցին՝ որ յետոյ հերձուած խօսեցաւ։ Թուխեպիոս՝ Դիեսսոսի, որ ու բար սքանչելիս 'ի Կոստանդնուպօլիս մեծաւ մեծս. և զերիս աւուրս լուերեայն աղօթեցայ կալով կանգուն ամենեւին։ Դ. Հրեշտակ տեսան աւանդեցայ զոգին. և վաւերցաւ մարմինն երկնաւոր լուսով զտիւ և զգիշեր. և զահի հարսաւ քաղաքն. և առին զնա գո զուլթեամբ զի դիցեն զնա ընդ առաւել մարտիրոսս։ Դ. Ձայն եղեւ 'ի մարմնոյն զի տարցին զնա յամթոռն իւր. և տարան զնա յամթոռն իւր. և տարան զնա 'ի Երինէ Դիոկեսարու։ Դ. Լաւիեան՝ (4) Կաստուրանայ. Թէոդորոս՝ Աւլեքիոյ. Ղուկաս՝ Իմիրիոյ.

(1) Մի օրի. միայն ունի զայս։

(2) Մի օրի. Թալացին։

(3) Մի օրի. Նուփիոս։

(4) Մի օրի. Եւլափեա։

Լեսեբիա՝ Յեդրանոսի. Ամբիոդոս՝ Սոնքիֆաղէկ Անտարի. Ռուսինոս՝ Աբսեկիայ. Աղեքսանդրոս՝ Բանքպոյ. Թող վանեշան տեղեաց եպիսկոպոսան՝ զոր ոչ գրեցաք։

Իսկ երիցանց և սարկաւագաց թիւ ոչ դոյր. որք ընդ ասացեալ եպիսկոպոսունդ գնային յաքսորս, և տուան 'ի բանտ և 'ի կապանս 'ի Կոստանդնուպօլիս և յԱղեքսանդրիա, և բազումք 'ի մուխս (1) խեղդեցան։

Իսկ որք 'ի տեղիս խուրեանց յաշխարհէն Սսորոց սպանմամբ կատարեցան բաց 'ի հաւատարացն են այսոքիկ։ Ամբրոսիոս՝ 'ի գաւառէն Ընտիոքայ, Աբրիանէ՝ Սասափտոնի 'ի գաւառակէն մեռան. և Յովհաննէս խնամուն խոյս ետ և գնաց 'ի Ինլոյ վանս 'ի Ալեւեկիայ. որք երթեալ սպանին և զերեսաբս ընդ նմա։ Կորիս՝ գլուխ վանուցն Ընտիոքու սպանաւ ամենայն բնակչաւք վանիցն. և բնակիչքն թուլպահու վանիցս յայժ տանջանաւք կատարեցան. և վանք սրբոյն Թոմանոսի, և վանք սրբոյն Սիմէոնի և Հ իլայի առաքելոյն վանքն 'ի Ռեսոն. և Ընշնատս գլուխս և մայր վանորայիս սրով կատարեցան յետ բազում աղմկի։ Նոյնպէս և Կրօնաւորքն Սանոնի, և Յովհաննէս վանապետն

(1) Եկու օրի. 'ի մոյ խեղդեցան։

Գասիրայի պրային, և վանորայքն որ շուրջ զԼուսոյ քաղաքաւ բազումք, ամենեքեան կոտորեցան ի տեղիս իւրեանց. և վանքն սրբոյն Յովհաննիսի յարեւելից կողմանէ Խառանու, և վանքն Նականոսի, և վանք սրբոյն Արքսի, և աւագ վանք լերինն հիմն Նարկեանն Թուման Ղաքելոյն որպէս ասեն խսպառ կոտորեցան։ Եւ վանք սրբոյն Սահակայ՝ և վանք մի մեծ Եփրատայ և Ի զալայ, և Ինգուգելև անեարեւմն առաքելադիր՝ յԱմթայ երկիրն իւրեանց եպիսկոպոսաւն և միաբանօքն ի միասին կոտորեցան։ Եւ վանք սուրբ Ղանիանոյ և վանք սրբոյն Ղբրահամու, և վանք սրբոյն Դանիէլի. և վանք սրբոյն Սամուէլի Նմանապէս նահատակեցան։ Եւ վանքն սրբոյն Ղսբամու. և վանքն Թրայի առընթեր Դասլին կոտորեցան բազում ճգնութեամբ. և զինչ ասասցուք մանրամասնելով քանզի յԴասլայէ (1) մինչեւ ի Բաղդատ. և յԵփրատ անսպատ արարին զքաղաք և զգիւղ ուղղափառաց։

Իսկ որք փախչէին առ ժամանակն խուզէին զնոսա խստագոյնս, և սպանանէին։

Իսկ վարդապետք՝ որք քաջալերէին զգնհօտն և վիճէին ընդ Թշնամին՝ Եղիայ՝

(1) Մի օրի Դաղէն Թեւ. բեւս Երապ

Իսկաւնայ և Սամէ, Լոզմաս, Յովհաննէս և Սնորն յարեւելից. և Կաթուխայ (1) և սուրբն Սարգիս զքանչելագործն. և Շնոն. և միւս Ղզիա, և Սիմէոն, և Կազը, և միւս Սարգիս, և Յովհաննէս միւս, և Սիմէոն միւս. և սուրբն Շնանիա (2) այր Աստուծոյ և նշանաւորն. զոքա յետ զդուշացուցանելոյն և քաջալերելոյն զերկիրն ասացեալ. գԼնային 'ի միասին առ Թագաւորն յանդիմանել զնա ամենայն համարձակութեամբ։

Իսկ անօրէնն՝ բնակարանն սատանայի և հան հրաւիրակ (3) իւրոյն զի պատերազմեսցին բանիւք ընդ արքայն. որք յաղթահարեցան 'ի սուրբ Հոգւոյն որ բնակեալ էր 'ի նոսա. և գաղտապէս հեղձուցին զնոսա, և ծածկեցին։ Եւ զվանեարն որ կայր շուրջ Պապայ, զսուրբ Օակիբէ, և զսուրբն Ենբէ և զսուրբ Սապէ, եպիսկոպոսաւն և ամենայն կրօնաւորօքն կոտորեցին։ Եւ էր անդ փնակեաց մի Սիմէոն անուն որ զամենայն աւուրս իւր հայց ցանկութեան ոչ էր կերեալ. բայց միայն արմատս 'ի ձմերայնի, և բանջարս յամարայնի. որ յար և հանապազորդ 'ի զարմացման լինէր աստուածայնոցն։

(1) Մի օրի. կաթիւեց։ Եպիսկոպոսն Անանիա
(2) Մի օրի. յաւելու սուրբ (3) Մի օրի. հրաման։

Digitized by Google

Լ։ միւս սիւնակեացն Թոմմաս տարացին նշանագործն՝ յորմէ հրեշտակք պատկառէին, վարդապետն սքանչելի. զսուտ զկնի աշխատ առնելոյն բանիւք, որով կատարեցին։

Իսկ անօրէն ուրացողն Պօղոս ուռհայ յեցին լցեալն դիւաք՝ ելից արեամբ զՄի Ջագետս և փախստական արար զբաղու� 'ի Պարսս. և ոմանք իբրեւ զգազան շրջէին 'ի բերինս մերկ և բոկ և տամեալ. և ոչ ոք է կապաղ զպղծութիւն նորա պատմել գրով։

Այս բաղում (անգամ) ազաչանաք կոչէր առենքն զսուրբն Յակովբ արձեցին։

Իսկ նա ազօթիւք խնդրեաց զկամս Աստուծոյ, և եկ գնաց մինչեւ ցվանքն՝ որ Պարսիցն կոչի. և անդ երեւեցաւ նմա հրեշտակ տեառն, և ասաց ցնա. դարձիր 'ի տուն քո և պատուիրեա հօտի քո զգուշութիւն վասն աղդափառութեան. զի յետ երկուց աւուրց կատարիս։ Լ։ դարձաւ և խօսեցաւ ընդ աշակերտսն իւր բանս զրնաւորս և աղօթեաց. և ետ վստահանութիւն հաւատոյ, և կատարեցաւ ըստ բանի հրեշտակին։

Յայնմ ժամանակի խնդրեաց կաւուն թագաւորն Պարսից հինգ հազար հինգ հարիւր կենդինարս ոսկւոյ 'ի Յուստինեանէ. զի ասայ

ցէ զօրավարին՝ որ պահէր զդուռն Հոնայ. և
ոչ կամեցաւ ասել։ Յետ նա սրտառեալ (1) եկն
'ի Աիջագեաս մինչեւ յԱնտիոք. և գերեաց
և կոտորեաց. և գտաւ (եգիպտ) 'ի գերիսն
զորս հարիւր կուսանս. զոր զոհեաց Կուզիայ
կուսաց իւրոց. և դարձաւ։ Յետ այսպէս կորոյս
Յուստինոս հոգւովք և մարմնովք զերկիր։

Ի սոյն աւուրս ջուրն Աերսմայ անյայտ
եղեւ, և ոչ երեւեցաւ զամն հնգետասան.
և անկաւ հուր յերկնից, և այրեաց զԱալ-
բաք (2) քաղաք. զոր շինեաց Սողոմոն 'ի լեա-
ռանն Լիբանանու։ Այլ զերեք վէմն զոր
եգեալէր իմաստունն 'ի խորհուրդ Հերոդ-
դուԹեանն, որ քարոզելոց էր յիւրում ժա-
մանակի ոչ ինասեաց հուրն։

Յաւուրս յայտսիկ երեւեցաւ 'ի Աիւ-
լիկիայ կին մի որ երկայն էր քան զամենայն
մարդ գիրկ մի. և լեզու ինչ ոչ խօսէր. և
կերակուր մարդոյ ուտէր, և 'ի խանուԹէն
փող մի առնոյր և այսպէս կեցեալ զբազում
ժամանակս անյայտ լինէր. և ասէին ոմանք
Թէ 'ի յաւերժահարսանցն էր։

(1) Մի օրի. Աբամաեալ։
(2) Պաալբէկ. յետոյ հին ասէին Նոյէմի. որոյ ապերանի գնա-
նին գնա հոյանոյ և Ճարպաբ-
բուսաս ղինուածոց. որոյ Ճարպա-
բուսիւն։ հաստատին Եգիպտոսի
հնամիջանցն հուլիսեաց։

Յետ չարաչարին Պօղոս, Անկղիպ եղեալ եպիսկոպոս Լուսաւորչայոյ չարագաղան և կապտաղի այր. որ Ժողովեաց յուղղափառացն քան այր կրօնաւորս և պարկեշտս. և ուրանալ հարկաւորէր. և ասպա արկ զնոսա 'ի բանտ և կեղեքէր զկեանս նոցա։ Ի գիշերի միում եկին հեղեղ 'ի վերուստ կողմանէ քաղաքին, և եհար զպարիսպն և փլոյց զնա և անցաւ 'ի վերայ քաղաքին. և էառ մարդ և անասուն բազում և տարաւ եկեալ յԱփրատ. և անօրէնն Անկղիպ զերծաւ 'ի Կայն ընդ այլս ոմանս. և կամեցան քարկոծ առնել զնա. զի գիտացին թէ վասն նորա չարեացն եղեւ. և փախեաւ յԱնտիոք։ Լու տեսեալ զնա Աֆրեմ աղանդակիցն իւր որ պատրիարգն էր Անտիոքայ, ասէր. տեսէք եղբարք զերկրորդ Կայ, որ զերծաւ 'ի ջրհեղեղէն, որ եղեւ վասն ոչ ընդունողացն զսուրբ Ժողովն։

Իսկ Յուստինոս առաքեաց ոսկի բազում շինել զԼուսայ. և 'ի պեղելն գտաւ գիր 'ի վէմն քաղդէացի գրով, թէ երեք անգամ ջրհեղեղ կրէ Լուսայ. և գտին մեռեալ 'ի հեղեղէն (1) երեսուն հազար անձինս. և 'ի թուելն զքնակիչս քաղաքին իմացան

(1) Մի օրի. ոմի այսպէս. և գտին մեռեալ 'ի հոգան։

թէ երկու հայրենիք հազար այր տարեալէր
ջուրն զորս ոչ գտին։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս Ակղիպայ և Եփրեմի. որ անիծանէին զուղղափառսն. և եկն պատուհաս 'ի վերայ նոցա։

Եւ մինչ Ակղիպ և Եփրեմ խրախանային 'ի միասին և անիծանէին զուղղափառսն, շարժեցաւ քաղաքն Անտիոք հինգերորդ շարժումն. և տապալեցան ամենայն ձեռագործք։ և եղեւ հրաշ նոցանչան, զի օդդ բերէր զպատիժն Սոդոմայ. և եռայր գետինն. և գայր յանդնդոց սեաւ ջուր, և բերէր խեցեմորթս և կրայս և ոսկեբք գազանաց և հուր և ջուր 'ի ներքուստ 'ի վեր գայր. և ոչ դադարեաց ամ մի ողջոյն պատուհասն, և հոտ գարշութեան գայր անտանելի. և մեռանէին մարդ և անասուն և փախչել ոչ կարէին. և ամենայն աշխարհ լուեալ լային զնոսա և չիշխէին մերձենալ առնոսա։ Յետ մեծ եկեղեցին զոր շինեալ էր Կոստանդիանոս՝ դողայ զեւթն օր, և պատառեցաւ տեղին և եղ հուր և այրեաց զեկեղեցին. և երեւեցաւ խաչ լուսեղէն

յօդն. և մնացեալքն 'ի պատուհասէն սկը-
սան ասել. տէր ողորմեա։ Եւ էին ապրեալ-
քին 'ի բազմութենէ քաղաքին հազար եր-
կու հարիւր և յիսուն այր. ընկղմելոցն ձայն
հեծեծման լսելի լինէր յելանել ոգւոց նո-
ցա։ Այլ ոչ գտանէին զ'սկզիպ և զ'փրեմ
զի ապրեցս խնդրեսցեն. և ոմանք ասէին թէ
Աստուած յերկինս էառ զնոսա 'ի բարկու-
թենէս. և 'ի շրջելն գտին զնոսա զի դողալ-
լով գետնոյն ընկեցեալ զնոսա 'ի սան մի կլոպ-
րեփեաց, և էին երկուքն մարմինքն եփեալ
և մաշեալ և ոսկերքն միայն կային. բայց գբ-
լուխք նոցա մնացեալ էին 'ի դուրս, վասն զի
ճանաչեսցին 'ի տեսողացն։ Եւ քսան մի շուրջ
զքաղաքաւն ապականեցաւ։

Եւ Մելեւկիա Աստրոց և Դաքնէ կորեան
'ի շարժմանէն. և Ինաւարզայ գլուխ Կիւրի-
կիոյ և Կրնթոս մայր Հլադայ. կորեան բաւ-
զում շինուածք և յոլովութիւնք արանց 'ի
չար թագաւորութենան Յուստինանեայ։

Լուարուք և զայս սիրելիք, Բամբրաց-
ւոց երկիրն կայ յարեւելից Եգիպտոսի։ Իսկ
Ընդկացն 'ի հիւսիսոյ. Ընբայ ոմն թագա-
ւորեաց անդ յայսմ ժամանակի. և լուաւ
թէ Ընռոմայեցիքն ներգէն զ'Ընբայն և կա-
տորեն որ կան ընդ իշխանութեամբ նոցա.

Digitized by Google

և զայրացաւ, և սպան զվանականն որք երթային 'ի Հնդիկս յԱրիոյ կողմանց, և հաստատ Հանապարհ յերթեւեկաց։

Իսկ թագաւորն Բուշանայց Հնդաւքն առաքեաց առ Հրեայն, և սպառնացաւ նմա զի կոտորիցաց զանմեղսն. և լուաւ ընդդէմ պատասխանի։

Եւ Հնդաւքն ժողովեաց զօրս և ուխտեաց Տեառն մերոյ Յիսուսի. որ թէ տայցէ նմա յաղթութիւն, լիցի նա քրիստոնեայ. և գնայց 'ի վերայ Հրէին և յաղթեաց նմա երիցս. և հալածեաց զՀրեայն 'ի տեղւոջէն։

Եւ առաքեաց երկու յիշխանայց խրոց առ Յուստինոս. և ծանոյց զկրոն. և խընդրեաց Եպիսկոպոս, զի արասցէ զնոսա Քրիստոնեայս. և նա առաքեաց զՅովհաննէս խրոյ աղանդոյն, և մկրտեաց զնոսա այսինքն զՀապաշիքն. և խրախուսեալ 'ի Քրիստոս Հնդաւքն, արար զերկիրն Բամերայ ընդ խրով հրամանաւ. և եդ նոցա թագաւոր Աբրահամ։

Կայրն և 'ի Բամիրայ յորով քրիստոնեայք. վասն որոյ առաքեաց Աբրահամ յԱզեքանդրիայ առ Տիմոթէոս, և խնդրեաց 'ի նմանէ հովիւս այնր հօտի. և նա առաքեաց

ուղղափառ հաւատով եպիսկոպոս և քա-
հանայս։ Որոց գնացեալ որք նշանագրածք
համբաւեցան և ի Բուշանան. և խնդրեցին
զնոսա առ իւրեանս. որք երթեալ խոստե-
ցին զուսումն Յովհաննու յաղթելով նահա-
բանութիւնք և պարծովք. և դարձուցին զամե-
նայն Բուշանան և զԲամիրայ յուղղափա-
ռութիւն։

Եւ գիտասջիք, եւթն թագաւորութիւն
է անդ. երեք թագաւորութիւն Հնդկաց.
չորս թագաւորութիւն Հապէշեացն, որք
են Բուշացիք. որք ունին զաւելի մասն երա-
կրին զհարաւու և զարեւելից. քսանզի քսան
և չորս պերատ է աշխարհս, և զվեշտասանն
Բուշանքն ունին և (1) Հնդիկք. և ողորմութ-
թեամբն Աստուծոյ կան յուղղափառութ-
թեան. և մի բնութիւն ասեն զԲրիստոս
զծնունդն հօր։

Եւ առաքեաց Յուստինոս առ թագաւ-
որն Հրեայ, և քաջալերեաց զնա և ասաց.
«բարձ զաղանդդ զայդ, զի դարաս ոչ ընդ մեզ

(1) Ամենայն օրինակք այսպէս
ասին. բայց ասա պոխանն խօսք.
ղի սուտ է եր եւ զմնացեալն
Հնդիկքն։ Մինչ ի օրինակ
հնագոյն որ ոչչամ Խարգմանի է-
բեւի էնքնէ Խարգմանիկն. ա-
սէ. քսան և չորս պերատ է
աշխարհս. և զչորեքտասանն
Բուշացիքն ունին, որ են Հա-
պաշիք. և ողորմութեամբն

են և ոչ ընդ ձեզ. և մանաւանդ մեր ասելս վասն Քրիստոսի և ձերդ՝ 'ի մի իրս հայի. զի դուք ասէք՝ որ հարքն ձեր մարդ խաչեցին. զնոյնն ասեմք և մեք. զի զմարդն սպանին. և դուքս ասեն զԱստուած սպանին հարքն ձեր։»

Յետ դու մի զարմացիս ընդ այս քանզի զինեալ ժողովոյն Բաղկեդոնի, Ասեայքն որ 'ի Փղիշտ՝ գրեցին առ Մարկիանոս զնոյն բանս. և մեք իսկ գտաք զԹուղթն, որ ուներ օրինակ զայս։

«Ինքնակալդ Յուստինիանոս Մարկիանէ, և Թագաւոր երկրի և ծովու, Զգոս Ասիոյ որ դիք Աբրահամու կամիմք ինդալ միշտ ձեզ յաղթութեամբ։ Շնորհս պատուիմք ձեզ զի քոյին կորովի խոհեմութեամբդ ազատեցեր զմեզ 'ի նախատանաց անուղղայ Քրիստոնէից. որք հայհոյեն զմեզ ասելով որդիս աստուածասպանից։ Այլ այժմ լաւաք եթէ իմաստուն ապաստիք և հանճարեալ ծերակուտքդ սահմանեցեր մի ումեք խշխել ասել զՀարսն մեր տիրասպան, այլ մարդասպան. և այժմ աղաչեմք զինքնակալութիւնդ քո, զի դիցես առն միոյ տրիւն 'ի վերայ մեր՝ զոր սպանին հարքն մեր. զի տացուք զայն, և ազատեսցուք զՀարսն մեր և զմեզ 'ի բամբասանաց. ողջ լեր։»

Digitized by Google

Օ՛այս մեք գտաք գրեալ ըստ հաճոյս զոր երկրորդեաց Յուստինոս. մանաւանդ ըստ առաքելեաց զ՝ՐԷԼԻՅ ասելն առ Սարկիանոս։ Յորմէ քաջալերեալ՝ ՀՐԵՑԱՆ չոգաւ՝ Ի ՎԵՐՋԱՅ ՆԵՆԳՐԱՆԱՅ (1) և կոտորեաց զ՝ԲՐԻԱՍՈՍ ՆԵԱՅՍ. զոր ցուցանէ պատմութիւնն՝ որ յաղագս նոցա։

Ի. Թուղթն առ Յուստիանէ. և դեսպանքն նորա որ գնացին առ Սնդուրն Թագաւորն Տաճկաց սիրոյ ողջագուն. և մինչդեռ անդէն կային, գրեցին առ Յուստինանէ զրոյց զայս օրինակ։

«Գիտասցէ ինքնակալութիւնդ ձեր, զի աջողեալսն Տեառն եկաք՝ Ի ՀԵՐԵԹԱՍ քաղաք արքայանիստ Տաճկաց. և ոչ էր անդ Թագաւորն. և առեալ անտի առաջնորդ, գնացաք ընդ անապատս և ընդ աւազուտս երկիր աւուրս տասն, և տեսաք զԹագաւորն Սնդուր նստեալ երեւելի փառաք. և տրաւաք զքնծայսն։

Իսկ նա զառաջինն ողջոյն զմեզ այսպէս. և ասաց. ո՞ւր է՝ ԲՐԻԱՍՈՍՆ ձեր, որ արարքէք Աստուած երկնի և երկրի. և արդ՝ որպէս խուսաքս, առեալ՝ Ի նմանէ ոչ միայն զՀաւատաւածութիւն, այլ և զՀռովմայեցւոց Թա-

(1) Քաղ։

գաւորութիւնն. և ասացիք զնա մարդ մի մեռեալ և կենդանացեալ։

Եւ մինչ զայս ասէր, եկին դեսպանք 'ի Ղ հաւատ թագաւորէն, և տուին թուղթ գրեալ զայս ձեւ։

«Ողորմութիւն մեք Աստուծոմէն Իսրայելի և հալածեցեալք զԻսրայելացէն, և զհաւատացեալսն 'ի նա կորուսեալք։ Առաք և զԼենգրան երդմամբ, և կոտորեցաք զնա գիտելով զի ոչ մեղադրէ մեզ Աստուածման երդմանն 'ի կորուսանել զԹշնամիս նորա։ Այց ոչ կարեմ գրել առ քեզ զսէրն զոր ունին (1) 'ի Քրիստոսն իւրեանց. զի մանուկ մի ոչ կարացի պատրել 'ի բաց դառնալ 'ի նմանէ։

Եւ էր անդ կին մի թագուհի չորիւք դստերօք, զամենայն հնարս փորձեցի և ոչ լաւ ինձ. ապա ասացի ցնա քաւ լիցի ինձ ապականել զայդպիսի գեղեցկութիւնդ. միայն ասա՝ զոր դաւանէ թագաւորն Հռոմայ, թէ մարդ էր Քրիստոս, և մարդ խաչեցաւ և թողում զքեզ։ Եւ զայրացեալ եթուք յերեսս իմ անզգամն այն և մահաւէրն. և ապանի զնա ընդ դստերս իւր չարամահ։

Եւ Յուստիանէ յորդորեաց զիս յայս.

(1) Մի օրի. զոր տեսի 'ի Քրիստոսն իւրեանց։

բայց մի արասցես ընդ նմա խաղաղութիւն։ այլ գնասցուք 'ի միասին և բարձցուք զթագաւորութիւն նորա։»

Եւ զայս գրեցուք առ քեզ 'ի ձեռն Աբրահամու· երիցու որ ընդ մեզ, զի նոցա գոյն ծանիցես, և թէ զինչ ասասցէ մեզ պատասխանի ոչ գիտեմք. ողջ լեր։»

Յետ այսորիկ Պարսք և Տաճիկք միաբանեալք եկին մինչև Անտիոք և Սիւրիա, և գերեցին։ Ի սոյն աւուրս եղեւ շփոթ 'ի Կոստանդնուպօլիս և սպանին զդատաւորն. և 'ի նոյն օրն այրեցաւ մեծ կամրջուղիկէն. և այս ամենայն պատուղք էին չարեայն Յուստինեայ. այլ մեք սակաւն գրեցուք 'ի բազմայն. չարաձերն այն և անիմաստն՝ որ այնչափ եթող իւր արձանագրութիւնս նզովից։

Այս մերձ 'ի վախճանելն իւրում առաքար զԲուեր որդին իւր զՀոմանուն կենսար, և առաքեաց ընդդէմ Պարսից. որ եկեալ 'ի Սիմբէճ, լուսաւ վասն կուսի միոյ դստեր երիցու, և խնդրեաց 'ի կնութիւն. և երէցն պահանջեաց 'ի նմանէ ուղղափառութիւն։ Եւ նա երդուաւ նմա պահել զդուստր նորա ուղղափառ եպիսկոպոսիս և քահանայիւք. և թէ լցէ հնար

գարձուսցէ զամենայն եկեղեցին 'ի նոյնն։ Օ՛ի այդ հաճոյ է ինձ ասէ. և դու ապօթեա վասն իրացդ։ Եւ ետ նմա զաղջիկն որում անուն էր Թէոդորայ. վասն որոյ բազում դիւրութիւն եղեւ եկեղեցւոյ, և տարաւ զնա 'ի Կոստանդնուպօլիս ուղղադաւան եկեղեցականաց. և յետ երից ամսոց մեռաւ ծերն Յուստինոս, Թագաւորեալ ամս ինն։

Եւ Թագաւորեաց տղայ Յուստինոս ամս երեսուն և ութ՝ և ամիս եւթն։

Իսկ Պարսից Թագաւորն Կուտն ետ զորդին իւր 'ի Անիքեցիսն 'ի դպրոց. և ուսաւ զաղանդ նոցա. և ուխտեաց, թէ Թագաւորէ նա՝ պաշտէ զուսումն նոցա։ Եւ խմացեալ Կուտն՝ ժողովեաց զամենայն Անիքեցիսն, և այրեաց զնոսա զի մի ասէ ըստ ցեն Թագաւորք մոգուցն, և սպառեսցեն զիս. և զեկեղեցիս Անիքեցւոցն ետ 'ի Քրիստոնեայսն։

Եւ եղեւ բանս այս և 'ի Կոստանդնուպօլիս. և հաւաքեցին զանդ գտեալ Անիքեցիսն, և Ջանացին զի արասցեն զնոսա քրիստոնեայս, և ոչ հաւանեցան. և այրեցին զնոսա նոյնպէս։

Ի սոյն աւուրս առաքեցաւ Վաղիսիրիս զորագլուխ մեծ զօրու 'ի Պարսս, և եհատանդ 'ի մեծի Պասէքին։

Յե ասաց Կուսն պատուեսցուք զտունս Քրիստոսի վասն ձեր և վասն քրիստոնէիցս որ ընդ մեզ են. և մի պատերազմեսցուք մինչեւ անցցէ օրս երեւելի. և ոչ լուան յանդուգնին. վասն որոյ յաղթահարեալ մնաց նեցան 'ի ձեռս Պարսից և կոտորեցան. և ազգն գերեալ եղեն, և դարձան ստակաւք։

Մեռաւ Կուսն յետ յաղթութեանն. և Թագաւորեաց որդի նորա Խոսրով։ Յե մայր նորա չարչարէր 'ի դիւաց, և ոչ կարէին օգնել նմա մոգքն և կախարդքն։ Յե հաւատաց 'ի Քրիստոս, և մկրտեցաւ 'ի Սիմէոնէ միայնակեցէ և բժշկեցաւ։

Յայսմ ժամանակաւ ապստամբեցին Հրեայքն որ 'ի Սամարիա, և կոտորեցին զՆիկոպոլիս (1). և երթեալ զօրն Հռովմայեցւոց ջնջեցին զնոսա։

Իսկ Թագուհին Թէոդորայ ապրէր ընդ Թագաւորն վասն ուղղափառութեանն. և գրեաց Թագաւորն Թուղթ յանապատն Այգիպտոս առ միանձունսն. զի եկեալ խրատեսցեն առ Պատուած համարձակութեամբ բան խնդրեսցեն Պատուծոյ զկրաւացին։ Գրեաց և առ Սեւերոս Պղեքսանդրիա, զի աշխատ լիցի, և եկեսցէ 'ի գործ եկե-

(1) Մի օրի. Նիկոպոլիս

զեցւոյ, և եկին յոլովութիւն անապատաւորաց և սուրբն Սեւերոս։

Այսպէս և հրամանաւ Թադաւորին եկին և յամենայն կողմանց բազմութիւն եկեղեցականաց, և արարին քննութիւն զասրի մի. և շահ այս եղեւ. զի Ենթիմոս եպիսկոպոսն Կոստանդնուպօլսի դարձաւ յուղղափառութիւն, յաղթեալ 'ի ճշմարտութենէն. և դադարեաց հալածումն Եկեղեցւոյ ուղղափառաց. և գրեթէ բազմութիւն քաղաքին հաւանեցան ուղիղ խոստովանութեանն 'ի սեռանեալն բազում նշանս 'ի սրբոցն, բաց յեկեղեցականացն՝ որք լրբեցին վասն հպարտութեանն։

Եւ մինչ յայսոսիկ էին, եհաս համբաւ ապաստակի բարբարոսաց յաշխարհն Թրակացւոց. և ելին զօրքն գնալ 'ի վերայ հինին քան հաղար արանց ապառազինաց. և գընային խնդութեամբ բազմաւ, յուսալով թէ լինի ուղղափառութիւն։ Եւ Թագաւորն յուղարկէր զնոսա ելեալ 'ի քաղաքէն և դարձաւ յեկեղեցին յաղօթս. և շարժեցաւ քաղաքն ամենայն և լցան փողոցք և վերնասրահք և տանիք բազմութեամբ արանց և կանանց. որք աղաղակէին միաբերան և ասէին. բարեպաշտ արքայ, աղջացիր զոր-

տառումն եկեղեցւոյ. և արա միաղաւանք զամենեսեան. փութա թագաւոր, և 'ի կեանս քո արա խաղաղութիւն և միաւորութիւն եղբարց բաժանելոց. որ լինի միաբանութեամբ, և միաւորութեամբ բանին Աստուծոյ։ Յետ երեց արքայ լսելոյ մեծ. լայր և ամենայն քաղաքն. զի ասէին եթէ միակեացք որք երկնային վարուք են և աստուածախօսք և աքանչելագործք զոր ինչ դաւանեն, այն է Ճշմարիտն։

Խորժէր յոյժ թագաւորն քարոզել ընդ ամենայն երկիր զուղղափառութիւն։ Բայց զի մնանէին առ նա Քաղկեդոնիքն և արկանէին նմա երկիւղուկս հոգեւոր և մարմնաւոր, ասելով վեց հարիւր երեսուն և վեց եպիսկոպոսք միաբան են կապեալ ընդվիւք. զնոքդ լուծանես զայն. այլ և ոչ ներեն քեզ կեալ ըստ մարմնոյ յայտնի կամ 'ի ծածուկ այսմ դաւանութեան հետեւողքն։ Մի խաբիր արքայ 'ի կնոջէ։ Յետ երկեաւ թագաւորն 'ի նզովից և 'ի մահուանէ, և լռեաց։

Իսկ Սեւերոս ասաց 'ի նզովից նոցա մի զանգիտեր. զի Պետրոսի տուաւ իշխանութիւն կապել և արձակել, որ մի դաւանեաց զՔրիստոս որդի Աստուծոյ միաւոր բանիւն զերեւեալն՝ զոր տեսանէր. և բաժանողքն

կապեալք են և նզովեալք, ոչ զոք կարեն կապել կամ արձակել. այլ՝ մահն մատմնոյ կարծելի է 'ի դոյանէ։

Բայց լսել արժան է Գրիգորոսի, և ոչ երկնչել 'ի սպանողացն մարմնոյ։ Իսկ միա դասանքն և կրօնաւորքն յորժամ տեսին թէ յերկարեաց բանն, և ոչ լինի խաղաղութիւն և բարի լինչ, ասեն. ով Թագաւոր, հաւատս մեր ոչ է մանկագոյն և նոր, թէ հասանի. և ոչ ծերացեալ՝ թէ նորոգի. և ոչ թերի՝ որ լնու. և ոչ առաւելեալ՝ որ պակասի. այլ զոր սերմանեցին մարգարէքն՝ այսինքն Հոգին սուրբ էր սերմանօղն, նայն ինքն ժողովեաց առաքելովքն. և Տէր Գրիգոր տես Աստուած ճշմարիտ հաստատեաց և կնքեաց պատմեն անհաւելի. յայնմանէ մեք ոչ թիւրիմք. ոչ պարգեւաք. և ոչ փաղաքշանաք. ոչ մահուամբ, և ոչ կապանաք, այլ յայնմ եմք և կացցուք մնասցուք առաջի մարդկան. որպէս եմք առաջի Աստուծոյ. ըղձերն դուք գիտէք։

Եւ զայս ասացեալ գնացին մենաւորքն (1) առեալ ընդ ինքեանս և Սեւերոս և զԱնթիմոս։

Եւ լուեալ զայս Սօրզօրու (2) որ 'ի սահ-

(1) Ա. յոք միանձունքն։ (2) Մի օրի. Մուրզուրու։

Digitized by Google

մանս Ալիթայ քաղաքի, և գնայ տուսն աշխարհերտաքն ի Կոստանդնուպոլիս. և տեսեալ զԹագաւորն ասէ. մինչեւ յերբ է անիծեալ ժողովուրդս չարիքն. վասն էր ոչ լուար հրամանացն Աստուծոյ սրբոցն։ Եւ գտեալ Թագաւորն և եհար ձեռամբ ընդդէմ սրբոցն, և ասէ. զի եղուկեա զսուրբ ժողովն, և կամ զմեզ նշանս առնեա վասն այդչափ հանճարոյ ձակերդի քո առաջի իմ։ Եւ ասէ տուրքն նզովեսցի և եզիպտի նզովեալ մնիցն ջար ժողովն և ամենայն հաւանեալքն նմա. և զի նշանս խնդրեցեր, յուսամ ի տէր զի զքեզ պատուցէ նշան. և ել բարկութեամբ ի Թագաւորէն։

Եւ Թագաւորն առաւել պտղամտեալ զբերեաց Թուղթ և առաքեաց ընդ ամենայն երկիր. եթէ ոք անիծեսցէ ասէ զժողովն Բազկեդոնի, սպանցի։ Եւ առաւել փոխեցուցին զհրամանն քաղաքացեալքն ի յապանդեն։

Օ կնի սուրբ միոյ փայլատակեաց հրաշք ասէ մի Աստուծոյ առաջի Թագաւորին և եհար զգլուխ նորա. և անկաւ Թագաւորն և անշնչացաւ. և տեսեալ Թագաւորին զգաւ և անկաւ առ սուրբսն. և ապաշաւեալ էած զնա ի հաւան, զի եկեալ ապաշխարս

ցէ 'ի վերայ նորա. և յարեաւ առողջացեալ և խրատեաց զնա և ած 'ի հաւան։

Եւ խնդրեաց Թագաւորն ժողով, զի արասցեն վերստին քննութիւն։ Եւ լուեալ զՀրամանն, եկին Սեւերոս և Ընթիմոս և Թէոդորոս պատրիարքն Անդեքանդրի. և ըզ-գինի նոցա եկն Աղադոն պատն Հռոմայ։ Իսկ Թագաւորն և քաղաքն ելին ընդ առաջ նո-րա և մեծարեցին զմնաւ նորա։

Բայց երեք պատրիարգունք ոչ ելին ընդ առաջ նորա. և մեղադիր եղեւ Թագաւորին Աղադոն և ասէ. ոմ է խաբեբայն այն Օրը-զորաւ (1). զի վասն նորա մաղեր (2) դարձեալ զհաւատս սուրբ ժողովոյն. արա զնա 'ի հր-ամանս իմ, և խրատեցից զնա. և ասէ Թա-գաւորն, որպէս և կամիս հայր, արա։

Իսկ այլն սքանչելի առանձնացեալ էր և կայր 'ի լուութեան և 'ի դպուշութեան. զի էր առաջին շաբաթին աղուհացին. և ա-ռաքեաց կոչնականս նմա երիցս (3) և ոչ եւս պատասխանի. յղեաց ապա առ նա և ասէ. կամ եկ առ մեզ. և թէ ոչ՝ գամք առ քեզ ես և Թագաւորս։

(1) Ասա ասենայ. օրինակ ա-նէն Զ օրաւ. դիպն գ օրինակ որոնց 'ի Լեռոյ. ունի նա ասա գամ։ Մարդոցաւ։

(2) Երեք օրի. մաշեա։

(3) Մի օրի. երկիցս ան-գամ։

Այս պատասխանի և ասէ. ես մինչեւ 'ի մեծ հինգշաբաթին ոչ գնամ առ ոք. և ոչ ընդունիմ զոք առ իս։

Իսկ Ադադոն բարկացեալ արար սատեան և նզովեաց զսուրբն Սեւերոս և զՆՆԹիմոս, և զԹէոդորոս, և զՍՕրզօրաւ. և դաւանեաց երկու բնութիւն. և առ ժամայն եհաս բարկութիւն Տեառն 'ի վերայ նորա և թանձրացաւ լեզու նորա և ոչ տանէր բերանն և եհան արտաքս. և երեք անգամ կտրեցին բժիշկքն զԹանձրութիւն նորա և ոչ դադարէր կեղն. և դառնագոյն տանջեաց զնա զաւուրս սուրբ պահոցն. և 'ի մեծի հինգշաբաթուն սատակեցաւ. չարապէս։

Իսկ Թոյլ Թագաւորն այլ ինչ ոչ արար. բայց միայն զի եբարձ զհրաման սպանման անիծողացն զՊաղկեդոնի ժողովին. և գնացին սուրբքն յիւրաքանչիւր տեղիս։

Այսր յայտնեցաւ. նշխարք սրբոյն Մարինեայ 'ի գաւառին Աշտիոքու 'ի Ղանդարիս (1) գիւղն, և էր անփուտ. և ամենայն մարմինն վերք, և մածեալ ընդ տախտակն, և բերաւ յԱշտիոք։ Այս բազում բժշկութիւն եղեւ 'ի փառս Քրիստոսի։

(1) Մէ օրի. 'ի ՀԱրդարմ

Օ այսու աւուրքք[1] ելին Պարսիկք 'ի Մի Ջաղեաս, և գերեցին մինչև 'ի Հալապ և յԱնտիոք կամակարութեամբ. մինչեւ տաբան զկնի սիւնս կոձս։

Եւ գնացին Հռոմայեցիք և առին զվերբէժն գերեալ զաշխարհն Պարսից։

Եւ զհետ նոցա ել Խոսրով արքայն Պարսից անձամբ, և քակեաց զԱնտիոք. և գերեաց զԱբուշ. և ոչ կարաց առնուլ զԱռհայ, և գնաց։

Յաւուրս յայսոսիկ առաքեցան 'ի Կոստանդնուպօլիս եպիսկոպոսք երկու քաղկեդոնիկք, գտեալք յարուագիտութեան, Եւտոքի և Պղեքսանդրոս. և եհատ զերանս նոցա Թադաւորն, և հանեալ 'ի ձող եցոյց քաղաքին և աղաղակէր մուներտիկն, թէ այս է դատաստանն այնպիսի գործողացն։ Եւ կատարեցաւ բան առաքելոյն թէ որովհետեւ ոչ ընտրեցին զՍտուած ունել 'ի գիտութիւն, մատնեաց զնոսա յանարժան գործս։

Ի հնգեռատասան ամին Յուստինեայ ելին Պարսք և գերեցին զԻմիմիտոն[2]. և զկա-

(1) Մի օրի. ուրի 'ի լատանց. զի զայսու ժամանակաց Պարսիկք գերեցին զՀալապ, և Հռոմայեցիք զՊարսիկքն։

(2) Մի օրի. զՄիտոն։

ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆԻ
Digitized by Google
Կարգաց թիւ.....

լանիկոն (1). և զՊելիայ քակեցին. և հանին անուտի զտուրբ նշխարն Խաքոսի, և զտակին որ 'ի տապանն արքոյն Սարգսի. զդարդն քակեցին առին, և տարան յաշխարհն իւրեանց։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս որ յութ հարիւր քառասուն թուին Ասորոց եղեւ հրաշք անհաւատալի. և զինի եղեւ մահտարաժամ որ բնաւ չէր լեալ։ Եւ եղեւ սով և շարժ քառասուն օրս

Ի յութ հարիւր քառասուն և ութ թուին Ասորոց եղեւ հրաշք 'ի վերս քան զհաւատալ. թէ ոչ էի գտեալ բազում դրչագրեալ, և ոչ ես կարէի գրել. իսառաքեցաւ արեգակն տասն և ութ ամիս, զերեքեք ժամն յաւուրն լոյս տայր, և զայլն տրպէս ոչ ախս և ոչ գիշեր. և ոչ հասան սլսուղք տարուցն այնորիկ. և ամենայն երկիր եղեւ խրթեւ զբազմութեայ հիւանդ։

Եւ զինի այնորիկ եղեւ մահտարաժամ որ բնաւ չէր լեալ։ Եւ նախ ակաւ 'ի Կոստանդնուպոլիս. և մեռան առաջին օրն հինգ հազար. և միւս օրն տասն հազար. և յետ-

(1) Մի օրի. կալանիկոս։

Digitized by Google

զորոյ աւուրն հնգեռասան հազար. և չորքարիւրեամն սուտ տան և ութ հազար. զի եդիր (Եղ) թագաւորն համարողս առ դրան քաղաքին, և թուեցին միմեանս երեք հազիւր հազար յաւուրն մեռանել։

Ապա սկսաւ յաղքատն, ասայս 'ի մեծատունն և յիշխանն և 'ի տուն թագաւորին. նախ 'ի մէջ ձեռացն բուշտ երեւէր. և այն էր նշանն և ոչ կարէր փոխել զտուն. և ուռնոյր ցաղքն և պատատէր և երթայր շարաւն. և քառասուն գահեկան առնոյր մարդ որ հանէր մեռեալ մի 'ի քաղաքէն. որ և 'ի տունին բաղում. անգամ անկանէր եւ մեռանէր։ Լոյս էր զի մնանէր ոք 'ի տուն հատեալ 'ի մարդկանէ և դատարկացեալ, և չի գանձիւք. և բառնոյր 'ի գանձուցն ըստ կարի. և յելանեն ընդ դուռն՝ անկանէր և մեռանէր. և սկսան շնչեմուլ 'ի ծոցն ընդ դիմակունսն և դարձեալ ձգէր (արտաքս) 'ի քաղաքն. և հոտեցաւ քաղաքն և ձգեցաւ մահ ընդ երկիր ամենայն։

Լոյս յերկիրն Լոգիպտոսի Ընկեցաւ քաղաք մի և մնացին միայն եւթն արք և տղայ մի. որ և 'ի գնալն նոցա ընդ քաղաքամէջն երեւեցաւ նոցա հրեշտակ սեռաւն որ կոստրէրն. և մեռան գարձեալ նոքին արքն եւթանէքին.

և լայր տալայն. և հրեշտակ տեսանն բուռն եհար զմանկանէն և եհան 'ի քաղաքէն և ասէ. մի լար, զի բարկութիւնս Տեառն յաղագս չարութեան հերձուածոյ է և մեղաց. և երեւեցաւ հրեշտակն (Տեառն) ողջոյնք 'ի կերպարանս ծերոյ։

Իսկ յերկիրն Փղշաստացւոց 'ի քաղաքաց մի երեւեցան դեւք և ասեն. թէ կամիք ապրել ('ի մահուանէ), գտանէք յանգս ձեր պատկեր մի պղնձի, երկրպագեցէք նմա. և երթեալ շրջեցան և գտին զպատկերն, և բերեալ 'ի քաղաքն պատուեցին. և մեռան առհասարակ, և ոչ մնաց մի 'ի նոցանէ։

Ապայ քաղաքն Հեմս ինայեցաւ. զի ապաւինեցաւ 'ի բարեխօսութիւն Կրտչին Յովհաննու. զի անդ կայ գլուխ նորա։

Ի տասն և ինեերրորդ ամին Յուստինեանոյ բարբարոսքն առին զՀռոմ և աւերեցին։ Յ'ի սոյն ժամանակ կատարեցաւ սուրբքն Մեսերիանոս յԱղեքսանդրիայ։

Իսկ յԱնտիոք էր պատրիարք ուղղափառաց սուրբ Ճգնաւորն Սարգիս. յորում ժամանակի այրեցաւ վանք սրբոյն Իմէոնի յԱնտիոք. և թագաւոր եղեւ 'ի բնակչաց։

Ի քսան երեքերրորդ ամին Յուստինեանոյ գետն Տարսոնի ապականեաց զքաղաք

քրն. և 'ի շարժմանէ կործանեցաւ | ասիկն. և մեռան եւթն հազար այր։ Եւ կէս քաղաքին Պանտուպոլսի ընկղմեցաւ. և կենդանոյն իջին 'ի խորս բնակիչքն։ Եւ յետ աւուրց լսելի լինէր հեծումն և մռնչումն։ Ընկղմեցան և 'ի Փիւնիկէ Տրապոլիս և Պիլոս (1) և Տրոադաս։ Այսպէս կործանեցաւ քաղաքն Պալիւեացւոց և գնաց ծովն 'ի ներքս վիպ երկու. և մնային նաւք 'ի ցամաքի։

Ի սոյն ժամանակս առին Պարսիկք զԱպարատս, և ամրացուցին. և գնայցեալ զարքն Հռովմայեցւոց պաշարեաց զնա զեւթն ամ, և առին դարձեալ։

Այսու ժամանակաւք եղեւ սով սաստիկ. մինչ զի ուտէր մարդ հինգ հինգ լիտր հաց և ուռնայր, և ոչ յագենայր. և եղեւ աւ նամանաց մահ զերկուս ամն ընդ ամենայն երկիր. և պակասեաց վաստակ եղին։ Եւ եղեւ շարժ 'ի Կոստանդնուպոլիս գքառասուն օր. և բազմութիւնք ասանց եղեւ գերեալման բնակչացն. և տապալեցան եկեղեցիք։

Եւ յերեսնեղրպդ ամի Յուստինեան երկու պաբիպպքն Կոստանդնուպոլսի' անկան շինեալքն 'ի Կոստանդիանոսէ եւ 'ի Թէոդոսէ։ Եւ թիկն քաղաք ուսան օր շաբ-

(1) Երկու օրի. Պիլոս։

մեցան իբրեւ զտերեւ. և յետոյ հրկեցան։

Յայսմ ժամանակի էր սուրբն Յակոբ Կուրդնկարն կոչեցեալ։ Նա առաքեաց Թադէոսն Արաբկայ քրիստոնէից Ներսէն առ Յուստինոս մեղադրանս ասելով. մի զէր ապականեցիք զաշխարհ Քաղկեդոնի ժողովոյն. և որպէսզի վերադարձութիւնն չորրորդութիւն։

Իսկ Յուստինոս յղեաց առ նա որս տեղեակս գրոց հասկացուցանել նմա զուրպէսն. որ և ի տեսանելն զնոսա Ներսէն ասէ. եթէ և դուք յաշակերտաց նզովեալ ժողովոյն էք, ես ոչ ողջունեմ զձեզ. և նա քան ասեն ընդէր հրամայեցեր թագաւորութիւնդ այդպիսի բանս, և նզովեցեր վեց հարիւր երեսուն և վեց սուրբս՝ որ թէ աշխարհակոնք էին ծանր էր, թող թէ առաջ նորդք եկեղեցւոյ. և ասէ թագաւորն ես անպէտ եմ գրոց և քարբարոս. բայց ասացէք ինձ թէ ի հաւատաց կերպակուրս ան կանիսի մուկն մի, պղծի թէ ոչ. ասեն պղծի այո. և պատասխանեաց թագաւորն. և զինարդ ոչ պղծէր զվեց հարիւր երեսուն և վեց սրան սումարն Լեւոնի, որ ի հրէութիւն դարձոյց զքրիստոնէութիւնս. և ապա մաչեցին յոյժ։

Digitized by Google

Լ. յետ աւուրց ասեն զԹագաւորն հրամայեցէք պատարագ տեսանել զմերն և հաղորդիլ 'ի մէնջ. և ասէ արքայն մեք ոչ հաղորդիմք 'ի ձէնջ և ոչ հաղորդեմք զձեզ. և 'ի ժամ ճաշուն հրամայեաց տալ նոցա միս անսուրբ իշու և ուղտու. և ասեն մեք ոչ պղծիմք սոքօք. և արքայն ասաց մեք զնմդ ոչ պղծիմք ուտելով զմիս մարդոյ, զի այդ և է պատարագն ձեր (1). և արձակեաց զնոսա յի ամենեմ։

Յայնժամ մեռաւ Թէոդորոս Թագաւոր հին ուղղափառ հաւատով, և Թաղեցին զնա Ղնեթիմոս և Թէոդորոս պատրիարքունք։

Լ. 'ի ժամանակս Յուստինեայ յայտնեցան հերձուածք այսոքիկ։

Ա. Հատեալք 'ի Մանիքեցւոց որք եկին 'ի Պարսից կերպիւ աբեղայից. և արեամբ ապիտակ հաւու և սպանեալ տղայոյ հաղորդին 'ի տարւոջն միանգամ, և առնեն զընդհանրագործութիւն Մանիքեցւոցն։

Բ. Յովհաննէս Լիփեմիոյ, որ Նիւթասէր զԱստուած որպէս տարր ինչ։

Գ. Ստեփաննոս Լուսահայեցի, որ զտան

(1) Մի օրի. զի այս է և զնարդ և է պատրիարքն ձեր պատարագն ձեր։ Մի օրի.

ջանք մեղուցելոցն նոյնչափ աւուրքք ասէր և ապա հաւատարիլ արդարոյն ։

Դ. Յուլիանէ Աղեկառնացին, որ ասէր Քրիստոսի առեալ զանմեղ մարմինն Աստուծոյ որ յառաջ քան զյանցանսն. զոր յանդիմանեաց սուրբն Պետրոս, ասելով թէ Աստուծոյ կրկին է. նախ անխառնուածն և զկնիք խառնեալն յապականացութեան ։ Արդ տեսլեանն զխառնեալն էառ, և աստուածացոյց անապական գործելով. բայց նա ոչ զլինցաւ ։

Ե. Յովհաննէս տրիթացին, որ երեք բնութիւն ասէր զաստուածութիւնն. և աշակերտ էր սա Սամուելի ուսուցչին. զսա կոչեաց Յուստիանոս առ ինքն. և լուեալ զհերձուած նորա հալածեաց ։ Սա արար գրեանս՝ վկայութիւն որսալով Յուստուաչունչ գրոց՝ իւրում աղանդին ։

Զ. Փոտինոս (1) անտիոքացին՝ սա երեք բնութիւն ասէր զաստուածութիւնն. ապարար և սա գրեան ։

Է. Թէոդորոս Կասպադովկացին որ ընդնոյն ասէր թէ Քրիստոսի Աստուածութիւնն ոչ է Հօր ։

(1) Մի օրի. Տուփինոս ։ մի օրի. Ռուփէնոս ։

Ը. Աթանասիոս որդի դատերն թափ-
դորայ թագուհւոյ. սա զՅովհաննիսի ա-
ղանդն հաստատէր։ Իւկանոն Տարսոնի ե-
պիսկոպոս, և Լեգէն Մելիտինոյ զնոյն ասձե-
ցուցին երեք բնութիւն ասելով Քրիստոսի
Աստուծոյ։

Թ. Եմիդիոս Կոստանդնուպոլսի, զնոյնն
ասայ. թէ որ երեք անձանցն յատուկ բնու-
թիւն ոչ ասէ երեք, նա հրեայ է և հա-
կառակ ուղղափառութեան։

Յայնմ ժամանակի եկն Ներսէհ թագա-
ւորատ Յուստիանոս, և ունէր գիր ուղիղ հա-
ւատոյ զարեւելեան եպիսկոպոսացն, զՆոյոց
մեծայ և զՅակոբայ Կուրդնկարին և զՆ-
ղեքսանդրու պատրիարգին. և եցոյց յարքունիսն
և ասայ. որ ոչ ձեռնադրէ ասա,
ոչ է Քրիստոնեայ. և հրաժարեցին յորովք։

Իւ բարկացաւ Ներսէհ Յուստիանեայ,
և ասէ ցնա. ապշեալ և յիմարեալ ոչ գի-
տես թէ այս ամենայն ապականութիւնք
երկրի վասն չար ժողովրդն է. և ընդէր ոչ
բառնաս զնա, զի լիցի խաղաղութիւն (երկրի) 'ի Տեառնէ։

Իւ ասէ ցնա Յուստիանոս. վասն քո ե-
րեայ կալցին ախտրժողքն (1) զուղղափա-

(1) Երկու օրի. ուղղափառքն։

առաքեալն յայտնապէս, և համարձակեալք լինին. և այլ ինչ մի ներդեր զմեզ։

Այսպա կոչեաց Հերեթն եպիսկոպոսս ուղղափառս. և ետս ձեռնադրել պատրիարքս նոս ուղղափառացն, որք իցեն 'ի Կոստանդնուպոլիս և Անտիոք և Աղեքսանդր և Երուսաղէմ. և առաքեաց զնոսա անդ սպառնալեաց թղթովք, թէ որ ներդեսցէ զնոսա (կամ նզովեսցէ)։ Եւ գնաց ինքն յաթոռս իւր։

Բայց զի համարձակեցան 'ի բանի ասա ուղղափառքն և ասէին ընդ Բաղկեդոնիկան, թէ դուք զՆեստորին ունիք, և զԹէոդորիտին և զԹէոդորին. քաւ Յուստինոս և արար ժողով պատասխանի առնել իրացն. և պատրիարգունքն էին այսոքիկ. Դոմնաս՝ Անտիոքու. Պաղլինար՝ Աղեքսանդրի. Եւտոքիէս՝ Կոստանդնուպոլսի. Բաքիլոս՝ Հռոմայ. որ կայր 'ի Կոստանդնուպոլիս 'ի Դաղրութ, որ և ամբարտաւանեալ ոչ գայր 'ի ժողովն. և հաղիւ բերին զնա. և արտաքոյ քննութիւն գրոց, նզովիցէ արժանի դատեցան որք 'Ներստորի հաւանին կամ Ամուեսատացւոցն կամ Ֆպրանացւոյն. և եթէ նոքին իսկ նզովեալք են։

Իսկ Բաքիլոս ասէ զինի հարիւր երե-

տան ամի ոչ է մարթ անիծանել զպսակիչսն թուեցեալ առաջնոցն. և խնամանեցաւ ա-ռաջարկութիւնն և գնացին։

Բայց Պրոկղոս աշակերտն Յուլիանեայ յանդիմանեալ ՝ի քաղմանց՝ ոչ զղջացաւ. ըղ-ձաս աղաչէր ժողովուրդն իւր զի արասցէ իւր փոխանորդ. և նա ասաց եւ միայն զի-ածդ արարէց եպիսկոպոս. երեք պարտ է լինել ձեռնադրեալսն եպիսկոպոսի։

Իսկ յորժամ մեռաւ, զձեռն մեռելոյն ա-ռանց կենդանի եպիսկոպոսին եդին ՝ի մե-ջայ Աւոտոպոսի, և արարին եպիսկոպոս. և նա ձեռնադրեաց տասն եպիսկոպոս. և ա-ռաքեաց ընդ ամենայն երկիր տարածել զա-ղանդն։

Իսկ ամն ՝ի նոցանէ Սարգիս անուն գնաց յերկիրն Բամիրայ, և աշակերտեաց զբա-զումս. և ապար նոցա եպիսկոպոս Մոքէս անուն, որ և վկնի երեք ամի մեռաւ։ Իսկ զսուրբն Մեսեբիանոս զրպարտեն նոքա, թէ զՔրիստոսի մարմինն ապականացու ասէր. այլ սուրբն անպարտ է ասի, զի նա ասէր թէ զապականացու բնութիւնս մեր ՝ էառ. և անապական գործեաց։ Իսկ նոքա ասեն թէ յորմայնէ կուսին անչարչարելի մարմին էառ և անմահ. և չարչարանքն և մահն

կերպարանօք ՝է , և ոչ ճշմարտութեամբ ։

Զնաց ոմն ՝ի նոցանէ յԱլեքսանդրիա . և խառնեցան ՝ի նմա այլ եւս աղանդք Պոնտացիք և Լատինացիք (1) , և ձեռնադրեցին աղանդին պատրիարք . և նա արար բազում եպիսկոպոս . և ցրուեաց ընդ ամենայն երկիր։

Այ ոմն ՝ի նոցանէ չոգաւ զհիւսիսիւ և յարեւելս . և եկն յԱղուանն (2) և էլ ՝ի Հայս. և ոչ ընկալան զնա . այլ առաքեցին Թեւդիր առ Թէոդորոս պատրիարքն Անտիոքու . եթէ դուք զինչ ասէք այսմ աղանդոյ , ոսո՞ք ողջոյն՝ թէ ոչ . և նա կատարեալ էր զկեանս իւր ։ Բայց յոչակերտաց նորա լուան զճշմարիտն և հալածեցին զնոսա։ Բայց ՝ի Կաւպպադովկիայ բազումք խաբեցան ՝ի նոցանէ ։

Ընդեն ոմանք թէ և ՝ի մասնէ ՝ի Հայոց սակաւք հաւանեցան առ ժամանակ մինչ մինչ չեւ ՝ի կատարելոցն իւրեանց սաստեալք և զեն , և ՝ի բաց կացին ։

Յուստիանոս թագաւոր կամեցաւ նորոգել զեկեղեցին Ուռաքելոյն և զուտպանատուն թագաւորացն . և գտան երիս տապանս Ներճճափակս (3) , և գիր ՝ի վերայ նոցա .

(1) Մի օրի . Լատինացիք։ Մի օրի Լանինատացիք ։

(2) Երկու օրի . յԱրզուն։

(3) Մի օրի Դ լատնի ոսի գտին ընչխարս առաքելոցն ։

սուրբ Անդրեաս, սուրբ Պուկաս, սուրբ Թիմոթէոս. և խնդաց քաղաքն ընդ գիւտ առաքելոցն և փառաւորեցին զԱստուած։

Եւ և Աստուն որ ի Կեսարիա Պապեռ տունացւոց առաքեաց աջոյ ձեռն մի յանուն Յովհաննու Մկրտչին, և եղեւ կարծիք վասն նորա. տակաւին գտուեցաւ ոսկեղէն յարկօք և ակամբք։

Իսկ Յուստիանոս չինեաց եկեղեցիս վանք և եկեղեցիս ինքնասն և վեց. և ոչ դադարեաց ի ժամանակս իւր յաղքատանոցս և ի հիւրանոցս չինելոյ։ Ասոր սկսանի թուականն Հայոց։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս որ յամի հարիւր եւթանասուն և մի թուին Ասորոց, և Ամիրայ պատերազմին։

Ի յամին հարիւր եւթանասուն և մի թուին Ասորոց սկսաւ թուականն Հայոց, յերանելի Սարգիս Չորրորդ ամին Յուստիանեայ, առ ամէր Ներսիսիս Հայրապետիս, ի թագաւորութեանն Պարսից Խոսրովու։ Այլ առ Սուլիմիս կաթուղիկոսիս ասեն

Digitized by Google

զինի քաղաքաւն ամի հաստատմանն մերոյ վեր-
ոյն ազգիլին Իսրայելեանի։

Լուսաբաք և վասն ցասմանն Լիմիթ (1)
քաղաքի որ կրեաց ի վերջ քան զտիրապետն
պատուհաս. քանզի սրթն ամ սով կրեաց,
և տարին մի հարան ի դիւաց առ հաստատակ,
և թափեցան ի խեղեաց. և կորուսին զբանա-
կանութիւն, հաղէին իրրեւ զշուն. և մերկ-
կանային առանձի միմեանց. և զուսնս և զքա-
տաղուածս իւրեանց, ուր ճանաչէին. և ի
միմեանցմէ պատկառէին. և ընդ ինքեանս
ի հրապարակս և յերկեղեցիս. և ոչ զարդ-
մէին նոցա մերձակայ գաւառքն. և երթա-
յին և զգուշանային նոցա, և աղօթէին
վասն նոցա. և ոչ դադարեաց չարն մինչեւ
ի կնալ ամին, և ապա զդադարեցան։ Յետ
ի զգաստութիւն (2) երկեալ զատկատէին և ա-
մաչէին, և զգեցան սուգս. և գնացին յԵ-
լուսաղէմ և յայլ նուիրեալ տեղիս և ապաշ-
խարեցին. և անկան ի Նինուս մանր հուրաքամ,
և մեռան ի Անտիոքս աւուրս անձինս երե-
սուն և վեց հազար։

Իսկ Բազաւորն Յուստիանոս մեծարէր

(1) Մի օրի. ասի ի լատին։ (2) Երկու օրի ի զգաստ-
ջն. ՅԱմիթ գիւտերեալ թիւնս։
ամ լիներ։

զժողովն Քաղկեդոնի, բայց զԹուղթն Իւ-
բասայ ուռհայեցւոյն ոչ ընդունէր. և ոչ հա-
ւատայր ասողացն թէ ընկալան ժողովն Քաղ-
կեդոնի։ Իսկ յորժամ ստուգեաց 'ի Նաքի-
ջան Հռովմայ պապուն որ ասաց այն ընկալ-
լան, և ընդունելի է, յոմն յարեաւ զայրաց-
մամբ (1) և ասաց երիցս. հեռի եղէց և հեռի
եմ յայդմ դաւանութենէ. և եղիցի նզո-
վեալ։ Իւ զայս ասացեալ հրաժարեաց 'ի
նմանէ։

Բայց խոստոր եցաւ. 'ի հակառակն, և ընդ-
կոչեաւ զՅովհաննեայ հերձուածն, և գրեաց
առ Զթանաս պատրիարքն Կոստիանդ ժողով
առնել և տեսանել զերն. և ժողովեցան Կոս-
տանդ հարիւր քսանաւն և հինգ եպիսկոպոսք
և նզովեցին զՅուստինիանէ. և գրեցին առ
Թագաւորն զոր պարին, և յելոյց աղան-
դից արքեցաւ Թագաւորն. և մեռաւ ուղ-
զափառութեամբ Թագաւորեալ ամս երե-
սուն և ութ և ամիսս եւթն։

Իւ ոմն իմաստուն և սքանչելի այր պատ-
մեաց եթէ տեսանէի տեսիլ. գաշտ մի ընդ-
դարձակ, և 'ի մէջ նորա հնոց բորբքեալ
անլոյս հրոյ. և դողայի յոյժ. և ասեն ցիս այն
տեղի տանջանաց Յուստինիանոսի էր, բայց

(1). Մի օրի, զարմացմամբ։

ողորմութիւնն իւր և եկեղեցապատիս քարքն ոչ եթող դնա հերձուածող մեռանել և գալ յայս տեղի տանջանաց, և անգ յիշեցցի յեկեղեցիս ուղղափառաց։

Յետ Նորա թագաւորեաց քեռորդին իւր Յուստիանոս թիւակացի. և էր ապր պատերազմող և ահարկու. և խոյս եառուն ամենայն չարագործքն յերեսաց Նորա. բայց ցաւէին ասք Նորա։ Զի տա եկին ասքք ապրուեստաւորք 'ի Զամանէ և 'ի Վանգանէ, որ օծանէին զանձինս և վառէին հրով փայտս և երանէին 'ի վերայ և ոչ այրէին։ Յառաջին ամին սորա երեւեցաւ հուր բորբոքեալ (1) յօդդ 'ի կողմ հիւսիսի այնպէս ահագին, մինչ զի բազումք 'ի տեսլենէն մեռան. և բերէր օդն քարտէզ այրեցած (2), և ժողովէցին յոլովք 'ի զամբիոն, և զտհի հարսաւ երկիր։

Զի յինն ժամ աւուրն ել ամբ միգախառնքն, և 'ի նմա խաչ մի կաղմեալ 'ի լուսոյ։ Զ տեսեալ բազմութեանն որ 'ի Կոստանդնուպօլիս, ասէին. տէր ողորմեա՝ ըստ մեծի ողորմութեան քո։

(1) Մի օրի. ունի 'ի լուսաշէն հուր յերկնից և ել 'ի ներքս քանզ 'ի Կոստանդնուպոլիս։

(2) Մի օրի. յաւէր և փայտ այրեցած։

Իսկ ասէ պատրիարքն ցԹագաւորն մի երկնչիր. պատուեաց զքեզ տէր երեւումամբ խաչի որպէս զմեծն Կոստանդիանոս. և արդ ընդէր ոչ կարօտիս և առաքեաց յԱփրեմիէս քաղաքաց Ասորոց և բերեն անդի զխաչն տեառնական. և առաքեաց Թագաւորն զորս և զորսագլուխս, և առին զնա հազիւ անտի և բերին յԱնտիոք. և նոքա եւս ընդդիմացան, զի մի տացեն զխաչն պարծանք և պահապան աշխարհին տանել յերկրէ անտի։ Իսկ զկնի յոլով հակառակութեան հատին զնա սղոցաւ ընդ մէջն, և Թողին անդէն զհատուածսն. և զկէս նորա առին և տարան։

Իսկ ել ընդ առաջ նորա Թագաւորն և ամենայն քաղաքն, և տարան զնա և եդին 'ի մեծ եկեղեցւոջն մեծաւ պատուով։

Յայնմ ժամանակի խնդրեցին Հայք յօգնութիւն 'ի Յուստինէոսէ, զի մի տացեն հարկս Պարսից. և եռ նոցա զորս և ընդդիմացան Պարսից, և կոտորեցին զորս նոցա։

Իսկ առաքեաց խոտով Թագաւորն Պարսից. առ Յուստինիանոս և ասէ. տուր բազ հարկն հայոց դու Թէ ցաւեաս վասն նոցա. և Թէ ոչ Թող զնոսա կալ 'ի հնազանդութեան իւրեանց. և լուաւ ընդդէմ պատասխանի։

Օ՞ր ինչ կայ ասէ քո և քրիստոնէից. և անդիտանալոս եթէ ՝ի ձեռն Հայոց այսրէն առնուամ զԱ՝ծբին և զոր ինչ ունիս ՝ի Աղբ զեռուայ. և երկիւղ խոսրով և լուեաց։

Օ՞այսու աւուրբք էտտ հրամանն ՝ի թագաւորէն Յովհաննէս Պատրիկն խօսել ընդ Հայս և ընդ Խորիս յաղագս հաւատոյ և եկին ՝ի Կալանիկէ, և խօսեցան ընդ Յովհաննովք Կուրդնկարն. և եղեւ ժողով մեծ։ Եւ կամէր Պատրիկն տալ ընդունել զանաւուրբ ժողովն Բաղկեդոնի, և քամնհեցին զբանիւք (1) նորա և ոչ լուան նմա։

Ուստի Յովհաննէս եպիսկոպոս Սարմատոյ մարդ սիրող և ապականիչ եղիր ՝ի կամս թագաւորին կռուել ընդ ուղղափառսն. և առնտ զաթոռ նոցա և զեկեղեցիս և զհամարձակութիւն. և մնասնել կապանաց և տանջանաց և մահու եթէ ոչ գաւանեն զնոցայն. սր եղեւ խիկ յետ քառասուն ամի աքսորանաց (2) և հալածանացն մեր և շրջէին եպիսկոպոսք հանդերձ զօրակոնաք սուսերաւորաք, և զհաւանողսն կրկին մկրտէին և եկեղեցականն ձեռնադրէին. և զոչ հաւանողսն սէս սէս տանջանաք ըս-

(1) Ոմանք՝ բանիւք։ (2) աքսորանացն։
(2) Երկու օրի, դոգոր.

զանազանէին և յաքսորս և ի բանտս տային։ Զոր ոչ կարեմ ընդ գրով արկանել զանցս չարչարանացն, զոր կրեաց սուրբ եկեղեցի։

Իսկ զկնի հաղորդաց և բիւրուց զարանեալ հրամանաւ չարին Յովհաննէսի որ եդաւ զաստիարակն Կոստանդինոս զարքայ. տարին կացուցեալ թագաւորն. և խոցոտէր սիրտ նորա։ Զոր տասց ընդ անօրէնն Յովհաննէս. տացեալ ինձ գրով զիստուստովանութիւն քս. և նա յաղաղէր զքանն և տուէր զթագաւորն. զի՛ է քեզ այդ. եղաք ի բանտի զայրն հաշտարար զՅովհաննէս. եթէ զնա կալեալ ի հաւատն ածել բարձրանայ թագաւորութիւն քո անմեանն ամենայն թագաւորաց։ Զոր տաքեցին առ նա թագաւորն և զաստիարքն զարագաստանոցս բարեմ առ զաշխանաք. զի եղեալ ի բանտէ և արարացէ խաղաղութիւն անդամանցն Քրիստոսի, գաստանելով զարդարդ ժարմն. և ապարին զայս բարեմ անգամ. և նա անկեալ զարձեալ ցանէր զարարագամանարսն։ Զոր էր նա ի գլխի ինն բանտի, և տարարէին մարմինք նորա ի պէս ոչէն ցառաց գլխոյ և ստից և ամենայն ոսկերաց. և եռային (1) ի նա դրդունք, զոլիկ

(1) Ոմանք եռային։

և բորբոսք և սարդեին զդուռն նորա, և աչ-
ոք մուտնէր առ նոսա. և ճանճք և սիծակք
կեղտէին զնա, և նա դժոխութեամբ փոսա-
ւորէր զ՚ստուած։

Իսկ զինի բաղում աւուրց եմուտ առ նա
երիտասարդ (1) մի աւազակաւոր, և խնդրող
այլօրէից. հանգաւորեաց զնա և լուսոյ ՚ի վի-
լուսոյ անտի. և զգեցոյց զնա և մխիթարեաց.
և եդ առաջի նորա կերակուր (2) և գթեալ ա-
նոյշ. և եկեր և արբ և բերկրեցաւ յոյժ ծե-
լրն. և զաւուրս ութ այնպէս առնէր և
օրհնէր զնա. և գոհանայր զնմանէ։ Լ՚ե-
րիտասարդն օր քան օրէ քաջալերէր զնա ի
մնաստուն բանիւք ՚ի վկայութենէ գրոց. ե-
լանէր ասէ համբերեալ եբրեա զ՚Յոբ, և զբ-
՚Դանիէլ. և դարձեալ բոլորին պատակք նահա-
տակաց և որ ինչ ամենայն գիրս գրեալ է բա-
նայր նմա. զսրմանեալս աւրբն, և ասէ ցնա.
օրհնեալ ես դու որդեակ զի հանգուցեր զիս
և ուստի է քեզ այդ խնամատութիւն ՚ի տրլ-
ալսութեանդ զոր ես ծերութեամբ իմ ոչ
պիտեմ. օրհնեալ է Ազգին Լ՚ստուած, որ
խօսի ՚ի քեզ։

Լ՚ե յետ այսպիսի եղին առ նա ապրեպիա

(1) Մի օրի. ոմն ՚ի լուսն առ Պատրիարքն։
ՀԸ. Քրիստոս եկն ՚ի ընդանն (2) Մի օրի. անդրան։

կոպոս պատրիարքին և ասէ ցնա. Հայր սուրբ շատ է լուր ասպ, և լեր առաջնորդ խաղաղութեան։ Յետ ասէ ցնա. որդիք սատանայի զքեզ ոչ ամաչէք. Իրիաստոս Յիսուսած մի խնայեսցէ ի ձեզ. զի եթէ ճշմարիտք էիք. ամաչել արժան էր զինի այսքան դառնութեան զոր ապարիք եկեղեցւոյ. թող թէ հերետիկոսք և չարափառք և ասելիք Յիսուծոյ. և նա գնաց և պատմեաց զամենայն ասացեալն Թագաւորին և պատրիարքին։

Իսկ երիտասարդն համբուրեաց զծերն և ասաց, ողջ մնա հայր զի երանեաս ասոի և լուսաւորիս զքաղաքս. որ էր մնալն Իրիաստոս միսիթարիչն պատանի և զայս ասացեալ ծածկեցաւ ի նմանէ։

Յետ նոյն ժամայն եկին զինուորք և հանին զՅովհաննէս հրամանաւ Թագաւորին և պատրիարքին. և տարան ընկեցին զնա ի կղզի մի բարբարոս մնացեալ ի կուապաշտութեան. զոր զամենեսեան լուսաւորեաց Նշանօք և արուեստիւք և բանիւք վարդապետութեամբ բազում քիւ (1) արանց մերկրտեալ ի փառաս Իրիաստոսի Յիսուծոյ մերոյ։

Յետ այսորիկ խնդրեաց դարձեալ Թա-

(1) Մի օրի. ունի. Ը.ՃԾ բիւրա։ Մի օրի. ԻԸ.Ճ բիւրա։

գաւառին զդաւանութիւնն Բասիլեդոնի գը-
րով. և եռ ցնա պատրիարքն։

Եւ հառաջեաց Թագաւորն և ասէ աւա՜ղ
ղուր սպանելոյն, Լեւոտրին է սոյն ապանող։
Եւ ընկէց յաթոռոյ զպատրիարքն. և հարա-
ծեաց զնա նախատանօք. և ասէ ցՀնաս-
տաս զզրաստիան, դարձո վերադարձիր զու-
զարձուսն յաթոռ և ի հայրենիս իւրեանց,
և Բասիլեդոնիքդ բարձցին զարիւն սպա-
նեալոյն. և մի երեւեսցին երեսաց իմոց
մինչեւ հանգեալց սակաւ մի։

Այսու ժամանակաւք ժողովեցան մոգք
և մոգպետք առ Թագաւորն (1) Պարսից. և
ասեն ընդէր ոչ առնես զու նման Թագա-
ւորին Յունաց. զի զամենեսեան որք ոչ
հաւանին օրինաց նորա, չարաչար տանջա-
նօք սպանանէ զնոսա. և քանիք են ընդ քո
Թագաւորութեամբդ, որք արհամարհեն
զարեգակն և զհուր, և ներես նոցա։

Եւ յայնմանէ շարժեալ Թագաւորին ան-
Թիւս կուտրեաց ի քրիստոնէից, և սարս
վկայս Ճշմարտութեանն։

Եւ առաքեաց ի Հայս զնեալ անդ տուն

(1) Մի օրի. ասի ի Լատն. բառաչա էր. և չարչարեր
զնա. Պարսից Թագաւորն հաց. զքրիստոնեայսն։

Digitized by Google

կրակի, և հարկ տունել նոցա 'ի հրապարշ տուլթիւն։

Իսկ նոքա խրնամուսեալք Աստուած դիմեցին 'ի վերայ նոցա և կոտորեցին զմնգան և զզօրան Պարսից։

Այլ մեծ Կաթուղիկոս Հայոց չոգաւ 'ի Կոստանդնուպոլիս ածել անուի զօրս յօգնականութիւն իւրեանց։ Այլ ելք քաղաքն ամենայն ընդ առաջ նորա 'ի պատիւ. և տարան զնա 'ի պատրիարքարանն, և յամենայն անդ զի ոչ էր յատակ զօրն Յունաց։

Իսկ Ժողովս ըդք երկրին Հայոց երկեան, մի գուցէ իսաբէլի Կաթուղիկոսն յաղանդաւորացն 'ի պատճառս կարեացն (զօրաց) նոցա։ Այլ առաքեցին առ նա Թուղթ ըդ գուշութեան և վարդապետս իմաստունս և ասեն. Աստուած ապաւինեսցուք և մի ասցուք զյաւիտենական կեանքն և զհաւատս կենդանիս և աստուածընկալս անցաւոր և անաստուած կենաց. դարձիր 'ի տունքդ։

Իսկ սուրբ Հայրապետն նախ քան զգնալ դեսպանացն կատարեալ էր ուղղափառ հաւատով. և պատուով եդեալ 'ի շիրմի ուղղափառացն որ անդ հրամանաւ արքային. և ընդ յուսոյն իւրեանց ապրեցան Հայք

աստուածամ զօրացեալ 'ի Պարսից և 'ի Քաղ-
կեդոնայուցն. և եղեւ մեծ ամրութիւն
հաւատոյ ուղղափառութեան։

Իսկ Յոփիոյ թագուհին սնեալ ուղղա-
փառութեամբ հաղորդէր Յունդրիատայ յի-
թիցուէն իւրմէ, և ածեն զնա երբեմն 'ի հա-
ւան զի գնասցէ յեկեղեցի Քաղկեդոնաց-
ուցն։ Եւ (իբրեւ) գնայ անդ ամ մի, ե-
րեւեցաւ Աստուածածինն և ասայ, դուռ
տուր ընդէր թողեր զիս և գնացեր ընդ
հերետիկսան. և (նա) ասէ ցնա. մայր տեա-
ռըն, ուսա՛, ուսա՛ (1) ինձ դաւանութիւն
ճշմարիտ։ Եւ ասէ սուրբ կոյսն քաւական
է քեզ ասելն. Հայր և Որդի և Հոգի սուրբ
ողորմեա՛ ինձ. և ոչ երթալ առ Հերետի-
կոսան։

Եւ յութերորդ ամին իւր Յուստինոս
արար զմօրսքեռ որդին իւր զԱրկիանէ՝
Լեսապ. և առաքեաց զզօրսն 'ի վերայ Արա-
բնայ. և գնացեալ նորա 'ի Տարայ, առա-
քեաց զզօրսն 'ի Պարսս, որք դարձան բա-
զում աւարաւ. և երկեան Պարսիկք յերե-
ւայց Արկիանեայ։ Եւ Արզուանն որ կայր
'ի Արբին. հնազանդութեամբ և ընծայիւք
յամեցոյց զԱրկիանէ 'ի Տարայ. մինչև ե-

(1) Մի՛ օրի. որ՛ ինձ դաւանութիւն ճշմարիտ։

Digitized by Google

ելից զքաղաքն ուռճիւք. և եհան զքրիստոնեայսն անտի։

Իսկ 'ի զատկի տօնին չոգաւ Մարկիանէ և պատեաց (1) զՄծբին և նեղեցին յոյժ. և մերձ էին յաառնուլ. և յանկարծ եկն Լկսկիրոս ոմն փոխանակ Մարկիանեայ և եհան զնա 'ի պատուոյն հրամանաւ Թագաւորին. և ասէր Մարկիանէ. Թոյլ տուր ինձ սուրս երկուս և առից զքաղաքս, և ոչ կամեցաւ. և կարծեաց զօրն եթէ մեռեալ իցէ Թագաւորն, և Թողեալ զքաղաքն ցրուեցան։ Դ. պատճառ իրսյն նեղեալ այսպիսի։

Երկիրն Տաճկաց կոյսին ընդ երկու խշխանութեամբ ընդ Պարսից և ընդ քրիստոնէից. Քրիստոնեայքն Թագաւոր ունէին իւրեանց զՄնդուր զորդին Հերիթայ, և էին բարեկամք և օգնականք Հռովմայեցւոցն հայրենեաց սակս Քրիստոնէութեանն։

Մրդ Մնդուրն գնաց 'ի վերայ Պարսից և գերեաց զերկիրն և դարձաւ. և եկն նստաւ 'ի Տաճկաստան 'ի բաժնին Պարսից. և նոքա կարծեցին Թէ Թագաւորն Պարսից է. և ոչ պատրաստեցան. և բաղուկք եղին առնա պատարագաք և ապան զնուստ. և տարածեցաւ ընդ երկիրն և կոտորեաց և գե-

(1) Մի օրի. պատեաց։

թեաց զնոսա. և ժողովեցան զօրն Պարսից գնալ յերկիրն Ա՛նդուրին։

Եւ խնայեալ Ա՛նդուրն առաքեաց առ Յուստինոս. և խնդրեաց ասկի բաղում զօրս վարձելոյ ընդդէմ Պարսից։

Եւ յասեաւ Յուստինոս և գրեաց և ասաց. եկեսցես առ Ա՛ստկիանէ, և տացես նմա օգնութիւն վասն Ա՛ծբնայ. և առ զնա ընդ քեզ և զսիրեա զերկիր քո. և պատուիր եցի նմա տալ քեզ ասկի (բաղում) որչափ և կամիս։ Եւ գրեաց առ Ա՛ստկիանէ թէ Ջանա փութա որպէս զԱ՛նդուրն ի կորուստ. և առ զդլուխ նորա և առաքեա ինձ առեալս։

Եւ ի խնամոցն Աստուծոյ փոխեցան թագաւորքն և տարան զԱ՛ստկիանեայ թագաւորն առ Ա՛նդուրն, և զԱ՛նդուրին առ Ա՛ստկիանէ. և կարծեաց Յուստինոս յորժամ լուաւ, թէ Ա՛ստկիանէ առաքեաց զթագաւորն առ Ա՛նդուրն. և առաքեաց ընկէց զնա ի սաստուցն։

Իսկ Ա՛նդուրն օրհնեաց զնախատեսութիւն Աստուծոյ, զի օգնեաց նմա և կեցոյց. և գրեաց առ Յուստինոս զշնորհութիւն նորա։

Իսկ Պարսիկքն իբրեւ գիտացին զիրքն,

եթէ Անդուրն աչ օգնէ Հռովմայեցւոց. չուգան ի վերայ զորացն Հռովմայեցւոց, և կոտորեցին զնոսա. և գնացին մինչև Յոնոթոք և գերեցին զամենայն Անիջաւոտս որ ընդ Հռովմայեցւովք, և երթեալ նոսան ի վերայ Տարայոյ. զի բազում զերծեալք ի զորացն յանդ էին անկեալ յամուրս որք եկեալ (եկեալ) ուստաքս ցուցին մեծ քաջութիւնս։

Եւ Պարսիկքն խաբէութեամբ տեղի ետուն որպէս թէ կամիցին գնալ, և աշխատեալ զորացն Յունաց Թողին զապարիսպն. և գնացեալ հանդչէին և ուռէին հաց. և դարձան Պարսիկքն և բախեցին զապարիսպն և յամենայն կողմանց անդուսխ եղեալ մնային ի ներքս և կոտորեցին առ հասարակ. և գնացին բազում սրբութեամբ յաշխարհն իւրեանց։

Իսկ Թագաւորն Պարսից խոսրով քնաքեաց ի գերեցեալն աղջիկունս հինգ հազար կուսանս և գանձս բազումս. և առաքեաց յերկիրն Խոտաստանայ ի Ցուրբաստան պատրաստս նոցա, և գիր աղաչանաց զի եկեսցեն նմա յօգնականութիւն պատերազմեալ ընդ Հռովմս և ընդ Հայս և ընդ Տաճկաստան։

Իսկ ի գնացն իւրեանց սրբուհի կուսանք

քրն թանային արտասուօք զՀանապարհն. զի անդամքն Քրիստոսի երթային պէշ գա-
ղանաց. և խորհեցան կուսանքն ընդ միմեան-
նս զոր ինչ առնելոց էին. և իբրեւ հասին
'ի գետն մեծ ասեն ցոլորան, արտրէք ընդ մեզ
ողորմութիւն, 'ի բաց գնայէք յաչաց մերոց
զի լուացուք 'ի գետս վասն տօթոյս. և հա-
ճոյ թուեցաւ բանն առաջի նոցա և գնա-
յին հեռապոյնս։

Իսկ իմաստուն կուսանքն հեղին արտասուս
բազումս և եդին ծունր ասելով, Աստուած
հարցն մերոց սպանելոց. Քրիստոս որդի Աս-
տուծոյ, պատկ և փրկութիւն Քրիստոնէից
և անախտ փեսայ սրբութեան կուսանաց, եկ
առ մեզ և տես զհանդէս մեր. և ընկալ զա-
մեզ առ քեզ. և մի տար զդառնս քո ի ձե-
ռսկուս գազանաց աղաչանօք մեր քո սնաչ-
բատի և բարեխօսութեամբ ամենայն սրբոց
քոց. և մեր ծնողացն արեանցն հեղմամբ
առ զքոյսս 'ի քեզ ապաւէն մեր Յիսուս. և
քեզ փառք յաւիտեանս ամէն։ Այս զայս
ասացեալ եղին ամենեքեան 'ի կամուրջն և
վայթեցան 'ի գետն մեծ և անհաւն ասպրն-
ջական յոլովից գետոց։

Իսկ իմացեալ զօրացն 'ի Ճղիմանէ փա-
խուստն ընդ առաջ նոցա. և զմի զբ ոչ դտին

Digitized by Google

կենդանի և լացին բազում ժամ, և տրտմութեամբ դարձան և պատմեցին թագաւորին, և հիացաւ յոյժ. և ոչ եղեւ նոցա մեղադիր։

Յետ այսորիկ Յուստինոս հաշտեցաւ ընդ պատրիարքին Յովհաննիսի. և լուսաբազում դստրանս 'ի Կադկեդոնացւոցն յաղագս դադարեցուցանելոյ զհալածանս ուղղափառացն. զի ահա ամենայն աշխարհ հաւանեալ էին։ Ա։ ասն որոյ դարձաւ 'ի չարութենէն իւր յոյժ առաւելութեամբ 'ի հալածումն և 'ի մահ ուղղափառացն. զոր գիր ոչ բաւնայ 'ի պատմել, և լսելիք ոչ տանին զծանրութիւն աղէտիցն՝ զոր տարան նոա տրք։ Գ։ զեր զեցոյ։ Ա։ ասն որոյ առաքեաց Լիստուանդեաս չարագոյնս 'ի Թագաւորն և 'ի պատրիարքն և մնեցնէին. և իբրեւ զշուն հաջէին. և իբրեւ զկատու մլնէին, և տասն մատամբ ձեռացն զհերս և զմօրուս ճողէին. ունէին և այլ յաւելս՝ որ 'ի մահ փութացուցանէր։

Գ։ 'ի ասկաւ մի դիւրեն հարցանէին զԹագաւորն. սիլ նստոցի յամթոռ քո. և նա բազում անգամ անուանէր զնստոր ոմն Տիբերիոս անուն Թրակացի, ապրաւ Յոյն. զոր եդին Թագաւոր, և 'ի նմանէ և այսք է Յունաց Թագաւորութիւն. զի 'ի Պայիոս

Յուլիոսէ մինչեւ 'ի սա՝ յիսուն թագաւոր Յունակ էին ազգաւ։

Բայց 'ի ժամանակս Մակեդոնացւոցն երեսուն և ութ թագաւորքն Յունաց կոչէին 'ի Կռոնոսէ մակեդոնացւոյ մինչեւ 'ի Իրաստոս (1)։ Իսկ սրդ երկրորդ անգամ սկսաւ 'ի Թուխս Ասորոյ ութ հարիւր ութսուն և վեց, և Հայոց 'ի հնգետասան։ Բայց տակաւին Հուսմայեցիք կոչին վասն Կոստանդնուպօլսի, զի նոր Հռոմ կոչեաց զնա Կոստանդիանոս, և զօրքն խառնեն ընդ միմեանս վասն համ իշխանութեանն։

Յայնմ ժամանակի թագաւորն (2) Պարսից հպարտացեալ վասն յաղթութեան որ եղեւ նմա 'ի Մինջպեւոս, չոգաւ 'ի վերայ Հայոց զոր ցուցին մեծ քաջութիւնս. և երկրորդ անգամ կորագլուխ դարձուցին սակաւ ինչ ատարերով նոցա Յունաց։

Իսկ երրորդ անգամ ժողովեալ դայ զկողմանսն հիւսիսայ պատերով զերծուք (3) եկն 'ի Կապադովկիա. և ընդդիմացան նմա (նոցա) զօրքն Յունաց սակաւ. ինչ, և դարձան ընդ

(1) Մի օրի. Բրատոս։

(2) Երկու օրի. Յայնմ ժամանակի թագաւորաց Պարսից Ռոմիզդ հպարտացեալ զերբինս։

(3) Բոմանք պատուերով զերբինս։ Մի օրի. պատերով զերբինս։ Մի՝ պատարերով

Digitized by Google

կրոնին. և իջեալ Պարսիկն 'ի վերայ Սեբաստիոյ, առ զնա և այրեաց հրով։

Եւ վերստին զօրացեալ Յունաց եկին և առին զքանակետին Պարսից և զոռն կրակին զոր շրջեցուցանէին ընդ ինքեանս, և քակեցին զնա. և թէ ոչ էին աղվկեալ ինչ զօրքն Յունաց՝ սպառեալ էին զՊարսիկս։

Այլ գտեալ 'ի նոսա պատճառս քաջալացան Պարսիկքն. և չոգան 'ի Մելոնեի հայոց. առին և այրեցին զնա։ Եւ յղեցին առ նա զօրքն Յունաց և ասեն. այդ ոչ է օրէն թագաւորաց այրեցողութիւն. ոչ գիտես, եթէ մեք ոչ արարաք երկրին քում այդպիսի ինչ. թէպէտ ոչ ունէաք ընդ մեզ թագաւոր։

Ընդ զսեղի առ, և պատերազմեացուք դարձեալ. և իբրեւ լուաւ զբանս Յունաց Պարսիկն, ամաչեաց յոյժ. և դադարեաց յարեւելից կուսէ քաղաքին. և հասեալ առ նոսա զօրացն Յունաց զամենայն գիշերն, և կացին հանդէպ նոցա յառաւօտէ մինչեւ ցին ժամ տուրն, և ոչ խառնեցան։

Այլ Պարսիկքն տեսան անցանել ընդ Եփրատս և գնալ. և խմացեալ Յունացն գիմեցին 'ի վերայ նոցա, և փախեան Պարսիկքն և 'ի տապնապէ փութոյն առաւել մասն նոցա

գետամոյն եղեւ. եւ դնացին Պարսիկքն ոչ յաջողեալք. և եդ օրէնս Թագաւորն Պարսից, մի ելանել Թագաւոր 'ի յաւար 'ի պատերազմ զօրու. բայց եթէ ընդդէմ Թագաւորի նմանոյ իւրոյ։

Իսկ զօրքն Յունաց դնացին առ Հիւսիսով. 'ի մեան ինչ Հայոց յաւար, վասն պատճառի ուղղափառութեան նոցա։

Իսկ նոքա խաչիւ և աւետարանաւ եկին ընդ առաջ նոցա որպէս քրիստոնէից, ապականելով երկիւղ և գութ փրկական զինուքն Քրիստոսի։

Իսկ ատեցողքն լուսոյ, և ատելիքն Քրիստոսի Աստուծոյ (1) մոլեգնեալք ապականէին 'ի խոնարհ ղխաչն և զաւետարանն. և կողոպտէին զեկեղեցին և եկեղեցականսն. և զաշխարհականսն անողորմ սպանանէին. և զհաւատաւոր կուսանսն խայտառակէին, և զգինուս կանանցն ականջքն կտրէին. և զապարանջանսն մարգարիտք բազկացն խլէին. և բազում և այլ անօրէնութիւնս գործէին. և առեալ աւար բազում դարձան արքէս 'ի մեծ յաղթութենէ, և նստան յերկիրն իւրեանց անհոգութեամբ 'ի խրախճանալ.

(1) Երկոս օրի. ատեցող. Ճշմարտութեան։ Լոյսն և Թշնամիքն.

թողով զերիվարս, և մերկանալով զզէնս։

Յետ եհաս բարկութիւն տեառն 'ի վերայ նոցա. և դարձոյց զմեղս նոցա 'ի գլուխս իւրեանց. քանզի մնան ինչ 'ի զօրացն Պարսից իբրեւ խմբոյն զչարիս նոցա, ծածկեցին զանձինս և ոչ գնացին ընդ թագաւորին Պարսից. այլ այնմ սպասեցին, և եկին գտին զնոսա այնպէս անպատրաստս և թողեալս 'ի ձեռաց Աստուծոյ. և առին զամենայն երիվարսն և զզէնսն, և հարին զնոսա, և գնացին բազում ուրախութեամբ։

Յայնմ ժամանակի ժողովեցան եպիսկոպոսք և միաբանք և վանաց երիցունք Սիղագեստաց և Այոց որք ընդ Հոռոմովք էին. և չոգան առ Տիրեր, և ասեն տուր մեզ խաղաղութիւն վասն հաւատոյս մերոյ. և մի խռովեր զմեզ և ծառայեսցուք մեք միամիտութեամբ. և կամ սրով քս սպան զմեզ։ Յետ սատէին նոցա Բազիլեդոնիկքն. և ընդունեցայց զնոսա թագաւորն. և ասէ. լուարուք ինձ ասացից զոր գիտեմ. թագաւորն Յուստինոս կայր 'ի չարաչար ցաւսն և ընպասարէի նմա ես. և տեսանէի զհրեշտակ Աստուծոյ, զի ժամու ժամու սատէր գլուխն որ ներդէր գնա. և յիշատակէր նմա զչարիսն զոր արար նա ընդ յուղղափառսն.

և դարձեալ թոյլ տայր դիւին լակել զնա. և ասէր ցիս մի գնար ընդ շաւիղս դորա, որ ջանայ առնուլ զթագաւորութիւնն այնմ, որ արար զդա թագաւոր. վասն որոյ կրկ զարժանն իւր։ Եւ 'ի յետս հոգւոյն ասաց ինձ Յուստինոս. երկու բան զիմ արա որ դեակ, դարձո զհալածեալսն յինէն և գնա օրինաւք նոցա. և կայ հնազանդ Սոփեայ որ էր քո թագաւոր. և արդ եղիր քեզ մայր. և խնդրեցէք ինձ ողորմութիւն։ Եւ այժմ երթայք խաղաղութեամբ հանգերուք 'ի տեղիս ձեր, և աղօթս կենդանեացս և մեռելոց. և որ ոք աւելի ինչ ասէ յասելիս է անձին իմոյ. և գնացին ուղղափառքն գոհութեամբ Աստուծոյ 'ի տեղիս իւրեանց։

Յետ այսորիկ պատրիարքն Կոստանդնուպօլսի խրատէր զթագաւորն թողուլ զանձն կինն, և առնուլ զթագուհին իւր. քանզի ոչ կամի ասէ Սոփիայ մնանել կնոջ քո 'ի քաղաքս։ Եւ ասէ ցնա թագաւորն. ճշմարտութեամբ հասեալ եմ 'ի վերայ երթիչ Հոգի Աստուծոյ և երկիւղ նպաս ոչ է յաղանդդ ձեր. արդ ասես ինձ թողուլ զկին իմ օրինաւոր որ եղիր ինձ ապքաստութեան իմոյ կցորդ, և ծնաւ ինձ երիս որդիս, և ինչ ոչ մեղաւ ինձ, և առնուլ զթագուհին

զոր տուաւ (եւ) ինձ մայր իմ. և (1) եհան զնա ամօթով յաչաց իւրոց։ Եւ լուաւ Յոսեփեայ, և ած երեւելի փառաւք զկին նորա 'ի քաղաքն. և տիրեայց զնա և կոչեաց զանուն նորա Հիւղինէ։

Իսկ Տիբերիոս էր աղքատասէր և ողորմած. և եղ սահման անձին իւրում 'ի կեանս իւր աւուրն եւթանասուն երկու կենդինարս բաշխել աղքատաց։

Յաւուրսն յայնոսիկ լուաւ Անդուրն զմահն Յուստիանեայ և զթագաւորելն Տիբերեայ. և եկն առ նա, և եղեւ մեծ ուրախութիւն։ Եւ ասէ Տիբեր ընդէր թոյլ ետուր Պարսիցն հնամարձակել 'ի վերայ մերս Իսկ նա հանեալ զթուղթն ետու ցնա զոր գրեալ էր Յուստիանոս առ Անարկիանէ վասն սպանման նորա. և ամաչեաց Տիբեր և այն մենայն զօրն Յունաց։ Եւ ասէ Անդուրն. ես վասն զի լուայ թէ արաբիք խաղաղութիւն ուղղափառացն, հաշտեցայ. սիրս իմ ընդ ձեզ և հանգեաւ։ Եւ արդ՝ 'ի պատիւ երեսաց իմոց քարոզեսցի ուղղափառութիւն յայտնապէս։ Եւ հրամայեաց Տիբերիոս և գրեցին։ Եւ գնաց Անդուրն

(1) Ընդնայն օրինակ ոչինչ. առնուլ զթագուհին իմ, զոր տուաւ ինձ մայր. և եհան զնա ամօթով յաչաց իւրոց։

յԱնդաք. և իբրեւ խօսէր սակս ուղղափառութեան ընդ Գրիգորի պատրիարքին. եհաս առնա թուղթ, եթէ լուան Պարսիկք վասն Քրիստոսի և ահա գան 'ի վերայ մեր յերկիրս Տաճկաց. և գնասց Անդուրն յաշխարհն իւր։

Եւ գադարեցին Պարսիկքն։

Ի չորրորդ ամին Տիրեերեայ եղին Սկաւաքքն (1) անդէն և անձի և մերկք. և եկին 'ի Թրակ և 'ի Թեսաղոնիկէ, և առին զերամանն արքունի, և զտունս զինուց և զինագործաց և եղեն զսրբ և գնացին պաշարեցին զՍեռմի. և առաքեցին առ Թագաւորն կամ՝ կռուել ընդ նոսա կամ՝ տալ զքաղաքն Սեռմի, զի բընակեսցեն 'ի նմա խաղաղութեամբ։

Իսկ Տիրեր յամենայնց զնոսա տկն ունելով գալայ Լակվարտացն (2) և ապա ետ նոցա զքաղաքն. բայց 'ի մարդոյն։

Իսկ բարբարոսքն մտեալ 'ի քաղաքն տեսեալ զբնակիչսն ներքեւեալ 'ի սովոյն, և առարին ոչ սակաւ մարդասիրութիւն ասելով նոցա հայց և գինի. զի պակասեալ էր 'ի սրզարն մինչեւ ցշուն և ցկատու զոր կերեալ էին. բայց 'ի յուտելն զհացն անցագուցն։

(1) Ուրանք՝ Սկիւթքն։
(2) Մի օրի. Լանկվարտացն։
ցքն։ Մի օրի. Լանկվարտացն։
տացն։ Մի՝ Լուկվարտացն։

թեամբ մեռանէին։ Եւ նոցա զայն եւս գի-
տացեալ տային նոցա կակղագոյն կերակուր
և տակաւ տակաւ մինչեւ հաստատեցան. և
ապա հանէին զնոսա 'ի քաղաքէն. և ինքեանք
բնակեցան ամ մի, և այրեցաւ քաղաքն յան-
կարծակի. և նոքա ելեալ գնացին յաշխարհն
իւրեանց կարծելով թէ Աստուած երկրին
հաղորդէր զնոսա։

Յայնմ ժամանակի Տիրեր ապար զԱրիկ
կեռաւ. և առաքեաց 'ի Պարսս. և նորա երբ
թեալ եդիտ զկամուրջ մեծի գետոյն քա-
կեալ 'ի Պարսից. և կարծեցաւ թէ Ալեքսա-
ղրն իցէ քակեալ. և դարձաւ չարախօսեաց,
և անկան 'ի հնարս կորսուեան։

Եւ ոմն յիշխանացն Անկանա անուն
խոստացաւ ըմբռնել զնա. և առեալ զզօրսն
գնաց որպէս թէ 'ի Պարսս. և առաքեաց առ
Ալեքսանդր աղաչանս զի ասկաւ ապամբք ե-
կեցէ առ նա 'ի գաղտ. զի խորհեսցին ինչ
վասն Պարսից։

Իսկ նա առանց կասկածանաց գնաց առ
նոսա. և կալան զնա 'ի գիշերի յարբեցու-
թեան և յանհոգութեան ժամու, և առա-
քեցին առ Տիրեր. և եդին զնա 'ի բանտի։

Եւ լուեալ զգանն զայն անկարծելի որդին
Ալեքսայ՝ եկ զօրաք յերկիրն Յունաց յա-

ւար. եւ առնոյր զանձս և անասունս. եւ մարդկան ինչ ոչ ինաստէր։ Եւ զայս արարեալ միանգամ դարձաւ. և իբրեւ զիտաց եթէ ոչ արձակեն զհայրն Նորա քաջասրտեալ յանձն իւր եկն առ Տիբեր դեսպանօք դնել ուխտս յաւիտենական երդմամբ չափ, և առնուլ զհայրն իւր վասն որոյ և արարին իսկ և երդուան յանկուծանելի երդումն։ Եւայց 'ի վախճանի բանին ասայ անօրէնն Անդրիկ. այդ եղեցի նշանակ մնալոյ երդմանդ, եթէ հաղորդիք 'ի ձեռաց առաքնորդայս մերոց և ոչ դարձիք 'ի մէնջ։ Եւ ասայ Անդուրն ես զայդ ոչ կարեմ առնել. զի բազում է ազգն իմ. և քարկոծեն զիս։ Եւ զշմարիտն ասացեալ վասն մահու երկիւղի, ատելն Աստուծոյ ոչ կարեմ լինել իբրեւ զձեզ։ Եւ կատաղեցան 'ի բանի աստ 'ի վերայ նոցա. և առաքեցին զնոսա յանլոյծ տեղիս։

Եւ իբրեւ զբօթս զայս լուան յերկիրն Նոցա խուռվեցան խոցոտեցան սրտիւք և քակտեցան 'ի միմեանց. և եղեն հնգետասան բաժինս, եղեալ իւրեանց առաքնորդս։ Մանք 'ի Նոցանէ եղեն ընդ Պարսիւք կաշառեալք 'ի Նոցանէ. և կէսք ձեռն եւուն յերկիրն Ռամիրայ. և ոսկաւք 'ի Նոցանէ մտին ընդ ծառայութեամբ Յունաց (1)։ Եւ

(1) Բանք՝ 'ի ծառայու. Թիւն։

'ի պատճառաւս չար աղանդին Քաղկեդոնի բարձաւ վայելուչ թագաւորութիւնն այն 'ի միջոց։

Իսկ Տիբերիոս երկեաւ 'ի Տեառնէ և ըստ չարտարդ մանն ստացուածոց իւրոց ետ կապ բռատելոց. և եբարձ զմտքն յամենայն իշխանութիւնէ իւրմէ։

Օ՛ամանէ ոմանք ասեն ամ մի թագաւորեալ. բայց մի հաւանիր դու. զի մեք քաղուս մ վկայս կալաք մասենիս մերումզի չորս ամէ թագաւորութիւն նորա։

Այս ետ զդուստրն (իւր) Օգոստիայ Մօրկայ կնութիւն. որ և առ զթագաւորութիւնն զկնի մահուանն Տիբերի. և էր Մօրիկ կապադովկացի յԱրքիսուս (1) գեղջէ։

Բայց Հռովմ ապստամբեաց 'ի Մօրկայ և եդ իւր թագաւոր զԳրատիոս ոմն. որ և գնաց 'ի վերայ Պարսից. և աջողեցաւ նմա. և դարձաւ յաղթութեամբ. և զի կատարէր 'ի Մօրկայ, առաքեաց նմա մասն յաւարէն երեք հազար գերի. և խնդաց Մօրիկ և յանձն առ զթագաւորել նմա Հռովմ ընդ ձեռամբ նորա։

Բայց Մօրիկ զԱրքիսուս շինեաց քաղաք մեծ, որ զկնի չորից ամաց փլաւ շարժմամբ. և վերստին շինեաց մեծ հոգաբարձութեամբ

(1) Մի օրի. յԱրքիսաս գեղջէ։

և դարձեալ տապալեցաւ ՝ի շարժմանէ . և զի յերկրորդ Հայս էր գիւղ նորա. ասեն թէ Հայ էր ազգաւ ։

Այս զՓիլիկոսին քեռայր իւր առաքեաց ՝ի կողմ արեւելից կալ ընդդէմ Պարսից ։ Գնանգն Ամիզդ Թագաւորեալ Պարսից զկնեմ խոսրովու առաքեաց զօրս և գանձս և առ զՄուփարկին ՝ի Յունաց . և չոգաւ Փիլիկոսն և առ զքաղաքն դարձեալ . և զՊարսիկքն որ անդ էին կոտորեաց ։

Ի յուԹերրորդ ամին Մօրկայ յաթեան Պարսիկք ՝ի վերայ Ամիզդի . և հանին զաչս նորա . և Թագաւորեցուցին զխոսրով որդի նորա ։ Իսկ Մօրիկ արար զԹէոդորոս (1) զոր զին իւր Կեսար . և արար նմա հարանիս մեծարգի. և պատրիարգն կապեաց զԹագ նորա։

Եւ ՝ի նոյն ամի Վահրամ իշխանն Պարսից հալածեաց զխոսրով Թագաւորն . և եկն յԱրմտայ . և առաքեաց առ Մօրիկ աղաչանս , զի լուցի նմա հայր . և տացէ նմա օգնականս առնուլ զամԹոռ իւր . և եւ նմա զզօրն Հայոց և զզօրն Թիւրակայ , և չոգաւ առ զԹագաւորութիւն իւր . և Թողին զՏարսայն և զԻասլայ ՝ի Յունս։ Եւ եւ Մօրիկ զՄարիայ դուստր իւր խոսրովու ՝ի կնուն

(1) Մի օրի . Թէոդոս ։

թիւն առաքելով ընդ նմա եպիսկոպոս քա-
հանայս ։

Եւ խոսրով չինեաց 'ի պատիւ դստեր
նորա երեք եկեղեցիս, և զպատրիարքն Ան-
տիոքու չոգաւ օրհնեաց զնոսա. զմին յա-
նուն Աստուածածնին. և զմին կոչեաց
սուրբ առաքեալք, և միւսն սուրբ Խաչիս.
և եղեւ մեծ խաղաղութիւն. վասն որոյ հր-
ամարտացեալ Մորիկն անիծեալ արար զզօրա-
ցին. և եհատ զկարգեալ պարգեւսն և ըզ-
հաս նոցա ։

Եւ եղեւ զի ապստամբեցին (1) Ռուլոքք
'ի Թիրակ, և զոմն Յունաց գնային հալա-
ծեցին զնոսա, և դարձան 'ի Կոստանդնու-
պոլիս. և յղեցին առ Մորիկ և ասեն. արար
Տէր խաղաղութիւն յաւուրս քո, բայց ըս-
պոյն ոչ ապրի խաղաղութեամբն միայն.
արդ եթէ ոչ դառնայ 'ի մեզ պատիւն և
ոռճիկն մեր օրինաւոր, 'ի խաղաղութեան
առս կալ զմեզ թշնամիս քո ։ Եւ լուան պա-
տասխանի խիստս. որպէս Իպայէլ Մոքռ-
վանայ. և ասեն զոքն ցՊետրէ երդեալ Մո-
ւկայ. թոյլ տուր մեզ սպանանել զնա. և
թագաւորեա դու 'ի վերայ մեր. և նա
ոչ առ յանձն. այլ ազդ ազդար երդեցան, եւ

(1) Երկու օրի. ապստամ. կէր.

փախեաւ Մորիկն 'ի Բաղկեդոն. և ել զՕրն զհետ նորա և սպանին զնա անդ, և թագաւորեցուցին զզօրապլուխն Փոկաս զկնի քսան ամի թագաւորութեանն Մորկայ։

Յե երբեւ լուաւ թագաւորն Պարսից թէ սպանին զՄորիկ և զորդիսն իւր, սրտմնցաւ մեծապէս. և զգեցաւ սեաւ, և ելայց զնա զաւուրս բազումս ամենայն տամբ բրն Պարսից։

Յետ այնորիկ ասէ ցմեծամեծ աւագանին իւր. ոմ առնու զվրէժ արեանն Մորկայ 'ի ձեռացն Յունաց 'ի գիւրութիւն սրբոյն իմոյ, և դարձուցանէ նմա զերախտիսն զոր արար նա Պարսից և կանգնեաց զնախաւտեալ թագաւորութիւնս զայս։

Յե յառաջ եկն ոմն Ռոմիզոն անուն, և ասէ. ես երթայց եթէ հրամայեսցես. և զքոյոց արեամբ զոռունն Յունաց։

Յե սրբոյն Եղեր (թագաւորն) խոստովանեալ և ասէ ցնա վստահ եմ 'ի քեզ, զի այր քաջ ես դու և կարասցես և յաջողեսցիս։

Յե սրգ ոչ եզիցի անուն քո Ռոմիզոն, այլ Շահրպարազ եզիցի անուն քո, և ետ նմա զամենայն կարգութիւնն (1) Պարսից։

Յե եկն 'ի Մէջլուքեաս և առ զՏարսայ և

(1) Մի օրի. զրս Պարսից

և զԱստլայն. և զԱերոիին, և Ձմերեաց անդ։ Եւ առ զԽառան և զՀոլապ և զՆՀ-տաք. և տային ցնա յօժար կամաք զքաղաքսն, ոչ ումեք մեղանչէր բաց 'ի Յունացն և 'ի Հռովմայեցւոցն։

Եւ յութերորդ ամին Փովկայ եղեւ ամենայն Ալիքադեղք Պարսից. և ապա անցին 'ի Կապպադովկիա, և Անկիւրիայ և Ասիայ. և հասին մինչեւ ցԲալկեդոն, և հեղին արիւն բազում. և ասէին Թագաւորութիւնս այս Խոսրովուէ իրաւամբք. զի որդեգիր է Աւրկայ. և ժառանգ Թագաւորութեան նորա։

Իսկ Թագաւորն Փովկաս Թոյլ էր և կընաւոր. և վասն կասկածանաց եսպան զքաջութիւն 'ի զօրապետսայն, և եղեւ ատելի ամենեցուն։

Եւ էին երկու Պատրիկք (1) Անտրիկէ երեւելիք և քաջամարտիկք. անուն միոյն Գրիգոր, և միւսոյն Հերակլ։ Խորհեցան երկոքեան զմահն Փովկասայ. և զօրս ժողովեալ եւուն 'ի ձեռս որդւոց իւրեանց, և սուրբերին զնոսա վիճակաւ ընդ ծով և ընդ ցամաք. և գրեցին Թուղթս յարքունիսն և 'ի քաղաքն, զի սպանցեն զՓովկաս. և ոչ

(1) Զոյգ օրի. պատրիարք։

վաղ երթայ յերկուցն, նա առցէ զթագն. և որ յետոյ գնայ յերկուց որդւոցն իւրեանց լեցի առաջնոյն կեսար։ Եւ էր որդին Հերակլեայ անուամբ հօրն որ եհնաս վիճակ նմա ընդ ծովն. և աջուակ հողմով գնաց կանխագոյն. և տեսեալ զթուղթն նոցն ժամայն ապանին զՓոկկաս, և թագաւորեաց Հերակլ այր քաջ և իմաստուն. և ուրախ եղեւ զօրն և քաղաքն և հանդարտեցին։

Իսկ թագաւորն Պարսից յորժամ տիրեաց Անիջագեստաց, առաքեաց առ Նոստ եպիսկոպոս Նեստորականս և քաղկեդոնիկս. և առնուն էր գլխաւորին Խշիմա. բայց ոչ ընկալան զնոսա ուղղափառքն, այլ գրեցին առ թագաւորն աղաչանս զի մի խախտեսցէ զգահայրենի կրօնս նոցա. և ունկնդիր եղեւ նոցա թագաւորն խոսրով և անդէն կոչեաց զնոսա. և նոքա խնդրեցին 'ի թագաւորէն կոչել զգլխաւորն 'ի նոցանէ և հարցանել զպատճառս չընդունելութեան նոցա. և թագաւորն ախորժէր եւս 'ի վաղուց գիտել թէ զինչ է հակառակութիւն 'ի Քրիստոնեայս վասն որոյ առաքեաց 'ի Հայս և Յորդան. և առ ինքն կոչեաց զարս աստիճանաւորս զիմաստունս, և գնաց մեծ կաթուղիկոսն Հայոց Ներսէս. և պատրիարքն Յորդանոս ու-

զափառաց Ս. Թանաս. և Սեւերիանոս եղբայր իւր։ Զոր տեսեալ զմիմեանս ժողովեալքն 'ի Հայոց և Յունաց խնդացին (և ուրախացան) և գոհացան զՍտուծոյ։ Զոր արարեալ բազում քննութիւնս հարցման և պատասխանւոյ՝ պատեցան 'ի ճշմարտութենէն Եւտրականքն և Բաղկեդոնիկքն. և զգացուցին Թագաւորին. և կոչեաց զժողովն առաջի իւր և ասէ. որպէս կարող իցեմ ես հասկանալ՝ ասացէք ինձ զհակառակութիւնդ ձեր. ասեն Եւտրականքն և Բաղկեդոնիկքն։

Ամենայն քրիստոնեայք խոստովանիմք զՔրիստոս Ստուած յաւիտենից. և յետ ժամանակաց վասն մեղաց մարդկային բնութեանս մարդ եղեալ. բայց առանձինն մեք զայս ասեմք, եթէ երկու բնութիւն է. զի մարդն մեղաւ, մարդն մեռաւ. Ստուածն. զի ոչ մեղաւ. և ոչ մեռաւ։ Իսկ դոքա ասեն մի բնութիւն Ստուծոյ և մարդոյն. և զայն մեռեալ խաչիւ և յարուցեալ և համբարձեալ։ Զոր ուղղափառքն ասեն այդ զատ բան է և յերկար ժամանակաց. և ժողովք և Թագաւորք քննած և հաստատած, այն զոր մեք ունիմք, և դոքա յետոյ աւերեցին։

Զոր ասէ Թագաւորն ոմն էին Թագաւորքն որովք պատմատացաւ հաւատդ ձեր։

Digitized by Google

Յետ սահն Կոստանդին մեծն. և Թէոդոս մեծն. և Թէոդոս միւսն որդի Արկադեայ։

Յետ սահն Պաղկեդոնիկէն խակ Սարկիսանոս ոչ էր Թագաւոր. և Նորա ժողովն սուրկան էր։

Յետ սահն ուղղափառքն. այն էր ազգաց սուերիչ առաջնոյն, զոր ոչ ընդունիմք։

Սակ Թագաւորն՝ լուայ զի պատեցաւրուք 'ի գրոցն ձերոց դուք որ զՍարկիսանին մեծարէք. այլ ես ոչ հաւատարեմ զՍարկիսանայնց Թագաւորացն. և ճշմարիտ Թուի ինձ սահելն, Թէ մահ մարդոյ փրկութիւն ոչ կարէ առնել. և այն որ հաճոյ եղեալ նոցա խառնիլ ընդ մարմնոյ, կարծեմ Թէ և ոչ հաճի նա ընդ բաժանելն. և ես յորժամ եկի 'ի Սինկեդոս, լուայ զայդպիսի վիճմունաց յերկուց կողմանցդ. և եղեալ զօրականացն իմոց հիւանդացելոց քաջկութիւն 'ի հալածականացն Սարկայ. վասն մահ սահելոյն Աստուծոյ։ Այլ և պատմեցին ինձ զօրքն իմ հրաշս ինչ, (պատաք) մեռաք սահն յեկեղեցի մի ըստեալ ժողովրդոք, և երէցն կատարէր զաղօթս պատարագին խրեանց և կատարեցաք զաղմութիւնն յեկեղեցւոյն. և երէցն ոչ ուսեալ և ոչ հայեցաւ 'ի մեզ. և զարմացաք և տեսաք հացս բրդեալ բաւա-

կան երեք արանց 'ի գինի. ղի կամէր տալ 'ի նմանէ հինգ հարիւր արանցն զոր ասպանաք. և բռնադատեցաք զնա ասել մեզ զինչ է այդ. և ասաց այս մարմին և արիւն Աստուծոյ իմոյ է, որ մեռաւ վասն իմ. և ապա ներդեցաք զնա և կերաւ զամենայն. և յետ այնորիկ ոչանաք զնա և բացեալ զիւր նորա ոչ ինչ գտաք. և եղեւ այս յերկիրն Անդուրին որ այդուէս խոստովանին. և ես յոյժ եմ հիացեալ. քանզի հարցաք ասեն ցքահանայն թէ հոգեւոր է կերակուրդ թէ մարմնաւոր. և նա ասաց հոգեւոր. և ճշմարիտ ասաց։

Այդ ես այնմ վկայեմ իրաւացի գոլ, և այսպիսի բանք ոչ 'ի նմանէ, այլ յԱստուծոյ ազդմանէն, որպէս Փարաւոնին, և Նաբուգոդոնոսորայն և Խաղատմուն Ալ ասն որոյ պատուեաց մեծարեաց զմեծ կաթուղիկոսն Հայոց և զպատրիարքն և զտուրքն Յեւրոպս. և լուաք թէ մկրտել ետ զորդին իւր, և ետ սուն հայրապետին Հայոց. և զաշխարհն Պարսից յանձն արար նմա խնամել զԱրիստոնեայն որ անդ, ձեռնադրել անդ եպիսկոպոս և քահանայս։

Եւ այսպէս Աստուած պիտաւորիչս իւր վարաւորէ։

Ասացիր և վասն Աթանասայ պատրիարքի և Սեւերոսի եղբօր նորա, թէ ոչպէս եղեւ ընտրութիւն սոցա, և կամ ուստի էին։

Այր մի էր 'ի Սամոսատայ երկիւղած 'ի Տեառնէ, որ մեռաւ և եթող զասացեալսդ Աթանաս և Սեւերոս փոքր մանկունս ընդ մօրն, որոյ Անիա էր անուն. որ սպասաւորէր զամենայն ինչս իւր աղքատաց. և եւ զմանկունսն Աստուծոյ նուէրս, և սնուցանէր զնոսա աղօթիւք և հաւատովք և յաստուծոյ մեծաւ. զի յորժամ արտաքոյ տեսանէր եպիսկոպոսս և միաբանս և քահանայս. առաջի անկեալ հայցէր աղօթս և ասէր. կրնքեա զիս խաչիւ, և ինքն տարածէր զթեւսն, և որպէս զգոյաւոր իրք ծրարէր և տարածեալ թափէր 'ի գլուխս տղայոցն, կոչելով զնոսա ասելիքն. և հարցանէին տղայքն զինչ է այդ մայր. և նա ասէր օրհնութիւն է այս որդեակք, զոր առաք ձեզ 'ի սրբոյ (Աստուծոյ) առէք պահեցէք երկիւղիս Տեառնէ։

Եւ եւս զնոսա 'ի դպրոց. և յետ սակաւու 'ի վանս սրբոյն Յովհաննէսի. և 'ի կաստարման հասակի նոցա եւս Աթանասայ ուղղոս բերել նոքաք զպէտս վանացն։

Յաւուրսն յայնոսիկ կաստարեցաւ պատրիարքն ուղղափառաց. և ժողովեցան 'ի

վանան հռչակաւոր բաղմութիւն եղբարց յԱԽուծափայ վանք կոչեցեալն. զի ընտրութեամբ ըստ Աստուծոյ կամացն դիւցեն պատրաստեալք. և ընտրեցին արս երիս, և գրեցին զանուանս նոցա յ'երեք թուղթ. և 'ի թուղթ մի զ'Քրիստոս անուանն. և եդին զնոսա 'ի մէջս գնդեալ մոմոյ և ծածկեցին. և արարեալ հսկումն՝ եդին 'ի սեղանն, և մատեան և 'ի վերայ պատարագ. և յետ պատարագին ա՛ռին զմի 'ի մոմոյն և բացին. և ահա 'Քրիստոսի անուն էր. և ընտրեցին երեք այր այլ և նոյնպէս արարին. եւ դարձեալ եկն 'Քրիստոսին. և վոխեցին երեք այլ և արարեալ զաբժանն, եկն նոյնպէս 'Քրիստոսի անունն. և գիտացին թէ ոչ ընտրեաց 'ի նոցանէ Տէր. զի զ'Քրիստոսին վասն այնորիկ գրեն. որ թէ յերեքեան անունէն միոյն անունն գայ, մի այլ առնուն 'ի մոմոյն, թէ 'Քրիստոսի անունն գայ՝ ապա է ընդունելի. զի 'Քրիստոս վկայեաց նմա։ Իսկ թէ այլ մարդոյ անուն գայ յերկուսն որ կան 'ի տեղն՝ չէ ընդունելի, զի 'Քրիստոս ոչ վկայեաց. և թէ միայն 'Քրիստոսին գայ զառաջինն, երեւի թէ 'Քրիստոս միայն է 'Քահանայապետն. յընտրելոցն չէ որ արժանի։

Իսկ ապա երեքեան այլ զկնի միմեանց հրա-

Digitized by Google

կեցին և լային առաջի Աստուծոյ. և երեւեցաւ Քրիստոս 'ի վերայ սեղանոյն և ասէ. վաղիւն ընդ բանալ դրանն առաքեմ առ ձեզ այր մի Աթանաս անուն, նա է արժանի. և գնայ նա ուղղութիւք, և այդ նշանակ ձեզ. որպէս և եղեւն իսկ։

Եւ խնդաց բազմութիւնն. և ապասեցին իրացն նոյնպէս աղօթիւք, և 'ի ժամ առաւօտուն կայր առ դրանն. և հարցեալ զանունն, զուարճացան և բաղում աղաչանաւք և երկիւղիւն Աստուծոյ ածին 'ի հաւան և ձեռնադրեցին. և յետ ձեռնադրութեանն ելայ առաջի նոցա և ասէ։

Սիրովն Քրիստոսի աղաչեմ զձեզ ծածկեցէք զբանդ, և թոյլ տուք իմով հանդերձիւռ երթալ 'ի վանս իմ և ընտրել զտարին իմ. զի մնտ է ժամանակս, և արարին այնպէս։

Եւ ոչ ծածկեցաւ յետ այնորիկ. և խընդրեցին զնա և գտին. և հռչակեցաւ անուն նորա մեծամեծ նշանաւք, և եղայր նորա եղեւ այր սուրբ և աքանչելի. յաղագս որոյ յոյժ սիրեցեալ եղեւ. յաշխարհէն Հայոց 'ի մեծամեծաց և 'ի փոքրունց։

Այլ Հերակլեայ 'ի քսան և մի ամին թագաւորելոյ Պարսից աքքայի թագաւորեալ առաքեաց առ նա և ասէ. ապա ընդ մեզ խա

Digitized by Google

զաղոթիւն. և այդրէն դաձն առ քեզ ըզ-
զորան քո. զի մի՝ առաւ փոկսա սպանողն Աւր-
կայ. և մեք ոչ ինչ մեղաք քեզ։ Իսկ ոչ անսաց
խոսքով։

Ամալեկնա 'ի բանի անդ. և եկն 'ի Կեսա-
ռիա Հայոց 'ի յամրութիւն զօրաց իւրոց.
և կոտորեաց զՀազարս հազարաց, և բիւրս
բիւրուց և դարձաւ։

Իսկ Շահրպարզն 'ի չորրորդ ամին Հե-
բակլեայ հնազանդեաց զԱսմանակոս Պարսից.
և 'ի գալ տարուոյն զԱրաբիսս. և 'ի վեցե-
րորդ ամին Հերակլեայ առ զԻրուսաղէմ, և
սպան 'ի նմա իննսուն հազար անձինս և գե-
րեաց զայլսն Հրէիցն ոչ մեղանչելով զառա-
ջինն. վասն որոյ ասկաւ գնոյ առեալ 'ի քրի-
ստոնէիցն սպանանէին բայց զինի ընչեաց
զՀրեայսն Յիրուսաղեմ և յամենայն սահ-
մանաց նորա. և առեալ Շահրպարզն զխաչն
Քրիստոսի զման բաժնի Նեստիոքու, զոր
տարեալ էին Յիրուսաղէմ. և առաքեաց
զնա 'ի Պարս առաքելով ընդ նմա զ.Օ.ա-
քարիա պատրիարքն Յիրուսաղեմի 'ի պա-
տիւ խաչին սպասաւոր նմա։

Իսկ զկնի ամի միոյ չոգաւ Յեգիպտոս
և առ զնա. և հնազանդեաց զամենայն Լ.
բիա Պարսից մինչեւ ցԲուշանս։

Digitized by Google

Եւ 'ի նոյն ամի առաքեաց Խոսրով զՇապհէն զօրագլուխ իւր, որ եկն 'ի Կիւլիկիայ և առ զնա. և ծանր աւարաւ դարձաւ 'ի Պարսս, մինչեւ տանել նմա սիւնս կՃեայս (1) և անօթս պղնձիս։

Իսկ Հերակլ զկոստանդին որդին իւր անուանեաց Օգոստոս, և առաքեաց ընդդէմ զօրացն Պարսից. և ոչ վստահացաւ պատահել նոցա, և դարձաւ անդրէն։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս որ յայսմ ժամանակի երեւեցաւ Մահմետ որդի Աբդլայի 'ի Թուին Հայոց վեցհազարն և եւթն. զոչոյս ժամանակաւ խաւարեցաւ կէս արեգականն յաբեղ աշնանամտին մինչեւ 'ի քաղց ամիս։

Յայսմ ժամանակի երեւեցաւ Մահմետ որդի Աբդլայի յԱրաբիա (2). և է Արաբիա յԱրևմտեան գետոյ մինչեւ 'ի ծովն հարաւոյ. և յարեւմտից 'ի կարմիր ծովն մինչեւ յարեւելս 'ի Պարսից ծովն։ Եւ բնակիչքն կոչին Իսմայելացիք՝ վասն Իսմայելի, և Սարակինոսք (3)՝ վասն Սառայի. զի

(1) Մի օրի. կՃՀ։ — ըս Ամբաթայի։
(2) Երկու օրի. 'ի յեփ. — (3) Սարինոսք։

յանուն Աստուծոյ Իսմայէլ որդի եգրուա-
թեամբ. և կոչին Ալգարայիք՝ վասն Ալգարայ.
և Անդիանայիք՝ վասն Անդանայ որդւոյ
Կենդուրայ։

Այս Ահմէտ երանէր յԱթրապ քաղա-
քէ և գնայր վաճառականութեամբ յԴիպ-
տոս և ի Պաղեստինէ. և երբեմն ծանօթու-
թիւն նմա ընդ Հրէից. և ուսուցին նմա
զօրէնսն, և հաւատոց յԱստուած. և եռուն
նմա կին, և երթեալ քարոզեաց ազգին Իս-
րայէլ. և ոմանք հաւատացին և այլք փա-
խուցին զնա իբրեւ զմոլեգնեալ. և ել սա-
կաւուք յանապատս և յարեւցան ի նա այլք։
Եւ երթայր նոքաք դերեր կողոպտէր զանհա-
ւատն՝ և զհաւատացեալսն յանկուցանէր յինքն։

Եւ սիրեցին զնա Հրեայքն և տարան
առ ինքեանս. և նոքա հալածեցին զքարոզ
Պարսից. և ել հանգաւ զնմանէ, և գային
կուտէին առ նա. և տիրեցին բաղում գա-
ւառաց. և հռչակեցաւ անուն նորա յինն
հարիւր երեսուն և վեց թուին Աստրոց. և
ի վաթսուն եւթն թուին Հայոց, և յեր-
կոտասներրորդ ամի թագաւորութեան
Հերակլեայ։

Այսու ժամանակաք խաւարեցաւ կէս
արեգական յարեւգ յաշնանամուտն մինչեւ ի

քաղաց ոմանքան ամիս. և կարծեցաւ թէ այլ ոչ յաղագի արեգակնդ յաւիտեան (1).

Ի հնգետասան ամին Հերակլեայ առին Պարսիկք զԱրոդոն կղզի և գնացին նստան ի Կոստանդնուպօլիս. և ապրեցաւ զօրն ի Թրակիայ և յարեւմուտս կոյս. և ամ մի ապաշարեցաւ Կոստանդնուպօլիս և անցուցաւ յամենայն կոզմանց.

Իսկ ի խնամոյն Աստուծոյ եղեւ հնարք ասկաւ ինչ այսպիսի օրինակաւ. քսեցին ա ռաջի Պարսից աբքային եթէ Շահրպարզն հպարտացեալ է ընդ դարձս իւր և ասէ. կը նամն խարով նասեալ է յարբեցութիւն ի մէջ հարճից և վարձակաց. և զայս ոչ կարծէ եթէ ոչ ասամ ես նմա զերթիր զոր ասի վասնակօք իմովք. և ցասեաւ խարով և գրեաց թուղթ առ Ապրուսօղան երկրորդն զօրապլուխ, եթէ յորժամ տեսանես զգիրս՝ հատ զգլուխ Շահրպարզնդ, և առ իս առա քեա.

Իւ անկաւ թուղթս այս ի ձեռն ծառայիցն Հերակլեայ և տարան առ նա. Հերակլ գաղտապէս ազդ արար Շահրպարզին զերբն. Իւ եկն առ Հերակլ ծածկապէս և ուխտեաց նմա. և առ զթուղթն և շրջեաց

(1) Եբկոս օրի. ոչ հաս. ասամ ի նոյն յաւիտեան.

և գրեաց այսպէս . «Շ ահրպարզ և Ղ արաւոշ-
ղան հաւատարիմք իմ՝ Ընդ գալ Թղթոյդ առ
ձեզ . երեք հարիւր իշխանք որոց անուանք
այդ և այդ գլխատեցէք . և գրեաց զանուան-
սն . և տարաւ եղոյց մեծամեծացն և Ղա-
բաւաշղանայ . և դառնացան և անարգեցին
զխոսրով . և արարին սէր ընդ Հերակլ . և
դարձան 'ի Պարս . և առաքեաց Թագաւո-
րքն Հերակլ առ Թագաւորն հիւսիսոյ խա-
քան . զի տացէ նմա զդուստր իւր Ի՞ւդիտիա
'ի կնութիւն . և խնդրեաց 'ի նմանէ քառա-
սուն հազար հեծեալս 'ի վերայ Պարսից . և
յանձին կալաւ խաքանն . և խոստացաւ ա-
ռաքել զոր խնդրեացն ընդ դուռն Կասպից ,
զի իմ բան ինչ է ասէ առ Փայտակարան քա-
ղաք աւերել զնա : Ի՞ւ լուեալ Հերակլեայ
եկ 'ի Հայս ընդ առաջ հիւսիսականաց , զի
նոքաք երթիցէ 'ի վերայ Պարսից . և լուեալ
խոսրով որ ինչ եղեւ , և ժողովեաց զօրս . և
կացոյց նոցա գլուխ զՈռզիքահան , և առա-
քեաց ընդդէմ Հերակլեայ . և Հերակլ զհիւ-
սիսականսն առեալ , չոգաւ ընդ առաջ Ոռ-
զիքահանայ , և եհար զնա խստաւ . և խմա-
ցեալ Խոսրովու փախեաւ 'ի Սադան (1) յամ-
րոց իւր :

(1) Երկու օրի • Սադար դա ասիոց իւր :

Իսկ Շէրի որդի Խոսրովու կայր 'ի բանտի, եւ անտի հրամանաւ Պարսից. և սպան զՀայր իւր, և Թագաւորեաց. և Ֆերակլ դարձաւ 'ի Լինուէ ձմերել անդ։

Եւ առաքեաց Շէրի առ Ֆերակլ խնդրել զխաղաղութիւն. և հաւանեցաւ Ֆերակլ, և առաքեաց զԹէոդորիկէ զեղբայր 'ի Միջագետս և չոգաւ յԱւուհայ։ և Ֆերեայքն որ անդ բռնեցան ընդդէմ նորա և առեալ զքաղաքն կոտորեաց զբազումս 'ի նոցանէ, և Ֆերակլ դարձաւ 'ի Թէոդուպոլիս. և տկարացոյց զՀայս վասն ուղիտութեանն Եղբի նոցա առաջնորդի։ Բայց ոչ կարաց զամենեսեան որպէս կարծէրն, հայելով Աստուծոյ 'ի քրիստոնեահատակին Գրիգորի. և յետ այնորիկ եկն յԱւուհայ, և ելին ընդ առաջ նորա բազմութիւն եկեղեցականաց. քանզի վանորայք լերինն առհասարակ եկին և խառնեցան 'ի բնակիչս քաղաքին, որոց Թիւն էր ինիսուն հազար. և պատկառեաց Թագաւորն. և խոնարհեալ երկիր եպագ սրբութեանցն և ասէ. ոչ է արժան անմասն առնել զմեզ յաղօթից սոցա Թէպէտ մի բնութեանն են ախրողք. և 'ի սոնի ծննդեանն էր մուտ նորա 'ի քաղաքն. չոգաւ 'ի տուրքն Սոփի, և մատոյց ընծայս

եկեղեցւոյն և քահանայիցն. և 'ի ժամ պա-
տարագին խնդրեաց հաղորդիլ, և ասէ ցնա
աղքեպիսկոպոսն Յասայի. նախ նզովեա՝ զոզ-
տուամարն Լեւոնի և զժողովն Քաղկեդոնի.
և բարկացաւ Թագաւորն. և առ զեկեղե-
ցւոյն բանալին և եկ. և յետ պատարագին
արտաքս եհան զնոսա յեկեղեցւոյն, (զբա-
նալին) ետ ց՝Քաղկեդոնիկան։

Յետ սորբն Ս՝Թանաս պատրիարքն եկեալ
յՍնտաքայ եկն 'ի ՍնբէՀ՝ 'ի պատահումն
Թագաւորին, և երկոտասան եպիսկոպոսք
ընդ նմա, որք էին այսոքիկ՝ Թովմա՝ Թրմու-
ռին, Պասիլ՝ Հեմսայ, Սարգիս՝ Սրիսոյ,
Յովհաննէս՝ Կիւրիսոյ, Թոմայ՝ Յարապօլ-
սոյ, Դանիէլ՝ Խառանու, Մեւիրէ՝ Կնշրոյ,
Ս՝Թանասիոս՝ Յարապիսոյ, Կոզմա՝ Յպիսիա-
նոյ, որ 'ի Կիւլիկիա. միւս Մեւերէ՝ Սամոս-
տիայ, Յասայի՝ Մառհայոյ, որ և գնաց առ-
նա պատմել որ ինչ եղեւն. և 'ի գալ Թագա-
ւորին 'ի ՍնբէՀ, տեսին զնա անդ և ասեն
(ցնա). մի առներ արքայ սիրելի մեզ զիսա-
ռըս Պետրոսից քան զքրիստոնէից. և մի վա-
նել փոխ Թասցիս զՀշմարտութիւնն։

Իսկ Թագաւորն հասկացաւ զբանն՝ և
նստաւ 'ի քննութիւն զաւուրս եօթնտասան
'ի սրով իմաստնովք խորհրդականովք ընդ-

զէմ ուղղափառացն. և յաղթեցաք ճշմարտութիւնն. և ասէ Թագաւորն՝ բիծ ինչ ոչ գոյ ի ձեզ, այլ զմերս պահեցուք մեք. և գնայ յԱնտիոք. և խորհեցան (ընդ միմեանս) իշխանքն և եկեղեցականք քաղաքին, և որք ի դրան արքունի էին, և ասեն ցԹագաւորն. եթէ ոչ պատերազմիս երեւելապէս ընդ ուսումնդ ընդ այդ՝ զոր ասեն Հռովմայեցիք և Յոյնք, ոչ յերկարէ Թագաւորութիւնդ քո. այլ և ոչ հաճի Աստուած ի քեզ, տապալելոյ զայնքան արանց աշխատութիւն. և ոչ յաւելուլ ի նոսա։

Եւ լուաւ նոցա Թագաւորն և ետ հրամայեաց նախատելոյ և չարչարելոյ զմիաբանսն. և մի կալցին առ իս ասէ համարձակութիւն և մի կալցին կարթուղիկէ եկեղեցիս, քանզի դարձուցի ասէ առ իս զմեծն Հայք. և ոչք են որք ոչ հնազանդին ինձ. և զայն ոչ գիտաց անմիտն զի թէ կաշառեաց զանմտութիւն Աղրի, և պատրեաց[1] զանիմաստութիւն նորա։ Այլ պարկեշտ վանորայքն արեւելից և բազում մասն աշխարհին արհամարհեցին զնա, և զիսաբեալսն ի նմանէ անուանեալն կարթուղիկոս. մինչեւ ամենեւին բարձաւ հետք չարութեանն ի նոցանէ։

(1) Երկու օրի. պատրեաց։

Իսկ նա սիրեաց զփառս մարդկան, և ոչ զփառս Աստուծոյ. և պատահէ արժանեաց իւրոց։

Իսկ թագաւորն Պարսից Շապհ զինի ի նոյն ամսոյ մեռաւ, և թագաւորեաց Ար-տաշիր որդի Նորա ամս երկու. և զսա եւս սպան Շահրպարազն, և ինքն թագաւորեաց կամակցութեամբ Հերակլեայ։ Եւ զի Պարսա-տազանն (1) ժարմա կատեաց ի վերայ Նորա-ատաքեցաւ նմա զոր յօգնականութիւն. և սպան զնա։ Եւ ամ մի կալեալ զթագաւո-րութիւնն Շահրպարազ ոչ նա ինքն է խո-սիանէ, և սպանաւ. և առ զթագաւորու-թիւնն Պարամ դուստր Խոսրովու սակաւ-աւագս և մեռաւ։ Եւ թագաւորեաց Օրմանդուխտ քոյր Նորա։

Եւ զինի Նորա առին, Շահրօրի և Դա-բուրան, Խոսրով, Վերազ, Օրուանդուխտ, Արմիզդ. ընդ ամենեսեան ամս երկու։

Իսկ Հերակլ յաւել ի չարիս իւր, և առ կին զԱնաստասիէ դուստր եղբօր իւրոյ ի ծերութեան իւրում. և ծնաւ ի նմանէ զՀերակլէ որդի անօրէնութեան։

Այլ Ամամէան բռնացեալ ի վերայ բա-զում գաւառաց և քարոզեալ կրօնս ըստ կա-

(1) Ամենք՝ զարատոշն։

մաց իւրոց եդեալ օրէնս կալեալ զիշխանութիւնն ամս եւթն, մեռաւ և փոխեաց Նոյ բաքր զնա ամս երկու. և ամիսս եւթն։

Եւ զկնի նորա Ամար էառ զիշխանութիւնն ը էառ զԱսարա յասորի իշխանէ. և առաքեաց զօր մեծ 'ի Պարսս. և գտին ընդ նոսա ամբոխեալս, զի սպանեալէր զԱրմիզդ և կամէր թագաւորել Աղտաճատ. և առին բազում գերի և աւար 'ի Պարսից. և դարձան և հարին զզօրն Յունաց և զզօրավար նոցա զԱրդիս. և զօրացան 'ի վերայ Պարսից և Յունաց, և եղեն իշխանութիւն մեծ։

Իսկ Հերակլ ժողովեաց զօրս ընդդեմ նոցա և առաքեաց 'ի վերայ նոցա, զԹէոդորիկէ զեղբայր իւր, եդեալ գլուխ զօրացն. ոքք էկին իջին (1) յԱնտաք 'ի գիւղն որ կոչի Կուսիդ։ Եւ կայր անդ սիւնակեաց մի Ամիմէոն անուն. և գնաց առ նա Թէոդորիկէ և մեծամեծք իւր ընդ նմա խնդրել աղօթս, և հարցանել (2) նովաւ զՏէր. և նա ասաց ցնոսա ուխտեցէք ինձ զի 'ի յաջողել նձեզ 'ի Տեառնէ անհետ առնիցէք զհակառակորդս սուրբ ժողովին Քրիստոնի. և ասեն երդնումք քեզ զի արասցուք զայդ. և ըստ դոյն պատուէր ուխտիմք 'ի թագաւորէն. և

(1) Ոմանք՝ իջան։ (2) Երկու օրի։ հարցել։

ասէ ցնոսա, երթայք աղօթիւք սուրբ ժո-
ղովոյն. և իբրեւ գնացին սրտմտութիւն
Տեառն եղեւ 'ի վերայ նոցա. և փախեան
առաջի թշնամեացն, և մտին 'ի սուր
սուսերի. և առան ամենայն պատրաստու-
թիւնք նոցա, և մաղապուր զերծաւ Թէո-
դորիկէ սեաւ երեսաք յԱստուծոյ և 'ի մարդ-
կանէ։

Իսկ Ֆերսկլ դարձեալ քաջալերեցաւ
յանձն իւր, և հաւաքեաց զօրս և եկն 'ի
ձեռն որդւոյն Շահրպարզայ, որ կայր առ
նմա պատանդս 'ի հօրէն տուեալ՝ անուաձ-
հօրն կոչեցեալ. և չոգաւ եւթանասուն հա-
զարաւ, և կռուեցաւ ընդ Տաճիկսն առ գե-
տո

Դամասկոսի. և պարտեցաւ դարձեալ
առաջի նոցա. և փախեաւ զօրն Յունաց,
և անկան 'ի նոցանէ քառասուն հազարք։
Եւ Շահրպարզն անկաւ 'ի Ֆեմս, և յշեաց
առ նա Իմամ, զի ուխտեսցէ նմա գալ առ
նա, և առնուլ զօրս և երթալ 'ի Պարսս, և
դարձուցանել առ նա զթագաւորութիւնն
Պարսից. և կոչեաց զնա առ ինքն ուխտիւ։
Եւ քանզի կային առ Իմամ դստերքն Խոսրո-
վու 'ի գերութեան, ասացին ցնա. որդի ա-
պրատամբի է և երթայ կորուսանէ զզօրսդ,
և թագաւորէ 'ի Պարսս հակառակ քեզ. և

Digitized by Google

հաւատաց նոցա Աստուծոյ, և սպան զնա կոխեալ զանուանս փայտի. և ինքն առ զԴամասկոս և նստաւ 'ի նմա. և առաքեաց զԱդամ ամիրայն ընդդէմ Պարսից, որ և չոգաւ և եհար զբանակս իւր 'ի վերայ Ռուվայ (1) քաղաքի։

Եւ քառասնամեայ թագաւորն Պարսից, և եկն 'ի վերայ նոցա և վանեցաւ առաջի Տաճկացն. և անկան յոլովք և փախեան սակաւք։

Եւ եկն անդէն Արտակիկն տղամարդ (2) երիվարաւք զհետ նոցա. և կոտորէին զոսպառաջինեալ և զյաղթապէսեաց Պարսկիցն։

Եւ պատմեաց արտաքսի, եթէ հարցանէի ես ամիրայ մի սպառազինեալ, և եհար 'ի սիրտս իմ տասն անգամ նետիւ, և ոչ կարացայ խոցել զնս. զի նալակատուր մի կայր 'ի գրպանս իմ, և 'ի վերայ այնր դիպէր միշտ նետն. և ամիրայն զարմացեալ լինէր զի ոչ կարէր խոցել կոթոմի գրիչաւ զմարդ մերկ. վասն որոյ ետես առաջի իւր բահ ցցեալ 'ի կոթոնն յեզր նոցուն (3) ապտի. և եհար զնա և անց նետն թափի ընդ երկաթն և ցցեցաւ 'ի գետինն. և վարվարեալն անկաւ

(1) Եբկոս օրի. Ռուվայ։ մեզ կոմն զ. ի-ոնքեալ սպանի։
(2) Եբկոս օրի. կղմուք. փարանոտ ընդօրինակեան.
Ինչեաս 'ի բան բնագրին տրը-
(3) Եբկոս օրի. չոր առաջ

յերիվարէն, և եխու-բ (խբեաց) զաչս իւր. և ապանի զնա ասով իւրով։ Բանդն խմացաք երկոքեանս եթէ բարկութիւն Տեառն հասեալ է 'ի վերայ նոցա։

Յաւուրսն յայնոսիկ ժողովեցան բազմութիւն քրիստոնէից 'ի վանս սրբոյն Միմէոնի կատարել տօն վկայիցն. և խմացան Տաճիկքն և երթեալ կոտորեցին զնոսա և պայթակղեցան բազումք. զի ոչ փրկեաց զնոսա Տէր. և զայս ոչ խմացան զի սահման առաջնոց տօնողացն բարձաւ. որք պահօք և աղաւաւօք և հաւատով կատարէին. և այժմ լուծութեամբ ուտելով և արբեցութեամբ տօնս անուանեն, որ չէ հաճոյ Աստուծոյ. այլ 'ի մեղս և 'ի դատապարտութիւն անձանց։

Յետ այսորիկ դարձեալ եկն Աղտաճատ թագաւորն Պարսից 'ի վերայ Տաճկաց առ Տիգրիս գետով։ Եւ յոթժամ տեսին զբազմութիւն նոցա, քսակեցին զկամուրջ գետոյն։

Եւ ասեն Տաճիկքն եկայք անցցուք ընդ գետս և գնասցուք առ նոսա, զի այն որ օգնեաց մեզ 'ի ցամաքի, զնոյն կարող է և 'ի ջուրս. և զայս ասացեալ թափեցան 'ի գետն և անցին. և մի 'ի նոցանէ ոչ մնաւեցաւ. և հարին զՊարսիկքն և հալածեցին.

և չորիցս անգամ կռուեալ Հզտաճատ ընդ Տաճիկսն, հարաւ (1) 'ի նոցանէ։ Իւր ապա գիտացեալ եթէ եկեալ է կատարած նոցա փախեաւ 'ի Սիկիստան յերկիրն Սարագանի 'ի սահմանս Թուրքաց. և եկաց անդ ամս հինգ, ապանաւ 'ի Թուրքաց։ Իւր այսու զբինակաւ բարձաւ զոտ զթագաւորութիւնն Պարսից, որ կոչի Սասանայ, տեւեալ ամս չորեք հարիւր տասն եւթն. և առին Տաճիկքն զթագաւորութիւնն Պարսից։

Իւր գնաց Սմար յԵգիպտոս. և եկն ընդառաջ նորա եպիսկոպոսն Կիրայ (2) և խոստացաւ տալ նմա յամի երկու հազար դահեկան, զի մի մտցէ նա յԵգիպտոս. և հաւանեցաւ Սմար, և դարձաւ։ Իւր լուաւ Հերակլ զկորային. և առաքեաց ոստիկան Եգիպտոսի զՍանուէլ Հայկազնի և որոտաքեաց ընդ Կիրա. և յորժամ եկին հարկառուքն, ասէ Սանուէլ. ոչ ունիմ ես փիլսն եթէ տայ քեզ ոսկի. այլ թուրա՝ զոր ոսամ քեզ։ Իւր լուեալ Սմարայ չոգաւ յԵգիպտոս և առ զնա. և դարձաւ եկն յԵրուսաղէմ։ Իւր իբրեւ եառեալ Սոփրոնիոս եպիսկոպոսն Երուսաղեմի զՍմար խամ և հին հանդերձիւ և հին մուշտակով 'ի մոքթոց մաքեայ, եբեր առաջի

(1) Մի օրի. հալածեցաւ։ (2) Մի օրի. Կիւրիայ։

ծորա պատուական հանդերձս, զի զգեցցի. և աղաչէր եւս. և ասէ (Ամարն) ցնա. եւ ինձ Ստուած զգանձս Պարսից 'ի Տիզբոն զՅունացն, զԴամասկեացն, և զԵգիպտոսին, և այլս բազումս. և ես ոչ փոխեցի զհանդերձս աղքատութեան իմոյ. զի մի գուցէ մոռանամ զիս թէ ով իցեմ. և ոչ զայդ առից և ծածկեցից զաղքատութիւն իմ. և պատուեաց զեպիսկոպոսն, և եւ զաշխարհն 'ի ձեռս նորա. և հրամայեաց նմա 'ի տեղի տաճարին շինել մկիթի։ Եւ գնաց Ամար յԱստրիս (1)։ Իսկ զօրապետին Յովհաննէս, որ կայր յԱռհայ, եկն առ Ամար 'ի Կիշլի, և եւ նմա հարիւր հազար դահեկան հարկս տարեւոյ միոյ. զի մի մոցէ նա 'ի Ամիջագետս յարեւելից կողմանէ. զոր լուեալ Հերակլեայ յաստեաւ և կալաւ զՅովհաննէս. և եւ 'ի կապանս. քանզի Ստուած որ կամէր եղծանել զնա, եւ նմա հարստ և դատն միտս։ Ասան որոյ 'ի գալ տարեւոյն եկին առին զԱմիջագետս և տիրեցին։

Իսկ Առհայ քաղաք խմաստութեամբ իւրով եհան զօրան Յունաց որ անդ կային. և գնային խաղաղութեամբ. և եդ Ամար զԼահարկս քրիստոնէից որ էին ընդ իշխա-

(1) Մի օրի. յԱռհա։

նուիրեամբ նորա։ Իսկ զԹամբուզն (1) և զՏաբրայ կոտորեաց Ամար, զի բռնացան ընդդէմ նորա. յարուցմամի մեռաւ Հերակլ Թագաւորեալ ամս վեց։

Այս եթող երիս որդիս զԿոստանդիանոս՝ որ Թագաւորեաց ամս չորս. զոր եսպան դեղով Մարտինէ կինն Հերակլեայ, և Թագաւորեցոյց զՆուր որդին զՀրակլեակ. զոր իշխանքն սպանին։ Յետ երկրորդն Հրակլնա զոր ոչ եդին զսա Թագաւոր իբր չծնունդ չար խառնակութեան. այլ զԿոստաս զորդին Կոստանդիանոսի զԹոռն Հերակլն։

Իսկ Ամար աղաչեցեալ 'ի Ծառայէ միոջէ առնելնմա դատաստան, և նա յերկարէր զգիրն. և ոմանցեալ Ծառայն սպան զնա դանակաւ խոցեալ զնա 'ի կուշտն, յորժամ առանձնացեալ կայր յաղօթս. որ իշխեաց ամս տասն և երկու։

Յետուն զպատիւ նորա Աբիմանայ. որ էր այր ագահ և խակ, և անցանէր զսահմանսն (2) առաջնոցն. և սպառնացան նմա՝ եթէ ոչ կացցէ 'ի չափս։ Յետ եդին զբարի զորայն զԱւրին՝ որոյ առեալ զգօրսն չոգաւ 'ի Կեսարիա և աւար ընդ հարկաւ։ Յետ անտի յարուցեալ գնաց յԱմասիա. և առեալ

(1) Ոմանք՝ զԹամբուզն։ (2) Ոմանք ընդ սահմանսն։

առաջ բազում, դարձաւ 'ի Ակուլիկիայ. և հնազանդեաց զնա։

Իսկ Թագաւորն Կոստաս բաժանեաց զզօրսն յերկուս. զաւժինն առաջին եւ 'ի ձեռս Վաղինեայ՝ որ չոգաւ 'ի Ակուլիկիա։ և հալածեցաւ 'ի Տաճկաց. և զաւժինն երկրորդ եւ 'ի ձեռն Դաւթի հայկազնոյ, որ չոգաւ զմերին կոզմամբն, և հալածեաց զզՀաղարացին 'ի Կապադովկիայ։ Իսկ զօրսն Յունաց առնէին զգծագործութիւնս ընդ կանայս քրիստոնէիսն յերեսս արանց իւրեանց, և յափշտակէին զկարասիս նոցա. զոր իբրեւ լսաւ Դաւիթ՝ սաստեաց նոցա և ասէ. այդ մատնեաց զՔրիստոնեայս, զի ոչինչ է խտիր ընդ անհաւատսն և ընդ հաւատացեալս 'ի գործս աղտեղութեան. և առեալ զզօրսն դարձաւ 'ի Կոստանդնուպոլիս. և այլ ոչ կամէր առաջնորդել այնպիսեացն։

Իսկ Սուրբ եւ ածել յԵգիպտոսէ Նաւս հաղար եւ թն հարիւր. և ել Նոքաբ 'ի Վիպրոս կղզի, և խնդրեաց հնազանդութիւն և հարկ. զի խնայեացէ 'ի նոսա։

Իսկ Նոքաս ամրացան 'ի քաղաքս, և արարին ընդդէմ պատասխանի. և սուրն Հաղդաս զարթեաւ 'ի վերայ նոցա. և եղեն

քաղաքք նոցա ամուրք գերեզմանք նոցա. առին և զքաղաքն Կոստանդեայ ուր ամենայն գանձ կղզւոյն կայր. և արանցն ոչ գոյր թիւ զոր կոտորեցին զնոսա, և կորուսին խսպառ. և արարին պղծութիւն 'ի սուրբ կաթուղիկէն մեծ 'ի շինեալն Յուստինեայ արքայ. զի ոչ գտին զեղեալ կանանքն Եպիփանու 'ի նմա վասն հաւատոյ և գործոց. և լցաւ Մաւի աւարաւ անչափիւք և դարձաւ։ Յաւուրեալ մասն եգիպտականացն յուղարկեայ զնոսա 'ի տեղիս իւրեանց։

Այսու ժամանակաւք գրեաց պատրիարքն Յովսեփ ուղղափառաց սուրբն Աթանասու պատուական Կաթուղիկոսն Հայոց զայս օրինակ։

«Հոր իմոյ և Տեառն Քրիստոսի 'ի Տէր խնդալ։

«Լուայ եթէ անմոռութիւնն Աստի ոչ եղեւ հաճոյ սրբութեանդ քո, և փառաւորեցի զՔրիստոս Աստուած, և զշնորհս նորա առ քեզ։ Յիշեցուցից քեզ հայրապետ պարկեշտ բան ինչ զոր գտի գրեալ սրբոյն Մարութայի ազգականին ձերոյ. եթէ Խարտուսմայ ապականիչն յաշակերտաց անտի Նեստորի էր, և յորժամ եղեւ սուրբ ժողովն Յէփեսոս նա կայր 'ի Մելուհայ. և 'ի

Պարսս կաթուղիկոս էր Պաւի (1) ձեռնադրեալն 'ի Հայոց։ Գնացին նմա խնդրակք երիցունք վանից երկուք։ Այնպէս և ըզ Խարսուամայ կոչեցին 'ի ձեռն առն միոյ։ Իսկ Խարսուամայ ասէր պատասխանի թէ ես ընդ ձեռամբ Պաւեայ կամ։ Այլ թէ նա գայ և ես գամ։ Իսկ Պաւի անատակ եղեալ ոչ եկն. այլ գրեաց թուղթ 'ի ժողովն, և ասաց. մեք ընդ իշխանութեամբ անօրինայ կամք և չար տերանց, և չեմք 'ի կամս մեր. վասն որոյ երկնչիմք եթէ կարծեն զմեզ բանաբերս այդր եկեալք 'ի Պարսից. և սուրն սպանող հարցն մերոց և ոչ 'ի մեզ խնայեսցէ և ոչ 'ի հօտս մեր. այլ զոր ինչ և Հոգին սուրբ խօսեացի առ ձեզ, սուք առ իս բերել և հաւանիմ։ Այլ զարան որ գնացին առնա սիրով գարձոյց. և զթուղթն ոչ ետ 'ի ձեռս նոցա զի մի գնասեսցեն. այլ ընտրեաց արս երկու յիւրոցն, և այլափոխեաց զնոսա և առաքեաց թղթովն. զի և նոքա և գիրն լցցեն զտեղն նորա։

"Իսկ նոքա եկին 'ի Ամբին և գտին ըզ Խարսուամ անդ խոյս տուեալ 'ի կոչողացն Այրիեստս. և հարցեալ զնոսա Խարսուամայ, և ուսեալ զնոսն, խնդրեաց թուղթն և ասաց.

(1) Երկու օրի. սուրբն Պաւի։

գնացէք 'ի տեղիս ձեր, զի մի զուտեաս կորչ
ծեսցին զձեզ և սպանցեն. և ես երթամ և
տանիմ զթուղթս. և նոքա գարձան պարզ
մտութեամբ։

"Իսկ օձն խորամանգ (1) յորժամ լուաւ ե-
թէ նզովեցին զԼեատոր, և աքսորեցին, խու-
ցեցաւ խստագոյնս. և չոգաւ առ Պարսից
թագաւորն և ասէ ցնա. այր մի էր 'ի Լոյ-
տանդնուս օրքս 'Լեատոր անուն՝ որ միշտ ըն-
բարիս խորհէր Պարսից և արգելոյր զՅոյնս.
և զՀռոմայեցիս ապստամբել 'ի Պարս.
և ասէին նմա զի առ ամենորդ էր եկեղեցւոյ.
կամեցաւ և կրօնս ինչ մուծանել յեկեղեցի՝
որ չէ կարի հեռի 'ի Պարսից. և վասն այնո-
րիկ քսեցին զնա թագաւորքն, և աքսորե-
ցին. և զեղեալ սահման նորին նզովեցին.
և ապրդ հրամայեաց ինձ հաստատել 'ի քրիս-
տոնեայս զկանոն բարեկամին Պարսից. և օրք
ոչ հաւանին կողոպտել յընչից և ընտել ըզ-
գանձս քո. և ոչ գիտես եթէ կամ թուղթս
այս լուտես է եկեալ առ ձեզ Հայոց և Հոռ-
ոմոց. և ահա թուղթս՝ որ գրեալ է զքեզ
անօրէն և չար և պիսնահեղ (անուանէ)։
Լուաւ հաւատաց նմա թագաւորն. և ետ ըզ-

(1) Մի օրի. յաւելու 'ի լուս. չարն Բարսամ։
ասին տեսեք թէ ինչ արար

Պաւլի 'ի ձեռս նորա և զամենայն քրիստոնեայս որ ընդ իշխանութեամբ Պարսից. և ետ զօրս ոչխարի և կամիցի. և չոգաւ առ Պաւլի։

«Եւ ասէ ցնա ապաքէն լուար զհաւատն Աստուծոյ դու. և ասէ. լաւ ապ նեղուեցին զնա. զի ոչ պահեաց զսուանդ տուրբ առաքելոցն. և եղեցի նեղուեալ։ Եւ բարկացեալ կատաղին այն ահաւասիկ զլեզուս նորա, և առաքեաց առ Թագաւորն և ասէ. հայհոյեաց զքեզ. և նա ասաց կտրեա և զգլուխն։ Եւ ապրար այնպէս. և չոգաւ 'ի Բաղտատ և սերմանեաց անդ զԱստուծոյն. և գնաց 'ի Ինուէ. և ընդունեաց զարհեպիսկոպոսն Արտիրոս, և երկոտասան եպիսկոպոսս ընդ նմա և երիցս ունն ինեսուն, և ասէ ցնոսա. այլ ինչ ոչ խնդրեմ 'ի ձէնջ. հաղորդեցէք դուք զիս. կամ հաղորդեցարուք յինէն։

«Իսկ նոքա ասեն ոչ տամք զսրբութիւն շանց, և ոչ առնումք զսրբութիւն 'ի շանէ. և որոմտեալ ապան զերիցունն. և զեպիսկոպոսունն բերեալ 'ի Ծբին եդ 'ի բանտի 'ի տան Ղրեի մոյ. և հանեալ անտի ետ քարկոծել զօրացն, և զմարմինն կախեաց զփայտից. և երեւեցաւ 'ի վերայ նոցա նշան երկնաւոր փառաց. և հաւատացաւ Ղրե.

բեան 'ի Քրիստոս ըստ կրօնից սպանելոյն, և մկրտեցաւ։

«Իսկ վերադարձն այն գնաց եմուտ յերդ Հայոց և առաքեցին հալածեցին զնա և զզօրսն որ ընդ նմա. և գրեցին սպառնալիս, որ եթէ կրկնեն զգալն հրով մուշին։

«Իսկ պիզծն այն գրեաց առ Թագաւորն և ասաց. ապստամբեցին Հայք 'ի քէն, և զայրացոյց. զնա և գրեաց Թագաւորն առ Հայս զի երթիցեն արասցեն պատասխանի վասն իրացն Թագաւորն Հայոց և Կաթուղիկոսն։ Իւ պատասխանեցին Հայք Պարսից՝ և ասեն. վասն հաւատոց մեք քեզ ինչ ոչ պարտիմք. աւադիկ առաքեցաք զգիր երդմանդ քո. յորում գրեալ է. եթէ Հայք յորժամ դան առ մեզ 'ի գնալն մեր 'ի վերայ Թշնամեաց մերոց, եկեսցեն խաչիւք իւրեանց և քահանայիւք և օրինաւոր կարգօք հարցն իւրեանց։ Իրդ եթէ ոչ ես դու 'ի բանս քո, ապատ եմք և մեք յերդմանէ մերմէ. և սչ գամք առ քեզ վասն այդր բանի. և ոչ դարձցի առ քեզ Խարսամայ եւ. ոչք ընդ նմա, եթէ գան առ մեզ։

«Իւ այսու օրինակաւ (1) սուրն սատանայի

(1) Եբկու օրի. Եւ զայս Եւ այսու պատճառաւ սուրն սատանայի։ Մի օրի. ըբն սատանայի։

և երկրորդ ջրհեղեղն աշխարհի ոչ եմուտ
'ի Հայս. այլ դարձաւ 'ի վերայ Լիտրոց. յե-
թեան տեղիս սարար ժողով հակառակ երից
սուրբ ժողովոյն 'ի Կատիսբոն 'ի Գադրի 'ի
Գրոմիա (1). և գրեաց կանոնս ընդ հեստոթին մի-
տրս, և բռնադատեր դաւանել զայն. եւ
զոչ հաւանեալսն կողոպտեր, հալածէր. եւ
զաւազումն սպանանէր անողորմաբար. որոց
թիւ եկեղեցականացն սպանելոց ընդ եպիս-
կոպոս և ընդ քահանայ և ընդ սարկաւագ
եւթն հազար ուրթ հարիւր։ Իսկ աշխարհ
հականայ՝ թիւ ոչ գոյր. զայպիսիս աղէտս
զոր կրեաց Լիտրեստան գրեաց սուրբն Լա-
ռաւթայ, յորմէ դուք ապրեցարուք շնորհաւ
Քրիստոսի։

"Լու արդ աշխարհդ Պարսից եւ կող-
մանքդ Հիներուէի որ ընդ իմով իշխանու-
թեամբս է աթոռոյս Անտիոքայ. և ես 'ի
բազումս վտանգիս մէջի կալով. ոչ ժամանեմ
խնամել զմնացեալ ուղղափառաց, զորս
յանձն առեալ սրբութեանդ ձերում հո-
գաղ ցաւակցաբար. և առաքել քարոզս և
բժիշկս ուր մանաւանդ յաճախեաց հիւան-
դութիւնն. և ըստ պատուշաճի ձեռնադրեք
նոցա հովիւս և տայք նոցա օգնութիւն եղ-

(1) Գրաւմիա։

քարոյ մերովք աղաչանօք. ողջունեմք զամենայն սիթոռակիցս ձեր մերովք սիթոռակցովքս ի Քրիստոս Յիսուս Աստուած մեր յաւիտեան »։

Այլ մեք անդրէն դարձցուք ի յոտ կարգին մերոյ զոր թողաքն։

Արդ ի յինն հարիւր վաթսուն և հինգ թուին Աստրոց, և Հայոց ինն սուն և վեց՝ գնաց Իւլսեր զօրապլուխն Տաճկաց ի Կիպրոս և յատակեաց քակեաց ծանախիլ (1) ստար զամենայն կղզին. և զմնացեալսն անդ ի Սաւեայ և զայլսն եւս ժողովեալսն ընդ հարկաւ արարեալ, դարձաւ։

Իսկ Սաւի չոգաւ յԱրոդոն կղզի և առ զնա և աւերեաց. և տեսեալ անդ զպատկերըն պղնձի՝ որ մի էր յեւթն հրաշիցն՝ զոր ջերջեալ պարանօք շատ աւուրքք ճգնեալ և հաղիւ կարացեալ. և գտաւ չափ երկայնութեանն հարիւր եւթն ոսն. և վառեալ ի ներքոյ՝ նորա հուր՝ քակեցան շամիուրքն. և գնեաց զնա Հրեայ մի ի Հեմայ. և կապեաց ի նմանէ բեռին երեք հազար. եւ տարաւ ի տուն իւր։ Իսկ առ Սաւի զԱրոդ (2) կղզի, և զԿրէ (3). և դարձաւ։

(1) Մի օրի. տակախիլ. ստար։

(2) Մի օրի. զՄարիոդ։

(3) Երկու օրի. զԿրէ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս սոսի սատիկի եղեալ, և զինի եղեալ հոգմ սատիկի հիւսիսային և փղոց բազում եկեալ ի բերդունս քաղաքաց։ Եւ Ոմանք՝ որ հրամայեաց զի ընդունել զբիսոնենից վիպասանքն։

ԶԱՅՍՈՒ ժամանակաւք եղեալ սոսի գատնապոյն, և կերան մարդիկ զմիմեանս. և յերկիրն Գերմանիկէ պատուիր կրօնաւոր մի անուանէն Լուիշէ անուն՝ բնակեալ յայրի կերպաւ յիսան և մի մենակուն, զոր գողանայր ի ծնողացն. և մինչեւ զնոսա վասն կոչեսեան արդեաց խաբեանց, մինչև յայտնեաց Աստուած. և կրեաց ասասէն, և կրեալոց է յաւիտեան գնաստուդումն։

Եւ զինի սոսոյն եկն հոգմ հիւսիսային ահագին փչմամբ. և փղոց բազում եկեալ ի բերդունս (1) քաղաքաց և բերդից. և խլեաց անտառս բազումս։

Յաւուրսն յայնոսիկ երեւեցաւ աստղ մի ի Կոստանդնուպոլիս Անաքսիմոս անուն, որ խոսեցաւ հերձուածս ի Բրիսոս երկու կամս ասելով և երկու ներգործութիւնս. և

(1) Երկու տող. գրուն.

ոչ ընկալան 'ի նմանէ։ Սակայն նա սերմանեաց և շշջէին զնմանէ։

Իսկ Թէոդորիկէ կոմսն խնդրեաց 'ի պապէն Հռովմայ որում՝ անուն էր Գաթոն՝ զի արասցէ քննութիւն վասն այսոցիկ։

Իսկ ապականիչն Գաթոն արար ժողով և հաստատեաց զհերձուածն Սաբելիոսի ըստ կրնի հարիւր քսան և եւթն ամի ժողովոյն Քաղկեդոնի. քանզի ասացին երկու բնութեանն յաստուկ կամք և գործք արժան է լինել. և մեք ասեմք, եթէ և անձն ևս ոչ ոչ, զի լցցի չափ չարեաց նոցա, և մի կացցեն հեռի 'ի Աստուծոյ։

Ի թուին Աստուծոյ ինն հարիւր վեհետուն և վեց, և Հայոց ինսուն և եւթն, յերեսուն և եւթն ամին Տաճկաց, և յինն ամի իշխանութեանն Ութմանայ, կազմել եւ Սաւի յոյժ բազմութիւն նաւաց 'ի Տրապօլիս, երթալ 'ի Կոստանդնուպօլիս. և էին 'ի վերայ նաւացն երկու զինուորք որպէք քրիստոնէից. ոչ արձակեցին զգերիսն և ոչ թողեցին զնաւսն և երեալ 'ի մի նաւացն ինքեանք գնացին 'ի Հռովմ, զի Յովանէ էին ազգաւ։

Իսկ Սաւի եւս զայրացեալ կազմեաց առաւել քան զառաջինն. և եւս 'ի ձեռս

Խլրուբին զի գնասցէ 'ի Կոստանդնուպոլիս։

Լու լուեալ Թագաւորն Կոստոս, եթէ խորհին Տաճիկքն գնալ առ նա, հաւաքեաց զզօրս ըստ կարի և նաւս բաւականս, և չոգաւ 'ի վերայ նոցա 'ի Փիւնիկէ ընդ ծով և ընդ ցամաք։ Կաղմեցան և Հապարացիքն կրկնակի սպառազինութեամբ։

Իսկ 'ի գիշերին յորում վաղիւն մարտն լինէր, զսրթոյց 'ի քնոյ զայրն երազալոյծ և ասէ. տեսի զիս 'ի Թեսաղոնիկէ 'ի խրախութեան։ Լոտ պատասխանի այրն և ասէ. Երանի թէ ոչ ննջեալ էիր և ոչ տեսեալ. զի Թեսաղոնիկէն յաղթութիւն այլոց Թարգմանի. և սաստեաց նմա Թագաւորն, և լռեաց. և 'ի վաղիւն խմբեցաւ պատերազմն 'ի վերայ ծովուն ահեղ յոյժ, մինչ սրրոտորեցաւ յօդն փոշւով սրպէս 'ի ցամաքի. և պարտեցաւ Կոստոս և փախեաւ, և անկաւ 'ի նմանէ քսան հազար արանց. և դարձոյց զՊոդոմէոս իշխանն առ Սաւի, զի մի գնասցէ 'ի Կոստանդնուպոլիս, և տացէ նոցա հարկս. և լուաւ Սաւի և դարձաւ։

Բայց ստեաց ուխտին Կոստոս և ոչ առաքեաց զխոստացեալն. և դարձան Հապարացիքն 'ի Սուրիս յաւար. և եկն Պոդոմէոս և եղեր հարկս երեք ամի, և զՊրիպոր զոր-

Digitized by Google

դին իւր պատանդ. և Եհան զնոսա յերկրէն։

Յետ այսորիկ սակս կասկածանաց եւ պան Կոստոս զեղբայր իւր զԹէոդոսիէ (1) և եղեւ ատեցեալ 'ի զօրայն. և գնաց 'ի Հռոմ երեսաց նոցա. և նոքա յղեցին և կոչեցին անդրէն և յարեաւ 'ի գնալ. և գտաւ մինչեւ 'ի Կիրակուսայ. և անդէն ա ռաքեաց կոչեաց զորդիսն իւր զերեսին՝ զՍ Կոստանդիոս, զՏիբերիոս, զՀերակլ. և ոչ ետուն զնոսա. այլ կոչեցին զնոսա Կեսարս. և անդէն պահեցին։

Յաւուրս յայսոսիկ սպանին Հագարա ցիք զԱւթման Թագաւորն իւրեանց յԱ Թրապ(2) քաղաքի վասն պղծութեանն իւրոյ. և առ զիշխանութիւնն Ալի փեսայն Ահմէ տի 'ի վերայ Խաբերնի և Սուրց։

Իսկ Ամի իշխանացաւ 'ի վերայ Եգիպ տոսի, և զոր առեալն էր անձամբ. և կրա ուեցան ընդ միմեանս միանգամ և երկիցս, և բազում ամբոխեցան 'ի մէջ նոցա։

Եւ զինի այնորիկ ծառայ մի Ամաւեայ չգ տաւ նենգութեամբ առ Ալի և սպան զնա. և հնազանդեցան ամենեքեան Ամաւեայ և փոխեցին զարքունիս իւրեանց յԱ Թրապեայ 'ի

(1) Մի օրի. Թէոդորիսէ Մի օրի. Թեոդորիկէ։

(2) Եթէ օրի. Ամբրաթ քաղաքի։

Digitized by Google

Պամանակս։ Եւ տիրեաց Սաւի ամս քսան. և աւերեաց մինչեւ 'ի Իւրթանիա զամենայն տունն Յունաց. և դողային 'ի նմանէ ամենայն երկիր։

Իսկ Թագաւորն Կոստոս Նենգեալ 'ի զօրաց ցին սպանաւ 'ի բազանիս Հնդրէասայ ստրատեղատէ 'ի Սիւռմիս։ Եւ Թագաւորեցուցին զՊատրիկն Սեժէժ (1). այր քաջ և կորովի յիր և 'ի բան հայ ազգաւ և բարեպաշտօն։

Իսկ որդի Թագաւորին Կոստանդին զօրաժողով լեալ սպան զնա. և Թագաւորեաց ընդ եղբարս իւր։

Իսկ զօրն Տաճկաց եկին Հնիրիկէ. եւ գերեցին ուԹսուն հազար անձինս. և վերստին դարձան 'ի Կիւլիկիայ, և սպանին 'ի նոցանէ երեսուն հազար արանց յունական զօրքն, որ էր առաջին պարտուԹիւն նոցա։

Եւ այր մի 'ի Խալքաքայ Կալինիկէ անուն խմաստուԹեամբ իւրով գործեաց զնափաԹրն (2). և այրեաց զնաւսն 'ի ծովուն լցեալ զորոք Տաճկաց, որ է սկիզբն գիւտին փայտի (3). և այրն ասորի էր ազգաւ։

(1) Որ է Մեծեժ. Մի օրի. ԱՆԾ յայժ։ Մի օրի. Մէժէժ։
(2) Երկու օրի. ՀՆՔՓառն
(3) Մի օրի. և այն եղեւ սկիզբն գտանելոյ զնիֆաթն. ոչ թէ գիւտանելոյ զնիֆաթն։

Digitized by Google

Յայսմ ամի երեւեցաւ ծիածանդ զգի-
շեր մի բուլանդակ զերկինքդ ծածկելով գնա-
և զսահի հարաւ երկիր 'ի նմանէ ։

Յերեք հարիւր ինն ամին Կոստանդեայ .
ելին սրիկայք և բնակեցան 'ի լեառն Լիբա-
նանու և կոչեցան ապստամբք . և Սորիք ան-
ուանեցին զնոսա Ռուռճանս. (Թերեւս այսու-
պատճառաւ կոչին Սրայիք Ռուռճանս 'ի
Յունկայ . զի ապստամբեցին 'ի Հայոց հա-
ւատակցութենէ և 'ի ծառայութենէ). և չգ-
գան Տաճիկք և սպառեցին զնոսա սպան-
մամբ ։

Եւ 'ի նոյն ամին Յովհաննէս որդին Սե-
մեմայ հալածեաց զԿոստանդին զեւ Թն ամիս
յաղագս քինու հօր իւրոյ. և սպանաւ 'ի նմա-
նէ . և հպարտացեալ Կոստանդին յաղթու-
թեամբն արհամարեաց զեղբարսն իւր . և
զ Եւսն իշխանն ծայրակտուր արար զի բա-
րեկամ էր եղբարցն . և եղեալ նմա որդի , կո-
չեաց զանուն նորա Յուստինոս ։

Իսկ Սաւի իշխանն Տաճկաց մեռաւ . և
առ զիշխանութիւն նորա Իզիոս (1) որդի նո-
րա ամս չորս , և մեռաւ . և շփոթեցաւ զօրն
Տաճկաց զի Մուխթար ապստամբեաց 'ի Կա-
բելէն , որ ասէր զինքն մարգարէ . եւ 'ի

(1) Յայլ պատմիչս Եղիս Դանիէլ ։

յԱԹրապ Աբդլայ, և ի Դամասկոս որդին Իշխեմի. և ապա ծեր մի ասաց. ժողովեցա-ռուք ամենեքեան, և զոր Աստուած ընտրէ նա է իշխան. և ժողովեցան, և գրեցին ե-թեք անուն երեք նետ և ձգեցին. և մանուկ մի արձակեցին ի նոցանէ առնուլ զմինն, և որ պայծէ՝ այն լիցի Թագաւոր. և բերաւ անուն ծերոյն որ խորհեցաւ զայն. և իշխա-նացաւ ամ մի. և զմնի նորա Աբդմելք՝ որ-դին Մրուանայ։

Սեռաւ և Թագաւորն Յունաց Կոստան-դին. և Թագաւորեաց Յուստինոս որդի նորա։

Եւ Աբդմելքն նեղեալ յասպատամբացն արար խաղաղութիւն ընդ Յուստինէ ա-մբա տան, և խոստացաւ տալ նմա յամին հազար դահեկան և ծառայ մի և ձի մի, և Կիպրոս լիցի կիսովն (1) երկուցն. քանզի Հայք օգնէին Յունաց։

Յայնժամ և երկոտասան հազար հեծեալ բնակեալ էր ի Լիբանան ընդդէմ Տաճկաց, զորս անդրէն ածին Յոյնք։

Ի այն ժամանակս էր սուրբն Յակոբ. որ էր ի գաւառէն Անտիոքայ Հնորհապայ-ծառ և ուսումնասէր, որ եղեւ եպիսկոպոս

(1) Մի օրի. կիսուզի։

Ուռհայոյ. սա չոգաւ եմուտ ընդ հրէուն թեամբ պատճառանաք, զի արար հնարս և թարգմանեաց զծածուկս նոցա յաստորի լեզու. սա հանգեաւ յերկիրն Բեսենոյ (1). ի վանքն որ կոչի յանուն նորա սուրբ Յակոբայ։

Ի ժամանակին յայնմիկ գերեսաց Յուստինէ զԱիպրոս, և ժխորեցան ընդ նոսա Տաճիկք։

Եւ առաքեաց Աբդլայն զամիրայն Ղ՚ժերոյ յերկիրն Յունաց 'ի Կեսարիայ. և վարձեցին Յոյնք զՍկլաւան. և եկն 'ի վերայ նոցա, և կոտորեցան Հրապակացն. և մնացեալ Սկլաւքն խնդրեցին ուխտ և խաւնեցան 'ի Տաճիկսն եւ թէն հաղար հեծեալ. և կացուցին զնոսա Տաճիկքն Հնտաք և 'ի Կիւրիս և եւոուն նոցա ապրանք և կանայս։

Ի թուին Աստրոց հազար վեց, և Հայոց հարիւր երեսուն և եւթն, եկին Յոյնք 'ի վերայ Տաճկաց մինչեւ Հնտաք. և հարան 'ի նոցանէ. և մնացեալքն փախեան։ Եւ թիւանկելոցն 'ի սուր յերկուց կողմանցն էր քառասուն բիւր. և էր տեղի պատերազմին Ռուզերիքն. որ մինչեւ ցայսօր երեւին ոսկերք նոցա սարածեալ ընդ դաշտն։

(1) Մի օրի. Քերսոնայ։ Մի օրի. Քանեռ։

Իյերեք հարիւր եւ թանասուն և եւ թն ամին իւրեանց Տաճկունք բարձին զպատկերըս 'ի դահեկանաց, և 'ի դրամէ և 'ի փողոց վասն կարծեաց կռապաշտութեան. և եդին միայն զդիրն։

Իսկ Յուստինոս խստացեալ սրտիւ կայր ընդ մեծամեծս իւր. վասն որոց կալան զնա. և հատին զքիթ նորա և եդին 'ի բանտի. և եդին իւրեանց թագաւոր զ[Ե]եւն։

Յետ եհան զ[Ե]եւն Յփեմբոս զօրագլուխն. և ինքն թագաւորեաց և հնազանդեաց զրվ[Ա]կլաւան. և եկն 'ի վերայ Տաճկացն 'ի Խամիտն. և սպան 'ի նոցանէ հինգ հազար այր, և գերի բազումս առեալ դարձաւ։

Ի սոյն ժամանակս կացոյց Աբդլայ երկու զօրագլուխս զՀաջաջ, և զՄահմէտ այր անաստուած և չարադեւ. որ և զՀայկազունեան իշխանս ազնուականս նենգիւ ժողովեալ 'ի Լաչինաւան. և ածեալ յեկեղեցին այրեաց հրով, վասն ոչ առնլոյն յանձն ըզկրօնս նոցա. որք հանդիսակից և սպասակից եղեն սուրբ Նշանիանցն. որոց մաղթանօք նոցա գթասցի Քրիստոս Աստուած յազգս և յեկեղեցիս։

Օգոստոս ժամանակաւք գալեցին առաջի Աբդլայի այր մի Լուսհայեցի Աթանաս ա-

նուն, որդի Կուժիայ իմաստուն և աստուա-
ծապաշտ, և կոչեաց զնա Աբդլայ, և կա-
ցոյց զնա 'ի վերայ արքայութեան իւրոյ
մատակարարս. և յաջողեցաւ նմա, և եգիպ-
տոնորհս առաջի նոցա. և տային նմա յամին
վաթսուն հազար դահեկան. և ամենայն
զօրն Տաճկաց ըստ թուոյ իւրեանց տային
մէն մի դահեկան. և շատ մխիթարութիւն
և դիւրութիւն եղեւ սա քրիստոնէից։

Սա շինեաց երկու եկեղեցի յանուն սուրբ
Աստուածածնին, և յանուն Թէոդորոսի, բե-
րեալ անդ զնշխարս նորա Հրեխայիտայ, որ
է Ապլասթայն. և 'ի մէջ եկեղեցեացն եր-
կուց շինեաց գետնափոր սրբատուն. և դաս-
տառաւ Քրիստոսի էր ընդ իշխանութեամբ
Տաճկաց. գնեաց 'ի նոցանէ յիսուն հազար
դահեկանի և եդ անդ. և սանդղաք ելանէին
և իջանէին անդ. և յաւուր սոնին իւրոյ
հանէին 'ի տեսիլ ոսնոզայն մինչեւ 'ի ժա-
մանակս Յովհաննէս պատրիարքին՝ որ եդ
զնա 'ի մէջ երկուց վիմաց, և ամփոփեաց և
անյայտեաց զտեղին ոչ ուրեք գիտելով.
և գրեաց թէ արարի վասն երկիւղի անա-
րինաց. և մի ոք ելցէ 'ի խնդիր զի ոչ գտա-
նէ զնա։ Բայց թէ իրաւի է զոր Հրամա-
յեցիքն ուրեն ես ոչ գիտեմ։

Digitized by Google

Իսկ Յուստինոս զկնի տասն ամի արգելման իւրոյ եկ ՚ի բանտէն և գնաց փա-խատեայ առ Թագաւորն Խազրայ Խաքան. և ընկալաւ զնա խնդութեամբ. և եհաս նմա կին զդուստր իւր. և օգնեաց նմա զօրօք և դարձաւ ՚ի Կոստանդնուպօլիս. և փախեաւ Յիրեմիոս. և զ[եւն եսպան. և կոտորեաց զարքունի ազգն, և վերց հազար գերի տա-ճիկ ազգատեաց, և գնացին խաղաղութեամբ. եւ ապար զօրս բազում եւ առաքեաց ընդ ծով, ածել զկին իւր, և խեղդեցան յալիս ծովուն. և լուեալ Խաքան զորսմեցեալս, և առաքեաց զկին նորա, և զՏիբերիոս որ-դին և մեղադրեաց ասելով. անմիտ, ընդ-էր էր բազմութիւն զօրացն ՚ի կորուստ. կարծէիր եթէ արդեալ զկին քո. թէպէտ կորուսեալ զորդին իմ, ես ոչ ստեցիս զբանս իմ։

Ի թուին ՍՍՀԳ հազար տասն և եւթն և Հայոց հարիւր քառասուն և ութ, շինե-ցաւ Ամուրեստիայ ՚ի Սելիմայ ընդարձակս, և կացուցին ՚ի նմա զօրք ընդդէմ Յունաց։

Զկնի Աբդլայի իշխանացաւ Տաճկաց Աբդմելք. և յետ նորա Վլիթ ամն ինն. յո-րոյ աւուրս հարձեաց Յուստինոս զաղ-գրս Հայոց յիշխանութենէ իւրմէ վասն ուղղափառութեան. և խնդրեցին Տաճիկք

Digitized by Google

և բնակեցուցին զնոսա ի Սելևկեայ և ի Սիրիա
ջաղաքս. և եղեն մեծ ամրութիւն ուղղա-
փառաց Աստուծոյ. և շինեցան անդ գիւղք
և վանորեայք, և անապատք նոցա. և կան
մինչև ցայսօր։

Իսկ Սահմէտ աթոռ բազում մարտիրոս
յերկիրն ի հաւատացեալ Տաճկացն. և զգրչ-
խաւոր նոցա ազգի ազգի հարուածովք եռ-
պան. և բնկէց զնա կէշ գազանաց. և ոչ
մերձեցաւ ի նա գազան, և ոչ թռչուն, և
ոչ ապականեցաւ. և զաւուրս երեսուն, և
քուրէր ի նմանէ հոտ կնդրկի. և յայնմանէ
յորդորեցան ի մարտիրոսութիւն և մեռան
հազարք և բիւրք։

Իսկ Սղիմ հոգաւ ի Կապադովկիայ. և
եղին ընդդէմ նորա զօրքն Յունաց, և ան-
կան ի Տաճկաց յանողորմ սուրն. և մեռան
քառասուն հազար հեծեալ թող զգերեալ-
սն. և առաւ Տանայա քաղաք և Տարան-
դաբերդ. և դարձաւ Սղիմ ի Կիւլիկիա.
և ստո զՈՒռմուբերդ. և զՊոսանդա քա-
ղաք և այլ բազում տեղիս։

Ի սոյն ժամանակս զօրացաւ Փիլիկոս,
և եսպան զՅուստիանոս և զորդի նորա ըզ-
Տիբերիոս. և թագաւորեաց։ Իր սա վարժ
գրովք, և ջանայր նշուլել զվերջերորդ ժո-

Digitized by Google

զոմն և բառնալ զաղանդն Մաքսիմոսի, և ոչ եղեն ձեռնտուք նմա խմորեալքն յաղանդէն հպարտութեան։

Իսոյն ժամանակս ոգի պղծութեան շարժեաց զվլեթ. և հրամայեաց բռնադատել զՔրիստոնեայս յուրացութիւն. և զոչ հաւանեալսն սպանանել յեկեղեցւոջ իւրեանց. և նահատակութեամբ պսպծառացան բազմութիւնք յոյժ արանց և կանանց։ Եւ չոգաւ Մսլիմ Ամասիայ և առ զնա և գնաց մինչեւ Անտիոք Պիսիդեայ, և մարտեաւ ընդ նմա և առ զնա. և յերկրորդ ամին Փիլիկտոսի հանին զաչս նորա և աքսորեցին. և Թագաւորեաց Անաստաս։

Եւ զկնի վլեթայ Թագաւորեաց Տաճկաց Սուլման ամս երկու. յորում ժամանակի առ Մսլիմ զերկիրն Դաղստանայ։ Իսկ Անաստաս զկնի երկուց ամաց փախեաւ 'ի Անիկիայ, զի կամէին սպանանել զնա. և Թագաւորեաց Թէոդոսիէ։ Այսու ժամանակաւք գնաց Մսլիմ յերկիրն Թուրքաց. և բազում աւարաւ դարձաւ։

Եւ դարձեալ գնաց 'ի վերայ Ասորոց (1) և առ զԷրբաքմայ և զԱդրիա և զերեսաց. հպարտացաւ 'ի միտս իւր. և խորհեցաւ

(1) Երկու օրի. Ասիոյ։

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՊԱՇԵՆՑՆԻ
Կարգաց թիւ .....
Digitized by Google

գնալ 'ի Կոստանդնուպոլիս. և առ ընդ ինքեան երկու հարիւր հազար հեծեալ. և նաւս երկու (հազար) (1) և ելից հեծելոք. և հաս ոչ եւս երկոտասան հազար Բուլղարս և եբարձ ռոճիկս վեց հազար ուղտուց և վեց հազար իշուց. և եկին ընդ նմա Օնհեռք երեսուն հազար. և զայս ամենայն բազմութիւն առաքեաց առաջի իւր ընդ ծով և ընդ ցամաք. և ինքն երկոտասան հազարաւ գայր զհետ նոցա մեղմով։ Յե եկեալ նստաւ 'ի Վիկիայ, և ընդ որ անցաւ նէին զօրք՝ տային բան խաղաղութեան, և ոչ մեղանչէին ումեք։ Ելաւ զայս զօրագլուխն Յունաց Լեւոն. և չոգաւ առ Սելիմ 'ի ծածուկ. Յե ուխտեաց նմա Սելիմ գնել զնա Թագաւոր, զի ձեռն տացէ նմա, և դարձաւ Լեւոն 'ի քաղաքն։

Յե խնայաւ Թագաւորն, և կալաւ զնա առանց նորա. և փախեաւ Լեւոն և չոգաւ առ Խուլման Թագաւորն Տաճկաց, և առ 'ի նմանէ վեց հազար հեծեալս. և եկն (ի Ջաւ) էջ 'ի վերայ Կամուրին քաղաքի. և խաչսեցաւ գաղտ յականջս քաղաքին եթէ նեղ գութեամբ շրջիմ ընդ սոսա։ Յե լուեալ

(1) Մի օրի։ Եւ (5000) սահելով գրոյն էրկու։
Ա յն օրինակի լուեն գիտալը։

թագաւորին առաքեաց առ նա զընտանիս նորա և ասէ ցնա. մի մեղանչեր քաղաքիդ 'ի գինս ընտանեաց քոց. և եթող զքաղաքն, և գնաց 'ի վերայ Կոստանդնուպոլսի | Եւոն։

Եւ եղեն զօրքն Յունաց ընդդէմ | Եւոնի, և յղեցին պատգամս և ասեն. թագաւորեա մեզ մերովք յօժարութեամբ և երդուան նմա. և առաքեն առ նա զորդին Թէոդոսի. և հաւատաց նոցա. և ասէ. ընդ զօրն Տաճկաց կացէք մնացէք աստ, և ես մտից 'ի քաղաքն. և արարից զկամս ձեր։ Եւ գնաց | Եւոն 'ի Կոստանդնուպոլիս քաջագիւք թագաւորութեան. և լուաւ Թէոդոսիէ և կտրեաց զհերս իւր. և եղեւ եկեղեցական։ Եւ | Եւոն թագաւորեաց. և ամրացոյց զքաղաքն։

Եւ իմացաւ Սալիմ թէ խաբեաց զնա | Եւոն, բախեցաւ 'ի վերայ ոսկի դրանն չորս հազարօք. և օգնեաց Տէր, և միայն զերծաւ Սալիմ և կոտորեցան զօրքն որ ընդ նմա չորս հազարքն։ Եւ 'ի միւս կողմանէն անկան երեսուն հազարք. և եհաս 'ի վերայ նոցա ձմեռն. և անկաւ սով 'ի բանակն նոցա։

Եւ մինչ յայսոսիկ էին մեռաւ Սուլիման թագաւորն նոցա, և առ զթագաւորութիւն

նըն Իմար. և լուեալ զայս դարձաւ Մելիք ամենեալ յոյժ սակաւուք. և վառեալ քինու զբաղումս կոտորեցին 'ի քրիստոնէից. զի յանցեան (1) զօրք նոցա 'ի պատճառս աղօթից եկեղեցւոյ։

Յայսմ Ժամանակի ասորի մի Սեւերոս անուն սկսաւ մոգութեամբ խաբել զաղգն Հրէից թէ նա իցէ Քրիստոսն. և պարտ է ժողովել բազում գանձս, և երթալ թագաւորել Յերուսաղէմ. և հաւատացին բազումք. և կուտեաց բազում ինչս։

Լուաւ Իմար և կոչեաց առ ինքն. և կատակաբանութեամբ կակղացոյց զբարս նորա, որ էառ զինչքն (2) և երթող զայրն 'ի կամս իւր։

Իսկ այսու պատճառաւ եդ օրէնս Իմար ոչ ընդունել զՔրիստոնէից վկայութիւն. և ոչ հեծանել երիվար թամբօք. և թէ ըստանանէ Տաճիկ զքրիստոնեայ, ոչ մեռցի ինքն. այլ տացէ գինս արեանն հինգ հազար դրամս։ Այլ եկեղեցականքն ասէ մի տացեն հարկս յարքունիս յամենայն ստացուածոց իւրեանց. և Տաճիկքն մի արբցեն ասէ գինի։

Լու մեռեալ ասրա՝ առ զթագաւորու-

(1) Երեք օրի. անցան։ (2) Երկու օրի. զերդն։

թիւնն Իզիտ ամն չորս։ Այս առաքեաց ընդ ամենայն երկիր և ջնջեցին զնկարս պատկերաց յեկեղեցւոյ 'ի գրեանց 'ի հանդերձից յարձանաց և յամենայն իրաց. և ետ նմա իրաւունս Լեւոն արքայն Յունաց. և Թափուր արարեալ 'ի պատկերաց զաշխարհն Յունաց. և տրտնջէին ընդ գործ նորս բազումք, և ոչ հաճէին։

Դարձեալ նեղեաց Լեւոն զՀրեայսն գաւառնալ 'ի քրիստոնէութիւն կամ մեռանիլս և յոլովք մկրտեցան, և ոմանք սպանան. և կէսք փախեան։

Մեռաւ Իզիտ և Թագաւորեաց Հեշամ ամս տասն և ինն. այր չար և ագահ, որ և հաբկապահանջութեամբ հատոյց զերկիրն 'ի ցանկութիւն մահու (1)։

Այս ետհան ջուր Յոփրատայ և 'ի վեր քան զԱրանիկէ ոռոգանել զդաշտս, սա էառ զանմատոյց բերդն Շէլէ յերկիրն Մուլուկեցւոց և զՄիսիկէսարն 'ի վերայ Դայլն գետոյ։

Յայսմ ժամանակի էին Պատնաս պատրիարքն Անտիոքու, և Յովհաննէս իմաստասէրն Հայրապետն Հայոց. և Միւնիք և Վասպուրական և աղուանք և Սասանունք և Յակոբիկ Սորիք էին 'ի մի դաւանութեան

(1) Ոմանք՝ 'ի գրեանս մա. հա։

առաքելական հիմամբ. և վասն այսորիկ երբ-
թային Լուսաւորիչ առ Սասանոյ առ Հայք և
ասէին մեք սուրբ Գրիգորի դաւանութեամբ
բըն եմք, և առնուին 'ի նոցանէ ձեռնադ-
րութիւն, և ոչ գոյր հակառակութիւն. և
վասն այսորիկ կոչեցան Գրիգորիկք։

Յայնժամ երեց մի Խարշապուհ անուն.
և սարկաւագ մի Դաբրիել անուն 'ի Սու-
փարկնայ եղեն բանտարկուք 'ի մէջ Հայոց,
և Լուսորոց. զ Հայոց ասէին թէ Յուլիանոսի
տրք են և զ Լուսորոց թէ ապականացու ասէ-
ին զմարմինն Քրիստոսի. այլ և պղտորումն
Հզբի մնացեալ էր 'ի Հայս 'ի տեղիս տեղիս
առ բազումս։

Իսկ Յովհաննէս այր սուրբ և սքանչելա-
գործ և լուսաւոր բանիւ գրեաց առ Լթա-
նաս առաքեալ առ նա եպիսկոպոս իւրեանց
դաւանութեան գրով. և ինքն եկն 'ի քա-
ղաքն Անազկերտ Հայաստանաց. և վեց ե-
պիսկոպոսք գնացին յԼուսորոց, եւ յոլովա-
թիւնք երիցանց. և արարեալ քննութիւն,
ոմանք յԼուսորոցն ասեն զինչ է որ գրեալ է
'ի գործս Խառաքելոցն եթէ «Լուսաւոր յայ-
ոոյց զՅիսուս 'ի մեռելոց և այսուհետեւ-
ոչ եւս դառնալոց է յապականութիւն». և
խնդրեցին զորինակն Հայոց և ոչ գտին զայ-

Digitized by Google

տուհեռեան. բերին և զԱՍորոյն և ոչ անդ գտին. և նզովեցին զՅուլիանիան և զապա կանացու խոստովանողն զԲրիատոս, և ըզԽարշապուհ և զԻաբրիէլ. և զՅզիտան. և եղեն Հայք միադաւանք 'ի վերայ ճշմարտութեանն. և Յակովբիկ Ասորիք՝ դաշնակիցք նոցա։

Բայց սակս ոսնից և արարողութեանց գտաւ զանազանութիւնս ինչ. որոց ոչ աբարին կարի փոյթ, և արձակեցան սիրով։ Եւ եղեւ այս 'ի հազար երեսուն և հինգ թուին Ասորոց և Հայոց հարիւր վաթսուն և վեց. այլք զՀայոցն հարիւր երեսուն և հինգ ասեն։

Յայնմ ժամանակի եկին թուրք յերկիրն Ասիոյ (1) և առին քաղաքս բազումս. և գնացին Մսլիմ ընդ առաջ նոցա. և անկան յերկուց կողմանցն հաղարք և բիւրք։ Եւ ապա արարին սէր ընդ միմեանս. և թողին Տաճիկք զաւառեալ քաղաքսն 'ի նոսա և դարձան։ Եւ այս եղեւ սկիզբն երանելոյն թուրքացոյ։

Ի սոյն ժամանակս եղեւ անձրեւ սաստիկ, որ կարծեցին թէ բացեալ են ամենայն երկնից. և վերատին անկաւ պարիսպն Աւուհայոյ։ Եւ չոգաւ Հեշմ առ Հռոմմովք. և

(1) Երեք օրի. Աբուլֆ։

Digitized by Google

առ զՊենճերայ քարանք, և զԼիխիս. և առեալ գերի բազում դարձան։ Իսկ հրամայեաց Հեշմ ապանանել զգերեալսն առհասարակ. և եղեւ յարարեալս կոտորելոցն քննութիւն ի Յովհայ թէ իցէ մարտիրոսաց թէ ոչ. և ոչ յայտնեցաւ իրքն, այլ առարկոյս մնաց։

Իսկ թագաւորն Լեւոն ի քան և չորս ամի արքայութեան իւրոյ, էառ զդուստրն Խազարայ թագաւորին որդւոյ Բրտում Կոստանդիանոսի ի կնութիւն մկրտելով զնա. և ետ զթագն յորդին. և մեռաւ ի նոյն ամի։ Իսկ Աբասեալք փեսայ թագաւորին հալածեաց զԱստանդիանոս, և ինքն թագաւորեաց։

Եւ առաւ Հեշմ թագաւորն Տաճկաց. և առ զթագն (1) Ալիթ, որ արար հայր սանն Հեշմայ. և եդ զորդւոյն զԱբաս ամն, և արկ զնա ի ծոմն ասկերէն ի դանձս Տաճկաց. որ բաշխեաց զոյն առատապէս և թագաւորեաց։

Իսկ յորմէ՛ն ոչ ընդունէին զի հարճորդի էր. և Ալիթ եղեւ ստեցեալ վասն զազրագործութեան. և խոստեալ (2) զերկրորին թա-

(1) Մի օրի. զթագաւոր. (2) Հոգի օրի. խոցեալ բութիւնն։

գաւորեցուցին զԻղիտ եղբայրն Վ՝ լիթայ 'ի Դամասկոս. որ և կտրեաց զգլուխ եղբօրն. և եդեալ 'ի սայլի և ընդ նմա տիկն գինուոյ, շրջեցուցանէին ընդ քաղաքն։

Եւ յետ այսորիկ մատեան ընդ միմեանս ամիրայքն, և խնդրելով իւրեանց Թագաւորութիւնս։ Արվան՝ զՀայաս էառ, և զՊարոս Վասիդն. և զխորասան՝ Սարիթն և զՎիրիկէ Աբդհէլ և Իղիտ մեռաւ յետ եւթն ամաց. և առ զտեղի նորա Իբրհիմ. այր բարեբարոյ և ողորմասիրտ. և սակաւ օրեաց եղեալ մեռաւ։

Եւ Արվան եկեալ 'ի Հայոց. եկն և դիպեցաւ եղբօրն Սուլիմանայ 'ի վերայ Երիրասայ. և կռուեցան անդ. և անկաւ 'ի մէջ նոցա երկուտասան հազար այր։ Եկն Արվան 'ի Դամասկոս, և Թագաւորեաց անդ. և առ զգանձն Թագաւորութեանն և բարձեալ ըզնա երեք հազար ուղտու եբեր 'ի Խառան. և չոգաւ 'ի Հեմս, և յամիսս չորս էառ զնա. և քակեաց զպարիսպ նորա։ Այսպէս էառ զԱղեպք, և քակեաց զնա. առ զՆինուէ և գնաց 'ի Պարթեւս, որ կոչի Բահլ և տիրեաց նմա։

Իսկ Ալի որդին գնաց 'ի Խորասան. և 'ի պատերազմէն Տաճկաց ընդ միմեանս խաղաղացան Յոյնք. և խորագիտութեամբ իւ-

Digitized by Google

բով օգնականս գտեալ Կոստանդիանոս եկն
'ի Կոստանդնուպոլիս. և կուրացոյց զԼիցինիոս
եաղ. և Թագաւորեաց դարձեալ, և եղեւ
նմա որդի. և կոչեաց զանուն նորա Լեւոն

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս որ նշանք մեծամեծք և ցոլմունք, և փոշի գարդ
և 'ի ծովն խառովեալ սիւնք հրեղէնք երեւեալ. և ենն
կարկուտ, կշիռն երկու լիտր, և Ջամբրի հարկապանջու-
թեան անյիշելի.

ՅՈՐՈՒՄ աւուրս եղեն նշանք մեծամեծք
'ի սկիզբն մարտի ամսեան մինչեւ յելն ապ-
րիլի. օդդ փոշի տեղեաց, և տիւն գիշեր
կարծէր. և ապա երեւեցան երեք սիւնք ամ-
պեղէնք խառնեալ ընդ հրոյ զերիս աւուրս.
և ելանէին և իջանէին 'ի վայր։ Յեւ զկնի սորա
երեւեցաւ աստղ մի անծանօթ 'ի չափ լուսնի
և ելանէր յարեւելից ընդ արեգականն. և
երթայր յարեւմուտս երեք օր տեսանելով
մարդկան։ Յեւ զամենայն գիշերս լինէին ցոլ-
մունք, և թռչէին հանդէպ յարդ.ոգին։
Յեւ զկնի նորա եղեւ շարժ սաստիկ և պա-
տառեալ երկիր ելին աղբիւրք 'ի գոյն ա-
ռեան։ Յեւ յետ նորա խառովեցաւ ծովն մեծ։

Digitized by Google

և եռայր յանդնդոց, և բարձրանայր ալիք նորա իբրեւ զերկինս. և բազումք 'ի կենդանեաց մեռան մարդ և անասուն 'ի ձայնէ սրոտման. որ ծովեզերեայք էին կործանեցան տունք և ապարանք. և բերդ մի որդւոցն Ամնայ որ կայր 'ի մէջ ծովուն խլեցաւ յատակայ. և բուրգն մեծ զոր շինեաց Սոզոմոն 'ի վերայ ջերմկին որ գտաւ յաւուրս նորա 'ի ծովուն՝ վրայ և ընկղմեցաւ։

Եւ յետ նորա եղեւ սով սաստիկ. և ապա մահաշարաժամ փողացաւութեամբ, որ մեռանէր 'ի Բասրա աւուրն քսան հազար անձինս. և յերկիրն Սադիամու կատաղեցան կապիկք և սպասկանեցին զբաղմութիւն մարդկան յոյժ։

Այս ամենայն տեսեալ Թագաւորին ՖառՀկաց, զահի հարաւ և զղջացաւ սիրտ նորա. և եհան քարոզ ընդ ամենայն երկիր վասն ապաշխարութեան, զոր և արարին իսկ պահս և աղօթս հսկմամբ դիշերաց, և ողորմութիւնս և արտասուս. քանզի հաւատացին թէ կատարած ամենայն երկրի հասեալ է յաղագս նորանշան և ազգի ազգի պատուհասիցն մանաւանդ վասն շարժմանն անծանոթի. զի գիւղ մի յոտն լեռինն Թարբովրայ նոյն տեղեաւն 'ի բաց վազեաց միլս երկու.

Digitized by Google

և շինուածքն ոչ խախտեցան. և ոչ պակաս-
սեաց հաւ մի։ Իսկ Ներսէհ քաղաք ընկղմե-
ցաւ 'ի տեղւոջն. և երրորդ (1) մասն Կոս-
տանդնուպօլսի անկաւ. և Նիկիայ բու

մեծայն ստացուածս նորա զժողովեալն ապա-
հովութեամբ. և թագաւորեաց միայն Ա-
դելայն։

Յե մինչ նստէին ի տեղի մի առ ընթեր
գերեզմանաց, եղեւ թնդմունք ինչ. և բա-
ցան գերեզմանք ութ. և ահա ելանէին արք
խբրեւ ծերք և ներկեալ զնորուստ. և մինչև
ցմէջն ի դուրս եկեալ զտեղն առին զերիս
աւուրս. և հարցանէին զնոսա և ոչ խօսե-
ցան. և ձանձրացեալ թողին զնոսա. և ոչ
ոք իմացաւ թէ զի՞նչ նշանակէին. և ծածկեցին հողով։

Իսկ թագաւորն Յունաց Կոստանդիանոս
վարժ էր գրովք և իմաստուն մտօք. վասնորոյ
ծածկապէս ունէր զուղղափառութիւն. և
ղի մեռաւ կին նորա, ստիպէին զնա առնուլ
կին. և ասէ ցնոսա ոչ է պարտ երկրորդ կըն-
նաւ թագաւորութիւն առնել. ապա զոր-
դիսդ իմ՝ դիք թագաւոր. և արարին զոր ա-
սէքդ. և թագ եդին Լեւոնի. և հայրն խը-
նամէր զաշխարհն։ Յե առեալ զօրս չոգաւ
ի Մելտենի. և եհան անտի զՅայս և զՅո-
րիս, և տարաւ յիշխանութիւնն իւր ասե-
լով. քրիստոնեայք են առ մեզ կացցեն իբ-
րեւ զեղբայրս մեր. և ասեն Յոյնքն ատեն
զմեզ դոքա և անիծանեն. և ոչ են եղբարք.

և խնդրեաց Թագաւորն դաւանութիւնս. և
ետուն գրով 'ի վերայ միոյ բնութեանն և
կամաց գործոց նոյնութեան Յանին։

Յետ տեսեալ Թագաւորին յոյժ գովեաց,
և ետ հրաման ժողովոյ. և յորժամ եղեւ
ժողովն զոր եւթներորդն կոչեն, և սրբ-
ոին քննութիւն, և ոչ կարէին աղարտել
զուղղափառացն խոստովանութիւնն. և ա-
սէ Թագաւորն. երկու իրք կամ են ինձ. ե-
թէ բառնայք զժողովն Քաղկեդոնի և ըզ-
պատկերապաշտութիւնդ. և անկան յոտս
Թագաւորին և ասեն. չէ հնար այդմ լինել.
բայց եթէ սրոյ Ճապակ տայցես զմեզ. և ա-
սէ Թագաւորն. երդնում յԱստուած, եթէ
ոչ բառնայք գոնէ զԱթանասիոսն գնեստո-
րականին, ես ոչ եղէց ընդ ձեզ։

Յետ լուան նմա և նզովեցին զԱթանասիոսն.
որ երկու կամս և գործս ասէր, Քրիստոսի։
Յետ վասն այնորիկ բազումք 'ի Յունաց ոչ
մեծարեն զեւթներորդ ժողովն։ Յետ ասէ
Թագաւորն. ընդ ուղղափառսն գնայէք
յաշխարհն ձեր, ուստի հանի զձեզ. զի մի
զկնի մահուան իմոյ չարչարեսցեն զձեզ. և
ետ նոցա պաշարս և պաթգեւս, և գնացին
խաղաղութեամբ։

Ի նոյն ամի եկն մարախ և կերաւ զդա-

Digitized by Google

ւառս բազումն. և 'ի դալ միւսոյ ամին եկն կարկուտ անչուր և անտես. և փոյց բաղումք շինուածս, և ապան յոյժ բազմութիւն կենդանեաց վայրենեաց և ընտանեաց. և էր կշիռն լիտրս երկու։

Ի նոյն ամի մեռաւ Աբդլայ. և թագաւորեաց Աբուջաբր. և շինեաց զԱնլտենի, և զԱրմոյ քաղաք. զոր ոմանք 'ի Յունաց Կալանիկոն կոչեն, և Տաճիկք Աղրոում. որ կոչի Մոշանկոյ կամ Աղեւելք։ Շինեաց և զԱնի որ է Կամախ. քանզի աւերեալ էր զոսա Կոստանդիանոս թագաւորն Յունաց։ Նա զկնի շինելոյն զքաղաքս զայսոսիկ առ զՎրիկէ. և չուգաւ ստ զԱզրբայջան աշխարհն Պարսից, և զշքեղակայսն ամենայն, և դարձաւ և առ զՈՒ քաղաք ամուր։

Ի թուին Ասորոց հազար եւթանասուն և երեք. և Հայոց հարիւր ինանուն և չորս, շինեաց Ջամբրի[1] 'ի վերայ Տիգրիս գետոյ 'ի վերը քան զԱտիզան[2] քաղաք և կոչեաց զնա Բաղդատ որ թարգմանի միջոց. այսինքն Պարսից և Ասորոց։ Յորում ամի եղ Բուրդն հաւաքածոյ օր է Ասն. և գերեաց 'ի Գազանայ[3] յիսուն հազար անձինս։

(1) Երեք օրի. Զաբր։
(2) Եօթն օրի. Կաթիզան։
(3) Մի օրի. 'ի Գազանայ։

Ի սոյն ժամանակս համբաւեցաւ կին մի թէ ի ծնանելն կաթն ոչ եկեր ի մօրէն. և զարգացաւ հասակաւ ի չափ երեսուն ամաց և չկերաւ ինչ. և ածաւ առաջի Ղ աբրի. և գտաւ ոտկոս համբաւն էր. և ասաց Ղ աբր ժողով իմաստնոց, գիտնոց զի իմաց ցին վասն նորա. և ասացին թէ երբէք չէ լեալ. և մեք ոչինչ կարեմք իմանալ. սակայն գործ նշանի Տեառն Աստուծոյ է։ Յորմէ նը շանէ խաբեալ զօրքն Պարսից եդին իւրեանց թագաւոր և սպասամբ։ ցին։

Եւ գնաց ի վերայ նոցա զօրն Տաճկաց, և հարան ի նոցանէ. և դարձեալ գնաց Ղ ամբր ի վերայ նոցա. և կոտորեաց քառասուն հազար անձինս. և սպան զԹագաւոր նոցա։ Եւ դարձաւ ի Միջագետս. և կա ցոյց գործակալս երկու հարկապահանջս։ Ի բրեայ մի Մուսի անուն. և Տաճիկ մի Սուլեման անուն. որ ի դրունս մահու հասուցին զաշխարհս անողորմ տանջանօք՝ վասն Իմամ սին անիրաւութեան։ Եւ հաւաաւ ոսկի և արծաթ յաշխարհէ. և փոխէին զգերեզ մանս կապաշեալս և գառանէին ինչս և տա յին ի հարկն։

Սովորեցին և Յոյնք զնոյն առնել. և բա ցին զգերեզման Իլիամիդայ շինողն հան

Digitized by Google

նուն քաղաքին, և գտին յոլովութիւն ոսկւոց լուսատու ակունց. և ազդեցին Թագաւորին Կոստանդեայ. և չոգաւ ետես զայն ամենայն. և ոչ կամեցաւ առնուլ ինչ այլ կոփածու վիմաք փակեաց զնա. և ասէ. զինչ գարշագոյն քան զայն իցէ, յորժամ կենդանին կողոպտիցէ զմեռեալս։ Լու սատեաց և սպառնացաւ, եթէ այլ ոք զայն մի իշխեսցէ առնել։

Իսկ 'ի չարագոյն ագահութենէն Ղամբրի վաճառէին ղեշ և զեզն ընդ դրամի միոյ. և զողայս ընդ հինգ դրամի. զի տացեն հարկս պահանջողացն։ Եւ զկնի քսան ամի ստակեցու. և հանդեաւ երկիր 'ի չարեացն Ղամբրի. և Թագաւորեաց Ենահադէ որդի Նորա։

Լու 'ի նմին ամի մեռաւ Թագաւորն Կոստանդիանոս Թագաւորեալ ամս երեսուն և չորս. և հաստատեցաւ Եւոն որդի Նորա որ ընդ նմա էր Թագաւորեալ։

Իսկ Ենահադի ցրուեաց զամենայն ժողովեալ ստացուածս հօր իւրոյ. և հաւատաց ատեղագիտաց, և ուսաւ զարուեստն. և վարէր նոքաք։

Լու լուեալ Եւոնի առաքեաց նմա ըդդիրան յԵնիսայ և յԱմրիսայ հակառակացն

Digitized by Google

Իսրայելի. և խնդաց յոյժ. և կախարդութեան եւ զանձն։

Եւ եկն Մահադի 'ի Հալապ. և ելին ընդառաջ նորա երկոտասան հազար քրիստոնեայք 'ի պատիւ նորա։ Իսկ նորա նախանձեալ խոցեալ ընդ բազմութիւն նոցա. ասաց մի յերկուց առաջի կայ ձեր. կամ մեռանիլ կամ ուրանալ զԲրիստոս. և հինգ հազար այր 'ի նոցանէ տաճկացան. և եւթն հազարքն վկայեցին Բրիստոսի Աստուածութեան և մեռան. և կանայք և տղայք ապրացուցին Թողին զնոսա և գնացին։

Եւ Մահադի գնաց յերկիրն Աբաբիոյ. և առաքեաց զՀարոն զորդին իւր Յիսուս յաւար։

Որ և գերեաց անտի եւթն հազար (1) այր բայց պակասեաց 'ի զօրաց նորա չորս հազար այր։

Եւ Եւեան առաքեաց զօրս 'ի Միջագետս. և ետ ածել անտի զքրիստոնեայսն ըստ Հայս և զՏրիս ուղղափառս, և բնակեցան ընդ նմա 'ի Թիւրակ։ Եւ գնաց նա 'ի ճանապարհս հօրն իւրոյ զի ոչ երկրպագեաց պատկերաց. և ոչ հաղորդեցաւ 'ի Բաղկեդոնացուցն. վասն որոյ ոմանք 'ի պատմագրը-

(1) Մի օրի. հինգ հազար։

թացն Յունաց տրտնջելով, Յակովբիկ կոչեն
ինա։ Որ և Թագաւորեալ ամս տասն մեռաւ։

Եւ Թագաւորեաց Կոստանդին որդի Նո-
ռա երկոտասանամեայ. և Իրինէ մայր Նորա
ինդ նմա։

Եւ լուեալ Ահարոնի եկն յերկիրն Յու-
նաց և դարձաւ ամօթով։

Եւ 'ի սոյն ամի շինեաց Ալի Անհադեայ
հրամանաւ զՀադ քաղաք յանուն Նորա
յերկիրն Արաշու. և ոչ յաջողեցաւ նմա.
քանզի մեռաւ Անհադի. և Թագաւորեաց
Մուսի որդի Նորա ամս երկու։

Եւ յետ Նորա առ զԹագաւորութիւնն
Ահարոն եղբայր (1) Նորա, որ կոչեցաւն Ոա-
զիտ. որ և հրամանաւ սորա շինեաց Ամբդել
մեկք զՀաշիդ։

Իսկ Հռովմական զօրացն եկեալ աւերե-
ցին զՀադ։ Եւ Ահարոն սկսաւ շինել զնա
կրկին. և կազմեաց սայլս երկու հազար։ Եւ
քակեաց զեկեղեցին, որ կայ յարեւմտից
Շնձէ գետոյն. որ է մերձ Սամուսատայ. և
ետուն զքարինս Նորա։ Այնպէս քակե-
ցին զառաքելաշէն եկեղեցին որ 'ի Բեսոն
եւթն և տասն խորանի (2). և ոչքաք շինեաց
զպատիսպն Հաթայ։

(1) Մի օրի. որդի Նորա։ (2) Երկու օրի. Բա. խորանի։

Ի սոյն ժամանակս գտաւ Յովհաննէս տապան մի Հրէի որ ունէր գիր հազար ամաց հետէ. և այս է գրեալն Ի նմա. թէ «Ի՛ս տուաց մարմնով ծնցի Ի կուսէ. և խաչիւ ծագէ լոյս փառաց նորա Ի տիեզերս. և ողորմութիւն նորա տեսցէ (1) զիս»։

Ի նոյն աւուրս լուաւ Կոստանդին թագաւոր. թէ Փիլիկէ պատրիկն Սիկիլոյ, շնաց ընդ մօր նորա, և կամեցաւ ըմբռնել զնա։ Եւ նորա իմացեալ փախեաւ առ Ահարոն. և առեալ Ի նմանէ քառասուն հազար հեծեալս, գնաց դարձուցանել զՍիկիլիա Ի Տաճիկսն. և կալաւ զնա ձիւն սաստիկ. և կոտորեցան սպրուձի բազումք. և առ կաւ մնացորդքն եկին Ի Կոստանդնուպօլիս. և նոքա ապատին նոցա ողորմութիւն, և ետուն զկարիս նոցա և արձակեցին։

Եւ Կոստանդին արգել զդիշատակ մօր իւրոյ յեկեղեցիս։ Եւ զլն մեռաւ կին նորա, էառ կին երկրորդ, և յարհամարհեաց զկանոն առաքելական. վասն որոյ ատեցեալ եղեւ Ի բազմաց։ Եւ իմացեալ մօրն զտրտունջ զօրացն արար խորհրդակից. և օգնականս. և կալեալ զորդին եհան զաչս նորա։ Եւ թագաւորեաց և արար երկրորդ իւր զնեղքինին Փիլիպէ։

(1) Մի օրի. տիրեսցէ։

Digitized by Google

Ի ժամանակս յայս Թոռուն Ա. Թանասայ Աւագ Հայեցւոյ պտին զգանձն հաւուն իւրեանց. և օձս և կարիճս ասկեղէնս փոքրամէջս լցեալ քիմիայիւ որ ցանէին ի վերայ հալեալ պղնձոյ. և ապրէ մի որ սրսկէին ի վերայ սեաւ արճճոյ, և դառնային ի բնութիւն ոսկւոյ։ Իւր գրէր անդի բաժինս եկեղեցւոյ և աղքատաց։ Իւր եառուն զայն, և ինքեանք մեծացան լցան. և ստացան ձիս և ջորիս. այլ և բազէս և շունս. և ելանէին և որսային և զբօսնուին։

Իւր լուաւ Թադաւորն Տաճկաց, կոչեաց զնոսա և չարչարեաց և առ զամենայն ստացուածն. բայց զքիմիայն ոչ ճանաչելով զառաջինն Թափէին զնոսա յերկիր իբրեւ զհող կարմիր. որ և ապա խմացեալ զղջացան և ապաշաւէին։ Բայց զորդիսն Ա. Թանասի եդին ի կապանս և կուսան մի արգելին ի վիրնստան. և եդին պահապանս. և նա երկուցեալ ի խայտառականաց ընկէց զինքն բարձուն ի խոնարհ և մեռաւ։

Իւր խմացեալ Թագաւորն ողորմեցաւ, և ետուն զեղբարն նորա ի բանտէն։

Իսկ զորդացն Յունաց գիտայեալ, եթէ նախատանն զնոսա Տաճիկք վասն Երինեայ. զի կին էր Թագաւորն նորա. եդին իւրեանց

թագաւոր զոմն Ամկիփոռ անուն. և նա ապ-
ստաքեաց զՇրինէ յԱթէնս։

Յորում ամի շինեցին Տաճիկք զԱստա-
ռա քաղաքն (1) Հայոց։

Եւ զի այր քաջ էր Ամկիփոռ և խնամուն
չոգաւ յերկիրն Տաճկաց. և դարձաւ բա-
զում աւարով։ Եւ ասեն վասն նորա ոմանք
թէ 'ի տաճիկ ազգէ էր։

Եւ պատմեցաւ Ահարոնի թէ Ամկիփոռ
որդի զօրութեան է, և պահաղ և աղօթող,
և սիրեաց զնա. և չոգաւ առ նա, և ասա-
ցին սէր և երդուան միմեանց. և կերան
հաց 'ի միասին։

Եւ Ահարոնն եռ զամենայն պատրաս-
տութիւն սպասուցն և զվրանս իջավանացն
Ամկիփոռայ, և արձակեցան 'ի միմեանց։

Եւ առ Ահարոն կին յԵրակլիոյ, և շի-
նեաց յանուն նորա քաղաք 'ի վերբ քան զԿա-
լինիկոս. և կոչեաց զնա Երակլիա. և Ամկի-
փոռ շինեաց զԱնկիւրիայ։

Այսու ժամանակաւ սուրբ եպիսկոպոսն
Անանիայ, որ էր 'ի լեռնէն Հոզարաւորաց.
այսինքն 'ի լեռնէն Ամնուէի շինեաց վանք
մի յանուն սուրբ Անանիանցն 'ի վերայ ա-
ւերակ դղեկի միոյ. զոր գնեաց 'ի Տաճկաց

(1) Ամենայն օրինակք բայց 'ի մէջն ոչինչ զբերիին։

և շինեաց 'ի մէջ նորա տուն սրբութեան խորանագոյնս և անչափս, և եբեր 'ի Տարա յոյ զնշխարս Յեսանիանցն, և զսուրբ առաքելոցն զԱրդողիմէոսի 'ի Հայոց և զՓիլիպպոսի 'ի Հնդեաց, և երթեալ 'ի Հռոմ աղօթեաց անդ արտաստաւօք առ Տէր և ուուսանեմն 'ի Նշխարացն Պետրոսի և Պօղոսի, և եբեր անդ։ Եւ չոգաւ 'ի Խաբերոնն, և առանետի զմարմին Յանիէլի մարգարէին. և զՅեզեկիէլի մարգարէին, և զՅեմայ զորդւոյն Նոյի, և այլ բազում նշխարս. և բերեալ եդ 'ի սրբատանն զոր շինեաց, և ծածկեաց։ Եւ շինեաց 'ի վերայ նորա եկեղեցի փառաւոր, և է մինչեւ ցայսօր. և կատարին անտի ինդիրք աղօթից։

Իսկ Յհարոն թագաւորն Տաճկաց ապար ինդիր գանձուց իւրոյ. և գտաւ աւելի քան զՁ ամբարսն հազար բիւր. և բերկրեցաւ և կրկնեաց երեք ծուռնր Յաստուծոյ, և կոչեաց զերիս որդիսն իւր. զՄահմետ, զՄահմուտն (1) և զԱստուամայ, և գրեաց նոցա գիր, զի կարգաւորեսցեն զթագաւորութիւն ըստ կամի մահմուտն նորա ըստ աւագութեան և կրտերութեան։ Եւ առեալ զՄահմուտն և

(1) Եբրէրէ տրի զՄահմուդն։

Digitized by Google

սարաւ 'ի Խորասան, և ինքն մեռաւ սնեղ։ Թագաւորեալ ամս քսան երեք։

Իսկ Թագաւորն Յունաց Նիկիփոռ չգաւ 'ի վերայ Բուլղարաց. և եհաս մինչև ցաթոռ Թագաւորութեան նոցա զօրութեամբ մեծաւ. և կոտորէր զնոսա անողորմ այնպէս, մինչև ժողովեալ զմաստալ մանկունսն կասէր զնոսա կամնասայլիւք. զոր տեսեալ փրանկի միոջ զվայրենի և զգազանացեալ բարս նորա; եհար զնա յանկարծ և սասակեաց, մեկուսի գտեալ զնա յիւրոջ մարմնապահաց։ Իւր դարձաւ զօրն և Թագաւորեցուցին զ Եւոն ոմն. և յանկարծս ապան զնա զօրագլուխն Միխայէլ. և Թագաւորեաց Յունաց։

Իսկ Թագաւորութիւնն Տաճկաց չփոթեցաւ. յերկուս տէրութիւնս։ Քանզի Թագաւորեաց Ահմէտ 'ի Ամիլագետաս և Ահմուտն 'ի Խորասան, և կռուեցան ընդ միմեանս. և հարան զօրքն Ահմետի, և փախեան 'ի նմանէ և չոգաւ ամրանալ 'ի Ամուսաս ամրացուցեալ զնա։ Իսկ Չուսէյն զօրապետն Ահմետի յարեաւ 'ի վերայ նորա, կալաւ և եդ 'ի բանտի. և ինքն գնաց նստաւ 'ի Խաղտատ։ Իւր ազատէր Ահմետ զՉուսէյն, զի միայն արձակեացէ զնա 'ի փոխ-

ազանաց և ոչ պիտի նմա թագաւորութիւն։

Իսկ նորա խոշնացեալ ետ ցնա զթագաւորութիւնն, և կոչեաց զնա ի Բաղդատա։

Եւ լուեալ Սամանայ առաքեաց զՀօր թամ Սիրայն պաշտել զԲաղդատա. որ ելեալ արաշարեաց զնա պատնիշաք. և զօրաց ցաւ ի վերայ Մահմետի. և առ զքաղաքն և սպան զՄահմետ գտեալ զնա ի թաքստեան։

Եւ Պահիրն եկն ի Կալանիկոս չարս հազարաւոր հրամանաւ Մոյմունի. և առ զնա և խշմանացաւ Միջագետաց. և նեղէր ըզ քրիստոնեացն յոյժ ասելով. գնացէք առ թագաւորն ձեր զի հանգիցուք մեք. փոխանակ զի բացօթեայ շրջելով տառապիմք մինչև ցայժմ. և ապա մեզ տուեալ է վերկիցս Տէր։ Եւ այսպէս ոչ գոյր գիւրութիւն և ոչ զղջմանութիւն քրիստոնէից ուղղափառաց և ոչ ուստեքս այլ յայն պնդահութեան միայն։ Յորում ժամանակի եղև շարժ ահագին մինչև լերինք Կոգասոս (1) որ կան աստի և անտի Եփրատայ, մնաց եկին առ միմեանս սարսռանելով մարդկան։ և փլաւ լեառն մի և անկաւ Եփրատ, և արգել օր մի. և դարձաւ Ջուրն յետս, և բացաւ Նորանցին

(1) Եկեղ օրէ դարձաւ։ Մի օրէ։ Գալոս։

աղքիւրք բացան նաւթայ և կպեր և ջրոյ, և յոլովք խցան։

Իսկ Ամիմուտ (1) Թագաւորն Տաճկաց ունէր առ ինքն այր մի յոյն ազգաւ Թուամաս անուն, որ եկեալ էր առ հայրն նորա Ամարան և ասէր զանձնէ թէ իսկ որդի Թագաւորի. և ունէին զնա պատուով. և հաւատացին նմա։

Վասն որոյ առաքեաց զնա զօրաք 'ի Կոստանդնուպոլիս զի կամ առցէ զնա և կամ գոնէ արասցէ զնա յանհանգիստս. և չոգաւ Թուամասն և պաշարեաց զԿոստանդնուպոլիս զվեց ամիս. և յոյժ նեղեաց զքաղաքն։ Ի։ Ամիսայն եհան զՏաճիկ ծառայն և խոստացաւ նոցա ազատութիւն, եթէ արտի մնաք կռուեսցին ընդդէմ Տաճկաց. և մարտեաւ նոքաք ընդ Թուամասն և պարտեաց զնա. և փախեաւ սակաւուք, և հասեալ կալան զնա. և կտրեալ զոտս և զձեռս նորա շրջեցուցին ընդ քաղաքն։ Դադար զծառայն ոչ ազատեաց Ամիսայն լուսն խոստմանն։

Իսկ Ամիմուտն լուաւ եթէ Կուրիշոյիքն (2) աղանդ մի Տաճկաց ապստամբեցին 'ի Հաղդատ և եդին իւրեանց Թագաւոր զՆը-

(1) Զայս դ Լ նոյն անուն Մամն երբեմն Մոյսէս. երբեմն յԼամ Մահոյ. երբեմն (2) Մի օրէ. Դուշմանի։

ջեհիմ ոմն. և եկն 'ի վերայ նորա։ Եւ փա-
խեաւ Իբրահիմն և անցեալ եղեւ։ Եւ նրա-
ստաւ Սահմու� 'ի Խաղդատ. և գնաց առ-
նա Գահիրն, և առաքեաց զնա իշխան 'ի
խոզաստան։

Օգոստ. աւուրքք ծովն Ընդրիանոս,
ձաւեն մի ընկէց յերկիրն Միւլիկիայ քաղա-
քաւոն կանգուն երկայն և նոյնչափ լայն. և
ստուգապէս գլուր մի տակաւի տեսեալ։
Եւ ժողովեցան երկիրն և կտրատեցին զնա.
կերան և ապրուեցին և հանին 'ի նմանէ իւղ
բազում ամանաք, և վաճառէին և ուտէին
և հիանային։

Ի թուին Ընտրոց հարիւր քառասուն
ութ հազարաւ, և Հայոց երկու. հարիւր
և վեց մեռաւ Սիրայլ Թագաւորն Յունաց
և Թագաւորեաց Թէոփիլոս. և եկին Ռուլ
զարք. և Բուրդանք 'ի Հնդաստանդուխն
նոցա։

Եւ Բուրդանքն ազգ են առանձին լեռ-
ուաւ. և դպիր 'ի հին ժամանակաց բան ինչ
գիւթական 'ի մէջ նոցա. եթէ այր մի 'ի նո-
ցանէ յայտնելոց է Սահադի անուն, եւ
Թագաւորէ. և որ հաւատայ 'ի նա և մե-
ռանի՝ գինի քառասուն աւուր յառնէ. և
ամենայն ինչ կեցեալ փոխի յանմահական աշ-

Digitized by Google

խարհն։ Եւ ուստիք կարծեցին թէ Աստուած
ի՞նչ է, և այլք զարուեստին ինչ, և կէսք թաղ-
գաւոր. և սպասէին նմա։

Զայսու ժամանակաւք յայտնեցաւ այն ան-
ուամբ ոմն։ Եւ կարծեցին թէ նա է, և ինքն
ասէր թէ ես եմ նեղիւք թագ. և հաւատացան
առ նա ազգն իւր, և էլ յերկրէ անտի քաշել
մաքս. և էլ հասմբաւ գնմանէ և գայթն յամե-
նայն կողմանց. և ձգէր նա քաղ 'ի վերայ ե-
ղեռաց իւրոց. և անցեալ զբաղաքամ գնաւ-
ռաք և չոգաւ յաշխարհն Հայոց 'ի ներքին
Աղբարատաւ կոտորելով զանհաւանեալսն։
Եւ զահի հարաւ Մահմուտն 'ի նմանէ քանզի
դարձաւ. և եկն 'ի Ղզերաս, աւերէր և կո-
տորէր զամենայն ազգ նմանապէս։

Եւ սնդեռաց զանձն զօրագլուխն Մահ-
մուտայ Հասան, և խաղաց գնաց 'ի վերայ
Նորա և սկսաւ կոտորել։ Եւ Մահադի ըն-
կեցեալ զքոյն և զթագն և փախչէր. և ան-
կաւ յերկիրն Մահակայ հայկազնայ. և դարձ-
ձաւ Հասան 'ի նմանէ։

Եւ Մահակ ել զհետ Տաճկաց և փոտ-
ռեաց 'ի նոցանէ զբաղաքամ և փախոյց։ և
յորժամ դարձաւ 'ի կոտորածէն Տաճկաց ե-
գիտ պաշարեալ զտուն իւր 'ի Քուրդանա-
ցին, և եհար զնոսա. և կալեալ զՄահադի

Գոտրեաց զգլուխ նորա, զայն՝ որ երբեմն ասէր թէ Աստուած եմ ես, և երբեմն հրամայէր զանձն։ Եւ առ զքանակ նորին Աստուածակ իշխանն և ոսկաւք 'ի նոցանէ ապրեալք Թաքստեանքն եկին առ Թէոփիլոս։

Եւ գնաց Թէոփիլոս նոքօք 'ի Օրուպատրոյ։ և առ զնա և աւերեաց և դարձաւ։

Իսկ Մահմուտ վերստին շինեաց զՕրուպատրոյ։ Եւ եկեալ յԱրահայ երկրաց ըստմուտս եկեղեցւոյն։ և առացին թէ ոչքան և ունի հարկատու ձեր է։ Եւ ետ Մահմուտ գրել օրէնս, զի ազատ լիցի եկեղեցի յամենայն ստացուածս իւր և ոչինչ ստացէ յարքունիս։ Եւ գնաց Մահմուտ յատմարոյնի 'ի Կապադովկիայ, և առ բերդս չորս։ և դարձաւ 'ի Դամասկաս ձմերել։

Եւ 'ի գալ միւսոյ ամին չոգաւ արշաւ թեւաց զբերդն Լուլիայ (1) և ոչ կարացաւ առնուլ զնա։ և եմոզ զօրս 'ի վերայ նորա։ և չոգաւ 'ի Բեռոն։

Եւ ել ընդ առաջ նորա պատրիարքն Դիմոնէսիոս և մեծարեցաւ յոյժ։ և հաստատեաց նմա զազատութիւն եկեղեցւոյ։

Եւ մինչ խօսէր ընդ նմա Մահմուտ հաւանին առեստուրքն թէ առաք զ Լուլիայ։ և հրամայեաց զի

(1) Մի օրի։ Լուլիայ։

մայեաց զերքն. և 'ի սրտէ սիրեաց զպատ-
ուիրագն, և ետ նմա պարգեւս։

Եւ առաքեաց Թէոփիլոս առ Մահմուտ
խնդրել խաղաղութիւն։ Եւ ասէ Մահմուտ
տուք ինձ հարկս. և կարդացէք զիս Թագաւ-
որ 'ի վերայ ձեր, և արարից զոր խնդրէք.
և ոչ եւս լուսաւ պատասխանի։ Եւ գնաց
Մահմուտ 'ի Սիրիկիայ. և եկն առ նոս ոմն 'ի
Յունաց խաբեբայ. և ասաց զինքն որդի Թա-
գաւորի. և հաւատաց նմա Մահմուտ, ետ
կազմել նմա Թագ յերեք հազար դահեկանէ.
և կոչեաց զՅովք պատրիարգն Անտիոքու, և
ասէ ցնա. օրհնեա զսա Թագաւոր ըստ օրէ-
նացդ ձեր. և արար այնպէս։ Եւ լուեալ 'ի
Կոստանդնուպօլիս նզովեցին զՅովք։ Իսկ
Թագաւորեալն 'ի Յովքայ յետ սակաւ ա-
ւուրց ուրացաւ զԲրիստոս. և առաձկացաւ։

Իսկ Մահմուտ գնաց յերկիրն Յունաց և
խաբէութեամբ զամենայն երկիրն հնազան-
դեաց մինչեւ 'ի քաղաքն Տպանու. զոր ա-
ւերեալ էին Տաճիկք. և նա սկսաւ շինել 'ի
հարկաց երկրին զոր առնոյր դաւն և խիստ
և անողորմ դահճքն. մինչեւ ամենայն լե-
զու նզովէր զնա։ Եւ եհաս յանկնջն Տեա-
ռն զգաւթեանց. և ապան զնաս Աստուած
'ի սեռեղջն։

Եւ Թագաւորեաց Աբուսահլ[1] երեքայր նորա որ և այրեաց զամենայն շինուածն և գնաց 'ի Աղջոստոս։

Եւ եկին առ նա ոմք 'ի Բասրայ և ասեն. կղզի մի է 'ի մէջ ծովուն որ կոչի Պարսից 'ի տեղւոջն ուր խառնին Տիգրիս և Եփրատէս 'ի ծովն. և է անդ բերդ մի միշտ ապուստամ բանոց լիեալ. և գիտասին զվաճառականսն որ կամին գնալ 'ի Հնդիկս, և յԵթովպիայ։ Եւ առաքեաց Թագաւորն յԳիպտոս և 'ի Սաբայ[2] և ետու ածել անսոսի արս արուեստաւորս ծովամուխս հնարիմացս, զոր ծածկէին զբազմայարանս սաղմով տղայոց, և առեալ ձէթ սապակով ընդ ինքեանս մտէին 'ի խորն. և ուր և պիտէր, երանէին։

Եւ գնացին հանդերձ բազմութեամբ զօրացն քարեալ 'ի նաւս, և եկին բնակիչք բերդին կռուել ընդ նաւսն. և խորամուսքն ծովասուզակք 'ի ներքոյ նոցա եկին 'ի դուրս առ գրան դղեկին. և դռին զդուռն 'ի բաց ցրուս. և զարս բերդին, զի կռուէին նաւովք ընդ զարս Տաճկաց։ Եւ առին զբերդն և քանդեցին 'ի հիմանց. և զարսն ապատեցին, և բարձաւ խուշն այն. և եղեւ դիւ-

(1) Երկու օրի. Աբու- հալ. փ' Աբուահալ։

(2) Երկու օրի. 'ի Զապաս։

Digitized by Google

թութիւն յանցաց ուզեսուցաց. և շինութիւն քաղաքաց դաւառաց. եւ ընդարձակեցաւ Խապտա. և շինեաց Լբասահլ ի մէջ Ղինուէի և Խաբերնի զգիւղն Շամրայ տրբուն նիք մեծաւայելուչ. և շինեաց անդ դրախտս և երեց ամենազարդով անկոք. և բերեալ յԱշխատոսէ առունկս պալասանայ տնկեաց անդ ի զբաստանս զուարճութեան։ Լցնելոյ ի Խաղտատ, և ի Խաբերն. (քանզի Խաբիրն և Խաղտատ չորս աւուր ճանապարհ հեռի են ի միմեանց. և դու մի կարծեր զերկս սեռանն մի)։

Ի ժամանակին յայնմիկ առաքեաց Լբասահլն զեսպանս առ Լուբիսն (1), և յիշեցոյց նոցա եթէ կայ դաշն ուխտի մեր և ձեր ի վաղուց հետէ տալ մեզ ձեզ ցորեան և ձէթ, և հանդերձս. և թէ ելանէ մեզ գաւորդ ձեր յերիվիրս մեր, հնազանդիմ յանմենայն ապէտս որպէս մերում թագաւորի. և դուք տայք մեզ յամենայն ամի երեքհարիւր սեռս ծառայ. և տասն արուզնայ (2)։ և զորսիսն մի որ է կենդանի մի խնդիր, առանձքն բնարձր ի չսուի գոմիշոյ, որ ապրիէ քսան հազար դահեկան. և փիլատս ամենիուս. և

(1) Մի օրի. Նուբիացի։ (2) Մի օրի. ոսկեշնաս։

տրգ լեցի ձեզ ասէ նորոգել զառաջին ուխտադրութիւն։

Իսկ յորժամ գնաց գեսպանն մեռեալ էր թագաւոր նոցա և թողեալ դուստր մի ժառանգաւորութեան, զոր իշխան մի Օսքարքիա անուն եռա որդւոյ իւրում 'ի կնութիւն, և թագաւոր կարգեաց զնա. որում անուն էր Գորգի. կամեցաւ Օսքարքիս (1) առաքել զթագաւորեալ որդին իւր առ Աբեսսահլն։

Որ իբրեւ լուաւ թագաւորն Տաճկաց Աբեսսահլն, սրբոյ խնգութիւն. և առաքեաց և եհար սպառ արքայութեան 'ի Ճանապարհին մեծամեծ ծախիւք, պէտք մարդոյ և գրաստուց բազում առաստութեամբ. և էլ քարող հրամանէ ելանել ընդ առաջ նորա արանց պատուաւորաց եկեղեցականաց և աշխարհականաց քրիստոնէից և տաճկաց. վասնորոյ յորդեալ ընթանայր ամենայն աշխարհն ընդ առաջ նորա, ընդ որ գայրն. և տեսանէին նար իբրև պատանի մի քանամեայ վայելուչ հասակաւ, նստեալ յուղտու նորակազմ զարդուք պատճուճեալ ականակուռ թամբքն։ և կուրայ

(1) Ամենայն գրչագիր բայ 'ի ուրն։
Ոչինչ ասին քան զայս թագաւ.

ոսկեղէն և նկարեալ ի շարս մարգարտաց ի վերայ նորա գմբեթաձեւ զարդ խաչ ոսկեղէն ունելով ի գլուխն. և ինքն զգեցեալ և պսակեալ անասելի բանիւ հանդերձս և թագս։ Իսկ խաչ ոսկի ի վերայ ոսկեղէն խնձորոյ ի մի ձեռն, և ի միւսն գաւազան ոսկի խաչիւ. նոյնպէս և բազմութիւն երիցանց ընդ նմա, և չորս եւդիսկոպոսք և չորս քահանայք աստի և անտի գնային ընդ նմա խաչս բարձեալ. և զօրքն զգեցեալք և սարուաղնեալք ազգի ազգի յօրինուածովք արժանաւոր տեսողաց։ Իւ ել ընդ առաջ նորա գոռոմն Տաճկաց, և գոմէից զյօրինուածս զարդուն, և տարսիւ զնս ի Խաղտատ երեւելի փառօք. և նստան ի միում բարձի։

Իւ կոչեաց զպատրիարգն Յէոնէփոս. և եհարց զուղղափառութենէ նորա, և ետ նմա պատարագ առնել, և հաղորդեցաւ ի ձեռաց նորա։

Իւ զարմանայր պատրիարքն ընդ իմաստուն և կատարեալ հաւատս պատանւոյն. զի անարգէր զերկու (բնութիւնն) առալն ի Քրիստոս։

Իսկ Թագաւորն Տաճկաց ետ պարգեւս Թագաւորին Քրիստոնէից անհամար և անկշիռ, գիտելով թէ ոչ ոք յատաջնոց Թա

Digitized by Google

գաւառացն պատուեցաւ իբրեւ զնա գալ-
ոտեամբ թագաւորին Յունաց. և հաստա-
տեցին սէր կատարեալ ոչ ծոմիւք իբրեւ
զառաջինն 'ի Յունացն այլ միայն բարի կա-
մաւք և անմոռացութեամբ. և զԱրուան քա-
պաք և զԻոզան արարին կիսագաժինս, որք
կան 'ի վերայ Լեղոս գետոյն։

Եւ գնաց գեղեցիկն Գէորգի երեւելի
փառաւք յաշխարհն իւր։

Եւայլ երկու եպիսկոպոսք և բազումք 'ի
զօրացն մեռան զի չէին սովորք փոփոխական(1)
օդոյ ամարան. և ձմերան։ Իսկ երկու զօրա-
գլուխքն Տաճկաց, Լասրան և Կապաքն (2)
հաճեալ ընդ վարս քրիստոնէից զոր ասեմ,
Յունացն, գնացին առ Թէոփիլոս թագա-
ւոր, և եղեն քրիստոնեայք։

Եւ Թէոփիլոս հպարտացեալ նոքաքն չա-
գաւ 'ի Օրպատրայ, և առ զնա. և կոտո-
րեաց նմանապէս զքրիստոնեայս և զՏաճիկսն։

Եւ գնացեալ 'ի Մելտենի գերեաց զնա.
և եկ Յաշմուշայ և 'ի Հանձիթ, աւերեաց
և գերեաց։

Եւ լուեալ զայս Աբուսահլն բարկացաւ
և խաղաց ամենայն ուժով իւրով 'ի վերայ
Յունաց, եղեալ յերկուս բանակս անթիւ

(1) Ցրտիք օրի. փոխանակ։ (2) Մի օրի. Բուսպաքն։

հեծելով և յոլով կազմութեամբ. զի կայր ընդ նմա և երեսուն հազար Պուղրի, և վաճառականս երեսուն հազար, որ ունէին բարձեալ բեռինս քսան հազար Ջորիս (1). զայն դու տես. և գնացեալ Յ Նիկիուրիա առանձնաւոր. և աւերեաց մինչեւ Յ Մուրին քաղաք մեծ և բազմամարդ և վայելուչ և ամուրս յոյժ. և ոչ գոյր նման նմա 'ի վերայ երկրի. և պաշարեաց զնա երկոտասան օր. և առ զնա մատնութեամբ իշխանի միոյ Ղոռճ անուն. և ապան 'ի նմա անձինս ոսան եւ ութ հազար։ Յ Եգիպտ անդ կուսանաց վանորայս (2) հազար, զորս ետ 'ի կնութիւն ծառայից իւրոց, և այրեաց զքաղաքն։

Յ անձառ է իրաւունք դատաստանին Աստուծոյ. և ոչ ոք է հասու նմա. և որ հնեալ են խորք նորա մեղ անծանօթ։

Յ էր որդի Աբուսահլայ, Դաւութ ա նուն նորա որ ընդեալ 'ի դիւաց ալաչէաց զհայրն բառնալ զքրիստոնէից համարձակութիւնն ամենեւին. ոչ երեւեալ խաչի արտաքոյ եկեղեցւոյ և ոչ բառնալ մեռեալ 'ի բազկաց և ոչ լսելի առնել զպաշտօն եկեղեցւոյ և խոզ ոչ ունել ուտելք, և ուտել խոզ.

(1) Մի օրի. յիսուն հազար ուղտ և քսան հազար Ջորիս։

(2) Հինգ օրի. վանս։

զենի. և արար այնպէս։

Եւ յայսմանեցաւ Աբուսահլայ թէ Աբաս եղբօրորդին քո արարեալ է բազում օգնականս և կամի թագաւորել. և ուխտեալ է ընդ Հռոմայեցիս զի մինչի քրիստոնեայ. և բանեալ զԹագաւորութիւն Տաճկաց։ Վասն որոյ կալաւ զնա և սպան 'ի տակոյ. և գրեաց զվնաս նորա ընդ ամենայն Տաճկաստան. և վասն այնորիկ նեղուին և ասեն զԱբաս Տաճիկք։

Եւ 'ի նոյն աւուրս երեւեցաւ 'ի կողմ հիւսիսոյ ամպ կարմիր զերիս գիշերս. և ապա եկն անձրեւ օտար. զի տեղայր ընդ անձրեւուն քարինս և կեղեւեաց զծառս. և մերկացոյց հեղեղն զդաշտս 'ի հողոյ, և բաբ-ձրացաւ ջուրն 'ի վերայ խառանոյ. և ըս-պան մարդ և անասուն բազում, և տարաւ ելից յԱփրատս գետ. և յոլով գաւառս և գիւղս ապականեաց։

Օրինի այսորիկ առաքեաց Թէոփիլոս նուէրս Աբուսահլայ, և ասաց նմա փոխել զգերիսն, ապաղ քրիստոնեայսն և առնուլ ընդ տաճիկսն։ Եւ Աբուսահլն արար դարձուա-ծրս բազմապատիկս, առաքելով պատարագս յիսուն զեռն ուղտս. և ասաց ոչ է մարդ փոխել զայր պատուական ընդ յոյն մարդոյ

յու

(1). բայց տաց քեզ վերադիրս. և արարքն այնպէս. և եղիր խաղաղութիւն 'ի մէջ նոցա։

Յորում ժամանակի յայտնեցաւ այր մի թամամ անուն. որ ասէր զինքն պատգամաւոր երկեալ Աստուծոյ (2). և ասէր՝ Ես եմ առնուք հարկս 'ի քրիստոնէից աւելի քան զգէս դրամսդ և խնդացին յիսուսացիք (3). և հաւաքեցան առ նա աւելի՝ քան զերեսուն հազար արանց 'ի յաղքատաց. և եկն ոգոյ Յերուսաղէմ։ Եւ քակեաց զտուրբ Յարութիւնն։

Եւ գնաց առ նա Ամիրայն Դամասկոսի և սպան զնա. զի հակառակ էր օրինաց նորա։

Յայնժամ մեռաւ Աբուսահլն և Թագաւորեաց որդի նորա Ահարան այր կերող և արբեցող. և ոչինչ գիտէր յանցից և 'ի պատահմանց երկրի։ Եւ վեց ամ արքայութեամբ կեցեալ մեռաւ։ Եւ 'ի սոյն ամի մեռաւ Թէոփիլոս։ Եւ Թագաւորեաց Սիխա յէլ որդի նորա մարքն Թէոդորոս։

Եւ 'ի ժամանակս սորա վեց Թագաւորք

(1) Մի օրի. ուշ է մարթ փոխել արաբ մարդ պատուական ընդ յոյն մարդոյ յուսուց։

(2) Զորոք օրի. պատգամաւոր։

(3) Մի օրի. քրիստոնեայք Մի օրի. հնազանդ. քրիստոնեայք։

փոխեցան Տաճկաց. Ի Հարան, Ջ ամբը, Ի Սահ-
մետ, Ի Հմատ, միւս Ի Հմատ, Ի բուբգաքայ։
Իսկ Միխայել քահանաւեւթն ամ փարեալ ըզ-
թագաւորութիւնն մեռաւ. և զի ոչ ունէր
որդի, թագաւորեաց ոմն Ի պուլատէն Ի ա-
ռիլ անուն ամս երկու. և զկնի որդի իւր
Ի եւոն ամս քսան և եւթն. և յառուրս սա-
յսր թագաւորեաց Տաճկաց Ի հմատ ամս քս-
ան երեք։

Իսկ Ի եւոն յանցաւորեալ Ի ատուծոյ
էառ չարս կին զի ոչ գոյր յանդիմանիչ. և կա-
նոնեաց թէ առանց մեղայ է չորեքկնու-
թիւնն, և անկաւ յախտ ապիցաւութեան.
և մեռաւ ոչ բարւոք։ Իւ թագաւորեաց
Ի էջքա որդի նորա ամ մի. և յետ նորա եղ-
բայր իւր Կոստանդին ամս յիսուն և եւթն։
Ի ապրպ ժամանակս երեքք պատրիարգ նստան, Ի
Կոստանդնուպոլիս զկնի միմեանց կախարդք,
որք Ի ներքսն սեղանոյն պաշտէին կուռս ե-
դեալ Ի ժամ կարծելոյ պատարագին. և
վասն այսորիկ բարձին Յոյնք զվարպետն
ժամանակս բազում։

Իսկ թագաւորութիւնն Տաճկաց փոխե-
ցաւ Ի ցեղէն Ի լեայ յազգն Ի ահմետի. և
նախ թագաւորեաց Ի բլ Ի բրաս ամս քսան։
Իսկ Ի ուղղարքն զօրացեալ նեղէին զաշխար-

հրն Յունաց բազում աւարս և արկին զնա սա ի Կոստանդնուպոլիս։

Ի քսան երեք ամին Կոստանդնեայ թագաւորութեան Ալամանացի Սոհմէս ասեն զնոցա։ և յետ նորա Ջ ամիս ասեն քսան երեք։ Ի չորս երեք ամին Կոստանդնեայ թագաւորեցաց Ալամանացին Ալբանուորք ասեն երկու։ Ի յետ նորա Ալբաս ասեն եւ մի։

Ի ի չորսն և եւ մի ամի աղքատացաւ թագաւորն Կոստանդին մեռաւ։ Ի հնագոյն թագաւորեցաց մեռաց նորա Սոսանեան։ որ և ազգաց խաղաղութիւն ընդ Յունս ի ձեռն զորս գրեմք Սիմոնի։ և գաղափարեաց մերոյ յարգելոյ կոչեմք։ և պարարակեցին յարեւելս։

Իսկ Տաճիկքն որ ասեին ընդ ձեռամբ զկապադովկիայ Հայոց և զԱիլիգիոս Ալանոց և զվրաստանս ի Ամորէ հետեւ և ի Հիւրակէից։ այժմ ակարացան և պակասեցան։ վասն զի եւս ոչ զանձինս ազգեցուցեալեան և գիմս մեռեան։ քանզի եր Ակիրակոս առաքեալն Սոսանեան Սոսանաս ի Սելեւկիայ փոքր Հայոց և նոսաս ի վերոյ քաղաքին։ և նորա խնդրեցին հերետիս գրեալս մի գրեալ ասուն օր։ մինչեւ հարցցին զիմաստասունս քրիստոնեայ, եմեալ կարգի վրայ կեալ զնոսա։ և անուանց նոցա։

Ապագ կարեւոր զուարճանալն որ տասնեք

զլիաւորքն, ածին առ Կիրակոս և ասացին զնա
խրատանց՝ ուսուցին նմա և ապահեցին զնա 'ի
ծառայութիւն (1)։ Իսկ զկնի աւուրց եմուտ 'ի քա-
ղաքն և առաց. աւետիք ձեզ. զի այսօր ընդ
մեծանալ արեգականն մտանեն զօրքն մեր 'ի
քաղաքս. և հաւատացին նմա։

Իսկ Յոյնքն կազմեցան իբրեւ զՏաճիկք
'ի գալ երեկոյին մտին 'ի քաղաքն իբրեւ զնու-
ասն. և առին զքաղաքն։ բայց ոչ կոտորեցին
զԱրաբսն. այլ հանին զնոսա և գնացին խաղա-
ղութեամբ։

Իսկ առ Կիրակոս զվերոյ քաղաք. և
զԳուսանին և զԲեռոն. և չոգաւ 'ի Սիւրիկիա.
և առ զնոսա և գարձաւ յԱնապատ և հնազան-
դեցան նմա. նոյնպէս և ամենայն ծովեզե-
րեայքն ձեռն ետուն 'ի Յոյնս, զի տկարա-
ցան Տաճիկք։

Իսկ յոյսոտիկ մնացաւ և Ռոմանոս. և թա-
գաւորեաց Կոստանդին մենաւոր նորա. այլ
բարի և վարժ հանճարոյ։ Իսկ 'ի քսան և չորս
ամի նորա թագաւորեաց Տաճկաց Ալբուսա-

(1) Ամենայն օրինակք այսպէս ունին ասք պոխաս. հնագոյն օրինակն ունի. կալան և ածին զգեղապանն առ Կիրակոս։ Եւ նոցա զքաղաքն, և յամենայն առ նոսաս Եւ ապա մնալ 'ի քաղաքն ետ նոցա աւետիս նա վասն երկրի ապանման թէ այսոր գայ զօրքն մեր։

հրն. և առաքեաց Կոստանդին զորդի իւր զՎասիլն որ առ զՍամոսատ քաղաքաւ։ Յնոյն ժամայն եհաս գուժկան թէ մեռաւ Հայրն նորա. և թագաւորեաց Ռոմանոս միւս եղբայր նորա. և դարձաւ Վասիլ և եղեւ հնազանդ եղբօրն։

Յառաքեաց Ռոմանոս զօր 'ի վերայ Ալպայ և առին զնա։ Յեմեռաւ Աբասահն և թագաւորեաց Իրապկայ Աբուլ-ասան ամս վեց։ Յետ սահմանաւ մեռաւ Ռոմանոս. և թագաւորեաց Նիկիփոր այր սրգէտ և առեցող ուղղափառութեան. որ և ընդայեալ 'ի Ալեքսանդրի եգիպտաւերեալ. անմարդ զնա. և ետուն նմա խրատ զի կոչեսցէ զտէր Յովհաննէս պատրիարքն Անտիոքու և տայցէ ցնա զերկիրն. զի բերեալ զապգն իւր շինեսցէ զաշխարհն։ Որ թէ դէպ լինցի և դարձեալ զօրանան Տաճիկք, լաւ է մեզ ասեն զի նոքա կորիցեն. և արար այնպէս. և երդուաւ նմա դադարեցուցանել զհալածանս ուղղափառաց. և հաւատաց նոքա պատրիարքն. և շինեաց զքաղաքն և զաշխարհն և. ելից զերկիրն գեղիւք և վանորայիւք, ածեալ 'ի Ալիշգետաց և 'ի Հայոց ուղղափառս. և արար զբնակութիւն իւր 'ի Պերիոն։

Digitized by Google

Իսկ յորժամ յաջողեցան իրքն կոչեաց զՏէր Յովհաննէս 'ի Կոստանդնուպօլիս. և չոգաւ եպիսկոպոսաք և վարդապետաք. յերիսք հարիւր եւ թանասուն և ութ թուականին Հայոց. և արարին ժողով մեծ և մարտեան ընդ ուղղափառան. բանիւք և զօրութեամբն Քրիստոսի այնպէս յաղթեաց Ճշմարտութիւնն. որ և ամենայն լեզու օրհնեաց զհաւատս մեր։

Բայց անօրէն թագաւորն խոստանայր ա թոռս և պատիւս ուղղադաւանիցն. թէ ա սեն միայն զերկու բնութիւն. և սպառնայր, թէ ոչ լսեն նմա.

Նոքա պատասխանի և ասեն. մեք ոչ վասն երկիւղի, և ոչ վասն յուսոյ փառաց անուանեաց չգաժանեմք զմինն. զի մի քակեսցուք 'ի նմանէ. և զայրացեալ թագաւորն եդ զնոսա 'ի բանտի չորս ամիս։ Իսկ թագաւորին Թէոփանէս սպան զԱնկիփոս՝ զի չէր ամուսնացեալ ընդ նմա. և առ զՅովհաննէս ամն այր ինքեան և եդիր նմա թագ, որ և յառաջագոյն կրէր զմուշկ թագաւորին. և չնայր ընդ թագուհին, և խորհեալ ընդ միմեանս սպանին զթագաւորն։

Եւ թագաւորեաց Յովհաննէս, որ և Չմշկիկին կոչի. և սա եհան 'ի բանտէ ըզպատրիարքն և զեպիսկոպոսունն և դնացին

ճառաւ։ Յորժամ ըստ սովորութեանն դարձուցին զնոսա զհանեալ Թուրքն յերկիրն Իւրեանց և գնացին մերձ 'ի դուռն, դարձան 'ի վերայ տարողացն Պարսից և սպանին զնոսա, և յափշտակեցին բերդ մի և մտեալ 'ի ներքս ամրացան, և ազգ արարին ազգին Իւրեանց, և ելին բաժին մի և առին զայլ բերդսն և արարին ընդ Իւրեանց հրամանաւ ըզդուռն և յաճախեաց յայնժամ երանելի բազմութեանցն որ կային 'ի ներքս։ Եւ յայնժամ գիտացեալ՝ դարձեալ ամրացուցին զդուռնն, և ելեալ եկին յերկիրն Արաղոյ, յաշխարհն Պարսից, և ասեն՝ թէ սպիտակ կենդանի ինչ իբրեւ զշուն առաջնորդէր նոցա, և յորժամ ցրուիլ ջանային՝ կանչէր կենդանին և դառնային առ նա և երկրպագէին նմա. և այսպէս յաշխարհէն Իւրեանց մինչեւ Արաղա առաջնորդէր նոցա, և ապա եթող զնոսա, և անյայտ եղեւ երեւումն։

Եւ նոքա եղեն երեք բաժին, և ձգեցին վիճակ երեք գաւառսն. մինն անկաւ 'ի կողմն հարաւոյ, և գնացին բաժին մի 'ի նոցանէ 'ի կողմն Հնդկաց և խառնեցան 'ի նոսա հնազանդութեամբ։ Եւ երկրորդն անկաւ յարեւմուտս հիւսիսոյ, և գնաց միջի բաժինն նոցա յարեւմտից Թրակիոյ և բնակեցան անդ, և յանուն աշխարհին կոչեցան Կոմանիք։ Եւ երրորդն անկաւ 'ի միջոցս երկրի,

և եկին խառնեցան 'ի Պարսիկս։ Եւ յետոյ
եկին այլք բազումք, և դարձեալ փակեցին
զդուռնն։ Եւ էին 'ի նոսա եւթանասուն
գլխաւորք, որք եկին 'ի Ամրաշայ և արարին
'ի մէջ իւրեանց ծիր եւթանասուն իշխանքն,
և կանգնեցան բոլորեալ զծրաւն, և իւրա-
քանչիւր գաւազան 'ի ձեռին իւրում, եւ
սահմանեցին և ձգեցին զգաւազանսն վերս 'ի
յերկինս եւթանասուն գլխաւորքն և ասա-
ցին՝ թէ "Այր գաւազան անկանի 'ի մէջ
ծիրին, նա թագաւորէ.» և իբրեւ ձգեցին,
ինն գաւազանն անկաւ 'ի ծիրն և մէկն ցը-
ցեցաւ։ Եւ կանգնեցին 'ի տեղւոջն ինն թա-
գաւորութիւն, և ութն հնազանդեցան մի-
ոյն՝ որոյ գաւազանն ցցեցաւ, և կան անդ
հաստատուն և ունին զդուռնն. եւ տիրեն
ներքոյ երկու լերանցն, որոց անուանք լե-
բանցն կոչին Ամանք աշխարհի. և նոյնպէս
տիրեն արտաքոյ լերանցն բազում աշխար-
հաց. և անուն գլխաւորին իւրեանց հանա-
պազ կոչի Խաքան, զի այն էր առաջնոյ թա-
գաւորին անուն, և գայ ազգէ յազգ։ Եւ
վասն զի բազումք 'ի նոցանէ խառնեցան
Ամրաբացիս, և նոցա անուամբն կոչին Անմ-
ման, 'ի Ամմոյ առեալ զանուանակոչութիւն,
որ էր առաջնորդ զօրացն որք գնացին 'ի Կոս-
տանդինուպօլիս։ Եւ այսու մանաւանդ յա-
ջեցան 'ի նոսա, զի մի Աստուած քարոզեն

գոհաստական և հպարտն զօրք նորա. քանզի
սպառնացաւ վանողէից Աստուծոյ. եթէ դարձցի խաղաղութեամբ
սրբացի վերստին քաղաքդ անիկա, քանզի յոյժ
ատեցող էր՝ զդաւանացս. որ և սպասր ժողովրդի Կոստանդնուպօլիս երկերիւր եպիսկոպոսաց, և կոչեաց զպատրիարքն Պարսից զտէր Յովհաննէս՝ որ դնաց վերայ եպիսկոպոսաց. և ապահեցին զնա յոտն առաջի խրատուն երկաբնակաց. և խօսէր ընդ նոսա կարգաւոր բանիւք. և երիս եպիսկոպոսք ասէին և անտի անցեալ օգնէին նմա վասն ծերութեան մարմնոյն։

Եւ ասաց Թագաւորն, բան մի խօսեցայ, և արատաւեմ զքեզ քան զամենայն. ասա՝ «յետ միաւորութեան երկու բնութեանս յաստուածութիւն»։ և նա ասէ. և Հրաշագործութեանն խոստովանութիւն մի բան է, և ուրացութիւնն մի բան է, և զայդ ոչ ասեմ բնաւ։

Եւ թէոդորոս եպիսկոպոսն Ներսեհայ ասծ նման ապարակ ի ծնօտն աջոյ, իսկ նա մնացեալ զմիւսն. և ոմն յեպիսկոպոսացն յոտն եկայց և ի հոգոյ զիմեաղոյ, և ասէ զգաղանութիւնն. Քրիստոս ապարակ էաս և յոտն կայ։ և դու՝ նոսիք. և լացին ամենեքեան. և ի տրտմութենէն արձակեցին զժաղովն։

Այս յետս այնորիկ դարձեալ արարին սա-
տեան և նստան, և ասին ցպատրիարքն. Հա-
ւանեաց մեզ և տո զաթոռն Անտիոքու մի-
ացն։ Այս ասէ ցնոսա. Ես աթոռ ունիմ
յերկինս և յերկրի (1) և մարմնական աթոռ-
աչ է պիտոյ ինձ. և ասեն դարձեալ դուք
աչ միրտութիւն ունիք և ոչ քահանայու-
թիւն, առէք ի մէնջ և գնայէք։ Այսպէս սուրբն.
զոր Իգիտատոս և Աղաքեալքն եւոուն
և պահեաց Իւսեսիոս և Սեւերոս, մեք ու-
նիմք. և հաւատամ զոր ասեմն, թէ դուք
բնաւ ոչ ունիք,. բայց միայն նեղմամբ ի գլ-
խոս ձեր։ Այս բարկացեալ նոցա վճիռ ե-
տուն յաքսորս երթալ յարեւմուտս։ Այս
տապան գնաս քսան և ութ օր, և դարձեալ
զգնացան, և դարձուցին ի Կոստանդնու-
պոլիս. և եդին գնաս ի բանտի. և եղեն ի
ձեռս նորա բազում բժշկութիւնք ի կայրս
և ի կաղս և ի հիւանդս. և էլ համբաւ
բարի ընդ ամենայն երկիր. և բազումք դար-
ձան յուղղափառութիւն. և անդէն ի բան-
տին վարդապետարանս սուրբն Յովհանայ. և նրշ-
խատքք նորա եդաս ընդ Անարեիրոսս յաշա-
կերտաց նորա և ընդ սուրբս յիշատակ նորա։

(3) Հին. օր. Ես զաթոռն յերկինս. և մարմնաւոր ա-
թոռաչ ունիմ յերկրի և թոռ աչ է պիտոյ ինձ։

Digitized by Google

Ի բարկութիւն Տեառն եղեւ ի վերայ Ամանոսի և սատակեցաւ, և թագաւորեաց Միխայէլ ամս ութ. և ոմն ազգային նորա խորհեցաւ թագաւորել, և արար ժողով զեւթն ամիս. և կալան փոխեցին զաչս նորա ի տեղւոջն՝ ուր գտաւ գիր ի վերայ քարի մեծ թէ ասա թագաւոր խաւարի։

Ի յաւուրս Միխայէլի Սուլիման Տաճիկ դարձոյց զԼեհայ ի Յոյնս։ Իսկ յետ մահուանն Միխայէլին կալան զթագաւորութիւնն Օ՛ոյի, և թոռան դստերքն թագաւորին Կոստանդիանոսի։ Ի Տաճկաց թագաւոր Աբդլաբաս էր։

Ինչ հաճոյ եղեւ մեզ յայսմ միջոցի յայտ առնել ուստաճասիրաց, յազգաց ելանելոյ ազգին Թուրքաց թէ յորմէ ազգէ իցեն և ո՞ր է աշխարհն նոցա և ուստի. և զինչ պատճառաւ եկին յաշխարհս մեր. և առին բնակութիւն ի պատուս գաւառս։ Զլսելոյն մարգարէից սուրբն Մովսէս ասէ ի գիրս իւրում պատկան։ Յաբէթ ծնաւ զԹիրաս և նա զԹորգոմ և զԹորգոմ և զԹորգոմ զ Ովք և զպոյլ ընդ նմա. ուստի յայտ է թէ յազգէ Թորգոմայ են. վասն որոյ և Թուրք ասի. յորմէ Ովք և Սադովք, որ է ազգ ամբոխական. որ և զվնեի ցրման աշխարհին գնացին արեւելեաք և

Digitized by Google

դարձան ի կողմն հիւսիսի և առին բնակութիւն յայնկոյս լերանցն մեծաց և երկայնագունից՝ որ կոչին սահմանք հիւսիսի։ և ձգեցան տարածեցան յարևելից հիւսիսոյ, մինչեւ յարեւմուտս հարաւոյ. և ունին երկուս մասս. մի ի Պարսս և միւս Յունս և ի Լիբս, զոր փակեաց Աղեքսանդր Մակեդոնացին. և են նոքա հեզագնացք և անագահք և պարկեշտք ի ցանկութիւն կանանց. և պաշտեին մի Աստուած, և կոչեն զնա Կրքոտանղրի (1) որ է կապոյտ Աստուած քանզի զերկինքդ կարծեն Աստուած. և ուտեն զամենայն գարշելի և զմեռելոսի. և ապա ենին բրդեղէնս մաղեղէնս զի այլ ինչ ոչ լինի առ նոսա. և օրէնս ինչ գրով կամ աւանդս ոչ ունին՝ քանզի ոչ գնաց առ նոսա մարգարէ որ կամ առաքեալ. վասն որոյ Պարսիկք յորժամ զօրացան, ամրագոյն դրամբք փակեցին զերս նոցա։ և չինելով ի վերայ նորա և առ ընթերս նորա բերդս վեց և կացուցին պահապանս, զի մի երթեն ելցեն զերկիր բազմութեամբն իւրեանց. և պրծեն զնա գաշխութեամբն իւրեանց.

Այսպէս Աղեքսանդր Մակեդոնացին գործել ետ զդուռն որ ի Դարպանդն երբեք

(1) Գրեթէ Ալեքսանդրի։ երեւ. Դի Աստուած։

հազար դարբնաց 'ի պղնձոյ և յերկաթոյ զվերց ամ 'ի մէջ լերինն և ծովու երկայնադոյն աղիսամբ (1) փակելով զնա։ Լ'ուէ վասն նոցա Լ'զեկիէլ մարգարէ. Գովք և Մագովք կոչելով և իշխան Թովբելայ և Մոսոքայ։ Լ'ս նոքօք սպառնայ ազգին Հրէից. և դարձեալ կոստորել ասէ նոցա Յ'Հրուսաղէմ. և երիցս անգամ կրկնէ մարգարէն որ յաղագս նոցա բանն է. ուստի իմանամք երիցս անգամ եղանել նոցա արտաքս. և առաջին եղանելն նոցա այն է որ նախ քան զՔրիստոս հինգ հարիւր տասն ամաւ, եղեւ այսպիսի պատճառաւ։

Թագաւորքն Պարսից 'ի կարեաց ժամանակի հանէին 'ի նոցանէ ընդ դուռն որքան պիտոյ լինէր վարձուք. որ և Կամբիսոս որդին Կիւրոսի զոր ոմանք Լ'սբուերոս կոչեն, Լհան 'ի նոցանէ և կռուեցաւ ընդ արքային Լ'թուրայ. և զՀողմիմիւռնէս որ 'ի նոցանէն էր առաքեաց 'ի Պաղեստինէ. այսպէս հանէին, և զկնի վճարման պատերազմին դարձեալ տանէին արկանէին 'ի ներքս որ և տանէին ընդ ինքեանս յամենայն բարուքեանց երկրի. ոսկի և արծաթ և հանդերձս աղնիւս, և պտուղս. և շարժէին

(1) Եբրայ. գրամ. ե. բուք օրի. ասպանդ։

նոցա ցանկութիւն ելանելոյ եթէ կարասցեն գտանել հնարս։ Իսկ եղեալ զի ըստ սովորութեանն տանէին զնոսա յապարանսն իւրեանց. և սակաւք էին տանողքն (1). և մնաց եղեալ 'ի դուռնն յարեան 'ի վերայ տանողացն և պահապանաց դրանն և կոտորեցին զնոսա և առին զմի 'ի բերդիցն և արարին 'ի հրամանս իւրեանց. և ազգ արարին յերկիրն իւրեանց և ելին օգնել նոցա, և առին զայլ բերդսն և ամրացան. և ազգ եղեւ հեռաւորագոյն ազգի սոցա որ կային իշխանք և ճոխագոյնք նոցա, զի կենդանի մի սպիտակ երեւեալ առաջնորդէր նոցա իբրեւ զշուն. և յորժամ ցրուէին և մոլորէին մեծագոյնս կանչէր և դարձուցանէր առ ինքն, և պագին նմա երկիր և հաւանեցան. և բերէր զնոսա մինչև 'ի դուռնն և ահա բաց էր, և ելին ընդ նմա. և յորժամ կարի յաճախեաց բազմութիւն ազգին ելանելոյ դարձեալ փակեցին զդուռնն և եկին մինչեւ Յ՚Երուսղիայ մերձ աշխարհին Պարսից. և ապա եղեն երեք բանակք. և արկին վիճակս ձգելով երեք գաւազանս ընդ երկինս. մինն անկաւ 'ի հարաւ, և գնաց բաժինն առաջին 'ի կողմն Հնդկաց. և միւսն անկաւ յարեւմուտս հիւսիսի, և գնաց

(1) Մի օրի. տարեգրն։

միջին բաժինն բնակեցաւ առ ընթեր Թրակիոյ և յանուն աշխարհին կոչեցան Կոմանիք։ Իսկ երրորդն անկաւ 'ի միջոցս երկրի, և եկին խառնեցան 'ի Պարսիկս և հնազանդեցան նոցա ուր եւ գնային. եւ դարձեալ բացաւ դուռնն և ելին այլք բազումք, և փակեցին զդուռնն. և կային 'ի նոսա իշխանք եւ թանասուն որք արարին բազմիցս և կացին շուրջ 'զնովաւ. և իւրաքանչիւր գաւազան 'ի ձեռին իւրում և ձգեցին յերկինս 'ի վեր և ասացին. որ անկանի 'ի ծիրն 'ի գաւազանս նացն. տէր գաւազանին թագաւորէ. և ինն գաւազանն անկաւ 'ի ծիրն. և մինն 'ի նոցանէ ցցեցաւ. և կանգնեցին 'ի տեղւոջն ինն թագաւորութիւն, և ութն հնազանդեցան միոյն, որում անուն էր Խոքան, և կան 'ի աեղւոջն հաստատուն որ է աշխարհ ընդարձակ և տիրեն նեռքոյ դրանն. և վասն դրանն ոչ մեկնին անտի զի այն է ամրութիւն նոցա. և քանզի բազումք այն են որ խառնեցան Յ՝Ուրաքացիս՝ նոցա անուամբ կոչին Ասլիմանք 'ի Ասլիմայ առեալ զանուանակոչութիւնն. և առաւել միաբանեցան ընդ նոսա. զի նոքա մի Աստուած դաւանին իբրեւ զնոսա։ Իսկ լսան 'ի նոցանէ թէ մի երկիրպագանէք ս՝ բարածոց. անարգեն զիսաչն. և զեկեղեցի.

Իսկ այնոքիկ որք գնացին 'ի հարաւ և յարեւմուտս որք դիպեցան քրիստոնէից, քրիստոնեայք եղեն. և որք դիպեցան 'ի կը-ռապաշտս ազգ նոցնպիսիքք եղեն վասն զի հա-ւանականք էին. նոցնպէս և ընդ միոյ դուռն հանեին ՀԱՅՔ ԵՒ։ երբք յօգնութիւնս իւրեանց 'ի նոցանէ և յարեալով 'ի նոսա եղեն քրիստո-նեայք և խուճապիք կոչին. զի խիւն ձոր ասէ և խաչն վասն որպէս թէ յամանէ կան 'ի ձորս և ըստ պիտոյից ժամանակս ժամանակս։ Ընդ երիս երեք նոցա լեալ է և երրորդն տա-կաւին կատարելոյ է ըստ մարգարէին Զեզ-կիէլի. որ ապականելով զաշխարհ գան մին-չեւ 'ի Պաղեստին մօտ 'ի յայտնութիւն որդ-ոյն կորստեան. քանզի Յովհաննէս ասիա-ցին ասէ թէ Տիրեր կայսր առաքեաց առ նոսա դեսպան. և յարժամ եհաս գնասս խա-քան նեղեաց յոյժ. և հարցեալ զպատճառն ասաց բան է առ մեզ նախատեսութեան, զոր ըստ յետս 'ի հարցն իմոց թէ յարժամ թա-գաւորքն ՀԱՅԱՍՏԱՆԻ հնազանդութիւնս առա-քեն Փոքրասց, մերձեալ է առեր աշխարհ-դն. և եհարց խաքանն եթէ դուք հարբ-կոս տայք Պարսից. և նոքա ասեն ոչ. այլ նոքա մեզ տան դիմաս. և զարթնեցաս խա-քանն եթէ այդպէս մեծ է ՀԱՍՏԱՆԻՑԱՑ

թագաւորութիւնն։ Իսկ նոյն Յովհաննէս
ասէ. թէ Տրայիանոս ընդ հարկաւ արարս ըն-
Պարսս։ Բայց դեսպանքն որ երթան ոչ 'ի
բուն աշխարհ նոցա երթան. այլ 'ի խաչանն
որ կայ արտաքս դրանն յայնկոյս աշխարհին
Պարսից անդր քանզերին Կաւկասու որպէս
պատմեցին դեսպանքն Յուստինոսի և Հե-
ռակլեայ. և թագաւորն նոցա միշտ խաչան
կոչի. և Ղապուհ ոչքայն Պարսից հինգ հազար
կուսանս անդ առաքէր և Իրազոյ էր անուն
աշխարհին. և ձգին նոքա մինչև 'ի Թեոտոսի-
ա որ Թուրքաստան կոչին, ուստի գերիս
էած Մահմուտ ամիրայն 'ի Խորասան. յորմէ
ազգէ սուլթանացաւ Թողրուլաքն, և յետ
նորա Ալբասանն. և կան նոքա բուն օրինաց
աշխարհին իւրեանց. բայց միայն թողին
զմարդակերութիւնն զոր ունէին յերկիրն
իւրեանց. այլ մեք դարձուք անդրէն 'ի
կարգ առաջին։

Ի թուին Հայոց չորս հարիւր վեցասուն
թագաւորն Յունաց Կոստանդիա Մոնա-
մախն թագաւորեաց ամս երկոտասան, այր
մեծամիտ և առատաձեռն։

Իսկ զթագաւորութիւնն Տաճկաց առ-
նէր Ալբասան՝ յորում աւուր ընկղմեցաւ
Ջրով Նշնկայն, և մնաց տուն մի ուղղափառ.

Digitized by Google

ոչ ի ողորմածի առն, որում անուն էր Կիւ բակոս։ Եւ ի նոյն ամի եղեւ շարժ ահագին ի պահքն առաջաւորաց։ Եւ զկնի այնորիկ եղեւ աղմուկ յԱնտոք յեկեղեցականսն ի միջագաւառն վասն խնդրոյ ինչ. և կէսքն ի նոցանէ գնացին առ պատրիարգն երկաքնա կացն ի դատաստան։ Եւ նա արար զնոսա քաղ կեդոնիկս, և առ զեկեղեցիս ուղղափառացն զոր չինեալ էր ի վերայ գերեզմանի Ղուկա սու աւետարանչի. որպէս նախ քան զայն առեալ էին զսուրբն Պետրոս։

Իսկ ի զատկի տօնին էառ Տէր զվրէժն. քանզի մինչ կային ի պաշտամանն եղեւ որոտ յերկինս, և անկաւ հուր ի Տեառնէ. և այ քեաց զպատրիարգն և զքաղաքն ընդ նոսա. և ոչք մի անգամ ոչ կարացին հանել ի հրոյն. և գիտացին ամենեքեան, եթէ դա տաստան Տեառն է։ և ուրացողքն դարձան ի խոստովանութիւնս իւրեանց. և բազումք յօտարացն մերս եղեն, և փառաւորեցաւ Հաւատս մեր։

Իսկ ի լնուլ թագաւորութեանն Տաճկաց չորս հարիւր երեսուն ամ, պատառեցաւ իշխանութիւն նոցա ի բազում մասունս. և սկսաւ թագաւորութիւնն թուրքաց. զի ի գերեաց անտի զոր ած Ամիրամ

Digitized by Google

տին և բնակեցոյց 'ի պարարտ երկրի, և եկ
թող զնոսա 'ի կամս անձանց, աճեցին և հը-
պարտացան։ Եւ ոմն 'ի նոցանէ իշխանաց-
և թագաւորեաց որոյ անուն էր Տուղրիլ
բէկ. Գողլաբէկ ասացաք վերագոյն լատ-
լոյց կոչման. որ և մեծացաւ բարձրացաւ. և
եղեւ (1) գոռոզ մեծ և ախրեաց բազում աշ-
խարհաց և առաքեաց զօրս բազում 'ի սահ-
մանս Հայոց մինչեւ 'ի Մելտենի, և առին
առաւ բազում, և գերի. և դարձան վերին
կողմանքն. և կալաւ զնոսա ձիւն սաստիկ
'ի լերինս Սանոյ. և մեռան երեք հազար ան-
ձինք 'ի թուրքաց։ Իսկ գերիքն ազատեալք
դարձան. զի վարժ էին ցրտոյ և ձեան։

Եւ թագաւորն Յունաց Սոնամանի
վախճանեալ. ետ զթագաւորութիւնն դուս-
տրն նորա Թեոդոռն ամ մի. և յետ նորա
Միխայէլ ծերն ամ մի. այր պարկեշտ և ողջ-
հեցող. որ ոչ ուտէր զվաստակս այլոց. այլ
արուեստիւ ձեռաց իւրոց կերակրէր տարա-
գաւր գործելով վաճառէր։ Սա յորժամ ե-
տես թէ զօրացաւ Թուրքն. և տիրեաց Պարս-
կից և Մարաց և Պարեստանեայց և գոյր
աւերէր զերկիրն Յունաց, երկեաւ և անցոյց
զքրիստոնեական յայնկոյս ծովուն, և յամուր

(1) Մի օրի. Թագաւորեաց

տեղիս։ Յետ եկեալ Թուրքացն, և գրեալ զերկիրն Պոսալիայ և զԼեհն և զկաներն անմարդ (անմարդաբնակ), ապա բնակութիւն առեալ դադարեցին 'ի տեղւոջն. և վասն այնորիկ տրտնջեցին բազումք զոր աւրարս ծերն. բայց մարդասիրութիւն արարեալ խնայեաց 'ի հաւատացեալքն։

Յետ իշխան մի Կոմանոս անուն յինքն շարջեաց զթագաւորութիւնն. և Միխայէլն գերծեաց զդլուխն գնաց 'ի վանս. և Կոմանոս վարեաց զթագաւորութիւնն ամս երկու։ Յետ յետս նորա Կոստոս (1) Տուկիծն յերկրէն Պամֆիլագոնեաց (2). ամս ինն։ Սա զօրացեալ եկաց ընդդէմ Թուրքաց. և շինեաց զպարիսպն Սելևկիոյ։ Յետ եկեալ Բասիլարոս (3) զօրագլուխն Տուղրիլին առ զՀալեպ. և այս եղեւ սկիզբն առնլոյ քաղաքին 'ի խորին Ասորոց որ է կողմն յարեւմտից Միջագետաց։ Յետ տիրեաց 'ի Դամասկոսէ մինչեւ 'ի ծովն Ադրիանոս (4) և գնաց 'ի ծովն Պոնտոսի։

Յաւուրս յայսոսիկ շնչեաց սատանայ 'ի պատրիարքն Կոստանդնուպօլսի. և արար գործ մի սոսկալի հրեշտակաց և մարդկան։

(1) Երկու օրի. Կոստոս։ (3) Մի օրի. Բասիլարոս.
(2) Այլք՝ Պամֆիլագոնիայ. Մի օրի. Բասիլարոս։
Մի օրի. Պամֆիլագոնեաց։ (4) Երեք օրի. Ադրիանոս։

Digitized by Google

Քանզի գրգռեաց զԹագաւորն և զիշխանսն. և զխաչն և զհաղորդ և զմեռոն ուղղափառացն այրել եւ առ ոսն կոխել. և ոչ հաց ի անգամ և ձիթոյ պատիւ ոչ առնէին. և եւ տանել առ ինքն զպատրիարքն Ընթանաս քսան և հինգ եպիսկոպոսաք՝. և նախ քան զհասանիլն նոցա 'ի քաղաքն 'ի բարկութենէ Տեառն հարաւ, և պատառեցաւ իբրեւ զԸրիոս ապականիչն այն. և նախատիչն Քրիստոսի որդին կորստեան։ Եւ արարեալ քննութիւն հաւատոյ, Յոյնք պարտեալ լինէին 'ի Հոգւոյն. ըստ որում զայրացեալ սուրբն Ընթանաս անէծ զնոսա. և նոքա եւ առն զնա իւրովքն յաքսորս 'ի Բիոս կղզի. և աղաչանօք Թագուհւոյն դարձաւ յաթոռս։

Իսկ Տուկիծն վախճանեալ Թագաւորեաց Դէօժանն Ռոմանոս. և Թագաւորն Թուրքացց Տուղրիլն մեռաւ. և առ զտեղի նորա Ընթիսլան (1) որ և անձամբ եկն 'ի Հայս. և հնազանդեաց զնոսա առեալ զՇամշուտէ. և անցեալ յԱնի հարիւր հազարաւ առ զնա և տպան հազար այր 'ի փոս մի, և լոգացաւ արեամբ. և դարձաւ 'ի Ասիկուան։

Իսկ Դէօժանն կուտեալ անթիւ զօրս,

(1) Մի օրի. Ալփասլան։ Մի օրի. Ալփարսլան։

չոգաւ 'ի վերայ նորա. և եկեալ 'ի Կարս այ-
ցեաց զՀայոց եկեղեցին. և երդուաւ եթէ
յաղթէ Թուրքաց կամ ընչէ բնաւ զՀայս
կամ 'ի կրօնս իւր դարձուցանէ։ Այլ լուաւ
Տէրն և ոչ յաջողեցաւ նմա քանզի կոտորե-
ցաւ զօրքն նորա, և ինքն ըմբռնեցաւ 'ի
'ի գերութիւն։ Այլ լուեալ 'ի Կոստանդնու-
պօլիս Թագաւորեցուցին զՄԻխայէլն։ Իսկ
Դէօժանն զերծեալ աղաչանօք և ուխտա-
դրութեամբ յԱլփասլանայ կամեցաւ գնալ
'ի Կոստանդնուպօլիս. և կալեալ զնա հանին
զաչսն. և շինեաւ փառք նորա սնոտիք. եւ
պարծանքն 'ի չարն։ Յետ այսորիկ առա-
քեաց Ալփասլան զՍուլիման քուրորդի (1)
իւր 'ի Հայս. և իշխանացաւ նոցա և Թա-
գաւորեաց. որ և եմուտ 'ի գիշերի յՆնոտաք
և առ զնա, և զսուրբն Պետրոս զաւագ ե-
կեղեցին արար Աղկիթ։

Այլ 'ի սոյն ժամանակս ամիրայ մի պար-
կեշտաձեւ, աղօթասէր և քաղցրաբարոյ,
եկն 'ի Կապպադովկիայ զօրօք և հրամանաւ
Ալփասլանայ. էառ զՍեւասս և զԿեսարիայ,
և տիրացաւ և մեծացաւ. և այս եղեւ սկիզբ
բըն տանն Դանշմանայ. զի այս էր անուն
նորա։ Քանզի յորժամ զառաջինն ածան

(1) Եբիս. օրի. որդի իւր։

Digitized by Google

ոքա գերութեամբ 'ի թուականացուցին ու-
սան զորէնս Տաճկաց, և եղեն հաւանեալք
օրինացն Մահմետի յայնմ հետէ. սրոյ ա-
ռաւել վրէժխնդիր և նախանձաւոր ցուցա-
այլս այս։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս աստի սկսանի պատմութիւնս 'ի յառաջին կա-
թուղիկոս առ Հայս։

ՅԱՌՈՒՐՍ յայսոսիկ աղք յիսուն հայկա-
զունք նեղութիւն կրեալք 'ի Թուրքաց ե-
լին յանապատս սպառազինեալք և 'ի տեղիս
տեղիս առնէին վնաս Թուրքաց ծեծելով
զնոսա. և եկին յերկիրն Մարաշայ, և տե-
սին անդ այր մի համազգի իւրեանց. և խո-
սեցան ընդ նմա ըստ մտի և ասեն եկ ընդ
մեզ, և լեր մեզ իշխան և խնդրեսցուք մեք
զադարս աջողելովն Աստուծոյ. և լուա-
նոցա։ Այս էր նա անձնեայ. և գեղեցիկ ե-
բեսաք, և արիական հոգւով, և գնաց ընդ
նոսա. և էր անուն նորա Փիլարտոս, և մե-
տին յերկիրն Կիւլիկիայ. և ահա դեռ եւս
տիրեալ էր երկրին Թուրքն, և Թափեցին 'ի

Digitized by Google

նացանէ բերդ մի, և ամրացան անդ։ Իսկ զի կարճ ասացից առին զքովանդակ երկիրն դղեկօք և քաղաքօք լերամբք և դաշտօք, և մեծացաւ յոյժ Փիլիպոսն, և եղեւ ա նուանի. և եկ 'ի դուրս և առ զԱրաշ և զԱպլաթայն, և զԱնլոեանի, և զԲեսոն, և զԱրտիկառն, և անց յայնկոյս Եփրատայ. և և առ զՄուհայ և զայլս բազումս և սարսեցին 'ի նմանէ Թուրքն։

Իսկ լուեալ Յունաց Թագաւորին առաքեաց նմա պարգեւս և անուանեաց զնա Սեբաստոս. սակայն մինեանց ձայն տուեալ Թուրքաց ժողովեցան յամենայն կողմանց 'ի վերայ նորա և վանեցին զնա։ Իսկ առին ըղկէս երկրին 'ի նմանէ, և արարին հնազանդս։ Իսկ յետ այնորիկ չոգաւ 'ի Բաղդատ զի առցէ զաշխարհն իւր լեռվ, և տկարացաւ 'ի հաւատոցն։ Իսկ էառ գիր Իշխանութեան իւրում առաջնոյ, բայց ոչ յաջողեցաւ։ Բանզի յորժամ եկն առեալ էին զմնացեալ մասն նորա, և եկին ընդդէմ և հալածեցին զնա. որ և հառաչեալ 'ի խորոց սրտէ եկայ դառնապէս. և կորեալ զհերան չոգաւ յա յպաշխարութիւն և 'ի հաւատս իւր 'ի զանխուլ կրօնաստանս։

Իսկ Արաբացիքն որ մնային ցայն վայր

Տաճիկք կոչէին յանուն գլխաւորին իւրեանց որոյ անուն էր Տայաւ, խառնեցան 'ի Թուրքքն և եղեն ազգ մի վասն համակրանաւ թեան իւրեանց. և միմեանց անուամբ կոչէին։ Որ և 'ի Բաղդատ իշխանն էր յազգէն Մահմետի. Թողին զնա անդ և Խալիֆայ անուանեցին, որ է ինացորդ 'ի Մահմետէ, կամ յետ ինաց, և հնազանդեցան նմա երկոքին ազգն գրով և երդմամբ. զի 'ի նմանէ առցեն օրէնս և հրամանս, և պատուեսցեն զնա իբրեւ զՄահմէտ. և սմրացուցին զնա յոյժ։ Եւ յայնմ հետէ հրամանաւ սուլտանին որ 'ի Խորասան։ և 'ի Խալիֆայէն առնուին պատիւ ամիրայութեան թուեցեալքքն արժանաւորք, և գնային տիրէին աշխարհաց և գաւառաց. որպէս Ալուքմանն ամիրայ Թուրքք ազգաւ, գնացեալ տիրեաց Հայոց և կոչեցաւ Շահրի Արմէն որ է Թագաւոր Հայոց։ Եւ Արթուքն եկեալ 'ի Մէջագետս տիրեաց երկրին, ուստի կոչեցան Արթուքք և են ազգաւ Թուրք։

Իսկ Թագաւորն Յունաց Մէհիսէէն վաստատեալ 'ի Թուրքաց պղերդացաւ 'ի պատերազմէ, և զչարեալ իշխանն Ալիֆոս ապատամբեալ մարտեաւ ընդ Կոստանդնուպաքիս և առ զքաղաքն. և ակաւ կոտորել։

Եւ Միխայէլն առ զԹագն 'ի վերայ ձեռացն և գնաց ընդ առաջ նորա և ասէ. մա՛ զոր խնդրեսդ և արգել զսուրդ 'ի քրիստոնէից. և արար այնպէս. և չոգաւ Միխայէլն կրօնաւորեցաւ 'ի վանս. և զերկուս որդիսն նորա ներքինացոյց Նիկիփոր. և ոչ հաճեցան ընդ այն ոգբունիքն և ատեցին զնա։

Վասն որոյ ՊՐԱՑԵԱԼ Աւէքս ոմն Թագաւորեաց և արար Նիկիփորոյ. զոր և նա Միխայէլին արար. և Թագաւորեաց ամս քսան և ինն։

Այսոր ժամանակաւք մինչ տիրէին Թուրքքն Երուսաղէմի և ամենայն ծովեզերացն, իշխան մի Ընձիլ անուն եկն Երուսաղէմ յաղօթս. և առին 'ի նմանէ դահեկան մի որպէս՝ յամենայն ումեքէ աղօթաւորէ. և յետոյ այլ եւս պահանջէին. և 'ի չտալն զաւերէրդն՝ հարին զդլուխ նորա և խլեցաւ աջոյ ակն, և նորա առ եալ դնէր 'ի գրպանն և տանէր 'ի Հռոմ շրջեցուցանէր և շարժէր զնոսա 'ի նախանձ. և ելին անտի Կոմս առնք և ամբարձին զդլուխս իւրեանց. և կուռեցան առ նոսա զօրք բազումք. և եկին 'ի Կոստանդնուպոլիս. և պաշարեցին զնա զեւեթն ամ։ Եւ յամին եւեթներրորդի եղեւ շարժ Յնտիոք և անկաւ պուրճ մի

յարմատոց խլեալ և յայտնեցան 'ի նա պատ-
կերք պղնձիք 'ի վերայ պղնձի երիվարաց 'ի
կերպարանս և 'ի ձեւս փռանգաց. և բերին
առաջի Ամիրային և ժողովեալ զքաղաքն տե-
սանել թէ զինչ իցեն այնք. և ասացին թէ կուռք են 'ի հին ժամանակաց. և
հրամայեաց ամիրայն խորտակել զնոսա և
ցրուել. և եղեւ այնպէս։ Այլ լուաւ զայն
կին մի հին աւուրքք կուրացեալ և ասէ,
այն ոլիսմ էր դիւթական հնարիւք գործե-
ցեալ 'ի Յունաց, զի մի ելցեն փռանգքք յայ-
նըմ կողմանէ ծովուն. զի ահպ ոչ տեսէք
երկաթեղէն շղթայիւք կապեալ զնոսա։
Այլ իմացեալ Ամիրային յոյժ արտմեցաւ փան
քակման պատկերացն, և իսկայն հնազան-
դեալ զԿոստանդնուպոլիս անցին յայնկոյս
զօրքն փռանգաց. և եկին ՅԱնտաք և առին
զնա և էին ինն գլխաւորք. երկուքն 'ի նոցա
նէ յազգէ Թագաւորաց էին, որոց անուանքն
էին այսոքիկ Ռոճէլ, Պէամուն, Ռօշ-
լին, Կաղարան, Կոնդուիրի, Սալէկէս, Դէ-
բաստ։

Յայնժամ իշխանն Լեւոն հայոց Թէոդոս-
սոս սր կայր անդր 'ի Փիլարտոսայ հայկազ-
նայն եղեալ՝ առաքեաց առ նոսա. զի առա-
քեսցեն տէր քաղաքին Լեւոն հայոց։ Այլ ոչ

ուարձացան յոյժ և ասեն. օրհնեալ ես Քրիստոս Աստուած. նախ հաւատաց 'ի քեզ Լուսոյ. և դու. յառաջ նմա Թագաւորեցեր հաւատովքն արքային Հայոց և ապա Երուսաղեմի և այժմ զնա եւոուր մեզ կանխագոյն առհաւատչեայ Երուսաղեմի Թագաւորել քեզ Տէր հաւատացելովքս 'ի քեզ։

Եւ առաքեաց Կոնստիլ զեղբայրն զՊղատոնն. և տիրեաց Լուսոյ։ Եւ յետ այնորիկ Վասակ և Աղիւսան ամիրայն Աստաքայ. որ կային 'ի Թաքոտի եղին և փախեան. և գիպեցան նոցա արք երկու Հայ ազգաւ ա ղիսվանք սպանին զնոսա. և առեալ զգլուխս նոցա բերին առ Կոմնուենն. և յոյժ պատուեցան 'ի նոցանէ։

Այսու ժամանակաւ Սուլիման որ Թագաւորեալն էր յաշխարհին Յունաց սպանաւ 'ի Իկոնիոն. և Թագաւորեաց Խլիճասլան 'ի տեղի նորա։

Եւ լուաւ Սուլտանն որ 'ի Խորասան զելլն 'ի Փռանգաց և յղեաց ընդդէմ նոցա զՍարապատան հարիւր հազար հեծելովք, որ եկեալ պաշարեաց զՓռանգն Այնտաք և յոյժ նեղեցին զնոսա. որպէս ապաւինեալք Այստուած աղօթիւք անդադար գտին ըզգեղարդն Քրիստոսի յայտնութեամբ պա-

որիարգին 'ի հիմն եկեղեցւոյն պահեալ. և նովաւ զօրացեալ կոտորեցին զԹուրքն երեւելի հրաշիւք։ Եւ զահի հարան այլազգիքն և խրտեան 'ի ծովեզերացն և չոգաւ զօրն Փռանգաց. և առ զամենեսեան մինչեւ 'ի Յոպպէ և եհաս Յերուսաղէմ։ Եւ նա լցեալ էր Ընբակոք որք այն ինչ եկեալ Յիգիպտոսէ և առեալ էին զնա 'ի Թուրքացն, և սուր 'ի գործ արկեալ կոտորեցին զնոսա. և պատուականքն 'ի նոցանէ լցան 'ի տաճարրն. և հանեալ զնոսա արտաքս սպանին զամենեսեան, և պատրիարգն կալաւ փողոց մի և կոտորելով եհաս 'ի սուրբ Յարութիւնն և արեամբ մարդեցան ձեռք նորա ընդ սուսերն. և լուանայր անդ ասելով զաւլմոս զայս ուրախ լեցի արդար 'ի Տէր 'ի տեսանել զհատուցումն իւր և զձեռս իւր լուացեալ յարեան մեղաւորին. և նոյն ժամայն արար պատարագ և ասաց։ այսպիսի հաճոյական պատարագ Ընտուծոյ ես այլ ոչ մատուցի 'ի կեանս իմ։

Եւ թագաւորեաց Յերուսաղէմ Կոնոփրի ամս երկու. և զկնի նորա Ընպախտոյնն Պ ամս հնգետասան։

Իսկ Խլեճապան կամեցաւ երանել 'ի կողմ

(1) Մի օրի. Գաղատոյն։

մանս Մելտենայ, և լուեալ զառնուլն Յերուսաղէմի գաղարեաց։ Բայց Դանշմանն կու

ընդ Մելտենի զամս երիս այրելով զվաստակս նորա։

Յե խշան մի կայր անդ 'ի Փիլարտոսէն հետէ որ խոստացաւ գքաղաքն տալ 'ի Քլուանդն և ստեաց. և ետ զնա 'ի Դանիշմանենն տալով նոցա հաց և անասուն և ազատութիւն, և շինեցաւ քաղաքն. և յայնժամ 'ի տեղիս տեղիս իշխէին ոմանք յազգէն Հայոց 'ի Փիլարտոսին ժամանակաց։ Վասիլն ունէր զԲեռոն և զՎաչան. և որդիքն Հոթենի զվիւլկիայ։

Այսու ժամանակաւ անկաւ աղմուկ 'ի մէջ Տաճկաց և Թուրքաց 'ի Խորասան. և կուէին ընդ միմեանս և յափշտակէին ըզմիմեանց։ Բայց 'ի Կապադովկիա, և 'ի Բիւթանիա ոչ դոյր Տաճիկք, այլ Թուրք ունէին զնոսա. և ասային պատերազմ ընդդէմ Յունաց։ Իսկ Դանիշմանն յետ առնլոյն զՄելտենի անցելոյ երկու ամաց մեռաւ։ Յետ նէին Խլիճասլան. և առ զՄելտենի 'ի Սազուրէն (1) յորդւոցն Դանիշմանայ. և տիրեաց նմա։

Իսկ Սուլտանն Խորասանայ կոչեցաւ Խիլ

(1) Եբկա օրի. 'ի Սազուրէն։

աթաստին. և յղեաց զՀաւալի ընդդէմ Փռանգաց. և յորժամ եկն 'ի Ա՛օսլ Ա՛դրմիշ ամիրայն եւ ընդդէմ նորա. և կապանօք ած զնա 'ի քաղաքն և 'ի սակաւ աւուրս մեռաւ Ա՛դրմիշն և ազատեցաւ Հաւալի. և յղեցին Ա՛օսլցիք առ Խլիճասլան և խոստացան նմա զերկիրն. չոգաւ և տիրեաց նմա։ Իսկ Հաւալի դարձեալ զօրացեալ չոգաւ 'ի վերայ Խապուրին և առ զնա. և Խլիճն լուաւ և գընաց պատերազմել ընդ նմա. և յանցաւ գեռացն կորեաւ սատակմամբ. և խնդացեալ Հաւալի գնաց և առ զՍ՛օսլ և զՄ՛ծբին և ասեալ բազում գանձս դարձաւ 'ի Խորասան։

Իսկ զմահն Խլիճասլանայ լուեալ 'ի Թագաւորութեան նորա Թագաւորեցուցին զՏ՛օղասլան որդի նորա փոխանակ հօրն. և նստարար իւր երկու զօրագլուխս Ա՛ղալաքան (1) և զՄ՛ոզմիշն. էին նորա երեք եղբարք, որոց անուանքն Ա՛ղաղ և Շահնշահ և Ա՛ստուան. և Շահնշահ սպան զԱ՛ստուան. և զԱ՛ղաղն սպան Ա՛միրխազէ որդին Դանշմանայ զի ոչ կամէր տիրել նմա իշխանութեան հօր իւրոյ։ և այլ ոչ եւս պակասեաց Թշնամութիւն 'ի ազանէ նոցա։

Յաւուրսն յայնոսիկ եկն իշխան մի Փռ-

(1) Մի օրի. Զէլասան։

առանգաց երեսուն պատուական արամբք ա-
նուն նորա Կոնստանտիի Յերուսաղէմ յաղ-
թեալ. և այլ ոչ կամեցաւ դառնալ անդրէն
այլ եղեն կրօնաւորք. և կացին աղօթիւք և
սրբութեամբ Յերուսաղէմ։

Իսկ երկրորդ թագաւորն Յերուսաղէմի
Պաղտուէնն և պատրիարգն աղաչեցին զնոսա
եկանել 'ի պատերազմ ընդդէմ Թուրքաց զի
այն առաւել հաճոյ է ասեն Աստուծոյ պա-
տերազմել ընդ անօրէնսն 'ի փրկութիւն
քրիստոնէից. և ետուն 'ի բնակութիւն նո-
ցա զտաճարն և ապրանք 'ի ծովէ. և 'ի ցա-
մաքէ նաւս գեղերս և այգիս. և սովո-
րեցին այլք գալ և յարիլ 'ի նոսա 'ի նոյն կրա-
նքս և հաստատեցին իւրեանց կանոնս զի
կացցեն անարատ կուսութեամբ 'ի փառս
Աստուծոյ, և ունիցին զամենայն ինչ հասա-
բակաց. և չունիցին առանձնականս և ոչ
ինչ հագուստս կամ մարմնաւոր. և կոչեսցին
զինուորք Քրիստոսի կռուելով ընդ անօրէնսն
և մի բնաւ ընդ հաւատացեալսն։

Յուսեալ բանս այս 'ի Հռովմ և յա-
մենայն տեղիս, և ետուն նոցա միաբանու-
թիւնս բերդս և գիւղս և մուտս հարկաց
յերկրէ քրիստոնէից. վասն որոյ մեծացան
և փարթամացան. և եղեն զօրք առանձին։

այսու օրինակաւ եղեւ սկիզբն Փրերացն որ կոչին Լաստեթալք. քանզի ստացան տուն աղքատաց և հիւանդաց։ Եւ զկնի բաժանեցան այլք ոչք առանձնացեալք ստացին տուք մեղ բաժին զամենայն հնոտիս ձեր գրքով, և ետուն նոցա. և առեալ ծախէին զայն և հարստանային, և խնդրեցին հող 'ի ստացուածս պարտիզի որչափ կրէ գրաստ մի և կրէին զայն զքայգ և զցերեկ։ Եւ հաւյեցեալ տեսին զի ոչ կարէին դիմանալ երկոցունցն գնեցին դարձեալ զհինս իւրեանց և զհողն բազում գնոց տալով ոսկի արծաթ և գեւղս։ Եւ ետուն այլք միաբանութիւնս և նոցա. և կոչէն նոքա Ղամիլ (1) որ է աղքատատուն. և մեք զայս լուաք պատճառ նոցա։

Իսկ 'ի յազգէն Արթուխեացն յարեաւ ոմն Գաղակ անուն և թագաւորեաց և եղեւ անուանի և գնաց 'ի վերայ Կամախայ. և Մակուճակն (1) տէրն Կամախայ փախեաւ 'ի Տրապիզոն ապաստանեալ 'ի Յոյնս. և և առեալ 'ի նոցանէ օգնականս եկն 'ի վերայ Գաղակին. և հարան զոքքն Յունաց և ըմբռնեցաւ Մակուճակն 'ի Խաւռատան։ (2)

(1) Մի օրի. ունի 'ի լուսանցն Դամիլքիք։

(2) Ամենք՝ Մանկուճակն։

(3) Մի օրի. Խաւվռատն. Մի օրի. Խօռատն։

զոր վաճառեցին երեսուն հազար դահեկանի։

Ընդ այն ժամանակս աքքայազունքն ՝ա յոց որ յաւուրս Վասլի կայսերն եկեալ էին 'ի Վասպուրականաց և առեալ զՎեւաստ և զՎեռաբիա և զիսաւատանէքն փոխելով զերկիրն իւրեանց. որ և զկնի ժամանակաց պակասեցան 'ի նենգութենէն Յունաց և տկարացան. և մտին յերկիրն Կիւլիկեցւոց և բռնացեալ ունէին զքաղաքս դղեկօք և ամրոցօք Ռուբինեանքն կոչեցեալք. որք էին յազգէ երկուց արմատոց ազնուական և գոռոզ Թագաւորաց ՝այկազանց և Մենեքերիմանց խնամութեամբ խառնեալ ընդ միմեանս՝ որք զառաջինն Թագաւորեցին 'ի Վասպուրական յորում ժամանակի և Խաղբատունիքն Թագաւորեցին 'ի մեծն ՝այք. և այժմ դարձեալ սկսան Թագաւորել յերկիրն Կիւլիկեցւոց և Աւրացւոցն։

Նախ Ռուբէն սկիզբն արար զօրանալոյ նոցա. և ապա Կոստանդին և Թորոս և այլք մի ըստ միոջէ։ Ի հինգ հարիւր ամի իշխանութեանն Տաճկաց դարձեալ Թագաւորեաց Աստաղ (1) Տաճիկ 'ի վերայ Թուրքիայ, և առնա. ժողովեցան ազգայինքն իւր. և լուաւ Խրիստիատին Յունանն 'ի Խորասան, և եկ

(1) Մի գրի. Աստաֆ։

ամենայն ուժով 'ի վերայ նորա. և վանեցաւ առաջի նորա Աստաղայ և ըմբռնեալ ապա նպա։ Զի կէսք աստ ասեն բառնալ թագաւորութեանն Տաճկաց զկնի եւթանասուն ամի իշխանութեանն Թուրքաց։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս կռուելոյ արագիլք և խորդք։

Զ ԱՅՍՈՒ ժամանակաւ եղեւ մեծ պատերազմ հաւուց. քանզի խորդք և արագիլք զբաղում աւուրս ժողովեցան յաշխարհն Ամթայ 'ի տեղին՝ որ կոչի Թելհուամ. և ապա յերկաքանչիւր կողմանց եւթն եւթն դեռ պանս արձակեալ առ միմեանս զերիս աւուրս. և ապա բախեցին զմիմեանս մեծամեծ ճչիւնք և կռուեցան յերրորդ ժամէ աւուրն մինչեւ ցիններրորդ ժամն. և անկան յերկոցունց կողմանցն բազումք յոյժ. և ապա պարտեցան արագիլքն և փախեան. և խուզաղաղացաւ պատերազմն. և զպատճառն գիտէ արարիչն։

Յորում ժամանակի մեռաւ Գաղակն. և լուեալ Ամիրսաղէ որդին Դանշմանայ զա-

Digitized by Google

գաւ և առ զԱՆելտենի. և արար նոցա դիւ-
թութիւն, զի Պաղակն ներէր զնոսա յոյժ.
և խաղեփայն առաքեաց նմա թագ և անը-
ւանեաց զնա Անելեք խաղի, թագաւոր
Հիւսիսոյ։

Իսկ Յունաց թագաւորեաց Յովանէ և
առ զԿաստամանի և բերդս երկու. և չո-
գաւ Անելեք խաղի, և առ 'ի ձեռաց նորա
դարձեալ։ Իսոյն աւուրս (1) Օանկի ամի
բայն Անալայ եկն և առ զՀալապ. և ետուն
'ի նա սիրով վասն համբաւոյ նորա թէ քաղ-
ցրը. և արդարադատ է։ Եւ 'ի նոյն ամի
առաքեն դարձեալ Անելեք խաղեայ պարա-
գեաս խալեփայն և խիսթատինն չորս ա-
լամ սեաւ, և շղթայ մի (ոսկի) պարանոցին
և դաւսզան ոսկի և նաղարայ և փրոս։ Եւ
յորժամ բերին զայս, գտին զնա մեռեալ.
և ետուն զպատիւն որդւոյ նորա Անահմու-
տին. և արկին շղթայն 'ի պարանոցն և կա-
պանոս ոսկի զէնս յոտսն. և հարին զնա գաւա-
զանաւ երկոտասան անգամ, նշանակեալ այ-
նու զՀնազանդութիւն. և քարոզեցին զնա
Անելեք այր պարկեշտ 'ի վարս Տաճկաց զի գի-
նի ոչ ըմպէր և անարբապէս ոչ գնայր. սակայն
ատէր զքրիստոնեայս, և ներէր զնոսա։

(1) Մի օրի. 'ի նոյն ամի։

Իսկ Օանկի ամիրայն արարեալ պատերազմ ընդ Աղթուխիան հնազանդեաց զնոսա։

Այսու ժամանակաւ եկանէ պատն Հռովմայ և գայ Յերուսաղէմ. և անտի Յունաստան. և մատեան առ նա Յոյնք քաղկեդոնիկք և սկսան կատակել զՅակոբիկ Ասորիսն և ասեն. խաբեբայքս այս ատեն զմեզ և զժողովն Քաղկեդոնի, և պատուեն զՊարսամաւ որ անէծ զժողովն. և ունին զաջն նորա ոսկի գաղտոցաւ և պատրեն զմարդիկ ասելով նշանս առնէ։ Եւ յորժամ աղաչեմք ցուցանել մեզ՝ ասեն ոչ կարեմք. զի մի լիցի ասեն հեղեղ և կարկուտ. և զայս ասէին և ծիծաղէին։ Եւ հրամայեաց պատն բերել զաջն 'ի սուրբն Պետրոսի յեկեղեցին եւ երթեալ բերին 'ի լեռնէն. և ասաց բանալ. և ասեն մեք ոչ իշխեմք, բաց դու հայր. և յորժամ բացաւ, միգացաւ երկինք և եղեն ձայնք և որոտմունք անձրեւք, և կայծակունք և կարկուտ մեծամեծք, և կամէր տապալել զքաղաքն. և անկան յերեսս պատրիարքն և ամենայն քաղաքն եւ անդէն անփոփեցին զաջն. և լուիւն մեծ եղեւ՝ ապա դադարեաց ինքեան. և յամին յայնմիկ մարախ ուտէր զբանահմանն Աղուանքու. և ասաց պատն պատրիարք հսկումն վասն մարախին դուք Ասորեքդ,

և հաւատամ եթէ ողորմեսցի Տէր աղաչանօք սրբոյն որ ապար զնշանս զայս մեծ։ Եւ ժողովեալ ապա ուղղափառացն արարին աղօթս յայգուէ մինչեւ յառաւօտն. ապա առեալ զաջ սրբոյն ելին արտաքոյ քաղաքին հանդերձ կենդանիր նշանաւն և զօրութեամբ բրն Քրիստոսի և աղօթիւք ուղղափառացն. և միջնորդութեամբ և բարեխօսութեամբ սուրբ աջոյն միահաղոյն ամենայն բազմութեան մարախոյն վերացեալ պնաց և լցաւ 'ի ծովն։ Եւ փառաւորեցին զԱստուած և զսուրբն Պարսամաւ։

Եւ եդ նզովս պասն եթէ ոք իշխեսցէ հայհոյել զնզովողն Բաղկեդոնի ժողովոյն։ Այլ համարձակ նզովեն. զի ահա որ քննէ ըզծածուկս Աստուած հանգուցեալ է յսկերս նոցա, և մեք ոչինչ կարեմք ասել առաջի նորա. և խնդրեաց զչարախօսս սրբոյն զի պատժեսցեն, և ոչ գտան (1). զի փախուցեալ էին. և ասաց մի ընդունիլ զնոսա 'ի քաղաքս զի պատճառք փնասու եղեն մեզ ասէ։ Այլ

(1) Ասա՝ այլ ոչինչ։ Երբեմն պոքաս ուներլ. յոյսդ ղիրոյն դընենք ասա։ որ է. և եդ նզովս պասն. եթէ ոք իշխեսցէ հայհոյել առցէ զնզովս Քաղկեդոնի ժողովոյն. զի ահա ասէ որ քննէ զծածուկս Աստուած հանգուցեալ է յսկերս նոցա. և մեք ոչ ինչ ունիմք ասել առաջի նորա։

դուք անդամքդ Քրիստոսի խաղաղութիւն կալարուք առ միմեանս առաջի Աստուծոյ. և տուք Գոհ լերարդ միայն ընդ անօրէնսն։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Ցաղագս Գեղարդեանն Քրիստոսի։

Եւ յետ այնորիկ բերին զգեղարդն Քրիստոսի անուանեալն, և ասաց. զքուն գեղարդն Քրիստոսի գիտեմ, եթէ Թադէոս առաքեալն 'ի Հայք տարաւ. այս ոչր է. և գտաւ պատմութիւն զնմանէ որ գրեալ էր, թէ ազգն Հրէից որ բնակեալ էր 'ի Տիբերիա՝ յաւուր ուրբաթու խաչելութեանն Տեառն գողացան մանուկ մի և տարան յա նապատ, և խաչեցին զնա և փշով պսակեցին և ծիրանի և կարմիր զգեցուցին, և գեղարդեամբ խոցեցին զնա. և զամենայն որպիսութիւն կատարեանայ (1) Տեառն արարին նմա. նոյնպէս և հրաշք Տեառն (2) մերոյ կատարեցան 'ի վերայ մանկանն զի խաւարեցաւ

(1) Երեք օրի. կապանաց։ Մի օրի. զամենայն կատարեանս որպէս արարին Տեառն։

(2) Երկու օրի. հրաշքն որ 'ի վերայ Տեառն մերոյ. կատարեցաւ 'ի վերայ մանկանն

արեգական և շարժեցաւ երկիր և պատառեցան վէմք և արիւն և ջուր բղխեաց 'ի տիգաթոց կողէն. և գիտաց ամենայն աշխարհն Փիւնիկեցւոց զգործեցեալն յեղեալնը-շանէն. ելեալք 'ի խնդիր և յայտնեցան իրքն և փախեան Հրեայքն յիշխանութիւնս Տաճկաց. և առաքեցին առ քրիստոնեայսն զնիթոզսէն նոցա զմեծ մեղսեան. և նոքա խոստովանեացին զԲրիստոս Աստուած ճշմարիտ քարոզեալ 'ի մարգարէից, և խաչեալ 'ի փրկութիւն աշխարհի։

Եւ երդուան նոցա քրիստոնեայք և կոչեցին (զնոսա) անդրէն. և մկրտեցան առհասարակ և եղեն քրիստոնեայք յոյժ բազմութիւն հաւատացելոց 'ի փառս Բրիստոսի. և այս է գեղարդն այն ուստի լինի 'ի սմանէ մեծամեծ սքանչելիք. և լուեալ պապսուն զգրեալն հաւատոց. և փառաւորեաց զԱստուած և երկրպագեաց նմա։

Եւ առ ժամայն եկն զբոյց թէ եղև շարժ ահաւոր 'ի Խորասան, և շատ վնաս եղեն. և փլաւ մզկիթ մի, և սպան ութ հազար այր և կին, որք եկեալ էին յաղօթս, և 'ի լուր քարոզութեան իւրեանց. քանզի ուրբաթ էր օրն։

Ի հազար չորս հարիւր յիսուն և հինգ

թուին Ս. ոտրոց, և Հայոց հինգ հարիւր եւ թանասուն և մի՝ մեռաւ Թագաւորն Յունաց Իսվաննէ՝ ի Կիւլիկիա. և Թագաւորեաց կրտսեր որդի նորա Մանիկն որ կայր առընթեր. և երթեալ ի Կոստանդնուպօլիս հնազանդեցաւ նմա երէց եղբայր նորա և քաղաքն արքունական։

Եւ ի նոյն ամի մեռաւ Թագաւորն Շրուսաղէմի. և Թագաւորեաց որդի նորա Պաղտոյնն տղայ հասակաւ. և վարէր զիշխանութիւնն մայրն։ Եւ ի նոյն ամի մեռաւ ամիրայն Խարբերդոյ Տաւուդն որ էր աբիսուխի ազգաւ. և առ զտեղի նորա Ղազար (1) ասլան որդի նորա։ Ի հինգ հարիւր եւ թանասնասուն և երկու թուին Հայոց Օանկի ա Թապէկն էառ զՄՒՌՀա՝ ի Զաւշեան (2)։ Եւ զկնեի ամի միոյ սպանաւ Օանկի. և առ զտեղի Նորուտին որդի նորա տէրն Մօսլայ։

Յաւուրսն յայնոսիկ շնչեաց տաստանայ ի պատրիարգն Կոստանդնուպօլսի. և ասացեալ է թէ Քրիստոս կախարդութեամբ առնէր զընչանան զաքանչելիսն և զարուեստսն. և առաքեալքն այնու հաւանեցուցին զաշխարհս։ և յոլովք հաւանեցան նմա. և Թագաւորն

(1) Երկու օրի. Ղարա ասլան։

(2) Մատթէոս Ուռհայեցի Ճօսլին անուանէ։

սպան զնոսա։ Բայց աղանդն մնաց մինչեւ յաւուրս մեր չարագոյն քան զամենայն հերձուածսն։

Իսկ Ղ. Օշլինն տէրն Ռուհայոյ արար ժողովս զկնի մահուանն Ս. անկեայ և չոգաւ մնաւ 'ի գիշերի յՌուհայ և առ զիւրն. և իմացեալ Թուրքացն ձայն եղուն միմեանց և եկին պաշարեցին զնա։ Եւ զարհուրեցան Փռանգքն յերեսաց նոցա և անգիտացան անգիտութիւն մեծ կորստեանն Ռուհայոյ. քանզի հանին զքրիստոնեայս բռնութեամբ անցուցանել զնոսա յայնկոյս գետոյն Եփրատայ. և խաղաց 'ի վերայ նոցա Թուրքն, և սպան 'ի նոցանէ երեսուն հազար, և առ գերի վեշտասան հազար. իսկ զլիով զոյցն յայլ պատմագիրս գտցես։

Բայց լուր 'ի տեղւոջ աւերմանն Ռուհայոյ և զլինութենէ նորա թէ ով շինեաց զնա, և զինչ պատճառաւ։ Լսեն գիրք ըզամանէ թէ Ովրէդ էանուն սորա. զոր շինեաց Ներփրովթ զկնի ջրհեղեղին. և ըստ մեր լեզուիս կոչեաց Ուրհաւ՝ որ է գեղ ըստ Բաղդէացւոց. քանզի ուրն գիւղ լսի, և հաւն քաղդէացի. որպէս և Նեղքիսեդեկ որդի Բամայ շինեաց 'ի Պաղեստինէ քաղաք, և կոչեաց զնա Ուրիշլէմ. որ է գեւղ խա-

զաղուռթեան. քանզի ըստ Աստուծոյ լեզուիս քա-
ղաք ոչ կարէ ասել, այլ գիւղ։

Իսկ զՇինեաղն ի Նեբրոմլթայ քաղաքաց Աենեքերիմ թագաւորն Աթուրացւոց, և մնաց աւերակ մինչեւ յաւուրս Աղեքսանդրի մակեդոնացւոյն. որ և ի տեսանելն ըստ տեղին ասաց ցԱելեւկիոս քարեկամ իւր. սիրեմ զտեղիս զայս, շինեա՛ զսա քաղաք. և զկնի մահուանն Աղեքսանդրի շինեաց, և կոչեաց Եդեսիայ, որ ասի Մակեդոնացւոց լեզուաւն սիրեմ զդա. զի Աղեքսանդր ասաց՝ սիրեմ զդա, շինեա՛ զսա քաղաք։ Իսկ Յոյնք կոչէին զնա Օրտաւ. (1) Մակեդոնիայ որ պէս ասել Աստուծոյ Մակեդոնիա։ Եւ զկնի երեք հարիւր ամի Աբգարիոս ազգայ Հայոց և Աստուծոյ որդի Արշամայ (2) եգիտ զնա պակասեալ (3), և նորոգեաց զնա. և հարս նացոյց Քրիստոսի դշխոյ սրբուհի։ Եւ ըստ կնի նորա և որդւոյ նորա եղեւ քնգ Հռոմովք ամն երեք հարիւր։

Իսկ նահատակք որք ի սմա եղեն այսքիկ են Շմոնի, Կորի, Հապիպ (4) Կոզմա,

(1) Մի օրի. Սաւտրաւ. Մի օրի. Սարաւ։ Մի օրի. օրտաւ։

(2) Երկու օրի. Աշմայ։

(3) Երկու օրի. ապակնեալ։

(4) Երկու օրի. Հաբպիպ։

Դամիանէ, Դուրիանիայք և այլք բազումք ընդ նոսա։ Իսկ առ Կոստանդիանոսիս չինեցան վանորայք 'ի Լերինն բազմաթիւ։ Իսկ Յուլիանոսի ոչ հնազանդեցաւ քաղաքս այս։ Իսկ առ Վալենսիս ոչ ընկալաւ զՏէր ձուածս նորա՝ վիշտս կրեալ վասն անուանն Քրիստոսի ոչ սակաւս։ Իսկ առ Մարկիանոսիս ոչ 'ակատայաւ. բայց զկնի սակաւ ինչ տկարացաւ յանզգամ առաջնորդէ. և եմուտ ընդ ձեռամբ Տաճկաց Յիմնդէ հեռէ ամս չորս հարիւր մինչեւ 'ի տիրելն Թուրքաց։

Իսկ արդ սակաւ ինչ տիրեալ 'ի Փառանգաց լցաւ աղետիւք և սուգ նստոյց զսրդիան Միոմնի. և աւաղ կորսեան նորա. և Տէր տեսցէ զնա յաւետիան իւր։

Ի հինգ հարիւր եւթանասուն և չորս թուին Հայոց եկն պարսն Թորոսն 'ի Կոստանդնուպօլսէ զերծեալ 'ի գերութենէն զկնի մահուան հօրն իւրոյ Լեւոնի. զոր տարեալ էին Յոյնք չարութեամբ իւրեանց տարաւ գլուխ առնել զնա 'ի Հայրենեացն իւրոց յերկրէն Կիւլիկեցւոց. զոր ստացեալ էր զնա արամ և աղեղամբ. և եկն հետեւակ առ Տէր Աթանաս Մետրապօլիտն Յակոբիկ Ասորոց, և ետ նմա զերիվարն իւր. և ետ

երկոտասան այր, և ած զնա 'ի բերդն զոր Ամուտայն կոչեն 'ի գիշերի. և վաղիւն կապեաց զնշանակս իւր, և ցցեաց. և տեսին մերձակայքն և ծանեան եթէ գթութիւնն Քրիստոսի եհաս քրիստոնէից, և խնդացին յոյժ ուրախութիւն մեծ. և տարածեցաւ համբաւ նորա։ Իւ զի կարճ ասացից. զկնի սակաւ ժամանակի դարձեալ տիրեաց ամենայն երկրին։ Իւ յայնմ հետէ անկաւ ահ Տեառն և երկիւղն նորա 'ի վերայ ամենայն Թուրքաց և Յունաց և սարսէին 'ի նմանէ. մինչ յաւուր միում երթեալ Ամաբան երկոտասան հեծելով առ Ղ օսլին. և դիպեցաւ բազմութիւն զօրաց Թուրքաց եկելոց յաւար և յասպատակ. և եհար 'ի նոցանէ Աստուծով յաջողեալն այն երեք հազար անձինս. և դոզացին 'ի նմանէ ամենայն մերձակայ թշնամիքն։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաղագս առման Պային Հռովմայ (Հռոմկլային)։

Ի նոյն աւուրս գնաց Ղ օսլին 'ի վանքն Սօր Պարսամաւ, և Լիլին ընդ առաջ նորա քահանայքն աւետարանաւ և խաչիւ-

Digitized by Google

որպէս քրիստոնէի, և տարան զնա յեկեղեցին։ Իսկ նա էառ զամբոցս վանացն, և կացոյց անդ պահապանս 'ի զօրացն։ Եւ 'ի նոյն ամի ել յորս 'ի միում աւուր. և հեծեալն ցրուեցան 'ի նմանէ. և երիվար նորա եհար զնաբնդ ծառ և անկաւ 'ի վայր. և կորոյս զքսելն. և ելին 'ի վերայ նորա երկու թուրք և առին տարան զնա 'ի Հալապ յանձնօթս, և վաճառեցին զնա հրէի միոջ. և ապա խմացան և տարան առ Նորատինն և եդ զնա 'ի բանտի և էառ զամենայն երկիրն նորա. զԱզազն, զԹլուաշարն, զՄրն, զԱրաբան, զԱրաշ, զԷհեանի, զՀատանմնուր (1), զկարկառն և զկախթայն. և մնաց միայն Հռոմկլայն՝ ուր կայր կինն նորա երկու դստերօք. և կուրայուցին զՕշլենն և մեռաւ անդէն։

Եւ կինն այն առաքեաց առ Տէր Գրիգոր Կաթուղիկոսն Հայոց որ կայր 'ի Ծովքն, զի եկեսցէ նա նստցի 'ի բերդն. և նա գԷ նստցէ առ ծնողն իւր յայնկոյս ծովուն. և է նորա (2) որդի մի, թէ իցէ կենդանի և գայցէ, 'ի նա տացէ. և թէ ոչ՝ լաւ իցէ քեզ լինել, քան թէ առցէ թուրքն։ Եւ

(1) Երկու օրէ. Հարանաստուր։

(2) Երկու օրէ. և երբ նորա որդի։

եկն Կաթուղիկոսն և եղեալ անդ միաբանեալ և կրն որդին Ղազարին և հաւանեցուցին զբաժանել. և դարձուցին անդրէն։ Բանզի և ինքն ոչ հաւատայր եթէ կարէ ունել զնա 'ի մէջ թուրքաց. և խնամօքն Աստուծոյ եղեալ նա նոցա ամենայն յաւիտենական։

Ի նոյն ամի յառաջ քան զհամբարձումն միով աւուրբք եկն անձրեւ 'ի Պաղեստինէ, և լինէր 'ի նմա կաթիլք արեան. 'ի Աստիս ամենայ յառաջ ցող առուստուն որ թէքանէր Յերուսաղէմ արիւնագոյն լինէր։ Եւ 'ի Յունիս ամսեան եկն ձիւն կարմիր. և այս ամենայն գուշակէր զհեղումն արեանն, որ լինելոց էին յառնուալն Յերուսաղէմ։

Ի թուին Աստուծոյ հաղար չորս հարիւր վաթսուն և չորս։ և Հայոց հինգ հարիւր ութսուն՝ զարգացաւ Թագաւորն Պաղեստինու Պաղտոյին, և կամեցաւ զրկել զմայրն 'ի պատուոյ ազգայութեանն. և նա ապարդ զոմանս զօրացն ընդ ինքեան. և մտեալ 'ի գուրջ Դաւթի ամրացաւ. և որդին մտրտեղեալ կուուէր ընդ նմա. և եղեւ զի խոսեցաւ մայրն բանս խանդաղատականս ընդ որդւոյն, և ելաց Թագաւորն, և երդուաւ մօրն. և եհան զնա անտի, և եւ զՅերուսաղէմ 'ի հրամանս մօրն. և ինքն առեալ զօրս չա-

գաւ 'ի վերայ Ասկաղոնի Փղշտացւոց, եւ եդեալ մեքենայս փղոյց մասն ինչ 'ի պարսպ պէն և կուտեցան 'ի փլեալ տեղին քան հազար սպառազինեալ Տաճիկ և. ասէին. այս է քաղաքն որով Մահմետ զօրացաւ 'ի սկիզբն հաւատոյս մերոյ. քաջ մարտիցուք և բաց 'ի սմանէ զարեւ մի տեսցեն աչք մեր։ Եւ չորս հարիւր հեծեալ 'ի Փռանգ գային դիմեցին 'ի վերայ քան հազարացն. և մի ոք ոչ դարձաւ. այլ անդէն մեռան. և խստագոյն ստրջացաւ Թագաւորն զօրքն և սգային։ Իսկ քաղաքն զովանդակ գիշերն ջանային շինել զիլանծն. քայց իշխան մի Սիրունատ (1) անուն մահաւ չափ ջանացեալ ոչ ետ շինել զնա.

Իսկ 'ի լուսանալ առաւաւտուն Թագաւորն էստ. զիսաչն 'ի ձեռնն, և դնացեալ մերձ առ պարիսպն ձգեաց զնա 'ի մէջ քաղաքին և ասաց. ահա Թէ գոյ քրիստոնեայ, և է յոք հաւատ խնդրեսցէ զնշանն Քրիստոսի զնեղկեսցն արեամբն Աստուծոյ. և խակայն բարբարեցան սիրտքն Քրիստոսի զօրն փռանգաց. և յահան քԹԹեն մոին 'ի քաղաքն յամենայն կողմանց. և ոչ ոք գիտէր

(1) Մի օրի. Սիրնատոյ Սիրախոս։
Մի օրի. Սիռնատ։ Մի օրի.

թէ մարմին զգեցեալ իցէ և առին զքաղաքն, և սպանին անդ վեշտասան հազար անձինք և առին գերի բազում. և սակաւք 'ի նոցանէ մնեալ 'ի նաւ փախեան յԵգիպտոս. իսկ զՄիհռնաղուն արարին տէր Ընտիրքու և եւ տուն նմա զկին Պաւեայ։

Ի սոյն ժամանակս մեծ իշխանաց իշխանն Թորոս որդին Լեւոնի որդւոյ Կոստանդեայ որդւոյ Թագաւորին Ռուբէնայ ել յերկիրն Կապադովկացւոց 'ի վերայ Թուքքայ, եւ դարձաւ բազում գերութեամբ և աւարաւ և արիական անուամբ։ Իսկ 'ի Կոմն Թագաւորեաց Ասուգն յորդւոյն Խաքանայ. և ետ զդուստրն իւր Ալպուբասլանայ Դանշմանեանց. և նա հպարտացեալ կամեցաւ մըտանել 'ի Կիւլիկիայ. և մերձ երթեալ երկրին ոչ համարձակեցաւ. քանզի դարան գործեալ էր նմա 'ի ներքուստ մտից երկրին. և դարձաւ ամօթով անդէն.

Եւ Թագաւորն Յունաց բարկացաւ 'ի վերայ Թորոսին զի առ զամենայն երկիրն Ֆ ձեռաց Յունաց, և առաքեաց զՆդրոնիկոս զօրագլուխն իւր ծանր ամբոխիւ 'ի վերայ նորա։

Եւ մեծն Թորոս առ ինքն հաւաքեալ բազմաց իւրոց ընդ առաջ նորա. և պա-

տահեցան միմեանց առ ընթեր Տարսոնի. և կռուեցան. և օգնեաց Աստուած Հայոց, և պարտեցան Յոյնք առաջի նոցա. և անկան 'ի նոցանէ երեք հազար անձանց, և առին գերի բազում 'ի պատուաւորացն Յունաց և արգելին 'ի բանտս և վաճառէին մեծամեծ ստացուածոց. և առեալ զկաղմուած բանակի նոցա և զգինս գերեցան, և փարթամացաւ յոյժ մեծն Թորոս պահանջով զՏեառնէ, որ ապար վերժինդրութիւն նմա 'ի թշնամեացն իւրոց։

Ի սոյն ժամանակս որդիքն Օշանկեայ որ 'ի Աղոլ միաբանեցան ընդ ամիրային Թուրքաց. և ապստամբեցին 'ի Խալիփայէն. և նորա լուեալ եկն 'ի վերայ Աղոլայ և ոչ կարացաւ առնուլ զնա. և դարձաւ 'ի վերայ Թուրկմէնայ, և խոստացաւ զնա աւար զօրացն. և առին զնա և հարին յաւարի և քակեցին. և զերդն տուին 'ի Շմատին ամիրայն քաղցրաբարոյ և քրիստոնէասէր, որ փուրթով չինեաց զքաղաքն նոյնպէս և զեկեղեցին. և կայր 'ի հնազանդութիւն Խալիփային։ Իսկ Նորատին տէրն Հալպայ չոգաւ և առ զԻամմակոս երդմամբ, և կորոյս տարս զմեծատունն որ 'ի նմա և քակեաց զաղիւսաշէն պարիսպն, և չինեաց քարամբք։ Յայնմ ժամանա-

կն հիւանդացաւ Տամբուաշն արքունական
բրն Աներտնայ. և բժիշկք ոչ կարէին հնար
գտանել բժշկութեան, և յուսահատեալ
թողին զնա և գնացին և նա ապաւինեա-
ցաւ յաղօթս քրիստոնէից և առաքեաց 'ի
վանքն Աղրաբայի. և բերին զաջ նորա. և
նա տեսանէր այր մի հրեղէն, զի գնայց կա-
ցաւ զձեռանէ նորա զաջոյ և ասէ ցնա քրի-
ստոնեայքն առաքեցին զիս առ քեզ. զի
մի մեռցիս. և առ ժամայն ողջացաւ, և փա-
ռաւորեաց զՔրիստոս, և շատ միսիթարու-
թիւն արար քրիստոնէից և գիւրութիւն
եկեղեցւոյ 'ի Աներտնին 'ի Լսեալին, 'ի Աղ-
փարզինն, յԱսալայն և 'ի Տարաս. և յայլ բա-
զում տեղիս որ ունէր ընդ ձեռամբ. և զնոցն
պատուիրեաց պղծոց իւրոց՝ որպէս բաժա-
նեաց զիշխանութիւնն իւր. զԱղփարզինն
և զԱներտինն ետ 'ի Նամբտինն, եւ զիրա-
ռան ետ 'ի Ղամալադինն, և զՏարաս ետ 'ի
Շամնատինն։

Յայնմ ժամանակի թագաւորն Յունաց
քաւ եթէ եկեալ է Աստուն տուլմանն
առ Միջագետաց, և առաքեաց առ նա հրեշ-
տակս պատարագաց, զի մտցէ 'ի Սիւլիկիայ
'ի վերայ Թշնամւոյ իւրոյ Թորոսին. և գնաց
ամենայն ուժով իւրով։ Իսկ նոքա խոնա-

Digitized by Google

առաքեամբ խոյս եւտուն և գաղթեցան յա-
մուրս իւրեանց, և զօրքն Հայոց նստան առ-
լերամբն. և սուլտանն ինքա՛ւ ի վերայ Թ՝ղին
Համդնոյ, և եհար զնա տէր Աստուածն քրիս-
տոնէից ոչ հրեղէն զինուք որպէս երբեմն
զզօրսն Սենեքերիմայ, և ոչ ի ձեռն
կնոջ որպէս զՀոլեմիեռնէս, այլ ձանձիւ
և մժղկաւ. որք և ասէին բազումք թէ այս
հարուածն է խստասրտին Փարաւոնի. զի
ամառնային էր եղանակն և մեռանէր մարդ
և անասուն, և դարձան ի փախուստ. և ի
ջին զօրքն Հայոց ի լեռնէն և կոտորեցին
զյաղթեալ մասն նոցա, և առին աւար զմեծու-
թիւն անօրինացն, և լցին զառունս իւրեանց
գոհանալով զԱստուծոյ։ Իսկ Աստուան մե-
ծաւ ամօթով դնացեալ ի Կոմն և կրկին
հարեալ ի տեառնէ, մեռաւ ի Թուին Աս-
տրոց հազար չորս հարիւր վաթսուն և վեց։
և Հայոց հինգ հարիւր ութսուն և երկու.
և Թագաւորեաց որդի նորա Խլիճ ասլանն.
և էին նորա երկու եղբարք զմին եսպան
դեզոք. և միւսն փախեաւ յեղը ծովուն, և
ամբացաւ անդ ի բերդն զոր տուեալ էր
նմա հայրն իւր նախ քան զմահն. որոյ ա-
նուն էր Շահնշահ և էր փեսայացեալ տանն
Դանշմանայ. և վասն այնորիկ Աշուլ ասլան

Digitized by Google

մարտ եգեալ կռուէր ընդ Խլիճ ասլանայ, և առաքեաց առ Յորատինն որ եկն և առ զՓարզման և զՆեթափ։ Իսկ զԵգիպտոս դեռ եւս Տաճիկք ունէին ՚ի Մահմետէ և այսր, և ոչ կարացին տիրել նմա թուրքք. և լինէր նոցա Խալիփայ յազգէն Ալեայ, յորմէ հետէ և Բաղդատայն նստաւ։ Եւ յայսմ ժամանակս մեռաւ Խալիփայն Եգիպտոսի. և էր որդի նորա Ալբաս անուն՝ որ կամեցաւ առնուլ զտեղի հօրն՝ բայց զի իշխանն Եգիպտոսի ոչ կամէր, էառ Ալբաս զամենայն գանձս խալիփայութեանն, և եհան երեք հազար ծառայ Հայ ազգաւ, և կազմեաց զնոսա զինուք և առաքեաց զնոսա ՚ի գիշերի և կամէր երթալ առ Յորատինն։ Եւ վաղիւն պնդեցան զհետ նոցա զօրքն Եգիպտոսի և հասան նոցա։ Եւ դարձան ազատեալ ծառայքն Հայազունք և հարին զնոսա ՚ի հարուածս մեծամեծս. և մնացեալքն փախեան անդրէն և գնացեալ ՚ի Պաղեստին էջին անդ. և ոմն ՚ի Պոսէանցն գնացեալ Յերուսաղէմ ազդ արար Փռանգայն. և նոքա պատրաստեալ զինքեանս եկին ՚ի վերայ նոցա. և Ալբասն կազմեաց զգօրն և ասաց. հապա որդեակք քաջացարուք որպէս ՚ի

վերայ Եգիպտացւոցն, և ես մեծացուցից զձեզ յոյժ։ Իսկ նոքա զգեցան և զգաստացան և ելին ընդ առաջ նոցա. և յորժամ տեսին զնշան խաչին առաջի նոցա վառեալ թուլացան ձեռք նոցա և սկսան լալ. և ի ջեալք յերիվարացն երկրպագեցին նշանի խաչին որպէս կարօտեալք. և Փառանգն էառ դիւրաւ զանչափութիւն գանձուն. և զԱբան վաճառեցին իշխանքն Եգիպտոսի. և նա առեալ կախեաց զվայտէ։ Իսկ զոր դիպն Հայոց թողին Փառանգքն միայն հանդերձիւք իւրեանց երթալ'ի խաղաղութիւն՝ տմարդիկք լեալ առ երախտաւորսն և առ քրիստոսասէրսն որ կամաք իւրեանց լցին ըզնոսա մեծութեամբ ստացուածոց։

Յայսմ ժամանակի Ինաղտն որ կոչեցաւ Բրինձ Ինտաքու վիճէր ընդ պարսն Թորոսի վասն բերդերոյն (1), զոր Յոյնք առեալ էին 'ի Փրերացն՝ և նա էառ 'ի Յունացն. և ասէր թէ վասն ամենայն քրիստոնէից են 'ի պատերազմիլ. տուր՝ 'ի նոսա զիւրեանց բերդն. և կուռեցան 'ի Ակնտրուն(2) և անկան բազումք յերկոցունց կողմանցն. եւ

(1) Հին օրի. վասն բերդ. 'ի Փրերացն Յոյնք։ դին՝ որ կայր 'ի սիւնեաց։

(2) Երեք օրի. Իսկ ընդ Ակնտրիկիայ։ զոր առեալ էին դրան պիտ ընդ օրինակին։

դարձաւ Ոնաղան 'ի տուն իւր ամօթով. բայց յետ այնորիկ իւրով կամաք եւ 'ի Փրբերան զդղեակն որ կայր 'ի Մինոռն Ն՚ն տաքու։ Իսկ նոքա երդուան նմա օգնել Հա յոց յամենայն կարիս մահու չափ և յամենայն իրս ցաւակցիլ։

Ի թուին Հայոց հինգ հարիւր ութսուն և չորս ել պարսն Խոսրովանէս եղբայրն պարսն Թորոսի յերկիրն Մարաշայ՝ և եմոյծ զբազմն 'ի գիշերի 'ի Մարաշ 'ի տունս քրիստոնէիցն՝ որ անդ կամակցութեամբ քահանայի մեոյ 'ի նմին քաղաքէ. և ընդ լուսանալն առաւօտուն առին զքաղաքն և կոտորեցին զԹուրքն որ անդ. և հպարտացեալ նախատէին զպահապանս բերդին և շնային յայտնապէս ընդ կանայս նոցա. և բարկացաւ տէր և ոչ մատնեաց զբերդն 'ի ձեռս նոցա. այլ այրեցին զքաղաքն և աւերալ զքրիստոնեայսն որ անդ. մոռին յերկիրն։ Բայց զբերդն կամակից գործոյն ֆալեալ կենդանւոյն քերթեաց և հրով այրեաց Ամիրայն։

Ի նոյն ամի Ոնաղան կամակցութեամբ և օգնութեամբ Թորոսի չոգաւ 'ի Կիպրոս կղզի, և առ զնա, և յաւարի եհար. և ած զմարդ և զանասուն յերգը ծովուն, և կրա

ընեաց ամենեցուն գինս, և եթող զնոսա. և առեալ պատանդս ած ընդ ինքեան եպիս-կոպոսս, և քահանայս, և ազատս մինչեւ բերցին զհատեալ գինսն. և եղեւ այս վասն երկու պատճառի. մի՝ զի նեղէին Յոյնք ըզ-Փռանգսն որ անդ էին, և մի՝ զի յորդորէին նոքա զԹուրքն 'ի կորուստ Հայոց։ Իսկ Պա-ղան Սոեփանէ չոգաւ 'ի վերայ Երզրուսին և նեղեաց զնա. և նոքա խնդրեցին երդումն զի թողցէ զնոսա կենդանիս, և տայցեն ըզ-բերդն. և երդուաւ նոցա. և առեալ զբեր-դըն եթող զնոսա եւ. գնացին խաղաղու-թեամբ։

Իւ պատմեցաւ Սոեփանեայ եթէ ըս-պառնալեօք երթային Թուրքն. թէ երթամք և առնումք զօրս, և գամք և աւերեմք զաշ-խարհս զայս. և նա եհարց զեկեղեցականսն. և նոքա ասեն թէ այդպէս սպառնան՝ անխիղճ ես յերդմանէն. և յղեաց զկնի նոցա. և կոտո-րեցին զամենեսեան. և լուան զայս ամենայն այլազգիք. և գարձան 'ի Թշնամիս (1) քրիս-տոնէից։

Յայսմ ամի մեռաւ աւագ Սուլտանն Խորասանայ Սանջարն. և եթող որդի մի տղայ փոքր, և եդին նմա աթաբակ (ամեն-

(1) Ուրանք՝ 'ի Թշնամանս։

ռասպահ) (1) զԵլոկուզ (2) ամիրայն. որ առ 'ի կնութիւն զմայր տղային. և վարէր զսուրբ թանութիւնն։ Եւ զկնի սակաւու մեռաւ տղայն. և հաստատեցաւ սուրբ թանութիւնն Ելոկուզին. բայց անուն աթաբակութեանն ոչ բարձաւ. զի յայնմ հետէ թագաւորն խոստանայ Աթաբակ կոչի և աշխարհն տուն Աթաբակեան մինչեւ 'ի Օսլ. և 'ի Անիզա գետաս, և յԱրան ամենայն երկիրն (3). Նոյնպէս և որ 'ի Կապադովկիայ է թագաւորութիւն խաքանեանք և Սալջուքեանք կոչի. սակս անուան նախնւոյն(4). և Զանշմանիքն ոչ էին կատարեալ թագաւորութիւն։ Բայց զի Խլիճ ասլանն և Զ ասրասլանն(5) աէրն Սեւ առասայ վիճէին ընդ միմեանս, պարսն Խոսրովանէ եղեալ 'ի դուրս աւերէր զերկաքանչիւրսայն զերկիր։

(1) Այս՝ ամենայն օրինակք առին աթաբակ։ Էին օրն. առնէ այսպէս։ Յայսմ ամի մեռաւ աւագ սուլտանն Խոսրասանայ Մասուդն, և ոչ ունէր որդի. բայց միայն մանկիկ մի փոքրիկ. վասն որոյ եղեւ աթաբակն նմա ամիրայ մի Ելոկուզ անուն։

(2) Մի օրն. Երկուզ։

(3) Երեք օրն. մինչեւ 'ի Խլատան ամենայն երկիրն։

(4) Էին օրն. Նոյնպէս և որ 'ի Կապադովկիայ լինէին թագաւորք, զի ընդ Էռամէ Անյակուզին (՝ի քրոյ Ելոկուզ) մտին, Աթաբակութեանք կոչին։

(5) Յառաջագոյն զսա Ղազարաս ասլան յիշեցին ամենայն օրինակք բայց 'ի միոյն. որ Ղարա ասլան ունէր. և արդ ամենայն օրինակք ունին Ղարասլան։

Digitized by Google

Յետ թագաւորն Երուսաղեմի եկեալ ոչնչացաք, և առեալ զօրս 'ի Հայոց չոգաւ առ զՀերիմն և առերեաց մինչեւ 'ի Հալպ(1). Յորում առուր չարաիսաւութիւն մատուցին առաջի Թորոսի, թէ Սոեփանէ խորհի սպանանել զքեզ. և հաւատաց Հոցա. և կալեալ զեղբայրն Եդ 'ի բանտի զտան ամիս. իսկ միջնորդութեամբ բազմաց, երդմնեցուցեալ ետան զնա (2). և սիրէին զմիմեանս։

Իսկ Խլիճ ասլան զՏանուն ամիրայն Կեսարու արաբ իւր սիրելի. և նովաւ խաբէր (3) զտունն Դանիշմանայ։

Ի հազար հարիւր եւ թանասուն թուին Ասորոց, և հինգ հարիւր և վեց Հայոց՝ Տաճիկք որ կոչին Ալբդլմուսմիք ասպատակեցին 'ի Սպանիայ, և յամեցին անդ տարի մի. և թէ ոչ քեն ասքա, պատմեսցուք։

Ի չորրորդ Խաղիսպայէն որ նատէին Յոգիպտոս յազգէն Ալեայ եղեն երեք որդիք. և 'ի մեռանելոյ հօրն էառ առաջն զխալիֆայութիւնն և խորհէր սպանանել զեղբարսն. և նոցա իմացեալ առին երկու գիրք, և փախ-

(1) Առեալ զօրս և չոգաւ էառ 'ի Հայոց զՀերիմն, և առերեաց մինչեւ 'ի Հալպայ։

(2) Զորք օրի. և միջնորդեալ բազմաց, առեալ երդումն դարձեալ ետան զնա։

(3) Երկու օրի. խաբեր։

եան յարեւմուտս. և անցին ընդ Պանիայ և գնացին առ ազգս բարբարոս և վայրենամիտս, այլ և աղքատս և անարուեստս և անթագաւորս, և բնակեցան անդ. և ունէին ընդ ինքեանս յազգէն իւրեանց, և զերկոսին գիրսն յառաջ բերեալ ընթերցան. մին ուսուցանէր քիմեայս արուեստս ուսկեգործութեան, և արծաթապարարութեան, և յօրինման մարգարտաց. և միւսն արուեստս հրաշագործութեան և տլսմայ և կախարդութեան. և սկսան ստանալ ոսկի և արծաթ և նոքաք անասունս ձիս և ջորիս 'ի ձեռս վաճառականաց և զորս անդէն կային. և մեծացան յոյժ. և մասնաւորէին 'ի բարութենէն անտի դրացեացն և մօտակայից. և յանգուցին յինքեանս և առին կանայս 'ի նոցանէ և ստացան որդիս և աճեցին և փարթամացուցին զերկիրն. և ապա սկսան քարոզել զօրէնս իւրեանց՝ զոր թէ առնեն, լինին իբրև զնոսա յաջողեալք. և նոքա ասեն ցնոսա. և ո՞ գիտէ թէ բարի են օրէնքդ ձեր. և յետ մահու ապրարէք մեզ նշանս. և նոքա խնդացեալք առնէին տլսմերս պէս պէս. և հանին դիւթութեամբ դև 'ի գերեզմանաց նոցա 'ի պատկերս մեռելոց նոցա որք և ասէին. այդ է հաւատ, այդ է Աստուածապաշտութիւն, երբա

նելիք էք(1) եթէ առնիցէք զոր դոքայդ ասեն-
զի և յետ մահու անեղբարկէս Թագաւորէք։
Իսկ նոքա լսելով զայս եւ տեսանելով ապ-
շեալք լինէին, և զարմանային. և հաւատա-
յին նոցա. և նոքա առեալ զնոսա Թլփատե-
ին և դնէին կրօնս զօրէնս Մահմետի զոր ին-
քեանք ունէին. և այսպէս առ սակաւ սա-
կաւ աճէին և բազմանային և շինէին քաղա-
քըս և ամրացուցանէին բերդս առ ծովեզե-
րօքն և 'ի լերինսն. և եդին յորդւոց ի-
սրեանց Թագաւորս և Խալիփայս. և զի ա-
նուն էր միոյն Աբդալլա, և միւսոյն Ա-
մուն ի այնպէս կոչեցան ազգն Աբդմուն ի-
և կարի ընդարձակեցան, եւ տիրեցին բա-
զում աշխարհաց և ճոխացան. և եղեն ան-
ուանիք. և հռչակեցան այնքան, մինչ զի շի-
նեցին բերդս պղնձիս, և բերդս երկաթիս.
և ապա բերդս ոսկիս և արծաթիս. և եղեն
մեծ և հզօր Թագաւորութիւն մինչեւ կա-
րել գալ նոցա 'ի Սպանիա. և կռուել բա-
վանդակ ամ մի ընդ արիական ազգն Փռանգ
գաց 'ի Սպանիա, և առնել ընդ հարկաւ
զնոսա. և դատնալ յոլով աւարաւ և գերու-
Թեամբ։

Սման որոց դիպող ժամանակ գտեալ

(1) Մի օրի. երևելիք էք։

Յանիել Թագաւորն Յունաց եկն 'ի Կիւլիկիա յերկիրն Թորոսին. զի անպարապ էին Փռանգքն 'ի նմանէ՝ վասն նեղութեան Ը. դղմումեւացն. և Թորոս խոյս եւ 'ի նմանէ զօրքն առ լեռնակոզմամբն. և էանց ընդ դաշտն Յանիին և չոգաւ մինչեւ յԸնտաք և կամէր Փռանգքն երթալ 'ի վերայ Ալեպայ. և լուաւ գոյժ եղեալ ոմն յիշխանաց նորա կամ թագաւորել. և դարձաւ խնդրելով 'ի Թորոսէն հնազանդութիւն. և բազում վնասս հատուցին նմա 'ի ճանապարհի Թուրքքն, որ զառաջարքն բնակեալ էին կոճոպելով 'ի զօրացն. զոր իմացեալ Յանիին առաքեաց զբրոս աւերել զերկիրն Իկիճասլանայ ըստ կողոպտութեան. և կայր անհաշտ պատերազմ 'ի մէջ Յունաց և Թուրքաց։ Զոր իմացեալ Նորատինն գնաց աւերել զերկիրն Իկիճայ որ առ սահմանաւքն Էփրատայ, զՄեհեանի և զԱբան և զԱրաշ և զայլն, և յինքն գրաւեաց զնոսա վաղվաղակի։ Բայց յետոյ հաշտեալք ընդ սուլտանն դարձոյց առ նա վերստին. հաշտեցաւ նոյնպէս և Ալրաբ սալանն, և արարին խաղաղութիւն ընդ միմեանս։

Իսկ Թագաւորն Էրուսաղեմի եւ զՀերիմն յորդին Ջ. ջշնին որ էր անուամբ հօրն.

և էր ժառանգ Հռովմ կլային, և նա սակս քինու հօրն մահու աւերէր զերկիրն Հալ-պայ զցայդ և զյերեկ, զոր և զկնի երկուց ամաց ըմբռնեցին զնա զօրքն Հալպայ (տա-բան 'ի Հալպայ) և մեռաւ 'ի կապանս։ Այս-տու ժամանակօք եկ Թագաւորն Իրուսաղե-մի Պաղտոյնն որ առ սահմանօքն Դամասկո-սի և արար ընդ ինքեան զՊոյին, ոյք հը-բամանաւ Իրատնին կային անդ. և չոգաւ նոքօք ընդ անապատն յերկիրն Իգիպտոսի, և եհար զնա յուսարի. և եդ 'ի վերայ նոցա հարկս հարիւր վաթսուն հազար դահեկա-նաց. և դարձաւ բաղում փառօք ածելով ընդ ինքեան գերիս ոչ սակաւս և յոլովս-թիւն աւարի կայուն և գնայուն.

Իսկ 'ի նոյն ամի Թագաւորն Վրաց Դէ-որգի եհար զԱլալուխ ամիրայն որ նստէր 'ի Կարնոյ քաղաք և կալեալ զնա վաճառեաց, անդէն։ Իսկ միւս անգամ ժողովեալ բաղ-մութիւն Թուրքաց 'ի վերայ Դէորգայ, և կոտորեցան 'ի նմանէ հազարք և բիւրք, և դարձեալ կռուեցան ընդ միմեանս Սուլտա-նն Խլիճ և Իղուբ ասլան և յաղթահարե-ցաւ սուլտանն. և էառ Իղուբ ասլան զամ-նայն Կրզմնած աղքայութեանն Խլիճայ. և մեծահոգի եղեալ անդրէն դարձոյց և խնդ-

ըեաց հաշտութիւն. եւ արարին խակ։

Ի այն ժամանակս ազգ եղեւ թագաւորին Երուսաղեմի, եթէ տէրն Այիսայ Ռէ-բան կաղմեալէ նաւս և ընեալ աւազակք. բայց վնաս առնէ առաւել քրիստոնէից քան թէ Թուրքաց. և բարկացաւ ՚ի վերայ նորա և հալածեաց զնա. և նոքա երթեալ Անտոյք առ Իրինծն և եառ նմա զՊաղրաս. և սկսաւ առնել և անդ նոյնպէս զվնասա-գործութիւնն ՚ի ծովու և ՚ի ցամաքի։ Եւ խմացեալ Իրինծն հալածեաց զնա։ Եւ նո-րա գնացեալ առ Լորատինն ուրախ արար զնա յոյժ. զի խոստացաւ նմա առնել զամե-նայն ծովեզերայն ընդ ձեռամբ նորա. վա-սն որոյ եւ զզօրս իւր ՚ի ձեռս նորա, որ և գնացեալ ասպականէր զաշխարհն ծովեզե-ր։

Իսկ թագաւորն Երուսաղեմի անուամբն Բրիստոսի զօրացեալ գնաց ՚ի վերայ նորա և կոտորեաց զզօրս Թուրքացն, և զանեթն սատանայի ձերբակալ արարեալ տարաւ Յե-ռուսաղէմ. և այրեաց հրով և բարձաւ չարն։

Ի ժամանակս այս Անդիին թագաւորն սպան զկին իւր դեղով սակս ամուսնեան. և առ կին զդուստր Իրինծին Անտաքայ հա-կառակ օրէնաց Բրիստոնէից։ Իսկ Աղուբ

տալան արար խաղաղութիւն ընդ Մելանէ և եթող զնա ամիրայութեալ տղային հոգեւորդ-դեսց իւրոց։ Հայց քսեցին զնմանէ առ սուլ-տանն, թէ Աղուբ ասլան միաբանութեամբ բազում ամիրայից կամի սպանանել զքեզ, և դնել սուլտան զեղբայր քո. և հաւատաց բանիցն և առաքեաց առ Անդին զԲրխոտա-փոր դպրապետն իւր խնդրել 'ի նմանէ օգ-նութիւնս, և թէ երդնուցու նմա, գնասցէ առ նա կամօք սիրոյ. և խնդաց Անդին, և երդուաւ նմա. և չուգաւ Սուլտանն հազար հեծելով 'ի Կոստանդնուպոլիս, և յոյժ պա-տուեցաւ, և եղեւ անդ աւուրս ութսուն։ Եւ յամենայն աւուրս առաքէին նմա հաց-կերոյթս երկու անգամ ոսկեղէն և արծա-թեղէն ամանօք. և ամենայն ամանքն մնա-յին Սուլտանին և ոչ եւս դառնային. եւ զկնի ութսուն աւուրն կերան հաց 'ի մի-ում սեղանի և զամենայն պատրաստութիւն սպասուցն եւս սուլտանայ. և յարժամ կա-մէր գնալ ծածկեաց զհասակն նորա ոսկւով յոտն կալով նորա 'ի մէջ տաճարին. և եւս նմա զօրս և գնաց. և ժողովեաց զամենայն ամիրայսն Մեջագետայ Աղուբ ասլան առ-ինքն, և ել ընդդէմ նորա և յարժամ հասին առ միմեանս՝ զարհուրեցան երկոքեան կողք

մանքն 'ի բազմութենէ միմեանց. և առին զտեղի և առեալ խորհուրդս 'ի մէջ արարին երդմունս սիրոյ. և արձակեցան 'ի միմեանց։

Յաւուրսն յայնոսիկ Ընդրոնիկոս իշխանն կայր 'ի Կիւլիկիա հրամանաւ Անիրին, և կոչեաց զպարսն Յոհրիանէ 'ի ճաշոյ պատրաստութիւն. և դարան գործեալ սպան զդէնս գաղտնի և զորս ընդ նմա. և շարժեցան պարսն Թորոսն 'ի ցասումն 'ի վերայ Յունաց, և սպան 'ի նոցանէ տասն հազար անձինս։ Իսկ Ընդրոնիկոս ազաչէր զԹագաւորն Իսրաելեմի գալ հաշտեցուցանել զնոսա, և խոստանայր նմա բազում ոսկի 'ի Կոստանդնուպօլսէ. և երդնայր եթէ անպարտ է յիրացն կարծեաց և ոչ է սպանեալ նորա զնոսա։ Իսկ եկն Թագաւորն Իսրաելեմի. և արար խաղաղութիւն մեծաւ աղաչանօք, և դադարեցին 'ի կոտորելոյ զՅոյնսն։

Յայնմ ժամանակի Թագաւորն Վրաց Գէորգի էառ զՈւին քաղաք և աստակեաց զՊարսիկն որ անդ. և քակեաց զմներայն, զոր ապեամբ և ոսկերօք Քրիստոնէից շինեալ էր։ Յորում աւուրս ըմբռնեցաւ Ընդնաղուն տէրն Մնտաքու 'ի զօրաց Նորատինն հարիւր քսան հեծելօք, և հինգ հարիւր հետեւակօք գնացեալ յերկիրն Հալէպայ.

ուր բազում եղոյց քաջութիւնս նախ քան զմեռնումն. բայց զի բազում էր թուրքն և դարան գործեալ էր 'ի ծածուկ պատեցան զնովաւ. և թէպէտ և կարող էր պատառել և ելանել, այլ ոչ կամեցաւ միայն ապրել, ետ զանձն 'ի ձեռս նոցա, և տարան առ Նորուտինն 'ի Հալապ. և առ ժամայն ապատուակեալ 'ի Լատինն առին սնդ եւթն հազար գերիս 'ի քրիստոնէից, և եղեւ մեծ տրտմութիւն եկեղեցւոյ. և լուեալ զայս Թագաւորն Յրուսաղէմի եկն 'ի վերայ Հալեպայ, և ոչ կարաց առնել ինչ նմա. և արարեալ խաղաղութիւն դարձաւ Յրուսաղէմ. և հասեալ ՅԷքքայ(1) վախճանեցաւ տուեալ զԹագաւորութիւնն Ամարեայ եղբօր իւրոյ, որոյ տարեալ զդի նորա Յրուսաղէմ Թաղեաց, և սգաց զնա յոլով աւուրս. և ինքն Թագաւորեաց ամս ինն և տասն։ Իսկ Նորատինն չոգաւ յերկիրն Յրուսաղէմի, և առեալ, զսա և գերի դարձաւ. և ել զհետ նորա Յմմաւի կստորեաց զնա և փախոյց և Թափեաց զսուն, և դարձաւ գերին։ Յս 'ի սոյն ամի Ղուբ տալան հնազանդեաց զՏանուն զեղբօրորդին իւր որ ապստամբեալ էր 'ի Կեսարիա. և գնաց 'ի Կամաւի որ է Անի.

(1) Ասոյիս, որ է Ասէ։

Digitized by Google

այսինքն Կամախ. և սպան զապստամբ ամիրայն որ անդ, և դարձաւ։

Եւ Ղարա ասլան չոգաւ յԱմիթ, և ոչ կարաց առնուլ զնա. և դարձաւ 'ի Հարանքեփ, և կոչեաց զՂուպ ասլան 'ի ճաշ ընդունելութեան. և նա կարծեաց թէ նենգութեամբ մեծարէ, չոգաւ զորս մեծաւ յերկիրն նորա, և գերեաց անտի տասն հազար (1) անձինս և եպիսկոպոս երկուս զԻգնատիոս և զԻսահակիոս, որք զերծան 'ի նմանէ կենդանիք։ Իսկ պարոն Թորոս յետ գերութեան Ինաղտին եկն յԱնտաք, և կացոյց Իբինձ Անտաքու զորդի նորա զՊամուդն՝ ոչ կամելով մօրն։

Յաւուրսն յայնոսիկ Նորատինն զորս ժողովեալ ասպատակեաց 'ի Տրապօլիս, և գիպեցան նոցա երեք հարիւր ձիաւոր Փռանգք ոչ գիտելով զմիմեանս. բայց Փռանգքն գիտաց թէ Թուրքք է. և Նորատինն կարծեաց զԹագաւորն Յրուսաղեմի, և փախեաւ. և ելին զհետ նոցա երեք հարիւրքն և կոտրէին, և յորժամ ելին յարձակն. և տեսին զյոյսովութիւն Թուրքին, և խմացան թէ Նորատինն է, զահի հարան. և ելին 'ի բլուր մի, և իջեալ յերիվարացն աղօթէին

(1) Եօթն օրի. հարիւր հազար։

Digitized by Google

զվերջին աղօթան ակն ունելով մահու։ Եւ տեսեալ Թուրքացն անկաւ երկիւղ Տեառն 'ի վերայ նոցա և Թողին զկարասիս իւրեանց և մերկացին զսպառազինութիւնս իւրեանց և փախեան անյետս դառնալոք. և Բրիստոսասէր զօրացն սրտապնդեալ հասին նոցա և կոտորեցին բիւրս և հազարս. և զերծաւ Նորատին յոյժ սակաւուք. և նոցա լցեալ կսկիծք և կաղմածովք նոցա դարձան կաղմածքն ի նդութեամբ 'ի փառս Բրիստոսի Աստուծոյ մերոյ։

Իսկ Աղուպ ասլան գնաց առ Շահնշահ եղբայր Սուլտանին որ կայր ամրացեալ առ ծովեզերեայ դղեկն իւր հայրատուր, և դարձաւ խնդութեամբ. և հասեալ 'ի Գանգրայ առ Աղիս պետով մեռանէր. և զօրքն եդին 'ի տեղի նորա զԽամայիին զեղբօրորդին նորա։ Իսկ որք Ալպլեթայն էին զօրք թագաւորեցուցին զԱհմուտան որդին Ահադեայ. և եղեւ ամբոխեալ տունն Գանիշմանայ։

Այսու ժամանակաւ չոգաւ թագաւորքն Երուսաղեմի Այգիպտոս առնուլ զհարկն. և Այգիպտացիքն փեզկեալ 'ի միմեանց, ոմանք մեծարեցին զնա կարգեալ հասիւն, և կէսք հպարտացեալ ընդդիմացան, և աստաքեցին առ Նորատին օգնել նոցա. և

Digitized by Google

նա յղեաց առ նոսա զՇ իրաքաւ զօրապետն իւր օգնել նոցա ։

Իսկ թագաւորն Երուսաղեմի սուր 'ի գլուծ արկեալ կոտորեաց զապստամբեալսն յանխնայ անթիւ և անհամար . և չոգաւ և իջաւ 'ի վերայ Պլապէս(1) քաղաքի ամիսս եւ թիւն . և բերին նմա զոյց , ւ թէ Նորատինն պաշարեալ է զ Էրիմն և կամի առնուլ զնա . և գրեաց թագաւորն խրատս և ասաց . ա մենեւին մի եղանէք 'ի քաղաքէդ արտաքս մինչեւ գամ ես . և ինքն եթող զՊլապէս և սկսաւ գալ : և նոքա ոչ պահեցին զպատուէրսն նորա այլ ելեալ կուուեցան ընդ նոսա , և խոյս ետ թուրքն և հեռացաւ . և փուանգն նստաւ բացեայ 'ի քաղաքէն . և անդրէն դարձեալ թուրքն եգիտ զնոսա յանհոգս . և կոտորեցին և առին զքաղաքն . և գերեցին զԿրինձն Նստաքու և զայլս բազումս 'ի գլուխ խաւորացն ։ Ի հազար չորս հարիւր եւթանասուն թուին Սորոց և 'ի հինգ հարիւր ինանուն երկու Հայոց՝ զօրացաւ Խլիճ ասլան Սուլտան 'ի վերայ Դորդուոցն Դանշմանայ 'ի ձեռն Տանուն ամիրային , և առ զԿատուկն և զԱպլթայն և զՏարանտա ։

(1) Մերթ Պլաէս ։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս պարսն Թորոսի և Սալահադինի և հարցմանց Տ. Գերբեսի և հաւատոցն քննութեան և երկու բնութիւն ասելոյն.

Ի սոյն ամի պարսն Թորոս արձակեաց դեսպանս պատարագաւք 'ի Հալպ և խնդրեաց զՀայ գերիսն՝ որ անդ, և ոչ ետուն. և զայրացեալ Թորոս ել յերկիրն Պարաշայ եւ աւերէր. և Ղորատինն արձակեաց զորս 'ի վերայ նորա, և Թորոս եհար զնոսա և զքաջս զումն կալաւ 'ի ձեռս և Ղորատինն երկեաւ 'ի նմանէ. և եթող զորս խնդրէրն։

Եւ բացաւ բերան փոանգաց և խնդրեցին զԲրինձն, և վաճառեցին զնա հարիւր հազար դահեկանի. և ելեալ Բրինձն չոգաւ 'ի Կոստանդնուպօլիս առ քոյրն իւր, և բազում գանձիւք դարձաւ. և ած անտի 'ի Յունացն պատրիարքք Ընտիոքայ. և եմոյծ 'ի քաղաքն Ամթանաս անուն. և տեսեալ զայն փոանգ պատրիարքն Հերմի ել 'ի քալաքէն և գնաց նրստաւ 'ի խուս այրն, և բանադրեաց զքաղաքն։

Օրինի ամի միոյ չոգաւ Թագաւորն Յունաց Մանիլն 'ի վերայ Իւրղարայ եւ պարտեցաւ, և կալան զնա գերի. և այր ոմն զերը-

Digitized by Google

ծեաց զնա վասն երդման զոր երդուաւ նմա տալ. և բերեալ 'ի Կոստանդնուպօլիս էառ զակնունելին։

Իսկ Գրիգորոս եղեւ ընդ հնազանդութեամբ Լուսաւորչին, և իշխէր նոցա Շ. իրաքաւ. և չոգաւ դարձեալ Թագաւորն Երուսաղեմի 'ի վերայ նորա և փախեաւ Շ. իրաքաւ յերեսաց նորա. և առ զՄոր, և ապրար ընդ հարկաւ, և յոլով գանձիւք դարձաւ. և յետ աւուրց լու եղեւ թէ քառնադատեն Տաճիկքն զԲրիստոնեայսն որ յԳրիգորոս, և գնաց միւսանգամ և էարկ զայլազգիսն 'ի նուազութիւն սպանութեամբ կողոպտելով և դերութեամբ, և դարձաւ։

Յաւուրսն յայնոսիկ Ընդրանիկոս հօրեղբօր որդին Մանիլ Թագաւորին ել յերկրէն Կիլիկեցւոց, և չոգաւ Ա.քքայ. զի անդ էր եղբօր իւր դուստրն, որ լեալ էր կին հանգուցեալ Թագաւորին Երուսաղեմի, և եղեւ տանն հոգաբարձու և անկաւ ընդ նմա պոռնկութեամբ. և յայտնեցաւ իրքն, և փախեան երկոքեանն 'ի Խառան. և անդ ծնաւ նոցա չար ծնունդ և գարշելեան 'ի նը մանէ. և գնաց 'ի Մերտին և ոչ անդ ընկալան. և գնաց 'ի Կարնոյ քաղաք և դադարեաց անդ. և առնոյր զոր 'ի Թուրքացն և երթայր

և գերէր զԲրիստոնեայսն, և բերէր վաճառէր անօրինայն և կայր չարաչար։

Իսկ պարոն Թորոսի եղբայր մի էր Միքեհ անուն չարաբարոյ և վայրենամիտ, որ ոչ հաւատայր նմա Թորոս և ոչինչ. վասն ոչ ցոյց զչարեալ նորա չոգաւ առ Լորատինն, և ետ նմա զԼուրիս. որ և արար յոլով չարիս գերելով զԲրիստոնեայսն և յանխնայ կոտորելով զնոսա որ և գողացաւ զանաւէր 'ի Հայոց և ոչ գոյր չափ պղծութեան նորա։ Իսկ պարոն Թորոս հիւանդացեալ ագանէր կրօնաւորական հանդերձս և մեծաւ յուսով կատարէր 'ի Քրիստոս կեցեալ երեւելի փառօք և արիական քաջութեամբ. յիշատակ նորա օրհնութեամբ և դրուատիւք լեցի յեկեղեցիս ուղղափառաց. և եթող տղայ մի փոքրիկ յանձնելով զնա յիշխանսն։ Իսկ զի Միհեհն ապականութիւն յոլով առնէր, երդումն առին 'ի նմանէ, իշխանքն զի մի զբռկեսցէ զտղայն, և մուծին յերկիրն։ Իսկ նա ոտեաց երդմանն և էառ զբոլոր երկիրն. և փախուցին զտղայն 'ի Հռոմկլայն, և անգ անանէր։

Ի թուին Հայոց հինգ հարիւր ինանասուն եւ վեց բարձաւ իշխանութիւնն Տաճկաց Այդիպատոսէ, որ սկսաւ Լիմարայ. զի անկան-

'ի նոսա հերձուած մի որ Ռամփդիքն կոչէին և միւս եւս 'ի յԱ՚լթուր որ Սիւնիքն կոչէին. արդ Ռամփդիքն որք են Շէխքն՝ ասէին. մի է Ա՚ստուած, և չար ոչ արար և ոչ առնէ. և յայտ անտի է զի Ա՚ստուած մի է և չարն բազում է։ Ա՚ւ Սիւնիքն ասէին ամենայն ինչ յԱ՚ստուծոյ է չարն և մահն և ամենայն հակառակ պատահմունք. և սկսան ստել ըզ միմեանս. և բաժանեցան աղանդք անդէն յԱ՚գիպտոս. զի յերկուց կողմանց կային անդ. Շէխքն էին ընդ Ա՚որատնին. և Սիւնիքն ընդ Փռանգացն. և 'Ա՚որատինն առաքեաց պատգամս առ Սիւնիքն զի 'ի բաց կացցեն 'ի Փռանգացն, և կացցեն անհարկս և օգնեսցեն զենին իւրեանց, և լուան նմա. և մտին ընդ իշխանութեամբ Թուրքաց, և ամրացուցին զՎկէս. և արգելին զհարկն Փռանգին։

Ա՚ւ լուաւ Թագաւորն Ա՚րուսաղէմի. և չոգաւ առ զՎկէս, և եգիտ անդ երկոտասան հազար հեծեալ։ Ա՚ւ երկու հարիւր հազար հետեւակ և մատնեաց զնոսա 'ի սուր։ Իսկ Շաւուրն զօրապետ այրեաց զՎ՚որքաղաք. և առեալ զբազմութիւն, գնաց ամրացաւ 'ի Շարէ քաղաք. և առաքեաց առ 'Ա՚ռրատինն զելեալ զոյցն 'ի ձեռն Շիրաքուայ. և դարձոյց 'Ա՚որատինն զՇիրաքուայ հարիւր

հազար հեծելոք. որ ընդ երթալն նորա սպան գիսալիսիայն, և երարձ զաղգն նորա յԵգիպտոսէ. և սպան դարձեալ զգլխաւոր Տաճկաց և իշխանացսա ինքն։ Եւ թագաւորն Երուսաղեմի դարձաւ անդրէն 'ի տուն իւր մեծ ալիողուածովք։

Եւ զկնի երից ամաց մեռաւ Շ իրաքաւ. և առ զիշխանութիւնն եղբօրորդին Շ երաքայ Յուսուփն՝ որ նա ինքն է Սալահատին։ Եւ թէ ո՞էր սա ասացիս։

Հայր սորա էր 'ի Դուին քաղաքէ Հայոց մեծաց ազգաւ քուրդ Իւրուբ անուն որդի Սուլիմանայ։ Այս Իւրուբս և Շ իրաքաւ եղբայր իւր ելին 'ի Դունայ վասն աղքատութեան, և եկին 'ի Այիջադետս. և երթեալք 'ի Թուրիթ մտին 'ի ճունդկութիւն բերդին. և յաւուր միում պատմեաց Իւրուբն երազ Հրէի միում. ելանէր, ասէ. յերանայ Իմոց հաւր, և այրէի զաշխարհս. և ասէ ցնա Հրեայն. ծնցի 'ի քէն որդի աւերիչ երկրի. ասէ ցնա Իւրուբն. եթէ ելցէ մեկնութիւնդ քո'ի գլուխ, առ դու 'ի նմանէ յորդւոց յորդիս յամենայն ամի հազար կարմիր. և գրեաց զ հուտն զքանն և զժամանակն և ամին. և 'ի նոյն ամի ծնաւ Յուսուփն և զարգանայր. Եւ էր կայուտաւ. և Շ իրաքաւ հօրեղբայր

նորա առ զնա և գնայ առ Նորատինն. և եգիտ Շ իրաքաւ շնորհս առաջի նորա, և էր յաւ ելաջադէմ և յաջողէր նմա ամենայն ուրեք. և արար զնա զօրապետ, և յղեայց զնա Յ ի գիպտոս. և Թէպէտ յաղթահարեցաւ մի անգամ և երկիցս Յ ի երուսաղէմի Թագաւորէն, ստայաւ նմա զ Յ գիպտոս. և յորժամ մեռաւ. եղին 'ի տեղի նորա զՅուսուֆին. և լուաւ երազահան Ֆրեայն. և խնդրէր ըզ գրաւն Յ ուբէն. և ասէ ցնա Յ ուբն եկ երբ Թիցուք առ հուրն բորբոքեալ զի տացէ քեզ զոր պարտիմք. և չոգան առ նա, եւ խնդաց Յուսուֆին. և եհարց Թէ քանի՞ ամք են. և նա ետ զգիր Թուականին ցնա. և ընԹերցեալ հաւատաց. և ետ զանցեալ ամսոցն գրաւն հազար հազար դահեկան. և գնաց Ֆրեայն խնդութեամբ 'ի տուն իւր 'ի ԹկրիԹ։ Բացց զկնի սակաւ աւուրց Յ ուբն ուտամբ ձիոյ հարեալ 'ի գլուխն մեռանէր Յ գիպտոս. և Թաղեաց զնա պատուով որդին իւր. և եբ Թալով երԹայր և զօրանայր և մեծանայր Աստ ուահատինն. և էր ահարկու և մեծամիտ և աջ ղէր նմա։ Ա հրաման եհան յերկիրն Յ գիպ տոսի Թէ քրիստոնեայք մի հեծցին 'ի ձի և 'ի ջորի և հանապազ զգօտի ածեալ ցուցցին 'ի հրապարակս նշանակ ծառ այուԹեան։

Digitized by Google

Ի վեց հարիւր թուին Հայոց խլիճ ապրան էառ զԿեսարիա, և զՕամնդաւ յորդւոցն Դանշմանայ։

Եւ ի նոյն ամի Նեստորական Եպիսկոպոս մի էառ զեկեղեցին Յակոբկայ որ ի Բաղդատ, և եհար զնա ցասումն Տեառն, և դարձաւ եկեղեցին առ տեարս իւր։

Յաւուրսն յայնոսիկ սպայծառանայր աստուածային շնորհօք և վարդապետութեամբ սուրբն Յակոբ որդին Սալիտայ. զոր ձեռնադրեցին եպիսկոպոս, և կոչեցաւ նա Դիոնէսիոս։ Սա արար բազում գրեանս խրատուց և հանճարոյ, և մեկնեաց զբովանդակ հին և նոր կտակարանս ցանկալի իմաստնոյց. և լինէր նովաւ նշանք և սքանչելիք և գովութիւն շնորհաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ի թուին Պարսից հազար չորս հարիւր քննսուն երեք՝ և Հայոց վեց հարիւր տասն երեք, թագաւորն Յունաց Անաստասն առաքեաց առ տէր Աբրահամ կաթուղիկոսն Հայոց և առ իս ի Սիսիայէլ և խնդրեաց միաբանութիւն հաւատոյ և սիրոյ և կրօնից. նախ ի ձեռն Քրիստափորի ուսմանն, և. երկիցս անգամ ի ձեռն Թաւրիզայ իմաստասիրի։

Digitized by Google

Լոյս գրեաց առ մեզ Տ. Լերսէս Թէ թնդ-
բեալեն 'ի մէնջ երկու բնութիւն ասել Քրիս-
տոսի, և զչորրորդ ժողովն պատուել, և
զճնունդն Քրիստոսի 'ի Դեկտեմբերի քսան
և հինգն կատարել, և զպատարագն խմորով
և ջրով առնել, և զսուրբ Աստուածն խաչե-
ցարիւ չասել. և ապա խոստացեալեն մեզ
շատ բարիս առնել. զինչ տացուք պատաս-
խանի. և ես ասացի նմա այդ զոր ինչ խրնդ-
բեն զատ յերկու բնութեանցն և 'ի չորրորդ
ժողովոյն և 'ի խաչեցարէն մեր կրօնքս է։
Բայց Թէ այսօր փոխես զսահմանս հարց
քոց զմեծ կամ զփոքր, երեւեցուցանես այ-
նու Թէ մինչեւ ցայսօր Թերի էիք 'ի ճշմ-
մարտութենէն, և արդ լցայք. և ոչ է ոպարտ
'ի մեռասան ժամուս և 'ի վարձութեան օ-
րինափոխ լինել ակն առեալ երեսաց. այլ
մեք կատարեսղ տեսանեմք զձեզ առաքելա-
կան հիմամբ, և զայն դու դիտես. և յոլեցաք
զմի յաշակերտացն մերոց որ վարժ էր ար-
տաքին գրով Ընթեռնիկ անուն զի խօսեցաք
'ի մեր կողմանց (1). և զի նոցա ոչ գայր խե-
լամուտ փիլիսոփայական արուեստից։

(1) Մի օրի. որ վարժ էր արտաքին գրոց Ընթեռնիկ անուն 'ի մեր կողմանց։ Մի օրի. որ վարժ էր արտաքին գրոց զի խօսեցաք ընդ Թեռնիկ 'ի մեք կողմանց։

Յե յորժամ գնաց աշակերտն իմ հրամա-
յեաց կաթուղիկոսն իսահակ առաջի իւր վա-
սին բնութեանցն. ապա եհարց մեր աշա-
կերտ Ինթեռինէ և ասէ. 'ի քանիս բաժանի
բնութիւնն։ Թուրիանէ ասէ. յերկուս,
յանձնաւորութիւն և յանանձնաւորութիւն.
և ասաց Սորին Թուրիանէ անուանեալ
իմաստասէրն առաքեալ 'ի Թագաւորէն.
իսկ երկու բնութիւնդ զոր դուք ասէք և
'ի մէնջ պահանջէք, անձնաւորն է թէ ա-
նանձնաւորն. և կարկեցաւ Յոյնն զքաղաքամ
ժամն տարակուսեալ. և ոչ կարաց պատաս-
խանել. զի գիտաց ըմբռնեալ զինքն յանե-
լանելի որոգայթս։ Սպա ասէ զի կայ մեր և
արտաքնոցն, թող զայդ. և կաթողիկոսն պար-
սաւեաց զնա և ասէ. ապա զի՞նչ արասցուք
զախոյեանդ. զի և յաստուածային գրոց նոյն
պէս խրտնուս և վազս առեալ փախչիս. և
զոր դու ցնորիս 'ի մտաց իբրեւ զգեռնա-
կոչս, զայդ մեք ոչ ընկալցուք. և այսպէս
զքաղաքամ աւուրս հարց և փորձ արարեալ
յամօթ լինէր անուանեալ իմաստասէրն։ Յե-
զի խնդրեալէր Ամանին և զՍորոց դաւա-
նութիւնն, գրեցաք և մեք և առաքեցաք յետ
այնորիկ. և եկն ուռ մեզ թուղթ աղաչա-
նաց թէ գոհութիւն և շնորհ ձեզ վասն

Digitized by Google

խոստովանութեան հաւատոյն զոր գրեալ էիք։ Բայց աշխատ լերուք և եկայք տեսցուք զմիմեանս և 'ի բերանոյ լուիցուք. և մեք ոչ կամեցաք զգնալն, այլ գրեցաք պատասխանիս. եթէ մեր դաւանելն զԲրիստոս այս է 'ի մի բնութիւն և 'ի մի կամս, և 'ի մի ներգործութիւն փառաւորեմք զնա անբաժանելի յամենայն տնօրինականն. և թէ այդ խոստովանութեամբդ կալցէ ոք ընդ մեզ սէր և իրաղաղութիւն, յօժարիմք և մեք ևս առաւել. և թէ ոք վասն այդորիկ ատէ զմեզ և հալածէ, մեք գնասցուք ընդ մերս մահու չափ որ է աւանդ հարցն մերոց կացեալ անշարժապէս 'ի հիման առաքելոց և մարգարէից. և վասն այսորիկ մատուսցուք զպարանոցս մեր 'ի վկայական հանդէս նախնեացն մերոց կարօտեալք։

Իսկ զպատասխանին Տ. Ներսիսի. զոր գրեցաք մեք ոչ իմացաք. բայց կոլոմի էր յատուածաշունչ գիրս և պարկեշտ և ջանացող այր ուղիղ կանոնաւ գրոց և սուրբ. նմանեալ սրբոյն Ներսիսի հաւուն իւր։

Բայց և զայս գիտացաք և հաւատամք, եթէ փառաւորեալն 'ի մէնջ տնտեսութիւն Աստուծոյ մերոյ խափանեաց զջան թագաւորին. զի յարեաւ 'ի վերայ նորա տագնապ

թուրքաց. և կաթուղիկոսն Ներսէս փոխէր յաստեացս, և մնաց հիմն մեր անսասան 'ի հողմոյ որպէս և 'ի դրանց դժոխոց աղօթիւք և արտասուօք և արեամբ հարցն մերոց։

Ի սոյն ժամանակս և Թագաւորն Երուսաղէմի ինդրեաց օգնութիւն 'ի Թագաւորէն Յունաց՝ որ էր աներ նորա երթալ 'ի վերայ Եգիպտոսի. և առաքեաց նմա զօրս ընդ ծով. բայց յորժամ հասին ի Եգիպտոս, Յոյնքն ըստ հնացեալ չարութեանն իւրեանց նենգել կամէին զԹագաւորն Երուսաղէմի, և իւրեանց առնուլ զԵգիպտոս. և զգացուցին ոմանք Թագաւորին զկամս Յունաց։ Եւ տէրն Եգիպտոսի Յուսուփ ետ նմա ոսկի զհարկն պարտուց և խոստացան յապայն տալով պատանդս. զի տակաւին չէր բաւական Յուսուփն կռուել ընդ Թագաւորին. և դարձաւ Թագաւորն Երուսաղէմի Թողլով անդէն զՅունաց զօրն. և նոքա ոչ իշխեցին յամել 'ի տեղւոջն, այլ առին զնաւսն և գնացին. և առ չնոսա ձմեռն, և յորովք կոլեան 'ի ծովուն։

Digitized by Google

ԳԼՈՒԽ ԻԷ.

Յաղագս շարժին որ եղեւ 'ի յուռնիսի քան և ինն և 'ի խաչի ամին եկն ձիւն քան և հինգ թիզ.

Ի նոյն թուին եկն շարժ ահագին 'ի յուռնիսի քան և ինն 'ի տօնի սուրբ առաքելոցն Պետրոսի և Պօղոսի. և դողայր երկիրն 'ի հիմանց մինչեւ ցիններորդ ժամ աւուրն 'ի ժամ պատարագին և թուէր թէ 'ի վեր բարձրանայր և 'ի վայր իջանէր երկիրն. և էաք 'ի վանքն Մօրհանայ. և հրամայեցաք ոչ ումեք ելանել յեկեղեցւոյն մինչեւ դադարեցէ բարկութիւնն Տեառն. և պՀշմարիտն է ասել ակն ոչ ունէաք դադարման՝ զի ասէաք 'ի նոր բանչան ցասմանէն թէ հասեալ է վախճան աշխարհիս։ Իսկ յորժամ յիշեաց Տէր զարարչական ինամն և հաստատեցաւ աշխարհ և տեսաք զիրեարս, էր ամենայն ակն յարտասուս և ամենայն բերան 'ի գոհութիւն և յօրհնութիւն բացեալ։ Այլ եկն մեզ զլոյց եթէ փլաւ պարիսպն Հալպայ և ամենայն ձեռագործ շինուածն որ 'ի նմա, և մնաց միայն մի եկեղեցի. և պատառեալ գետնոյն սեաւ ջրով ծովացաւ քաղաքն, և սպան զբիւրս

բիւրուց։ Եւ այս եղեւ յարդեալ իրաւանցն Աստուծոյ, քանզի իբրեւ զանաստուն էր անդ տեսանել զքրիստոնեայս 'ի վաճառարանն. և իբրեւ զՇուր համարեալ էր նոցա հեղուլմն սրեանց հաւատոյցելոյն, և անյապ 'ի ապաշնութիւն նոցա որպէս 'ի գիւտս գանձուց. և հաստոյց նոցա փրկութիւնն քրիստոնէից հաւասար չափով. թերեւս թէ ոչ զոյգն, այլ զառ հաւատչեայն անշիջական հրոյն՝ որ պահի նոցա։ Զանգի ունի էլեկ գործոյն Սոդոմայ՝ յորս կան հաստատեալք. և կամ Ղռակորոյս հակայեցն անօրէնութիւնն՝ որ յաճախ է առ նոսա. մինչ զի բազու�եր երկմտին 'ի դատաստանացն Աստուծոյ կարճամիտք եղեալ։ Այսպէս և յԱնտաք փլաստուրքն Պետրոս և Յունաց եկեղեցին սպան զպատարագողն և զյոլովս 'ի ժողովրդենէն. և Երինծն և ամենայն քաղաքն զգեցան քուրձ և. գնացեալ անկան առաջի պատրիարքին իւրեանց. և ասլաչէին, զի մոցէ 'ի քաղաքն. զի կարծեցին թէ 'ի բանադրանացն նորա եղեւ այս, և ապա ասէ ցնոսա. հանէք ա նարգանօք զչպատրիարգն Յունաց. և յորժամ չոգան գտին զնա մերձ 'ի մահ, զի անեկեալ էր 'ի վերայ նորա քար 'ի փլմանէ եկեղեցւոյն. և գնացեալ ասացին նմա թէ յեր

Digitized by Google

հոգւոյն կայ. և հրամայեաց բառնալ մահ-
ճաքն և ընկենուլ արտաքոյ քաղաքին. և ա-
բարին այնպէս. և մեռաւ յանարգութեան.
և ապա եմուտ պատրիարքն Փռանգաց Հեր-
մի Յնտիոք. և մխիթարեցաւ քաղաքն, և
սկսաւ շինել զաւերեալն 'ի շաբաթանէն։
Բայց թէպէտ յամենայն երկիր ապար մնաց
շարժն այն նորագործ բերդից և քաղաքաց
և եկեղեցեաց, այլ ողորմութիւն Քրիստոսի
Յնտիոք և յամենայն ծովեզերեայսն ապա-
հեաց զաւղլափառացն եկեղեցիսն. ոչ վասն
բարեաց գործոց այլ յաղագս հարցն աւան-
դից միայն։

Ի հազար չորս հարիւր թուին Ալոցոց
և Հայոցն հազար տասն և չորս՝ մեռաւ
խուդբդինն ամիրապետն Ասիոյ և ամենայն
Աթուրացւոցն. և զի Նորատինն եղբայր էր
նորա՝ առ յինքն զԱծբին և զՇնճաքն, եւ
յոյժ տրտմեցան Փխիրքն զի գինի ոչ ըմպէր
խուդբդուինն, և ընդ սահման աղօթիցն նոր-
ցա ոչ անցանէր. և սէին զնա մարգարէ։

Այնու ժամանակաւ մեռաւ Խալիֆայն
Ասդնջդ, և առ զպատիւն Ասդոինն որդի
նորա. և գրեաց առ նա Նորատինն եթէ ըստ-
ինքն Ամիրապայ, որ ասաց թէ զհինգ հա-
զիր ոչ կամի Աստուած զՄնջու�մն քրիս-

ասնէ՛ից. և արդ կամիմ գալ առ քեզ. զի խորհեսցուք վասն այսոցիկ։ Եւ խնամքն Աստուծոյ տրկ 'ի սիրտ նորա, թէ նենգութեամբ կամի գալ առ քեզ զի սպանցէ զքեզ և բարձցէ զխալիփայութիւնդ, որպէս ե՞ բարձ զԵդիպտոսին 'ի ձեռն Հ՝իրաքաւայ. և վասն այսպիսի կարծեաց գրեաց առ նա խստագոյնս և սպառնացաւ, և եւ հրամանն հակառակ նմա ընդ ամենայն երկիր չինել եկեղեցիս և վանորայս, և համարձակել զաստուծոյն քրիստոնէութեան. զի Նորատինն ոչ տայր հրամանն նորաշէն եկեղեցւոյ, և ոչ վանաց. և կոչեաց առ ինքն զԱկիրն (1) որ կամակից էր Նուրատինին, և սպան զնա։

Իսկ Նորատինն գնաց պաշարեաց զԱ՝ՕՍ. և կային անդ եւթն որդիք եղբօր իւրոյ. և երդուաւ նոցա թէ ոչ կամի մեղանչել նոցա, թէ սիրով ընկալցին զնա 'ի քաղաքն. և բացին նմա, և մտաւ 'ի քաղաքն և եկ 'ի կլայն. և առ զամենայն գանձսն և եհան 'ի քաղաքէն. և եդ անդ զծառայս իւր զի յանուն նորա պահեսցեն զքերդն. և զերկիրն բաժանեաց եղբօրորդւոցն. և զամենայն ամուրսն արար ընդ ձեռամբ, և գնաց։ Եւ սկսաւ ծանրացուցանել զհարկն քրիստոնէից,

(1) Մի օրի. զԱ՝ՕՍ։

և եւ հրամանն հարթել զհերս իւրեանց՝ հաւատացելոց. և Ջ հաւատն ասէ կարմիր կարկատան ձգեսցէ՝ ի փակելոյն յաջոյ յուսն, զի նշանաւորք լիցին։

Իսկ Յոմի թագաւորն Յերուսաղեմի չոգաւ՝ ի Կոստանդնուպոլիս. և յորով գանձիւք դարձաւ Յերուսաղեմ։ Յեւ խլեալ ասլան եկն՝ ի Պելտեանի և ոչ կարաց առնուլ զնա. և առեալ գերի անձինս երկոտասան հազար, դարձաւ։

Իսկ Լորատինն առ ընդ իւր զԻմայիլն Դանշմանայ, և զՇահնշահ եղբայրն Խլիճայ. և այլ բազում ամիրայս, գնաց՝ ի Կեսարիա. և Սուլտանն ոչ կամեցաւ ելանել ընդդէմ նոցա. և առաքեն առ նա և ասեն. տուր զկէս երկրիդ եղբօր քում. և կայրն առ նա պղիքն Շահնշահի եւ Ֆն. և առ՝ ի նոցանէ զմիսն և սպան, և խորովեալ առաքեաց առ հայր նորա, և ասաց, եթէ ոչ երթաս այգի, դովին օրինակաւ առցես զմնացորդս։ Յեռեսեալ զայն լսցին, և անկաւ ահ՝ ի վերայ նոցա, և յարեան գնացին։

Ի նոյն ամի՝ ի խաչի ամսան եկն ձիւն նոր, որ ոչ՝ ի լոյս, և ոչ՝ ի տեսանելոյ, կամ յիշմանէ աւանդից և՝ ի դրոց կարէ գիտել զք. քանզի չափեցին զԹանձրուԹիւն ձեռանն

քան և հինգ թիզ առ մեզ. և 'ի հնդիկս, որ բնաւ ոչ գայ, չորեքտասան (1) թիզ ձիւն եկն, և մեռան վայրի երէք, և թռչունք և սողունք, և պատեցան ջուրք, և մեռան ձկունք. և ընտանի ոնասունք նոյնպէս կոտորեցան 'ի չգոյէ կերակրոյ, և այրեցաւ ամենայն բոյս սերման. և 'ի գալ ամին երեւեաւ սով սաստիկ, մինչ զն իշխանքն Կոստադովկիայ ըստանին զԱլիմ ամիրայն Սեւաստոյ 'Ռանշմանեայ, և յափշտակեցին զամբարս ցորենոյն, զի մի մեռանիցին. և գործ պղծութեանն ծածկեցաւ ամիսս երեք վասն ձմերանն։ Եւ զկնի այնորիկ ուստն զերեալն, և դժուարացան ամենայն ազգն շուրջանակի. և ոմանք 'ի բնակչաց աշխարհին առաքեցին 'ի 'Ռամանակոս առ Տանուն ամիրայն Կեռարիոյ. զոր փախուցեալ էր Յուլոսանն ապգանանոք խրովք. և կոչեցին զնա, և երկն էառ զիշխանութիւնն Սեբաստիոյ։

Յայնմ ժամանակի հիւանդացաւ Նորատինն. և յուսահատեցան 'ի նմանէ. և անկան ընդ միմեանս սամիրայքն և գործակալք երկրին։ Իսկ նորա դարձեալ կանգնեալ 'ի հիւանդութենէն որպէս յարուցեալ 'ի մեռելոց անակնուեալի. և անկաւ ահ նորա

(1) Մի օրի. երեքտասան։

կրինակի 'ի վերայ երկրի։ Եւ Տանուտէն յաւուրս
ցաւ 'ի նա զի փրկեսցէ զնա 'ի Սուլտանէն։

Եւ զօրս հաւաքեալ Նորատինին եկն 'ի
Մեքաստիայ, և հաստատեաց զՏանուտն, և
սպառնացաւ Սուլտանին եթէ կռուիցի ընդ
նմա. և դարձաւ և առ զԲեհեռնի, և զԲե-
սոն, և զԱրաշ. և լուեալ Սուլտանն գնաց
'ի վերայ նորա. և եկն ընդ առաջ նորա Նո-
բատինն. և նստան առաջի և անտի Ջահան գե-
տոյ և երկեան 'ի միմեանց։ Եւ անկաւ սով 'ի
բանակն նոցա, և նեղեցան և ապա խօսեցան
'ի խաղաղութիւն։ Եւ եթող Սուլտանն զՏա-
նուտն կալ 'ի հնազանդութիւն Նուրատինին,
և դարձան 'ի տեղիս իւրեանց։

Ասացից և յապաղս աղանդոյ միոյ որ երե-
ւեցաւ յառուրս մեր։ Նախ քան զվախճանն
Ներսիսի կաթուղիկոսի երեք արք եկեղեցա-
կանք երկուքն վանաց երիցունք Յուսիկ և Գէ-
որգ անուն. և գեղջերէց մի Կարապետ անուն
գնացին առ Տ. Դերսէս, և անդամանեցան 'ի
նմանէ վասն անուղղայ համբաւոյ նոցա. և
եղին 'ի նմանէ տրտմութեամբ, և չոգան
Յերուսաղեմ. և սկսան բամբասել զնա եթէ
զաղանդն Սիմոնի կախարդի ունի. զի առնէ
արծաթով ձեռնադրութիւն. և ինքեանք
դաւանեցին զԲաղկեդոնին. և դարձուցին

Digitized by Google

զկնի մոլորութեան իւրեանց չորս հարիւր տուն՝ ի քաղաքին. և քաղաքն կոչեցին զնոսա Յուսիկեանք նախատանօք։

Եւ կաթուղիկոսն գրեաց առ իշխան քաղաքին. զի հալածեսցէ զնոսա, և արար այնպէս։ Եւ գնացին՝ ի Հալապ առ Նորատէնն. և առին՝ ի նմանէ հրամանագրութիւն և դարձան՝ ի յԱռահայ։

Եւ ես կոչեցի զնոսա առ իս մեզադրեցի և հաւանեցուցի դառնալ՝ ի կրօնս իւրեանց. և առաքեցի զնոսա իմ պատուական արամբք առ կաթուղիկոսն. և մինչ գնացին նոքա կապարեալ էր հայրապետն՝ ի Բրիստոս։ Եւ յԱստուածածնին ամիսն յունիսի, յաւուրն հինգշաբաթուջ՝ ի թուին Հայոց վեց հարիւր քսան, և Նորոց հազար հինգ հարիւր։ Իսկ անօրէնն Յուսիկ գնաց յԱնտաք և վերստին մկրտեցաւ՝ ի Յունաց։

Իսկ Տէրունական Վերափոխի կային երկու եղբօր որդիք եպիսկոպոսունք Գրիգոր և Գրիգոր ըստ անուանք նոցա. աւագ եղբօրորդին Տ. Գրիգոր էր մերձ՝ ի վախճանին. վասն որոյ զՏ. Գրիգորիսն քարոզեցին Կաթուղիկոս. բայց ոչ ձեռնադրեցին։ Իսկ յետ աւուրց եկեալ տեր Գրիգոր. և իմացեալ զկրքն դարձաւ, և գնաց առ փեսայն իւր Սլեհն. և առ

ռեալ զնա տարաւ առ Լիբերատինն, և նորին հրամանաւ ածաւ 'ի Հռոմկլայն. և ձեռնադրեցին զնա Կամիս զիկաս։ Լուս յաւուրս ձեռնադրութեան խրոյ կուչեաց զերիկաս յեպիսկոպոսացն մերոց զԿիրիգոբէս Վեռնայ եպիսկոպոս, և զԱսիլիաս Ալաբանայ եպիսկոպոս, և մեծարեաց զնոսա։ Լուս զկնի ձեռնադրութեանն ասաքեաց առ մեզ ապա երևելիս քան զքեզ առանդութեանն Հայոց և Պարսից. զի յորժամ Պորսոց ուղղափառաց պատրիարքք ձեռնադրէին, առաքէր զիւր դառանութիւնն և զդաշն սիրոյ առ կամիս զիկան Հայոց. և յորժամ Հայոց նոսաք հայրապետս՝ նոցնպէս արասցէ։

Իսկ ես իմդ ասի յոյժ, զի այր գիտնական և սուրբ էր. և առաքեցի առ նա զուիտ միաբանութեանս մերում. բայց սակաւ ինչ մեղադրեցի. զի զոյց հակառակութեան եղեւ 'ի հոգեւոր շնորհդ, և 'ի մէջ ազգս կանանց, զի միոյն անասանելոյ յաստիճանդ տեղի տալն էր քեզ։ Իսայց եզնոյի գլխութիւն Տեառն Աստուծոյ 'ի վերայ քո. և յոյժ ա զաչէցի զնա. եթէ բարձ զկերազս անուանգ զարծամիտութեան 'ի պարպեւս Հոգւոյն յանարատ և յանբամբաս յարդէդ. և մի տար կրկնել զՅուսիկեան չարախօսութիւն

Digitized by Google

առ ձեզ, սիմոնեան կոչել զձեզ։ Եւ գրեալ էր առ խս յանձնառութիւն. և այլ հաս աղաչէցի զնա վասն ազգականին իւրոյ. որ անուանեցաւն զառաջինն զի կայցի զնա առ առաջ. զի սահմ ընդարձակ և բազմամարդ ազգիդ վայելէ հայրապետս ունել քան թագաւոր աստուածանչայն. և զայն հաս լուսաբնեալ, առաքելով զնա 'ի Ամբրանն ասպով նը մա զՅարոնի վիճակն, և 'ի վերայ գերկիրն Կապադովկիայ ապար ընդ իշխանութեամբ նորա, զոր Ասիրիան կոչէին. որ և զկնի ապ նորիկ, և նա եկն յոմանն։

Ի նոյն թուականին Արտաշիրն ակաս զբաժաղով լինել յամենայն աշխարհաց յՍմանացւոց յՊիպատացւոց և յԹուրացւոց և 'ի Հայոց և 'ի Կապադովկայացւոց. զի բարձցէ զՇրուսաղեմի թագաւորութիւնն, և զիրք ինձ ասղանայ տուրանութիւնն. և ինքն գառ ուզայցեալ նստէր և լուէր զբարբառս ժամն, և ոչ խօսէր. այլ կարդայր և աղօթէր, և ոչ տայր գինի ըմպել 'ի բանակին. և ոչ ձայն խաղոց և երգոց, և կաքաւչաց լսելի լինէր 'ի զօրսն. և յաղագս այսպիսի առաքինութեան ակն ունէր թէ հրեշտակ խօսի ընդ նմա. զի պատրէին զնա Փիլիքն և Շ եխերն. թէ տեսանէաք զքեզ, զի յերկինս ելանէիր,

և ոմանք թէ հրեշտակ Աստուծոյ կայ առ քեզ և խօսի ընդ քեզ, և հաւատայր նոցա. և մինչ յայսոսիսի միտս հպարտացեալ նատէր 'ի Դամասկոս, և յամենայն կողմանց գային առ նա զօրք որ ոչ էր թիւ, յանկարծակի եւ հար զնա Տէր և. ոպան. որ թագաւորեաց ամս քսան և ինն. և ցրուեցան զօրքն յիւրաքանչիւր տեղիս: Եւ առ զթագաւորութիւնն Անէլիք Սալեհ որդի իւր:

Եւ թագաւորն Երուսաղեմի եկն 'ի վերայ Դամասկոսի և պեբեաց զաշխարհն. և նստաւ 'ի վերայ քաղաքին. և խոստացան տալ նմա հարկս թէ գնասցէ 'ի նացանէն. այլ նա ակն ունէր առնուլ զքաղաքն, բայց մեղքն քրիստոնէից ոչ ներեաց. զի կապաւնա ցաւ մահու. և առեալ ոսկի 'ի Դամասկոսէ դարձաւ Յաֆքայ. և մեռաւ անդ զկնի քառասուն աւուր մահուան Լոթրատնին, թագաւորեալ ամս տասն և երկու: Եւ եղեւ տրտմութիւն ամենայն քրիստոնէից մահ նորա. և որդի նորա Պազոյնն առ զքաղաքութիւնն ամայ հնգետասանից:

Իսկ յորժամ լուաւ Լուիճ սալան զմահ Լոթրատնին, չոգաւ 'ի Աղբատիա և առ զնամանապէս և զԼոմանայ և զԼաֆեկեսարն. և հատոյց զազգն Դանշմանայ. որ տեւեաց

ամն հաբիւր քսան երկու, և կացին իշխանք վեց զկնի միմեանց։

Իսկ Սեփեոսին եղբայր Նորատոնին ել 'ի 'ի Սօսլայ, և առ զՍ՝ծբին և զԱղաղ և ըզ-խատուան. և հնազանդեցան նմա եղբօրորդին իւր Սնելիք Սալեհն. և ելոյծ զկանոնք եղ-բօրն որ գրեալ էր յամենայն Սզկիթ, նա-լաթ զգինին Թուրքաց և Տաճկաց. և ետ հրաման տաշել զդիրն, և ետ հրաման հա-մարձակութեամբ ըմպել յամենայն տեղիս թէ եւ 'ի Սզկիթ կամ իցէ ուրեք։

Իսկ Յուսուին որ նա ինքն է Սալահա-տին, որ աէրն էր Եգիպտոսի իշխանացաւ 'ի վերայ ներքսագոյն Նբաբիայ և մասին ինչ 'ի Նուբեաց աշխարհէն։

Եւ 'ի սոյն ժամանակս զդղեակն զոր ու-նէին Հայք ընդ ձեռամբ ինքեանց յերկիրն Սասնոյ, ՆԵղեալ 'ի Սուփարշնայ. ամիրայէն տուին յամիրայն Խլաթայ 'ի Շահի արմէնն։

Յայնմ ժամանակի սպանին զՍլեհ իշ-խանն Կիւլիկեցւոց կամաւ իշխանացն. և զի որդին Թորոսի տղայն մեռեալ էր 'ի Հռոմ կլայն ետուն զիշխանութիւնն յՍոբէն որ-դին Սոնիանեայ ածեալ գնա 'ի Տարսոնէ. և նա եռսպան զսպանողն հօրեղբօր իւրոյ։ Օ՝ի ասացին թէ ոչ միայն սպանին, այլ և

ընկերցին զնա չանց. զոր լուեալ ոչ կարէր համբերել։

Յորում ժամանակի եղ Սալահատինն Այ-գիպտոսէ և առ զԴամասկոս. և չոգաւ 'ի Հալապ. և դողաց 'ի նմանէ Սելջուկն. և առաքեաց առ նա Սալահատինն և ասէ. ես ծառայ քո եմ և երկիւղ եմ յօգնութիւն Տեառն իմոյ, կալ ընդդէմ թշնամեաց քոց. և ոչ հաւատաց նմա, և ոչ երթայ զքաղաքն. և նա դարձաւ 'ի Հալպայ և առ զՀեմա և զՀամայ պատերազմաւ. և գնաց 'ի Դամասկոս. և եհան զՓռանգ գերիսն որ անդ, և վաճառէր դիւրագին. և ապար խաղաղութիւն ընդ Փռանգն. և եռ ածել ոսկի բազմամ Այ-գիպտոսէ և կուտեաց զոր բազումն։

Յե Սելջուկին եկն 'ի վերայ Նորա խրախտանաք և Նախատանաք. և ասէր զնա շուն կատաղի որ հաջէ ընդդէմ տեառն իւրոյ, և փութայր զգալն զի մի փախիցէ։

Յե Սալահատինն բազում անգամ առաքեաց ընդ առաջ Նորա, մի գալ և մի պատերազմել. զի մի ազդ՝ մի հաւատաց՝ երթ ասէ. և ոչ լուաւ նմա. այլ եկն և բախեաց 'ի վերայ Նորա. և յարեան և կռուեցան և սկսան կոտորել զզօրս Սելջուկին. և փախեան յերեսաց Նորա և անկանէին բազումք առանց

ձեռին։ Իբրեւ եմտես Խալահատինն, եթէ յաղթեցաւ Մեփեատինն, արգել զզօրսն իւր ի կոտորելոյ և. անց ի մէջ, և բարկութեամբ դարձոյց և ասաց. բաւական է, զի մի քարկոսցի Աստուած. և զկենդանի ծառայսն հանդոյց և արձակեաց ազատս. և զքաղաքանեալն թաղեաց. և իբրեւ լուան զայս, երկեան ի նմանէ ամենայն Անիմանքն, և ազգն Թուրքաց. և առաւել զահի հարաւ Անիքն Սալեհն։ Իսկ եհան զՓռանգ գեբիսն և վաճառեաց սակաւ գնոց. զկոմն Տրապօլայ ութսուն հազար դահեկանի. զՕսլին որդին Օշինին՝ յիսուն հազար դահեկանի. զԻնաղտ Ինինձն՝ հարիւր քսան հազար դահեկանի։ և խնդրեաց զԻնտաքայ օգնութիւնս։

Իսկ Մեփեատինն դարձեալ արար ժողով։ և առ ընդ իւր զտէրն Ներսնայ և զՀարանքեփայն. և եկն ի վերայ Խալահատնին վաթսուն հազար հեծելով. և Խալահատինն ունէր երկուտասան հազար. և առաքեաց Խալահատինն առ Մեփեատինն և ասէ. մի գար ի վերայ իմ. և մի կռուիր ընդ իս. ոչ եմ ես և զինչ մեղայ քեզ. ծառայ եմ քոյ, եթէ յաղթիմ՝ ի քէն ոչ է ինձ նախատինք. բայց եթէ հարկանես զիս, և անիրաւիս յիս, և

Digitized by Google

յաղթիս յինէն, մեծ կորանք (1) է քեզ տեառ-
նդ պարտիլ 'ի ծառայէս. և ոչինչ եղեւ նը-
մա ուանկդիր. և եկեալ կացին առ ընթեր և
պատրաստեցաւ Սալահատինն. և յարեան
'ի վերայ միմեանց. և վերստին պատրեցաւ
Մելիտինն, և փախեաւ. և մատուցին նմա
ուղտ, և նստաւ 'ի վերայ. և գնաց մաղա-
պուր և զերծաւ 'ի Սօսլ։

Եւ գնաց Սալահատինն և առ զՄբէճն.
եկին առ նա տեարքն Թէպաշարայ և Ա-
թապայ. և գնաց յԱզազն և կռուէր ընդ նմա.
և յարեան 'ի վերայ նորա Հաշշաշիք և խոցե-
ցին զնա. բայց ոչ մեռաւ. այլ սպան զնոսա,
և ինքն ուղղացաւ փութով. և առաքեաց զա-
ղրս յԵրկիրն Հաշշեացն և գերեաց զնոսա.
և էառ զԱզազն. և գնաց նստաւ 'ի վերայ
Հալպայ. և առաքեցին յԿոստաք ազաչանս
գալ օգնել նոցա. և չոգաւ Ինանլուն զոր
վանաւէցին, և կոտորեաց մասն ինչ 'ի զա-
ղրացն Սալահատինին, և արար զնա փախստա-
կան. և գնաց յԳիպտոս։

Ի վեց հարիւր քսան երկու թուին Հա-
յոց մեռաւ Նաճբտին տէրն Երզնկայ. և
առ զիշխանութիւնն Խուդբադինն որդի նորա։

Եւ 'ի նոյն ամի վարազ մի եհար զթա-

(1) Մի օրի. կոտրանք։ Մի օրի. կոտրանք։

գաւառն Յունաց և համբաւեցաւ թէ մե-
ռաւ անդի։ Իսկ Խլիճ սպան սպասաւորեաց
յերկիրն Նապա և յառաջի եհար զքաղաքամ
տեղիս։ Բայց նա ողջացաւ 'ի խոցոյն և կա-
յին առ նա երկու յորդւոց տանն 'Դանշման-
նայ առ նա փախուցեալք. և ժողովեաց զօրս
և ելար զնոսա զօրագլուխս. և առաքեաց
դեսպան առ Խլիճ սպանն, և ասէ. դարձո
զհայրենիսն որդւոց 'Դանշմանայ որ կան առ
քս. և ինքն կարճագոյնս գնաց զկնի և ան-
պատրաստ գտեալ զԹուլքն, յաւարարի
կատարեաց։

Իսկ Թուլքն որ կայր յԼիճն գնաց ընդ
կողմն հիւսիսոյ ծածկապէս, և դերեաց յեր-
կրէն Յունաց հարիւր հազար անձինս կա-
նայս և տղայս կոտորելով զարսն. և Թագաւ-
որն խնդրէր զՍուլտանն. և վարէր զնա ա-
ռաջի իւր. զի ոչ կամէր կռուիլ ընդ նմա
Սուլտանն։

Եւ Թագաւորն առաքեաց զորդիսն 'Դա-
նշմանայ յիսուն հազարաւ 'ի վերայ Ներսէհ
սարու, որք երթեալ նստան 'ի վերայ նոցա։

Իսկ Թուլքն խորամանկ որ իշխէր քաղա-
քին, գրեաց Թուղթ առ զօրսն յերեսաց քը-
ղիսատանէիցն որ անդ, եթէ 'Դանշմանիքդ զո-
ղրս եղեալ էք մեզ առաջնորդս, ահա մատ-

Digitized by Google

նել կամին զձեզ 'ի ձեռն Թ՝ուրքաց. որ զարձեալն դարան ձեզ, և սպասին ժամանակի. և թուղթն ընկեցին արտաքս։

Եւ տեսեալ զօրացն հաւատացին, և փութեան. և եկին զՀեռն նոցա զօրքն Թ՝ուրքաց պահապանք քաղաքին, և զբազումս կոտորեցին 'ի նոցանէ. և սպանին զքեռորդիսն Թագաւորին. և տրոմեցաւ յոյժ. և ինքաւ մերձ 'ի Կոնն, և նստաւ 'ի ձորակի միոջ 'ի մէջ երկուց բլրոց զժուարագունից. և ահա պատահեցան զնովաւ Թ՝ուրքմանքն Պռի յորվուԹիւնք յոյժ. և պաշարեցին զնա անդ յաւուրս եւԹն. և ընկենուին նմա գիլս վիմաց աստի և անտի, և նեռիւք խոցուէին զնոսա 'ի տուէ և 'ի գիշերի. և սպանին 'ի նոցանէ մարդ և գրաստ բազում. և առին զառաջիկս նոցա հինգ հարիւր (1) բեռինս. և երկեան յոյժ զօրքն Յունաց։ Եւ առաքեաց Թագաւորն առ Սուլտանն, և ետ ցնա երեք քաղաքս, զոր նոքայն էին շինեալ. և ապաչէաց զնա զերծուցանել զնա 'ի նեղութենէն, և առնիցեն սէր ընդ միմեանս. և ուրախ եղեւ Սուլտանն և յղեաց առ նա, երեք ամիրայ հեծելօք, հանել զնոսա անտի և տանել 'ի Կոստանդնուպօլիս. որք եկեալ

(1) Երիս օրի. հարիւր հազար։

հալածեցին զԹուրքն, և յուզն անկեալ ըս-
կսան գնալ. և Թուրքմանն երԹայր աստի
և անտի. և անարգեր զՍուլԹանն. զի Թա-
փեաց զնոսա 'ի ձեռաց նոցա զակարացեալ
Թշնամին և զասուեալ առՃիկն անաշխատ.
և զայս ասէին և հեռագիեմ բամբէին և յա-
փշտակէին հանգերձս և զէնս և երիւարս.
և ստանանէին զլաղումն նեռիք և պարսա-
քարիք։ Զի Յոյնքն մեզադիր լինէին ամի-
ջապէսն, ԹԷ դուք ոսայք ծախել զմեզ. իսկ
նոքա երդնուին ԹԷ ոչ, այլ նոքա իսկ ան-
հնազանդք են և վայրենաբարոյք և այպա-
նողք, և ոչ ոք կարէ զնոսա արգելուլ 'ի
վնասէ. և այնպէս առնէին մինչեւ հանին
զնոսա յերկրէն իւրեանց. և անկան զՃա-
նապարհսն 'ի Յունացն քսան հազար ան-
ձինք. և գնացեալ Անդիոն լի ամօթով (պատկա-
ռեալ) և պակասեալ 'ի քաղաքն իւր, այն՝ որ
խրոխտացն յաղԹեալ երեւելի պատերազմաւ
աշխարհն, և խմանալի կռուով ուղղափա-
ռացն եկեղեցւոյ, այսպէս անավաստակ գտաւ
յեկեղեցին պատերազմն։ Զի յետ այնորիկ
առաքեաց Սուլտանին բազում գանձս, և
գնեաց զգերիսն որ մնացեալ էին կենդանիս։

Այսու ժամանակաւք քրիստոնեայքն որ 'ի
Սելտենի կային 'ի մեծ նեղութիւն յամի-

Digitized by Google

բայէն իւրեանց որ կայր անառակութեամբ, և 'ի սղութենէ հացի։ Եւ քարոզեաց նոցա եկեղեցին և ասաց. եղբարք թշուառութիւնս այս վասն մեղաց է. քանզի կատարեալ տեսանեմք առ մեզ զգամբասանս Իսրայելի, զորոց ամբաստան լինի մարգարէն և ասէ. «խառնակեցան ընդ հեթանոսս և ուսան ըստ գործս նոցա. ծառայեցին սոսփրութեանց նոցա և եղեւ. նոցա գործք իւրեանց 'ի գայթակղութիւն ». և արդ ահա սպառեցաք, ջնջեցաք և խսպառ նուաղեցաք և լքեալք եղաք 'ի Տեառնէ. և այժմ եկայք դարձցուք իւրաքանչիւր ոք 'ի ճանապարհաց մերոց չարոց, և աղաչեսցուք զերեսս ողորմութեանն Աստուծոյ և հայեսցի առ մեզ ողորմութեամբ բրն իւրով բնականաւ. և նովաւ կեցցուք և մի մեռցուք։ Եւ լսեան ժողովուրդն զպատուէր եկեղեցւոյն. և դարձան առ Տէր պահօք և պաղատանօք և արտասուօք և հակմամբք գիշերականօք։

Եւ ցաճեաւ Տէր 'ի քարկութենէ իւրմէ, և արկ 'ի սիրտ ամենայնի և ցաւեցոյց զվիտս նորա խղճիւ վասն գործոց իւրոց, և ետ զքաղաքն 'ի Սուլտանն և ինքն գնաց 'ի Խարբերդ. և դիւրացաւ. քաղաքն և առաջացաւ հացն, և թեթեւացաւ հարկառու-

թիւն (1), և փառաւորեցաւ Աստուած շնորհակալութեամբ, և քաղցրացաւ ճաշակ ապաշխարութեանն երեւելի արդիւնքը. զի առն գաղանացելոյ և խակամտի զվնասակարն ետ և թողուլ զհայրենիս իւր և գնալ. և միայն նա էր մնայեալ 'ի տանէն Դանշմանայ։

Ի վեց հարիւր քսան և ինն թուին Հաւ յոց եկ Սալահատին յԵգիպտոսէ երեսուն երեք հազար սպառազինեալ հեծելովք 'ի սոկականացն և հետեւակացն (2). յիսուն երկու հազար գրաստս զինաբաձս առաջի իւր. և եկեալ 'ի Պաղեստին կալաւ Փառանգ մի, և արեամբ նորա լուացաւ աղօթից (3) և աղօթեաց, և յայնմհետէ կազմեցաւ պատերազմի և աւերման աշխարհին։

Իսկ Թագաւորն Երուսաղէմի Պաղտոյնն յոտիսամ լուաւ զայս հաւաքեաց զզօրս իւր առ ինքն. և ահա ոսկեաք էին յոտ առ բազմութեամբ անօրինացն. և անկաւ Թագաւորն 'ի վերայ երեսաց իւրոց հանդէպ արեւելից առաջի զօրաց իւրոց. արարին և նոքա նոյնպէս. և աղաղակեցին առ Տէր սրտի մտօք և լային, և յարուցեալ կանգնեցան և

(1) Մի օրի. հակառակութիւն։

(2) Հին օրի. բաց 'ի սոսկականացն և 'ի հետեւակացն։

(3) Թէրեսս լուացաւ 'ի ձեռս աչքին և ոտքին։

ու խոտեցին առաջի Աստուծոյ ոչ դարձուցանել զԹիկունս ի Թշնամեացն. այլ յօժարութեամբ մեռանել ի վերայ սուրբ եկեղեցւոյ։ Եւ ասպա կազմեցան սպառազինեցան զի հաւատով. և գնացին ընդ առաջ նոցա. իբրեւ երեւեցաւ գունդ այլազգեացն, և էին բազումք, և եղեւեալս առնէին զմիմեանս բբք, դարձեալ ի՝ջին յերիւսարսն և ի ծուռնոր խանարհեալ աղոտասուեցին. և ելին զքերանս իւրեանց ահաւոր անուամբն Քրիստոսի, Աստուած զնա կարդալով և իշխան մահու և կենաց. և վասեցան ի սէր նորա և նոտան յերիւսարս իւրեանց և խոյացեալ իբրեւ զարծուիս յերամակս նապաստակաց հարին իւրաքանչիւր զնիզակ իւր ի լանջս Թըշնամեացն շեշտակի, և ձգեցին զնոսա։

Եւ Քրիստոս Աստուած օրհնեալ Թագաւորն մեր եհան հոգմ ուժգին ընդդէմ նոցա՝ որ ընկենոյր զնոսա ի ձիոցն առանց ձեռին, նիզակի. և նոքա կոտորէին զնոսա և ոչ զոք ապրեցուցանէին. և սրուեցան փաստականն ընդ կողմն հարաւոյ առ անապատովն. բայց սուրն ոչ դարձաւ ի՝ նոցանէ մինչեւ ի մնաւոս արեգականն. և ի վաղիւն սկսան դարձեալ ի մնայեալն և մինչև յեւթն օրն գտանէին ի՝ նոցանէ լքեալս ի առ

Digitized by Google

վոյ և սպանանէին. և առին զամենայն ծանրութիւն ռոճկացն նոցա, և զառատութիւնսայս նոցա կոչեցեալն վնետան և զաղեղունս և լեզնիզակս և զվրանս նոցա և զամենայն պարարտութիւնս սպասուցն, և լցան և փարթամացան. և ուրախ արար Տէր զյուսայեալս իւր. և ցնծաց սուրբ եկեղեցի ի համբաւս յայս աւետեաց. և տային օրհնութիւն Աստուծոյ որ եբէկ զմէջս անօրինացն, և թափեաց զսիրտս նոցա պղնձայեալս ի անոտի յոյսն իւրեանց։

Իսկ Սալահատինն նորապարտ և նախամօթ անկաւ ի Սիր յոյժ սակաւուք. և զգեցաւ սեաւ և արդեալ. ի սենեակ, և տանջեաց զինքն խուսարաւ զգաղութ աւուրս։ Յետ վասն այսր յաղթութեան ամիրայն որ կայր ի Ֆերիմն, դարձաւ ի Ֆուրքաց և եղեւ ընդ Սնտաքու հնազանդութեամբ. և երդուաւ նմա Իրինձն թագուլ զքերդքն առ նմա. և յետոյ, ստեաց երդմանն, էառ ընդ ինքեան զՈրբեն զիշխանն Փուլիկեցւոց, և գնաց առնուլ զՖերիմն. և ոչ մատնեաց զնա Տէր ի ձեռս նոցա, քանզի ստեաց Իրինձն երդմանն։ Յետ դարձաւ ի Ֆապպայ հնազանդութիւնն ամիրայն որ անդ։

Ի թուին Ֆայոց վեց հարիւր երեսուն

գնաց Թադաւորն Երուսաղեմի 'ի Յորդանան, և նստաւ 'ի տեղւոջն որ կոչի անց Յակովբայ. զոր ասեն հուն Յակովբայ Փղշտացիքն, և սկսաւ շինել անդ քաղաք առնուլ նովաւ զԴամասկոս. և յաջողեցաւ զաւագ ինն գործն, և շինեին և գային բնակէին անդ քրիստոնեայք։

Երբ լուաւ Սալահատինն, և երկեաւ վասն Դամասկոսի, և ժողովեալ վերստին զօրս չոգաւ եկն եմուտ 'ի քաղաքն. և զի ամիրայն Բալբաքու, որ կոչի Երեգական քաղաք որ ասի Իլուպոլիս ապաստան լեալ յանձին զօրութիւն, ոչ հնազանդէր Սալահատինին, չոգաւ 'ի վերայ նորա. և սիրով և խաստմամբ առ զնա և զօրացաւ. և վատահացեալ յանձին, գնաց 'ի վերայ նոր քաղաքին, զոր շինեալ էին Փռանգքն. և յարեան ընդդէմ նորա զօրքն փառաւորեալ Փռանգացն. և յաղթեաց ճաշակքն հարին զնոսա և կոտորեցին որպէս յերեկն և յեռանդն. և փախեաւ Սալահատինն, և անկաւ 'ի Դամասկոս. և Փռանգքն առեալ աւար բազում և գերի 'ի նոցանէն և յերկրէն, դարձան 'ի քաղաքն զոր շինէին. և դարձեալ միւսանգամ ապաստակեցին 'ի Դամասկոս, և առին սակաւ ինչ կարասի և գերի և կամէին գնալ. և այնդեալ զինքն Սա-

քահանային, եւ զհետ նոցա. և կալաւ 'ի նոցանէ հարիւր փրերս. եւ քաղաքացաւ 'ի ճաշակս (1) իւր զոր եւ նմա չարութիւնն մեր և մոռացութիւն պատուիրանին Աստուծոյ. և ժողովեալ զԱրսան անապատին չոգաւ 'ի վերայ նորաշէն քաղաքին. և ոչ եպիսն անդ զթագաւորն Հրուսաղեմի. այլ միայն հինգ հարիւր փրերս, և պաշարեաց զքաղաքն և յաղթահարեաց զնա. և ընկէց հուր 'ի շինուածս նորա, և բորբոքեցաւ, և վառեցաւ բոլոր շինուածն նորակազմ։ Զի յորժամ տեսին փրերքն թէ վանեցան, և տկարացան ոմանք 'ի նոցանէ, սրկին զանձինս 'ի հուրն և կէսք 'ի գետն, զի մի անկցին 'ի ձեռս նոցա։ Զի զայլ բնակիչն կոտորեցին, և գնացին 'ի Դամասկոս։

Ի վեց հարիւր երեսուն (2) թուին մեռաւ Անտիոն թագաւորն Յունաց զկնի երեսուն և եւթն ամի արքայութեանն իւրոյ. և թագաւորեաց որդի նորա Աղէքս տղայ երկոտասանամեայ. և իշխանք երկոտասան կարգաւորէին զթագաւորութիւնն։ Իսկ մայր նորա եղեւ հաւատաւոր, բայց ընդ ձեռամբ ունէր զտուն պանձուցն. և սրբ-

(1) Երկու օրի. 'ի ճաշակ իւր։

(2) Մի օրի. 'ի վեց հարիւր երեսուն և մէկ։

տեսալ Աստուծոյ անկաւ ի պատկութիւն, և ոչ պահեաց զհաւատ ուարկեշտութեանն. և յորժամ յայտնեցան իրքն խորհեցան ըստանանել զնա օրէնք թագաւորութեանն և դնել զդուստր Անկիլին որ էր յայլմէ կնոջէ. և իմացաւ կինն և արդին իւր Ալէքսն. և հրամայեցին ըմբռնել զմետասան իշխանսն. և փախեան յեկեղեցին, և չոգան դահիճքն առնուլ զնոսա, և սպանանել. և կալաւ ամբոխ քաղաքին զդուռն եկեղեցւոյն պատուրեալ, և ապա չոգաւ պատրիարգն և ազգաչեաց զթագաւորն և զմայրն. և առ ի նոցանէ երդումն. և եհան զնշխանսն յեկեղեցւոյն, և տարաւ յարքունիսն։ Եւ զոտեցին երդմանն. ատելիքն Տաւն ոչ ապանին զնոսա բայց հանին զաչս նոցա վասն թագաւորքան զսպանութիւնն։

Իսկ տէրն Ռեմնոյ և Հարանքեփոյ որուամ անուն էր Լորդին փիեսայ էր Սուլտանին. և ատեաց զկին իւր և արար իւր օգնական զՍալահատինն. զի կուռեսցին ընդ անեարն իւր. և լուաւ նմա Սալահատինն, և չոգան ի վերայ Սուլտանին։ Բայց եկն ընդ առաջ նոցա Հասան ամիրայն. և իմաստուն բանիւք դարձոյց զնոսա. և խաղաղութիւն եղեւ ի մէջ նոցա։

Digitized by Google

Իսկ ամիրայն Ալռհայոց և Խաչանայ ապստամբեալ ի Յոսլացւոյն գնայց առ Սալահատինն։

Բայց պատրիարքն Թէոդորոս(1) որ առեալ էր յերուսաղեմի զիշխանութիւն, որոց խաչաբեղջան աչքն, եկ ի քաղաքէն և գնայց. եւ թէ ամենայն պատուարաց ոչ մնացեալ ի Կոստանդնուպաղիս, և մեռեալ ոչ թաղեցաւ. զի անմտութեամբ անէծ զանպարտոն, և ոչ զթագաւորն և զպոռնիկ մայրն իւր զերդմնալանցն։

Իսկ Սալահատինն չոգաւ ի վերայ Նիկիայ և առ զնա և ետ ի Սելջուկին. զի խոստացեալ էր նմա (2)։

Իսկ Մեփեռտինն դարձեալ զօրս ժողովեալ եկն ի վերայ Սալահատնին, և ոչ իշխեաց պատերազմել ընդ նմա։

Ի թուին Հայոց վեց հարիւր երեսուն երեք մեռաւ Մեփեռտինն և Մելիք Սալեհն. և առ զիշխանութիւնն Ղազատինն միւս եղբայր Մեփեռտնին (3)։

(1) Երկու օրի. Թէոդոս։

(2) Այս պարբերութիւն գոռանի ի միւմ օրինակի և ոչ։

(3) Հնագոյն օրի. ի թուին Աստուց հազար չորս հարիւր ինանասուն երեք, և վեց հարիւր քսան, մեռաւ Մելիք Սալեհն ասէն Հալպայոմեռաւ. և Սեփեռանին ասէն Մոսլ. և առաւ Հալպ և Մոսլաղ. գին Սեփեռանին. և Ազատինն եղբօր իւրում և էառ ի նմանէ զԱնձարն։

Ի թուին Հայոց վեց հարիւր երեսուն և չորս անօրէնն Լ՚գրոնիկոս սպանողն պարսն Սասեփանեայ, որ փախեաւ յԱ՚ղբայ և առ ընկէց (1) զհարազատն իւր, և շրջեցաւ չարաչարութեամբ ի տեղիս տեղիս, այժմ եկն և եմուտ խաբէութեամբ ի Կոստանդնուպօլիս որպէս թէ ցաւակցաբար եկեալ է ի խնամակալութիւն տղայ թագաւորին. և աւուրս ինչ ընտանեցեալ տան թագաւորին, ապա յայտնեաց զչարութիւնս իւր՝ խեղդեաց զԱ՚ղէքսն և զմայրն նորա ի ծովին. և ինքն նստաւ յաթոռն և սպան հազար այր յիշխանաց տանն Յունաց. և չորեքտասան հազար գիւղ եւ վանորայք աւերեաց յիշխանութենէն Յունաց. եւ առ զկին Լ՚ղեքսին իւր ի կրնութիւն չափածերն այն որդին Լ՚ելիսարայ. և հալածեաց զՓռանգն. զորս եգիտ ի քաղաքին և ի գաւառն. և կամեցաւ սպանանել զՓիլիպէ իշխանն որ էր յազգէ թագաւորութեանն. և առ աքեաց կոչեաց զնա, և ոչ կամեցաւ գնալ. զի գիտէր զկամն նորա. և ապառնացաւ կոչնականին եթէ ոչ ածցէ զնա բռնութեամբ, փոխանակ նորա ինքն մեռցի

Միւս տող օրի. Մեռան Սէյֆաթոմին և Մելիք Սալէհն. և եղաւ զիշխանութիւնն միւս եղբայրն Սէյֆաթոմին. Ռիբոս Սէյֆոպէին։

(1) Մի օրի. առեւանգեաց

և յորժամ չոգաւ նուիրակն ածել զնա, 'ի հարկէ եհան Փիսիկն զսուրն և եհար զնա. և ինքն գնայր յեկեղեցին, և սուրն արիւնոտ 'ի ձեռին իւրում. և ասէ լուարուք ազգք և հասակք ամենայն, զի Անդրոնիկոս ընչել կամի զբոլոր ազգս Յունաց. և շարժեցաւ քաղաքն ամենայն. և հաւաքեցան յեկեղեցին. զի ո՞վ էր որ ոչ էր սրտառեալ 'ի պղծոյ անտի. և ասացին իշխանք Թագաւորութեանն որ մնացեալ էին ցպատրիարգն. ծծ վաղվա՝ ղակի զՓիսիկդ Թագաւոր 'ի վերայ մեր, և արար այնպէս. և լուաւ Անդրոնիկոս և մոռեալ 'ի նաւ փախեաւ. և ելին զհետ նորա և հասին նմա, և դարձուցին. և 'ի բերրեն կտրատէին զնա պատառս պատառս և ընկենուին 'ի ծովն (1). և զմնացեալն բերեալ 'ի քաղաքն այրեցին զնա հրով։

Իսկ Սալահատինն տիրեցեալ Մինջագեստայ չոգաւ ամենայն ամիրայօքն, և նստաւ 'ի վերայ Բարաքոյ և Շաւպքոյ. և եկեալ Փռանգացն մարտեան ընդ նոսա և յաղթեցին օգնութեամբն Աստուծոյ և հալածեցին 'ի բաց. և ամրացուցին զքաղաքն և զբերդսն ծովեզերեայս։

Բայց եղեւ պատահար ինչ 'ի վերայ Թա՝

(1) Մի օրի. տային 'ի ծովն։

գաւառին Լիրուսաղեմի, և անկաւ յախտ գդ դուԹեան և բժիշկք ոչ կարացին օգնել նը մա. և կացոյց զքոյր որդին իւր Թագաւոր, որ էր անուամբն Իւրոմ, յայժ տղայ։

Իսկ Սալահատինն չոգաւ էառ զԱ՝ծբին. և գնաց 'ի վերայ Ա՝ՕՍլայ. և ոչ կարաց առ նուլ բայց յաւաւել նեղուԹենէ պաշարման ն՝ն խոստացան նմա հնազանդուԹիւն, տալ զօրս նմա 'ի ծառայուԹիւն. և ստեալ 'ի նոցանէ երդումն գնաց 'ի Ա՝ուփարդինն և առ զնս դարձաւ 'ի Դամասկոս։ Լիւ 'ի նոյն ամի մեռան՝ Լորբոտինն, և Խուդբդինն տեարքն ԼմԹայ և Ա՝ներտնայ. որք էին ազգականք միմեանց յԱ՝ՐԹուխեաց անտի, աւերիչք եկեղեցւոյ և ատելոցողք քրիստոնէից, և Թշնամիք ճշմարտուԹեան։ Լիւ յետ նոցա էառ զԱ՝ներտինն Հուսամադինն որդի Խուդբդնին. և Ա՝ՀմբդինՆ տէրն Խալուայ էառ զՍարբերդ. և 'ի նոյն ամի մեռաւ Լմիր Ա՝ներան տէրն ԽլաԹայ Շահի արմէնն։ Լիւ առ զտեղի նորա Բակդեմուր ծառայն իւր։ Լիւ 'ի սոյն ժամանակս Իրինծն Ինտաքայ առ բարբ գործ սիրոյ ընդ Սալահատինն և որսաց զԱ՝ոբէն տէր Կիւլիկիոյ կալաւ զնա. և եդ 'ի բանտի, և եմուտ յերկիրն նորա. և յամեաց անդ զեղանակս ամրան, և ոչ կա

թաց վնասել երկրին զի | Եւ ոն եղբայրն Յոհ-
բենայ իմաստնապէս կուռէր ընդդէմ նորա և
խնամարկէր աշխարհին 'ի շնութիւն և 'ի
դիւրութիւն. և ել ամօթով յերկրէն Յրինձեայ։

Դայց վասն սիրոյ եղբօրն | և ոն ետ զՅոհա-
նա և զԹիլն և զհան զՅոհէն 'ի բանտէն. որ և
յետ այնորիկ առին զիւրեանցն որպէս և էրն։

Ի վեց հարիւր երեսուն և վեց թուին
պատերազմեցան ընդ միմեանց Յադացիքն
ողք են Յարք. և Թուրքն ողք են Թուրգ-
մեանք, և յերկարեաց մարտն զամս ութ. և
այս էր պատճառն։ Զգգք Թուրքաց որ բա-
ցօթեայ շրջին խորանօք շատացեալք ընդ-
դէմ խորշակի և ցրտոյ, զձմեռնային եղանա-
կին երթային 'ի կողմն հարաւոյ սակս կակ-
ղութեան օդոյն և ցամաքութեան երկրին.
և զամառնայինն երթային առ հիւսիս յա-
ղագս առատութեան ջրոյ և զովութեան
խորշակ օդոյն. և յերթեւեկութիւնս յայս
կցորդ լինէին Յարքդ ողք անկեալ յարքա-
յութենէն իւրեանց պանդխտանան ուր և
դիպի. և զաղքատութիւն իւրեանց դպր-
մանեն ծածկապէս շորթելով զայլոցն։ Զատ
որում առաւել քան զայլոց, մեզանչէին
Թուրքաց, գողութեամբ շորթելով զանա-
սունս նոցա։

Digitized by Google

Եւ յաստաղեալ Թուխս գոտան երկերիւղ Բուրդ դարանեալ յերկիրն Շպղթանայ յանցս Թուրքին սպասելով 'ի գողանալ զնոցայսն. և կալեալ զնոսա սպանին. և վասն այսորիկ ժողովեցաւ Բուրդն տասն հազար, և Թուրքքն կրկին քան զնոսա, և կռուեցան 'ի Շպղթան, և վանեցաւ Բուրդն և խապառ կոտորեցան 'ի Թուրքէն։

Եւ լուան զայս ազգն Պարսից որ բնակեալէին 'ի Լերինս Ղզերոյ, և յերկիրն Տիւրեւանդայ. և ձայն տուեալ միմեանց ժողովեցան երեսուն հազարք եկին 'ի Ա՝ծբին և գրգռեցին զԹուրքն. և նոցա նայնպէս հաւաքեալ բազմաձեռնութեամբ գնացեալ ընդդէմ նոցա կռուեցան 'ի մէջ Տարայոյ (1) և 'ի մէջ Ա՝ծբնայ (2) և զօրացաւ Թուրքն և պարտեցաւ Բուրդն խրբեւ զառաջինն. և խապառ կորեան քանզի սատակեցին զերեսուն հազար արան։ Եւ փութացան 'ի բնակութիւնս. և ուրն զկանայս և զտղայս և զկարասիս նոցա, և դարձան 'ի հանդիսանս իւրեանց. եւ հատաւ ազգն Բրդոց 'ի մեծէ մինչեւ 'ի փոքունս յերկրէն Ա՝ինագետաց. մինչեւ անցին ամք ոչ սակաւք և մոռացօնքն եղեն ի

(1) Մի օրի. 'ի մէջատարայոյ։ (2) Երկու օրի. Բ՝ծբին։

բացն. քանզի մնացեալքն 'ի նոցանէ յոյժ սակաւք գնացին մոռին յերկիրն Վիւլիկեաց. ասց խնդրելով 'ի նոցանէ ողորմութիւն։ Այլ զկնի պատերազմին անցելոյ գտին 'ի տուն քրիստոնէից թաքուցեալ 'ի Բրդացն վասն խղճալոյ նոցա. զայրացան Թուրքքն 'ի վերայ հաւատացելոցն և առին զ'յապ Թիլն և ըզ Թուլմանէ[1], և սկսան կոտորել և վաճառել ըզ քրիստոնեացն, և ապաստակեցին առ աւագանն և շարժեցան 'ի բարկութիւն ընդդէմ շրջակայ Թուրքմանին, և առին տուպանս և իւրաքանչիւր ոք յամիրայիցն այնուհետեւ խընամարկէին ընդ ձեռամբ անկեալ քրիստոնեայս։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս Սալահատինի և մեծին Լեւոնի։

Ի վեց հարիւր երեսուն և ութ թուին Հայոց ելոյացաւ Սալահատինն 'ի յաճախութենէ մեղաց մերոց և ժողովեաց զամենայն հնազանդեալսն իւր, զ'Եգիպտացիս և զներքին Լիբէացիս, և զՊոսիս զ'Թուրացիս և

(1) Եբկս. ոչի. Թլմանէ։

զՄինչագետաս, և եղեւ բանակ մեծ և ահա-
գին. և արար պատրաստութիւն զենուց և
մեքենայից որոց ոչ էր թիւ. և խաղայց գբ-
նաց ամենայն բազմութեամբ | եդէ օնին իւ-
րոյ 'ի վերայ Թագաւորին Յերուսաղեմի, առ-
նուլ զբէն վրիժուց կորանաց իւրոց զորս կը-
բեաց 'ի նոցանէ յառաջինն յելանելն իւրում
Այգիպտոսէ երեսուն երկու հազար ոսպ
ռազմիւքն՝ զորս կորոյսն և տկարացաւ. եւ
գանձեաց 'ի սրտի իւրում զվիշտն որոմնա-
թեան մինչեւ եգիտ օր թափելոյ զնոսա։
Եւ զօրն որում ցանկայր նա, եկն եբեր ըս-
պանօղն մեր հին չարութիւնն զոր սերմա-
նեաց որոմնացան մշակն։

Արդ՝ գնաց երկրորդն Յերոբոամ (1) ա-
տանն Սողոմոնի մերոյ Սալահատինն և ե-
հար զբանակն իւր մօտ 'ի Տաբարիա (2). և
գնաց Թագաւորն Յերուսաղեմի 'ի վերայ նո-
ցա. և յիշատակեցան մեղքն քրիստոնէիցս ա-
ռաջի Տեառն. և քննեցան 'ի քանանս արդար
իրաւանցն Աստուծոյ և կշռեցաւ 'ի կշիռս (3),
և գտաւ պակասեալ. քանզի կոմսն (4) Տրա-
պօլեաց եղեալ յառաջապահն բանակ ընդ ա-

(1) Երկու օրի. Ռոբոամ. կրիւս։
(2) Տիբերիա։ (4) Մի օրի. Տարրաուզ
(3) Մի օրի. կռուեցան 'ի կոմսն։

նորէնան. և ծարաւեցոյց զզօրսն և ակարաց-
ցոյց, և մատնեաց թշնամեացն. և ինքն զբ-
նաց անցաւ 'ի կողմ օտարացն. և զօրացան
ասորեքն 'ի վերայ անդամոցն Բրկատոսի. և
արկին զնոսա 'ի սուրս խրտնմամբ սնոտղրմն։

Ի՛Հ ահագին ժամուն և նսեմացեալ պա-
հուն և կորստեան սառուն մեր ասեմ, յորում
հօտն դրօշմաւոր և գաւիթքն երկնաւոր՝ գա-
զանաց մատնեցան ընդ երեսս դիակցոյ դաշ-
ասին. քանզի ծարաւեալ երիւաքն խնդրէին
ջուր դիմելով 'ի ծովն. և թուլացուցանէին
զբազուկս արիական քաջացն. և գայլքն
գիշակերքք ծարաւեալք արեան զարբարս զբ-
ւարակացն խնդրէին զնոսա եռանդնոտ՝ և
արեալ ժանիւքն 'ի համառօտ ժամուս զաս-
տեղապետ բանական ցուցանէին իբրեւ զկոյս
գերբուկ քարանց, և զդրախտն աստուածա-
տունկ իբրեւ զմայրիս կուտորեալս 'ի փայտա-
հարաց. և արդարեւ սաստկացաւ կոծ յի-
րուսաղէմ, այսինքն յամենայն եկեղեցիս իբ-
րեւ զկոծ նռնենեաց կուտորելոց 'ի գաշտի (1)։
Օ՛ի կալան զԹագաւորն մնասաղ, և զվա-
ռեալ գուռնդ Փրկչացն գոմելեաց. և ապան
'ի նոցանէ խստագին Օ՛ամբրի անձինս երեք
հարիւր և զվ՝ զինեն Ն՛ստաքայ, և լուսացաւ ա-

(1) Մի օրի. իբրեւ զկոծ նռնենեաց հարեալ 'ի կարկտէ։

րեսամբ նոցա և եւ փառս Սահմանեալ և ա-
զօթեաց. և առ զՏապարիայ և կատարեաց
զնոսա։ Իսկ չորրորդ ի յԱ՛ղքայ և առ զնա։
Եւ և իշխանքն որ կային անդ. փախեան նա-
ւու ի Սուր։ Իսկ Կեսարիա և Ապարէթի և
Ոստին թագուին զսեղիս խրեանց և փախեան.
և դիւրաւ տիրեաց ի վերայ նոցա որպէս և
կամէրն։ Իսկ ոչ է կարող ոքեւ զնախաւանեան
զանհնտուութիւնն զոր առնէր նա մեզ. ըստ-
ակէս ակէս կատակեանն և զթութքն. և զմնաց-
ցորդս կրեցին Իրիստոսի, քանզի ոչ գրեմք
մի ըստ միոջէ (1) զարդարութիւն անցեալն, զոր
ինչ գործեցին և զոր ինչ խոստացան. զգոս բե-
բրին յինքեանս յորով մատեանք ըստ լեզուաց
ազգաց՝ այլ մեզ թեւաբեկութիւն է ցան-
կալի. և մանաւանդ անողջանալի ապեստեցեալ
մերոց հանդուսանիցք սրոշեաց զլաւեացն. զ ազգ
ըստ ազգաց (2) ազգաց և իշխաց հաստակաց և
արժանաւորութեանց։ Զոսան զի յետ այսոր
ի դնոց ի յԱ՛սիրեալսն, և զի մի աշխատ լիցի
մեզ ամենութիւն ասելոյն, և սակաւ մի
հանգիստ ի սպանութենէ հօտիս հաւատա-
ցելոց, խոստացաւ կարկաւութեամբ, և երգ-
ուցաւ թողուլ զթագաւորն նոցա. ազգատոհ

(1) Այս օրինակն ունի, ոչ գրեմք ըստ մատեանն։ (2) Եւ ազգ ազգ. որ ազգաց ազգաց։

ուր և կամեցի երթալ հանդերձ նոքաք. և ետուն զքաղաքն 'ի ձեռս նորա. և առեալ զԹագաւորն Յրուսաղեմի գնացին 'ի Տիւրոս որ է Սուր անառիկ քաղաք եմիջ ովկիանոսի. և թէ ոչ 'ի նանիր տքնին շինողքն և ընդունայն զգուշանան պահապանքն։

Եւ Սալահատինն միաբան յաղթութեամբ բրն իբրեւ զսլոդովատ եալ խնդութեամբ 'ի սուրբն Յրուսաղէմ, և աւուրս ինչ պաշտրեաց զնա՝. և զի ոչ գոյր նոցա ուստեք ոչն կալութիւն, կամեցան տալ զքաղաքն և մնասնել զանձինս անյագ որոյն հեթանոսաց։

Բայց նա անդանօր եցոյց զանձն մեծամիտութիւնդ, և կորեաց նոցա գինս տասն դահեկանս ըստ գլուխս տալ և գնալ 'ի խաղաղութիւն, և արարին այնպէս. և եկանէին կականեալք յարտասուայն իբրեւ զգառինս 'ի մօրէ զատչէին բառաչելով յաստուածընկալ քաղաքէն՝ շարժելով յարտասուս վիմեղէն սրտից ունկամ. որ մնացին 'ի տեղին էին քսան հազար տրք և կանայք. և աղաստեաց 'ի նոցանէ չորս հազար (1) անձինս ծերոքս և պառաւունս. և եւթն հազար տղայս ապուս. և էգ բաշխեաց զօրայ իւրոց. և հինգ հազար երիտասարդս առաքեաց Ալեքսանդրիոյ

(1) Մի օրի. երեք հազար։

յաղիւ-ազգութիւն 'ի շինութիւն պարարապայ և սպարանից. ազատածին որդիքն Սիոնի դարձան 'ի գերծս հնոյն Իսրայելի 'ի մերոյն փարաւոնէ. զոր ետ մեզ չարչարիչ անմարմինն փարաւոն. և հինգ հազարս և թող անդէն Յերուսաղէմ շինել զպարիսպն յամրութիւն, իւրում անձինն սեպհականեալ զնա։ Իսկ զտաճարն լուսային արեամբ քրիստոնէիցն զոր անդէն սպանին. և դարձեալ լուսային ջրով, և ապա վարդի ջրով. և աղօթեցին 'ի նմա և ստացան ինքեանց. և ետ Սալահատինն գիր սահմանի, զի մի մրոյէ 'ի նա քրիստոնեայ. և որ մտանէ, մահուս պարտական լինիցի կամ հաւատոյն. և զտաճար սուրբ Յարութեանն արար ընդ հարկաւ զի որք գան 'ի նմա աղօթականք, տայցեն դահեկան մի կարմիր ըստ գլուխ մարդոյ։

Եւ յետ այնորիկ գնաց Սալահատինն 'ի վերայ Տիւրոսի ամենայն պատրաստութեամբ. և քանզի եկեալ էր անդ կոմս մի՝ և մտեալ 'ի քաղաքն նախ քան զպաշարելն զնա, այր քաջ և հանճարաշատ, 'ի ձեռն նորա ապրեցայց տէր զՅուր 'ի պաշարմանէն, և ոչ ինչ կարաց նմա մեղանչել։ Եւ ել անտի Սալահատինն և գնաց 'ի Ակռոն, և առ զնա գիւրաւ։ Եւ գնաց անտի և մտաւեաւ ընդ

Պերուզթ, և ընդ Ղեպելն և ընդ Լինին (1). և զկնի սակաւուց մատնեցան 'ի ձեռս նորա. և տիրեաց 'ի վերայ նոցա։

Իսկ 'ի Թուին վեց հարիւր քառասուն՝ գնաց Սալահատինն 'ի Բարաք և 'ի Շուպաք. և նստաւ 'ի վերայ նոցա. և շատ աշխատեալ զզօրս իւր յաղթահարեաց զնոսա, և առեալ կոտորեաց զնոսա և գերեաց և յաւարի եհար. և գտաւ 'ի Բարաք (2) այր մի լցեալ արծաթով որ հալ մի էր պակաս առ 'ի զտել և սրբել զնա ամենեւին. և ոչ կարացին առնուլ 'ի պէտս. և ոչ գտաւ արուեստաւոր որ կարէր իմանալ ինչ 'ի նմա. և թողին զնա նոյնպէս և գնացին։

Զկնի այնորիկ գնաց Սալահատին յերկիրսն Սեհոնին և պաշարեաց զՍատիկն, և առ զնա. և մարտուցեալ ընդ Ղեպելէ քակեաց զնա. և թողեալ զնոսա չոգաւ 'ի Պալբաս և հնազանդեաց զնա. և 'ի վեր մատուցեալ կռուեցաւ ընդ պարսպակն (3), և փլոյց զնա։

Եւ դարձաւ 'ի Դամասկոս. և զսահեաց Լուսկանին իւրոյ. և արար խնդութիւն տան նոսն Սալմանաց, և խնդացոյց զզօրս իւր

(1) Մի օրի. Տֆինին։ (3) Մի օրի. գաբպակն։
(2) Մի օրի. և գտաւ 'ի Մի օրի. Գաբսկակն։
քարաք մի լցեալ։

պարգեւաք և առատ ուռճկաք. և արար առաք սիրելեացն Քրիստոսի։

Յաւուրսն յայնոսիկ Ճասան զօրագլուխն Իսլիճ ասլանայ դառնացոյց զնա ընդդէմ որդւոյն իւրում, և ատէր զնա. իսկ նորա զբաղումս յանպուցեալ յինքն՝ արար մեծ հանդէս զօրաց պատերազմել ընդ հօրն. հաւաքեցաւ (1) և հայրն նոյնպէս ընդդէմ որդւոյն։ Իսկ նախ քան զդիպելն նոցա Ալահրամ շահն տէրն Իրզնկային, որ էր փեսայ նոցա անկեալ 'ի մէջ նոցա նուաճեաց 'ի խաղաղութիւն սիրոյ. և հաշտեցան։ Բանզի ամաչէցին 'ի ծերութենէ Սուլտանին զօրքն որ ընդ որդւոյն միաբանեալ էին, և առ ժամայն խաղաղութիւն խօսեցաւ ընդ ամենեսեան Սուլտանն։ Բայց զկնի այնորիկ սպան ապստամբացն չորս հազար անձինս. և զՃասան զօրագլուխն սպանին հրամանաւ որդւոյն. և մի յորդւոցն Սուլտանին որում ամենուն էր Զգզին Խայատ շահ (2) էառ զՍնել տեսնի 'ի ժառանգութիւն իւր։

Ի վեց հարիւր քառասուն և մի թուին Ճայոց շարժեցաւ տուն Փռանկաց խառնիճաղանչ բազմութիւն առանց թագաւորի. սակայն բորբոքեալ սրտիւ յաղէտս քրիստոնեից. Ամենայն ազգաց ազգաց ազգաց

(1) Մի օրի. հաւաքեցան։ (2) Մի օրի. Խահար շահ։

թիսանեից և 'ի սէրն Երուսաղեմի յաժարու-
թեամբ դիմեալք եկին ընդ ծով. և ելին մի-
այն (1) Ի՛ քայոյ 'ի դուրս. և զ՝Ի՛ քքայ ամրացու-
ցեալ էր Սալահատինն և կացուցեալ 'ի նմա
հարիւր հազար այր պատերազմող, և մար-
տնչէին ընդ միմեանս. և Սալահատինն ոչ
վստահանայր օգնել քաղաքին. և հանդար-
տեցին Փռանգքն և շինեցին տուն բաղնի-
ս, և եկեղեցիս և ջրաղացս (2) որպէս սահն
չորս հազար շինեցին. և եղեւ 'ի յամենալնա-
ցս անդ. ել թագաւորն Ի՛ լամանաց (3) և գը-
նաց 'ի Կոստանդնուպոլիս. և ժամանակ մի
կուսեցեալ ընդ նոսա. և զի յերկարէր գործն
արար ընդ նոսա սէր և անց յայս կոյս (4) ծո-
վուն. և որպէս է նենգութիւն Յունաց ա-
ռաքինորդեցին նոցա ընդ անկուր և ընդ ա-
ռաւարս քարաժայռաց և անկոխս. և պա-
կասէր 'ի նոցանէ օր ըստ օրէ։ Ի՛ յլ և Թուրք-
մանն զիստէր նոցա յայտնի և 'ի ծածուկ։
Այլ հասեալք յԱկռնին քարաք զբաղում
կոստրեցին 'ի Թուրքացն. և իմացեալ Սու-
լտանին արար ընդունելութիւն նոցա և ետ

(1) Երեք օրի. 'ի մինայն։ Յոյանին։
(2) Երկու օրի. Ջրաղացս և Ջրաղացս. այսինքն ալիրի էրբ էրէ։ Եանան յենդաթի դոր.
(3) Երեք օրի. Ալամաց։
(4) Չորք օրի. Յայնկոյս։

ճանապարհ և առաջնորդս, և բերին զնոսա
'ի Աղեքսանդրիայ. և մինչ հանգչէին նոքա անդ.
և Թագաւորն կամեցաւ լոգանալ 'ի գետն,
յանկարծակի յարդ մանէ շարին 'ի նոցն մեռա-
ցուցանէ մեռելոցն մերոց ընկղմեցան և հեղ-
ձան (1) 'ի ջուրն. և կորեան անդէն։ Իսա գրե-
ուեալ զմարմինն և տարեալ յԱնտիոք Թագաւո-
ցին անդէն բան արժանաւոր ողբալով զնոս (2)։
Իսկ զոքն առանց գլխոյ մնացեալ տարակու-
ուեցան անդէն։

Իսա Լեւոն իշխանն Կիւլիկիոյ եղբայրն
Որոնեայ որդին Խոսփանեայ ապար բազուժ
մարդասկրութիւն բաժանելով զզրան յեր-
կիրն. և զաւելի մասն առեալ 'ի առն իւր
կերակրեաց և խնամեաց զնոսա զձմեռնային
ելանակն, մինչեւ եկին նոցա առաջնորդք եր-
կու. և գնացին Յ՚Քքայ, և առին զքաղաք-
քն և կոտորեցին զԹուրքն որ անդ. զյոլով
մասն սպահեցին կենդանի զի գնեսցեն նոքաք
զգերիսն որ 'ի Դամասկոս յաղդէն Փռանգաց.
Իսա յոլովամաւ կամեցան փոխել զնոսա. կո-
տորեցին 'ի նոցանէ քսան և հինգ հազար
անձինս 'ի վերայ միմեանց. և կանգնեալ 'ի

(1) Զողբ օրի. հերձաւ։
(2) Ասա՝ յայ և խոսի. մնեալ։ անդ զանձինս, որ չեմ տա-
ժան լեալ. զ Բերիոս ասէ յա-
միսի Ի Ի Ամիայէ ՀԷՐ ՆԷ-
յայ Խաղանն. և զնոցն ողբաց։

վերայ դիականցն արարին աղօթս 'ի փառս անուանն Քրիստոսի. որպէս արար Սալահատինն 'ի վերայ քրիստոնէիցն. և շինեցին վերստին զԱքքայ և բնակեցան 'ի նմա։ և զարդեր քեռ Ինկլիթեռ (1) թագաւորին եդին կամն Աքքայոյ. և քանզի եհաս համբաւ ինչ սրտամգին յերկիրն իւրեանց, արարին խաղաղութիւն ընդ Սալահատինն. և դնացին յաջ խարհն իւրեանց։

Իսկ 'ի թուին վեց հարիւր քառասուն երկու՝ մեռաւ Խլիճ ասլանն 'ի Կոնն, և անդէն թաղեցաւ թագաւորական երիսուն և ութ. և մնաց թագաւորութիւն նորա երկոտասան որդւոց նորա։

Իւր զկնի ամի միոյ մեռաւ Սալահատինն 'ի Դամասկոս, և եթող քսան երեք որդիս. զաւագն կացոյց 'ի Դամասկոս, և զերկրորդն 'ի Մար, զերրորդն 'ի Հալապ, և կարգեաց զնոսա Սուլտան. և այլոցն տուեալ տուրս կայոյց ընդ ձեռամբ նոցա։ Իւր եղբայր մի էր նոցա Յետալ անուն. կոչեաց զնա Մելիք. և եւս նմա զԱռհայ գիտաւան, զԵրուին, զՄուփաղին, զԱմուսատ, զԽՀատաք, զԲարաք և զՇ՞ոպաք, որ և յետոյ ասա զՄՀՀբին և զԴաղայ։

(1) Երեք օրի. Եւ զորդի Վիլեանին թագաւորին։

Եւ տէրն Յիսուս արար միաբանութիւն ընդ եղբարս իւր ընդ տէրն Հոգւոյ և ընդ տէրն Հնձարայ. և եկն նոքօք առնուլ զխաղողն, և կալաւ զնա ցաւ (1) 'ի ճանապարհին և գարձաւ անդրէն 'ի Յիսուս. և գնացին եղբարքն 'ի տեղիս իւրեանց։ Յորժամ գնացին նոքա մեռաւ Հոգեղէնն. և առ զտեղի նորա Սրբոյն որդի իւր։

Եւ 'ի նոյն ամի մեծն Հեւոն իշխանն Հայոց կալաւ զԵրինձն Հնոտքայ, և արկ զնա 'ի չարչարանս, փոխարինեալ նմա զյանցանս նորա՝ զոր արար Խաբեանայ եղբօր իւրում. և եկեալ կոման Հնոտքոյ Թափեաց զնա առ զաչանօք 'ի ձեռաց նորա, զի այր խաղաղաչարէր էր նա և բարեսէր, որում անուն էր Հեռի։ Իսկ արիագոյնն Հեւոն տիրեաց եւ Թանասուն և երկու բերդից. և եղ անուն նորա ընդ ամենայն երկիր. և փուԹացան պատկեալ զնա տուն Յունաց և տուն Փրանգաց. ըստ որում առ աքեցին նմա Թագ յերկաքանչիւր կողմանց, 'ի պարծանս ինքեանց առնելով զնա. և էր այնու հեռեւ Թագաւոր Ճոխ և անուանի և ահարկու 'ի վերայ ասաւար ազգացն որ շուրջ էին զնովաւ և գոզային 'ի նմանէ. վասն որոյ ապաւինեցան

(1) Եբէք օրի. լանին դցաւն։

'ի նա որդիքն Իսրայէլ ասլանայ. քանզի տկարա-
ցան 'ի բաժանել ինչանութեան իւրեանց
'ի բազում մասունս. քանզի ոմն թագաւո-
րեաց 'ի Լօնն որ կրոսերն էր, և ոմն յԱպ-
լասթայն, և ոմն 'ի Աէոկեասրն. և այլք զայլ
մասունս աշխարհին առին, և էր հակառակ-
կութիւն 'ի մէջ նոցա. մինաւանդ յուսա-
ցաւ 'ի նա Աելիքն որ ունէր զվերջին աշ-
խարհն (1), և նստէր յԱպլասթայն. և նա եկ
'ի դուրս և յաւել 'ի բաժինն նորա բերդս
և գաւառս։

Իսկ թագաւորն Սորայ Աելիք Զիզն ե-
կրն 'ի վերայ եղբօր իւրոյ 'ի Դամասկոս։ Զա-
յուսաւալ զայն Աելիք Յեհուն հօրեղբայրն նոցա
գնայ առ նոսա առնել խաղաղութիւն 'ի
մէջ եղբարցն, և արար նեղութիւն մեծ.
քանզի արբոյց դեղ մահու թագաւորին Սուրայ.
որ և ընդ հասանելն 'ի Սոր՝ մեռաւ, և
առ յինքն զԴիպատոս և տիրեաց նմա։ Զոյն-
պէս խաբեաց և զԱելիք Սալեհն. և ասայ
գնան յերկիրն իմ 'ի Սամուսատ և կայ 'ի խա-
ղաղութեան և 'ի հանդարտութեան, և քեզ
լիցի Աւուհայ և Խառան և Սուղայ. և ես
նստեալ 'ի Դամասկոս կացիս ընդդէմ փառա-
գին, և ամենայն թշնամեաց մերոց. և հա-

(1) Մի օրի. զվերին աշխարհն.

ւանեցաւ և կամեցաւ առնուլ զգանձս հօր իւրոյ և գնալ. և ասէ ցնա միթէ ոչ վստահանաս յիս, քանզի և իմն ոմ է, եթէ ոչ քո. արի և գնա և ես բառնամ զամենայն և առաքեմ զկնիկ քո. և հաւատացն նմա. և յարեաւ գնաց և զառաջինն չոգաւ նա յԱղայ, որ մանաւանդ պատրեաց (1) զնա։ Այլոց նոցա գիտելով զկամս Յեսուին՝ ոչ ընկալան զնա 'ի ներքս, և ոչ պատուեցին զնա. դարձաւ անտի և եկն յԼեռհայ. և ոչ նոքա ընկալան զայրն պարզամիտ. զի և ոչ 'ի նոցանէն էր ծածկեալ խորամանկութիւն հօրեղբօր նորա. դարձաւ յայնմանէ զայրացմամբ և չոգաւ 'ի Ամոնատատ, և զայն եւս ուն 'ի ձեռս նորա. և նստաւանդ. այլոյն եւս ակն ունելով յետ այնորիկ։

Իսկ Ելիք Յեսուն շրջեալ և տեսեալ զտունս գանձուց Խալահատնին, և զարմացեալ ընդ յառաւելութիւնն և ընդ պատուականութիւնն զոր ոչն կարծէր ադահեաց 'ի յիշան, և ոչ կամեցաւ տալ 'ի նմանէ եղբօրորդւոյն իւրոյ. այլ և ապար զնա ծաղը. քանզի եդիտ նա տուն լցեալ մատուտակով զոր կուչեն ըստ աշխարհաց Նորուխա կուտեալ 'ի պէտս ինչ, զայն եբարձ քսան բեռն և կշռեաց մատանեաւ, և առաքեաց առ նա։ Իսկ

(1) Եբրէ օրի. պատրաստեաց։

նորա տեսեալ զնախատինս իւր, ապաշաւէր այնուհետեւ զանմտութիւն իւր. քանզի չէր ձեռնտհաս օգնել խելսոյ իւրոյ և կամ փոխարինել նենգչին, որ ընկէց զնա 'ի բարձրութենէ 'ի խոնարհ. վասն որոյ ոչ ետ նմա պատասխանի, այլ եթող կարող դատողին (1) Աստուծոյ և վերջին օգնականին։

Իսկ պսակաւորն Հայոց | եւն բարուք կարգաւորեալ զաշխարհն իւր լայն իմաստութեամբ և կարող ձեռօք ընդդիմանայր արտաքին թշնամեացն. եւ խաղաղացաւ 'ի կեանս իւր շինելով բազում վանորայս և զառաջագոյն շինեալսն ընդարձակելով առատաւէս տալով զպէտս նոցա. այլ և արձանագրով սեպհականէր նոցա գիւղս և ագարակս այպիս և անդաստանս, և դրեթէ ետ նոցա զպարարտութիւն երկրին իւրոյ, և առատացոյց զուռճիկս նոցա պատրաստագոյնս 'ի ծովէ և 'ի ցամաքէ. և ոչ միայն զհամապգի վանորայսն այնպէս փարթամացուցանէր, այլ և զայլաբնակս քրիստոնէից, զՀայոց և զՓիլոռանդաց, այլ և զՅունացն և զԼատինաց ոչ պահելով նոցա ոխս զոր արարին նոքա ընդ նմա և ընդ ազգն նորա արենայս. այլ և ընդ ա-

(1) Մի օրի. դատաստանին։

մենայն ուղղադատանա առ հեռաւորս և առ մերձաւորս։

Իսկ նա բարեգութ լեալ առ ամենեսեան բարի առնէր եկեղեցականաց և աշխարհականաց. և էին եկեղեցիք նոցա պայծառք և անկարօտք յանապատս և 'ի քաղաքս սահմանեալ մուխք որ են մինչեւ ցայսօր ժամանակի. և այսպէս բազում դրուատիւք կեցեալ առ ամենայն ազգս, հանդերձ 'ի Քրիստոս. Թողով դուստր մի Ժառանգ Թագաւորութեան իւրոյ. զոր տուեալ յամուսնութիւն որդւոյ Ինոիրքայ, որում անուն էր Փիլիպ, և եդին զնա Թագաւոր գրաւեալ զնա երդմամբ զի պահեսցէ դդաւանութիւն և զօրէնս Հայոց. որ և կեցեալ ամս երկու խաբեալ լինէր 'ի հօրէն իւրմէ, և ընդ ա կամս հայէր յաւուդ իշխանն Հայոց, և խորհէր բառնալ զնոսա. զոր իմացեալ նոցա ըմբռնեցին և եդին յարգելանս ժամանակս ինչ, և անդէն վճարէր 'ի կենաց։

Եւ ընտրեցին զորդի Կոստանդեայ փառաւոր իշխանին Կիւլիկեցւոց, որ էր յազգականութենէ անտի Լեւոնի աքքայի, որում անուն Ճանաչիւր Հեթում. և պսակեցին ընդ նմա զաղջիկն Պայազատ արքայութեանն Օտակէ կոչեցեալ ըստ Փառան

գաց բառին, որ է ըստ Հայոց Լուսաբերի, պարկեշտ կենաց, և երկիւղած ի տեառնէ, հաճոյ Աստուծոյ, և գովելի ի մարդկանէ, բարեսէր կամաց, և զգայշ քաղաքավարութեամբ. զոսա զուգեալ ընդ Հեթմոյ եռուն ցնա զԹագաւորութիւնն տգոյ տիսվք բայց զարդարեալ ծերունական հանճարով հայդարտ արդասիք և լայն խորհրդով. զոր յարդեան ժամանակիս ունի զԹագաւորութիւն հայկական զարմից յաւելով որ ըստ օրէ յիմաստս և ի վարս հաճոյս նովին թուքոհեաւն՝ զուարճացեալ և ծաղկեալ որդւովք. և լեցի հայցուած ի մէնչ և ազգանաց ի սրբոց Տեառն բարերարի և ամենակալի և մարդասիրի յերկարել և յաւելուլ ի ժամանակս նոցա, և ի պատիւ փառաց իշխանութեան նոցա ընդարձակեալ և տարածեալ ընդ բնաւ Հայաստանեայս յորդիս յորդւոց մինչեւ ի գալուստն ինքնագաւն և ամենակալ Թագաւորին անմահի Տեառն և Աստուծոյ մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ է օրհնեալ ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյն

(1) Սակ պարոն Լեւոն որդին Սամփանեայ

(1) Ա. յս պարբերութիւն որ ընդ Լեւոնէ և ղ յարքորդութենն նորա պակսիր գիրսի յայլսմ ձրինակի, և ի Հնոգունին՝ ոչ գիտաս ապանօր յաւելեալ։

որ ըստ օրէ երթայր և զօրանայր Աստուծով յաջողեալ, և յամենեցունց փառաւորեալ։ և յայնժամ յարժամ տկարացոյց Աստուած շուրջանակի զթշնամիս նորա, և ի կոր կոր ծանեաց զամենայն հակառակորդս նորա. և տիրեաց նա լիով երկուց Կիլիկէից, լեռամբք և դաշտօք, քաղաքօք և ամրոցօք դղեկօք, էառ քաջութեամբ իւրով և զհաւարակն Սորսյուոց. և մնասունս ոչ սակաւս Երկրորդ Կապադովկացւոց. յԵրրորդ Հայոց զոր ոմանք Ուռաջին անուանեն Հայք։ Դրաւեաց ընդ իւրով իշխանութեամբ և յԱսորեստանեայց գաւառաց. և ցուցաւ. ինքնագլուխ և ճոխ իշխանութեամբ. զի ոչ ոք տիրէր ի վերայ նորա։ Ի համբաւ արիութեան նորա թուլացուցանէր զՍիս անօրէնաց. և պարզէր զերեսս քրիստոնէից և լնոյր խնդութեամբ և ուրախութեամբ։

Վասն որոյ փութային պատուեալ զնա թագիւ. թագաւորն Յունաց վասն պատճառին, զի թերեւս հնարք լինի նովաւ յաղթել թուրքացն, որ բռնացեալ կալան զիշխանութիւն նորա։

Իսկ թագաւորն Փառանգաց, վասն դաշանց սիրոյն զոր ունէին ընդ Հայք ուխտիւք ի հին ժամանակաց։ Ի վասն այսա

բիկ երկոքին առաքեցին նմա թագ ոսկիա-
կազմ. և պատկեցին զնա յոգեթուրթեան պա-
կաւն ըստ վայելման և պատշաճի արժանա-
ւորութեան իւրում։

Եւ այսպէս վերստին նորոգեցաւ թա-
գակալութիւն Աբրամեան զաւակին, և թա-
գքն Հայկազանց և Արենեքերիմանց եղաւ
ի գլուխս արժանաժառանգ զարմին Եւանի
ի վեց հարիւր քառասուն և հինգ թուին
Հայոց՝ այր բարի և ազատամիտ և արիական
և հեզ, և մեծահաւատ։ Որ և բազմայոյց
զարդիւնս առատաձեռնութեան, ելից
վանորայիք և անապատաւորք վաշխարհն
իւր և շինուածք եկեղեցեաց, զմանն՝ ազ-
նիւ և զապարտութիւն երկրի իւրոյ տա-
լով նոցա և նուիրելով Աստուծոյ՝ արձանա-
գրութեամբ և կոտակք անյուծիք։ Եւ
էր ահագին առ օտարսն, և բարեմիտ առ
իւրան, ահաւոր առ անիրաւեալսն, և ողոր-
մած առ որբս և այրիս, և առ ազքատս։ Եւ
հեզ և խոնարհ առ ամենեսեան։

Եւ այսպէս դրուատիւք թագաւորեալ
ամս քսան երեք, հանգեաւ ի Քրիստոս քա-
ջի անուամբ և ուղղափառ հաւատով կեն-
ցաղավարեալ. թողով ժառանգ թագաւո-
րութեանն դուստր մի, Հռիփսիմէ անուն.

Digitized by Google

յանձնելով զնա մեծ իշխանին Կիրատնայ, սոսկալի երդմամբ. տալ զնա որդւոյ Թագաւորին Լենկուայ (1)։ Կիրտելով զնա Հայոց դաւանութեամբ, զի դեռ երեխայ էր։ Որոյ նենգեալ ախտին ըստ բնական ատելութեանն Յունայց ընդ ազգիս Հայոց, քանզի Հոռոմէր ազգաւ, խորհէր 'ի միտս յինքն առնուլ զիշխանութիւնն. վասն որոյ փութապէս 'ի խնամոցն Աստուծոյ առեալ զարժանն պատուհաս՝ սպանաւ 'ի Հաշիշեանցն. սակաւ ժամանակս հինչ կալեալ զպայլութիւնն։

Յետ նորա տուաւ նա որդւոյ Երին-ձին Անտիոքու Փիլիպ անուն. որ ատելութեամբ գնայր ընդ իշխանս Հայոց 'ի խրատս հօր իւրոյ խաբեալ և Թագաւորեալ մաս երկու, և վախճան էառ 'ի կապանս։

Այլ Թերեւս կամք վերին խնամոցն անօրինէր և դարձուցանէր զմարդկօրէն անհաստատութիւնն. և զչարաբարութիւն ոմանց 'ի բարիս. քանզի զայն դաւաղանն փոքրիկ զոր ետ Աստուած Հայկազանց 'ի միխիթարութիւն լքեալ և խոնարհեալ ազգին, փոխանակ բարձրացեալ Թագաւորութեան նոցա, զայն ոչ կամեցաւ տալ 'ի ձեռն օտար ազգի. վասն որոյ յետ բազում ժխորմանց և ամբո-

(1) Մի օրի. Ռենկաւազայ։

խից և վիճմանց, ընտրեցաւ որդին պա-
բոն Կոստանդեայ 'ի Թագաւորութիւն. զոր
ընտրեալ էր Տէր յորսվայնէ, գեղեցիկ հա-
սակաւ, և բարի խորհրդով, մեծահոգի, և
երկայնամիտ, հեզ և հանդարտ 'ի տիս ման-
կութեան։ Յետ տուաւ նմա յամուսնութիւն
շառաւեղն օրհնութեան ազատուհին Օ-
պել։ Ընթերին 'ի գովելութենէ աստուա-
ծապաշտ և երկիւղած կնոջ, ողջախոհ և ցա-
ծուն և անզարդասէր և լուին լիահաւատ և
մեծայոյս։ Քրիստոսասէր և արքասէր, աղ-
թասէր և ծերունի հանճարով, 'ի տղայու-
թեան հասակի։ Յետ քաւ բանն Սաղոմոնի
թէ՝ 'ի Տեառնէ պատշաճի կին առն։ Օ-
ի վայել են նոքա 'ի մի մարմին կատարիլ 'ի
Քրիստոս օրինաւք։ Զան որոյ սիրեսցէ զնոսա
Տէր. և եհան 'ի միջոյ նոցա զմեքենայն
սատանայի, որ զառաջինն հակառակէր ըստ
բնական իւրոյ չարութեանն. և աջողեաց
նոցա տէր յամենայնի և ետ նոցա ուստերս
և դստերս։ Յետ այժմ թուին Հայոց վեց
հարիւր ինանաւն և հինգ։

Այլ որ ինչ 'ի միջոցի աստ եղեն, և զայն
սասացուք համառօտ։

Ի ժամանակս Թագաւորութեան Հայոց
Լեւոնի, յորում էր թիւն Հայոց վեց հա-

բիւր վաթսուն և հինգ, եւ 'ի տէրութեան-
նէն Կայսրադովկացւոց աշխարհին, Խոստրով
Շահ Սուլտանին. և 'ի ժամանակս Մելիք
Յետ Սուլտանին, որ բռնացեալ ունէր զԿ-
գիպտոս, զՇրուսաղէմ, և զԴամասկոս, և
զՄիջագետս Աբուլոց և զՊաթայ իշխանու-
թիւն, ելին զօրքն Փռանգաց յԱքքայ,
հրամանաւ պապսուն Հռովմայ. առնուլ 'ի
Տաճկաց զաստուածակոխ քաղաքն Շրուսա-
ղէմ։ Զոր լուեալ զհամբաւ ելիցն նոցա
ազգքն անօրինաց, սրտաբեկեալ լինէին։

Իսկ որդի Մելիք Յետ Սուլտանին. գբ-
նացեալ Շրուսաղէմ. քակեաց զսուրբ Սի-
ոնն որ կոչի մայր եկեղեցւոյ։ Եւ այլ բա-
զում ուխտեր և եկեղեցիք և զԱղարեթայ
եկեղեցին և Թողին զսուրբ գերեզմանն Քրիս-
տոսի Աստուծոյ մերոյ զՅարութիւնն, և
զՈղջոմթայն և զԵթղահեմի եկեղեցին։
Եւ զայլն ամենայն և զպարիսպն Շրուսաղե-
մի առ հոսարակ քակեցին. և հայր նորա
Մելիք Յետն արարեալ ժողով ամենայն զա-
ռաց իւրոց, առ ծովն Տիբերական բանա-
կեալ զտեղն առնոյր։

Եւ լուեալ Հռովմայեցի զօրացն. դիմե-
ցին գնալ 'ի վերայ նոցա պատերազմել. և
որչափ ոսքա մատենային 'ի բանակ նոցա նո-

Digitized by Google

քան օթեւանոք ընդ կրոնին դարձեալ հեռանային. և յերկարէր այս 'ի քաղաքս աւուրս։ Մինչեւ ձանձրացեալ քրիստոնէիցն կամեցան յետս դառնալ երկուցեալք 'ի խաբէութեանց նոցա։ Եւ յաղագս անծանօթութեանն աշխարհին խորհեցան դառնալ Այգիպտոս. և համակամութեամբ ամենայն զօրագլխացն խորհուրդ առեալ իջին Այգիպտոս, և հասեալք 'ի քաղաքն որ կոչի Տէմիսթ, պաշարեցին զնա. և 'ի նեղս արկեալ ընդ յերկար, մինչեւ երրորդ մասն քաղաքին սատակեալ լինէր 'ի սովոյ և 'ի տարաժամ մահուանէ որ անկաւ 'ի նոսա։ Եւ ապա առին զքաղաքն և կոտորեցին զմնացեալսն առ հասարակ. և առին յաւարի զմթերս գանձուց նոցա և լցան առ հասարակ ոսկւով և արծաթով։

Եւ յայսմ ամի մեռաւ Մելիք Յեռոն։ Եւ որդիք նորա Մելիք Քեմէն Սուլտանն Այգիպտոսի, և Աշքարին, և Սուլտանն Դամասկոսի Սուղատանն. և այլ եղբարքն նոցա առ հասարակ ուրաբեալ ժողով բազում և անհամար զօրաց, եւ 'ի Թուին Հայոց վեց հարիւր վեցասուն և վեց, մտին Այգիպտոս։ Բայց յերկեղի լեալ, ոչ իշխէին պատերազմել ընդ Քրիստոնեայսն։

Digitized by Google

Եւ 'ի նոյն իսկ Քրիստոնեայքն իբրեւ առին զՏէմիսթն, կամեցան երթալ առնուլ և զայլ քաղաքսն։ Եւ էր. ընդ նոսա Թագաւորն Աբքսայոյ Ութճուանն վեհայն Հայոց Թագաւորին Լեւոնի, և Իսմբլն (1), և Սպիթաքն և այլք բազումք յիւրաքանչիւր կողմանց յաղերոց 'ի նոսա։ Եւ գնացեալ բազմութիւն զօրացն բանակեցան առ ամն Ալեղոս գետոյ, 'ի հարթայատակ դաշտի միում. և իմացեալ անօրինացն, լուծին զկապս ջրաքաղիս սեղեացն. և ելեալ ջուրն շրջապատեաց զզօրսն։

Եւ Ամիր տականքն յարձակեալք 'ի վերայ նեռաձգութեամբ սկսան խոցոտել զամենեսեան. մինչեւ անցոյս լինելոյ Քրիստոնէիցն 'ի փրկու թենէ, տուին զքաղաքն զոր առին. և յանձն առին դառնալ յիւրեանց աշխարհն. և դաշինս եդեալ՝ հաստատութեամբ մնալ 'ի նոյնն, երդուան և Սուլտան նայքն նոցա անվնաս պահել զամենեսեան. և այսպէս 'ի շփոթս հասեալ զօրացն Քրիստոնէից, դարձան 'ի տունս իւրեանց։ Իսկ Մելիք Յեսան 'ի վախճանելն իւրում զաւագորդին զՌեմն, կացոյց իշխան 'ի վերայ ացլոցն. և ամենեքեան հնազանդեցան նմա. զի էր բարեբարոյ և իմաստուն. և առաստաձե-

(1) Մի օրի. Յամիթն։

ռքն առ ամենեսեան։ Այնպէս և իւր եղբայրն Աշոտին որք կալան զիշխանութիւն հօրն իւրեանց բազում ժամանակս։

Ի թուին Հայոց վեց հարիւր վեթսուն և եւթն՝ Յեքայուզ Սուլտանն Հոռոմոց, որդի Խոստրով Շահ Սուլտանին յաղթող եղեալ քան զՀայն իւր, լինի պատճառ շնորհի ընդ Թագաւորն Հայոց Լեւոն. եւ բազում զօրս ժողովեալ հասանէ ի Կիլիսան Հայոց. և պաշարէ զամուր գլեկն որ կոչի Կոպան. և բազում առուրս մարտուցեալ ոչ կարաց առնուլ զնա։

Այս Թագաւորն Հայոց Լեւոն զիւրոյ ուշխարհին զօրքն գումարէր, և փութայր եկանել ընդ առաջ նորա։ Այս նորին զօրագլուխն պարոն Կոստանդին Գոնդստապլն. որ էր քեռորդի Թագաւորին Լեւոնի, ա ռեալ սակաւ ինչ գաւնգս ի զօրացն, յառաջ մատուցեալ ի կիլիճբա լերանցն, և սպասահեալ գնգի մնում ի զօրացն Թուրքաց. և անկեալ ի վերայ՝ զամենեսեան կոտորեաց և ըմբռնեաց ի նոցանէ արս գլխաւորս. որք ազատեցին նմա զքուն գալուստ զօրացն Սուլտանին. և աղաչէին դառնալ, և բաւական համարիլ զյաղթութիւնն զոր արար. եւ նոքա ոչ անսացեալ բանից նոցա. առաւել

եւս յանառեալ և քաջայերեալ զզօրսն. հանդ դիպի ծանր զօրու կուռ վառելով զինեալ, և 'ի պարտութիւն մատնի Կոնդատապն և զօրքն որ ընդ իւր. և ամբառնեցան ինքն և պարոն Կոստանդին | ամբառնցին և Կեռասակն, և այլ մեծամեծ իշխանք. Թող զքու կոտորեցան 'ի նմին տեղւոջ, իբրեւ հաղարաւոր պատերազմողք։ Յե ընբառնեալ զնոսա դարձաւ 'ի Կեսարիայ։

Իսկ Թագաւորն | եւն իբրեւ լուաւ զկոտորումն զօրացն, և զընբառնումն իշխանացն, առեալ զզօրս իւր արշաւեր 'ի միւս այլ կողմն աշխարհին Հռոմոց և բերէր աւար անթիւ, և կուտէր. իբրեւ զաւազ առափն ծովու։

Յե յետ սակաւ աւուրց սրարեալ սէր ընդ միմեանս. եւ Թագաւորն Հայոց | եւն զքերդն Ղլաայ, և Թափեաց զիշխանն որ ընբառնեալ էին։ Յե խոստացաւ տալ Հռոմոց Սուլտանին յամենայն ամի երեք հարիւր այր 'ի ծառայութիւն, և հնազանդեցաւ նմա։ Յե այս լինէր 'ի ծերութենէ և յանկարութենէ մարմնոյն. և իշխանայքն ոչ էին ընդ նմա ուղիղ։

Յե 'ի սոյն իսկ յայսմ ամի սրարեալ ժողովք Սուլտանն Քեքայուզ զօրաց, առեալ և

'ի թագաւորէն Հայոց օգնականութիւն. զայ յերկիրն Հալպայ 'ի Յունաստան և առնու զնա. և անտի գնայցեալ 'ի Թլպաշար առնու և զՔ Թլպաշար և զՆեթափ։ Եւ կամեցաւ գնալ 'ի վերայ Հալպայ. և երեք ամաւ յառաջ Սուլտանն Հալպայ վախճանեալ էր Մելեք Տահրն։ Եւ որդի նորա Մելեք Ազիզն մանուկ գոլով ամաց հնգից, ունելով զիշխանութիւնն։ Եւ էր նորա սիթապակ մի յոգ իմաստուն. առաքեաց առ թագաւորն Հայոց Լեւոն, և խնդրեաց 'ի նմանէ օգնական լինել. թերեւս զերծանիցին հնարիւք նորա 'ի հասեալ բարկութենէն. և խոստացան նմա տալ բազում գանձս ոսկւոյ։

Եւ թագաւորն Հայոց այնուհետեւ 'ի հոգս անկեալ իւրով կորովմիտ իմաստութեամբն. առաքեաց զանխաբար առ Սուլտանն Հոռոմոց, մինչ 'ի սահմանս Թլպաշարայ էր, գրեալ առ նա այսպիսի օրինակաւ։

«Թագաւոր Հայոց Լեւոն. եղբօր մերոյ Մելքայուղ Սուլտանիդ 'ի Տէր խնդալ։

«Յուշ լիցի քեզ իբրեւ սիրելոյ մերում. զի իմացեալ հաստատեցաք. եթէ քաջասուն ամիրայ 'ի զօրաց քոց դաշինս եդեալ են տալ զքեզ 'ի ձեռն Ազատիուն։ Եւ դուն այսուհետեւ զգուստ անձին քո խոր-

հեաց. զի մի անկցիս՝ի ձեռս ատելեաց քոց. ողջ լեր »։

Եւ իբրեւ ընթերցան առաջի նորա ըզ-պատճէն նամակին. իսկոյն զարհուրեալ ա-հիւ մեծաւ հրաման տայր զօրացն դառնալ անդրէն փութանակի։ Եւ ինքն յառաջ անց-եալ ածապարէր գնալ. զոր իմացեալ Նշ-ապուհն և զհետ մտեալ արար փախստական։ Եւ ինքն դարձեալ էառ զԼուսան և զԹըզ-պաշար, և դարձոյց՝ի Հալասպ։

Եւ այսպիսի օրինակաւ այնքան մեծ Լու-տանն շփոթեալ՝ի պարտութիւն մատնէր. և հասեալ՝ի Կեսարիայ զամիրսյին զայնոսիկ զքառասուն խաշել հրամայէր։

Եւ յայսմ ամի եկն դեղին մարախ եւ ծածկեաց զերինս և զդաշտս. և եկեր զա-մենայն ծառ սահմանաց մերոց մինչեւ՝ի ըս-պառ զերբիս և զչորս ամս։

Ի վեց հարիւր վեթասուն և ութ թուա-կանին Հայոց | Եւ ոն Թագաւորեալ ամս քը-սան երեք, մեռաւ (1)։ Եւ յանձն արարեալ

(1) Մի օրի. ոնի այսպէս. իսկ վեց հարիւր վեթասուն և ութ թուականին Հայոց | Ե-ւոն Թագաւորեալ ամս քսան երեք։ և մեռաւ. տասն ամ իշխեսն եկաց Հայոց. և յետ տասան ամի Թագաւորեաց ամս քսան երեք. և յետ և յա-ռաջ զամս երեսուն երեք։ և մեռաւ։

զիշխանութիւն աշխարհին և զդուստր իւր զ.Օ.ապեէն 'ի Միրատանն, որ էր ազգաւ Հռոմ. և զկնի սուղ ժամանակի սպանաւ 'ի Հաշիշեայն. որպէս վերագոյնն գրեցաւ։ Եւ առնու զհոգաբարձութիւն աշխարհին պարոն Կոստանդին, որ էր քեռորդի Թագաւորին Հայոց Լեւոնի։

Յայսմ ժամանակի ոմանք յիշխանացն Հայոց ապստամբեալք, եղեն ընդ Ռոբի նայ Իրնծին Ինտիոքու, կամելով զնա թագաւորեցուցանել. յորոց էր Ռ'օպլին Պարա ջափտ և Լեւոն Կապանու տէրն և Կեռասակն և այլք. որք առեալ զԻրնծն Ռոբէն և մտին 'ի Տարսուս և ամրացան։

Իսկ պարոն Կոստանդին և տէր Յովհան նէս կաթուղիկոսն, գնացին զօրօք և պաշարեցին զնոսա սուղ ինչ ժամանակս. և յաղթեցին նոցա. և առին զքաղաքն. և ընդունեցին զապստամբսն որ և ամենեքեան բանդարգեալք եղեալ վախճանեցան 'ի կապանս. և հանդարտեցաւ երկիրն. բայց տէր Յովհաննէս կաթուղիկոսն յառաջ քան զառնուլ քաղաքին վախճանեցաւ. 'ի թուին Հայոց վեց հարիւր վաթսուն և ինն։

Եւ ապա միաբանութեամբ ամենայն իշխանացն, և եպիսկոպոսացն ընտրեցաւ յա-

Digitized by Google

մենեցունց տէր Կոստանդին. որ էր եպիս-
կոպոս Անկիւրոյն։ Եւ եղաւ յաթոռ հայրա-
պետութեան Հայոց 'ի Թուին վեց հարիւր
եւթանասուն։ Եւ եղեւ ուրախութիւն ա-
մենեցուն. յաղագս առաքինի և բարեբարոյ
և խաղաղասէր մտացն. որով ամենեցուն
հոչակաւոր լինէր։

Իսկ իշխանացն Հայոց բազում անմիաբա-
նութիւն լինէր վասն դնելոյ թագաւոր. զի
աչ հաւանէին միմեանց։ Եւ ապա 'ի մի կա-
մաւ եկեալ ընտրեցին զորդին Ինձին Աշտի-
զաբու թագաւորեցուցանել. զոր և սարարին
խակ. և եռուն զդուստր թագաւորին Հայոց
Լեւոնի նմա 'ի կնութեան. և թագաւորե-
ցուցին 'ի վերայ Հայոց 'ի Թուին Հայոց,
վեց հարիւր եւթանասուն և երկու։ Եւ
անուանեցին զնա Փիլիպ թագաւոր։

Ի Թուին Հայոց վեց հարիւր եւթանա-
սուն երկու, եղեւ երաշտ սաստիկ. և յեր-
կարեաց յոյժ մինչ զի 'ի Հոկտեմբերի հա-
սարակն նշենիք ծաղկեալ եղեն 'ի Ջերմու-
թենէ օդոյն։ Եւ անպատմելի վշտաբ տա-
ռապէր երկիր զերիս և չէրս ամս։ Յայսմ
ժամանակի մեռաւ Սուլտանն Բաքայուզն
և առնու զՍուլտանութիւնն կրտսեր եղբայր
նորա Ալադինն։

Ի թուին Հայոց հազար եւ թանասուն և երեք՝ Փիլիպ թագաւորն Թոլտրով[1] հօր իւրոյ, կամեցաւ ընդունել զերկուս մեծամեծ իշխանսն. զսպարան Կոստընդին՝ որ էր թագաւորահայրն, և զսպարան Կոստընդին՝ Լամբրունին տէրն։ Որ իմացեալ յառաջ քան զսպարան Կոստընդին, և ընդառնեաց ընդ նա 'ի թիրն Համոնոյ. և տարաւ 'ի Խարբերդ, և անդ վախճանեցաւ։ Իսկ հայր նորա Երինձն Ինտիոքու լուեալ տրտմեցաւ յոյժ։ Եւ զն անկարանայր առնուլ զվրէժ որդւոյն՝ առաքէ առ Սլադին Սուլտանն Հոռոմոց։ Որոյ եկեալ էառ զՍանձին[2], և զվանքին և զՍաղոտ խաչն. և արար վնաս բազում 'ի լեռնակողմանս։

Եւ Երինձն ժողովեալ զօրս եմուտ յերկիրն, եկն ընդ սահմանսն, որ կոչի Ռկեր. և եհաս մինչեւ 'ի թիրն Համոնոյ։ Եւ ոչինչ օգտեալ դարձաւ ամօթով յԻնոաք։

Ի թուին Հայոց վեց հարիւր և թանասուն և հինգ՝ միաբանութեամբ ամենայն իշխանացն տուին զՕսկէլ դուստր Լեւոն թագաւորին, 'ի կնութիւն Հեթմոյ, որդւոյ սպարան Կոստանդէայ, և թագաւորեցուցին 'ի վերայ Հայոց. որ էր տղայ հասակաւ.

(1) Մի օրի. Ֆ տպագրվ։ (2) Մի օրի. զՊանձին։

և հայրն նորա կարգաւորէր զթագաւորութիւնն, որ և արար սէր ընդ Աղդին Սուլտան. և հնազանդեցաւ նմա. տալով նմա յամենայն ամի երեք հարիւր այր 'ի ծառայութիւն։

Յայսմ ժամանակի լուաք զհամբաւ երկուց ազգաց անաստուածից և գազանաբարոյից. որոց անուանքն Խորազմ և Տաթար. որք եբրեւ հուր ընդ խուիւ ընթացեալ, ապականեցին զերկիր ուր և հասան. և ոչ ոք ընդդիմացաւ նոցա, և տարսեցին 'ի համբաւոյ նոցա ամենայն որ 'ի ներքոյ երկնից։ Այլ սկիզբն ելից նոցա 'ի բուն աշխարհէն իւրեանց 'ի վաղուց ժամանակաց է. և զբազումս աշխարհս և զազգս և զթագաւորութիւնս աւերեալ և քանդեալ, հասին յաշխարհն արեւելից։

Յայսմ ժամանակի թագաւորէր Արքայց դուստր Թամարին Լեռուզուքան, և էր Աթաբակ նորա Իւանէ. եղբայրն Օաքարիայի (1), որ էին ազգաւ Հայք. և 'ի հրապարանաց Թամարին Արքայի եղեւ Իւանէ. և 'ի հակառակս դառնայր կրօնից Հայոց։

Յայսմ ժամանակի 'ի գաւառն Աղձոյ եղեւ նշան ինչ, զի կրօնաւոր մի սուրբ և

(1) Սա այս Իւանէ՝ հայր Զաքարիայի չէր 'ի պապամէնից։

ընտրեալ վախճանեալ Հայ ազգաւ, որոյ գերեզմանն երկնաւոր լուսոյն վկայեցաւ (1), և փառաւորեցաւ, որ և ամենեքեան տեսին. և ել համբաւ նորա ընդ ամենայն երկիրն։ Իսկ Իւանէ նախանձ շարժեալ ամենայն Պ ըսաւոյքն նախատէին և թշնամանէին, և յետոյ զսակերս սուրբ Կրթնաւորին հրամայէին այրել հրով, և 'ի տեղի պատուական ոսկերացն սաստակեալ շուն թաղէր։ Եւ եպիսկոպոսն Ինոյ տէր Յովհաննէս բազում բանիւք յանդիմանէր զանաստուածն Իւանէ։ Իսկ նա ըստ պատնայր կամ դարձուցանել 'ի Պ ըսոյ թիւն զամենայն Հայս, և կամ հանել յաշխարհէն։

Եւ մինչ յայսոսիկ էին եհաս համբաւ խորազմին. և նոքա փութով ժողովեալ զօրս կամէին եկանել ընդդէմ նոցա 'ի դաշտամէջն Դառնի քաղաքոյ. զոր չինեաց մեծ արքայն Հայոց Տրդատ բերդ և սարաւոյթ 'ի մեծամեծ վիմաց թագաւորութեան իւրոյ, որ կայ անխախտելի մինչեւ ցայսօր։

Իսկ ամբարիշան Իւանէ ամենայն զօրքն Պ ըսոց գնայ և իջաւ 'ի լեառն Դառնոյ, որ կոչի Ազուջերն (2)։ Եւ ապա խորհեցան միա-

(1) Մի օրի. երկնաւոր լուսոյն վաւեցաւ։

(2) Մի օրի. Ագռուջերն։

բան առաքել զմեծ իշխանն քաջ և անուանի
գլուանէ զերդայր Շալուայի փոքր ինչ զօրաք
ընդ առաջ խորամին. որոյ հասեալ 'ի դաշ
տին Գառնոյ որ կայր առաջի իւրեանց հա
րիւր մղոնաք 'ի զատէ. ապա ընդդէմ ելին
անօրէն խորամիքն և սկսան պատերազմել
ընդ նմա. և յորժամ խառնեցան 'ի միմեա
նս Լուանէ երդայր Շալուային, և խորաշ
միքն, յայնժամ առաքեաց զմի 'ի զօրաց իւ
րոց առ մեծ զօր հեծելսն գալ փութանա
կի յօգնութիւն նմա։ Լուն նա 'ի գնալն ձայ
նէր որպէս սովորութիւն է թէ՝ շուտով հա
սիք, և ձայնն ձիաւորին ոմանց լսելի լինէր թէ՝
փախիք և մի գայք։ զի չէմք կարող դիմանալ
ասցա։ Լուն. ոմանց լսիւր թէ փութանակի
հասիք կարող եմք յաղթել. և մինչ 'ի յայս
էին, փախեաւ Աթաբակն Լուանէ անկանել
յամուրս երկրի իւրոյ, և բազմութիւն զօ
րացն փախստեամբ անկանէին 'ի գետաղաքա
քին Գառնի, որ շինեալ է 'ի վերայ բարձր
քարախարամի, և գետ յորդ անցանէ ընդ
տակ խրամին. և յորժամ 'ի փախուստ դարձ
ան անկանել յամուրս տերեցան, նոյն ժա
մէն մրրիկ. փոշի մթացոյց զաչս փախուցե
ալոցն. և առ հասարակ լցան ընդ բարձր և
ընդ յոյժ ահագին խրամն Գառնոյ 'ի գետն

յոգնանուտ. և խորազմիքն յետոյ հասեալ պնդացեալն սրոյ մատնէին. և ասային թէ՝ սլամ։ Ի ցաւոյն հրով այրեցաւ. նշանակեալ թէ աստուածացին է բարկութիւնն։ Իսկ ղքաջ իշխանն Շալէ ընդառնեցին կենդանեւոյն, և տաբան առ Յուլանն իւրեանց. և այսպիսի ահապին վրէժս էառ Աստուած յանպարտաւանն և 'ի կենցաղասէր ազգէն Ալքայ, վասն անպգերոյ նոցա զհաւատս Հայոց։

Իսկ Պարսիկքն որ 'ի Դուին քաղաք, լուեալ զպարտութիւնն Ալքայն ընդառնեցին զգվեստաւորս քաղաքին և սպանին. և ապա սուր եղեալ կոտորեցին զամենայն Քրիստոնեայս որ 'ի քաղաքին։

Իսկ զայսոսիկ լուեալ քաջ և անուանի իշխանն Հայոց որդին մեծին Ասակայ Բագրատունի Հազարակայ Պռօշ անուն և առեալ զոր զօրս իւր գնայ 'ի Դուին. և գտեալ սպատճառս բռնի մտանէ 'ի քաղաքն սիրոյ սպատճառաւ և զուգեսէր խաբէութեամբ. և կոչէ զամենայն մեծամեծսն որ 'ի նմա և 'ի սիրելն գնասս, յանկարծակի յիշէ զկոտորումն Քրիստոնէիցն թէ զինչ սպատճառաւ սրաբերիք, և ապա հրամայեալ զօրացն իւրոց առ ժամայն սուր 'ի վերայ եղեալ կոտորեցին

Digitized by Google

առ հատարակ. և ինքն գարձաւ խաղաղութեամբ 'ի տուն իւր։

Յայսմ ժամանակի եկին Խորազմիքն եւ պաշարեցին զմեծ քաղաքն Վրաց զՏփխիս. և Պարսիկքն որ կային 'ի քաղաքին, ետուն զքաղաքն 'ի ձեռս Խորազմեացն. և Խորազմիքն խոստացան Թոզուլ զՊարսիկսն խաղաղութեամբ ստացուածք իւրեանց, և ապա առեալ զքաղաքն կոտորեցին զամենայն Քրիստոնեայսն որ 'ի նմա. նոյնպէս և զՀրուտան. և զամենայն ազգ բաց 'ի Պարսից. և արարեալ ընդ ձեռամբ իւրեանց զքաղաքն, գնացին։

Իսկ 'ի գալն գարնանային ժամանակին, եկն Թագաւորն Վրաց 'ի Տփխիս. և կատարեաց զՊարսիկն որ 'ի նմա. և մնաց քաղաքն աւերն 'ի մարդոյ և յանասնոյ։ Յայսմ ամի սատղ մի գիսաւոր երեւեցաւ յերկինս, և անյայտ եղեւ։

Ի Թուին Հայոց. վեց հարիւր եւ թանասուն և եւթն Ալանաց Թագաւորն Ինքբուրն եկ բազում զօրօք 'ի Կիպրոս կղզի. և գնացեալ յԵրուսաղէմ, երկրպագեաց սուրբ տեղեացն։ Իսկ Փրերքն Դամբլան ասացին 'ի Բեմելն. որ էր Սուլտան Սարաց գալ 'ի նմա զօրօք որպէս զի տացեն զԻնքբուրն 'ի

ՀԵՌԱՍ ՆՈՐԱ. ԻՍԿ ՎՐԵՄԻՆ ԱՌԵԱԼ ՁԹՈՒՂԹ ՓՐԵՐԱՅՆ, ԵՎ ՅՂԵԱՑ ԱՌ ԱՆԲՐԱՌՆ, ԵՎ ԵՂՑԷՑ ՆՄԱՆ ԶՆԵՆԳՈՒԹԻՒՆ ԱՊՂԻՆ ԻՒՐՅ. ԵՎ ԵՏՍԻՐՈՎ ԶԱՐՈՒԱՍԱՂԷՄ ՅԱՆԲՐՈՒՆ. ԵՎ ՀԱՍՈՒՍՏԵՑԻՆ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ ԴԱՇՆ ԵՎ ՈՒԽՏ ՍԻՐՈՅ ՅԱՒԻՏԵԱՆ։ ԵՒ ԱՆԲՐՈՒՆ(1) ԱՌԵԱԼ ԶՊԷՐԵԶՄԱՆ ԵՏ Ի ՓՈՒԱՆՆՆ, ԵՎ ՀԱՆԷՆ ԶՏԱՃԻԿՆ. ԵՎ ԻՆՔՆ ԱՆԲՐՈՒՆ ԳՆԱՑ ՅԱՇԽԱՐՀՆ ԻՒՐ։ ԵՒ ՅԱՅՆՄ ՀԵՏԷ ՍՊԱՌՆԱՅՐ ԴԱՄԻԼՈՒՆ ՔԱԿԵԼ ԶՈՒՆՆ ՆՈՅԱ ՈՐ ՅԱՅՆԿՈՅՍ ԾՈՎՈՒՆ։

Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՎԵՑ ՀԱՐԻՒՐ ԵՒԹԱՆԱՍՆ ԵՎ ՈՒԹ ՎՐԵՄԻՆ ԷԱՌ Զ ԴԱՄԱՍԿՈՍ Ի ԱՐԵՎԼՔ ԱՍՈՐԷՆ. ԵՎ ԵՏ ԵՂԲՕՐ ԻՒՐՈՒՄ ԱՇՐԱՓՈՒՆ, ԵՎ ՏՈՅ ՆՄԱ ՏԵՂՔԸ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԶ ԶՇՕՍԱՔ ԵՎ Զ ԲԱՐՍՔ ԵՎ Զ ԱՄՍՈՒԶ, ԵՎ ՅԱԼ ԲԱԶՄԱՄ ՏԵՂԻՍ. ԻՍԿ Զ ԻՄԱՊԵՏՍ ԱՍՈՐՅՑ, Զ ԱՐՈՀԱՅ ԵՎ Զ ԽՍԱՆ ԵՎ Զ ԿՈՒՇ ՈՐ ԷՐ ԵՂԲՕՐՆ ԻՒՐՅ ԱՇՐԱՓՈՒՆ ՅԻՆՔՆ ԱՌՆՈՒ ՎՐԵՄԻՆ։ *

(1) ԵՐԷՅՄ ԸՆԲՐԱԲ։

*Ա ՅԱՂԷՍ ՎԷՐՔԱՍՈՒԻ ԵՒ ՅԵՐԻՍԱՍ ԳԻՆԱՅՆ. ԵՒ ԲՈՒՆ ՍՍՈ ԿԱՄ Վ ԱՐՔԱՆԱՅ ԳՐԷԱԼ Դ ԲԱՐԳՄԱՆԷՆ, ԵՎ ԿԱՄ ԳՐԻԳՈՐԻ ԵՐԷՅՈՒ ԱՒՆԱՅ ԱՆԱՊԱՊԻ, ՈՐՅ ԻՐՈՒՄԳԻՐ Է ՕՐԻՆԱԼ։ ՍՈՂՈՄՆ Վ ԱՐՔԱՆԱՅ ՊԱՏԻ Է ՆՈՅՈՒԹԻ. ՂԻ ԵՎ ԳՐԻԳՈՐ ԵՐԷՍ Դ ԷՐԷՋ ՕՐԻՆԱԼԻՆ ՈՐ Դ ՎԷՐՋ ՊՈՊՈՄԱԼԻԱՆՆ Է, ԱՍԷ. "ԳՐԵՑԱԼ ԳԻՐՔՈ ԱՆԱՄՔ ԱՍԱՍԱՊԷԱԼ ԳՐԻԳՈՐՅ ԶՈՐ ԿԱՄՔՆ ԱՍՈՐԾՅ ԳՐԻՍՑՈՒՔ ԵՎ ՄԷՔ ԶԱԿԱԿՈՐԹԻՒՆ ՍՈՔՈՒ ՎԱՄՆՑ. ՔԱՍԱՍՈՒՆ ԵՎ ՀՈՐԻՆՆ։ ՑՏԷՐ ԱՍՈՐՈՒԱԾ Ո ԶՈՐՄԵՆ Վ ԱՐԴԱՆՅ ԾԱՌԱՅԻ ՔՈ ՅԱՌԱՐԱ Զ ԱՂԱՄԵԱՆ ՔՈ Ո. Ի ՅԱՆԷՑԱ ԶՊՈՊՈՄԱԼԻԱՆՆ ԹՈՎԱՐՅՅ։

Digitized by Google

Այլ մեք թեւք լցեալ զկուր բանիս և թըռուցեալ ի վերայ ծովացեալ պատմութեանց յոքուն, և հասեալք ի մինայս հանգստեան մերում կենցաղավարութեան, դարձեալ նովին յուսալ երկնաւոր աքանչելեացն և շնորհաց Հոգւոյն սրբոյ, երկրորդ անգամ ծովամուխ լինցուք յանհասական խորս քահանայական կարգաց և զարդուց. եթէ ուստի սկսաւ և ուր լցաւ և յո կատարի, տեղեկացցուք ըստ մերում կարի աշխատեալք ի պարգեւն Աստուծոյ. եթէ զինչ է քահանայութիւն և զինչ է գործ և ասորիճան քահանայութեան և պատիւ նոցա. և հանգուցցուք զյօժարութիւնս մեր ի փառս Աստուծոյ։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Նոքին առաւն Միխայէլ յաղագս քահանայական կարգաց թէ ուստի առնու զսկիզբն։

Սկիզն քահանայութեան շնորհի է անժամանակին Աստուած, որպէս և ամենայն բարութեաց. քանզի ամենայն տուրք բարիք և պարգեւք կատարեալք ի վերուստ անտի իջեալ են առ մեզ ի Հօրէն լուսոյ. որոյ առաջին և

անդրանիկ է յայլսն պարգեւքս այս քահանայական. զարդ, զոր ինքնութեամբ և անբաղձաբար ունի զնա ապէնիական Աստուած. ոչ յումեքէ առեալ և ոչ զոք ունելով վերագոյն ինքեան՝ որով քահանայեսցէ և փառաւորեսցէ. և վասն այնորիկ ոչ է 'ի նեղքոյ հարկի միայն նորա քահանայութիւն, այլ բաշխելով և բաժանելով զպարգեւսն իւր, է նա քահանայ։ Համարձակելի է մեզ 'ի ծանօթութենէ գրոց ասել զամենատուրքն Աստուած՝ քահանայեալ յանհասանելի ծնունդն Որդւոյ և յանթարգմանելի և յանհասանելի բղխումն Սոգւոյն սրբոյ, անժամանակ անակնջնապէս անախտաբար և առանց միջնորդի յէութենէ և 'ի բնութենէ իւրմէ. անձինք և երեքք ծանօթականք Որդւոյ և Հոգւոյ կատարելապէս իմացեալք, և մնացեալք 'ի նոյն բնութեան և յէութեան և յաստուածութեան և 'ի զօրութեան և յանմահական մշտնջենաւորութեան, 'ի մի կամս և 'ի մի իմաստութիւն և 'ի մի գործ և 'ի մի ճոխութիւն և 'ի մի թագաւորութիւն և 'ի փառս կացեալ յաւիտեանս իւրով, անպատապէս բաժանեալ և անխառնաբար միաւորեալ. այս է առաջին և անառաջական 'ի բնութենէ քահանայու-

թիւն վերագոյն և անանուաստ և ազատ քաւ-
չապետութիւն։

Իսկ երկրորդ քահանայագործութիւն ըս-
կսանի սա զօրս լուսեղինացն դասուց յԱրդ-
ւոյն և 'ի Հոգւոյն, գոյացութեամբն երկնի-
որ բնակութիւն է նոցա և խորան անձեռա-
գործ բանիւ կատարեալք և հոգւով լցեալք
ըստ վկայութեան գրոց թէ «Բանիւ Տեա-
ռըն երկինք հաստատեցան, և հոգւով բերա-
նոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։ բնու-
թիւնք անմարմինք և անմահ կենդանիք մշտ-
ապաշարժք 'ի բարիս և անշարժք 'ի չարիս։ և
թէ հեղգաշարժս ասել յաջողակ թռչիցի
ումեք յաղագս խաւարեալ արուսեկին, զոր
ասեն առաջին և վերագոյն ամենայն դասուց
զնա գոլ։ և յաղագս այնորիկ հպարտացեալ
աստուածանալ կամէր անձամբ։ որ է առա-
ջին ցաւ մտեալ 'ի կամս բանաւորաց։ և այլ
քան զի կան և մնան, քանզի մի քան զմի խա-
նարհ տեսանէին զինքեանս, և այն արգելոյս
զսխատն։ և այլ եւս զի խրատեցան առաջին
հիւանդումն և կան 'ի յողջութեան։ և դարձ-
եալ զի արդ տեսանեն զԱրդի մարմնոյն, և
երկիւղ երեւեցելոյն ոչ հնոսա անախտս,
որպէս առնէր անառեսութիւնն զանհոգու-
թիւնն։ նախ քան զմարգելութիւնն տուաս

նոցա շնորհ և աստիճան փառաց. այն՝ զոր Դաւիթ ասէ «ի արար զՀրեշտակս իւր յոգիս և զպարկաւորունս իւր հուր անկիզանոյշ և դարձեալ ասէ «օրհնեցէք զտէր ամենայն հրեշտակք նորա հզօրք զօրութեամբ սարկաւագունք կամայ նորա և բանի նորա». եւ այս է գործ նոցա օրհնել զՍտուած և փառաւորել զնա ըստ Յայտեայ և Յղեկիելի։ Այլ և առաքինի սպասաւորութիւն, այսինքն՝ ի սարկաւագութիւն այնոցիկ որ ժառանգելոց են զփրկութիւն. և են բաժանեալք յերիս երրեակս դասուց կարգաւ. ՝ի կայանին առեալ զփառս և զշնորհաւորութիւն վարդապետութեանն, զոր դայեկաբար խնամեն առաջինքն զերկրորդն խնամալի կերակրովք սընուցանելով յաճախութիւն աստուածային հանճարոյն. զոր առնուն առաջինքն ՝ի բացեալ նոցա լուսոյն անձառելոյ Յրրորդութեանն քան չափոյ կարելի բնութեան նոցա տարողութեանն. և անծերանալի կենաց սարկաւագեն Յստուծոյ՝ ի նմանէ զօրացեալք տալով առաջնոյն՝ ի միջինն. և միջինն՝ ի վերջինն անցուցեալ և՝ ի յՍտուած դարձուցեալ զնաս կատարեն զզարգն երկնից։

Յե քանզի առաջինն գեղեցկապէս ունէր խորան լուսեղէն հրեղինաք լցեալ պաշտօնէ-

իւք անճառելի փառաց, և անլիծուական բազմութեամբ և անքանակ բարձրութեամբ։

Շրկրորդ ապա տպատուեղծէր (1) բանիւ հաստատակատոյց հիմամբ և անենդուկ ձեռամբ կատուցեալ խորան խորհրդական և յոքնաժողով եկեղեցի՝ զիւլիթական զայս աշխարհ. որոյ իշխան և գլուխ կազմէր զ՚դամ տուրով նմա շուք քահանայութեան, որ է գեղ պատկերի իւրոյ. և գնէ զնա ի լուսընկալ բեմի բարձրացելոյ արեւելեան մասինն յորազուարծ գրախտին փափկութեան, ՝ի յարտացոյցն հոգեւոր և անթառամ խնամութեանն Ա՚ստուծոյ. զոր հոգիացոյց զնա միշտմամբ հանճարոյն, զի այնու քահանայացուցն Ա՚ստուծոյ մշանջենաւորին մշանջենապէս. և այնու օրինակաւ էջ շնորհն քահանայութեան ՝ի ներքին բանականաց ընդարձակեալ. որով շնորհիւ օժանդակեալ (Ա՚դամ) կոչեաց զանուն արարչին իւրոյ Ա՚ստուած, որ է ստեղծիչ ՝ի գոյութիւն յանդոյիոյ. և տեսեալ զգործս արարչին իւրոյ, ընդ նմա անուանեաց զնոսա հրեշտակս որ է բանաստարս. զի տանէին առ նա բանս. և ապա ամենայն շնչոյ կենդանւոյ կոչեաց անուանս յարտանուանութեան որ կան մինչեւ ցայսօր ժամանակի յիշատակ

(1) Ա՚յլ օրինակք. ունցս ստեղծէր։

խմաստութեան արմատն մարդկութեան, և շնորհի քահանայութեան նորա 'ի փառս տուողին Աստուծոյ։

Իսկ եթէ զինչ է քահանայութիւն, ապացուք։

Քահանայութիւն կարգ է բարձր, և աստուծեան սուրբ. որով բարձրանայ առ Աստուած ըստ կարի և լինի վերապոյն քան զամենեսեան որոց քահանայն է, և է միջնորդութիւն բարձրութեան և նուաստութեան որ բերէ 'ի վայր և տանի 'ի վեր. և ոչ ոք անձամբ կարէ առնուլ զքահանայութիւնն, որպէս ասէ սուրբն Պօղոս. այլ կոչեցեալն Աստուծոյ. և է նա շնորհ աստուածեղէն սուրբ որ ասէ զքահանայն. «սուրբ լերուք զի ես սուրբ եմ. և 'ի սուրբս բնակեմ». և բնակէ յարժանաւորսն այսպէս. որպէս ոչխս քնդ յօդ և հուր յերկաթ միանալով և ներքուստ 'ի ներքս խօսի կամն Աստուծոյ. և դնէ 'ի սրտի զփրկական արքայութեան, և զբանալի դրանն երկնից, և մտին առ Աստուած. և կոչի նա ծնողութիւն երկրորդ և անախտ երկուանք. և ասի դաստիարակութիւն անապական անանդեանս։ Զ ըստ մերում լեզուս Աստուծոյ քահանայն Փարթամ Թարգմանի. այսինքն երկնաւոր հարատութիւն, անմահա-

կան գանձուն սրահուստ և բաշխու�մն. և բոլոր
Հայկական բառին քարիչ ստուգաբանի կամ
հարկանող . որ է վերժինդիր չպահոզաց
պատուիրանին Աստուծոյ , և ոչ անձին. որպէս
Փենեհէան այն եղոյց զնախանձն Աստուծոյ :
Եւ բոլոր այլուս կոչման նմանութիւն բարե-
բախտիկ վասաց՝ որ է Աստուծոյն . որ է ըն-
կզնատիպ անստացական քահանայութեամբ
պարգեւք առողջոյն . որոց առաջինքն հան-
դիպին կուսական և անապական բնութիւնք
հրեշտակաց . և երկրորդ՝ բաշխեցաւ նախատ-
տեղծն մարդոյն մարմնոյ և արեան վիճակե-
լոյ . ուստի և մարդասէր կոչեցաւ առողն .
բայց զի անարատից վայել է աստիճանաստուա-
յանմերոյութեանն , և 'ի մեղանչելն նուազե-
ցաւ շնորհն . թէպէտ և ոչ ամենեւին բար-
ձաւ 'ի նոյն ատացեալ մարդասիրութենէն
մինչեւ 'ի լրումն աւուրց լցաւ :

'Արձեալ յորժամ յուսկեալ 'ի խնամոյ իւ-
րոյ եղև մարդ մարդասէրն Աստուած, և այս-
րէն դարձոյց յիշեցուցանելով 'ի վերնատանն
զիշումն առաջին . և քանզի բնաւին ոչ բար-
ձաւ շնորհն պատուիրանազանցութեամբն
Ադամայ 'ի բնութենէս . ցուցանէ քեզ Ա-
բել արդար որդին Ադամայ մեղաւորին. որ և
քահանայական օրինաց հրէականին մատու-

ցանէր Աստուծոյ յանբանիցն պատարագս. և մեծացեալ ի նա շնորհին մատեաւ անձամբ պատարագ Աստուծոյ, անարժան ձեռաքս յաբրինակ Տեառն մերոյ և Աստուծոյ, պիղծ քահանայիւն նուիրեալ և ողջակիզեալ։ Սակայն Կային անկաւ ի շնորհէն զհիւն իւրով յօրինակ այնոցիկ, որք զտէրն պատարագեցին Հեւտայիքն, և անկան ի քահանայութենէն զոհիւքն իւրեանց և որդւովք, նման Կայենի տարագրելոյ ծննդովք իւրովք յերեսաց Աստուծոյ և յաղագէն Ադամայ, անօրէն վնասակար ոչ յաջողեալն ի տան Աստուծոյ. որպէս և այժմ անարժան քահանայք անկեալ լինին յեկեղեցւոյ և ի ժառանգութենէ. զոր և Հեղի օրինակեաց. քանզի երբայց նախ զդժոխս և լայնեաց զան մահու, և արբոյց երկրի դառնապոյն ջուր. ուստի աճեցոյց զփուշս և զտատակս և արգել զառատութիւն ցորենոյ և գինւոյ։

Սակայն էանց պարգեւքն այն ի յինովս, որ զոյսն պատարագեալ Աստուծոյ, էառ վստահութիւն կոչել զՏէրն անուն ազնութիւն անկեալ աղգին։ Իսկ զանարժանութիւնն զանց արարեալ քահանայական պատուոյն երեւեցաւ յինովք, որ յաւել ի յոյսն Հնովսայ զպահս և զաղօթս, պատարագելով Նա

Digitized by Google

տուծոյ զամն հարիւր վասթսուն և հինգ, հաշուեցոյց զԱստուած ընդ բնութեանս կործանելոյ. և ըստ խնդրելոյն Նովքայ օգնեաց և էառ զքահանայն արժանաւոր ի դրախտն, ուստի ել անարժանն. և յայս եւս նովաւ անմահութեան կենաց մնահակուլ ազգիս. և կոչ և մնայ քահանայ միշտ ի Տէր Նովք, հաճեալ ընդ նա Աստուծոյ։ Իակ յետ նորա դարձեալ ծածկեցաւ ի մեղաւորայն և ծաղկեցաւ յարդարն Նոյ փառքս այս. որ եգիտ զնորհս զայս յԱստուծոյ ըստ վկայութեան գրոցն. քանզի պատարագէր Աստուծոյ զսրբութիւն կուսութեանն ամն հինգ հարիւր, խնդրելով ի Տեառնէ զի պակասեսցին մեղք յաշխարհէ, և ամբարիշտ մի եւս գտցի ի ամս. և լուաւ նմա Աստուած և ջնջեաց զյանցաւորս յանցանօքն իւրեանց, զի մարմինք եղեն. և ոչ եւս նոցա Աստուած հոգի քահանայութեան և եթող զՆոյ և զարդարութիւն իւր միայն, որ և յետ ջրոյն դարձեալ մաքրեցանէր զՆաբելին պատարագ ի հատ ամենուշնոյ Տեառն Աստուծոյ. որ էր ստուերաբանն ի գոլորշի հուսոյ և ոչ յարդիւնս իրաց կատարեալ կերակրոց. որ էր փրկութիւնն մեր զոր կատարեաց Տէրն մեր. և հոսն այն վաքքն էր արդարոցն և ոչ ճենճեր ճարպոցն.

և յետ այնորիկ ամփոփեալ հնորհին 'ի կապաշտիցն՝ ցուցաւ 'ի Յովք սքանչելին յորդանոց անտի յԱկտանայ. և թէ որպէս այլք ասեն՝ Յեսուայ. որ աւուրք աւուրք մատուցանէր ըստ թուոյ որդւոցն պատարագ Աստուծոյ, յորոց վերայ և զկիսս փորձութեանցն համբերութեամբ. և յետ փորձութեանն մատոյց 'ի հաշտութիւն բարեկամաց պատարագս յանանոցն։ Իսկ յառաւելուլ սրդարութեանն և 'ի յաճման հաւատոյն Աբրահամու բացափայլեաց պարգեւք ասոտիճանին ոչ միայն յԱբրահամ և յորդիսն իւր, այլ և 'ի Մելքիսեդեկ որ և դերեզմանցեալ գլուսաւ քան զամենեսեան. զոր և գիրն յայտնապէս կոչէ զնա անուամբ քահանայ Աստուծոյ բարձրելոյ որ բարձր քան զնաւ արդարոցն ցուցեալ խորհուրդս. զոր Պօղոս խոստովանի ածելով զնա ամենեւեքին օրինակ մեծին և ոչ մասամբ, որպէս զայլսն. որ և զտիպն ճշմարտութեան մատուցանէր Աստուծոյ պատարագ հաց և գինի. զոր և Աբրահամու ընծայէր և օրհնէր զնա յԱստուծոյն բարձրելոյն. որ և ասէն զսա յորդւոցն Ռամայ, որոյ ազգ և հայր և մայր ոչ գրեցաւ և ոչ պատմեցաւ յօրինակ Տեառն իւրոյ։

Այլ որպէս ասէ սուրբն Եփրեմ յաղ-

գէն Սեմայ էր, անուն Սեմ. որոյ երեւեալ Աստուած փոխեաց զանուն նորա Սելքեսեդեկ, որ է Թագաւոր արդարութեան ան-հայր անմայր ոչ մարդն, այլ անուն Սելքիսեդեկ ոչ ունի հայր և մայր. քանզի Խորհեալ էր և Սելքիսեդեկն պարգեւ Աստուծոյ են՝ հայր և մայր ոչ ունին. իսկ Սեմն և Յակովքն ունին ծնողս որ զայն կոչեցին նոցա անուանս.

Իսկ Աբրահամ յօրինակէն Տեառն մերոյ օրհնեցաւ և եղեւ քահանայ, և զորդին մատուցանէր Աստուծոյ զհօրն երկնաւորի բերել զնմանութիւն, տալով զմիածին 'ի փրկութիւն աշխարհի։ Իւր Սահակ անձամբ անձին լեալ մատուցիչ ընդ հօրն որպէս և Քրիստոս 'ի հօրէ և յինքենէ մատեաւ, և զերկիւղն միշտ այլովք ընծայիւք մատուցանէր Աստուծոյ. և զնոյն շնորհ յինքն ձգեալ Յակովք յօրհնութենէն հօրն, զոր առեալ երթայր յԱսորիս, և տեսանէր զնորհս զարդ եկեղեցոյ. և կոչէր զտեղին տուն Աստուծոյ և օծանէր. և 'ի դառնալն պատարագ մատուցանէր Աստուծոյ ըստ ուխտին իւրոյ։

Այլ և Յովսէփ ընկալաւ զշնորհս զայս խորհրդով տեսլեամբ երազոյն, և իջեալ յԵգիպտոս որ է Ածրային, այսինքն Աստ, և զողջախոհութիւնն մատուցանէր պատա-

ղագ Աստուծոյ. և յայնմհետէ իմաստասիրէր քահանայական շնորհիւն, և փրկէր հացիւ զԵգիպտոս։ Իսկ յորմէ հետէ մահն որդիքն Իսրայելի անդ, մինչև յելքն, ոչ վկայի թէ մահ ոյց ոք պատարագ Աստուծոյ կամ քահանայացաւ. զի Այն կոչի մեղք. և'ի մէջ մեղացն սովորեալք նոքա ոչ լինէր հնար պատարագել Աստուծոյ. իսկ երևեալ շնորհացն երկնաւորաց և 'ի քաւութիւն մեղաց նոցա յորդեաց պարգեւացն Աստուծոյ առատութիւնն և մեծարեաց ողորմութիւնն Աստուծոյ զամենայն ժողովուրդն. քանզի քաւեցան նոքա դասն տանջանաց ալիւսագործութեամբն. վասն որոյ արժանացեալք առ հասարակ քահանայական պատուոյ, պատարագեաց թէ բաքանչիւր ոք զգառն զատկին, տապաւորելով զշնորհան որ առաւ գառամբն Աստուծոյ լման աշխարհի, բառնալով զմեղս բազմաց. այն որ 'ի մէջ մեղաւորաց զենաւ և'ի մէջ դըժոխացն ապարտ փրկութիւն արժանաւորացն. ուստի ոչ ինչ օգտեցան խաւարեալքն սրբութիւք այսու պարգեւաք. անցին ընդ յանդուն դըս, որպէս ընդ անապատ. և կերան զհաց քահանայական յանապատին յորմէ ասանջեցան անմեղութեան ախտացեալքն և որոնչուլքն անհաւատութեամբ, և ապրեցան սակաւ ք'ի բազմացն։

Իսկ 'ի յուԹասուն և հինգ ամին Մովսէսի ընկալաւ Հարոն զպատիւ քահանայութեանն յԱստուծոյ կոչեցեալ. և 'ի նոսա մանէ առին որդիք նորա և մատուցին յաճախապէս շնչաւորս և անշունչս, զի տաղտկացին և ձանձրացին զանշահաւորն միշտ մատուցանելով. և կարօտացին օգուտակարին. և շնորհապարգևք լցին համառօտ և ձրի փրկողին. ևԹէպէտ ստուեր էր՝ սպան զմոռացկոտս ոչ,սբաթ և զԲիւրթ՝ որ երկրորդ անգամ ծխեցին խունկս, և այն օտար հրով. զոր միանգամ՝ օրէն էր ծխել սեզանոյն հրով քահանայապետին Հարոնի, և ոչ երկրորդացն. և զայն կատարեալ էր հօր իւրեանց 'ի ժամու իւրում։

Արդ կեցեալ Հարոն յիւրում քահանայութեանն ամս երիսուն և ութ՝ կատարեցաւ. Թողեալ զքահանայութիւնն Եղիազարու. որ և պաշտեաց զնա ամս քառասուն, փոխեաց զնա Փենեհէս ամս ութսուն, նոխանձաւորին Աստուծոյ. որ սուրբ ձեռօք զարժանաւոր զոհն մատոյց Աստուծոյ 'ի պիղծ կենդանեացն 'ի գործելն խորտնին զ.Աբրի և զԲասբիք։ Յետ սորա այլ[1] զԱբիսվիթ և մեք

(1) Հին օրի. Եւ պաշտեալ Եղիազարու զքահանայութիւնն ամս քառասուն, փոխեաց զնա նոխանձաւորն Աստուծոյ Փենեհէս. որ սպան զԲազրի և զԱֆի։

գլխոս ասեմք, ոչ գլաւեայն՝ ամն տասն և
եւթն կալաւ զքահանայութիւն։ Զ Կնի նո-
ցա այլք գլոքի, և լուսա մեզ՝ Լաքի ամն
վաթսուն. և էր յաւուրս Խարակայ։ Յետ
որս Ազիս ամն քսան և երկու. և ապա Զա-
րեհ ամն յիսուն և երկու. և է սա եւթ-
ներորդ յՀարոնէ։ Եւ ապա Նարու ամն
յիսուն. ապա Աքիտոբ ամն քսան. յետ որս
Սադոկի ամն քսան. ապա Աքիմաս՝ (1) ամն
քսան երկու. յետ որս Հեղն և որդիք իւր
ամն քսան. այլք քառասուն ասեն։ Ամու-
էլ՝ ամն քառասուն. Աքիմելէք՝ զոր սպան
Սաւուղ յիսուն և հարիւրով (2) ի Խեթ-
նաբաս քաղաքագեղի (3). ապա Աբիաթար՝ որ
գնաց Դաւթի շրջէր. և է սա եւթներեւտասան-
որորդ յՀարոնէ. ապա Աքիտոբ. և յետ նորա
Սադոկ զոր ասեն այլք՝ զայլ ոմն։ Այլ և ի
Դաւթի ցուցաւ եռ ակի շնորհն որ տուաւ Ա-
զամայ այսինքն քահանայութիւնն թագաւո-
րութիւնն և մարգարէութիւնն. զի նախանի
Քրիստոսի եղև ենշանաւորս յամենայն Խրա-
յելի. զի թագաւոր էր և մարգարէ, յայտնի

(1) Եբիւս օրի. Անդաքի-
մաս։

(2) Եբիւս օրի. երեք հա-
րիւր հինգ արանքք։

(3) Մի օրի. Բեգնաբաս
գիւղաքաղաքն։ Մի օրի. ի
Թեթնաբաս քաղաքագեղի։

Digitized by Google

է. քայլթէ քահանայութեան ընորհի եհատ, ատասցուք այն՝ զի եկեր զհացն առաջաւորութեան զքահանայականն. և Տէրն սուրբ գեաց զբան պատմութեանն որ կայ 'ի գիրս Թագաւորացն Իսրայելի։ Բայց և զայս և գիտացաք, եթէ էառ զեպուդն զծածկոյթն սեղանոյն արկաւ զիւրեաւ, և եհարց զՏէր. զի եթ կեաւ վասն քահանային և ոչ ետնման հարցանել զի երդնուցուս սուտ, և կամ ասերով զՀմայիսն մեռցի. այլ ինքն եհարց և ոչ մեղադրեցաւ. զի հայրն Քրիստոսի ոչէր պատրաթէ մոցէ ընդ օրինաքն իւրեաւ զծառայ։ Այլ և կարգեաց քան և չորս դասս սաղմոսգայ. և երգել հրամայէր երիցս յաւուրն յերրորդ ժամուն և վեցերորդն և յինեերորդն. զոր և արդ իսկ կարգեալ ունիմք 'ի սուրբ եկեղեցիս։

Օ՛ինի Պաղովկայ շինեալ ցուցանեն ամենայն պատմութիւնք զոՀ քահանայութեանն։ Այլ մեք աշխատեալ գտաք թէպէտ ոչ գրանիս ամայն՝ այլ վկարկն սատուգիս զոր գրեմքս։ Օ՛ինի Պաղովկայ՝ Զարիայ. Սրդոմ. Սուսիա. Եղեկիա. Մերիա. Լազարիա. Պաղովկ. Աբիմելեք. Պաղովկ. Պաղովկ. Զարիա. Հիմելեք. Աբիմելեք (1). Եյադա.

(1) Մի օրի. Ահիմելեք։ Մի օրի. Աբիմելեք։

Խադակ. Յեսու. Խիյուդ. Նղեսկ. Սողոմ. Յոսիդա հայր մարգարէի (1). Անանասէ. Ամոսիա. Ազարիա. Ինասիա. Շմաւան. Ենարդի. Յովսադաք. Ազարիա, որ յանդիման Ներսէս զՍկիա (2) թագաւոր. ոմանք ասեն թէ սա է Ազարիա որդին Խարեքեայ, որ վասն յանդիմանութեան թագաւորին սպանաւ ընդ մէջ տաճարին և սեղանոյն։ Ինադաւ. Իւրիայ. Յովհաննէս. Ընդիմաքոս. Ինիա (3). Նղեկիա. Շմաւան. Ակմէոն, ոմանք զսմանէ ասեն բաղմակեաց եղեալ և գգուեալ զԲրբիստոս գրկօք. Ամարիա. Ազարիա, սա նախ քան զաւերն Երուսաղեմի գերեցաւ. և եկեալ 'ի Սամարիա հրամանաւ Շաղմաշայ թագաւորին դնէր օրէնս և տայր նոցա ըզհինգ գիրքսն Մովսիսի. Ամուրիա. Աքիտուս. Սադովա. Բեղկի՝ հայրն Երեմիայ մարգարէի, որ եգիտ զերկրորդ օրէնսն. Իւրիա որդի Սամեայ քահանայ և մարգարէ, զոր սպան Յովակիմ արքայ. Սարդի. Յովսեդէկ, որ գնաց 'ի գերութիւն 'ի ջորդորդ գերութեանն Յուդայի 'ի վերջնումն՝ յորում բարձաւ թագաւորութիւնն։

(1) Երկու օրի. հայր Երեմիա մարգարէին։

(2) Երկու օրի. զՍ ջոգեա։

(3) Երկու օրի. Ընիա։ Անգիմաքոս։

Իսկ քահանայապետութիւնն ոչ բարձաւ 'ի գերութեան անդ. թէպէտ ոչ գոյր տաճար և սեղան, մանաւանդ ինչ առնէին քահանայապետ գործութիւն. զի մի շինչի շնորհն այն մինչև 'ի գալ առաջնոյ քահանային, որ է Տէր մեր Յիսուս. զի ինքն իցէ առաջին և կատարումն. որ ասաց ես եմ այն և ես եմ քէ։ Օկ�նի եւթն ամի գերութեանն սպանին զՅովսեդէկ քահանայապետս, և ուրթսուն իշխանս երեւելիս ընդ նմա 'ի տանէն Յուդայ. ըստ Հիրիա (1). և զՍոփոնիա. և զԿսու որդին Յովսեդեկեայ. զի տակաւին Յերուսաղէմ էր, ապ ծին զնա 'ի Բաբելոնն զկնի մահուան հօրն. բայց ոչ սպանին զնա. և 'ի դառնալն 'ի գերութենէ Հրէիցն, աթձակեցաւ և եկն ընդ Օրոսբաբելի Յերուսաղէմ։ և էր քահանայապետ վկայութեամբ Աստուծոյ 'ի մարգարէս վասն նորա խօսեցեալ։ Յետ նորա Յովակիմ որդի նորա. յետ նորա Յովակիմայ. Յովդայ՝ որդի Սիկայ. Յովհաննէս՝ որդի Յովդայ։ Յուդա (2)՝ որդի Յովհաննու, առ որով Աղեքսանդր, որ զՍղեքսանդրիա շինեաց և եկեալ Յերուսաղէմ Աստուծոյ երկրպագեաց և պատարագեաց. բայց գտի զանուն

(1) Մի օրի. զՀիրայ։ (2) Երկու օրի. Յովդա։

այսր քահանայապետն Ենդրոմաքոս և ոչ Յուդայ 'ի ստոյգ օրինակս, զոր ապանին Սամարացիքն. Ինիա որդի Դդեայ. Շմաւոն որդի Նորա. Ղեւազար եղբայր Նորա։

Օ եղբայր սորա զՇմաւոն պարտ է ասել, որ եբարձ զԲրիստոս. քանզի առ Ղեւազար առաքեաց Պողոմէոս, և խնդրեաց զգրեանն և զթարգմանիչսն, յորոց մինն եղբայր սորա էր. որ եկայ երկու հարիւր յիսուն և վեց ամ։ Ամասէ. Ինիայ՝ որդի Շմաւոնի եղբօր Ղեւազարու. Յովսեպոս. Շմաւոն՝ հայրն Յեսուայ որ Իրաքն կոչեցաւ. բայց ասեն զՅեսու Իրաքայ թէ որդի կոչի կապելոյն. զհայր սորա հրաման ասեն առեալ 'ի Հոգւոյն չտեսանել զմահ մինչեւ տեսցէ զՕծեան Ասուծոյ։ Ինիա՝ առ որով Ենտիքոս պաշարեաց զՅրուսաղէմ. և առաքինացան բազումք. որ և զկնի տուաւ քահանայութիւնն Յեսուայ, որ Յասոնն կոչեցաւ՝ եղբայր Ինիայ. և դարձեալ առեալ 'ի նմանէ ետուն յԻնիայ՝ որ Մենելաոն կոչեցաւ։ Յետ որոյ Յակիմոս ոմն առնաւ կաշառաք որ չէր յազգէ քահանայութեանն. վասն որոյ Ինիա՝ Ենաղեայ որդին չոգաւ յԳիպտոս, և շինեաց անդ քաղաք զԷմաւսիս. և 'ի նմա ուսանէր նման տաճարին Յրուսաղէմի յորում

աւուրս առաքինացաւ Ասատաթէ 'ի Սուդիմ որդւովք իւրովք. և Յակիմոս սատակեալ 'ի Տեառնէ, քահանայանայ Յուդա Սակաբէ որդի Ասատաթեայ. որ և սրբեաց և նորոգեաց զտաճարն յետ երրորդ աւերմանն՝ և արար նաւակատիս։ Յետ սորա Յովհաննէս եղբայր նորա, և սպանաւ 'ի Տրապոնեայ(1). ապա Շմաւոն եղբայր նորա և սպանաւ 'ի Պտղոմեայ. և յետ նորա Յովհաննէս որդին Շմաւոնի, որ կոչեցաւ Հիւրկիանոս. և յետ նորա Արիստաբուլոս եղեւ քահանայապետ և առթագ եւս 'ի վերայ քահանայութեանն. և 'ի Յուդայէ մինչեւ 'ի սա էին զօրապետք և քահանայապետք. և 'ի սմանէ սկսաւ դարձեալ թագաւորութիւնն զկնի չորս հարիւր եւթանասուն և հինգ ամի բառնալոյն. և 'ի մի եկին երկու աստիճանքն զի եկեալ հաստեալ էր միածինն որ էր ճշմարտութիւնն։ Սա կալեալ զթագաւորութիւն ամ մի, ապա նաւ յեղբօրէն Ալեքսանդրեայ. և սա զիշխանութիւնն միւս եղբայրն Յովհաննէս, որ կոչեցաւ Ալեքսանդրոս. և յետ նորա կալաւ կինն իւր Ալեքսանդրիա զերկոսին աստիճանսն և անարգեցան ՀՐԵԱՅՔՆ. որ և յետ այնորիկ եւ զքահանայապետութիւն Հիւրկի

(1) Մի օրի. 'ի Տրիֆոնեայ։

անեայ որդւոյ իւրոյ, և զթագաւորութիւնն միւս որդւոյն Լրիստաքուլեայ. զոր և Պոմպէոս զօրավարն Հռոմայ կալեալ (1) տարաւ 'ի Հռովմ, և կացոյց 'ի տեղի նորա զԻւրկիանոս. և եկեալ զօրավարն Հայոց Խազափքրան (2) ատրուղ Իւրկիանոս գերի և եդիր փոխանակ նորա զԱնտիգոնոս եղբայր նորա։ Իսկ Հերովդի երթեալ 'ի Հռովմէ (3) էառ զթագաւորութիւնն և եկեալ յԵրուսաղէմ ապան զԱնտիգոնոս. և բարձան երկոքին առ տիգրանայն փառաւորք 'ի տանէն Հրէից։

Բանալի և զկնիր ուսուցեալ 'ի գերութենէն Իւրկիանեայ ապան և զնա Հերովդէս։ Եւ ժողովուրդն ընտրեցին զՕնաքրիա և զԲիայ զի զմի ոք 'ի նոցանէ կացուցէ Հերովդէս քահանայապետ. և կացոյց Հերովդէս զՕնաքրիա քահանայապետ. բայց ոչ ետ նմա իշխանութիւն պատարագ մատուցանել. զի ոչ ունէր տալ նմա կաշառս։ Եւ զի ստիպեաց ժողովուրդն վասն հարկի երեւելի ասնին քաւութեան, և ապար զպատարագս նոցա. և լուաւ զաւետիս ծննդեանն որդւոյ իւրոյ Յովհաննու։

Եւ 'ի գալ ամին յետ ծնանելոյն Յովհան

(1) Մի օրի. կալեալ։ Մի օրի. Բաղմիքրան։
(2) Մի օրի. Բաղամիք։ (3) Մի օրի. 'ի Հռովմ։

նու, լու եղեւ Հերովդի թէ կատարէ Օ՛ա-
քարիա զտօնս Հրէից պատարագաց, բարկա-
ցաւ և ետ սպանանել զնա ընդ մէջ տաճա-
րին և սեղանոյն. և կացոյց քահանայապետս
զՆանիէլ. ապա զՕ՛աքի. ապա զՇ՛մաւոն, զոր
ասացեալ եմք յառաջին գիրսն, և ապա զՆ՛-
նա և զՅայիրիա, ամի ամի փոփոխեալ զնոսա
կարասեաւ։ Եւ այսպէս կացին մնացին օծ-
եալքն, մինչեւ եկն Օծեալն Աստուած։

Եւ թէպէտ ջանային Հրեայքն պինդ-
ունել զօրէնսն. և անուանել քահանայս և
քահանայապետս, այն յանդգնութիւն էր,
և ոչ ըստ հրամանի օրինայն տուողին. որ
սահման եդ նմա և ոչ անցանէր. այն զի՛ ի
ծննդեանն նորա բաբեալ էր ըստ Յակով-
բայ նահապետին, որ օրհնեաց զՅուդայ՝ ի
դէմ Աստուծոյ Խանին Օծելոյ, և եղեւ զԵ՛ի-
ժամանակին երեւման ինքնակալ իշխանու-
թեանն, և բնաւար թագաւորութեանն ա-
նեզբականի և յաւիտենականի քաւչապե-
տութեանն. որ ոչ՝ ի մարդկանէ այլ՝ ի հօրէ
և յանձնէ է փառաւորեալ. այն որ՝ ի մօտ ե-
ղեալ՝ ի չարչարանս, զգարիսն զայս ետ Ի՛գա-
մայ զերեք ասուիճանան, որ է՝ ի փառս Ի՛ր
բորդութեանն պարգեւեալ՝ ի Հօրէ և Մեղ-
ւոյ և՝ ի Հոգւոյն սրբոյ թագաւորութիւնն և

քահանայութիւն և մարգարէութիւն, բաշխեաց զայն ոուրբ Եկեղեցւոյ իւրոյ։

Օթապատրութիւնն առաքեաց Աբգարու արքային Հայոց և Ասորոց. այն որ նախ քան զչարչարանսն առաքեաց նմա հաւատ. և մեծարեաց զնա բաժանակից արքայութեան իւրոյ. և ընկալաւ 'ի նմանէ երանութիւն և օրհնութիւն և սկիզբն լինել լուսաւորիչ Քրիստոսի թագաւորութեան հեթանոսաց։ Իսկ զքահանայութիւնն եռս սրբոց առաքելոցն յորժամ զաթոռն խոստացաւ, այլ և փրչմամբն և տալովն իշխանութիւն թողուլ ըստ մեղաց. և քանզի ամենայն քահանայ վասն մատուցանելոյ պատարագս կայ և ունի նիւթս պատարագի, և տէր զանձն մատոյց խաչիւն երկնաբերձ սեղանոցն. և յաղագս գերազանցեալ գթութեան (1) իւրոյ առ մարդիկ ասաուածային բազկօքն և կամաւ բաշխեցաւ յառաքեալս սիրով. և զնայն եւս յաւիտեանս կան նոքք ամենայն աշխարհի շենլի անծանխելի և միշտ կենդանի. և այսպէս փոխեցաւ հինն 'ի նոր 'ի կատարման ստուերին 'ի վերնատանն խորհրդեան 'ի մեծի հինգշաբաթին 'ի հին զատկին զորոյ զյիշատակն անմոռաց ունել հրամայեաց, մինչեւ եկեսցէ ինքն անե-

(1) Եռկոտ տրի. թագաւորութեան։

ըեւոյթի աշխարհաւն և նորահրաշ կենաքն, և զգեցցի զեկեղեցի աստուածատեսակ ապա-
րեսպ զնա. և այնպէս անանիւթապէս և եւս միաւորաբար լեցի 'ի վայելս մարմնոյ խրոյ
եկեղեցւոյ յարարչապատ անվախճան կենաքս։

Այսու երեւի Հոխութիւնն Աիոմնի սրբոյս և նորոյս Իսրայելի. քանզի յանձն իւր փա-
խեաց զզաշտօն պատարագին տէրն նորա սա-
կալի և քստմնելի և անհաւելի մեռայ և զօրու-
թեան բանի. և աստ կատարեցաւ խորհուրդն
հայրենի և գլխաւորեցաւ. գագաթն է
աւ հնոյ քահանայութեանն անկոչնաքար
Այսուհետ կացեալ. և առ մեզ Այսուծով
և Այսուհետ կատարեալ։ Այս ոչ է այսու-
հետեւ այլայլութիւն պատարագաց, և ոչ բազ-
մութիւն քահանայից վասն մահու արգելման,
և ոչ տաճար ձեռագործ և քարկոտական. այլ մի
և նոյն քահանայ և պատարագ և պատարագիչ
և տաճար, որ 'ի Հոգւոյն կատարեցաւ. այլ և
վերին է Երուսաղէմ, որոյ գաւիթ է նիւ-
թական այս եկեղեցի և աղօթարան և Հրաշ-
մարտութեան գազափար. իսկ Հշմարիտն
ժողովեալ հաւատն է հանրական կաթուղի-
կէ. որ ժողովէ զտիեզերս ամենայն 'ի մի խառ-
նակութիւն և 'ի մի յոյս կոչման 'ի մի կե-
բակուր և 'ի մի վերարկու. և մի կարծիցէ որ

Digitized by Google

ասոտ բուղմութիւն մահասպան քահանայից. քանզի հաւատն որ է եկեղեցի սուրբ, զայդ ոչ ուսուցանէ. զի ամենեքեան ապրա անդամք են միոյ անմահական գլխոյն. կապեալք ընդ նմա յաւիտենական յաւսով. և կենաց՝ի կեաց նոցա փոփոխումն՝ մահ ոչ է. և հետեւեալքն նովիմբ սպասկերեալք նոյնագաթ սպասարկաւ և իմանալի խորհրդով ընտն զաեղի նոցա, և՝ի նմանապէս ճանապարհէն նովին աւանջնորդաւ յաջողեալք, լնուն զնոյն օթեվան՝ի փառս բարի և անեղաշէն յարկինն երկնաւոր և գերափառ խորանին։

Իսկ Տեառն մերոյ և Աստուծոյ կատարեալ գքահանայութիւն ասանն Աղամայ կենաւոր խաչիւն և լուսաբեր յարութեամբն, և հանգարձեալ յերկինս հայրենեաց կաւգ ամբեղինք և կամ հայրաբուն զօրութեամբն, կատարեաց և զերկնաւորացն սրբագործ քահանայութիւնն. քանզի նախ քան զարիւրակն ոնտեսութիւնն սարկաւագունս ասաց զնոսա գիր. և թէ Ելիսանէիսոս քահանայապետութիւն կոչէ զնոսա. յայտ է թէ՝ի Պաղեստէ ուներալ ասէր։ Էշ սուրբն Պօղոս յեռ հանգարձմանն խմացաւ զնոսա. և թէ նախ քան զոնտրէնութիւնն և ս յիշէ զնոցա պատուիւն. քահանայապետ մերոս ոչ է այնր հակա-

ռակ. զի մեք ասացաք զղանազանութիւն փառացոյ նոցա թէ ունին առաւելութիւն 'ի դասս և 'ի պատիւս. այլ և զոյ առաւելութիւն պատուոյ 'ի սարկաւագունս, որ առ մեզ են. քանզի ոմանք մերձ կան սեղանոյն և հայրապետին. և այլք զդրուանս պահեն. են և շնորհօք և գիտութեամբ զանազանեալք, որպէս և անդ թարգմանութիւն կոչման անունոյ նոցա՝ ուսուցանէ մեզ զգելրազանցութիւն և զառաւելութիւն ոմանց 'ի նոցանէ, և զայլոցն խոնարհութիւն։

Այդ բաղում փոյթ եղեւ մեզ ցուցանել, եթէ ամենայն պարգեւքն Աստուծոյ քահանայական շնորհիւ բաշխեցաւ և. տքւաւ վերնոյ և ներքնոց, և կատարումն 'ի Քրիստոսէ եղեւ հրեղինացն և հողեղինացս. և թէ նախ առ մեզ և ապա առ վերինսն կատարումն ացս Աստուծոյն խորք և անքննելի դատաստանին անծանօթութիւնք. ուստի և մարդասէր անուն ժառանգեաց. զի ոչ եթէ զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւակէն Ադամայ. զի յայսմանէսցի արդ իշխանութեանց և պատուութեանց, որ յերկինս են 'ի ձեռն եկեղեցւոյ բազմատարափակ իմաստութիւն։ Ոչ ապաքէն երաշխաւորէ զմեզ բան առաքելական Պօղոս զայս ասելով.

քանզի երկնայինքն մատուցանելով Աստուծոյ բանեղէն պատարագ զիսաւաբանութիւն ոչ ունին այնպէս սրբավայելուչ պաշտօն պատարագի որով քահանայագործին Աստուծոյ, որպէս և արդ զԲրիստոսական խորհուրդս. և ոչ վայելէին յերբեմանէ նարա որպէս և այժմ. քանզի 'ի համբարձման Փրկչին մերոյ Յիսուսի բազմապատկեցաւ իսնատութիւն լուսեղինացն դասուց, և առին առեալութիւն փառաց քահանայական և քահանայապետական ըստ պատշաճի և ըստ չափոյ նոցա, և ըստ դասու առաւելագունիցն և առաւել, և նուազագունիցն ըստ նոցա չափուն. զի որ գուցէ տայցի և յաւելցի ասաց ասէրն. և այսպէս յարմարական բնութեան նոցա տուաւ պատարագել 'ի տնտեսութեանն Յիսուսի խորհուրդ. դարձեալ և նոքա անկիւթապէս հաղորդին անձառելի քահանայագործութեամբ Քրիստոսի աստուածաստեղծութեանն և աստուածացուցիչ խորհրդոյն, որպէս և մեք ապաստեալ ակն ունիմք 'ի հանգերձեալ կեանսն, ոչ հացիւ ցորենոյ, և արեամբ խաղողոյ կցորդիլ Աստուծոյ մերոյ Յիսուսի։ Որպէս և այժմու կենաքս որ մեզ է անկատար, ուրով մարմնական կեանքս պահուի 'ի մեզ. և յորմէ գոյաւորի 'ի մեզ արիւն. այսու յարե-

նամք յանմահական կենդանութիւնն (1) Քրիստոսի. զի որպէս յետ յարութեանն Եկեղ և որբ ընդ առաքեալսն զայս պաշտելի հաց և գինի. արբցէ և յարբայութեան անդ՝ նոր պատճառ միակցութեան ընդ մեզ, որպէս և ինքն խոստացաւ անտուտ բանիւն. սակայն թէպէտ և է մեզ անիմանալի և անասելի երկնաւորացն քահանայութիւնն և քահանայագործութիւնն, բայց անփնտաս են տատագեաղքս 'ի անդենէ հոգեշունչ բանից։

Այլ և չէ անտեղի ասել զերիս երրեակ քահանայապետութիւնս նոցա։ Զառաջինն քահանայապետս և զերկրորդն քահանայս և երրորդն ստրկաւագունս. քանզի ամենայն զգալեաց իմանալի յարուցելոյ արժան է իմանալ ըստ բանին, որ ասացաւ առ Մովսէս, տեսջիր և արասցես զամենայն ըստ օրինակին, որ ցուցաւ քեզ 'ի լերինն. և Մովսէս զգալի ինչ ոչ ետես, այլ իմանալի անմարմին աչօք լուսաւորեալ 'ի Տէր. քանզի առ մեզ երեք են կարարելոցն գաւք եպիսկոպոս և քահանայ և ստրկաւագ։ Իսկ պատրիարքն սահելի միայն իշխանութեամբն է և պատուով հրամանին. և ոչ եմիջ յատուկ ձեռնադրութիւն ունի և շնորհի առումն։

(1) Մի տրի. Կերպարութիւնն Քրիստոսի։

Լն և ինն աստիճանք յօրինեալք առ մեզ, ըստ ինքնակ դասուցն վերնոց. և է իմանալ զնոսա զանազանս փառաւք ըստ դասուցն կարգի, որպէս և առ մեզս. և է եւթն քահանայապետութիւն տեսանել՝ի սուրբ եկեղեցւոջ ըստ եւթնեկի (1) շնորհաց Հոգւոյն սրբոյ։

Ա. Episkoposն՝ որ է տեսուչ ըստ ան եկեղեցւոյ. և կատարէ քահանայս։

Բ. Իւր ունի պատրիարքութեան իշխանութիւն՝ որ է կաթուղիկոսութիւն, որ կոչի ամենակալ, նա կատարէ զեւրն օծութեանն, և՝ձեռնադրէ episkoposս։

Գ. Իսկ քահանայն որ կոչի հարուստ. որ է փարթամ հոգեւոր շնորհիւն և սրբութեամբ մարմնոյն և գթութեամբ խնամոց առ հօտսն։

Դ. Ընդէ պատարագ արժանավայելուչ և մկրտէ զմանկունս և օծանէ եւս։

Ե. Քայց լաւ իցէ թէ episkoposն օծցէ։

Զ. Իւ այս եւս վերջերսրդ քահանայապետութիւն է յեկեղեցւոջ թողութիւն տալ մեղաց խոստովանողին, որ Աստուծոյ միայն է սեպհական թողութիւն զմեղս։ զոր կոչէ արժանաւոր և գիտուն խոստովանահայրն

(1) Մի երբ. ըստ վիճեկի շնորհաց։

զՀոգին սուրբ առ ինքն, և նովաւ թողու յանցաւորին։

Ե. Քահանայագործութիւն յեկեղեցի ՀԷԹ օրհնել յօծումն հիւանդաց առ ժամն. զոր կարէ օրհնել քահանայն ըստ Փրկչին օրինակի։

Զի արարեալ է զայս և ըստ կանոնացն Յակոբայ եղբօր Տեառն. զի և այս ոչ է առանց Հոգւոյն սրբոյ, որ կարող է բուժումն առնել ցաւոցն և մեղացն թողութիւն. և թէ մեռանիցի հիւանդն բաւական է նմա յօծումն թաղման ըստ մեծին Եւսեբիոսեայ։ զոր գրեաց հրամանաւ առաքելոցն։

Եւ զայս ամենայն կարողութիւն զոր գործէ քահանայն, ունի գերագոյնն քահանայապետ. որոյ հրամանաւ կատարին սակ ցեալքս. զի նախ նա կատարէ զսուրբ խորհուրդն և տայ իշխանութիւն քահանայիցն, զոր ձեռնադրէ վնայն առնել. և նորընծայ քահանայից արժան է իւրեանցն ձեռօք առնուլ զՀաղորդութիւնն իսկոյն, զի երեւեսցի պատիւն զոր էառ և զատեաւ 'ի ժողովրդականութենէ և 'ի սարկաւագութենէ. յայս եւթն զօրութիւն Հոգւոյն տուն իմաստութեան յեցեալ կայ. որով հաստատեցաւ աշխարհ աւուրքք եւթամբք յաչէից գոյացեալ.

ապքոք կործանի պարիսպք դժոխոց. որով զո-
ղութեամբ յօրինակ այսորիկ հալեցան պա-
տրիարքն Յրիքորվի շուրջ եկեալ զնոքօք զեւթն
օր։ Յւ զեւթնօրեայ արարածոցս լինելու-
թիւն, յեւթն փողն երգելով եւթնիցս
յեւթներրորդումաւուրն, և 'ի բանի անդ,
թէ հանգեաւ Աստուած յաւուրն եւթներ-
րորդի, անկանէին պարիսպքն ազամանդեայք
եւթնեքեան. այս է եւթն աչք, որ հայէին
ընդ ամենայն երկիրս. և այլս բազումս ունի
զարդարիչս վկայութիւնս, որ կամիցի սպքօք
իմանասասիրել։ Իսկ մեք եկեսցուք այսուհե-
տեւ յոճ կարգին մերոյ։

Յրդ յետ հանգաւանպղին Տեառն հրա-
մանաւ Հոգւոյն սրբոյ և եկեալ թեամբ նո-
րին՝ կարգեցան առաքեալքն քահանայապետ
աշխարհի յաւուրն սուրբ Պենտեկոստէին.
և առաջին եպիսկոպոս եկաց Յրուսաղէմ
Քրիստոսի եղբայրն Յակոբոս։ Յւ հինն
Էանց և եղեւ ամենայն ինչ նոր. և արար
զառաջին պատարագն Յակոբոս բաշխելով
զքրիստոսական մարմինն ընկերաց իւրոց և
այլոց հաւատացելոցն կերակուր անապական
և պատուղ անմահական 'ի կենդանի սնունդն,
ուստի զրկեցաւ հաւասկիրքն մեր Ադամ. և
եղեւ սկիզբն նիւթեղէն եկեղեցւոյս վեր-

Digitized by Google

նատուն և ապա աշխարհամատուռն. և ըստ կիզքն հեթանոսաց մկրտութեան 'ի նոյն առաջին ամին ներքինին քուշայի, որում Փիլիպպոսն քարոզեաց Փոքր Ասիոյ անուն, որ և նա սկսաւ զքարոզութիւն Քուշայուոյն հաւատալ աւետարանին։

Իսկ սուրբն Թադէոս եկ կանխագոյն քան զայլսն 'ի վիճակ իւր 'ի Հայս, և մկրտեաց զնորընծայ Թագաւորն հեթանոսաց Աբգար սկիզբն հաւատոյ ամենայն Թագաւորաց. և ըստ սաւորեաց զՀայս և զՍորիս, և կոստաւրեցաւ Յարեւելս 'ի Սանատրկոյ Թագաւորէ Հայոց, Թողլով անդէն զգեղարդն և զփշերէն պսակն և զեւն ծծման 'ի Բրիստոսէ տուեալ, զոր ընդ ինքեան ունէր։

Իսկ Յակովբոս եղբարն Յովհաննու 'ի նոյն ամի գնացեալ մինչեւ 'ի Սպանիս յարեւմուտս կոյս, քարոզեաց անդ զբանն կենաց. և ձգեցաւ քուն խաչին 'ի Թադէէ և 'ի Յակոբայ յարեւելս և յարեւմուտս. և դարձաւ անդրէն Յակոբոս Յերուսաղէմ, և կատարեցաւ 'ի ՌաՓն Յդրիպպայ, որով զգլուխն հատեալ. և ընկեցեալ զմարմինն 'ի ծովն տարան զնա ալիք ծովուն 'ի վիճակն իւր 'ի Սպանիս. զոր և Պօղոս առաքեալն 'ի գնալն իւր իմաստոյց Եղցա զամենայն ինչ, և հաստատեաց անդ եկեղեցի։

Իսկ սուրբն Ներսէսաս գնացեալ 'ի Մէ-
ջերկրեայս յԱսիա և 'ի շանագլուխս քարո-
զեաց անդ. և նմա կոչն ասիոն Ասիոյ զա-
ռաջինն. մինչեւ յետ երկոտասան ամի հոգաւ-
անդ Յովհաննէս աստուածաբան 'ի փոխման
Աստիամու Աստուածածնին. և ապա նմա ա-
ստուգաւ վիճակն։ Իսկ Ներսէի անուանեցաւ
Կոստանդնուպոլիս որ 'ի Թրակիա, զի և անդ
քարոզեաց նա. և անցեալ 'ի Սպարտա Նե-
լադացւոց կատարեցաւ խաչիւ յԱրիմատեայ
Իշխանէ։

Իսկ սուրբն Թովմաս երթեալ 'ի կողմն
Սաբայ եմուտ 'ի ներքսագոյն Հնդիկս, քա-
րոզեաց անդ և հաստատեաց եկեղեցի. եւ
կատարեցաւ 'ի Թեմն որ կոչի Զոլխանդ. և
առաջին մայրաքաղաք է անդ, որ Իրինջն ա-
նուանի, որ է մեծանիստ. և այժմ կայ գե-
ղեղման նորա 'ի Զուձր մեծաշահ քաղաք.
և անուն երկրին Զոլխան կոչի։ Նա այսպէս
մակադրի խոտորնակ խաչին 'ի Հիւսիս և
'ի հարաւ։

Ի նոյն կողմ Թովմայի հոգաւ սուրբ
Բարդողոմէոս և եմուտ յաշխարհ Մոգուց,
և քարոզեալ անդ դարձաւ 'ի Հայս 'ի վի-
ճակն Թադէի. և հաստատեաց անդ եկեղե-
ցի. և կատարեցաւ 'ի ներքին Հայք 'ի նոյն

Digitized by Google

թագաւորին Անանտրկոյ։ Թողլով անդ որ-
պէս ասեն երիս հատս մանանայ զոր ունէր
ընդ ինքեան։

Եւ Յուդայ Յակովբեան և Սիմէոն եղ-
բայր նորա, և նոքա կատարեցան 'ի Հայք։
Իսկ Սիմէոն կանանացի 'ի հարաւս աշխարհի
քարոզեալ կատարեցաւ։ Իսկ Մատաթիա
փոխանն Յուդայի 'ի Սիկիլիս երթեալ քա-
րոզեաց. և անդէն վկայեաց։ Եւ սուրբն Փի-
լիպպոս առ Ծովեվերբերայս շրջեալ կատարե-
ցաւ. առ սահմանաքն Նուռաքայ 'ի ԻնդէՀ,
որ նա ինքն է Յարապօլիս որ կոչի քաղաք քա-
հանայից։

Եւ սուրբ առաքեալն Յակովբոս Ալփեայ
քարոզեալ 'ի Միջագետս առ Ասորք կատա-
րեցաւ 'ի Արուճ 'ի փառս Աստուծոյ (1)։

(1) Հին օրի. Պետրոս ե-
լեալ Յերուսաղեմէ եկն Յան-
տիոք աշակերտելով 'ի Ճանա-
պարհին զհեթանոսս զերկուս
ամս յամելով 'ի դէն։ Եւ
Յանտիոք եդ հիմն եկեղե-
ցւոյ, և ձեռնադրեաց եպիս-
կոպոս զԼուքիոս։ Ասէն թէ
զՎարշամակ Տիառն ունէր,
և զայն արկանէր 'ի վերայ գլուխ
ձեռնադրելոյն և անուա-
նեաց զաշակերտեալն քրիս-
տոնեայս։ Եւ եդ անդ աթոռ,
և դնաց 'ի Հռովմ. և կատա-
րեցաւ 'ի ներսեմ Զօրանիս
հանդերձ. յերեքտասան ամի
թագաւորութեան Ներօն 'ի
Մայիսի 29։ Եւ Անդրանիկոս
ասէ թէ 'ի 25ն զանուն։ Եւ
զնոսին Պետրոսի եկայ եպիս-
կոպոս 'ի Հռովմ Լինոս ա-
ռաջին եպիսկոպոս՝ մնաստան
ամ։ Եւ Յիշատակն զնոսին
Յակոբայ Շմաւոն կրճատ-
պարանցամ քառասուն երկու։

Աստանօր դիցուք զքան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զարարչականն որ ասաց զՊետրոս. դու ես վէմ հիման Սիմոնի. և յայդր վերայ շինեցից զեկեղեցի իմ. և յանձնեաց նմա երիցս զհօտն իւր արածել կենսագրեր արօտիւ. և կալ մնալ արժան է սէրուն հրամանին, ըստ որում եկեալ ի Պաղեստինէ սուրբ առաքեալն Պետրոս ընդ Փիլիպիկէ ընդ Դերմանիկեցւոց աշխարհն քարոզութեամբ աւետարանին, և մտեալ յԱնտիոք ի հար նիզակաւ Հոգւոյն զապատամբն սատանայ, որ մտեալ էր անդ, և արար զնա հալածական, և էարկ անդ հիմն եկեղեցւոյ. և անուանեաց անդ զաշակերտեալն Քրիստոնեայս. և ձեռնադրեաց անդ եպիսկոպոս զԻւոդիոս, եւ հաստատեաց զնա յաթոռ։

Իւ երթեալ անտի գնաց ի Հռովմ նախանձոտ ամենայն Լիւրոպիայ. և շինեաց անդ զեկեղեցիս և ձեռնադրեաց անդ եպիսկոպոս զԼինոս։ Այլք ասեն եգիպտ զնա Փողոսի ձեռնադրեալ, և հաստատեաց ըզնա. ասեն երթէ կրէր ընդ ինքեան զվարշամեանն Քրիստոսի և զանու դնէր ձեռս ի գլուխն ձեռնադրելոյն։ Իւ զկնի Լինոսի Բասեստոս յաջորդեաց զաթոռն սուրբ։ Իսկ սուրբն Պետրոս առաքեաց ի Հռովմէ զԱր-

կոս աւետարանիչ 'ի նախաթոռ քաղաքն ա-
մենայն | Լբիոյ Ալեքսանդրիայ . որ և անդ
հաստատեաց եկեղեցի և նախաթոռութիւն.
և որպէս ասէ սուրբ հայրն Նիկոդոս(1) 'ի ինդ-
բոյ թագաւորին Ռոմէրի յալագս նախաթո-
ռութեան , եթէ բաժանեալ է ամենայն աշ-
խարհ յերիս մասունս Ասիա , Եւրոպիա ,
'ի | Լբիոյ , վասն երից որդւոցն Նոյի , ոքք
ժառանգեցին զերկիր միայն :

Եւ զի նախ քան զայլսն 'ի Պետրոս յանձ-
նեաց Տէր զհօտն հեթանոսաց պարտ էր նմա
սահմանել յամենայն հատածս երկրի սուրբ
եկեղեցի զոր և արարն իսկ : Ասիա եդ զաթո-
ռըն Ենոխոքու . Եւրոպիա զաթոռն Հռովմ-
մայ , և 'ի | Լբիայ զաթոռն Ալեքսանդրու 'ի
ձեռն աշակերտին իւրոյ Մարկոսի :

Արդ ունի աշխարհն Հռովմ զամենայն
արեւմուտս մինչեւ ցԻւլանդիա յարեւելս
կոյս և ամենայն կղզիս , և զաշխարհ Սպանի-
այ և զվեհագոյն Նորա զԻտալիա , որ կոչի Ի-
տալիա և եւս վեհագոյն զԻւրիտանիան և
այլս բազումս : Իսկ Ենոխոքն ունի զամենայն
արեւելս որ մինչև յայժմ կաթուղիկոս ձեռ-
նադրէ . և առաքէ 'ի Խորասան , և 'ի Պարսս
և 'ի Ինաբելն և Այրկինոյպոլիս , որ է քաղաք

(1) Երկու օրի . Նիկոս :

խաղաղութեան. ունի և զ՝այս և զ՝ԼՐս և զ՝ղուանս։ Եւ Ալեքսանդր ունի զամենայն Լիբիացիս զԵթովպիայ և զ՝Նդիկս մինչև ՚ի Արմարիտոն։

Իսկ զի ՚ի հին ունէին քաղաքքս այսքիկ անուանս ոստուց, եղան կոչմունք նոցա ՚ի վերայ եպիսկոպոսացն. Հռովմ պապ կոչէր յԵրուսաղեմայ նոյնպէս և յԱլեքսանդրիայ պապ անուանէր. և Անտիոք պատրիարգ լինէր կոչեցեալ։

Եւ այսպէս կոչին աթոռակալքն պապ Հռովմայն՝ որ ասի երէց. նոյնպէս Ալեքսանդրուն. և Անտիոքուն պատրիարգ՝ որ է նախահայր. բայց ՚ի սուտս նախապատիւ է Հռովմայն յԱգոստոսէ հետէ, և ոչ ՚ի Պետրոսէ. որպէս ատենքդ կարծեն. զի թէ այդպէս էր, ապա նախ Անտիոք է պատուելի. զի անդ առաջին ձեռնադրութիւն արար Պետրոս։

Եւ զինչ պիտոյ է ասել զԵրուսաղեմէն, զի քահանայապետն Բրիգատոս անդ խաչեցաւ. և քանզի հեռագոյն են ՚ի միմեանց աթոռքս, հարկ եղեւ ՚ի մէջ աշխարհաց և գաւառաց զմայրաքաղաքաց եպիսկոպոս պատուել. զի նոքա ՚ի պատրիարգացն ձեռնադրեալք այլոցն՝ առաջնորդեսցեն մերձակայիցն ՚ի հարկաւոր պէտսն. վասն որոյ կոչեցան

Մետրապոլիտք։ Իսկ վասն սրբազնական քա-
ղաքացն որոց իշխեն, արքեպիսկոպոս լինին
կոչեցեալք։

Իսկ յորժամ եղեւ մեծ սիւնհոդոսն ի Նիկիայ, պատշաճ հաստատեցան հայրապետքն պատուել զԻրուսաղէմ՝ զաթոռ սրբոյն Յակոբայ՝ հաւասար երիցս աթոռոցն. և կոչել զեպիսկոպոս նորա պատրիարք, և զատանել ի վիճակէն Դղեքսանդրու. և տալ նմա Մետրապոլիտս և եպիսկոպոս. քանզի նախ Իրուսաղէմ ընդ ձեռամբ Դղեքսանդրու էր յորմէ յաւերմանէն հետէ Հռովմայեցւոց՝ որ շինեցան Յելիանդրիանու թագաւորէ. որ կոչեցաւ Իլիոպոլիս. և եմուտ Իրուսաղէմ ընդ իշխանութեամբ Կեսարու, Պաղեստինեայ Մետրապոլտի. քանզի զկնի աւերմանն ձեռնադրեաց Իրուսաղէմի եպիսկոպոս Մետրապոլիան Կեսարու. և յորժամ պատրիարք եղեւ Յիրուսաղէմ, ձեռնադրեաց զձեռնադրողն իւր զԿեսարացին։

Իսկ քանզի պարտ էր մարմնոյ եկեղեցւոյ կատարեալ լինել զդպարանօք, զի սմենայն մարմին կատարեալ կենդանի ընդ հինգ զդպրութեամբ է. վասն այնորիկ զԿոստանդնուպոլիս որ ընդ Հռովմայ իշխանութեամբն էր և Իրակլիոյ մետրապոլիան ձեռնադրէր նմա

եպիսկոպոս, յորժամ եղեւ ժողովն առ Թէ-
ոդոսիւ՝ պատուեցաւ Թագաւորական քաղաքն
և եղեւ պատրիարգարան և զատեաւ 'ի Հռով-
մայ. և յորում մնան Սիսոյ եմուտ ընդ իշխանու-
Թեամբ Նորա. քանզի Թէպէտ Կոստանդիա-
նոս նոր Հռովմ կոչեաց զքաղաքն իւր, և զա-
ւետարանչին զՅովհաննու գերեզմանն անդ
կամեցաւ փոխել և ամՅոռ կոչել զնա. այլ ոչ
հաստատեցաւ մինչեւ ցայնժամ որ ասացա-
քըն առ Թէոդոսիւ։

Այլ և յանուն աւետարանչայն սմանք
դնեն զամՅոռքս այս. զՀռովմայն՝ Պուկայ
կոչեն. և զՆոտիոքայն՝ ՊատՅէոսի, և զԿա-
ռոանդնու պօլսին՝ Յովհաննու։

Բայց Պուկաս որդի Կոստանդեայ Սո-
բոյ և մօր յուսնի Յնտիոք գրեայ զաւետա-
րանն և տեղին յայտնի է հաշակեալ եկեղե-
ցին ուր գրեացն. և ՊատՅէոս Յերուսաղէմ
գրեաց. և Յովհաննէս 'ի Պատմոս, ընդէր
ուր գրեցան չիցեն ամՅոռք. և Նոքաք կոչին։

Սակայն երկուսեան առաքելոցն ամՅոռս
խոստացաւ Տէրն 'ի հանդերձեալն. սատէն
ընդէր ոչ մնասուանդ կալցին ամՅոռս. այլ ըստ
սասցեալ խորհրդեանդ յօրինեցան ամՅոռք.
Գիտել արժան է և զայս զի են յարեւելս մե-
ծամեծ և փառաւոր իշխանութիւնք՝ զոր մեծ

Digitized by Google

Հայք կոչեմք որ է սրբական աթոռ և ազատ և ինքնագլուխ. որ ունի ընդ ինքեսմբ բազում մետրապոլիտս և եպիսկոպոս յողովս, և ոչինչ վճարէ յաթոռն Հռովմայ որպէս և ամենայն պատրիարգունք երկրի. և ոչ առնուն ձեռնադրութիւն ուստեք, և ոչ ի Հռովմայ որպէս և այլքդ. քանզի պատուեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի՝ և մանաւանդ ասացեալ սուրբ առաքելոյն որք անդ կատարեցան. և վասն այնորիկ նոցա կամ թուղկոսն յիւրոց եպիսկոպոսացն առնու ձեռնադրութիւն մինչեւ ցայսօր ժամանակի. և է պատուական և արժանապատիւ աթոռ. որպէս և կղզին Կիպրոս. զի և նա ինքնագլուխ է և ոչ ումեք հնազանդեցաւ. քանզի գտեալ եղեւ անդ գերեզմանն Բառնաբայ, և ի վերայ սրտին աւետարանն Մատթէոսի։

Ի՛ ինքնագլուխ և արքեպիսկոպոսն Իուլզարաց. քանզի Իուլղարք ոչ են բուն Իուլզարք, այլ քանզի Իուլղարինոս ի նոյնն տիրեաց, յանուն նորա կոչեցան Իուլղարք. և յաղագս յաղթող թագաւորութեանն ոչ ումեք հնազանդի արքեպիսկոպոսն նորա, այլ յիւրոցն առնու ձեռնադրութիւն որպէս և Հայոցն մեծաց։ որ թէպէտ Վասիլ կայսրն ծիրանածին հնազանդեաց զնոսա, այլ ոչ թո-

ղին զպատիւ աթոռոյն իւրեանց. և ոչ եկաց այնր հակառակ, զի ոչ վնասէր ինչ հաւատոյ սրբութեան։

Արդ այսպէս կարգ քահանայութեան Տեառն մերոյ Յիսուսի տարածեցաւ ընդ աշխարհս ամենայն. և է մի քահանայութիւն և ոչ բազում. զոր սահմանէ աւանդն հաւատոյ ուղղափառութեան, զոր կարգեցին առաքեալքն, և աւետարանիչքն գրեցին և աւանդեցին, և Հոգին սուրբ կնքեաց և կատարեաց։

Իսկ արմատն(1) չարութեան ոչ կարաց հայել հրայեալ աչօք և նախանձախոյս որոնք. վասն որոյ ոչ դադարեաց ատել զմիութիւնն՝ զի ոչ եկեղեցւոյ, և հնարել պատճառ քակման զէն առեալ զոմանց իշխանասիրութիւն և զկիսոց ագահութիւն, և զայլոց ընդարձակութիւն և զմարմնասիրութիւն և զոմանց զախտասիրութիւն, և որոշեաց այսքիւկ զանդամս Քրիստոսի, և արար պատերազմ 'ի տան միում և 'ի մարմնի միում, և ընդդէմ ամենայն բարութեանցն Աստուծոյ զոր արար ազգի մարդկան. եդիտ նա հակառակ սիրոյն զատելութիւնն, և խաղաղութեան՝ զպատերազմն, և խոնարհութեան՝ զհպարհ-

(1) Ոմանք կամամարտն։

տուԹիւնն, և չափաւորուԹեան՝ զառաւելաստացուԹիւնն, և ճշմարտուԹեան՝ զկեզծաւորուԹիւնն, և լուսոյ՝ զխաւարն, և կենացն՝ զմահն, և այսոքիւկ որոշմամբ փարԹամացեալ մշակն անօրէնուԹեան որ կրէ անվաստակ զերկինս և զերկիր, և որ այլ եւս հրաշալին է զանհասականն անդունդս. որք են խորուԹեան խորոցն Աստուծոյ ըմբռնմունք (այսինքն է) հաւատոյն զարմանալիք որով զարդարի սուրբն Աիան, և պարծի 'ի փառս անզուգականս. զսա Ջանաց շարժել զօրուԹիւնն ապստամբ. և ԹէպԷտ զերբն ոչ կարաց խախտել, զի աստուածապատկան(1) էր, սակայն զբազումս 'ի բաց տարաւ 'ի նմանէ. և կապտեաց կաղապտեաց և արար ծաղր, և ամենայնիւ.և ոչ ոչակաւ շարժեաց արտասուս ևնայխանձ առողջիցն մնացելոց եղբարց որք ցուցին մեծ հանդէս նովին հաւատով խրախուսեալք ՅԱստուած. և ձայն տուեալ միմեանց սպառազինեցան սուրբ հրեշտակական պատրաստուԹեամբն, և ամենայն զօրուԹեամբ Ջանացան անդրէն դարձուցանել զհեռացեալսն 'ի կենաց, այսինքն ասեմ զմեծ Աիւն հոդոսքն ըստ ԹուՅ կենդանարար ՅրրդուԹեանն, զԱիկիայն, զՊատանդնուսիոսին

(1) Երեք օրի. աստուածարկու.

զ՝փիլոսոփն, որ թէ զկորուսեալն ոչ կարաց-
ին գտանել, զի գիրն ելցի 'ի վերայ կամա-
խոտոր կործանելոցն, այլ զկացեալն 'ի փա-
րախն Յիսուսի և զշինուածն որ ունի զհիմն,
'ի զգուշութիւն պահելոցն և պահեսցեն. որ-
պէս և է տեսանել գԹուղթեամբն Աստու-
ծոյ ընտ յուսոյ և վաստակոց հարցն մեր ոչ
սակաւաթիւ զմնացեալն յերախտիսն Քրիս-
տոսի և զպատկերեալն կենցուցիչ հաւա-
տովքն։

Եւ ահա ամենայն Եպիսկոպոս և Քուշացիք
և Ընդկաստան աշխարհք և քաղաքք մե-
ծամեծք որպէս Պանիան, Պուրշաւուր, Խազ-
նի, Լահուր, Խմշիր, Պանկլուր (1), Տելուլ,
Սումնաթա(2), Բամթայթ, Պլատրա որ հարիւր
հազար գեւղ ունի, Շաքմիքն, որ երկու հա-
րիւր հազար գեւղ ունի, և այլք քաղաք մին-
չև 'ի Մելան կղզին. որ ասեն թէ զԴամ հա-
նեալ 'ի դրախտէն Աստուած՝ անդ բնակե-
ցոյց զառաջինն. և այլ աշխարհք ընդարձակք
ուր հերձուածչարութեան ոչ եմուտ. և որ-
պէս յառաջին գիրսն ցուցաք թէ քսան եւ
չորս ղերատ է աշխարհս, և տասն և վեց ղե-
ղատուն նոքա են. որ կան յուղղափառութեան,
և ամենայն Յակոբիկ Ասորիք և ամենայն

(1) Մի օրի. Պանկլար։ (2) Մի օրի. Սումնթա։

Հայք զոր պահեաց Հնարհն Աստուծոյ 'ի սահման հաւատոյ ուղղափառութեան կրօնից. և այսօր քահանայութեան և քահանայապետութեան և հայրապետութեան աթոռք արկեալեն 'ի նոսա, յաջողեալք ամենեքեան զօրութեանց 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Այս և լեցի քաղցր ողորմութեան Աստուծոյ մարդասիրին պարգեւքն, և արժանիս արասցէ մասին սրբոց իւրոց հաւատոց և գործոց որ այսպէս դաւանեմ։

Դաւանութիւն Միխայելի պատրիարքի Ասորւոց։

Դաւանեմ զնա, սուրբ և զուգափառ Երրորդութիւն անարարն և անուր անսկիզբն և անվախճան և միշտ անկարօտ և բարկութեալ յամենայն կատարեալ բարւոյ իմացեալ, զոր բնաբար ունի, և աննուազաբար տայ կարօտիցն ինքն ունելով զամենայն. Երրորդութիւն կատարեալ անձառելի և անուազ՝ անձամբ բաժանեալ. և է զի անուամբ և 'ի միութիւն կացեալ և կայ փառաւորեալ և փ�առորի 'ի բնութեանն յաստուածութեանն և 'ի զօրութեանն և 'ի կամն յիմաստութիւնն

'ի գործն 'ի մեծութեանն և մանաւանդ յանհաստութեանն և յանասելի ողորմութեանն, յոր հաւատամ յայսմանէ և 'ի սիրոյ եկեալ միոյն անձամբ չարի 'ի կոյսն, որ սուրբ էր հոգւով և մարմնով, և 'ի պատճառս փրկութեան մերոյ մարդացեալ 'ի նմանէ սահմանաւ բնութեանս մերոյ հոգի, շունչ, միտք, մարմին, որ ինչ և է կատարեալ մարդ մեղուցեալ բնութիւնս Ադամայ ուստի, Աբրիամն էր, զոր առեալ Աստուած գործեաց առանց շփութման և այլայլման անփոփոխ լուսոյն ճառագայթն զփոփոխականութիւն և զապականութիւն բնութեանս սրբեալ անփոփոխս և անախտս գործեաց զթանձրութիւնն պահելով. և ոչ յանմարմնութիւն դարձուցեալ, և ոչ զանմարմին աստուածութիւնն 'ի մարմին շրջեալ. այլ որպէս ոչ գոյ ասել և ոչ իմանալ միաւորեալ քան զամենայն օրինակ խառնման նոր և չքնաղ խառնումն։ Այսն որոյ մինն որ յէութենէն Հօրառ 'ի կուսէն զմերս գոյութիւն, մնաց միածին մի որդի մի անձն մի Քրիստոս։ և ճշմարտապէս մի բնութիւն, մի կամք, և մի ախորժակք, մի գործ, մի ծնունդ կուսութեամբ, մի մայր առանց հօր որ և նախ քան զյաւիտեանս առանց մօր ծնեալ։ Եւ խոստո-

վանիմ զմայրն Յմմանուէլն Աստուածածին մինչեւ յաւիտեան. և զՅմմանուէլն Աստուած մինչեւ յաւիտեան նովին մարմնովն. և որ զՀետո ծննդեանն եկն զամենայն տնօրէնական խոստովանիմ գործ Աստուծոյ. զխոնարհագոյնսն ղբարձրագոյնսն և զկիրսն անքամբասելի, զոր վասն մեր կրեաց, ոչ բաժանեմ, այլ մի յատուկ ասեմ 'ի Տէրն իմ, և ոչ իմանամ շփոթումն։ Յս նեղմեմ զնմացողն և զասողն շփոթումն։

Յս նոյնպէս զկիրք խաչին խոստովանիմ Աստուծոյ խաչ և մահ. ոչ էական բնութեան ասեմ մահ կամ 'ի մարմնոյն բաժանումն, այլ զիմ բնութիւնն միացեալ յաստուածութիւնն և աստուածայեալ Աստուած խոստովանիմ, որով մեռաւ անմահն ղբանական հոգին աւանդելով 'ի ձեռս հօր. աստուածութիւնն ոչ բաժանեալ 'ի մարմնոյն և 'ի հոգւոյն միաւորեալ անքակելի. ըստ որում և զդժոխքն սուերէր հոգւովն և զմահ սպանանէր. և մարմինն լուծանէր զապականութիւնն, որպէս զԱստուած և զԱստուծոյ մարմին ընդ ամենայն գերեզմանս արձակելով Հաւատացեալս, յարուցանելով ղբազումս, գիտելով զսահմանեալ ժամանակն 'ի լանջս երկրի հզօրագոյն թռուցն յառնէր ոչ միայնաբար ըստ

Յոհաննու 'ի ձկանէն, այլ լրմամբ հոգւոյն մահակուլ, որ յԱդամայ 'ի դժոխոց և յոլ-վիւք մարմնովք հողացելովք 'ի գերեզման նայս ելանէր յերկինս կուսութեամբ անլոյծ կնքոյն 'ի գերեզմանէն, որպէս յարգանդէն Մարիամու. և վերացեալ մտանէր յերկինս կուսութեամբ անձեղքելիս՝ որպէս 'ի վերնատունն դրամբք անբացիւք. զի յայտ լիցի եթէ 'ի վերս է քան զբնութիւն մարմնոյ. զի մարմնոյ բնութիւն մահկանացու ապականացու և ախտալի եթէ յատկացի ըստ բնքեան, և ընդ մարմին ոչ կարէ մտանել անծանօթապէս, այլ տերունական։

Լու տերն լեռով ունելով զՀամարիան մարդիւթով սահմանումն, սակայն շուլացեալ և վայլատակեալ աստուածութեամբն նելոպործէր զվայելչականն Լանին, զոր շօշափեցին ձեռաք դասք առաքելոցն, և տեսին երանելի աչաք զանտեսակն տեսակացեալ։

Յոհաննէս զնա նովին մարմնովն կեալ 'ի փառս Հայրենիս դատաւորս ապգարութեանն կենդանեաց և մեռելոց։

Հաւատամ 'ի միշտ Հայրն, Հաւատամ 'ի միշտ Որդին, Հաւատամ 'ի միշտ Եղբայն 'ի Հոգի Հոգին սուրբ։ Յայն՝ որ առնու յորդ-

Digitized by Google

ւոյ և ինու զամենայն, և ինքն ոչ լինի ըստեալ յումեքէ։

Հաւատամ ի նոյն Տէրն Յիսուս Քրիստոս զեալ յոչէից զերկեալքս ամենայն, և զԴամ պատկերեալ բարւոյն, և յանսկանօք լուծեալ ի մահ անձնիշխան կամաւք. և ի նոյն արարչէ վերատին նորոգեալ ոնտեսութեամբ միոյն Միածնի կամաւք Հօր և Հոգւոյն։

Հաւատամ ի համարձն յարութիւնն բանականացս որ յԴամոյ, ի նոյն զարութենէ ստեղծուլին և նորոգուլին։

Հաւատամ յարդար յիրաւունս աւուրն ըստ արժանեաց, և ի հատուցումն յաւիտենական կենաց և տանջանաց։

Այս է իմոյս հաւատոյ համառօտ խոստովանութիւն, և ամենայն հաւատացելոց ուղղափառաց. որոյ մնանաւորեսցէ զմեզ Տէր ի շնորհս ողորմութեան իւրոյ։

Արդ զայս դաւանութիւն յարիւ մասն աշխարհաց ունի. և պահէ ոչ ուսուցէս քաղաքավարութեամբ, զոր պարտ է յամենայն քահանայապարծութեան տալ զայս խոստովանութիւն մեծ քահանայապետին։ Եւ պահանջիւ յայնպանէ զարս ձեռնադրելն կամին. և ապա յանդգնանէ նորին զդպրին տալիս նիշան, զամենայն ոչ նրբեմտասոյն հարցուր

յիսուն և ինն հերձուածն մինչեւ. ցայսօր ժամանակի. և դատանել զամենայն ուղղափառան, զհովիւսն եկեղեցւոյ որք ընդ Ճրշմարտութիւն առաջնորդեցին հօտին Քրիստոսի, և յարօտս կենդանեաց ոնուցին. և ապա իջանէ Հոգին յայնպիսի սեղանն սրբութեան և հանգչիցի յընծայեալսն։ Այն որ գիտէ ճանաչել զօտարն և զընտանին որպէս զգիտնական և զիմաստուն հովիւս կացուցանել, որ կարասցէ 'ի կեանս կոչել զարժանին կենաց, այսինքն առ Աստուած ածել. զի այս է պարիսպ պահպանութեան խաչիւ և աբեամբ գնեալ հաւատացելոց. ոչ միայն 'ի չարացն 'ի քաց կալ, այլ և բարեացն զհեռանալ. զի ոչ սակաւ արիւն և քրտն գիտէ հեղեալ վասն իւր ուրբ եկեղեցի. այլ զմեծն զԱստուծոյն և զառաքելական ապանցն, որոյ զգուշութիւն պէտք է, որք խնամեն զսա յիւրաքանչիւր ժամանակս։

Իրանդնեցին և Հոյնք քոսն ի վեց ուսուցանս յեկեղեցի, և եւթն այլ եւս զսա առանձինն, որ ոտանք 'ի նոցանէ հարկաւորք, են յոյժ։

Ա. Որպէս շրջապն ընդ վանդրայն և սեանսն զաջոգութիւն և զշինութիւն, և պատմել Աբք եպիսկոպոսին։

Digitized by Google

Բ. Որպէս որք տեսանեն զպարկեշտութիւն կանանց վանայ։

Գ. Խանութատէրքն՝ որք տեսանեն թէ ոչք են զուր և զպարտութեամբ արգելեալք ի բանտս յիշխանացն, և պատմել հայրապետին. զի փոյթ արասցէ և հանցէ զնոսա։

Դ. Ընտիր դատաւորքն, որք քննեն իրաւամբք զդատաստանս ամենայն ըստ գրոց և կանոնաց հրամանի։

Ե. Յորինողքն գրոց որք ուսուցանեն զուսումն ընթեռնլոյ զգիրն սուրբ ի ժամ պաշտմանն։

Զ. Յարմարողն երգեցողութեան Սաղմոսին և Շարականին։

Է. Որ տեսանէ թէ որոմ եկեղեցւոյ պիտոյ է առաջնորդ, և յիշեցուցանէ հայրապետին։

Ը. Որ ջոջի ընդ քաղաքս և ընդ գեօղս և տեսանէ զյօրինեալ կարգս եկեղեցւոյ, թէ ուրպէս առնիցեն։

Թ. Որ պահէ զսենեակ հայրապետին և զգուշանայ։

Ժ. Որ պահէ զսրբութիւնն և տայ ի տեսութիւն խնդրողացն։

ԺԱ. Որ կայ ի գլուխ (դասուց) սարք

Digitized by Google

կաւագան և դպրացն, և բաժանել զգործս նոցա, և չտայ զմիմեանսիք ելանել։

ԺԲ. Իսկ կրեն զմնամեղէնս առաջի սուրբ խորհրդոյն։

Այն և սուրբ եկեղեցւոջ տան մնասքն զոր պարտին արկանել 'ի սեղանաւորս արժանացեալքն. քանզի ըստ առաքելոյ եդ Աստուած յեկեղեցւոջ առաքեալս, մարգարէս, վարդապետս, զօրութիւնս, շնորհս բժշկութեան, օգնութիւնս, վարիչս, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց, ընտրութիւնս հոգւոց. քանզի հաւատամբ եթէ զնոյն հոգի որ յայնժամ աղբիւրանայր առաքելոցն, այժմ ունի եկեղեցի ըստ ժամանակիս պիտոյից. զոր թէ ոք անաչառութեամբ, և անագահ հաւատով և անսխալական մտօք վարէ զառաջնորդութիւն եկեղեցւոյ՝ ըստ Քրիստոսի զքահանայութիւնս, ինչ ոչ թոքչի 'ի նմանէ և ոչ սխալէ յընտրողութենէ և 'ի զօրութենէ բժշկութեան, 'ի նոյն պարգեւաց հոգւոյն առաջնորդեալ և յաջողեալ 'ի հաճոյսն Աստուծոյ. 'ի փոքու աստ հաւատարիմ գըտեալ և բազմին արժանանայ 'ի պատշաճ յաւիտենին։

Ունի սուրբ եկեղեցի զշնորհս և պատիւորքոյ Աստուածածնին անսխալ ծնանելով

որդիս Աստուծոյ ոչ յարեանէ և ոչ 'ի կամաց մարմնոյ այլ 'ի Հոգւոյն որդւոյ և 'ի զօրութենէ բարձրելոյն 'ի ժառանգակցութիւն և յեղբայրակցութիւն (1) միածնի Կուսոյն Աստուծոյ։

Ոնի յինքեան և 'ի վերայ ինքեան սուրբ եկեղեցի զիարշն կենդանիս վերելեալսն (2) 'ի նոյն պատիւ պաշտեցեալ 'ի մէջ որսալ քաշելոյն 'ի մեղ երկնաւոր շնորհացն առատութիւնք։

Զայն որոյ հանդէս առնելն է ասելոյ՝ որք շրջին 'ի մէջ նորա ահիւ և դողութեամբ լինել 'ի տան Աստուծոյ կենդանւոյ. զի ահ մեծ է անկանել 'ի ձեռս Աստուծոյ, կենդանւոյ և ապրելոյ է սուրն յորոշումն մտոց բնութեանց և դատելոյն (3) որպէս հոգեւորին ճանապարհ հիմնարկութեամբ և հիմանէքն եկեղեցւոյ։

Զոր մի նմանել խորհեցին և կամ որոնանցն, որք յետոյ մտին, զորոյ զանազանան գրքեմբարձեալ ասացք զատարեալ եւ թէ աթանասիոս աթանասկալայ միանչեւ յամենեւին խոտանեալ (4) զորս թողութեամբ յիշատակ կենդանութեան։

(1) Մի օրի. յաղգակցութիւն։

(2) Երկու օրի. վերելեալ։

(3) Երկու օրի. դատելոյն։

(4) Երեք օրի. խոտան։

ԱԹՈՌԱԿԱԼՔ ԻՆՏԻՈՔԱՑ

Ժ.					ամ.
	Ա.	Պետրոս առաքել.		Դամիանոս.	13
	Բ.	Լինոսիոս. ժամթ	ԺԸ.	Տիմոթէոս.	5
3		Լուդիոս.	ԺԹ.	Կիւրղեղոս.	8
2	Գ.	Կլեմանտոս.	Ի.	Տուրիանոս.	1
3	Դ.	Կրոն.	ԻԱ.	Փամֆալիոս.	8
0	Ե.	Կուռնելիոս.	ԻԲ.	Փիլակիոս.	2
1	Զ.	Ուրբանոս.	ԻԳ.	Աստամթէոս.	10
7	Է.	Թէոփիլոս.	ԻԴ.	Յուլիոս.	1
8	Ը.	Մաքսիմոս.	ԻԵ.	Ուալիս աբեանոս պեղծ (1).	
0	Թ.	Սեբաստիան.			
2	Ժ.	Աղեղղիոսպատ.	ԻԶ.	Ուրբանոս արեանոս.	
0	ԺԱ.	Փիլիպպոս.	ԻԷ.	Փիլիդիս (2) հրա.	
2	ԺԲ.	Սաբինոս.	ԻԸ.	Սոեփիանէ հրա.	
0	ԺԳ.	Իսաքէլ.	ԻԹ.	Լեոնդիս հրա.	
0	ԺԴ.	Իռենիոս.	Լ.	Գրիգորիոս հրա.	
8	ԺԵ.	Դեմետրիոս.	ԼԱ.	Սեղեստոս.	
	ԺԶ.	Պողոս Սամոսատացին հրա.	ԼԲ.	Ուզինոս.	2
			ԼԳ.	Պուբլիանոս.	1
	ԺԷ.	Դոմնոս. կամ	ԼԴ.	Փլավիանոս.	7

(1) Երկու օրի. Աբեսալոմոս Մի օրի. Ոյոլիս Աբրանոս Մի օրի. Սեթ Աբիս։

(2) Մի օրի. Փիլիբոս Մի օրի. Փիլիկոս։

Digitized by Google

1 ԼԵ. Լուսագրիոս.
7 ԼԶ. Պորփիւրիոս.
10 ԼԷ. Աղեքսանդրոս.
38 ԼԸ. Յովհաննէս.
32 ԼԹ. Թէոդէոս.
Խ. Թոմանոս հրաշարիսական.
ԽԱ. Մաքսիմոս հրաշարիսական.
ԽԲ. Կիւրակոս հրաշարիսական։
ԽԳ. Մուրտուրի հրաշ.
ԽԴ. Պետրէ հլծեալ.
ԽԵ. Անիդոն երկրաբնակ։
ԽԶ. Ներսիսիրոս կամ Պարտիրոս եկեղեցի
35 ԽԷ. Յուլիանոս.
35 ԽԸ. Ստեփաննոս.
ԽԹ. Ստեփաննոս երկրաբնակ։

Ծ. Փիլոքսիէ ընկերցեալն. (1)
ԾԱ. Սուրիակէ
ԾԲ. Պօղէ հրեական.
ԾԳ. Խրիստոս երկրաբնակ (2)։
ԾԴ. Լիփրեմ հրաշ.
ԾԵ. Թամանոս հրաշ.
ԾԶ. Սարգիս.
ԾԷ. Պօղէ սեաւն.
ԾԸ. Պետրէ վրիպաս.
ԾԹ. Յուլիանէ.
Կ. Լթանաս.
ԿԱ. Յովհաննէս.
ԿԲ. Դիոդորոս. (4)
ԿԳ. Սեւերիանոս.
ԿԴ. Յուլիէ.
ԿԵ. Լղիա.
ԿԶ. Լթանաս.
ԿԷ. Յովհան.
ԿԸ. Խաչատուր.

(1) Հին օրի. յաւաղքան զաս յաւելու. Փիլեսիոս զամն հեքեսիկոս։

(2) Հին օրի. Ռաբուլիոս երէցկոչ ի փէդի Սեւերիոսի։ Ասա երկրի յաւաղքան զաս Սեւերիոս ամն լինել սխալ ասակաց։ որոյ փոխանակ եդին զաս. Թէպէտ ընդանակի և ոչ ի միում յօրինակացն այս Սեւերիոս։

(3) Երկու օրի. Դամասկոս

(4) Ասաի սկսեալ նուազին ամենայնիւ ի ցանկս օրինակաց և ի հին օրինակն սաստիկ։

ԿԹ. Ը. Թանաս.
Հ. Դէորգ.
ՀԱ. Յովսէփ հրա.
ՀԲ. Կիրակոս.
ՀԳ. Դիոնէսիոս.
ՀԴ. Յովհաննէս.
ՀԵ. Իգնատիոս.
ՀԶ. Դիոդոս.
ՀԷ. Դիոնէսիոս.
ՀԸ. Յովհաննէս.
ՀԹ. Յովհան.
Զ. Վասիլիոս.
ԶԱ. Յովհան.
ԶԲ. Դիոնէսիոս.
ԶԳ. Ը. Բրահամ.
ԶԴ. Յովհաննէս.
ԶԵ. Ը. Թանաս.
ԶԶ. Յովհաննէս.
ԶԷ. Դիոնէսիոս.
ԶԸ. Յովհաննէս.
ԶԹ. Ը. Թանաս.
Ղ. Յովհաննէս.
ՂԱ. Վասիլիոս.
ՂԲ. Ը. Բրոն.
ՂԳ. Դիոնէսիոս.
ՂԴ. Ը. Թանաս.
ՂԵ. Յովհան.
ՂԶ. Գրիգոր.
ՂԷ. Յովհան.
ՂԸ. Ը. Թանաս.
ՂԹ. Միխայէլ եպ.

ԱԹՈՌԱԿԱԼԲ ՀՌՈՎՄԱՑ

	Ա.	Պետրոս առաք.	Զ.	Աղեքսանդրոս.	12
12	Բ.	Լինոս.	Է.	Բասիլոս.	30
11	Գ.	Անիտոս.	Ը.	Ալեսիոր. (1)	11
9	Դ.	Կղեմէս.	Թ.	Մեղուսիանաս.	4
8	Ե.	Ուրբանոս.	Ժ.	Փիոս.	15

(1) Հին օրի. Տաղեսիորոս։

11 ԺԱ. Հիլլոտա.
9 ԺԲ. Յովսեր.
8 ԺԳ. Լուսուրիոս.
5 ԺԴ. Կեղեստիանոս.
15 ԺԵ. Ղուրթոս.
70 ԺԶ. Ներկոս.
9 ԺԷ. Հերբանոս.
5 ԺԸ. Փաւնդիանոս.
8 ԺԹ. Ղեթիոս.
13 Ի. Պաւխանոս.
2 ԻԱ. Կաւռնելիոս.
4 ԻԲ. Ղուկիոս.
1 ԻԳ. Սոեփանոս.
11 ԻԴ. Վեռոստոս.
8 ԻԵ. Դիոնէսիոս.
8 ԻԶ. Դիմէսիոս.
1 ԻԷ. Իւստուկիոս.
2 ԻԸ. Դայիոս.
1 ԻԹ. Պապքլիոս.
1 Լ. Լեսեբի.
21 ԼԱ. Յելիոս.
23 ԼԲ. Յեղբեստրոս.
2 ԼԳ. Պարկոս.
15 ԼԴ. Յեղուխանոս.(1)
4 ԼԵ. Իբերիոս.
ԼԶ. Փիլոքսիոս.
ԼԷ. Դոմնոս.
ԼԸ. Մարկիանոս.
ԼԹ. Նեստոս.
Խ. Նեստորիոս.
ԽԱ. Օսիմոսիէ.
ԽԲ. Կեղեստիանոս.
ԽԳ. Եւսեբիոսակ.
ԽԴ. Դաղոս.
ԽԵ. Լաբիանոս.
ԽԶ. Մարիելիոս.
ԽԷ. Նեստորիէ.
ԽԸ. Մամաքէ. ասաի յաւաջ երկանակ.
ԽԹ. Թորանոս.
Ծ. Լամիասէս.
ԾԱ. Յովհաննէ.
ԾԲ. Փելիքս.
ԾԳ. Գելասիոս.(2)
ԾԴ. Գաբոս.
ԾԵ. Յեղբէոս. կամ Յեղբեստրոս.
ԾԶ. Պլակիոս.
ԾԷ. Պարսինոս*.

(1) Հին օրի. Սիլիոս.
(2) Հին օրի. Գելասիոս.

*Այս Պարսինոս անօրէն Ի բաց եղեալ զերկիրն Ա-

ԱԹՈՌԱԿԱԼՔ Ա.ՂԵՔՍԱՆԴՐՈՒ

				ամ.
1 Ա.	Մարկոս աւետարանիչ.	ԺԶ.	Թէոփիլոս.	19
		ԺԷ.	Պետրոս. վկայն է.	10
2 Բ.	Ակէոս.	ԺԸ.	Ակիւղաս.	6
3 Գ.	Սէլիոս (1).	ԺԹ.	Ղեքսանդր. առաջ Ժողովքն Նիկիոյ.	20
1 Դ.	Դուրտոնիոս.			
2 Ե.	Փրոպիոս.	Ի.	Ակթանաս.	46
1 Զ.	Յուստոս.	ԻԱ.	Պետրոս.	7
3 Է.	Ամենիոս.	ԻԲ.	Ղուկիոս արխանաս պիսկ.	
0 Ը.	Սարկիանոս.			
4 Թ.	Կալերոս.	ԻԳ.	Տիմոթ. եղբայր Փաւլի.	4
2 Ժ.	Աքրիպոս.			
4 ԺԱ.	Յուլիոսէ.	ԻԴ.	Թէոտիմոս.	28
3 ԺԲ.	Դեմետրիոս.	ԻԵ.	Կիւրեղ ՀԱ. առաջ Ժողովն Եփեսոսի.	26
6 ԺԳ.	Թիմոն.			
7 ԺԴ.	Դիմինոս (2).	ԻԶ.	Դիոսկորոս.	7
8 ԺԵ.	Աքսիմոս.	ԻԷ.	Պրոտերն (3) հրա-	

տուածոյ, հաստատեաց զաւանդքն Յովհաննէսի Ղրամատիկոսին. զի մինչեւ յայդ վայր ասէին երկու բնութիւնս. և արդ հաստատեցին երկու բնութիւն երկու կամս. երկու ներգործութիւնս: Եւ վասն բուռն իշխանութեան հռոմայոց տարածեցաւ աղանդն ընդ ամենայն աշխարհս՝ որոմն դառնութեան:

(1) Հին օրի. Միլս: Մի օրի. Մելիտոս:

(2) Հին օրի. Դիոնեսիոս:

(3) Նոր օրի. Պետրոս: Մի օրի. Սանտիպրոս:

Digitized by Google

20	ԻԸ.	Տիմոթէոս հրա.	ԽԵ.	Յոհան երկաբնակ.	
3	ԻԹ.	Տիմոթէոս (1).	ԽԶ.	Դամիանոս.	
	Լ.	Յովհան հրշ.	ԽԷ.	Աղաստաս.	
12	ԼԱ.	Պետրոս.	ԽԸ.	Աղդրոնիկոս.	
7	ԼԲ.	Աթանաս.	ԽԹ.	Ներսիսին.	
9	ԼԳ.	Յովհաննէս.	Ծ.	Կաւրէա հրշ.	
11	ԼԴ.	Յովհան միւս։	ԾԱ.	Գաթոն.	
1	ԼԵ.	Դիոսկորոս.	ԾԲ.	Յովհաննէս.	
11	ԼԶ.	Տիմոթէոս.	ԾԳ.	Շմաւոն.	
38	ԼԷ.	Դէոդոր (2).	ԾԴ.	Սահակ (3).	
1	ԼԸ.	Պետրոս.	ԾԵ.	Աղեքսանդրոս.	
	ԼԹ.	Դայիանէ հրշ.	ԾԶ.	Կոզմաս.	
40	Խ.	Պօղոս.	ԾԷ.	Յովհան.	
1	ԽԱ.	Օուկլիոս.	ԾԸ.	Սարկոս.	
2	ԽԲ.	Աղաղինար.	ԾԹ.	Յակոբ.	
3	ԽԳ.	Թէոդորէ.	Կ.	Շմաւոն.	
1	ԽԴ.	Պետրէ.	ԿԱ.	Յովսէփ.	

(1) Զամանէ հինն և ամանք սահեն ուղղութիւն. և ամանք հնրնուածող կամ ուքացող։

(2) Հին օրի. Դիոդոսիս Մի օրի. Դիոսկորոս։

(3) Հին օրի. Սահակ։

Digitized by Google

ԱԹՈՌԱԿԱԼՔ ԵՓԵՍՈՍԻ

մ.					մ.
12	Ա.	Ընդրէաս առաքեալ.	ԺԳ.	Լաւրենտիոս.	8
			ԺԴ.	Ղուքանոս.	7
10	Բ.	Յասիոս.	ԺԵ.	Պրոտոնիկէ.	18
14	Գ.	Տիմոթէոս.	ԺԶ.	Սարկոս.	13
17	Դ.	Պօղիկարպոս.	ԺԷ.	Կիւրեղ.	10
15	Ե.	Յուլիս (1).	ԺԸ.	Կուռնելիոս (3).	8
8	Զ.	Սոսաքէ.	ԺԹ.	Դիդիմոս.	7
8	Է.	Դիոգիսիէ (2).	Ի.	Դոմետրիէ (4).	11
13	Ը.	Ընտաթէ.	ԻԱ.	Պրոքաս սատ փոխեցաւ աթոռն Եփեսոսի 'ի Կոստանդնուպօլիս:	
9	Թ.	Ղազարոս.			
10	Ժ.	Փիլիպպոս.			
11	ԺԱ.	Պօղիկարպոս.			
5	ԺԲ.	Ուղիոս.			

ԱԹՈՌԱԿԱԼՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ

5	Ա.	Պրոքաս (5).	Բ.	Ղազարիանդրոս	23

(1) Հին օրի. Պուլիդ: Երկու օրի. Պուլիս:
(2) Հին օրի. Դիոգինիս:
(3) Երկու օրի. Կոստանդիոս
(4) Երկու օրի. Դեմետրիէ:
(5) Սա այս Պրոքաս վերջին Աթոռակալ Եփեսոսի փոխեցաւ զաթոռն 'ի Կոստանդնուպօլիս:

Զ Կոստանդնուպօլսի Աթոռակալաց ցանկ 'ի հին օրինակէն առեալ գնեմք սատ ղի այլքն օրինակք, անկարդըս դատաւորքն զատատ վասն

1	Գ.	Պօղոս.	Ի.	Յովհաննէս.	
	Դ.	Անկեղեն. Հոգեմարտն է.	ԻԱ.	Ակակիոս.	
			ԻԲ.	Պլապիտոս.	
1	Ե.	Յուսեբի.	ԻԳ.	Եւփիմոս հրա.	
	Զ.	Յուդաքայ հրձ.	ԻԴ.	Անկեղեն հրձ.	
	Է.	Յուսագը հրձ.	ԻԵ.	Տիմոթէոս.	
	Ը.	Դիմոսիկէ հրձ.	ԻԶ.	Յովհաննէս. Եւկարբնակ.	
10	Թ.	Դիոնիսիոս Նազիանզայի, աստուածաբան	ԻԷ.	Յոսիփիան.	2
8	Ժ.	Նիկատիրոս.	ԻԸ.	Պղեթիմոս.	
7	ԺԱ.	Յոհան սակեբերան.	ԻԹ.	Յոհան. Ի սմանէ յաշխարհակալ էին։	
1	ԺԲ.	Յրեոքիոս.			
10	ԺԳ.	Աստիկէ.	Լ.	Յովհաննէս.	
2	ԺԴ.	Միխիանոս.	ԼԱ.	Կիւրիակէ.	
	ԺԵ.	Նեստոր. Հալսափառ.	ԼԲ.	Սարգիս.	
			ԼԳ.	Պինոս.	
2	ԺԶ.	Սոքսիմիանոս.	ԼԴ.	Գերմանիոս.	12
12	ԺԷ.	Պատկղոս.	ԼԵ.	Նուդոտոս.	
	ԺԸ.	Փիլաքիոս հրա.	ԼԶ.	Խուրոս.	
	ԺԹ.	Նեստոր հրա.	ԼԷ.	Պօղոս.	

Հերետիկոսութեան եւ հեր. թողեալ։
Ձուաձոցն զատ. ի Ջինն 'ի յետս

ԱԹՈՌԱԿԱԼՔ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Ա. Յակոբ.
Բ. Շմաւոն.
Գ. Յուսուս.
Դ. Օգաբէ.
Ե. Տուբիայ.
Զ. Իւնիամին.
Է. Յովհան.
Ը. Մատթէոս.
Թ. Փիլիպպոս.
Ժ. Սեղեկիա.
ԺԱ. Յուսուխոս.
ԺԲ. Դեւի.
ԺԳ. Նփոնէմ.
ԺԴ. Յովսէփ.
ԺԵ. Ալեքսանդրիա.
ԺԶ. Միմաքոս.
ԺԷ. Դայիոս.
ԺԸ. Յուլիոս.
ԺԹ. Կայիոս.
Ի. Յուդա ողբա-
մնեքեան հրեայք էին
ԻԱ. Նարկեսոս.
ԻԲ. Մարիոս.
ԻԳ. Կասիանէ.
ԻԴ. Պոպլիոս.
ԻԵ. Մաքսիմոս.
ԻԶ. Յուլիոս.
ԻԷ. Վաղէս.
ԻԸ. Դիդիմոս.
ԻԹ. Նարկէսոս.
Լ. Դիոսկ.
ԼԱ. Գերմանիկէ.
ԼԲ. Գոդիոս.
ԼԳ. Նարկեսոս.
ԼԴ. Ալեքսանդր.
ԼԵ. Իմմեոնոս.
ԼԶ. Փերմիա.
ԼԷ. Իերմին.
ԼԸ. Դատոսոս.
ԼԹ. Իրմէ սատ է Ճրդ-
նաբեռն Ս. Գրիգո-
ր Լուսաւորչին.
Խ. Մակար.
ԽԱ. Մաքսիմոս. զորդ
խաւարեցուցին զաչս.
ԽԲ. Կիւրեղ.

Digitized by Google

ԽԳ. Լիակիոս հրշ.
Խդ. Սեւերոս.
Խե. Դամասիոս։
Խզ. Կիւրեղ յաքորից գարձաւ և արար ըզ ժողովն.
Խէ. Յովհան.
Խը. Պաւղոս.
Խթ. Պրովալիս.
Ծ. Յովքենաղիս.
ԾԱ. Նեստորաս ուղ.
ԾԲ. Մերտուրիոս.
ԾԳ. Սերգիոս.
ԾԴ. Վիլիաս.
ԾԵ. Յովհան *։

* Էին օրինակն այսպէս ունի զքանակ պատրիարքացն Երուսաղէմի. Յակովբոս. Շմաւոն. Յոստոս. Զաքէ. Ցուրբան. Բենիամին. Յովհան. Մատթէոս. Փիլիպպոս. Սենեկիս. Ցուստոս. Ղեւի, Եփրեմ. Յովսէփ. Ցուդաս. ամենեսեան հրէայ էին։ Նարկիսոս. Մարկոս. Կասիանոս. Պողիոս. Մաքսիմոս. Ցուլիանոս. Գայիոս. Սիմաքոս. Գայիոս. Ցուլիանոս. Կապիտոս. Վաղէս. Դեղիանոս. Նարկիսոս. Դիոս., Գերմանիան. Գրիգորիոս. Նարկիսոս Լիրոպի. Աղեքսանդրոս. Մղաբենոս. Հեմենոս. Ըզբերդայ. Հերմանիէ. յերուսաղէմ ամ է. Դասատոս. Հերմոն. ասա է Հգնոնիրն արքայն Գրիգորի Լուսաւորչի։ Մակար. Մաքսիմոս. ղարս ալան հանին անօրէնս Պիւրեղ. Երիսասան ամ. և ասորէրոս. Ակակի, ոչ ղկիսրեղ ասորեոյ. Սեւերեան. ասա էրէս թիոսոն Ամանոսի։ որ մէջ էանիսոս։ Դամասոս. Կիւրեղ. սա արար ղիոլսան ընծայարիան։ Յովհաննէս. ամս ԼԷ. Պրուլիոս. Պրովալիս՝ է ամ։ Յուրնաղ ամս է։ Թեոդոս. ղսա էրին ուղղափառն թիսոնայ Յուլիանղ։ Անաստասիոս ուղղափառ. Մերտուրիոս հերէսիկն. Սերգիոս հերէսիկն. Վիլիաս. Յովհաննէս. Գեւորս. Մակար. սա Վեր արդ էնայ ղսան ուղղափառայն. Եւաստաթէոս.

Digitized by Google

Աբդ մինչեւ ցայս վայր յայտնի և 'ի ծա-
ծուկ լինէին յաթոռակալացս յայսցանէ ու-
զոփստուութեան, վասն որոյ բերսոք զշարս
նոցա 'ի դրի ատա։ Իսկ վասն զի զայսու ա-
ռաջնորդաք բնաւ լին 'ի բաց կացին 'ի ճշմար-
տութենէն, զինչ կայ մեր և նոցա շարել
զնոսա 'ի կարգս ոլորոյ, զոր և ոչ հայրապե-
տքս ստիպան է մեզ գնոսա կոչել և զանուա-
նքս նոցա արձանագրել, և կամ բնաւ
իսկ յիշատակել, և ոչ պատշաճաւոր է զապա-
կանեալ նիւթան դնել 'ի վերայ սուրբ հիմն-
նին։ Այլ մեք մի տրտմեացուք 'ի վերայ այսո-
ցիկ, այլ և միխիթարեսցուք, քան զի եթող
մեզ շնորհք դթութեանն Քրիստոսի զուրբ
եկեղեցին Հայաստանեայց, զաւակ կենդա-
նութեան և սերմն ազնուական ածման սրբ-
բութեան, զկայսն միշտ՝ զշաւաւեղեալն
յանսխալ տրամաստոյն, (1) զպատկերեալն յիւ-
մոյն Յիսուսէ Զանդրանիկ հաւատով 'ի
ձեռն Աբգարու սրբոյի։ Որ ունէր ընդ ինքն
խանութեամբ խրատով զՀայս և զՍարիս և
նստէր յԱռ հայ քաղաքի, թողեալ զսիրեալս
'ի Յանաստուկ ազգական իւր. և էառ 'ի

(1) Հնագոյն օրի. մի ուրեք զպատկերեալն։ Այլ թարգմանութիւն մի ուրեք՝ ընդեալն։ Ընդ ինքն ի նոյն 'ի գրչէն։

ձեռն հաւատոց և զերկնից արքայութիւնն։

Քանզի լուաւ նա զլուր սքանչելեաց Տեառն մերոյ զոր կատարէր յերկիրն Հրէաստանի, և առաքեաց առ նա զԻնանէ հաւատարիմ իւր ինն աշակերտք՝ ուղղեալ զՏէր գալ առ նա յԻդեսիա; և թագաւորել ընդ նմա անհոգութեամբ և ապրել 'ի ապաշնող և յապաստամբ ազգէն Հրէից։ Իսկ կատարէր գիրն՝ եթէ յաւուր յայնմիկ եկեսցեն արք տասն խնդրել զՏէր կարօտութեամբ 'ի սէր Ջերմութեան, զոր յիշատակէ Յովհաննէս աւետարանիչ 'ի ձեռն Փիլիպպոսի և Անդրէի մատչիլ առ Յիսուս։ և նոքա ապաստասխանեալ ասացեալ։ Հասեալ ժամ զի փառաւորեսցի Որդի մարդոյ։ այսինքն թէ՝ արքայն հեթանոսաց եբաց դուռն հաւատոյ ամենայն հեթանոսաց փառաւորել զիս։

Իսկ դարձեալ զկատարումն անտեսութեանն զեկոյց զխաչն, զի եկեալ հասեալ էր, և չէր ժամանակն գնալ ետեւս և խուսել 'ի չարչարանացն որովք ապրէր ամենայն մարդ որ գալոց էր յաշխարհս։ Իսկ տայր հրամանն Փրկիչ մայի առաքելոյն գրել առ Աբգար երանութեամբ հանդերձ զպատճառս չերթալոյն, և զինդիրն նոքա ընտրել խոստանայր 'ի ձեռն միոց յաշակերտացն իւրոց զոր առաքելոցն էր առ

Digitized by Google

նա զինի յարութեան իւրոյ. զոր և առեալ իսկ՝ առաքելով զԱգէոս ի թուոյ աշակերտաց իւրոց, որ եկն առ Ծովերգերոքն ի Կիւլիկիա, և ելանեալ ի Կեսարիա Հայոց, և արկ անդ հիմունս եկեղեցւոյ և ձեռնադրեաց զառաջինն անդ եպիսկոպոս զԹէոփիլոս. և ճանապարհորդեալ զվերին կողմանքն լուսաւորքարոզութեամբն՝ անց ընդ Իփրատ և եկն յԱրոհայ, և լուսաւորեաց զնա աքքայիւն իւրով. և հաստատեալ եկեղեցիս, և թողեալ անդ առաջնորդս զԱդէ կերպասազործն՝ ել ի կողմանս արեւելից առ Անանտրուկ նամակաւն աքքայի։ Իւր ընկալեալ եղև անդ Աբգարն յերկիւղէն Աբգարու առժամանակ մի հաւատացեալ իշխանին ծանծաղպէս և բազմաց ընդ նմա։ Այլ զի փոքր թով վճարեաց նախընծայն ի թագաւորս Աբգարիոս զկեանս, և անհոգացեալ Անանտրուկ իշխան՝ թագաւորեաց միւսանգամ և ապան զԱբգարն և զդուստրն իւր կայս առբր զհաւատացեալն ի Քրիստոս։ Իւր եղեալ փոխանորդ առաքելոյն Օդաքարիա եպիսկոպոս։

Իւր զինի այնորիկ եկն ի նոյն վիճակ Խարզոզանէոս և ի նոյն թագաւորէ կատարեցաւ, և բարձաւ համարձակութիւնն հաւատացե-

լոց։ Բայց հաւատն հաստատեալ առաքելական հիմամբ՝ ոչ պակասեաց մինչև ի գալն առնոսա սուրբ նահատակացն Հռիփսիմեանց. և ի խպատճառս նոցա հաւատալ մեծին Տրդատայ ի նմին ցեղէ Աբգարու՝ ի ձեռն մեծահանդէս վաստակաւորին Գրիգորի. որ և նա ցեղակից անդրանիկ պսակաւորին ի Քրիստոս Աբգարու երանելեալոյն ի Տնաւնէ։ Զաստի երեւեալ կենդանութիւնն պտղաւէտ երկնահաս և երկնալիր՝ սքանչելին եւ նոքանք շանն այն եւ տիեզերալուր վկայն՝ պտուղս մրն աշխարհաշարժ, որ միանգամայն ելից զերկիր ծագէ ի ծագ զարմանապսծ նշանոք որ նոքաւն գործեցաւ ի փառս Աստուծոյ. նա էառ և ժառանգեաց զաստիճան և զանուն և զսթոռ առաքելոյն որոց՝ Պադէի և Խարդողմէի. որ ելից զպակասութիւն չարչարանացն Քրիստոսի ի մարմնի իւրում. և զմնացուածս գործոց հոգեւոր ժլչակացն յանդաստանս նոցա. և ելից աւետեացն (1)լուսով ծայրէ ի ծայր զամենայն Հայաստանեայս և զՀունս և զՎիրս և որ շուրջ զնոքաւք աշխարհք և իշխանութիւնք, զորս բաստկարգի փոխեցին որդիքն նորա զաստիճանն և զառաքինութիւն. զգոյշ վարուք և անաչառ

(1) Հնագոյն օրի. յառաջ։

բանիւք զընթացս իւրեանց կատարելով 'ի պատուիրանս Աստուծոյ պէսպէս վարուք և նահատակութեամբ։

Իւթէպէս ալեանաւուք նորա դադարեցին ժամանակաւք, այլ քրիստոնեայն նորա բարութիւնք, այսինքն ուղղափառ հաւատն որով ժառանգեցոյց (1) զժողովուրդ իւր, ոչ սպառեցաւ յաւիտեանց, այլ եկաց մնաց հաստատուն յրատ հոգւոյն Ծնունդս նորա. որք կացին անյաղթելիս ընդդէմ բազմատարափ փորձանաց և դիպուածոց աջոյ և ձախոյ, այսինքն փառաւք և սպառնալեաւք և վշտաւք անասելեաւք յորդեացն Յունաց, որք 'ի ժամանակս բարձրութեան իւրեանց ջանային ընդ անդ յաղթելիս վիմին։

Իսկ զի Թէպէս ոմանք 'ի նոցանէ տկարացան ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի 'ի սակաւ ժամանակս և 'ի տեղիս, այլ ճշմարտութեան արմատն մնաց հիմամբ կենդանի, մինչեւ անցին (2) աւուրքն և դարձեալ էառ հիմն գչինուածն իւր վայելչական առաստաւածարկու և առաքելական արդեանցն շայեկանութեամբ յաղօթս մեծի | ուսաւորչին և մինչեւ ցյաւիտեան արիթուն և հրա-

(1) Ղէնագոյն օրի. զարդին։ ունէին յանդարդ։
(2) Նորագոյն օրինակքն

կաղ անձին նորա յաղագս հօտին իւրոց առաջի Աստուծոյ։ Եւ եղեն նոքա մեզ Աստուծոյ ուղղափառաց յոլով նպաստ և մխիթարութիւն և վկայք հաստատութեան. զի թէպէտ և աթոռն Աղեքսանդրու և ամենայն Ընդկաստան և Թովմիսա ազգք և լեզուք և (1) ժողովուրդք ընդարձակք և բուռն և ճոխ թագաւորութիւնք դաւանակիցք են մեր և տեղի պարծանաց, այլ ասկս հեռաւորութեանն և բացակայութեանն միայն համբաւովն և ոչ արդեամբք կարեն մեզ կարեկցել և ամբառնալ զգլուխս մեր առաջի նեղչաց մերոց։ Իսկ ազգն Այսատանեաց զի մօտաւորք են և ընդ մեզ խառնեալ, բազում եղեն մեզ առիթ բարեպաշտութեան, և գրէթէ նոքաւք կարացաք տեւել ամենայն անցիցն որ եկին 'ի վերայ մեր մինչեւ ցայսօր ժամանակի, և ուխտ խաղաղութեան և դաշինքն սիրոյ է 'ի միջի մերում հաստատեալ։ Ա՛սն որոյ մեր ակիզն արարեալ խորհրդոյ քահանայութեան յանակընկալեան Աստուծոյ՝ աւաղ տեսցուք 'ի նոցա քահանայապետութիւնն, որ շնորհաւքն Աստուծոյ կոչ և կացցէ մինչեւ ցյաւիտեան։

Եւ զի շնորհք քահանայութեանս զոր

(1) Հնագոյն օրի. տպ։

Digitized by Google

սասցաք՝ 'ի Քրիստոս լցեալ կատարմամբ, որ լիապէս առուս առաքելոցն սրբոց և նոքօք յամենայն տիեզերս բաշխեցաւ, յորոց ըստ աք եթէ չորքն մնին 'ի Հայս և քարոզեցին և անդէն կատարեցան։ Այսպէս Թադէոս, և ապա Բարդուղիմէոս, և Յուդա և Սիմոն եղբարքն՝ որք էին որդիք Յակոբեփու՝ եղբարք Յակոբայ, որք և Տեառն մերոյ կոչին ըստ մարմնոյ։ Որքա արկին առ նոսա հիմն հաւատոյ և եղեն նոցա քահանայապետք աստուածային կարգեսցուք ոճով, և զըստ հոգւոյ ծնունդս նոցա հաստատեցուք մինչև առ մեզ, և յանդ հանդցուք զասպարէզս վաստակոց մերոց՝ հայելով 'ի նաւահանգիստ խոստմանն Աստուծոյ, որ է սկիզբն և կատարումն ամենայն բարեաց և կայ 'ի փառս իւր անբաւապէս։

Ա. Յիսուս Քրիստոս անսկիզբն 'ի ժամանակէ, և սկիզբն և կատարումն ամենայն քահանայութեան՝ որդին Աստուծոյ։

Բ. Առաքեալն Յիսուսի Թադէ՝ յազգէ Շմաւոնի, որ նա ինքն է Ղեբէոս՝ որ է սիրտ, և կոչեցաւ Թադէոս՝ որ է սիրելի։

Գ. Առաքեալն Բարդուղիմէոս 'ի ցեղէ Ալերայ, որոյ անուն կոչի զարմ ատոյգ Աստուծոյ ըստ հաւատոյ և հոգւոյ։

Digitized by Google

Դ. Ընդաքեալն Յուդայ Յակոբեան 'ի ցեղէ Յուդայ, որ կայ 'ի Լամի ՀԱՅՈՑ։

Ե. Ընդաքեալն Սիմոն յԵւթանանանից անտի, որ գնաց Յոռոմաւ գաւառ 'ի Թիւ կանց Լոմեայ, մտեալ 'ի վիճակ եղբօրն՝ որ նա էր ի Յուդայ՝ որդիք Յովսեփու։

Զ. Ընդաքեալն(1) Դադիու յԵւթանանանից անտի, որ չոգաւ հրամանաւ Թադէոսի 'ի մեծն ՀԱՅՔ և առ հիւսիսիւ, և լուեալ բազկատարումն աւանդելոյն Թադէի՝ դարձաւ եմուտ 'ի փոքր Սիւնիք, և կրօնաւորեալ անդէն կատարեցաւ, և տեղին յանուն նորա կոչեցաւ Դադիա։

Այս են սկզբմունք և հիմունք հաւատոյ և քահանայապետութեան ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ և սերմանողք կենսաբեր յորենոյն։ Զոր առեն նշան հնարհաց բերեալ հին և նոր՝ 'ի ՀԱՅՍ, երեք մանանայ 'ի Խարգոդամէսէ և եղեալ տրոմ 'ի հիմն եկեղեցւոյ որ հանդէպ հայի Դողթան գաւառի առ Արասխ գետով, 'ի տեղւոջն զոր Անաղարթն կոչեն։ Զոր գեղարդն աստուածամուխ պատկառն փշեայ 'ի Թադէոսէ բերեալ, և կայ անդէն 'ի ՀԱՅՍ 'ի պարծանս ազգին և 'ի փառս Աստուծոյ։ Այլ երկիրն այն արեամբք և քրտամբք հա-

(1) Հնագոյն օրի. Թադէոս։

գեւաբ ճշակացն առուքեալ՝ պահեաց յինքեան ծաղկապէս սրմատս և ուռս սակաւս 'ի տեղիս տեղիս, մինչեւ երկնեալ ծնաւ երկիւղիւ և ահիւն Աստուծոյ զմարդն երկնաւոր՝ ըզսրբավայելուչ զաւակն սրբոց առաքելոց և զարժանապէս փոխանորդ նոցին զպարթեւն Գրիգորիոս, զոր և 'ի շարս առաջնոյն կարգեցոյք քահանայապետից (1)։

Է. Տէր Գրիգորիոս սուրբ պատրիարքն 'ի 17 ամի Տրդատայ արքայի ժառանգէ զաթոռ սուրբ առաքելոյն յ307 ամի գալստեան Նէն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և պաշտէ ամս 30, և կատարի անցայտ երեւակի։

Ը. Տէր սուրբն Արիստակէս սրդի Նորին՝ ամս 7, և կատարի վկայութեամբ օրինացն Քրիստոսի յիշխանէն Աբգեղայոսէ։

Թ. Տէր սուրբն Վրթանէս ամս 15, և վճարի իւրով մահուամբ։

Ժ. Տէր սուրբն Յուսիկ՝ ամս 6, և վկայէ Տեառն 'ի Տիրանայ թագաւորէ։

ԺԱ. Տէր սուրբն Փառներսեհ յայլմէ ցեղէ՝ ամս 5, յամս Տիրանայ։

(1) Միւս այլ թարգմանութիւնն յիշատակէ 'ի գաւազանագրին և զոսա. Եղիշէ, Խագ, Թեոփիլոս, Ադդէ, Զաքարիա, որք քարոզէին նախ քան զթագէոս որսեւթանանից։

ԺԲ. Տէր սուրբն Լիրսէս թոռն որբոյն Գրիգորի մեծի՝ ամս 34, յամս Արշակայ և Պապայ, և վկայէ Տեառն պատուիրանին 'ի Պապայ։

ԺԳ. Տէր Սահակ յայլմէ ցեղէ՝ ամս 4, յամս Արարզդատայ։

ԺԴ. Տէր Օսէն Նորին եղբայր՝ ամս 4, յամս Արշակայ և Աղարշակայ թագաւորաց և եղբարց որդւոցն Պապայ։

ԺԵ. Տէր Եսպուրակէս Նոցին եղբայր Սահակայ և Օսենայ՝ ամս 7։

ԺԶ. Տէր սուրբն Սահակ թոռն մեծին Գրիգորի՝ ամս 51, յամս Վռամշապհոյ եւ Խոսրովու եղբօր Նորա և Շապհոյ որդւոյ Յազկերտի և Արտաշիրի թագաւորացն, առ որով բարձան Արշակունեաց թագաւորք, և մարզպան եղեւ սուրբն Վարդան մամիկոնեան՝ աշխարհին։

ԺԷ. Տէր Յովսէփ աշակերտ որբոյն Սահակայ՝ ամս 2։

ԺԸ. Տէր Դիւտ՝ ամս 15, 'ի մարզպանութեան Վարդանայ։

ԺԹ. Տէր սուրբ Յովհան Անդակունի՝ ամս 12, 'ի մարզպանութեան Անդնոսի Մամիկոնայ։

Digitized by Google

Ի. Տէր Բաթգէն՝ ամս 5, յաւուրս նոյն Անանդնոսի։

ԻԱ. Տէր Մուշէ՝ ամս 8, 'ի մարզպանութեան Վահանայ Ամիկոնոյ։

ԻԲ. Տէր Սահակ՝ ամս 5, և սա 'ի ժամանակս Ամիկոնոյ Վահանայ։

ԻԳ. Տէր Քրիստափոր՝ ամս 5, 'ի նոյն աւուրս Վահանայ։

ԻԴ. Տէր Ղեւոնդ՝ ամս 2։

ԻԵ. Տէր Ներսէս՝ ամս 9, 'ի նոյն ժամանակս Վահանայ։

ԻԶ. Տէր Յովհաննէս՝ ամս 15, 'ի մարզպանութեանն Արգանայ Ամիկոնոյ։

ԻԷ. Տէր Մովսէս ամս՝ 30, 'ի մարզպանութեան Եժեժայ, առ որով եղաւ թուական Հայոց, և վկայեաց սուրբն Իզաքուղիս 'ի փառս որդւոյն Աստուծոյ։

ԻԸ. Տէր Աբրահամ՝ ամս 23, 'ի մարզպանութեան Տաճկաց։

ԻԹ. Տէր Յովհաննէս 'ի Կոգովտայ՝ ամս 26, 'ի մարզպանութեանն Դաւթի։ Սա եղ աթոռ 'ի Կոստայն յաւուրս Օրկայ թագաւորին Յունաց։

Լ. Տէր Կոմիտաս յԱղուանից՝ ամս 8, յաւուրս Դաւթի մարզպանի։ Սա ընդարձակեաց զվկայարանն սրբոց Հռիփսիմեանց։

ԼԱ. Տէր Քրիստափոր յազատ տանէ յազգէ Աբրահամու՝ ամս 4, առ նոյն իշխանաւն Դաւթի։

ԼԲ. Տէր Լեզի՝ տկարացեալն կաշառաւք ի Հերակլեայ. բայց մեծ մասն Հայոց և վանորայքն մնաց շնորհիւ Տեառն և յազգութիւն սրբոյն Գրիգորի։

ԼԳ. Տէր Խրսէս շինօղ մեծ եկեղեցւոյն ի Վաղարշապատ և սրբոյն Սարգսի ի Դըւին և Վիրապին, ի մարզպանութեան Թէոդորոսի՝ ամս 20։

ԼԴ. Տէր Հնաստաս Ամկոռոյ՝ ամս 6, յաւուրս Համազասպայ մարզպանութեանն։

ԼԵ. Տէր Իսրայէլ Վանանդայի՝ ամս 10։ Սա եհան զՀերսէս հերետիկոս ի Պարտաւայ՝ կամաք Սլսւանից, որ էր նոցա կաթուղիկոս։

ԼԶ. Տէր Սահակ ի Հորոյ փորոյ ի գեղջէ Աբքունեայ՝ ամս 25, ի մարզպանութեանն Խերսեհի և Աշոտոյ։ Սա էր որ եկն ի Խառան և անդ մեռաւ։

ԼԷ. Տէր Գլիա Աղիովտայ՝ ամս 13, ի մարզպանութեանն Սմբատայ։

ԼԸ. Տէր տուրբն Յովհան յՕձնայ, ի մասնասէրն և նշանապուծն՝ ամս 10։ Սա եբարձ զչարն Գղբայ։

Digitized by Google

ԼԹ. Տէր Դաւիթ 'ի Խոտայից՝ ամս 13 յանիշխանութեան։

Խ. Տէր սուրբն Տրդատ 'ի Վանանդայ՝ ամս 23։

ԽԱ. Տէր Տրդատ միւսն՝ ամս 3, յանիշխանութեան։

ԽԲ. Տէր Սիմն Յոյժնեաց՝ ամս 8, յանիշխանութեան։

ԽԳ. Տէր Նասայի Յոզսպատրուշ գեղջէ՝ ամս 13։

ԽԴ. Տէր Սոեփանոս՝ ամ մի, յանիշխանութեան։

ԽԵ. Տէր Յովաբ՝ ամիս 6, 'ի Կիւրապաղատէն։

ԽԶ. Տէր Սաղոմոն 'ի Դառնոյ՝ ամ մի, յանիշխանութեան։

ԽԷ. Տէր Գէորգ 'ի Բիւրականոյ՝ ամս 3։

ԽԸ. Տէր Յովսէփ յեկեղեցւոյն որբոյն Գրիգորի՝ ամս 11, այր բարի։

ԽԹ. Տէր Դաւիթ 'ի Սաղազայ՝ ամս 25։

Ծ. Տէր Յովհաննէս 'ի Կոտայից՝ ամս 22, յիշխանութեան Սմբատայ։

ԾԱ. Տէր Զաքարիա 'ի Զադայ՝ ամս 22, յաւուրս Աշոտոյ իշխանաց իշխանի, որ և Թագաւորեաց 'ի տանէ Բագրատունւոյ. և Յիսէ որդին Շէխայ ալամ եւ, այսինքն դը-

ՐՈՉ՝ Օ աքսորեալ, քառնալ 'ի վերայ նորա խաչ։

ԾԲ. Տէր Գէորգ 'ի Գառնոյ՝ ամս 21, յաւուրս թագաւորութեան Աշոտոյ որդւոյ Սմբատայ որ գերեցաւն, և Համամ քարեպաշտ թագաւորն Աղուանից Եհան։

ԾԳ. Տէր սուրբն Մաշտոց խոստաձայնակն՝ ամս 7։

ԾԴ. Տէր Յովհաննէս՝ ամս 28, 'ի թագաւորութեան Սմբատայ և որդւոյ նորին Աշոտոյ։

ԾԵ. Տէր Ստեփանոս՝ ամ մի։

ԾԶ. Տէր Եզիսէ ամս 7։

ԾԷ. Տէր Թէոդորոս՝ ամս 11, 'ի թագաւորութեան Աշոտոյ և Եղբօր իւրոյ Աբասայ։

ԾԸ. Տէր Անանիա Մոկացի՝ ամս 22, յամս թագաւորացն Աբասայ և Աշոտոյ որդւոյ նորին։

ԾԹ. Տէր Վահան՝ ամ մի, յամս նոյն թագաւորաց։

Կ. Տէր Ստեփանոս՝ ամս 2, 'ի թագաւորութեան Աշոտոյ։

ԿԱ. Տէր Խաչիկ՝ ամս 22, 'ի թագաւորութեան Աշոտոյ և Աբասայ։

ԿԲ. Տէր Սարգիս՝ ամ մի եկաց, և եթող զաթոռն և աղօթից պարապեաց։

ԿԳ. Տէր Պետրոս՝ ամս 39։ Օ ամ մի

արգելին 'ի Ինչի, և բերին յաթոռն զԻՆՍ-
կոպոս հայր Անանիային. և նա ամ մի կա-
լեալ զկաթուղիկոսութիւնն, և կաթուղիկոսն
Ղուանից երթեալ առ թագաւորն ետ հա-
նել զտէր Պետրոս 'ի բանտէն, և Դիոսկորոս
չոգաւ 'ի վանս իւր. և տէր Պետրոս երթեալ
'ի Կոստանդինուպոլիս՝ դարձաւ 'ի Սեբաստ
և անդ կատարեցաւ։

ԿԴ. Տէր Խաչիկ քուրդի նորին՝ ամս
2, և կատարեցաւ 'ի Սեբաստ նոյնպէս։

ԿԵ. Տէր Վահրամ որդի Գրիգորի Սա-
ժիատրի առեալ զաթոռն զկնի չորից ամաց
խափանուածոյն՝ եթող (1) զկաթուղիկոսու-
թիւնն և չոգաւ 'ի թարգմանութիւն 'ի Կոս-
տանդինուպոլիս, և դարձաւ Այնրուսայէմ
նախ գնալ և յակամայս եհան ծոմն զնա 'ի
Սր. և զկնի երկուց ամաց եկեալ առ Գող
Վասիլն՝ կատարեցաւ (2) 'ի Կարմիր վանս։

ԿԶ. Տէր Գէորգ սնուցիչն Վահրամայ՝
ամս 3։

ԿԷ. Տէր Բարսեղ ազգականն Վահ-
րամայ՝ ամս 12։ Սա մեռաւ յանկմանէ 'ի վե-
բայ նորա հեծանի 'ի շինութիւնս ինչ եւ
թաղեցաւ 'ի Կարմիր վանսն։

(1) Ղորագոյն օրինակքն՝ էթող ֆոխտա և ելգնա։

(2) Հնագոյն օրի. 'ի Հոդն ելգնա։

ԿԸ. Տէր Գրիգոր ազգական նոցին Վահրամայ և Խարսղի՝ ամս 53, որ փոխեաց զաթոռն ի Ծոմն դղեակ և անտի ի Հռոմ կլայն։

ԿԹ. Տէր Ներսէս եղբայր նորին՝ ամս 7, որ էր յաւուրս մեր շնորհաղարդ վարդապետութեամբ։ Այսմ շարակարգութեան՝ ի դիր արարեալ գտաք և կարգեցաք ստուգիւ յաւարտման մերոյ քաղուածի որպէս ճանաչուէ ի մեկնոցի, յաւելով ի Տէր և յերկրպագուս նորա՝ ողորմութիւն գտանել յաւուրն կարեաց վասն աղօթից արանց անանձանց։ Բայց զՀունակ և զՅուսիկ որ զինի մահուանն սրբոյն Ներսիսի եդին, ոչ կարգեցաք՝ չհաճելով, և ոչ զՍուրմակ հակառակին և ոչ զաստբասեալ Խորենն զոգ Խարդիշոյ և զՇմուէլ զնդդիմակայսն սրբոյն Սահակայ։ Իակ զինեսն այլք լցցեն։

Տէր Միխայէլ մինչեւ ցայս վայր. աստի Վարդան սիսանի վարդապետն։

Արդ եմք հետեւեալքս և պատահեալքս այսմ՝ հաստատուք մինչեւ առ մեզ նոսին յուսալն Աստուծոյ։ Յետ կատարման պատուական հայրապետացն Գրիգորի և Ներսիսի

երկուց եղբարցն՝ էաւ զաթոռն եղբօրորդի նոցա՝

Հ. Տէր Գրիգոր՝ ամս 20։ Սա շինեաց ըղ-գեղապաճոյճ եկեղեցին 'ի Կլայն և զարդա-բեաց զնա մեծապէս։

ՀԱ. Տէր Գրիգորիս Տղայն՝ ամ մի։ Սա արգելական եղեալ յարքայէն Լեւոնէ, ջա-նաց 'ի գիշերի իջանել յամրոցէն, և կորեալ պարանին՝ անկաւ և մեռաւ։

ՀԲ. Տէր Գրիգորէս Ապիրատն կոչե-ցեալ՝ ամս 7։

ՀԳ. Տէր Յովհաննէս մեծաբարու և յաղթասէր՝ ամս 18։

ՀԴ. Տէր Կոստանդին յերրորդ մասնէ Հայոց, 'ի դղեկէ Խարձբերդոյ՝ որ հայի հա-բաւով 'ի դաշտն Կիւլիկիոյ և 'ի ծոցն Դ-ռիանու կոչեցեալ որդի առն արդարոյ և խա-զաղականի Վահրամ կոչեցելոյ. յորմէն ընտրեալ յաստուծոյ առաքելական 'ի Հոգ-ւոյն, և արինաք նորին անեալ, և ըստ կարգի յամենայն գործս եկեղեցւոյ վարժեալ 'ի շնորհս քահանայութեան և յառաջնորդու-թիւն վանից և յեպիսկոպոսութեան տես-չութիւն, և յամենայնի ընտիր գտեալ և հան-դիսաւոր։ Սա որոյ և 'ի կատարման հոգե-ւորական և մարմնական հաստատի վկայու-

Digitized by Google

թեամբ Աստուծոյ և մարդկան մեծի գահոյի և աթոռոյ հայրապետութեան Հայաստանեայց արժանաժառանգ լեալ 'ի շնորհէն և 'ի բնաւ լրմանէն Եկեղեցւոյ բռնադատեալ. ըստ որում և փորձն ցուցաւ և արդիւնքն յայտնի տարին, և միաբանեցաւ ընդ նմա շնորհն։ Եւ է այժմ քան և հինգ ամ հայրապետութեան նորա, 'ի դղեակս աստուածապահ Հռոմկլայ կոչեցեալ, խաղաղասէր բարոյք և անարատ վարուք առ ամենեսին խաղաղութիւն կալեալ. վկայութիւն բարի և դրուատիս յարտաքնոցն առեալ. այցելութիւնս՝ ե. այրեաց խնամածու, և գերելոց անխնայ ծախիւք դարձուցիչ և զարդարիչ, հայրենի գթովք զամենեքսումբք փարելով. և եղեալ առատաձեռն առ ամենայն կարօտեալս ողորմածութեամբ, եւ եկեղեցեաց բազմայ պիտոյից լուսիչ։

Եւ յաւել և 'ի յայլ բարին և զայս մատեան 'ի գանձս եկեղեցւոյ. և եւ բաղձանք թարգմանել զսա յայսոցս 'ի հայս, պիտանի լեալ և շահաւէտ բուրաստան, լայն և երկայն իմաստիւք լցեալ, և կարճառօտ բանիւք՝ բովանդակեալ, որ 'ի սուղ ժամանակս կարող է զպատահեալսն 'ի վերայ կացուցանել հին և նոր դիպուածոց։ Այլ և հիմն

հաստատ և աշխարակ անշարժ իսկ է հայաբդաւան հաւատոց և ուղղափառ խոստովանութեանս, վկայս բազումս ցուցանելով յաղագս ճշմարիտ ուղղադնացութեամբս՝ հիմամբ աստուածական և առաքելադիր կայիւք ամրացեալ։ Այլ և յոլովք տարակոյսք և հանդոյցք լուծանին 'ի սմա։ Եւ չէ ինչ զարմանալ ընդ նորալուր և անծանօթ բանսն որ գտանին 'ի սմա. քանզի Աստուածք բնակութեամբ իմն գաւառաց և բարուք լեզուաց մատաւորք են միշտ Հրէից լեալ քան զամենայն ազգերդ, և 'ի գէպ է նոցա մանաւանդ ծանօթս գոլ հնոյ կտակին քան այլոց։ Այսու որ զայս մատեան շարադրեալ է, 'ի Յունաց և յԵգիպտացւոց և 'ի Բաղդէացւոց դիւանաց և 'ի դպրոցաց է հաւաքեալ։ Վասն սոյ առաւել սիրելի և պիտանի և հաւատալի է. և վարձս բազումս կալցի առաջի Աստուծոյ և երախտիս յեկեղեցիս ուղղափառաց՝ վաստակասէր այրն բարեփառ տէր Միխայէլ, զի յոլով սէր և գութ երեւի նա ունել առ ազգս մեր 'ի գրոց աստի։

Արդ 'ի յամի ութերորդի քառասներորդի երկերիւրերորդի հաղարերորդի թուականութեան անժամանակ որդւոյն Աստուծոյ գալստեանն, և 'ի ՈՂԷ թուականութեանս

Հայոց՝ Թարգմանեցաւ գիրքս այս յաստուծոյ 'ի հայս 'ի հայրապետութեան Հայոց տեառն Կոստանդեայ և 'ի Թագաւորութեան Հայոց Հեթմոյ քրիստոսասիրի, և զգուշակեցեալ Թագուհւոյն իւրոյ Օ՛ապելի՝ դստեր Լեւոնի արքայի, ըստ Աստուծոյ քաղաքավարելոյ հնգից եղելոյ նոցա զաւակաց ծիրանածնաց, երկուց ուստերաց և երից դստերաց, որոց անուանքն Լեւոն և Թորոս, անուամբ Հաւուն իւրեանց(1), որոց հովանի լիցի ամենակալ Բազուկն հայրենի, ածելով 'ի գահ հայրենի արքայութեանն եղերաց Հայաստանեայց։

Յայսմ ամի կենդանի էր կորովամիտ և աջողեալն 'ի բարիս աքքայահայրն Հայոց սպարապետն Կոստանդին, և քերկրեալ այլովք ուստերաք չորիւք, տէր Բարսեղ տէրն Դրազարկուն, և պարոն Մամբատ սպարապետն Հայոց, և պարոն Օշին տէրն Կիւռիկոսայ, և պարոն Լեւոն, որոց զարանալ լիցի ըստ Աստուծոյ և աճել արիութեամբ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

Յայս էր պատրիարք Հայոց ուղղափառայ Յարն Իգնատիէ Ինտիքոս, որ զորինալ կրն շնորհեալ և փոխեցաւ 'ի ձեռն Իշխայ սրբասնեալ քահանայի վարժելոյ 'ի հանճար

(1) Հնագոյն օրի. յաւելաւ՝ 'ի հաւանոյն հոգեպարարութիւն։

բժշկական արհեստի, որոց վարձատու լիցի տէր Յիսուս 'ի հնորհս իւր։

Այլ և մեք իսկ(1) տառապեալ ոգի Վարդան վարդապետս, որ ըստ մերում կարի կատարեցաք 'ի գիրքս յայս, ունիմք հաւատս և յոյս 'ի գթութիւն Աստուծոյ և յետ նորա 'ի բարեխօսութիւն և յաղօթս ծառայից նորա՝ առ մեզ դարձուցանել զերեսս ողորմութեան Քրիստոսի 'ի վերայ անկշռելի պարտուց մերոց անթուապատիկ բիւրուց տաղանդաց։ Բանդի այսու ամենայնիւ թեամբ ընդոստուցաք զմեզ մոռանալ զանդակիս և զընդանացեալս մեր տկարութիւն մարմնոյ և բաղմազան տրամութիւն և զնորս հոգոյ խորհրդոյ վասն անշահաւոր տարաշրջութեանս։ այլ և յաղագս թշուառացուցիչ ժամանակիս զոր ածին չարիքն մեր յաճախեալք։ Բանդի սակաւ քան զչափ մեղաց մերոց արբոյց մեզ Տէր արտասուս, և նուազ քան զյորդաբուխ ախտիցն մերոց ջրհեղեղս խաղացին առ մեզ վտակք արեան, և ըստ գաղանական գնացիցն մերոց յագեցան գազանք 'ի մարմնոյ մերոց։

Բանդի հնչեաց բարկութիւն Տեառն

(1) Հնագոյն օրի. պակասէ դարձեալ ոգի Վարդան վրդ.

Ճանճուն սրեւելեան հիւսիսայնոյ օտար և անընդել ազգին, որպէս ասեն՝ Թորգոմա զունք և՝ ի զարմէն Հայաստուր. և հողմով ա նօրէնութեան մերոյ ած զնոսա մինչեւ առ մեզ ըստ նախատեսս մարգարէութեան նախ նի սուրբ հօրն մերոյ Յերեմիայի արտասուա պատում ողբոցն, զոր լալով նախաձայնեաց զկորուստ հոգեւոր երկանց իւրոց ծննդոց, զորս ինչ կրեցաքն յազգէն Յետուզաց. զորոց զանուանս կոչէ սուր և թեթեւ, զի թերևս Թաթարն սուր և թեթեւ ասի ըստ ընդ դացդ փոփոխման, և կամ (1) հայ և տար՝ որ է տաթար, քանզի հարին անցագասէս և տարան անհրկիւղաբար զորդիսն Քրիստոսի՝ ի ստրկութիւն գերութեան։ Եւ ասէ զնոսա սուրբն Յերեմիա՝ ի մնացորդացն Հագարու, և Ասորիք ասեն զնոսա Թորգոմեանս, յայտ է՝ խառնեալ ազգին Հոմդայ որ՝ ի Թորգոմայ ընդ զարմն Հագարու՝ որք ունին զՄկիւթի մասն աշխարհի, որ սկսանի յԱթլ գետոյ և ձգի առ Լմաւուն լերամբն՝ ուր բնակեալ են ազգք քառասուն և երեք, որք խուժական անուամբ կոչին յիւրեանց լեզուս. և գլխաւորն նոցա Ուշն անուանի. և անուն միոյ ազգին Թուղարք ասի, զոր կարծեմ թէ

(1) Ցօրինակն՝ տար և տար։

այս են թամբարքս։ Եւ որպէս լուաք յումանց 'ի նոցանէ, եթէ Ելին առաջինք նոցա 'ի թուրքաստան աշխարհէ և մեհենեցան մինչեւ 'ի կողմարեւելեան, և կային աղքատութեամբ 'ի գործս աւազակութեան և յափշտակութեան. և պաշտօն ինչ ոչ ունէին, բայց ընդարեգակն զարմանային, և 'ի պատճառս հրմայութեան ունէին պատկերս ինչ թաղեայ, զորս տակաւին կրեն ընդ ինքեանս։

Եւ զկնի ժամանակաց անցելոց՝ ումանց 'ի նոցանէ զգայուն արանց նեղեալ 'ի թշուառական կենաց իւրեանց, կոչեցին զերկնաւորն Աստուած որ զամենայն ինչ արար՝ յօգնականութիւն անձանց։ Եւ սխալեցին նմա ուխտ, և ելին 'ի վերայ քաղաքի միոյ փոքու, յափշտակեցին զնա 'ի տերանցն, և բնակեցան անդ։ Եւ յայնմանէ այժ առեալ տիրացան երկրին, և կոչեցին յերկրէն իւրեանց Թիկուն և զօրացան 'ի վերայ Պարսից, և առին զվշխանութիւնս նոցա։ Եւսան և 'ի մոգուց անտի զարուեստս կախարդութեան, և առեալ հրամանս 'ի դիւթաց անտի՝ եթէ տուեալ է նոցա յԱստուծոյ զաշխարհս ամենայն, ելցեն վստահութեամբ և ժառանգեսցեն զնոս։ Եւ չէ ինչ զարմանալ, զի Աստուածոսոր արքայ Բաբելացոց հմայիւք

եալ Յերուսաղէմ, և մատնեսայ Տէր 'ի ձեռս նորա. և զկիւրոս Պարսից արքայ օծեալ իւր կոչէր Աստուած և առաքէր 'ի վերայ Բաբելոնի։ Այս և ինքեանք խոստովանին զամենայն ինչ Աստուծոյ առնել, և զինքեանս նոցին հրամանաւ ասեն (1) եկեալ։

Այդ հաւատացեալ նոցա հրամանի իւրեանց երեւմանն, եղեն նոքա երեք բաժին ընտրութեամբ իւրեանց թագաւորին զոր Խաքանն կոչեն, որ է խանն։ Այսպէս առաջին գնայ 'ի կողմն Հնդկաց, և մասն երկրորդ չոգաւ առ անապատօք հիւսիսոյ, և երրորդ բաժինն ընդ մէջ Պարսից աշխարհին՝ և եկն մինչեւ առ մեզ։ Այս ասէին թէ երեք էին գլխաւորք, և մինն բարեբարոյ քան զերկուսն, զոր (2) Զարմանն կոչէին. որ և զկնի բազում աշխարհաց աւերման և կոտորման՝ նստեալ 'ի խորհուրդ զոր խուռուբլթայ կոչեն, և ասացեալ Զարմանային թէ՝ Խաւական է աւերս և կոտորուածս, յայսմ հետէ զհնազանդեսցեն մի ջնջեսցուք 'ի սպառ, զի մի բարկասցի Աստուած։ Իսկ երկու գլխաւորքն հակառակեալ ընդ նմա ասացին թէ՝ Լէ է պարտ մեզ ապրեցուցանել և ոչ զոք, որովհետեւ աջողէ մեզ Աստուած։ Այս տրա-

(1) Դրագրի գրիչքն՝ ՅԷ։ (2) Դար. գրիչքն՝ Զամանն։

մութեամբ ննջեցին զգիշերն զայն. և յայնմ գիշերի մեռան երկոքեանն որ զանողորմութիւնն կամէին, և զարմացան զօրքն և հաստուցին զբանն առ Ղանն։ Իսկ առաքեաց հաստատեաց զկամս Զարմաղանին՝ օրինօք խնայել ի հնազանդեալսն և դնել ի ներքոյ հարկի. և զնա միայն հաստատեաց ի գլխաւորութիւն, զի այն է ասէ կամք Աստուծոյ. վասն որոյ և կան ի նոյն մինչեւ յայսօր։

Իսկ զժամանակ երանելոյ Նոցա ասէ մեծն Ներսէս, եթէ զկնիկ իմոյ վասխճանիս յոթժամ անցանէ եւթն հարիւր ամ՝ սկսանի լինել։ Իսկ արդ ըստ վճռոյ սրբոյն հարիւր յիսուն ամ է զօրանալոյ Նոցա և յաղթութեան. եւ յոթմէ հետէ մնեալ էն յարեւելեան աշխարհն Հայոց՝ քսան և ութ ամ է։ Իսկ զոր ինչ գործեցին ապականութիւն երկրին և տարապարումն քաղաքաց և դղեկաց և աւերք եկեղեցեաց և մահս ապրի ապրիս և գերութիւնս. և թէ որպէս յետ այնորիկ հաշտեցան ընդ Յունայորդան ի Ձեռն իշխանաց աշխարհին և ապարին խնամութիւնս, և մինչ նացեալ եկեղեցեացն և եկեղեցականացն դիւրութիւնս և ապաստ կոմաք կալ ի կրօնս իւրեանց. սակայն անլրապէս պահանջումն հարկաց ճշգիւ և անխնայապէս ըստ գլխոյ

արանց և անասնոց՝ բաց 'ի մանկանց եկեղեցւոյ և ամենայնի օրք զձեռ աղօթական կարգի ունիցին։ Այսոսիկ զամենեսեան գրեալ է լեռով 'ի տեղիս տեղիս. և մեք մի՛ շփոթեսցուք զուձ շարագրայն կարգի՝ որ յատուկ ինդրէ հատածս և պարապումն ժամանակաց և հաստատութիւն 'ի տեսիլ աչաց գործեցելոց։

Սակայն զյոլովս տեսաք տչօք մերովք 'ի նախաձայնեալ աղետից սուրբ նահատակին Ներսէսի։ (1) զեկեղեցիսն մեր նսեմացեալ և զսեղանսն սուրբ կործանեալ, զմատեանս աստուածային այրեցեալ և առ ոտն կոխեալ, զսպասսն սրբութեան և զքրիստոսական նշանսն անարժանից ձեռաքս շօշափեալ և նախատեալ և յանարգ պէտս վարեալ, զաշխարհս մեր անտպատացեալ զքաղաքս բնակութիւն լեալ գազանաց։ Զանգն լսան լերինք և անապատք մեր անգերծ փախստէիւք և դաշտք զիակաց ոսկերաք կոտորելոյն, և անդաստանք մեր և հովիտք ուռոգեցան արեամբ, և կերսաք մնացորդքս զհասակ անդեսան այնպիսի արտորէից։ Զասաքն մեր 'ի ծառայութիւն իջին և փափուկքն մեր յանբմբելի չարչարեալ։

(1) Ներսէսն օրինակքն յոլովաբիւն լարեալ նոցա։ և ինչ յաւելուն, և մեր իսկ պէտք ընդ դեռ 'ի գերութեան պատրաստ ինչ։

չարանս։ Խարձուկքն մեր խոնարհեցան, և փառաւորքն մեր յանարգութիւնս ընկճեցան։ Մնունդքն հովասուն լերանց խորշաւ կահաքք եղեն յարեւու։ Կուսանքն մեր օտարաց եղեն, և երիտասարդքն մեր հովիւք և (1) կուտպանք այլասեռից։ Կարօտացաք ողբոցն Երեմիայի և կրեցաք զպատուհաս հնոյն Իսրայելի։ Տղայք աշխարհաց մերոց որբք եղեն և մայրք նոցա այրիք։ Արդիք վերնոյն Սիօնի զուգակշիռք ոսկւոյ՝ իբրեւ զանօթ անպիտան հարան զքարի։ Ցրուեցաւ հօտն Տեառն, Ճասպաղեցան գառինք արօտի նորա։ Վանճառակուր եղեն յազգս հեռաւորս գընեալքն արեամբն Քրիստոսի։ Խաժանեցան ծնունդք 'ի ծնողացն. մեկնեցան հարազատքն 'ի միմեանց. հեռացան բարեկամք 'ի սիրելեաց. դարձաւ ուրախութիւն մեր 'ի սուգ և սրախութիւն մեր յարտասուս, և ոչ գոյ թիւ աղաղակի մերում, զի չկամ համար չարեաց մերոց։ Եւ 'ի վերայ այսր ամենայնի ոչ է 'ի մեզ զղջումն և ոչ ապաշխարութիւն. ոչ պատառեցաք զսիրտս մեր, և ոչ խարշեցան փորոտիքք մեր, և ոչ դարձաք 'ի գնացից մերոց խոտորնակաց, այլ և յաւելաք վերս յանօրէնութիւնսն մեր յառաջինս, և խաւարեցան

(1) Հնագոյն օրէ. Ընդարձակ։

անմտութեամբ խորհուրդք մեր։ Եւ ոմ՚ զարմացի ընդ լրբութիւնս մեր, զի տակաւին պիտի մեզ արեւս այս, և խնդրեմք հրնարիւք զսէր և զվայելս աշխարհիս և զփառս սորա զփախստականս։

Իսայ ես մանաւանդ զանձնէ ասեմ զոր գիտեմ, միայն զկիրս և զկամս ստորաքարշս անյագապէս եղեալ մինչրասէր յաւուրս իմ, և միայն 'ի ձեռն սակաւ ստոտարիս այսմ ունիմ ակն մեծի դիմութեան Աստուծոյ վասն աղօթիւ ձերոց զոր հայցեմ լուութեամբ գրոյս, իբրեւ զսովեալ սպասեակս առընթեր սեղանոյ մեծատանց։ Եւ յաւելուսմ 'ի մաղթանս իմ զբարեխօսութիւն սրբոց՝ եւ դեալ առաջի ձեր նուէրս՝ առ իս ածել զգութս ձեր սիրով զնչանել ընդ իս, և խնդրել ինձ 'ի սրտէ ողորմութիւն 'ի կամեցօղ և 'ի կարօղ խնամոյն Յիսուսի։ Եւ այն որ մեծ է ողորմութեամբ՝ աջն յաջողակ Հօրն բարձրելոյ, որոյ բնաբար է փրկելն և կեցուցանելն, թէպէտ և 'ի մէնջ բռնադատեալ հարկանէ յուսով խրատու, այն որ ոչ (1) ցաւելի և կամաւք չարչարէ զանդամն իւր, նա բժշկեսցէ զվիրաւորեալ մարմին իւր զսուրբ Եկեղեցի, և զպրուեալ հօտս իւր հաւաքեսցէ առ

(1) Ամենայն օրի. ուներին՝ ոչ ոչ տեսել։

ինքն յարօտս խստաղաղութեան բարեբար կա-
մաք իւրովք, 'ի փառս անուան իւրոյ. և
զերկոսին ակունս զայնոսիկ զպատուական
զկայծ և զվանաչ, զսիթոռքս Հայրապետա-
կան և արքայական Հայադաւան ազգիս ուղ-
ղափառութեան, զոր եթող մեզ զաւակ յու-
սոյ Տէրն զօրութեան, յորս գոյ օրհնութիւն
Տեառն ամենակալի. զսոսա հաստատուն և ան-
սասան պահեսցէ զօրութիւնն ամենակիր և
ամենատեղծ արժանաժառանգ սիթոռակա-
լաք մինչև յաւիտեան։ Իսկ զայժմս նստեալ
քրս արժանաւոր կոչմամբ Հուգոյն սրբոյ
զտէր Կոստանդին Հայոց մեծաց և հանուրց
վերադիտող, և զնոյնազարմ ազգիս պատակ-
կիրն Հեթում պարագայս ամաք առողջակիր
մարմնով և անուանի փառաք խնամեսցէ 'ի
գովեստ ամենասուրբ տէրութեան իւրոյ,
զաւակաք և զարմաք սր ըստ հոգւոյ և սր ըստ
մարմնոյ. և յետ աստեղացս անասելի աթո-
ռոյն և անթառամ պսակին արժանաւորեսցէ։

Իսկ որք այժմ ընդ մեզ հարք և եղբարք,
եպիսկոպոսք և վարդապետք և պատկառե-
լի ծերունիք, և ժրաջան ճգնաւորք, և պա-
տարագողք և կղերիկոսք. և գործաւորք
մարմնական պիտոյից, և խնամածուք աստ-
ուածապահ դղեկիս, և սպասաւորք սրբա-

Digitized by Google

զան աթոռոյս, ուրք են ամենեքեան առ մի-
մեանս սիրունք և առ մեզ աննախանձք, և
փոխման մատենիս յաժարամիտք և յորդո-
ւիչք, զամենեսեան առատաձեռն պարգե-
ւօք լի տրասցէ Փրկաւորն փառաց հոգեւոր
և մարմնաւոր յաջողութիւնք, 'ի մեծութիւն
և 'ի փառս անուան իւրոյ. որ է օրհնեալ
և փառաւորեալ, գովեալ և գոհաբանեալ
յաղագս և յաղին բոլոր բանականաց, յաւի-
տեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

ԳԼՈՒԽ		ԵՐԵՍ
Ա.	Յաղագս Ադամայ հետէ մինչեւ ա-մաղուէնք։	1
Բ.	Ամաղուէնք, որ եկին ի թագաւոր, և այլ կարգ թագաւորացն Բաբիլացւոց։	24
Գ.	Յաղագս Մովսէսի ընդ ծոմն կարմիր։	46
Դ.	Յաղագս թէ դշխոյ եկն առ Սողոմոն։	65
Ե.	Յաղագս թարգմանութեան հին կտակարանացն 'ի Պտղոմէ հղոլի։	100
Զ.	Յաղագս կարգաւ առաքելոցն զոր կարարեցան։	123
Է.	Յաղագս Աբգարու որ առաքեաց Յեբուսաղէմ նկարագիր վասն պատկերին Քրիստոսի։	129
Ը.	Յաղագս թէ տվ սատանիկ եղեւ 'ի Դիոկղետիանոսի ժամանակն։	147
Թ.	Յաղագս Արիոսի հերձուածողին։	152
Ժ.	Յաղագս Յուլիանոսի ուրանալոյ։	162
ԺԱ.	Յաղագս Մելիտոսի որ կանոնեաց զառաջնել իսուսուսվանու։ Թիւն անիմաստ քահանայիս։	177
ԺԲ.	Յաղագս Ղեւոնդի հերձուածողին։	190
ԺԳ.	Յաղագս նշանաց որ եղեն ամիս մի օգդ փոշի տեղայ և թիզ մի կուտեցաւ։	224
ԺԴ.	Յաղագս աւերման Ամթայ և Պողոս անուն հրեայ եղեւ պատրիարք Անտիոքայ և Ժողովեաց զամենայն եպիսկոպոսունս։ զկնի Պողոսի Ակղիպ եղեւ քարոզողն։ և հեղեղն որ ջրասոյզ արար զՌուհայ։	252
ԺԵ.	Յաղագս Ակղիպայ և Եփրեմի։ որ անիծանէին զուղղափառն, և եկն պատուհաս 'ի վերայ նոցա։	275

Digitized by Google

ԺԶ. Յաղագս որ յութ հարիւր քառասուն թուին Աստուծոյ եղեւ հրաշք անհաւատալի, և զկնի եղեւ մահտարաժամ որ բնաւ չէր լեալ, և եղեւ սով և շարժ քառասուն օր։ 262

ԺԷ. Յաղագս որ յութ հարիւր եւթանասուն և մի թուին Աստուծոյ, և Ամիայ պատուհասին։ 273

ԺՌԸ. Յաղագս որ յայսմ ժամանակի երեւեցաւ Մահմետ որդի Աբդլլահի 'ի թուին հայոց վեցհարիւր և եւթն Զայսու ժամանակաւ խաւարեցաւ կէս արեգականն յութեգ աշնանամտին մինչև 'ի քաղաց ամիս։ 512

ԺԹ. Յաղագս սով ուստիկ եղեւ, և զկնի եղեւ հողմ սաստիկ հիւսիսային և փղոց բաղում եկեղեցիս և բրգունս քաղաքաց, և Ամարայ՝ որ հրամայեաց ոչ ընդունել ընդ Քրիստոնէից վկայութիւն։ 555

Ի. Յաղագս որ նշանք մեծամեծք և ցոլմունք և փոշի գայր, և 'ի ծոմն խառվեալ սիւնք հրեղէնք երեւեալ, և եկն կարկուտ կշռեն երկու լիտր, և Զամբրի հարկապահանջութիւն անչիշելի։ 556

ԻԱ.* Յաղագս աստի սկսանի պատմութիւնքս 'ի յառուն Կիւլլիկիոյ տա Հայս։ 406

ԻԳ. Յաղագս կառուցոյ արագիլք և խորդք։ 418

ԻԴ. Յաղագս գեղարքեանն Քրիստոսի։ 422

ԻԵ. Յաղագս առման Կայսին Հռովմայ։ 428

ԻԶ. Յաղագս պարոն Թորոսի և Սալահանի և հարցմանց Տ. Ներսէսի և հաւատոյն քննութեան և երկու բնութիւն ասելոյն։ 433

---

* Ասի սկսեալ սկսալին՝ մոռացեալ դնել ՂԻԲ գլուխն։

Digitized by Google